Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ

ԵՐԿԵՐ

2

ԵՐԵՎԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ЕРВАНД ЛАЛАЯН

ТРУДЫ

В ПЯТИ ТОМАХ

ТОМ 2

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1988

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

63.5(2Հ)
Ա 14

ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ

ԵՐԿԵՐ

ՀԻՆԳ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ 2

-1042-
42 911
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1988

ԳՄԴ 63.5 (22)
Լ 140

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ ճնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Հատորը կազմել և տպագրության է պատրաստել Ա. Մ. ՆԱԶԻՆՅԱՆԸ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների թեկնածու Դ. Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Գիտական հրատարակության են նպաստավորել գրախոսներ՝ պատմական գիտ. թեկնածու Կ. Վ. ՍԵՂՈՍՅԱՆԸ և բանասիրական գիտ. թեկնածու Ա. Ս. ՂԱԶԻՅԱՆԸ

Լալայան Ե.
Լ 140 Երկեր։ Հինգ հատորով /[Պատ. խմբ.՝ Դ. Ս. Վարդումյան]/ ՀՍՍՀ ԳԱ. Հնագիտ. և ազգագր. ին-տ.—Եր.։ ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1988.
Հ. 2/ [Հատորը կազմ. և տպագր. պատրաստ. Ա. Մ. Նազինյանը], 1988 —505 էջ, 9 թ. նկ.

Հատորն ամփոփում է Արցախի պատմաազգագրական շրջանի մեջ մտնող Վարանդա և Գանձակ գավառներին վերաբերող Ե. Լալայանի հավաքած ազգագրական, բանահյուսական, վիճակագրական և այլ կարգի նյութեր, որոնք ժամանակին հրապարակվել են «Ազգագրական հանդես»-ի համապատասխան գրքերում։ Հատորն ունի լուսանկարներ, քարտեզ, ծանոթագրություններ և ցանկեր։

Նախատեսված է ազգագրագետների, բանագետների, պատմաբանների ընթերցողական շրջանների համար։

ԳՄԴ 63.5 (2

Լ $\frac{0508000000-82-86}{703(02)-88}$

© Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1988

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Երվանդ Լալայանի «Երկերի» II հատորն ընդգրկում է պատմական Արցախի տարածքի նյութերը: Այդ նյութերը գերազանցապես հավաքել, գրի է առել ու լուսանկարել ինքը՝ Ե. Լալայանը, շրջագայելով ազգագրական հիշյալ գոտու գյուղերն ու ավանները՝ հաղթահարելով բազում դժվարություններ: Անձնական հավաքչական աշխատանքներին կուգահեռ Ե. Լալայանը այս կարևոր գործն իրականացնելու համար իր շուրջն է համախմբել տեղացի առաջավոր մտավորականներին, որոնք նրա ծրագրերով ու ցուցումներով հավաքել են անհրաժեշտ բազմապիսի այլ նյութեր ևս և տրամադրել հեղինակին:

Հավաքված այդ հարուստ նյութերը Ե. Լալայանը հիմնավորապես խմբագրել, համադրել, լրացրել ու ամբողջացրել է՝ պարբերաբար տպագրելով իր իսկ հիմնադրած «Ազգագրական հանդեսի» գրքերում: Այդ ճանապարհով հրապարակ են եկել ներկա հատորի բովանդակությունը կազմող Ե. Լալայանի «Վարանդա» և «Գանձակի գավառ» աշխատությունները, որոնք հեղինակը համեստորեն անվանում է՝ «Նյութեր ապագա ուսումնասիրության համար»:

Ե. Լալայանի այս աշխատությունները բացառիկ արժեք են ներկայացնում հայ ազգագրության հետազոտման ասպարեզում: Եվրոպական ուսումնառության դպրոց անցած և խոր գիտելիքներով զինված Ե. Լալայանը այս աշխատությունների մեջ ազգագրական երևույթները նկարագրել ու լուսաբանել է բազմակողմանիորեն ու լայն ընդգրկումով:

Յուրաքանչյուր ազգագրական շրջանի հետազոտությունը Ե. Լալայանն սկսում է պատմական համառոտ տեսությամբ: Այնուհետև ներկայացնում է տվյալ տարածքի տեղագրությունը, կլիման, բուսական ու կենդանական աշխարհի պատկերը, օգտակար հանածոները, նշանավոր բարաքներն ու գյուղերը, պատմական ու ճարտարապետական հուշարձանները: Հատուկ ուշադրություն է դարձված բնակչության կազմին ու տեղաշարժին, նկարագրելով նաև նույն տարածքում ապրող հարևան այլ ազգերի ու ժողովուրդների կյանքը, կենցաղն ու բարքերը:

Տնտեսական կաղմությունքին (երկրագործություն, այգեգործություն, անասնապահություն, շերամապահություն, մեղվապահություն, ձկնորսություն, որսորդություն, արհեստներ, առևտուր և այլն) կուգընթաց հանգամանորեն ներկայացվում է նաև կուլտուր-լուսավորական կյանքի պատկերը (դպրոցներ, գրադարաններ, դատարան, փոստ, հաղորդակցություն և այլն): Առավել հանգամանորեն են լուսաբանված ընտանեկան բարքերն ու ծեսերը (տղաբերք-կնունք, ամուսնություն-հարսանիք, մահ-թաղում և այլն):

Ներկա հատորում նյութական մշակույթի հետ միասին հանգամանորեն ներկայացված և լուսաբանված են նաև ժողովրդի հոգևոր մշակույթի երևույթները (հավատք, պաշտամունք, նախապաշարմունք, տոներ և այլն):

Ազգագրության հետ սերտորեն առնչված է ժողովրդական բանահյուսությունը: Ե. Լալայանը ազգագրական երևույթների նկարագրության մեջ որպես կանոն ներկայացնում է դրանց հետ կապված բանահյուսության նմուշները (աշխատանքային, ծիսական, հարսանեկան, սգո երգեր, անեծքներ, օրհնանքներ, աղոթքներ և այլն): Ներկա հատորի մեջ Գանձակի գավառի բաժնում ծավալուն տեղ են գրավում որպես բանավոր գրականության նմուշներ բերված վիճակի երգերը (խաղիկ-քառյակներ):

Բանավոր ավանդմամբ գրի առնված նյութերին ու հավաքած վիմագիր արձանագրություններին զուգընթաց Ե. Լալայանը օգտագործել է Վարանդային ու Գանձակի գավառին վերաբերող տարբեր լեզուներով եղած տպագիր գրականությունը և արխիվային ձեռագիր նյութերը: Հատկապես արժեքավոր են գրքում զետեղված պաշտոնական վիճակագրական տեղեկությունները, որոնց հիման վրա Ե. Լալայանը կազմել է բազմաթիվ աղյուսակներ ու տախտակներ:

Այսուհանդերձ անհրաժեշտ ենք համարում մի քանի վերապահություն անել Ե. Լալայանի «Երկերի» II հատորի վերաբերյալ:

Հատորում տեղ գտած որոշ նյութեր, մասնավորապես Վարանդայի ու Գանձակի գավառներին վերաբերող պատմական տեսության մեջ բերված փաստական տվյալները անդրադարձնում են ժամանակի գիտության մակարդակը և հնարավոր է Ե. Լալայանի շարադրանքում լինեն հնացած և ոչ ճիշտ տեսակետներ ու ձևակերպումներ այս կամ այն հարցի շուրջ:

«Վարանդա» և «Գանձակի գավառ» աշխատությունների «Ընտանեկան կյանք», «Բարոյականություն» բաժիններում Ե. Լալայանը նաև հազվադեպ բարքերի ու բարոյական ըմբռնումների անկման որոշ երևույթների մասին խոսելիս թվարկում է մի շարք պատճառներ: Ընդունելի համարելով դրանցից մի քանիսը (պանդխտություն, գործարանային աշխատանքի պայմաններ, քաղաքային բարքերի ազդեցություն և այլն), այդուհանդերձ պետք է նշել, որ Ե. Լալայանը չի կարողացել լիովին բացահայտել այդ երևույթների սոցիալ-դասակարգային արմատները, և նրա արտահայտած կարծիքներին պետք է մոտենալ որոշ վերապահությամբ:

Ե. Լալայանի հիշյալ աշխատություններում նկատվում են լեզվական-քերականական, ոճաբանական կարգի որոշ անհարթություններ, բացթողումներ ու վրիպակներ: Հատորի բնագրերը պատրաստելիս, հիմնականում պահպանելով հեղինակի ոճը, աշխատել ենք վերացնել նկատվող թերացումները և վրիպակները:

1. Լրացրել, ճշգրտել ենք էջատակերին հղված սկզբնաղբյուրների անվանումները, տվյալները, ինչպես ընդունված է ժամանակակից բնագրագիտության մեջ:

2. Խմբագրված և շտկված են խիստ հնացած մի շարք ոճական արտահայտություններ, օտարաբանություններ, բարբառային ձևեր, երբ խոսքը չի վերաբերում կենցաղային, ծիսական և այլ տերմին-հասկացություններին:

3. Վերացված են ժամանակակից ուղղագրությանը չհամապատասխանող ուղղագրական, քերականական ու կետադրական շեղումները:

4. Միօրինակ են դարձվել ուղղագրական, հնչյունաբանական, տառադարձական երկակի գրությունները, հիմք ընդունելով ճշգրիտը:

5. Ուղղված են բացահայտ վրիպակները, իսկ երբ կասկածելի է, էջատակին դրված է ուղղումը, նշելով՝ Ծ. Կ. (ծանոթություն կազմողի): Մնացած դեպքերում, երբ որևէ նշում չկա, էջատակի ծանոթությունները հեղինակինն են:

Ա. Մ. ՆԱԶԻՆՅԱՆ

ԱՐՑԱԽ

ՎԱՐԱՆԴԱ

(ՆՅՈՒԹԵՐ ԱՊԱԳԱ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

ՎԱՐԱՆԴԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ՄԱՍԻՆ

Վարանդան նախկին մյուս Հաբանդ գավառն է, որ Քոչուս էլ է կոչվել։ Սա ընկնում է Արցախ նահանգի մեջ և նրա հետ միասին մինչև Արշակունյաց անկումը պատկանելիս է եղել հայերին, այնուհետև ենթարկվել է Աղվանից պետության։

ԺԳ դարում հոներն ու մոնղոլ-թաթարներն իրենց ասպատակությունները ու ավերումները սփռել են այս գավառում ևս։ Նույնանման ավերումներ գործել են այստեղ և պարսիկները ու օսմանցիները, շարունակ միմյանց ձեռքից խլելով և այս գավառը։

Վերջապես 1692 թվականին Մելիք-Շահնազարի որդի Մելիք-Հովսեփը և նրա եղբոր՝ Մելիք-Միրզա-բեկի որդի Մելիք-Բաղին Գեղամա լճի եղերքից գաղթում են իրենց ժողովրդի մի մասի հետ այս գավառը և բնակություն հաստատում Ավետարանոց գյուղում։

1721 թվականին այս Մելիք-Բաղին դուրս է եկել կովկասյան լեռնաբնակների առաջ և ազատել երկիրը նրանց ավերմունքից։ Այս և մի քանի այսպիսի հաղթություններով Մելիք-Շահնազարյանները տարածել են իրենց իշխանությունն ամբողջ Վարանդայի վրա և որպես պարսից ավատական իշխաններ՝ կառավարել երկիրը[1]։

Այս մելիքներից Մելիք-Շահնազար Բ-ն սպանելով յուր եղբայր Մելիք-Հովսեփին, նրա փոխարեն մելիք է դարձել և այս ու յուր անբարոյականության պատճառով՝ ատելի է եղել թե՛ յուր ժողովրդին և

---

[1] Բաֆֆի, Համասայի մելիքություններ, 2-րդ տպ., Թիֆլիս, 1895, էջ 23—24։

թե՛ Խամսայի մյուս մելիքներին, որոնք մի քանի հարձակումներով ավերել են սրա երկիրը։ Ահա այս ժամանակ նա ձեռք է մեկնել ջիվանշիրցիների գլխավոր Փանահ-խանին, որին և որպես դաշնակցի զիջել է յուր երկրից մի բարձր լեռնադաշտ։ Փանահ-խանը 1752 թվականին կառուցել է այդտեղ մի ամուր բերդ և կոչել Փանահաբադ[2], բայց հետո, երբ մոտակա Շուշի գյուղի բնակիչները տեղափոխվել են այստեղ, բերդը կոչվել է Շուշի կամ Շուշի[3]։

Փանահ-խանը, ջլատելով հայ մելիքների ուժը և շարունակ պատերազմներ մղելով նրանց դեմ, կամաց-կամաց կարողացել է նրանց իրեն ստորադրել։

Փանահ-խանի որդի և հաջորդ Իբրահիմ-խանի ժամանակ պարսից զորապետ Աղա-Մամադ-խանը 1795 թ. գարնանը եկել պաշարել է Շուշին։ Մելիք-Շահնազարյան Մելիք Ջումշուդը և Մելիք-Բեկլարյան Աբովը հայ զորքերով ամրացել են Շուշի բերդի մեջ և Իբրահիմ խանի հետ միասին պաշտպանել բերդը։ Քառասուն օր ապարդյուն պաշարումից հետո Աղա-Մամադ-խանը վերցրել է պաշարումը և գնացել տիրելու Թիֆլիսին։ Նա 1797 թ. կրկին անգամ արշավել է Շուշու վրա և գրավել բերդը, սակայն այս անգամ ինքը շահը սպանվել է յուր սենեկապետի ձեռքով և պարսից զորքերը նա են քաշվել իրենց երկիրը։

Երբ ռուսները իշխան Ցիցիանովի առաջնորդությամբ գրավել են Գանձակի բերդը, Իբրահիմ-խանը Մելիք-Ջումշուդի խորհրդով առանց պատերազմի ընդունել է ռուսաց հպատակությունը (1805)։ Բայց հետո (1806) դավաճանել է ռուսներին և հրավիրել պարսիկներին Շուշին տիրելու։ Եվ երբ ինքը շտապել է դիշերով գնալ միանալու Շուշի գյուղի մոտ բանակած պարսից արքայորդի Աբաս-Միրզին, Մելիք-Ջումշուդն ու փոխգնդապետ Լիսանևիչը բռնել են նրան և սպանել։ Այս պատերազմը ահագին վնասներ տալով տևել է մինչև 1813 թվականը, երբ Գյուլիստանի դաշնագրությամբ Ղարաբաղը հանձնվել է ռուսներին։

Սակայն 1826 թ. Աբաս-Միրզան յուր մոտ փախած Իբրահիմ-խանի որդի Մեհտի-խանի գրգռմամբ և Ղարաբաղը կրկին վերադարձնելու հուսով 80000 զորքով նորից արշավել է Վարանդա և պաշարել Շուշին։ Ռուսները Ավետարանոց գյուղացի Մադաթյան զորապետի առաջնորդությամբ մեծ ջարդ են տվել պարսից՝ Գանձակի մոտ և հալածել մինչև իրենց երկիրը։

---

[2] *M. ml Chantre*, A trovers de l'Arménie.

[3] Բաֆֆի, *Խամսայի մելիքություններ*, էջ 62։

Այնուհետև Շուշին կառավարվել է ռուսներից նշանակված գավառապետներով։

Ամարաս. Սա հին ժամանակներում մի գյուղ է եղել, ուր ս. Գրիգոր Լուսավորիչը հիմնարկել, իսկ յուր թոռ Գրիգորիսը ավարտել և օծել է մի եկեղեցի։ Երբ Մասքթաց Սանեսան թագավորը 348 թվականին Ս. Գրիգորիսին, որ Աղվանից և Վրաց կաթողիկոս էր, ձիու պոչից կապելով Վատնյան դաշտում նահատակել է, Ս. Գրիգորիսի աշակերտները հավաքել են նրա նշխարները և բերել ամփոփել այս եկեղեցում։ Այնուհետև այդ գյուղը դարձել է նախ եպիսկոպոսանիստ և ապա Աղվանից կաթողիկոսների աթոռանիստ[4]։

Ե դարում Աղվանից թագավոր Վաչագան Գ-ն փնտրել և գտել է այստեղ Ս. Գրիգորիսի մասունքները և նորից ամփոփելով, վերանորոգել տաճարը։

Մոտ 1293 թվականին թաթարաց Բաթու խանը կողոպտել է այս վանքը և տարել Ս. Գրիգորիսի գավազանն ու 36 ակներով զարդարված մի ոսկեձույլ խաչ։ Հունաց կայսեր Դեսպինա դուստրը խնդրել է այդ խաչն ու գավազանը և ուղարկել Կ. Պոլիս[5]։

1387 թվականին Ամարասն էլ, Արցախի և ուրիշ նահանգների հետ ենթարկվել է Լենկ-Թեմուրի ավերումներին։

Ժողովուրդը այժմ էլ պատմում է, թե Լենկ-Թեմուրը յուր զորքերը շարել է Ամարասից մինչև Արաքսը և հրամայել Ամարասի վանքի քարերը միմյանց տալով թափել Արաքսը[6]։

Մելիք-Շահնազար Բ-ն վերանորոգել և պարսպել է վանքը, ինչպես և բազմաթիվ սենյակներ շինել ուխտավորների համար։

ԺԷ դարում այստեղի միաբանների համար որպես ամառանոց շինվել է Հիրհեր գյուղում մի գեղեցիկ եկեղեցի և միաբանության համար խցեր։

Կարծվում է, թե Ամարասի միաբանության ամառանոց եղել է և վերին Թաղավարդից դեպի հարավ-արևմուտք 1,5 վերստ հեռավորությամբ գտնվող գետնի մեջ թաղված եկեղեցին, որ այժմ Բարևածառ անունով ուխտատեղի է։ Եկեղեցում գտնված են հետևյալ արձանագրությունները.

---

[4] Ինճիճեան Ղ., *Ստորագրութիւն հին Հայաստանեայց*, Վենետիկ, 1822, եր., 307։

[5] Սաֆրաստեանոս Օրբելեան, *Պատմութիւն տանն Սիսական*, Մոսկուա, 1861, գլ. 2։

[6] Բաբախանյանց Ա. (Էո), *Ուխտավորի հիշատակարանը*, Շուշի, 1885, էջ 9։

«Սուրբ Պետրոս, կանգնեցի զխաչս 'ի փրկութիւն հոգոյ իմոյ և ծնողաց իմոց: Արդ, որք երկրպագանէք սուրբ նշանիս զիս աղօթս... ջիք և Աստուած զձեզ հիշեսցէ. թուին Ն.Խ.Զ. էր»:

«Սուրբ Պողոս: Յամս Աստուածապատիւ և հոգևոր Տեառն Յովհաննիսի Ամարասայ եպիսկոպոսի և պետութեան տեառն Գագիկա: Աղուանից իշխանաց իշխանի ես հաչէ Կիրակոս առաջնորդ սուրբ ուխտիս եղբօր որդի Կոկոնայ...»:

Թվականը նույնն է՝. ի դեպ ասենք, որ այս Բարեածառի մասին կա հետևյալ ավանդությունը: Մի ժամանակ այստեղ ապրում էր մի սուրբ եպիսկոպոս, և ամեն անգամ, երբ նա երկար ծոմապահությունից ու ճգնությունից հետո պատարագ էր մատուցանում, շրջակայքի ծառերը ողջույնի ժամանակ երեք անգամ խոնարհեցնում էին իրենց գագաթները և միմյանց կպցնելով ողջույն տալիս: Մի օր էլ մի հեռավոր հայ մի ջորի ոսկով բարձում և գալիս է այդ հրաշքը տեսնելու: Նա խոստանում է եպիսկոպոսին՝ նվիրել վանքին յուր հետ բերած ոսկին, եթե արժանանա տեսնելու հրաշքը: Եպիսկոպոսը խոստանում է, բայց պատարագի ժամանակ սկսում է երկմտել, թե արդյոք ոսկու հետ ջորին էլ պիտի նվիրե, թե ոչ: Այս երկմտությունն այն հետևանքն է ունենում, որ ողջույնի ժամանակ ծառերը չեն համբուրվում: Եպիսկոպոսը բացատրում է պատճառը. և ջերմեռանդ ուխտավորը խոստանում է ոչ միայն ջորին, այլև ուրիշ շատ թանկագին ընծաներ ուղարկել: Եպիսկոպոսը նորից պատարագ է մատուցանում և այս անգամ կատարվում է հրաշքը: Հարուստ հայը զոհությամբ վերադառնում է յուր երկիրը և ուղարկում խոստացած նվերները՝[8]:

Բայց գառնանք Ամարասին. գարուս սկզբում այս վանքը անտեր մնալով, թուրքերի ձեռքն է ընկել, որին Աղ-Օղլան անունը տալով՝ իրենց սրբավայր էին դարձրել: Բազմաթիվ սենյակներն էլ ռուսները գործ էին ածում որպես մաքսատուն: Բաղդասար մետրոպոլիտի աշխատությամբ 1848 թ. մաքսատունը տեղափոխվել է Երասխի ափի մոտ, իսկ վանքը յուր կալվածներով վերադարձվել Հայոց հոգևոր իշխանության:

Վերջապես 1858 թվականին գլխավորապես շուշեցիների օժանդակությամբ հիմնովին կառուցվել է վանքը:

---

7 Բաբախանյանց Ա. (Լեռ), *Ուխտավորի հիշատակարանը, էջ 5:*

8 *Անդ, եր. 10:*

ՎԱՐԱՆԴԱՅԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանները. *Վարանդայի սահմաններն են. արևելյան կողմից՝ Արցախյան դաշտաբերանը (Միլինդյուզ), հյուսիսից և արևմուտքից՝ Գարգար գետը, հարավից՝ Քիրս, Ղուրչու-չայ և Դիզափայտ լեռնաշղթայի գագաթնագիծը:*

Այս գավառն ամբողջովին ընկնում է այժմյան Շուշվա գավառի մեջ (Գանձակի նահանգում):

Լեռներ. *Վարանդան մի լեռնոտ երկիր է: Արցախյան լեռնաշղթան մտնելով այս գավառը հյուսիս արևմուտքից, տարածվում է հարավարևելք մինչև Դիզակ գավառի Դիզափայտի լեռնաշղթան: Այս լեռնաշղթայի մեջ նշանավոր են Մեծ և Փոքր Քիրսերը, որ բարձրանում են Շուշու հարավային կողմում: Մեծ Քիրսի բարձրությունն է 9989 ոտնաչափ, որի վրա ձյունը միայն ամառվա տաք եղանակին է հալչում, իսկ փոքրինը՝ 7340: Այս լեռնաշղթան մեծ մասամբ պատած է անտառներով:*

Մի ուրիշ փոքր լեռնաշղթա էլ, որ սկսվում է Զորագետի և Խրամի խառնուրդի աջ կողմից և հասնում Երասխի ձախ կողմը[1], Վարանդայում տալիս է Բողրխան և Քյաթուկ գագաթները:

Բողրխանը գտնվում է Շուշուց արևելահյուսիս, ունի 5326 ոտ. բարձրություն: Այս գագաթից չորս գոտի է ճյուղավորվում: Առաջինը ձգվում է մինչև Վարազաբուն գյուղը. երկրորդը՝ դեպի Կղարծի, Ղրղալա, Աշան և այլ գյուղերը, երրորդը՝ դեպի Սարուշեն, Մավաս, Սիտորաշեն և Խազաս-սարը, իսկ չորրորդը, անցնելով Շոշու գյուղի հարավարևելյան կողմից՝ միանում է Մեծ Քիրսին: Սրա մեջ նշանավոր է Խաչմաչ գագաթը: Երկրորդ լեռնագոտու մեջ նշանավոր են Խաչախուտ (5028 ոտ.) և Պոկսարեկ (3829 ոտ.) գագաթները:

---

1 Բարխուդարյան Մ., *Արցախ, Բագու, 1895, եր. 3:*

Դաշտեր. Վարանդայում ոչ մի մեծ դաշտ չկա, կան միայն փոքրիկ դաշտեր, որոնցից նշանավոր են.

1) Ղըզղալա գյուղի առջև տարածված դաշտը։

2) Նոր-Շենի դաշտը, որ գտնվում է երկու լեռների միջև։

3) Գիշի, Պառավաթումբ և Աղքենդ գյուղերի միջև տարածված դաշտը։

4) Խունըշինակ գյուղի դաշտը, որ կազմում է Վարանդայի սահմանը։

5) Ճարտարցիների կալի մոտ եղած դաշտը։

6) Ամարասի դաշտը։

7) Նավատ-խանի դաշտը Շոշի-գյուղի և Ավետարանոցի միջև։

8) Բեգիջանի դաշտը, Խաղաս-սարի և Ներքին Թաղավարդի միջև։

Գետերը. Վարանդայի ամենանշանավոր գետը Գարդարն է, որ կազմվում է հինգ գլխավոր վտակներից.

Ա վտակը՝ բուն Գարգար, որ բխում է Քիրս լեռնաշղթայի Զառիստ սարերի հյուսիսային և հարավային լանջերից և հոսում է Շուշի քաղաքի հարավարևելյան խոր ձորով։ Սա յուր ճանչ է ընդունում Թթուջրի առվակը։ Այս վտակը տեղացիները կոչել են Քարին-տակի գետ, որովհետև անցնում է Քարին-տակը գյուղի մոտով։

Բ վտակը բխում է Քիրս լեռնաշղթայի հյուսիսահայաց լանջերից և հոսում է միևնույն քաղաքի հյուսիսարևմտյան կողմով։ Սրան տեղացիները կոչում են Ղայդալու գետ, Ղայդալի գյուղի անունով։ Այս երկու վտակները միանում են Շուշուց 8 վերստ հեռավորությամբ՝ Մազիկամրջի տակ։ Ահա իսկապես այստեղից սկսած այս գետը կոչվում է Գարգար։

Գ, Դ և Ե վտակները բխում են Խաչեն գավառից, մինը՝ Խանածախ գյուղի սարից, մյուսը՝ Բալլուջայի սարից, իսկ հինգերորդը՝ Պետրեցվոց սարից։

Բուն Գարգարը նախ հոսում է դեպի հյուսիս, ապա՝ արևելահյուսիս և կտրելով Արցախյան դաշտի կեսը, անհետանում ավազի տակ, ապա նորից երևում և հեղեղների ժամանակ թափվում Կուր գետի մեջ։

Երկրորդ նշանավոր գետակն է Քյոնդալան, որ միայն գարնանը հանում և խառնվում է Արաքսին։ Սա բաղկանում է երկու գլխավոր վտակներից, որոնցից մինը՝ Քիրսու-չայ, սկիզբ է առնում Քիրս լեռնաշղթայից և հոսում Ավետարանոց գյուղի հարավային ստորոտով, մյուսը սկիզբ է առնում նույն լեռնաշղթայից, հոսում Ղևոնդյանց անապատի սարի հարավային ստորոտով և ընդունելով Սարգսաշենի Շորեն

վտակը, միանում Քիրսաչային նույն անապատից բավական վար։

Սա հեղեղների ժամանակ սաստիկ բարձրանալով բավական վնասներ է պատճառում[2]։

Գ գետակն է Ղուռու-չայը, որ նույնպես Արաքսի վտակն է։ Սա սկիզբ է առնում Մեծ և Փոքր Քիրսերի միջից։ Սրան միանում է Իշխանագետը՝ Թաղլար և Տումի գյուղերի միջև։

Այս գետն այսպես կոչվելու պատճառն այն է, որ ամառը չորանում է (ղուռու թուրքերեն նշանակում է չոր)։

Դ գետակն է Ամարասա գետակը, որ Զալուն գետ ևս կոչվում է։ Սա սկիզբ է առնում Սոս, Քերթ, Քարահունջ, Հիրհեր, Խերխան գյուղերի աղբյուրներից և անցնում Ամարասի մոտով։

Լճեր. Վարանդան զուրկ է մեծ լճերից. կան միայն փոքր լճեր, որոնք ամռանն ավելի ևս փոքրանում են։ Սրանցից նշանավոր են.

1) Սյուլլուկնածով, Նինգի գյուղի մոտ. այսպես է կոչվում, որովհետև մեջը տղրուկներ կան։

2) Ծծքարին ծով, Սովատեղի գյուղի մոտ, շատ փոքր լճակ է։

Աղբյուրներ. Վարանդան սաստիկ հարուստ է աղբյուրներով, որոնց ջուրը շատ հստակ և քաղցրահամ է։ Մեծ աղբյուրներից նշանավոր է Ղարաբուլախ գյուղինը, որ մի քանի ջրաղաց է դարձնում։

Քարայրեր. Վարանդայում կան շատ բնական քարայրեր, որոնք պատերազմների ժամանակ ժողովրդին ապաստարան և երբեմն էլ ռազմական կետեր են ծառայել։ Սրանցից նշանավոր են.

Հունոտի կարան։ Այս քարայրը գտնվում է Շուշու արևելահյուսիսային կողմում ձգված խոր ձորի մեջ, Հունոտ գյուղի մոտ, որի անունով և կոչված է։ Քարայրը բաղկացած է երեք աչքից, որոնցից առաջին երկուսը փոքր են, իսկ երրորդը բավական ընդարձակ։ Այստեղ կա և ջրի ավազան։

Մծխաչ (Շմանեք)։ Թաղլարից ներքև, Ղուռու-չայ գետակի ձախ եզերքին երկու ահագին քարայրեր են։ Ներքևի քարայրի առաստաղի ժայռը ծծանման բարձրություններ ունի, որոնցից ջուր է կաթկթում[3]։

Ավանա կարան։ Քարին-տակը գյուղի հյուսիսային կողմում, Ավանա Քերծում, որ տարածվում է մինչև Շուշի քաղաքի Կոհար աղայի տան տակը։ Քարայրի մեջ կա ջուր։

Ուվան քարայր։ Գտնվում է Ազոխ գյուղի արևելյան կողմում, ձո-

[2] Այս տարի քշել տարել էր վրանարնակ 27 թուրք։

[3] Տե՛ս Հավատքի բաժնում։

42.911

բակի ձախ կողմի բարձրության վրա։ Բավական խորն է և մեջը կա մի երեխա գրկած կնոջ արձան։ Կնոջ տարազը և գլխի հարդարանքը արցախական են։

Ծծքարի կառան։ Ծովատեղ գյուղի արևմտահյուսիսային կողմում բարձրանում է Ծծաքար կոչված սարը, որի ժայռոտ գագաթին մոտիկ կա մի սհաղին քարայր[4]։

Կան նաև Ալեքսանա ղուղուն, Եղունիկի (աղավնու) և Ամարաթների քարայրերը Քարին-տակի ձորակում։

ԿԼԻՄԱՆ

Վարանդայի կլիմայի վերաբերյալ մենք միայն Շուշու մասին տեղեկություններ գտանք ռեալական դպրոցի ուսուցիչ պ. Ալեքսանդրովակու մոտ, որ նույն դպրոցին կից գոյություն ունեցող օդերևութաբանական կայանի կառավարիչն է։ Պարոնը սիրով տվեց մեզ իր երեք տարվա դիտողությունները, որոնցից 1893—95-ը միջին թիվ հանելով, կազմեցինք հետևյալ աղյուսակը (տես աղյուսակ I)։

Այս աղյուսակից հետևում է.

1. Օդի ճնշումը 0° ջերմության միջոցին տարեկան միջին թվով հասնում է 647,9 միլիմետրի, օրորվելով 650,8-ի, որ բարձրանում է հոկտեմբերին, և 644-ի միջև, որ իջնում է մարտին։

2. Բարոմետրը այստեղ բարձրանում է յուր մաքսիմումին նոյեմբ. (656,8) և իջնում մինիմումին փետրվարին (636)։

3. Տարեկան միջին ջերմությունն է 8,6։ Ամենաշոգ ամիսը օգոստոսն է (միջին ջերմ. 20,0), երբ ջերմաչափը երբեմն բարձրանում է 27,5. այս աստիճան բարձրանում է երբեմն և հուլիս ամսին, թեև այդ ամսին միջին ջերմությունը հավասար է 17,8°։ Ամենացուրտ ամիսը հունվարն է (միջին ջերմ.—3,3°), երբ ջերմաչափը երբեմն իջնում է —12,4°։

4. Համեմատական խոնավությունը տարեկան միջին թվով հասնում է 76,7։ Ամենախոնավ ամիսը հոկտեմբերն է՝ 82,3, իսկ ամենապակաս խոնավը հուլիսը՝ 66։

Հետևյալ աղյուսակն էլ ցույց է տալիս տիրապետող քամիները և եղանակը (տես աղյուսակ II)։

---

4 Տես Հավաքի բաժնում։

Աղյուսակ I

Շուշի քաղաքի կլիմա

	Բարոմետր			Ջերմություն							
	Մթնոլորտային ճնշումը (հոգոտրոտ 0° ջերմ.) մոդրամով	Մթնոլորտ. բարձր.	Մթնոլորտ. ցածր.	Ջերմաչափ. դրամ 8.	Մթնոլորտ. բարձր.	Մթնոլորտ. ցածր.	Միջին ջերմություն	Ամենաբարձր ջերմաչափ. դրամ	Ամենացածր ջերմաչափ. դրամ	Հարաբերական խոնավություն	Ամենաշոգ օրվա ջերմաչափ. դրամ (Հուլիս)
Հունվար	647,5	653,6	640,0	3,3	8,5	11,3	12,4	80,5	4,6	1,0	22,1
Փետրվար	645,0	651,2	636,0	0,1	13,3	8,8	9,9	74,0	5,1	1,3	15,8
Մարտ	644,0	650,8	636,9	2,7	16,7	5,1	7,2	78,0	6,7	1,3	51,2
Ապրիլ	646,8	652,2	640,5	6,2	17,9	3,8	5,3	82,0	7,0	1,3	57,3
Մայիս	648,1	552,7	642,4	11,9	21,4	5,2	2,8	78,3	5,9	1,3	111,6
Հունիս	647,1	651,0	643,4	17,2	26,0	9,6	8,2	71,0	5,0	1,1	81,8
Հուլիս	648,1	651,8	644,2	17,8	27,5	12,5	9,6	66,0	4,5	1,1	44,0
Օգոստոս	648,5	653,6	644,2	20,0	27,5	12,9	10,3	66,3	3,4	1,1	22,0
Սեպտեմբեր	649,1	652,4	642,5	14,1	24,8	5,7	4,4	80,7	4,7	1,0	44,4
Հոկտեմբեր	650,8	656,3	644,8	9,9	19,2	2,7	0,6	82,3	8,9	0,9	61,2
Նոյեմբեր	650,2	656,8	641,8	4,7	16,3	3,9	5,1	78,0	5,6	1,1	43,4
Դեկտեմբեր	648,1	655,2	338,8	1,4	12,7	7,3	8,2	75,7	5,0	1,0	15,6
Ընդամենը	7772,6	784,0,1	7695,3	103,4	232,1	6,8	12,3	912,8	66,4	13,5	570,3
Միջին	647,9	653,3	641,3	8,6	19,3	0,6	1,0	76,7	5,5	1,1	47,5

	Հանգարտ	N	NNE	NE	ENE	E	ESE	SE	SSE	S	SSW	SW	WSW	W
	Քամիներ													
Հունվար	51,6	12,3	5		7	1,6	12,6	0,3	1,6	2		1,0		
Փետրվար	48,6			1	1	3	11	7,3	1,3	0,6	4,6	1,0		
Մարտ	52,0			2	3	6	18	0,3	4,0	1,0	3,3	2,0	0,6	0,3
Ապրիլ	42,3	4,0	3	4	5,6	3,3	15	4,3	4,3	1,3	4,3	1,3	1,0	
Մայիս	41,6	2,0	2	8	12	6,3	14	5,3	1,3	1,0			0,6	0,3
Հունիս	33,6		2	7,5	13	6,3	25	5,0	0,3	0,3	0,3			0,3
Հուլիս	45,6	1	1		10,3	15	15	3,3	1,0	1,6				0,3
Օգոստոս	42,6	2		5	13,6	3	13,3	2,6	1,6	0,6	0,3			
Սեպտեմբեր	51,6	1	4	3	7	6,6	6,3	3,6	8,0	3,6	0,3	0,3		
Հոկտեմբեր	54,3			3,5	4,6	8,3	11,3	3,6	3,6	2,6		2,0		
Նոյեմբեր	48,6	4		5	2,3	3,3	14,0	5,6	0,6	1,3	2,6	5,0	0,3	
Դեկտեմբեր	49,6	5,5	13	9	4	5	6,6	5,3	1,6	1,3		0,6	0,3	0,3
Տարեկան	562,0	31,8	30,0	49	83,4	77,7	162,1	46,5	29,2	16,2	15,7	13,2	2,8	1,5

Այս աղյուսակից էլ հետևում է.

1. Քամիները ամենից շատ փչում են արևելա-հարավարևելյան կողմից (162,1), ամենից շատ հունիս (25) և ամենից քիչ՝ սեպտեմբեր ամսին (6,3)։

2. Սրանից հետո ամենից շատ փչում է արևելահյուսիս-արևելյան կողմից (83,3), ամենաշատը՝ օգոստոսին (13,6) և ամենաքիչը՝ փետրվարին (1)։

3. Հետո արևելյան կողմից (77,7), ամենաշատը՝ հուլիսին (15) և ամենաքիչը՝ հունվարին (1,6)։

4. Հետո արդեն հյուսիս-արևելյան (49) և հյուսիսային (31,8) ու հյուսիս-հյուսիսարևելյան (30) կողմերից։

5. Շուշին տարվա ընթացքում միջին թվով 113,6 օր պատած է լինում մառախուղով, 107,6 օր էլ երկինքը ամպամած է լինում և միմիայն 77,7 օր պարզ է լինում։ Ապրիլ, մանավանդ մայիս և հունիս ամիսները անձրևային են։ Առաջին անգամ ձյուն է գալիս նոյեմբերին, թեև երբեմն պատահում է, որ սեպտեմբերին կամ հոկտեմբերին էլ մի մի անգամ գալիս է։ Սակայն մինչև հունվարը հազիվ ինը անգամ ձյուն է գալիս և միայն հունվարին և մանավանդ մարտին, ինչպես և՝ ապրիլին, Շուշին ծածկվում է ձյունով։ Սովորաբար մայիսին էլ 3 անգամ ձյուն է գալիս, այնպես որ մինչև այս ամսի վերջը վառում են վառարանները։ Այս ամիսը նաև սաստիկ փոթորկալից է (11), և ամենից ավելի այս ամսին է կարկուտ գալիս (2,6)։

Գավառի կլիման բավական տաք է Շուշու կլիմայից, այնպես որ խաղողը հեշտությամբ հասնում է։ Անհամեմատ տաք է Ամարասու դաշտը։

WNW	NN	NNW	Հատուկ երևույթներ	Ջուր	Կարկուտ	Բանվոր բրդաստուկ (крупа)	Մառախուղ	Փոթորիկ	Ուժգ. քամի	Երկինք: Պարզ	Երկինք: Ամպամ.	Ջերմ.: Max 0°	Ջերմ.: Min 0°
			8,6	8			13,0		1,6	13	9,3	16,6	27,0
	3,0	0,3	5,6	6,6		0,6	7,0		3,3	6,3	6,6	7,0	22
1,0	0,3		12,0	10,3		2,6	16,0	1,6	3,6	2,6	12,6	4,3	16,0
1,0		1,3	16,6	8,6			19,0	1,6	2,0	2,0	13,3	2,0	5,6
	0,3		17,3	3,0	2,6	1,3	11,3	11,0	1,6	2,3	8		
	0,3		11,0		1,0	0,3	2,6	4,6	1,6	7	7,6		
	0,3		7,0				1,6	1,0	2,3	9,3	11		
			3,6		0,3		1,6	1,0	3,0	14,3	3,3		
			7,3	0,3	0,3	0,6	8,6	3,0	0,3	9,0	8,3		
			7,0	0,3	0,3	0,6	10,6	0,6		6,3	10		
1,3			7,9	4,0		0,3	11,3		2,3	5,3	9,3	2,0	6,6
0,6	1,0	2,0	5,6	5,3		0,3	11,0	0,3	2,3	7,3	8,3	6,6	21,6
3,9	5,2	3,6	88,6	46,4	4,5	6,6	113,6	24,7	23,9	77,7	107,6		

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վարանդայի բուսականությունը սաստիկ հարուստ է, երկիրը ծածկված է խիտ անտառներով, արտերով, այգիներով, պարտեզներով և խոտավետ արոտներով։ Անտառները բռնում են 19,280 դեսյատին տեղ, ուր աճում են հետևյալ ծառերը[1]. բեխի, բոխի (Граб обыкновенный, Carpinus Betulus), *բոշնի, թիքենի, թեղի* (карагач, Ulmeus campestris), *լորի* (filia Rubra), *կաղնի* (Quercus Macranthera), *կիչի, կեչի* (береза, Betula), *կոռեղի, կուզենի, հացի* (Fraxinus, ясень), *հաճարկի, հաճարի* (бук, Fagus)։

[1] Օգտվել ենք Մ. Բարխուդարյանի «Արցախ»-ից։

Պաղատու վայրի ծառեր, որ գտնվում են միևնույն անտառներում. ճրո-տանձի, ծտի-տանձի, ճրո-խնձորի, զկոի (զղեարի), (шишковник, Mespilus), *սզնի* (боярышник, Cratesegus), *սալորի* (дикая слива, Prunus divericata), *հունի* (кизил, cornus mascula), *տկողնի* (лещина—лесной орех, corylus), *ընկուզի* (грецкий орех, inglans regia), *իսկ հանդերում՝ միայն մոխրատանձի և լկրթնի։*

Թփեր. *Մացառներում և շամբերում՝ ցախավելի կամ հոբմառկի գերմասրի* (земляная груша, Heliauthus tuberosus), *թբլդի, տատասկ* (чертово колючка, Paliurus aculeutus), *ծմակամոշ (մալինա—*малина), *սևամոշ (հանգիրի մոշ—*ежевика), *մոռամոշ (2—3 թի, ցողուն ունեցող—*клубника), *գետամոշ (գետերի ափի մոշ—*земляника), *մառուրի* (шиповник, Rosa ecuina), *կծբխուրի* (барбарис, Berberis vulgaris), *ցրդի, շուշան, եղինջ* (Urtica), *ալելուկ, շեպ* (Rhapanus Rusticus), *բոխի։*

Ջրերի մեջ կամ մոտերքում՝ ջրիկուտեմ (sium, F. Cresson), *դաղձ, ջրափափուկ, ճռճռուկ* (Erua sativa)։

*Դաշտերում՝ շոմին (վայրի սպանախ—*spinacea), *տոմբալան (գետնախնձորի նման է և միայն խորոված կարելի է ուտել,* Tuber), *սամիթ* (anethum)։

Ինքնաբուս ուտելի կանաչեղեն. *Ծմակներում լինում են՝ խաղազ, կոմբզուկ, սմնդուկ, ծմակթափան, սոկոն (սունկ)։ Հանդերում՝ ձնեբեկ* (asparagus), *փիփերտ, խնջլոդ, շրիշ խնջլոդ, կնձմնձուկ, տրտրպաշար, ուտումտիտեմ* (поступья сумка, capsella), *սիպեզ, թարթանջուկ, պառավապորտ, եղնաճակատ, գինաղոխ։*

Վայրի ծաղիկներ. *Ջրավարդ (մասուրի վարդ), ծմակավարդ, մանուշակ, ձնծաղիկ, նովրուզ, խնձաղա, նարկիզ, մշտհամուկ, (անթառամ ծաղիկ), նունուփար, հարսնածաղիկ* (Papaver Rhocas), *շուշան, մեխակ, ձյունածաղիկ, զամբաղ, լվածաղիկ, խնձործաղիկ, կոռթնը* (Lappa), *արջաթանթուլ, տխտրկոռնը, շնավարունկ, սուտ եղինճ, կածուկ, բիլիբիստի, ագռավի սողան, նրկարար, ալակիզ, բյանկի, պլանուկ* (Conieum Maculatum)[2]։

---

[2] *Բուսաբանական անուններն ու անվանումները ստուգել և ճշգրտել ենք ըստ բուսաբանական բառարանների (Ս. Կ.)։*

ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Վարանդայի կենդանիներից նշանավոր են.

Վայրի կենդանիներ. *արջ, գայլ, աղվես, շաղալ, գիշերի, առնետ, ակյուռ, մուկն, եղջերու, նապաստակ։*

Թռչուններ. *կաքավ, հավփալ, աղավնի (աղունակ), տատրակ, լորամարգի, շարթ, մոշահավ կամ մշահավ, օրի (տուլաշ), արտուտ, Ս. Հակոբի թռչուն, ճնճղուկ, չաձիտ։*

Գիշատիչ թռչուններ. *արծիվ, անգղ, բազե 4 տեսակ, լելակ, ցին, ուրուր, չորթնագող, բու, հողմահար, գայլագռավ, ագռավ, կաչաղակ, ներկարար, ծառակուտկուտ (կտցար), ճանճագող, չղջիկ, ձկնկուլ, ճայ, զուլ։*

Երգեցիկ թռչուններ. *կու, կուկու, հոպոպ, լծի, բաբաճրզտ, չաձիտ, գեղձանիկ, զոզռան, ջրբպզտպզտ, չափարծակի, շիլոյշիլոյ, մշահավ։*

Զվող թռչուններ. *կռունկ, արագիլ, սասարք, սարյակ, ծիծեռնակ։*

Սողուն և զեռուն. *օձ, լոկ, քարաթոթոշ, կանաչ մողես, կրիա, խեցգետին, ոզնի, գորտ, կարիճ, իշախառանջ։*

Միջատներ. *շանճանճ, բոռ, ճախարակ, մշակ, փենթիռն, ճպուռն, մարախ, սևաճանճ, մեծ ճանճ, կանաչ ճանճ, ձիաճանճ, պիծակ, լուսատիկ, կետ, աստծու կով, աստծու եզն, զատիկ, ականջմտուկ, ոթեռ, մոշաթոի, ոսկեպզոջ, սարդ, թիթեռնիկ, աղոթարար (ունի կանաչ գույն և երկար ոտներ)։*

Ընտանի կենդանիներ. *կով, եզ, գոմեշ, ոչխար, այծ, խոզ, էշ, ձի, ջորի, ուղտ։*

Ընտանի թռչուններ. *հավ, բադ, սագ, հնդկահավ, աղավնի։*

ՀԱՆՔԵՐ

Վարանդայում դեռևս չեն սկսել հանքերը մշակել, մի քանի տեղ նկատելի են պղնձի հանքեր, բայց ոչ ոք չի ձեռնարկում մշակելու։ Այսպես, Թաղավարդ գյուղի մոտ կա մի բլրակ, որից բխում է կարմիր ջուր անունով մի վտակ, որ յուր մեջ պարունակելով հանքային բաղադրություններ, խմելու համար վնասակար է։ Սա անցնում է մի խոր ձորով, որ կոչվում է Ջուրաթանին կապ։ Անցյալներում մի շուշեցի հայ ձեռնարկել էր այդտեղի պղնձահանքերը մշակելու, բայց շուտով կիսակատար էր թողել։

Հանքային ջրեր. բուն Վարանդայում նշանավոր հանքային ջրեր չկան։ Տեղացիները առավելապես օգտվում են «Թթու ջրից», որ գտնըվում է Զանգեզուրում։

ՔԱՂԱՔՆԵՐ

Շուշի. նախկին բերդ, իսկ այժմ քաղաք Շուշին տարածվում է 39°35′ հյուսիսային լայնության և 65°25′ արևելյան երկարության տակ գտնվող մի լեռան գագաթին, որ ծովի մակերևույթից 4373—5026 ոտ. բարձրություն ունի։ Այս լեռը հարավ-արևմուտքից արևելահյուսիս տարածվելով՝ հետզհետե ցածրանում է և ներքին մասում բավական հարթ տարածություն կազմում, մինչդեռ հարավարևմտյան կողմում դտնվում է լեռան սեռը։ Լեռան հարավային կողմում տարածվում է մի անդրնդախոր ձոր, որի միջով հոսում է Քարին-տակի գետակը։ Այս մասում լեռը սաստիկ ժայռոտ և ուղղահայաց է։ Նմանապես և հյուսիսային կողմը մի խոր ձոր է, որի միջով հոսում է Ղայբալու գետակը։ Քաղաքը Փանահ-խանի ժամանակ գլխավորապես հյուսիս և արևելյան կողմից պարսպած է եղել, որի երկու՝ Գանձակի և Երևանյան (արևմտյան) դռները դեռևս մնում են, ինչպես և Գանձակի դռան վերև դրված մի քանի թնդանոթները։ Ամբողջ քաղաքը բռնում է մոտավորապես 3—4 քառակուսի վերստ տարածություն, որը կտրատվում է մի քանի մանր և երեք մեծ, հարավից հյուսիս տարածվող ձորակներով, որոնց միջով հոսում է անձրևի ջուրը, տանելով իր հետ քաղաքի անմաքրությունները։

Քաղաքը բաժանված է երկու գլխավոր մասի՝ հայոց և թուրքերի թաղ։ Հայոց թաղը գտնվում է քաղաքի վերին մասում, թուրքերինը՝ ներքևում։ Այս երկու թաղերը միմյանց հետ համեմատելիս պարզ նկատվում է, որ հայկականն ավելի կանոնավոր փողոցներ ունի և, որ գլխավորն է, անհամեմատ մաքուր է։ Տների կողմից ևս հայկական թաղում գեղեցիկ, երկհարկանի տներ շատ կան, թուրքերի թաղում դրանց թիվը շատ քիչ է։

Ասացինք, թե հայոց թաղը մաքուր է, սակայն այս միայն համեմատական էր։ Թաղի բարեկարգ մասում միայն կան փոքր ի շատե լայն փողոցներ, մյուս մասերում փողոցներ անգամ չկան, այլ ծուռ ու մուռ նեղ կածաններ են։ Գլխավոր փողոցների վրա թեև կան մայթեր, սակայն միայն մի արշին լայնության, իսկ փողոցի մեջտեղը անկանոն

քարերով շարած լինելով, սաստիկ խորդուբորդ է, այնպես որ, անվարժ այցելուն շատ դժվարանում է քայլել։ Եվ այս է պատճառը, որ քաղաքում կառքեր չեն ման գալիս, որովհետև անիվները շատ շուտով փշրվում են։

Բացի դրանից, այս փողոցները սաստիկ կեղտոտ էլ են։ Խանութպանն առանց ճնշվելու փողոց է շպրտում ձմերուկի, սեխի կեղևները և այլն։ Ամառը մայթերի առաջ դարսած է լինում ձմերուկ և սեխ, անգործ մարդիկ հավաքվում են սրանց շուրջը և միմյանց հետ զրազ գալիս, ձմերուկը կարմիր է, թե սպիտակ, որքան է կշռում կամ կտրված կտորի միջի կորիզները զույգ են, թե կենտ, սեխը համեղ է, թե անհամ, հետո կտրում և ահագին աղմուկով արտահայտելով իրենց հաղթանակը, հենց տեղն ու տեղը ուտում և կեղևները շաղ տալիս փողոցի մեջտեղը։ Պարզ է, որ այս հավաքված խմբերը կտրում են ճանապարհը, և անցորդը ստիպված է տասնյակ անգամ իջնել մայթից և փողոցի միջով գնալ։ Պատահում էլ է, որ գյուղացիները կանգնեցնում են սայլը փողոցի մեջ և եզներին կամ գոմեշներին մայթի վրա խոտ տալիս։ Դեպի փոստատուն տանող փողոցի վրա, ասենք, որ փողոցները գըրված անուն չունեն, երեսները դեպի մայթը դարձրած և շատ անգամ մայթին ամբողջությամբ բռնած կանգնած են ջորիներ, էշեր, իրենց գլուխը անց կացրած պարկերի դարմանը ծամելով։ Հազվագյուտ երևույթ չէ փողոցներում սատկած կենդանիների, հոտած թուռշու, մքլած պանրի պատահելը։

Մի կողմից կեղտոտությունը, մյուս կողմից սաստիկ ցեխը ստիպում են բնակիչներին տարվա մեծ մասը կրկնակոշիկ հագնելու։

Սրա վրա ավելացնենք և գիշերային մթությունը, որովհետև միայն գլխավոր փողոցներում են լապտերներ վառվում (ընդամենը 172) և այն էլ միմյանցից այնքան հեռու, որ շատ դժվար է առանց լապտերի ման գալ։ Եվ այս է պատճառը, որ ծառաները լապտերը բռնած միշտ առաջնորդում են իրենց «տերերին» և շատ անգամ անքուն հորանջում կլուբի բակում, սպասելով, որ «աղաները» թղթախաղի սեղանից վեր կենան, որպեսզի առաջնորդեն դեպի տուն։

Փողոցային տեսարաններից նշանավոր է և այն, որ քաղաքի հին մասերում կանայք մի կարպետ են ձգում փողոցի պատերի տակ, վրան նստում և գուլպա գործելով, իլիկ, ճախարակ մանելով զրույց անում ու անցուդարձ անողներին մտիկ տալիս։

Գլխավոր փողոցների վրա կան լայն պատուհաններով և ահագին դռներով մի քանի մեծ տներ, որոնց պատուհանները երկաթե խիտ

ցանցով են պատած և դռները ամուր կողպեքներ ունեն։ Ներսն մասերում կան պարսպավոր տներ, սակայն սրանց պատուհաններն էլ պատած են ցանցերով։ Տներ էլ կան, որոնց փողոցի վրայի պատերի մեջ դիտմամբ պատուհաններ չեն թողած։ Այս բոլորը պալչկական բռնություններին ժամանակ տիրող անապահովության ազդեցությունն է, թեև այժմ էլ այնքան ապահովություն չի տիրում։

Ուրախալի է, որ տների առաջ փոքրիկ պարտեզներ կան, պտղատու ծառերով, և երբ մի բարձր տեղից նայում ես, այդ պարտեզները շատ լավ տպավորություն են թողնում։

Հայկական թաղի գրեթե կենտրոնում գտնվում է «Թոփխանա» կոչված հրապարակը, որ մոտավորապես 250 քմ. տարածություն է բռնում։ Սրա մեջտեղում մի գեղեցիկ քյոսքի մեջ վազում է մի աղբյուր, որի ջուրը այլևս չի խմվում. սրա մոտ մի կողմում գտնվում է հասարակական կշեռքը, մյուս կողմում՝ մրգավաճառների շարժական վրանները։ Այս հրապարակը շուշեցիների տնտեսական և մտավոր կյանքի կենտրոնն է. այստեղ է ծախվում գլխավորապես մթերքների ամենամեծ մասը։ Այստեղ խառնված են միմյանց՝ մարդիկ, ջրով կամ փայտով բարձած էշերը, ածուխ բարձած ջորիներն ու ուղտերը, փայտակեր ձիերը և այլն։

Այս փոքրիկ տարածության մեջ մինը մյուսի կողքին շարված են ամեն տեսակ մթերքներ և ամառը՝ ահագին քանակությամբ մրգեր և պտուղներ։ Մարդիկ անդադար, ձեռով ու ոտով անասուններին հրելով, ճանապարհ են բաց անում, անցուդարձ անում և այս ու այն բանը գնում։ Պետք է ներկա լինեք սակարկության, որ տեսնեք թե որքան երկար է տևում։ Քանի անգամ գնորդը հեռանում և վերադառնում է, միջնորդներ է ուղարկում, ձեռք ձեռքի խփում, սուտ-սուտ խոստումներ տալիս, ամոթալի կերպով գովում և պախարակում ապրանքը։

Հրապարակի նեղլիկ մայթերի վրա կանգնած քաղաքի բուրժուաները խոսում են վաճառականության և ընթացիկ գործերի մասին։ Մի փոքր-ինչ տարիքավորները նստած են խանութների սանդուղքների վրա և առավելապես անցյալի մասին զրույց անում։ Պետք է ասել, որ Շուշում ռենտա ունեցող անգործ մարդկանց թիվը փոքր չէ և սրանք ամբողջ օրը այդտեղ են անց կացնում։ Ղարաբաղի բազմաթիվ մշակները (համբալ) վխտում են նրանց շուրջը, նրանց գնածները տուն տանելու։ Սակայն շատ անգամ հարուստ բուրժուան խնայում է մի երկու կոպեկը մշակին տալու, հանում է գրպանից ահագին գունավոր թաշկինակը, առածը լցնում մեջը և ծանր քայլերով ուղևորվում դեպի տուն։

Կիրակի և տոն օրերին այստեղ է լինում և արհեստավորների դասակարգը։ Ինտելիգենտ դասակարգն էլ, ուրիշ տեղ չունենալով, փոքրիկ պտույտից ետ այստեղ է գալիս և խումբ-խումբ կանգնած զանազան հարցերի մասին զրուցում, վիճում, բայց այնպես բարձր, որ բավական հեռու կանգնողներն էլ կարող են ազատ կերպով լսել։

Մինչդեռ տղամարդիկ այստեղ են համախմբվում և միմյանց հետ տեսնվում, խոսում, կանայք էլ եկեղեցի են գնում, ուր ամբողջ ժամասացության ժամանակ միմյանց հետ խոսում են, աղջիկ են ընտրում իրենց որդիների համար, զանազան բամբասանքներ անում և այլն։ Իսկ սրանց չափահաս որդիները զբոսնում են եկեղեցու բակում, եկեղեցի եկող օրիորդներին դիտելով և քննադատելով։

Շուշում կա չորս եկեղեցի և մի կուսանաց մենաստան։ Բոլորից գեղեցիկն է Ղազանչեցվոց Ս. Փրկիչ մայր եկեղեցին։ Սա նշանավոր է և ճարտարապետական տեսակետից. սրա երկարությունն է 35, լայնությունը՝ 23, իսկ բարձրությունը՝ մոտ 35 մետր։ Շինված է բյուզանդական ոճով, հատակագիծը խաչաձև է։ Չորս քառանկյունի, յուրաքանչյուր կողմը մի մի հատ լայն մատնեքով (cannelure), սյուների վրա բոլորում են ռոմանական կամարներ, որոնց վրա բարձրանում է կաթուղիկեն։ Ունի 10 պատուհան, յուրաքանչյուրը մի մետր լայնության և հինգ մետր երկարության։ Դռների բարձրում գտնվող պատուհանները խաչաձև են։ Դռները երեքն են, որոնց առաջ շինված են գեղեցիկ, բոլորաձև գավիթներ՝ երեքական դռներով։ Միջին դռների վերևում կան մի-մի սրբի ռելիեֆ պատկեր։ Եկեղեցին ներքուստ բավական փառահեղ է. խաչկալը բավական գեղեցիկ, չորս ահագին ջահ ավելի ևս փայլ են տալիս։ Խորանների վրա կա նաև ուրիշ երկու խորան։

Զանգակատունը գտնվում է եկեղեցու արևմտյան կողմում, փոքր-ինչ հեռու. սա մի եռահարկ շինություն է, որի ստորին հարկի չորս անկյուններում կանգնեցրած են մի մի հրեշտակապետի քարե արձան, որ չափից դուրս կոպիտ են շինված։ Գեղեցիկ է միայն միակտուր քարից շինված շղթան։

Եկեղեցին սկսված է 1868 թ. և ավարտված 1887-ին։

Մյուս երեք եկեղեցիներն ու կուսանաց մենաստանը ճարտարապետական տեսակետից առանձին նշանակություն չունեն։

Բացի եկեղեցիներից, մինչդեռ ուրիշ գավառական հայ քաղաքների, ինչպես Ախալքալաքի, Ախալցխայի, Աղեքսանդրապոլի կանայք համախմբվում են թաղնիքներում, միմյանց հետ տեսնվում, ժամերով խոսում, աղջիկ ընտրում, շուշեցիները զրկված են այսպիսի մի հասա-

բակական և առողջապահական տեսակետից անհրաժեշտ տեղից, որովհետև ջուր չլինելու պատճառով բաղնիքներ չկան։ Միմիայն մի թուրքի բաղնիք կա, որ սաստիկ անմաքուր լինելու պատճառով հայերը չեն հաճախում։ Խեղճ մայրերը ստիպված են ամեն շաբաթ օր տանը ջուր տաքացնել, փոքրերին լողացնել, իսկ մեծերի միայն գլուխները լվանալ։

Սակայն շուշեցի բուրժուա և ինտելիգենտ կինը ունի որպես հավաքատեղի քաղաքային կլուբն ու զբոսավայրը, իսկ արհեստավորի կինը՝ նահատակի գերեզմանը և մոտակա ուխտատեղիները։

Քաղաքային կլուբը գտնվում է «Թոփխանի» կողքին, մի եռահարկ գեղեցիկ շինության մեջ։ Այստեղ թեև կա զրադարան և ընթերցարան, սակայն ավելի թղթախաղն է ընդունված, քան թե ընթերցանությունը։ Զմեռը գրեթե ամեն շաբաթ երեկո պարահանդես է լինում, որի ընթացքում հայ կանայք և օրիորդները աթոռների վրա մեխված մնում են և միայն մի քանի ռուսներ թռչկոտում են։ Սակայն երբեմն էլ մի քանի հայուհիներ հրաշալի կաքավում են տեղական պարերը՝ ռազանդարների ներդաշնակությամբ։

Քաղաքային զբոսավայրը գտնվում է արևմտահարավային կողմում, բլրի լանջին։ Այստեղ արահետները տերևներով բարձրանում են և գեղեցիկ տեսարան պարզում ճեմողների առջև։ Ծառեր շատ քիչ կան։ Երկու հովանոց և մի ամենատգեղ բուֆետ կազմում են զբոսավայրի միակ զարդարանքը։ Սակայն ամառը շաբաթը երկու անգամ նվագում է զինվորական երաժշտական խումբը առավելապես տեղական եղանակներ և գրավում բազմաթիվ ամառանոց եկողներին այդտեղ։

Զբոսավայրի այդպես անշուք լինելու պատճառն այն է, որ քաղաքը զուրկ է ջրից, կա միայն երկու աղբյուր քաղաքի մեջ, մյուսները դուրս են և այն էլ բավական հեռու, այնպես որ ջրի մի իշաբեռն արժե 10—20 կոպեկ։ Լվացքի և այլ գործածության համար կան ջրհորներ, բայց առավելապես գործ է ածվում անձրևի ջուրը, որ խողովակներով հավաքվում լցվում է հատկապես այդ նպատակով շինված ջրի շտեմարանները և կամ ուղղակի թափվում մեծ տակառների մեջ։ Առաջիկայում միայն շնորհիվ տեղացի մի հարստի՝ պ. Թամիրյան, շուշեցիները կունենան մաքուր ջուր, որ գալիս է 18 վերստ հեռավորությունից։

Հասարակ դասակարգի զբոսավայր Նահատակի ուխտատեղին գտնվում է Հին-Հանգստարանի ներքևում։ Սա Իբրահիմ խանի ժամանակ նահատակված Անտոն անունով մի թիֆլիսեցու գերեզման է։

Թուրքաց թաղը շատ կեղտոտ է. բավական է ասել, որ հայոց թաղի կեղտոտությունները կոյուղիներով հոսում են մինչև այս թաղը, իսկ այնտեղից անցնում են բացօթյա արխերի միջով, տարածելով սարսափելի գարշահոտություն։ Թուրքերը միշտ հրաժարվել են կոյուղիներ շինել տալուց, չնայած որ այդ արխերը անցնում են նույնիսկ նրանց տների առջևից։

Այս թաղում նշանավոր են գլխավոր մզկիթը, որ բավական գեղեցիկ շինություն է, Մեհտի խանի բնակարանը, ուր այժմ ապրում է նրա աղջիկը, շահզադեի և ուրիշ մի քանի հարուստ մարդկանց բնակարանները։

Այստեղ գտնվում է և ռուսաց միակ եկեղեցին, որ ճարտարապետական տեսակետից ոչ մի արժեք չունի։

Շուշու բնակիչները գլխավորապես հայեր և շիա մահմեդական պարսիկներ են։ Հայերը գաղթել են Արցախի Շոշ և ուրիշ գյուղերից, Ղազանչիից, Ագուլիսից և Մեղրիից։ Ընդամենը 18796 արական, 14456 իգական 33252 երկու սեռից։ Հայերի թիվն է 11637 արական, 8947 իգական, 20584 երկու սեռից։ Թուրքերինը՝ 7159 արական և 5509 իգական։

Վարչականորեն Շուշին գավառական քաղաք է և պատկանում է Գանձակի նահանգին, ունի քաղաքագլուխ, դումա և գավառապետ։ Կա նաև հաշտարար դատարան, ոստիկանատուն և այլն։

Այստեղ է և Ղարաբաղի Հայոց կոնսիստորիան իր առաջնորդներով, որ բացված է 1830 թ. Բաղդասար մետրոպոլիտի օրով։

ՆՇԱՆԱՎՈՐ ԳՅՈՒՂԵՐԸ

Զանախչի կամ Ավետարանոց. Մելիքանիստ Զանախչի կամ Ավետարանոց գյուղը գտնվում է Շուշուց դեպի արևելահարավ, մոտ 17 վերստ հեռավորությամբ։ Սա տարածվում է մի փոքրիկ հարթության վրա, որ կտրվում է հարավային և արևելյան կողմում Քիրսա գետի ձորակով, հյուսիսարևելյան կողմից՝ Հոիփսիմեի ձորով։ Իսկ արևմտյան կողմում ընդհարվում է մի ժայռի, որ լեզվաձև տարածվում է մինչև Կուսանաց անապատը, որ գտնվում է Քիրս գետակի անմիջապես ափին բարձրացող բլրակի վրա։ Այս ժայռը պարսպի հարավարևմտյան դռան մոտ ճեղճեղքվելով, կազմում է մի մթին քարանձավ, որ «Քաջքատուն» է կոչվում։

Կուսանաց անապատի արևմտյան կողմից ձգվում է մի հատ պա-

բիսպ, որ շրջապատելիս է եղել ամբողջ գյուղը, այժմ կանգուն է միայն մի մասը և մի քանի աշտարակներ։

Գյուղի հարավային կողմում, անապատին մոտ գտնվում է Մելիք Բաղու ապարանքը, որ բաղկացած է եղել մի քանի զարդամներից, ամբողջովին քարից շինված։ Այս սենյակները դեռևս կանգուն են, և նրանց մեջ բնակվողներ կան, մինչդեռ նրանց վերևը իշխան Մադաթյանի շինած հարկը բոլորովին քանդված է։

Արևմտյան կողմում, ժայռի անմիջապես ափին երբեմնի կանգնած է եղել Մելիք-Հյուսեին Ա-ի ապարանքը, որի առաջ բացվում է մի հիանալի տեսարան և որը այժմ բոլորովին ավերակ է։

Իսկ հյուսիսային կողմում, պարսպին կից գտնվում է Մելիք Շահնազար Բ-ի ապարանքը կամ ամառանոցը, բաղկացած մի քանի զարդամներից և կամարակապ սենյակներից։ Դլխավոր դռան վրա կա հետևյալ արձանագրությունը. «Այս ամարաթս Մելիք Շահնազարի (Գ) որդի Սելիմ-բեկին, որ է այս շինութիւնս, որ շինել տված շեմն է թ. ՌՄԼԵ»։

Մելիք Բաղու ապարանքի մոտ գտնվում է Մելիք Բաղու ՈՀ թվին շինած Ս. Աստվածածնի եկեղեցին։ Չորս անպաճույճ սյուների վրա բոլորում են ռոմանական կամարներ և ռոմանական կամարակապ ձեղուն, որի վրա բարձրանում է մի փոքրիկ կաթուղիկե։ Եկեղեցին ունի մի ավագ և մի փոքրիկ խորան, երկու էլ խորհրդարան, որոնց վերև կա մի մի գաղտնի սենյակ, ուր պահվում են եկեղեցու թանկագին իրերը։ Եկեղեցում կա. 1) Կենաց փայտի մի մասը, մի արծաթյա խաչի մեջ. 2) Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների մասունքները. և 3) Պանդալիան բժշկի մասունքը։

Գյուղից դեպի արևմտահարավ գտնվում է հին գերեզմանատունը, ուր կան բազմաթիվ, ուշադրության արժանի տապանաքարեր, ռելիեֆ պատկերներով ծածկված։

Ներկայումս Չանախչին ավելի մի գյուղաքաղաքի է նման։ Բազմաթիվ, գեղեցիկ և եվրոպական ճաշակով կահավորված տները, բավական վայելուչ խանութները բոլորովին կերպարանափոխում են գյուղի տեսքը։ Գյուղում կան նաև մետաքսի երեք գործարաններ, որոնք ահագին ազդեցություն են ունեցել և ունեն գյուղի տնտեսական և բարոյական վիճակի վրա։ Սա և շուշեցիների սիրելի ամառանոցն է։

Այժմյան բնակիչների թիվն է 265 տուն, 973 արս., 849 իգ., ընդամենը՝ 1822 հոգի։

Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ և առևտրով։

Շոշու գյուղ. գտնվում է Շուշի քաղաքից դեպի արևելահարավ, հազիվ 4 վերստ հեռավորությամբ մի բարձրավանդակի լանջի վրա։ Գյուղի հյուսիսային կողմում ձգվում է մի խոր ձոր, որի միջով հոսում է մի փոքրիկ վտակ, որ թափվում է Գարգարի մեջ։ Գյուղը բավական ընդարձակ տեղ է բռնում և Շուշուց դեպի հյուսիս գտնվող գրեթե բոլոր գյուղերի միակ ճանապարհն է դեպի քաղաքը։ Գյուղում կա մի՝ երկու կամարների վրա հաստատված եկեղեցի, ՌՃԴ (1655) թվին շինված։ Բնակիչների շատ քիչ մասն է բնիկ, շատերին Մելիք Բաղին է Սոթից բերել և բնակեցրել այստեղ, մի քանի գերդաստան էլ Ջրաբերդից են եկել։ Պարապում են երկրագործությամբ. հողն արքունի է, սակավ և անջրդի։ Գյուղում կա մի բավական մեծ և գեղեցիկ մետաքսի գործարան, որ գործ է տալիս գյուղի կանանց և աղջիկներին։

Քաղաքի ազդեցությունը զգալիորեն նկատվում է այս գյուղի վրա։ Տների մեծ մասն արդեն զարդամի վիճակից փոխարկվել է կանոնավոր, երկհարկանի բնակարաններու։ Կան մի քանի խանութ և մինչև անգամ մի իջևան։

Գյուղի հանդեպ, դեպի հյուսիս, ձորակի մյուս ափի բարձրության վրա կա մի խարխուլ եկեղեցի, որի արևմտյան լուսամուտի մեջ մի խաչքարի վրա կա հետևյալ արձանագրությունը. «թվ. ՉԷ (1458) ես Ղոշ սարկավագ գոյարեցի (կանգնեցի՞) խաչս Ազիզա մաւր իմ»։ Եկեղեցու շուրջը մի ընդարձակ հանգստարան կա, որի գերեզմանաքարերը ծածկված են շատ հետաքրքիր ռելիեֆ պատկերներով։

Կյունի ձորաստան. Կյունի (Արեգդեմ) ձորաստանի երեք կողմից բոլորում են լեռներ և միայն հարավարևելյան կողմն է բաց։ Հյուսիսային սարը կոչվում է Ղալին-խութ, ուր երբեմնի կառուցված է եղել մի ամրոց։ Արևմտյան կողմինը Ս. Եղիշա կուսի անապատի սարն է։ Գյուղի տները սփռված են Ղալին-խութի լեռների լանջերին, իսկ գոմերն ու կալերը գտնվում են դեպի արևելահարավ, գյուղից մի վերստ հեռավորությամբ։ Գրեթե բոլոր տների առաջ կան թթենու ծառեր, այնպես որ համարյա ամբողջ գյուղը ծածկված է ծառերի մեջ և շատ գեղեցիկ տեսարան է ներկայացնում։ Կանոնավոր փողոցներ չկան։ Տների մեծ մասը երկու մասից է բաղկացած. հին զարդամից և նոր, եվրոպական ճաշակով շինված սենյակներից։ Կան և բավական թվով երկհարկանի մաքուր տներ։ Այժմ այլևս հին զարդամի ձևով տներ չեն շինում։

Բուն գյուղում կա մի հասարակ եկեղեցի, մինն էլ նոր շինում են կալերի մասում։ Դպրոցական շենք չկա, թեև գոյություն ուներ ս. Գրիգորյան անունով մի ծխական միդասյան ուսումնարան։

Օդը շատ առողջարար է, ջուրը, որ հայթայթում են երեք աղբյուր, համեղ է և մաքուր։

Գյուղի շուրջը տարածվում են այգիներ, ուր բուսնում են թթենիներ, խաղողի որթեր, տանձենիներ և խնձորենիներ։

Բնակիչները զբաղվել են խաշենու, Զարդախլու և Ապուլիս գյուղերից, ընդամենը՝ 243 տուն. 1046 արական, 896 իգական. 1942 երկու սեռի։ Պարապում են երկրագործությամբ (ամբողջ Վարանդայում սրանց ցորենը ամենից լավն է համարվում), այգեպանությամբ (քաշում են օղի և գինի) և անասնապահությամբ։

Սարուշեն. համանուն լեռան հարավ արևմտահայաց լանջի վրա, առանց կանոնավոր փողոցների։ Բակերում անկված են ծառեր, որ բավական գեղեցկություն են տալիս գյուղին։ Տների մեծ մասը դարաղամ է, թեև կան և մի քանի դեղեցիկ երկհարկանի տներ։ Կա և մի՝ Ամենափրկիչ անունով, մի կամարի վրա հաստատուն, թե ներքուստ և թե արտաքուստ գեղեցիկ եկեղեցի, որ ամբողջ Վարանդայի առաջնակարգ եկեղեցին է։ Եկեղեցում գտնվում է ՈՂԱ թվին գրված մի մագաղաթյա ավետարան, որին ուխտ են գալիս գրեթե բոլոր գյուղերից։

Կլիման ցուրտ է, որովհետև արևմտյան կողմից բարձրացող Քիրս գագաթից շարունակ ցուրտ քամի է փչում, մանավանդ ձմեռը։ Ամառն էլ շատ հով է։ Բնակիչները բնիկ են, 74 տուն, բոլորն էլ հայ լուսավորչականներ, 348 ար., 261 իգ.։ Պարապում են երկրագործությամբ, հողն արքունի է։ Բացի գյուղի շրջակայքի հողերը, ունեն նաև Ամարասի մոտ հողեր։ Այգիներ չունեն, որովհետև ընդամենը միայն երկու աղբյուր ունեն։

Գյուղում կա մի հայոց եկեղեցական ծխական երկսեռ միդասյան դպրոց, որի շենքը կառուցել է Գ. Այվազյանը յուր ծախքով, և որ բավական գեղեցիկ և հարմարավոր է։

Վարազարուն. այս գյուղը տարածվում է Բողր-խանի սարից սկիզբ առնող լեռնագոտու Դավրախուրի արևելյան և Մատաղախուրի հյուսիսային լանջերի վրա։ Առաջը տարածվում է մի փոքրիկ դաշտակ։ Գյուղում կա մի քարաշեն, բավական գեղեցիկ եկեղեցի և Ս. Գրիգորյան եկեղեցու ծխական միդասյան դպրոցի բավական հարմարավոր շենք։ Բնակիչները Ղարագաղից են. ծերունիներն ասում են, թե Քոչար անունով մի հայ Ղարագաղի Բաղր-խանին, նրա ժողովրդին պատճառած

նեղությունների պատճառով, սպանում և փախչում, վերահաստատվում է այս գյուղում, ուր միայն Իբրահիմ խանի միրղանները էին բնակվում։

Բնակիչներն այժմ 170 տուն են, 506 ար., 425 իգ.։

Պարապում են գլխավորապես այգեգործությամբ, գինեգործությամբ, երկրագործությամբ (հողը բեկական է) և անասնապահությամբ։

Թուրքերը և ռուսները այս գյուղին Արանզամին անունն են տալիս։

Նոր Թաղլար. այս գյուղը Վարանդայի ամենաբազմամարդ գյուղն է և գտնվում է Շուշուց դեպի արևելահարավ, Ղուռու-չայ գետի ափին բարձրացող լեռնաշղթայի հարավահայաց լանջին։ Ասել ենք, որ այս լեռնաշղթան տարածվում է մինչև Քիրս գագաթը։ Գյուղը թեև զուրկ է կանոնավոր փողոցներից, սակայն տները բավական գեղեցիկ են և դարաղամների թիվն անհամեմատ փոքր։ Կա նաև մի եկեղեցի, չորս քահանաներով։ Սուրբ Սահակյան միդասյան եկեղեցական ծխական դպրոցը, որ ունի մի գեղեցիկ, գյուղացիների ծախքով շինված շենք, այժմ փակ է։

Կլիման ցուրտ է։ Շատ անգամ մշուշը պատում է ամբողջ շրջակայքը և զրկում անցորդին գեղեցիկ շրջակայքը դիտելու բավականությունից։

Բնակիչները բոլորն էլ լուսավորչական հայեր են, 530 ծուխ, 1781 արական, 1459 իգական, տեղափոխված Հին Թաղլարից։ Պարապում են գլխավորապես երկրագործությամբ և որովհետև հողը մեծ մասով ապառող, շատ քիչ և պակաս արդյունաբեր է, ուստի և պարապում են նաև ածխագործությամբ։ Եվ պետք է ասել, որ շուշեցիների գործածած ածխի ամենամեծ մասը Թաղլարցիներն են հայթայթում։ Ամառը պարապում են և թթենիների մշակությամբ, և օղեհանությամբ։

Բեռնակիր կենդանիներից Թաղլարցիները գլխավորապես ջորիներ են պահում, երկիրը լեռնոտ լինելու պատճառով։ Ձիեր շատ քիչ կան։

Թաղլարի շուրջը կան նախկին գյուղերի ավերակներ, այսպես՝ արևելահյուսիս բարձրանում է Մար-Խաթունի (Մայր-Խաթուն) սարը (1199 տա. բարձ.), որի վրա գտնվում են համանուն գյուղի ավերակները։ Այստեղ կա մի փոքրիկ մատուռ, ՌԺԲ թվին շինված, և մի հանգրստարան։

Թաղլարի հարավային կողմում, Ղուռու-չայի ձախ ափին գտնվում է Իշխնեցեք, այսինքն՝ Իշխանի գյուղատեղին, իսկ դեպի արևմուտք՝ Հանգած եղցե (եկեղեցի) անունով մի եկեղեցի, հանգստարան և գյուղատեղի։

ՆՇԱՆԱՎՈՐ ՎԱՆՔԵՐԸ

Ամարաս. *Ամարասը գտնվում է Շուշուց դեպի արևելահարավ 45 վերստ հեռավորությամբ, Մուղանի դաշտի մեջ, որ գալով ընդհարվում է Լուսավորչի և Խազազի սարերին և կազմում մի գեղեցիկ հովիտ, որի միջով հոսում է Ամարասու վտակը, սկիզբ առնելով շրջակա գյուղերի աղբյուրներից։*

Վանքը գետեղված է մի 94 մետր երկարության և 56 մետր 50 սանտիմ լայնության և 5 մետր բարձրության պարսպի մեջ, որի չորս անկյուններում բարձրանում են մի մի բուրգ, իսկ պարսպի մեջ կան հրացան արձակելու տեղեր։

Վանքը 23 մետր երկարություն, 12 մետր 50 սանտիմ լայնություն և 6 մետր բարձրություն ունի։ Վերաշինված է վերջին անգամ 1858 թ., սրբատաշ մաքուր քարից։

Չորս քառանկյունի անպատվանդան սյուների վրա բոլորում է ռոմանական կամարակապ ձեղունը։ Արևմտյան կողմի առաջին կամարների միջև բացվում է մի մետր տրամագծով մի կլոր անցք, որի վրա շինված է մի փոքրիկ կաթուղիկե, որ ծառայում է որպես զանգակատուն։ Ունի միայն մի դուռ ռոմանական կամարով արևմտյան պատի մեջ, որի բարձրում՝ նույնպես ռոմանական մի պատուհան։ Հյուսիսային և հարավային պատերի մեջ ևս բացվում են մեծ և լայն նույն ձևի երեքական պատուհաններ, ինչպես և մինն՝ արևելյան պատում։ Ունի միայն մի ավագ խորան և երկու խորհրդարան։ Սեղանի առաջ կախված է մի գեղեցիկ ջահ։

Ատյանի հյուսիսային կողմից 18 ոտ. սանդուղով իջնում են մի ստորերկրյա 3 մետր 75 սանտիմետր երկարության, մի մետր 90 սմ. լայնության և 3½ մետր բարձրության մի փոքրիկ վիրապ, ուր ամփոփված են Ս. Գրիգորիս Ազվանից կաթուղիկոսի նշխարները։ Այս մատուռը բացի այժմյան դռներից ունեցել է և մի ուրիշ դուռ արևելյան կողմից, որ այժմ փակված է։

Վանքի մեջ, հյուսիսային դասի մոտ, պատին կից գտնվում է մի բավական գեղեցիկ գերեզմանաքար, որ ընկնում է մատուռի մեջ ամփոփված Ս. Գրիգորիսի նշխարների վրա։ Գերեզմանաքարը մի պատվանդանի վրա դրված դագաղաձև միաձույլ քար է, որի եզրերը կեղեցիկ, շքեղակապ նախշերով եզրափակված են։ Քարի երեսին քանդակված է կաթողիկոսական թագ, գավազան և խաչ, իսկ ներքևում կա հետևյալ տապանագիրը.

«Տամբարան սրբոյն Գրիգորիսի Ազուանից կաթուղիկոսի բոլոր սրին Գրիգորի Լուսավորչի Պարթևի»։

Տապանաքարի երկու կողքին՝ «Մնեալ յամի ՉԻԲ (322). օծեալ Յեւ (340) եւ նահատակեալ ՅԽԸ (348) ի Սանեսան քաղաքէն Մասգգրբաց 'ի Դրբենդ. բերեալ յԱմարաս սուրբ նշխարս ի ձեռն ձեռնասուն սարկաւագաց նորին Արցախունի։

Սրծանահաւս սրբոյն Գրիգորիսի աշխատութեամբ նաւատարապետ Միխայէլ Տեր Խաչատրեանց Շուշեցւոց ի յիշատակ կենդանեաց եւ երանելոց իւրոց։ 'ի 1889 ամի 1 նոյեմբերի»։

Գերեզմանաքարի կողքից մի փոքրիկ անցք է բացված, որտեղից ուղղողները հող են վերցնում և ուտում կամ խառնում ջրի հետ, խմում։

Վանքի խորհրդարանում դրված է Ս. Գրիգորիսի մասունքը արծաթի ձեռքի մեջ ամփոփված։ Ժողովուրդը մատանիներ է անց կացրել մատները և մի սաթից պատրաստված ապարանջան դրել թևը։

Պարսպին կից գտնվում են 24 կամարակապ, բավական բարձր սենյակներ, որոնք կարող են մասնավոր վերանորոգության։ Այժմ հարավային կողմում գտնվող երկրորդ հարկի երեք սենյակը վերանորոգում են վանահոր բնակության համար։ Կան նաև երկու ընդարձակ դռներ և երկու սենյակ ձիապանների համար։

Վանքի կալվածներն են.

1) Վարելահող՝ մոտ 300 դես.։ 2) Այգեստեղի՝ մոտ 340 դես.։ 3) Մի ջրաղաց։ 4) 10 կով, մի ձի և մի ավանակ։ Տարեկան եկամուտը հասնում է 700 ռ.։

Վանքը այժմ պահպանում է մի վարդապետ։

Հիշեր. գտնվում է Ամարասից դեպի հարավ, համանուն լեռնապուռ հյուսիսային լանջի վրա։

Այս գյուղում նշանավոր է Ս. Գրիգորիսի հոյակապ, սրբատաշ քարերով շինված եկեղեցին, որի երկարությունն է 19, լայնությունը՝ 14, իսկ բարձրությունը՝ մոտ 8 մետր։ Չորս սյուների վրա բոլորում են ռոմանական կամարներ և ռոմանական ձեղուն։ Եկեղեցու ժողովրդյան կանգնած տեղից բարձրանում է մի փոքրիկ գմբեթ։ Եկեղեցու մեջ կա մի սեղան և երկու խորան։

Եկեղեցու պատերի վրա կան հետևյալ արձանագրությունները։

Սեղանի ժողովրդահայաց երեսին.

«Կամաւն Աստուծոյ ես Պետրոս Կաթուղիկոս Ազուանից սուրբ աթոռոյ Գանձասարայ՝ նորոգեալ սուրբ աթոռս Ամարասայ արեւի եպիսկոպոսութեան բոլոր նահանգի Վարանդու եւ Քոշիզու, քանզի

փոխկոտեալ եւ պատառեալ էին զվիճակ սուրբն արարեալ ըստ իւրամանչիւր կամաց. իսկ մեր զցանկ հայրենի նորոգեալ ժողովեցաք, նորոգեցաք զսիրելի աշակերտս մեր զտէր Բարսեղ արքի եպիսկոպոսն, որ եւ հրամայեցաք սմա շինել զեկեղեցի իմ Հովարան Ամենասուրբ, զոր եւ շինեալ կատարեաց ըստ մերում հրամանի յաւուր տաճարի այլակերպութեանն Քրիստոսի. եւ աւրհնեցաք զսուրբ տաճարս անուանելով զսա սուրբ Գրիգորիս՝ բերելով ի նշխարաց սրբոյն Գրիգորիսի ամփոփեցաք երկիրս Վարանդու եւ Քոշիզու, զի եղիցի այս երկու աթոռս մի: Ով որ զայս վիճակս բաժանել եւ զոր նստեցուցանել այլ տեղի, եթէ կաթուղիկոս իցէ կամ եպիսկոպոս Տէր զայնպիսին՝ նզովեալ եղիցի ՅԺԸ հայրապետացն, ընդ խաչանանուացն դասեցի. Յուդայի մասնակից եղիցի: Այս կտակ եւ արձանագիր յաւիտեան մնայ հաստատ»:

Հարավային դռան վրա.

«Շնորհօքն Քրիստոսի ես Բարսեղ եպիսկոպոս աշակերտ Պետրոս Կաթուղիկոսին են ծնողսն իմ Աղայն եւ Գիլազայն ի գաւառէն Վարանդու, ի գեղջէ Գիլան՝ նորոգեալ պայծառացուցի զսուրբ աթոռս Ամենասուրբ, պարսպօք շրջապատեցաք հանդերձ յոգնաթիւ սենեկօք, զեկեղեցիս շքեղացուցաք զարդուք, տուաք շինել զեկեղեցիս անուամբ Սրբոյն Գրիգորիսի Հովարան սուրբ աթոռոյն Ամենասուրբ, որ եւ մասն բերեալ ի նմանէ ամփոփեցաք ասա, իսկ հիմնարկեցաւ ՌՃԺԶ. թվին, կատարեցաւ ՌՃԻԵ-ին»:

Հարավային խորանի դռան վրա.

«Մեր Հիրեւեայ նամիաթս տանուտէր Ղասումս, մեծ եւ փոքր նանապարհի գլխի տափին սկիզբն վախմ էր սուրբ Աստուածածնին. մեր եւս վախմ արարաք Սուրբ Գրիգորիսին. ով քակէ, նզովեալ եղիցի յԱստուծոյ»:

Աջ խորանի մեջ կան երկու գերեզմանաքարեր, որոնցից մեծի վրա կա հետեւյալ տապանագիրը.

«Այս է տապան Հայրապետի, սրբազան մեծ վեհապետին
Տեառն Իսրայէլ Գիտապետի, տանս Աղուանից նովուապետի.
Աջորդ սրբոյն եղիշէի, աթոռակալ Գրիգորիսի.
Ժառանգ մեծին Սիմէոնի, և թոռն պետին Ներսիսի,
Զի էր որդի մեծասեռի, իշխանազնեայ յայն Ապրէսի,
ՌՄՄԷ Հայոց թուի, յուլիսի ՅԵԵՖ վախճանի.
Ցիշման առցէ սա արժանի, ով որ կարդայ հանդիպեսցի»:

Արևմտյան դռան վրա.

«Ես Պետրոս կաթուղիկոս՝ աշակերտ Ղուկաս վարդապետին եւս շինել կաթուղիկէս յիշատակ ինձ եւ աշակերտին իմոյ Բարսեղ եպիսկոպոսին. յիշեցէք ի Քրիստոս:

Աստուած աւրհնէ Քոշիզու ժողովուրդն այն աւրհնութեամբն, որ ոչ անցանէ. ձեռնտու եղեն կրին եւ քարին:

Զաւրութեամբն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ի դառն եւ ի նեղ ժամանակիս, վասն ծովացեալ մեղաց մերոց եկն մարախ եկեր զերկիրս Աղուանից եւ ապերեաց բազում տեղիս ի թագաւորութեան Շահ Սուլէմանին, պարոնութեան Միրզա Ղուլի բէկին եւ իշխանութեան երկրիս Վարանդու Մելիք Բաղու որդի Մելիք Շանանզարին եւ օժանդակութեան Ոլանիսին եւ քահանայից եւ տանուտերաց, մեծամեծաց եւ փոքունց ամէն. թվին ՌՃԻԲ:

Կուսանաց անապատ. *«Կուսանաց անապատ» կոչված վանքը գտնվում է Զանգեզուրի գյուղի հարավ-արևմտյան կողմում, մի փոքրիկ բլրի վրա, որի եզրերը լիզում է Քիրսա գետակը և առջևում բարձրանում Քիրսի, Ղոնդիկի և Մավասի սարերը, այնպես որ անապատը յուր կույսերին միշտ նվիրել է մի գեղեցիկ տեսարան։ Անապատի արևմտյան կողմից ձգվում է նախկին պարիսպը, որ գնում միանում է «Քաջբատուն» կոչված ժայռին։*

Դռան ճակատակալ քարի վրայի արձանագրությունը՝ «ԵԿԵՂԵՑԻՍ ԻՍ ՌԿԵ»,—*պարզվում է եկեղեցու հիմնարկության ժամանակը։ Իսկ Սարգիս եպիսկոպոս Ջալալյանի այս գյուղում տեսած մի գեղեցկագիր ավետարանի հիշատակարանը*[1] *հաստատում է, որ վանքը շինել են Գայանե և Հռիփսիմե քույրերը, Տեր Առաքելի աջակցությամբ։ Այս ավետարանը ես չգտա գյուղում, ո՞վ գիտե ինչպես է անհետացել։*

Բայց ավանդությունը այս վանքի հիմնարկությունը Աղվանից թագավոր Վաչագան Գ-ին է վերագրում, իբր թե սա քրիստոնեությունը ուրանալուց հետո զղջացել, առանձնացել է այստեղ և յուր կյանքի մնացած օրերը ավետարան կարդալով է անցկացրել, որի համար և գյուղը Ավետարանոց է կոչվել։

Մի ուրիշ ավանդություն էլ ասում է, թե Աղա Մամադ-Շահի 1797 թ. արշավանքի ժամանակ զինվորները մտնում են այս վանքն ավերելու։ Բոլոր կույսերը փախչում են անտառը և թաք կենում, բացի մինից, որ մի փոքր ուշանում է յուր կիսատ աղոթքը վերջացնելու։

---

[1] *Հասան-Ջալալյան Ս., Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858 եր. 246—247։*

երբ նա դուրս է գալիս, նրա գլխին շողում է զինվորի սուրը, սակայն նա խույս է տալիս և Աստվածամոր օգնությունը հայցելով՝ քարափից ցած ընկնում և անհերևույթ ուժի զորությամբ անվտանգ հասնում գետնին և թաք կենում անտառում։ Այս արշավանքի ժամանակ շատ թանկագին իրեղենների հետ կենաց փայտի մի մասն ամփոփող մի արծաթապատ խաչ ևս գերի է տարվում, որ հետո, ավանդության ասելով՝ աղավնի դարձած վերադառնում է վանքը ու նորից նախկին խաչի ձևն առանում։

Մի ուրիշ ավանդություն էլ ասում է, թե ամեն տարի զատկին մի այծյամ ասածու հրամանով գալիս էր այստեղ և մեկնում յուր վիզը՝ զոհվելու, սակայն հետո, մարդկանց մեղքի պատճառով ասված դադարեցրեց այդ զոհը։

Կուսանաց անապատը շինված է տեղական տաշած քարից։ Հատակագիծը խաչաձև է, 12 արշին երկարության, 8 արշին լայնության և 7 արշին բարձրության։ Երկու բոլորովին հասարակ սյուների վրա բոլորում են աղեղնաձև կամարներ և կամարակապ ձեղուն, որ սրտաքուստ եռանկյունաձև է։ Արևմտյան կողմում բացվում է մի փոքրիկ դուռ և վերևում՝ երկու պատուհան։ Հարավային պատի մեջ ևս կա երկու, իսկ արևելյանի մեջ փոքրիկ պատուհան։ Ունի մի սեղան, երկու խորան և մի ավազան։ Անապատի արևմտյան կողմում կա մի աղեղնաձև կամարակապ ձեղունով անսյուն գավիթ՝ 6 մետր երկարության, 9 մետր լայնության, յուրաքանչյուր պատին մի փոքրիկ պատուհանով։ Սա եղած է Մելիք-Շահնազարյանների իշխանական ցեղի դամբարանը։ Այստեղ գտնվում են Մանուել վարդապետի, Մելիք-Միրզայի, Մելիք-Հյուսեինի, Մելիք-Հովսեփի, սրանց կանանց և մայրապետի գերեզմանները։

Անապատի շուրջը ամուր պարսպով պատած է եղել, որի միայն հետքերը կան, իսկ պարսպի ներսը եղել են շատ խցեր՝ կույսերի բնակության համար։

Այժմ վանքը բոլորովին անխնամ է թողնված։

Թե կուսանաց անապատում և թե դուրսը գտնված մելիքների գերեզմանների տապանագրերից նշանավոր են հետևյալները.

Այս է տապան Մելիք Շահնազարին (Գ)
Որ է որդի Մելիք Յիսէինին,
Արցախ գաւառաց իշխանին,
Վարանդու տիրապետողին.

Սա էր հայր Մելիք Ջիմշիտին.
Ըստ ռուսաց պլկովնիկին,
Ազնիւ ոմն Հայոց ազգին,
Արի եւ քաջ զօրավարին
Խնդրեմ առնել զայս արժանին
Միոյ բերան Հայր մեղային,
ՌՄԽ. թվին (1792)

Այս է տապան Մելիք Ջիմշիտին
. . . . Սա էր
Թոռն մեծասեռին
Ազնիւ Մելիք Յիսէյինին (Բ)
Խնդրեմ առնել զայս արժանին
Միոյ բերան հայր մեղային.
Թվ. ՌՄԿԱ. ապրիլի Իե (1812)

Այս է տապան Մելիք Ջհանբաշխին
Իշխող Վարանդայ գաւառին.
Ազնիւ որդոյ Մելիք Շահնազարին
Վախճանեցաւ 1822.

Մելիք խուդաթ իշխող Վարանդայ
Թոռն բան մարմնոյ Մելիք Ջիմշիտայ,
Այս ճորա տապան յորում մարմնով կայ,
Կենդանի հոգով միշտ եւ յարակայ,
Ամաց քառասնից եւ սա յաշխարհէ
Ջեռ ազգ գտանի յամենայն շարէ.
Զայս վէմ եւ շինել առն իւրում 'ի ձօն,
Ի պատիւ սուրբ կին սուրին զգօն,
Թվ. ՌՄՁԲ. էր» (1833):

Ղևոնդյանց անապատ կամ Ղևոնդիկ. *սա մի փոքրիկ, անտաշ քարերով, առանց կամարի մի մատուռ է Ղևոնդյանց անունով, շինված այն բարձր սարի գագաթին, որ միայնակ բարձրանում է Ավետարանոց, Սարգսաշեն, Վերին Թաղավարդ և Մոշ-խմհատ գյուղերի կենտրոնում։ Մատուռին կից է մի գավիթ։ Անապատի դռան հյուսիսային շեմի վրա գրված է՝ ՌԷՃ., իսկ գավթի դռան վերև՝ ՌՄԻԷ-ին հիշատակ է գաւիթս Զաքարիա Յովսէփ և Միլոն վարդապետացն»։*

Տերունականները ասել են գեր. Սարգիս եպ. Ջալալյանին, թե Ս. Ղևոնդ

երիցի աղգականները Վարանդայում պատելով, նրա նշխարներից գտել են և բերել ամփոփել այդտեղ և կառուցել եկեղեցի։ Եկեղեցում կա Ս. Ղևոնդի պատկերը, որ գեղարվեստական ոչ մի արժեք չունի։

Այս անապատում կան հետևյալ մասունքները.

1) Մասն Թադեոսի առաքելոյն, մի արծաթափայլ փոքրիկ խաչում։

2 և 3) Մասն Հովհաննու Մկրտչի, դեռևղված մի արծաթյա փոքր և մի մեծ խաչում։

4) Ղևոնդյանց մասունք, մի արծաթի միջակ խաչում։

Անապատի շուրջը պարիսպ է քաշված, որի ներսում կան մի քանի հին սենյակներ, որ այժմ կիսավեր են։ Այժմ եղբայր ժամհարյանները մի երկհարկանի գեղեցիկ բնակարան են շինում ուխտավորների համար։

Պարսպի մեջ կան բավական թվով գերեզմաններ։

Անապատում բնակվում է իբրև պահապան մի քահանա յուր ընտանիքով։

Եղիշա կուսի անապատ. գտնվում է Շուշուց դեպի արևելք, Սոս գյուղի, Լուսավորչի սարի, Քերթ և Ղուզի Ճարտար գյուղերի միջև բարձրացող բավական բարձր սարի վրա, ուր կան նաև թեզի և թխկի ծառեր։

Մենաստանը 16 մետր երկարություն, 9 մետր 75 սանտիմետր լայնություն և 5 մետր բարձրություն ունի։ Երկու հասարակ սյունի վրա բոլորում են ռոմանական կամարներ և կամարակապ ձեղուն, որի միջտեղից բարձրանում է մի փոքրիկ կաթուղիկե, որ ծառայելիս է եղել իբրև զանգակատուն։ Մենաստանը շինված է անտաշ որձաքարով։ Մենաստանի մեջ կա մի ավագ սեղան, երկու խորհրդարան, ավազան, չորս լուսամուտ և մի դուռ արևմտյան կողմից։

Ավագ խորանի տակ ամփոփված են Ս. Եղիշե կուսի նշխարները, և բեմի մեջ կա մի փոքրիկ խորանաձև բացվածք, որի մեջ կա մի փոքրիկ, բայց շատ խորը անցք, որ հավանականորեն հասնում է մինչև կուսի գերեզմանը։ Հիվանդները աղոթելուց և մոմեր վառելուց հետո մի անմեղ երեխայի ձեռքը փաթաթում են շորերով և այդ խորանի մեջ են երկարացնել տալիս։ Ասում են, թե մի քանի րոպեից հետո հիվանդի ցաված տեղին համապատասխանող մի ոսկոր թռչում կանգնում է երեխայի թևին։ Անմիջապես վերցնում են այդ ոսկորը, ձգում ջրի մեջ և այդ ջրով լվանում հիվանդի ցավող մասը, որ իսկույնևեթ լավանում է։

Բեմի վրա կա մի քարե խաչկալ, որի հարավային դռան երկու սյունի վրա գրված է.

«Յիշատակ է Համասուտանց Միրզախանի որդի Մանուէլ վարդապետիս այս խաչկալս. եղբարքն իմ Պապան և Վանլալան, Մորար իմ Գուլասմար, եղբաղին, ծնողքն իմ Միսանոիմ, կողակից իմ Նազլու, որդի իմ Հախնազար, Շահպատ, Սիրուն, Վռամին, Մագրվանին և ատաեռն իմ Բաղուն, Գոսաշին, թվ. ՌՃԿԹ»։

Դռան ճակատի քարի վրա՝ «Կարողությամբն ամենազօրին Աստուծոյ ես նուաստ տեր Յոհան անձամբ տկար աբեղայս և որդեկիր Փոքր տէր Յովանս շինեցաք սբ. գեղեղեցիս ըստ անուան Սրբոյնոյ կուսին Եղիշէի ի կաթուղիկոսութեան տէրտէր Երեմիայի և ասնս Աղուանից որ ի մայր աթոռոյն Գանձասարայ վասնորոյ յիշել աղաչեմք նանդերձ ծնողովք մեռովք ՌՃԼԹ»։

Արևմտյան պատի մեջ կան խաչքարեր, որոնցից լուսամուտից վերև գտնվողի վրա գրված է.

«Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, ես անարժան ուստայ Կարբելս շինեցի այս եկեղեցիս ի ձեռամբ իմով, ով կարդա մեկ բերան ողորմի ասե. խաչս յիշատակ է Գաբրելիս և ծնողաց իմոց և զաներաց և որդոց իմոց»։

Բոի եղցե (եկեղեցի). Հացի գյուղից դեպի արևելք, փոքր-ինչ հեռու մի սարի լանջին գտնվում են բազմաթիվ գերեզմաններ, երկու միմյանց մոտ գտնվող եկեղեցի, երկու մատուռ և երեք բեմ։ Ժողովուրդը այս բոլորին Բոի եղցե անունն է տալիս։

Առաջին եկեղեցին գտնվում է լեռան գագաթին, մի հարթության վրա և ունի 7 մետր երկարություն, 7,5 մետր լայնություն և 8 մետր բարձրություն։ Շինված է սպիտակ անտաշ քարով։ Սյուներ չունի և կամարակապ է, առանց գմբեթի, ունի մի նեղ ավագ սեղան և երկու խորհրդարան, որոնց դռները գեղեցիկ նշխերով և խաչերով եզրափակված են։ Զախ խորանը կիսով չափ քանդված է։ Սեղանի առաջ դրված է մի քար, որի վրա կա հետևյալ արձանագրությունը.

«Թվին ՉԺԹ։ ի տեարութեան Տր Ստեփանոսի յե...սիսի (եպիսկոպոսութեան Ներսիսի) ես Մխիթար որդի Ե... կանգնեցի գիաչս»։

Եկեղեցու մեջ կան բավական թվով գերեզմաններ, որոնցից մինն ունի հետևյալ տապանագիրը.

«Այս է տապան Տր Յոհաննիսին որդի Տր Կարապետին. թվ. ՌՄԽէ»։

Բ եկեղեցին առաջինի արևմտյան կողմում է, երեք մետր հեռավորությամբ. երկարությունն է 6 մետր 50 ս, լայնությունը՝ 4 մետր 18 սանտիմետր և բարձրությունը՝ 7 մետր։

Արևմտյան պատը գրեթե ամբողջովին ծածկված է խաչերով, միակ դռան շուրջը կան գեղեցիկ քանդակներ և կողքերին մի մի ռելիեֆ սիրամարգ, որոնց ձախի կողքում փորագրված է.

«Զխաչենիկ վարդապետ սուրբ եկեղեցոյս յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս»։

Բ մատուռը գտնվում է լանջի ստորոտում. արևմտյան պատի արտաքին երեսը խաչերով ծածկված։ Արդեն կիսավեր է։ Դռան հյուսիսային սեմի վրա կա հետևյալ արձանագրությունը.

«Զ. Շանէն վարդապետ եկեղեցոյս յիշեցէք ի Տէր»։

Դռան վերևում.

....Մանանայ եւ եղբայր իմ Վահրամ եւ վարեալք ...ունափա շինեցաք զեկեղեցիս բազում աշխատանաւք եպիսկոպոսութեան Տէր Յովանիսին եւ տէր Ներսիսի յիշատակ ճոգոց ազգաց եւ ծնողաց մեռոց, որք կարդայք յաղաւթս յիշեցէք աշխատողք եկեղեցոյս։

Ա բեմը գտնվում է Բ մատուռից փոքր-ինչ վերև։ Բարձրությունն է 3 մետր 60 սանտիմետր, լայնությունն է 3 մետր 25 սանտիմետր, հաստությունը՝ 1 մետր 83 սանտ.։ Սրա արևմտյան երեսին զետեղված են խաչարձաններ, եզրափակված գեղեցիկ նշխերով։

Բ բեմը առաջինի հարավային կողմումն է, իսկ Գ բեմը փոքր ինչ ավելի հեռու երկրորդից։

Այս բեմերի վրա կան արձանագրություններ, բայց որովհետև բավական եղծված են, ամփոփ միտք չի դուրս գալիս։ Միայն հայտնի է լինում, որ առաջինը շինված է ՆԱ, երկրորդը ՁԺ թվին։

Կարմիր եկեղեցի. *Ծովատեղ գյուղի մոտ մի բլրակի վրա գտնվում է Կարմիր եկեղեցին, որ Մելիք-Փաշայանների դամբարանն է եղած։ Սա բաղկացած է մի փոքրիկ, անույշ, կամարակապ եկեղեցուց և երեք ստորերկրյա մատուռներից, որոնք միմյանց հետ հաղորդակցվում են փոքրիկ դռներով։ Մատուռների, ինչպես և եկեղեցու մեջ կան գերեզմաններ, որոնց տապանաքարերը ահագին միապաղաղ քառանկյունի սև քարեր են, առանց մի որևիցե դրության կամ քանդակի, որոնց ներքին կողմում կանգնեցրած են միևնույն լայնության և մի սահմն բարձրության խաչարձաններ, հրաշալի նշխերով եզրափակված։ Խաչերի ներքև կան տապանագրեր։*

Ա մատուռի ճակատակալ քարի վրա կա հետևյալ արձանագրությունը.

«Թվ. ՌՀ. Դաւիթ եպիսկոպոս՝ յիշատակ է եկեղեցի վանքս որ լինի սա դամբարան եւ շիրիմ մեռոց ճանանաց»։

Ա մատուռի խորանի հարավային խաչի վրա.

«Թվ. ՌԼԵ. ի հայրապետութեան Դաւիթ, առաջնորդի Մելիք Փաշիկ, Պետրոս եպիսկոպոս»։

Բեմի խաչի վրա.

«Դաւիթ արեղայ կանգնեցի զխաչս Առան վարդապետի Տարսոնեց ...եւ զիս իշա (հիշեա)»։

Խորանի հյուսիսային կողմի խաչքարի վրա.

«Թվ. ՌԻԵ. ի հայրապետութիւն Տէր Յովհաննիսի. առաջնորդութիւն Մելիք Փաշին. յանուն Աստուծոյ ես Սահակ եպիսկոպոս կանգնեցի զխաչս ի փրկութիւն եղբաւր իմոյ Վազարին, աղաւթս յիշեցէք»։

Բ. մատուռի մի մեծ խաչի վրա.

«Այս է Սահակ եպիսկոպոսն, որ փոխեցաւ...»

Մյուս կողմի վրա.

«Անուամբն Աստուծոյ ես Պետրոս եպիսկոպոս, Դաւիթ խան այսես կանգնեցինք զխաչս ի փրկութիւն Սահակ եպիսկոպոսին, աղաւթեցէք»։

Դ. մատռան մեջ մի խաչքարի վրա.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ, ես Մելիք Առան կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոր իմոյ Մելիք Պապին եւ մաւր իմոյ Խոնդի խաթունին, ով որ յիշեէք ի Տէր, յիշեսջիք առ Աստուած. թվ. ՌԺԵ. ին»։

Մի ուրիշ խաչի վրա.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ ես Մելիք Աղամ որդի Մելիք Պապին որդոյ Նախիջանայ թոռանն որդոյն Թոմասին որդոյ մեծի իշխանի Առանայ կանգնեցաք զխաչս ի փրկութիւն ճանանաց մեռոց, ով որ երկրպագէք, յիշեցէք ի Տէր, Աստուած զձեզ յիշէ»։

Մյուս խաչարձանի վրա.

«Իշխանութեան Թանմազին, հայրապետութեան տեառն Գրիգորիսի եւ առաջնորդութեան ուխտիս Սահակայ եպիսկոպոսի...»։

Այս եկեղեցու շուրջը կան բազմաթիվ գերեզմաններ, որոնց մի քանիսի տապանաքարերը շատ գեղեցիկ են։ Այստեղ կա և մի այր, որ

Սարգիս Ջալալյանի ասությամբ ածված են սրից և սովից մեռածների դիակները։

Բոդրխանի վանք. գտնվում է համանուն սարի հարավարևելյան կողմում ձգվող մի փոքր ձորակի ձախ լանջին, փոքրիկ հարթակի վրա։ Երկարությունն է 9 մետր, լայնությունը՝ 5 մետր 60 սանտիմետր։ Շինված է մի կամարի վրա, անտաշ կաթնագույն քարով, որ ունի մի դուռ, երեք լուսամուտ և երկու խորհրդարան։

Վանքի շուրջը բոլորում է մի պարիսպ, որ ունի մի դուռ։ Պարըսպի հարավային և արևմտյան կողմերում ներքուստ շինված են բազմաթիվ խցեր միաբանների բնակության համար, որոնք այժմ բոլորն էլ, բացի վանահոր սենյակից, կիսավեր են։

Մավասի վանք. Մավաս գյուղի մոտ, մի բարձր բլրի վրա, որի արևելյան և հյուսիսային կողմում արձանանում են ահագին ժայռեր, միացած միմյանց հետ մի հաստ պարսպով, որի այժմ միայն հետքերն են մնում։ Վանքը կառուցված է երկու սյունների վրա. խորանի տակ կա չորս գերեզմանաձև շիրիմ։ Պարսպի մեջ եղած են խցեր, միաբանների համար, բայց այժմ բոլորն էլ ավերակ են։ Այս վանքը և յուր շիրիմները մեծ ուխտատեղի են համարվում։

Նոշկա վանք. Խաչմաչ և Մամնա գյուղերի միջև տարածվող լեռնագոտու գագաթին (4669 ոտ.) է գտնվում։ Մի կամարի վրա հաստատված 9 մ. երկ. և 6 մ. լայնության վանք է, որ ունի մի սեղան, երեք լուսամուտ և մի դուռն արևմտյան կողմից։ Դավթում կան մի քանի ծառեր, որ սուրբ են համարվում։

ՆՇԱՆԱՎՈՐ ԲԵՐԴԵՐԸ

Ղզղալա (Աղչկա բերդ). համանուն գյուղից դեպի հյուսիս բարձրանում է մի լեռ, որի արևելյան մասում տարածվում է մի ընդարձակ դաշտավայր, հյուսիսային կողմում հազիվ մի վերստ հեռավորությամբ ցցվում է Քարին-Կտուր սարը, արևմտյան կողմում Մեծ Նահատակի և Առաջաքար, իսկ հարավայինում՝ Փոքր Նահատակի և Փլեկի սարերը, որոնք փոքր-ինչ ավելի բարձր են սրանից։

Այս սարի հյուսիսային և արևմտյան կողմերն ուղղահայաց ժայռեր են, իսկ արևելյան և հարավային կողմերը՝ զառիվայրեր։ Ահա այս սարի վրա է գտնվում Ղզղալան։

Նկատելի է, որ մի հաստ պարիսպ և մի խոր խրամ բոլորելիս են եղել այս սարի շուրջը։ Լեռան գագաթին նույնպես նկատվում է մի

պարիսպ, հետևապես և կարելի է ենթադրել, որ միջնաբերդ է եղել։ Բերդի արևմտյան լանջին կա երեք ավազան, գտնված փողրանքները ցույց են տալիս, որ ջուրը բերված է եղել Փլեկի սարից։ Միջնաբերդի մեջ նկատելի են սառերկրյա շինություններ։

Մի գյուղացի ինձ ցույց տվեց մի բրոնզյա թուր, որ գտել է բերդի սառրոտում մի գերեզմանի միջից։ Ցավալի է, որ գյուղացին թուրը սակյա կարծելով՝ կտոր-կտոր է արել, մաս-մաս ծախելու համար։

Ղալին-Խուր. այսպես կոչվում է այն սարը, որ բարձրանում է Կիշու, Մշկապատի և Կյունի Ճարտարի միջև, և որ ունի 3735 ոտ. բարձրություն։ Սրա հարավային և արևմտյան կողմերն անմերձենալի բիրտներ են, իսկ արևելյան և հյուսիսային կողմերում տարածված է եղել մի ամուր պարիսպ, թեև առանց աշտարակների, որի միայն հիմքերն են մնացել։ Կան մի քանի ջրավազաններ և հյուսիսային պարսպի սառրոտում անուշահամ աղբյուր։

Բրդահոնջին դալա. Ներքին Թաղավարդի արևելյան կողմում բոլորովին առանձնացած կանգնած է 3300 ոտնաչափ բարձրության մի սար, որի արևելյան, հարավային և արևմտյան կողմերին ահագին ժայռեր են, իսկ հյուսիսային կողմը սաստիկ զառիվայր։ Այս կողմում, ժայռից ժայռ ձգվում է կրկնապարիսպ, որի արտաքինն ունի և աշտարակներ։ Ահա այս է Բրդահոնջին կամ Բրդաունչ դալան, որ միայն մի դուռն ունի արևելյան կողմից։ Լեռան գագաթին գտնվում է և մի միջնաբերդ, ուր կան բնակարանների հետքեր։ Կան մի քանի այրեր և չրի ավազաններ։ Բերդի մեջ ոչ մի աղբյուր չկա, միայն արևելյան սառրոտում բխում է մի աղբյուր, որ հավանականորեն ջուր է մատակարարելիս եղել բերդին։ Այժմ բերդն ամբողջովին ծածկված է խիտ անտառի մեջ[1]։

---

[1] Իմ ճանապարհորդության ժամանակ ուղեցույց եմ ունեցել Գեր. Մակար եպ. Եսայիազարյանի «Արցախը», որ բավական նպաստել է ինձ, մանավանդ արձանագրությունները ընդօրինակելիս։

Այս աղյուսակի մեջ բերված 1886 թվականի իգական բնակչության թիվը 5000-ով ավելի է «Свод»-ի մեջ բերված թվից, ահա թե ինչի հիման վրա մենք ավելացրել ենք այդ 5000-ը։ 1886 թվականին եղել են Շուշու գավառում թուրքեր ըստ «Свод»-ի 32209 արական և 20678 իգական (1000 տղամարդու համեմատ միայն 646 կին), իսկ 1895 թ. 34050 արական և 27301 իգական, ուրեմն 9 տարվա ընթացքում ավելացել է 1841 տղամարդ և 6623 կին, հետևապես կանայք համարյա թե չորս անգամ ավելի արագ են աճել, քան թե տղամարդիկ։ Բայց դա անկարելի է, քանի որ 1) դազիի տված տեղեկությունների հիման վրա թուրք տղաներ շատ են ծնվում, քան աղջիկներ (օրինակ 1895 թ. ծնվել են Շուշու գավառում 498 տղա և միայն 342 աղջիկ թուրք մանուկներ) և 2) որովհետև կանանց ինչ-որ իմիգրացիայի կամ տղամարդկանց էմիգրացիայի մասին խոսք անգամ չի կարող լինել։ Թուրք կանայք իսկապես 9 տարվա ընթացքում 6623-ով չեն աճել, և այդ աննորմալ երևույթը պետք է բացատրել նրանով, որ 5000-ի չափ կանայք չեն մտել 1886-ի վիճակագրության մեջ, և դրա համար էլ ոստիկանության 1895 թ. ավելի ճիշտ տեղեկությունների մեջ երևան են գալիս իբրև նոր ավելացածներ։ Հոգուտ մեր ենթադրության խոսում է և այն, որ այդպիսով ստացած աճը (6623-ից հանած 5000) 1623 ավելի նորմալ է թուրք կին բնակչության համար և նույնպես ավելի նորմալ է մեր երկրի համար, այսպիսով ստացած սեռերի թվական հարաբերությունը՝ 1000 տղամարդու համեմատ 802 կին, համարյա թե նույնքան, որքան և հայերի մեջ (1000-ի համեմատ 826)։

Աղյուսակում 1895 բնակիչների թվի մեջ չեն մտցված 1329 (արական՝ 1036, իգական՝ 293) զինվորական և ատաճանավորների դասակարգերին պատկանող ռուսներ, լեհեր, հրեաներ, վրացիներ և այլն և 1913 օտարահպատակներ (1096 արական, 817 իգական)։ Նույնը և 1886-ի բնակիչների թվի մեջ։

Թե՛ 1886-ին և թե՛ 1895-ին հայերը գավառում և քաղաքում բնակչության մեծամասնությունն են կազմում։ Մի բան ևս արժանի է ուշադրության, որ հայ բնակչության համեմատական թիվը (%-ը) թե՛ գավառում, թե՛ քաղաքում (մանավանդ այստեղ) 9 տարվա ընթացքում բարձրացել է, իսկ թուրքերինը ընկել։

Բոլոր հայերը, բացառյալ մի քանի տասնյակ (ճիշտ թիվը հայտնի

2. Բնակչությունը ըստ ազգությունների և դավանությունների 1886 և 1895 թվերին

Տարի	Ամբողջ գավառի (քաղաքի հետ) բնակչությունը			Միայն գավառի բնակչությունը			Քաղաքի բնակչությունը		
	միասին	հայ	թուրք	միասին	հայ	թուրք	միասին	հայ	թուրք
1886	130968	73081 56,2%	57887 43,8%	103485	57893 56%	45292 44%	27783	15188 54,5%	12595 45,5%
1895	145920	84569 58%	61351 42%	112668	63985 57%	48683 43%	33252	20584 61,8	12668 38,2

(4) բողոքականների, լուսավորչական են, իսկ թուրքերից 59204 (արական 32820, իգական 26384) շիաներ են և 2147 հոգի (1230 արական և 917 իգական) սյուններներ։

3. Բնակչությունը ըստ բնակության տեղի 1886 և 1895 թթ.

Տարի	Ամբողջ բնակչության որ տոկոսն է ապրում		Հայ բնակչության որ տոկոսն է ապրում		Թուրք բնակչության որ տոկոսն է ապրում	
	գավառում	քաղաքում	գավառում	քաղաքում	գավառում	քաղաքում
1886	78,6	21,4	79,2	20,8	78,2	21,8
1895	77,4	22,6	75,5	24,5	79,6	20,4

Մի երևույթ իսկույնեթ աչքի է ընկնում այս աղյուսակի մեջ. դա քաղաքի հայ բնակչության տոկոսային աճումը և գյուղական բնակչության տոկոսային անկումն է։

Մեր նպատակից և ուժերից վեր է այստեղ բացատրել այդ երևույթի պատճառները։

Թուրք բնակչության մեջ նույնը չի նկատվում։ քաղաքի բնակչության սաստիկ դանդաղ աճման պատճառով։

4. Բնակչությունը ըստ սեռի

Սեռերի թվական հարաբերությունը 1895-ին։

1000 տղամարդու համեմատ ամբողջ գավառում (քաղաքի հետ) ընկնում է 812 կին։
1000 տղամարդու համեմատ միայն գավառում ընկնում է 836 կին
» » » քաղաքում » 773 »
1000 հայ տղամարդու համեմատ ամբողջ գավառում » 826 »
» » » միայն » 853 »
» » » քաղաքում » 769 »
1000 թուրք տղամարդու համեմատ ամբողջ գավառում » 794 »
» » » » միայն գավառում » 808 »
» » » » քաղաքում » 786 »

Շուշու գավառում, ինչպես և բոլոր հարավային երկրներում, տղամարդկանց թիվը ավելի շատ է, քան թե կանանց[2]։ Բայց մեզ մոտ երկու սեռերի թվերի զանազանությունն ավելի մեծ է, քան թե որևէ ուրիշ վիճակագրության ենթարկված հարավային երկրում։ Դա մասամբ կարելի է բացատրել նրանով, որ բոլոր կանայք (մանավանդ թուրքերի մեջ) չեն մտել ոստիկանության հավաքած տեղեկությունների մեջ։ Աղյուսակի մեջ հետաքրքիր է այն երևույթը, որ սեռերի թվական հարաբերությունը գավառում թե՛ հայերի և թե՛ թուրքերի համար ավելի նորմալ է, քան թե քաղաքում, երևի այն պատճառով, որ այստեղ աշխատանքի համար եկած ամուրի տղամարդկանց թիվը շատ մեծ է։

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ամուսնություններ

1895 թ. 1000 բնակչի համեմատ քաղաքում ավելի շատ պսակներ են ընկնում, քան թե գավառում (1000 հայ բնակչի համեմատ քաղաքում՝ 7,1, իսկ գավառում՝ 5,25), մյուս կողմից 1000 թուրք բնակչի համեմատ ավելի շատ պսակներ են ընկնում, քան թե 1000 հայ բնակչին։

---

[2] *Իսպահանում 1000 տղամարդուն ընկնում է 995 կին*
Հունաստանում » » » 906 »
Հնդկաստանում » » » 954 »

Ամուսնությունների թիվը և բնակչությունը (հայ և թուրք[3]) 1895 թ.

Բնակչության կազմը	Ամուսնությունների թիվը	Բնակչությունը 1000-ներով	1000 բնակչի վրա գալիս են ամուսնութ.
Ամբողջ գավառի հայ և թուրք բնակչությունը	808	144	5,65
Ամբողջ գավառի հայ բնակչությունը	473	85	5,63
Ամբողջ գավառի թուրք բնակչութ.	335	59	5,68
Միայն գավառի հայ և թուրք բնակչությունը	607	110	5,52
Միայն գավառի հայ բնակչությունը	331	64	5,25
Միայն գավառի թուրք բնակչութ.	276	46	5,87
Քաղաքի հայ և թուրք բնակչութ.	201	34	6,1
Քաղաքի հայ բնակչությունը	142	1	7,1
Քաղաքի թուրք բնակչությունը	59	13	4,5

Ամուսնությունները և հայ բնակչությունը (1881—1895 թթ.

Տարի	Գավառում (առանց քաղաքի)			Քաղաքում		
	Բնակչության մոտավոր թիվը 1000-ներով	Պսակների թիվը	1000 բնակչի վրա ընկնում են պսակներ	Բնակչության մոտավոր թիվը հազարներով	Պսակների թիվը	1000 բնակչի համեմատ ընկնում են պսակներ
1881-1885[4]	56	372	6,6	14	158	11,3
1886—1890[4]	59	340	5,9	16	141	8,8
1891	61	365	6	18	170	9,4
1892	62	433	7	19	170	9
1893	63	512	8,1	19	142	7,5
1894	63	552	8,7	20	139	7
1895	64	331	5,2	21	142	6,8
1881—1895[4]	63	439	7	19	153	8

---

[3] *2147 ոյունների թուրքեր չեն մտցված, որովհետև նրանց մասին տեղեկություններ պակասում են։*

[4] *Միջին թվով մի տարվա համար։*

Այս աղյուսակի մեջ ևս նկատվում է նույն երևույթը, որին մենք վերևում ակնարկես եղանք, այն է, որ 1000 բնակչի համեմատ քաղաքում ավելի շատ պսակներ են ընկնում, քան թե գավառում։ Լուրջ ուշադրության և ուսումնասիրության արժանի է մի փաստ ևս, որ քաղաքի պսակների թիվը թե 1000-ի համեմատ (1881—85-ի համար 11,3, 1886—90-ի համար 8,4 1891—95-ի համար 8) և թե բացարձակապես (158—142) տարեցտարի պակասում է։ Գավառում, ընդհակառակը, նա անընդհատ աճում է, թեև ոչ այնպես արագ, ինչպես ընկնում է քաղաքում։ Ամուսնացողների տոկոսը հայ ժողովրդի մեջ շատ չի տարբերվում եվրոպական ժողովուրդների ամուսնացողների տոկոսներից (1000 բնակչի համեմատ ընկնում են պսակներ՝ Գերմանիայում՝ 7,6, Անգլիայում՝ 7,4, Բելգիայում՝ 7, Շվեյցարիայում՝ 6,8, Շվեդիայում՝ 6,3)։

Հայ ամուսնացողների հասակը 1881—1890 թթ.։ (Զինվորագրություն)։

Տարի	Գավառում 100 ամուսնացող տղամարդկանցից եղել են						Քաղաքում 100 ամուսնացող տղամարդկանցից եղել են					
	Մինչև 21 տ. հասակում	21—25	26—30	31—35	36—40	40-ից բարձր	Մինչև 21 տ. հասակում	21—25	26—30	31—35	36—40	40-ից բարձր
1881	26	50	13	4	4	3	9	32	42	5	10	2
1882	34	48	10	4	2	2	6	38	24	6	5	3
1883	29	52	9	5	3	2	10	33	40	7	5	5
1884	22	48	17	6	4	5	15	32	45	2	5	1
1885	40	37	10	4	3	6	9	35	44	4	4	4
1886	49	34	9	3	3	2	7	50	29	8	3	3
1887	5	70	16	4	4	1	4	37	41	7	7	4
1888	—	—	—	—	—	—	0	23	52	15	8	2
1889	3	28	43	12	10	4	3	28	46	11	8	4
1890	9	40	35	7	6	3	4	37	41	7	7	4
Միջին թվով 1881—1886	34	45	11	4	3	3	9	38	40	5	5	3
Միջին թվով 1887—1890	6	46	31	8	6	3	3	31	45	10	7	4

Այս աղյուսակը բերում ենք այստեղ ցույց տալու համար այն ահագին սոցիալական ազդեցությունը, որ ունեցել է զինվորագրությունը Շուշու գավառում։ Մինչև 1886 թ., այսինքն՝ մինչև հայերից զինվոր վերցնելը, 100 ամուսնացած տղամարդկանցից 34-ը գտնվել է (գավառում) մինչև 21 տ. հասակում, 1886 թ. հետո 100 ամուսնացող տղամարդկանցից նույն հասակում գտնվելիս է եղել միայն 6 հոգի։ Նույն թվականից հետո սաստիկ բարձրանում է 26—49 տարեկան հասակում ամուսնացողների թիվը (մինչև 1886 թ. դրանք կազմել են ամուսնացողների 18%-ը, իսկ 1886-ից հետո՝ 45%), իսկ 21—25 տ. հասակում ամուսնացողների տոկոսը համարյա թե նույնն է մնացել (մինչև 1886 թ.՝ 45%, 1886-ից հետո՝ 46%)։ Նույն երևույթը նկատվում է և քաղաքում, այն տարբերությամբ, որ այստեղ պակասել է և 21—25 տարեկան հասակում ամուսնացող տղամարդկանց թիվը (մինչև 1886 թ. 100-ից ամուսնացել են այդ հասակում 38 հոգի, 1886 թ. հետո՝ միայն 31)։ Նույնպես սաստիկ բարձրացել է 25—30 տ. հասակում ամուսնացողների թիվը (մինչև 1886 թ. բոլոր ամուսնացողների 45%, 1886-ից հետո՝ 55%)։ Առհասարակ նկատելիորեն բարձրանում է 1886 թվականից տարիքավոր ամուսնացողների թիվը (մինչև 1886 թ. գավառում 100 ամուսնացողներից 10 հոգի գտնվելիս են եղել 31—40 տ. և 40 տ. բարձր հասակում, իսկ 1886 թ. հետո 17 հոգի. քաղաքում մինչև 1886 թ. 17 հոգի. գավառում մինչև 1886 թ. 13 հոգի, 1886-ից հետո 21)։ Զինվորագրությունից հետո պսակվողների թիվը գավառում չի պակասել, այլ ընդհակառակը, նկատվում է անընդհատ, թեև դանդաղ աճ։

Ամուսնացողները (հայ) 1881—1890 թթ.

Տարի	100 պսակներից եղել են գավառում				100 պսակներից եղել են քաղաքում			
	Ամուսնի տղամարդը աղջիկ հետ	Ամուսնի տղամարդը այրի կնոջ հետ	Այրի տղամարդը աղջիկ հետ	Այրի տղամարդը այրի կնոջ հետ	Ամուսնի տղամարդը աղջիկ հետ	Ամուսնի տղամարդը այրի կնոջ հետ	Այրի տղամարդը աղջիկ հետ	Այրի տղամարդը այրի կնոջ հետ
1881	82	—	11	7	73	1	16	10
1882	85	1	7	7	81	1	12	6
1883	84	—	9	7	79	—	10	11
1884	80	1	12	7	75	4	11	10
1885	79	—	16	5	78	—	11	11
1886	77	—	14	9	81	—	10	9
1887	91	—	9	—	78	2	11	9
1888	—	—	—	—	84	—	10	6
1889	79	2	13	6	77	1	10	12
1890	81	—	11	8	82	2	8	8
1881—1890	82	0,5	11,5	6	78,8	1,1	10,9	9,2

§ Տե՛ս «Բնակչության շարժումը» աղյուսակը։

Ամուսնությունների մեծամասնությունը (գավառում՝ 82%, քաղաքում՝ 78,8%) կատարվում է ամուրի տղամարդու և աղջկա միջև։ Այդ կարգի ամուսնություններից հետո երկրորդ տեղը բռնում են այրի տղամարդկանց ամուսնություններ՝ աղջիկների հետ, երրորդ տեղը բռնում են այրի տղամարդկանց ամուսնություններ՝ այրի կանանց հետ և չորրորդ ու ամենաչնչին տեղը բռնում են ամուրի տղամարդկանց ամուսնություններ՝ այրի կանանց հետ։ Մի բան աչքի է ընկնում աղյուսակի մեջ. գավառում, ուր սեռերի թվական հարաբերությունն ավելի նորմալ է (1000 : 853), քան թե քաղաքում (1000 : 769), ավելի քիչ են ամուսնանում այրի կանանց հետ, քան թե քաղաքում (100 ամուսնացող կանանցից եղել են այրի՝ գավառում 6,5%, իսկ քաղաքում՝ 10,3%)։

Ամուսնություններն ըստ ամիսների (հայերի մեջ) 1885—1890 թթ.

Ամիս	100 պսակներից գավառում կատարվել են							100 պսակներից քաղաքում կատարվել են						
	1885	1886	1887	1888*	1889	1890	1885 մինչև 1890	1885	1886	1887	1888	1889	1890	1885 մինչև 1890
հունվար	25	20	27	—	13	18	21	32	10	14	9	14	10	15
փետրվար	2	14	16	—	13	16	12	3	23	12	23	27	17	18
մարտ	—	—	—	—	—	—	—	—	—	—	6	—	—	1
ապրիլ	*	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
մայիս	4	2	—	—	—	1	1	4	—	·	—	—	2	1
հունիս	2	3	3	—	2	4	3	7	9	5	4	3	5	5
հուլիս	2	4	1	—	2	2	2	5	3	7	6	3	6	5
օգոստոս	4	4	4	—	4	3	4	8	8	10	12	6	18	10
սեպտեմբեր	9	8	1	—	2	5	5	11	12	9	10	7	12	11
հոկտեմբեր	11	10	3	—	14	7	9	7	11	11	15	12	11	10
նոյեմբեր	15	15	14	—	18	15	15	10	13	14	6	7	8	12
դեկտեմբեր	26	20	31	—	32	29	28	13	11	18	9	11	11	12

Թե՛ քաղաքի և թե՛ գավառի համար բնորոշ է այն, որ մարտ և ապրիլ ամիսներին մեծ պասի պատճառով պսակներ չեն լինում։ Պսակների մինիմումը գավառում ընկնում է ամառային և աշնանային առաջին ամիսներին, մայիսից մինչև հոկտեմբեր, գյուղական ժողովրդի արդյունավետ գործունեության ամենաեռուն ժամանակը. ամենաշատ

* Թվերը պակասում են։

ամուսնություններ կատարվում են նոյեմբերից մինչև փետրվար (մաքսիմում՝ դեկտեմբերին)։ Քաղաքում ամենից քիչ ամուսնություններ լինում են մայիս, հունիս, հուլիս ամիսներին, օգոստոսին արդեն պսակների թիվը բավականին մեծ է և կամաց-կամաց աճելով, փետրվարին հասնում է իր մաքսիմումին։ Այս երկու աղյուսակները միմյանց հետ համեմատելիս մի բան աչքի է ընկնում. գյուղական հարսանիքների 76 տոկոսը կատարվում է նոյեմբերից մինչև փետրվար ամիսները և միայն 24 տոկոսը՝ մայիսից մինչև հոկտեմբեր, այսինքն՝ դաշտային աշխատանքների ժամանակ, իսկ քաղաքում նոյեմբերից մինչև փետրվար եղած հարսանիքների տոկոսը 57 է, իսկ մնացած ամիսներինը՝ 43։ Քաղաքի բնակիչները (արհեստավորներ, վաճառականներ, բանվորներ, ատելիեներ և այլն), ունենալով այնպիսի պարապմունքներ, որոնք ամբողջ տարվա ընթացքում հավասար աշխատանք են պահանջում և տարվա այս կամ այն ժամանակից համարյա թե կախում չունեն (իբրև բացառություն պետք է հիշենք շրջիկ արհեստավորներին և բանվորներին՝ հյուսներին, որմնադիրներին, քարտաշներին և այլն, որոնք ամառը ավելի շատ են բանում, քան ձմեռը), իրենց կյանքում ավելի քիչ են ենթարկվում տարվա եղանակների ազդեցության, քան գյուղացիները։

Մնունդներ

Մնունդները (օրինավոր և ապօրինի) և բնակչությունը (հայ և թուրք) 1895 թ.

	Մնունդների թիվը	Բնակչությունը 1000-ներով	1000 բնակչի համեմատ մնունդներ
Ամբողջ գավառի հայ և թուրք բնակչությունը	3121	144	21,6
Ամբողջ գավառի հայ բնակչությունը	2097	85	25
» » թուրք »	1024	59	17,3
Գավառի (առանց քաղաքի) հայ և թուրք բնակչությունը	2332	110	21,2
Գավառի հայ բնակչությունը	1492	64	23,3
» թուրք »	840	46	18,2
Քաղաքի հայ և թուրք բնակչությունը	789	34	23,2
» հայ բնակչությունը	605	21	28,8
» թուրք բնակչությունը	184	13	14,2

Աղյուսակից երևում է, որ 1895 թ. 1000 բնակչի համեմատ քաղաքում ավելի շատ ծնունդներ են եղել, քան թե գավառում, և որ 1000 հայ բնակչի համեմատ թե՛ գավառում և թե՛ քաղաքում ավելի շատ ծնունդներ են եղել, քան թե 1000 մահմեդական բնակչի համեմատ։ Թե՛ առաջին և թե՛ երկրորդ երևույթները կարող են ճիշտ լինել, բայց տարբերությունը մի կողմից քաղաքի և գավառի, մյուս կողմից հայ և թուրք ծնունդների միջև մեր կարծիքով այնքան մեծ չպիտք է լինի, ինչպես աղյուսակում, որովհետև բազմաթիվ երեխաներ գավառում առհասարակ և մանավանդ թուրքերի մեջ, որոնք մինչև ցուցակի մեջ մտցվելը (հայերի մոտ մինչև մկրտվելը) մեռնում են, չեն մտնում մեր բերած թվերի մեջ. նույնպես չի մտնում ցուցակի մեջ ապօրինի ծնունդների մեծ մասը։ Մեռելածին մանուկների թիվը թե՛ գավառում և թե՛ քաղաքում բոլորովին ուշադրություն չի առնվում, չնայած նրան, որ դրանք մի պատկառելի քանակ են կազմում բոլոր ծնվածների թվի մեջ։

Ծնունդները և հայ բնակչությունը 1881—1895 թթ.

Տարի	Գավառում (առանց քաղաքի)							Քաղաքում						
	Բնակչությունը 1000-ով	Ծնունդների թիվը			1000 բնակչին ընկնում են ծնունդներ			Բնակչությունը 1000-ով	Ծնունդների թիվը			1000 բնակչին ընկնում են ծնունդներ		
		տղա	աղջիկ	միասին	տղա	աղջիկ	միասին		տղա	աղջիկ	միասին	տղա	աղջիկ	միասին
1881—1885	56	902	650	1552	16,1	11,6	27,7	14	303	291	594	21,6	20,8	42,4
1886—1890	59	943	701	1644	16	12	28	16	320	302	622	20	18,9	38,9
1891	61	1131	752	1883	18,5	12,3	30,8	18	345	280	625	19,1	15,5	34,6
1892	62	986	749	1735	15,1	12,1	28	19	323	303	626	17	16	33
1893	63	1162	892	2054	18,4	14,2	32,6	19	324	315	639	17	16,6	33,6
1894	63	1128	794	1922	17,9	12,6	30,5	20	294	311	605	14,7	15,6	30,3
1895	64	845	647	1492	13,2	10,1	23,3	21	326	279	605	15,5	13,3	28,8
1891—1895	63	1050	767	1817	16,7	12,2	28,9	19	322	298	620	17	15,6	32,6

Վերևում քաղաքի և գավառի ծնունդների վերաբերյալ նկատածը տեսնում ենք և այստեղ. առաջինում 1000 բնակչին անհամեմատ ավելի շատ ծնունդներ են ընկնում, քան թե վերջինում։ Գավառի ծնունդները թե բացարձակապես (1881—85՝ 1552, 1886—90՝ 1644, 1881—95՝ 1817)

և թե 1000-ի համեմատ (27,7, 28, 28,9) աճում են, իսկ քաղաքում (ինչպես և պակների թիվը) թե բացարձակապես (622 և 620) և թե 1000-ի համեմատ պակասում են (42,4. 38,9 և 32,6)։ Քաղաքի ծնունդների պակասելը մենք մասամբ բացատրում ենք նրանով, որ այստեղ ամուրի տղամարդկանց (աշխատանքի համար եկած) տոկոսը աճում է, իսկ ամուսնացածներինը՝ ընկնում։

Եթե աղյուսակի մեջ դուրս բերված թվերը (1000-ի համեմատ բաղդատելու լինենք եվրոպական ժողովուրդների ծնունդների հետ՝, կտեսնենք, որ մեր թվերը շատ ցածր են. դա այն պատճառով, որ եվրոպական թվերը վերաբերում են բոլոր ծնունդներին (դրանց մեջ մտնում են բոլոր ապօրինի և մեռելածին երեխաները), իսկ մեզ մոտ միայն բոլոր մկրտված երեխաներին։

Աղյուսակից երևում է, որ ամեն տարի ավելի շատ տղաներ են ծնվում, քան թե աղջիկներ (գավառում 1881—1885 թթ. ծնվել են 902 տղա և 650 աղջիկ, 1886—90՝ 943 տղա և 701 աղջիկ, 1891—95՝ 1050 տղա և 767 աղջիկ, քաղաքում 1881—85՝ 303 տղա և 291 աղջիկ, 1886—90՝ 320 տղա և 302 աղջիկ, 1891—95՝ 322 տղա և 298 աղջիկ)։ Ինչպես կարելի է տեսնել այս թվերից, տարբերությունը տղա և աղջիկ ծնունդների մեջ գավառում ավելի մեծ է, քան թե քաղաքում, ուր մի քանի տարիներում աղջիկ ծնունդների թիվը համարյա թե հավասար է ծնված տղաների թվին (1881—85 և 1893 թվին), իսկ 1894 թ. մինչև անգամ ավելի շատ աղջիկներ են ծնվել, քան թե տղաներ։

Ապօրինի ծնունդների համեմատական թիվը.

Գավառում

1881—85	1	ապօրինի	ծնունդ	ընկնում է	1108	ծնունդներին
1886—90	1	»	»	»	822	»
1891—95	1	»	»	»	324	»

Քաղաքում

1881—85	1	ապօրինի	ծնունդ	ընկնում է	208	ծնունդներին
1886—90	1	»	»	»	346	»
1891—95	1	»	»	»	387	»

[1] 1000 բնակչին ընկնում են ծնունդներ՝ Գերմանիայում՝ 38,18 (1881—90), Իտալիայում՝ 38, Ֆրանսիայում՝ 26,6, Մեծ Բրիտանիայում՝ 35,4, Բելգիայում՝ 34,1, Նորվեգիայում 32,1։

Ապօրինի զավակների թիվը եվրոպականի[2] հետ համեմատած շափազանց քիչ է, երևի այն պատճառով, որ ապօրինի զավակներից շատ քչերն են մինչև մկրտվելը ապրում (եվրոպական ժողովուրդների համար արդեն ապացուցված է, որ մահացությունը ապօրինի զավակների մեջ ավելի մեծ է, քան թե օրինավորների մեջ. ապօրինի ծնունդների մեջ մեռելածինների տոկոսը ավելի մեծ է, քան թե օրինավոր ծնունդների մեջ)։ Ըստ աղյուսակի՝ ապօրինի ծնունդների թիվը քաղաքում տարեցտարի պակասում է (թեև հակառակը պիտի լիներ, քանի որ ամուրի տղամարդկանց թիվը հետզհետե ավելանում է), իսկ գավառում աճում է, և վերջին հնգամյակի ընթացքում ապօրինի ծնունդների համեմատական թիվը գավառում ավելի մեծ է, քան թե քաղաքում։

Ծնունդները և հղիությունը ըստ ամիսների (հայերի մեջ) 1885–1890 թթ.

Ծննդյան ամիսները	Հղիության ամիսները	Գավառում 100 ծնունդներից եղել են							Քաղաքում 100 ծնունդներից եղել են					
		1885	1886	1887	1888	1889	1890	1885 մինչև 1890	1885	1886	1887	1888	1889	1885 մինչև 1890
հունվար	ապրիլ	12	12	13	10	12	11	11,6	12	8	11	10	9	9 9,9
փետրվար	մայիս	9	10	8	9	11	9	9,3	8	10	10	9	12	9 9,6
մարտ	հունիս	8	8	8	9	11	9	9	10	11	9	8	9	7 9
ապրիլ	հուլիս	7	7	9	7	7	6	7,2	6	8	9	9	8	7 7,8
մայիս	օգոստոս	9	8	8	6	7	8	7,6	8	7	7	6	9	6 7,2
հունիս	սեպտեմբեր	7	7	7	7	5	6	6,5	8	7	6	7	5	6 6,5
հուլիս	հոկտեմբեր	9	9	7	6	5	6	7	9	6	7	6	6	8 7
օգոստոս	նոյեմբեր	8	8	8	10	8	9	8,5	7	7	7	9	9	8 7,9
սեպտեմբեր	դեկտեմբեր	10	9	7	9	9	8	8,7	9	8	9	10	10	9 9,1
հոկտեմբեր	հունվար	6	7	8	9	8	8	7,6	9	10	9	12	7	12 9,9
նոյեմբեր	փետրվար	8	8	9	9	10	11	9,1	7	10	9	9	8	11 9
դեկտեմբեր	մարտ	7	7	8	9	7	9	7,9	7	8	7	5	7	8 7,1

[2] Գերմանիայում ապօրինի ծնունդները կազմում են բոլոր ծնունդների 8,8%, Ֆրանսիայում և Իտալիայում՝ 6,3, Անգլիայում և Ուելսում՝ 5,5, Բելգիայում՝ 7,1, Շվեյցարիայում՝ 4։

Թե՛ գավառում և թե՛ քաղաքում ամենից քիչ ծնունդներ պատահում են հունիսին (մինիմում) և հուլիսին, ուրեմն ամենից քիչ հղիություններ լինում են աշնան սկզբի ամիսներին՝ սեպտեմբերին և հոկտեմբերին։ Ամենից շատ ծնունդներ ընկնում են, թե՛ գավառում, թե՛ քաղաքում, հունվար (մաքսիմում), փետրվար, մարտ և սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին։ Ուրեմն ամենից շատ հղիություններ դարձան ամիսներին, տարվա այն ժամանակին, որին բանաստեղծը «пора любви и страсти нежной» է կոչում և ձմեռվա երեք ամիսներին, հարսանիքների և տնային փակ կյանքի սեզոնում։ Աղյուսակի մեջ հետաքրքիր է մի բան ևս, այն է, որ ծնունդների թիվը դեկտեմբերին (հղիությունը մարտին) թե գավառում և թե քաղաքում համեմատելով նախընթաց և դալիք ամիսների թվի հետ, շատ ցածր է։ Չլինի՞ թե այդ երևույթը պետք է վերագրել այն բանին, որ մարտը (մեծ պասը) ապաշխարության և ժուժկալության ամիսն է։

Մահացություն

Մահացությունը և բնակչությունը (հայ և թուրք) 1895 թ.

	Ննջեցյալների թիվը			Բնակչությունը 1000-ներով			1000-ից վախճանվել են		
	արական	էգն	ընդամենը	արական	էգն	միասին	արական	էգն	ընդամենը
Ամբողջ գավառի հայ և թուրք բնակչությունը	905	694	1599	79	65	144	11	11	11
Ամբողջ գավառի հայ բնակչութ.	511	418	929	47	38	85	11	11	11
» » թուրք »	394	276	670	32	27	59	12	10	11
Գավառի (առանց քաղաքի) հայ և թուրք բնակչությունը	640	443	1083	60	50	110	10	9	9,8
Գավառի հայ բնակչությունը	318	237	555	35	29	64	9	8	9
» թուրք »	322	206	528	25	21	46	13	10	12
Քաղաքի հայ և թուրք բնակչ.	265	251	516	19	15	34	14	17	15
Քաղաքի հայ բնակչությունը	193	181	374	12	9	21	16	20	18
» թուրք »	72	70	142	7	6	13	10	12	11

Մահացությունը հայերի մեջ 1881—1895 թթ.

Տարի	Գավառում								Քաղաքում							
	Ընդհանրապես				1000-ին կենդանիներից				Ընդհանրապես				1000-ին կենդանիներից			
	Եմոքոնա	Կին	Տղամարդ	Տղամարդ	Եմոքոնա	Կին	Տղամարդ	Տղամարդ	Եմոքոնա	Կին	Տղամարդ	Տղամարդ	Եմոքոնա	Կին	Տղամարդ	Տղամարդ
1881—85	262	196	458	56	30,5	25,5		8,6	149	153	302	7,8	6,2	14	19,1	24,7	21,6
1886—90	446	286	732	59	32,5	26,5		13,7	181	153	334	9,4	6,6	16	19,2	23,2	20,6
1891	659	426	1085	61	33	28		19,9	228	226	454	10	8	18	22,8	28,2	25,
1892	710	494	1214	62	34	28		20,9	235	218	453	11	8	19	21,3	27,2	242
1893	361	260	621	63	34	29		10,6	179	178	357	11	8	19	16,3	22,2	18,8
1894	474	373	847	63	34	29		14	207	205	412	11	9	20	18,8	22,8	20,6
1895	318	237	555	64	35	29		9	193	181	374	12	9	21	16,1	20	17,9
1891—95	504	360	864	63	34	29		14,8	208	202	410	11	8	19	18,9	25,2	21,6

Քաղաքի հայ բնակիչների մահացությունը ճիշտ երկու անգամ մեծ է, քան թե գավառինը (քաղաքում՝ 18%, գավառում՝ 9%)։ Քաղաքի թուրք բնակչության մահացությունը համարյա նույնքան է, որքան և գավառում։ Մահացությունը գավառում թուրքերի մեջ ավելի մեծ է, քան թե հայերի մեջ, իսկ քաղաքում՝ ընդհակառակը։ 1895 թ. կին ննջեցյալների բացարձակ թիվը փոքր է տղամարդ ննջեցյալների թվից, իսկ 1000 կնոջ համեմատ ամբողջ գավառում նույնքան կին է մեռել, որքան 1000 տղամարդի համեմատ տղամարդ։ Մի բան ևս արժանի է ուշադրության աղյուսակի մեջ. 1895 թ. կին ննջեցյալների %-ը գավառում ցածր է (1000 տղամարդուց մեռել է 10, 1000 կանանցից՝ 9), իսկ քաղաքում բարձր է տղամարդկանց %-ից (1000 տղամարդուց մեռել է 14, իսկ 1000 կանանցից՝ 17) և գավառի կին ննջեցյալների %-ը շատ ցածր է քաղաքի կին ննջեցյալների %-ից (1000 կանանցից գավառում մեռել է 9, իսկ քաղաքում՝ 17)։

1895 թ. հայերի մահացության մասին նկատածը տեսնում ենք և այստեղ. 15 տարի շարունակ գավառում մահացությունը (թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց) ավելի ցածր է, քան թե քաղաքում, գավառի կանանց մահացության %-ը ցածր է տղամարդկանց մահացության %-ից (1881—1895 թթ. գավառում 1000-ի համեմատ ավելի քիչ կին է

Մահացությունը հայերի մեջ ըստ ամիսների 1885—1890 թթ.

Ամիս	Գավառում 100-ից վախճանվել են							Քաղաքում 100-ից վախճանվել են						
	1885	1886	1887	1888*	1889	1890	1885 մինչև 1890	1885	1886	1887	1888	1889	1890	1885 մինչև 1890
հունվար	11	10	5	—	9	14	9,8	14	15	18	11	6	16	11,6
փետրվար	9	8	3	—	4	8	6,4	10	14	13	9	6	11	10,5
մարտ	8	10	5	—	3	7	6,6	12	6	12	14	6	15	10,9
ապրիլ	9	8	5	—	3	7	6,4	6	8	8	5	6	6	6,5
մայիս	4	5	5	—	4	5	4,6	6	6	8	6	5	8	6,5
հունիս	8	8	7	—	4	5	6,4	3	8	9	8	5	5	6,3
հուլիս	8	8	11	—	8	5	8	4	9	10	8	7	4	7
օգոստոս	5	7	9	—	13	9	8,6	9	7	7	11	9	6	8,2
սեպտեմբեր	7	7	12	—	12	10	9,6	9	8	7	7	11	7	8,2
հոկտեմբեր	11	9	11	—	13	8	10,4	7	4	4	6	14	6	6,8
նոյեմբեր	7	11	14	—	14	10	11,2	9	6	6	8	11	5	7,5
դեկտեմբեր	13	9	13	—	13	12	12	11	9	8	7	14	11	10

* Թվերը պակասում են։

մեռնում, քան տղամարդ), իսկ քաղաքում ընդհակառակը, կանանց մահացությունը շատ մեծ է տղամարդկանց մահացությունից։

Եվրոպական երկրների մահացության համապատասխան թվերի[3] հետ համեմատած Շուշու գավառի մահացության թվերը շատ ցածր են. այդ այն պատճառով, որ եվրոպական թվերի մեջ մտնում են և ծընվելուց հետո շուտով վախճանված մանուկները, իսկ մեզ մոտ դրանք, չմտնելով ծնվածների ցուցակի մեջ, վախճանվածների ցուցակի մեջ էլ չեն մտնում։

4. Մահացությունը 16-36 տարեկան կանանց մեջ և ծնունդներն շատ ամիսների (գրաֆիկ պատկերացում)



Թե՛ գավառում և թե՛ քաղաքում ամենից քիչ ննջեցյալներ լինում են ապրիլ, մայիս (մինիմում) և հունիս ամիսներում, ամենից շատ ննջեցյալներ լինում են գավառում հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր և հունվար ամիսներում, իսկ քաղաքում՝ դեկտ., հունվ. (մաքսիմում), փետր. և մարտ ամիսներին։

1886 թ. սկզբից մինչև 1896 թ. սկիզբը (տասը տարվա ընթացքում) գավառի հայ ծնվածների ավելը մեռածների համեմատ հավասար է 9336 (5216 արական, 4120 իգական), իսկ քաղաքում—2491 (1269

[3] Արևմտյան Ավստրիա 29,3 (1000-ից մեռնում են), Գերմանիա 26,8, Իտալիա 30, Շվեյցարիա 23,5, Ֆրանսիա 22,4, Ֆինլանդիա 22,2։

Հայ բնակչության աճը

Մեռածների ավելը գավառում 1886—1895 թթ. (բնակչության բնական աճը)

Տարի	Մեռածների թիվը			Ննջեցյալների թիվը			Ավելացել են			1000 բնակչին բնկնում են			
		դիակամա	դիակով	դվոսվր	դիակամա	դիակով	դվոսվր	դիակամա	դիակով	դվոսվր	մեռածներ	ծնունդներ	մեռածներ-ծնունդներ	մեռածներ-բոլոր բնակիչներ
1886	340	742	630	1372	165	95	260	577	535	1112	5,8	23,6	4,4	19,2
1887	395	997	671	1658	565	309	874	422	362	784	6,7	28,1	14,8	13,3
1888	—	1040	800	1840	337	238	575	703	562	1265	—	31,2	9,7	21,5
1889	244	1015	743	1758	546	333	879	469	410	879	4	29,3	14,6	14,7
1890	380	931	663	1594	616	456	1072	315	207	522	6,3	26,5	17,8	8,7
1891	365	1131	752	1883	659	426	1085	472	326	798	6	30,8	17,8	13
1892	433	986	749	1735	710	494	1204	276	255	531	7	28	18,6	9,4
1893	512	1162	892	2054	361	260	621	801	632	1433	8,1	32,6	9,8	22,8
1894	552	1128	794	1922	474	373	847	654	421	1075	8,7	30,5	13,4	17,1
1895	331	845	647	1492	318	237	555	527	410	937	5,2	23,3	8,7	14,6
1886—1895 ընթացքում	3552	9967	7341	17308	4751	3221	7972	5216	4120	9336	6,4	28,4	13,1	15,3

Մեռածների ավելը քաղաքում 1886—1895 թթ.

Տարի	Մեռածների թիվը				Ծնեցյալների թիվը				Ավելացել են				1000-հոգուց մեռածների	1000 բնակչի հաշվով			
	գյուղում	Խոտորջրում	Գյումրում	Միասին	գյուղում	Խոտորջրում	Գյումրում	Միասին	գյուղում	Խոտորջրում	Գյումրում	Միասին		գյուղում	Խոտորջրում	Գյումրում	Միասին
1886	325	281	605	118	109	257	207	172	379	15	11,3	40,4	14,4	26
1887	318	310	628	166	143	309	152	167	319	16	9,4	39,2	19,3	19,9
1888	336	291	627	195	125	320	141	166	307	16	8,5	39,2	20	19,2
1889	322	346	668	249	235	484	73	111	184	17	7,1	39,3	28,4	10,9
1890	299	280	579	173	154	327	126	126	252	17	7,6	34	19,2	14,8
1891	345	280	625	228	226	454	117	54	171	19	9,4	34,6	25,2	9,4
1892	323	303	626	235	218	453	88	85	173	19	9	33	24	9
1893	324	315	639	179	178	357	145	137	282	19	7,5	33,6	18,8	14,8
1894	294	311	605	207	205	412	87	106	193	20	7	30,2	20,6	9,6
1895	326	279	605	193	181	374	133	98	231	21	6·7	28,9	17,9	11
1886—1895	3212	2996	6208	1943	1774	3717	1269	1222	2491	178	8,2	34,8	20,9	13,1
Միջին թիվը	1470																

արական, 1222 իգական)։ Ամեն տարի միջին թվով 1000-ի համեմատ ավելացել են գավառում 15,3, իսկ քաղաքում՝ 13,9։ Այս երկու թվերն էլ շատ բարձր են[4] եվրոպական ժողովուրդների ավելացածների %-ից։ Ավելացածների տոկոսը քաղաքում քանի գնում պակասում է, իսկ գավառում ավելանում։

Հայ բնակչության իսկական աճը 1886 թ. սկզբից մինչև 1895 թ. սկիզբը։
(էմիգրացիա և բնական աճ)

	Բնակչությունը 1886-ի սկզբին	Բնակչությունը 1895-ի սկզբին	1886—1895 թթ. բնակչության իսկական աճը	1886—1895 թթ. բնակչության աճը (ծննդեանների ավելը)	Էմիգրացիայում ավելացած (+) կամ էմիգրացիայում պակասած (—) մարդիկ	Բնակչության տարեկան իսկական աճը 1886—1895 տարիներում
Գյուղ և քաղաք	73081	84569	11488	10659	+ 829	15,6%
Գյուղ	57893	63985	6092	8399	—2307	10,4%
Քաղաք	15188	20584	5396	2260	+3136	35,5%

[4] Մնվածների ավելը մեռածների համեմատ Գերմանիայում (1000 բնակչի համեմատ) հավասար է 11,4, Ֆրանսիայում՝ 2,3, Մեծ Բրիտանիայում՝ 13,9, Իտալիայում՝ 9,2, Շվեյցարիայում՝ 7,3, Բելգիայում՝ 10, Նիդերլանդներում՝ 12,1, Ֆինլանդիայում՝ 7,1 (1881—90 թվականների համար)։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Մասնավոր մարդու համար, մի մարդու, որ ցանկանում է ճանաչել յուր հայրենակիցներին և նրանց կյանքի զանազան երևույթները պարզել յուր և ուրիշների համար, գործը վերին աստիճան դժվար է։ Որպեսզի տալ օրինակ Շուշու գավառի տնտեսական դրության լիակատար նկարագիրը, բավական չէ շրջել այդ գավառում իբրև տուրիստ, որին ժողովուրդը ցանկություն անգամ չունի անսխալ տեղեկություններ տալու։ Եվ այդ որոշ չափով հասկանալի է. ծանր պայմանների մեջ ապրող գյուղացին կարծում է, թե յուրաքանչյուր ճշմարիտ տեղեկություն, որ նա տալիս է, պիտի ավելացնի մի նոր հոգս նրա չարաբաստիկ կյանքի մեջ, պիտի ավելացնի մի քանի ժամ առանց այն էլ հոգնեցնող աշխատանքի վրա։ Ի նկատի պետք է ունենալ և տուրիստի միանգամայն զարմացնող դերը գյուղերում, երբ նա առաջարկում է հարցեր գյուղացուն։ Հիշում եմ, երբ ես հարցնում էի սրանոցի տիրոջ նրա այդ սեփականության մասին, նա այնքան թերահավատությամբ էր նայում ինձ, որ այդ բոպեին իսկապես կարելի էր խղճալ նրան...

Բայց այդ բոլորը դեռ կարելի է լրացնել։ Այն, ինչ որ պատմում է գյուղացին յուր և յուր երկրի մասին, դեռ բավական չէ այդ երկրի տնտեսական դրության լիակատար պատկերը ներկայացնելու համար։ Պետք է ունենալ թվեր։ Միակ աղբյուրը, որից ես կարողացել եմ հանել թվեր, այդ «Кавказский календарь»*-ի մի քանի տարվա հատորներն էին։ Բայց որքան կարելի է հավատալ այդ հրատարակության, քանի որ յուրաքանչյուր քայլափոխում պատահում են նորանոր անակնկալներ։ Անկարելի է այդտեղից արտագրել թվեր՝ անհոգ մնալով նրանց ճշտության նկատմամբ։ Կարելի է երևակայել ուսումնասիրողի դրությունը, երբ նա հանում է* «Кавказский календарь»*-ից մի տարվա հացահատիկի ընդհանուր քանակությունը, և հետո համեմատելով այդ գավառապետի տված նույն տարվա մասին տված տեղեկությունների հետ, տեսնում է, որ մեկի թվերը չեն համապատասխանում մյուսին, այլ մեկը մյուսից տարբերվում է 70000-ով։*

Իմ այս աշխատության մեջ պակասում են թվեր շատ հարցերի մասին։ Այսպես, ես չեմ կարող թվերով ապացուցել հողատիրության դրությունը մեր գավառում։ Եթե դրա մասին ունենայի ստույգ տեղեկություններ, առանց վարանելու պիտի ասեի այն, ինչ որ տեսնում է ճանապարհորդը գավառում։ Կարելի է կարծել, թե աշխատությանս մեջ բերված մի քանի թվերը ճիշտ են բոլոր բնակիչների համար։ Եթե այդ այսպես լիներ, այն ժամանակ կասկած չէր մնա, որ Շուշու գավառի գյուղացին ապրում է բարօրության մեջ։ Եթե յուրաքանչյուր հոգի ունենար 4 չետվերտ հացահատիկ, ինչպես այդ կտեսնի ընթերցողը իմ հոդվածում, եթե յուրաքանչյուր տուն ունենար ձի, ոչխար, եզ ու կով, այն ժամանակ նա կունենար առնվազն բարեկյաց երկրագործի վիճակը, բայց մի՞թե այդ ճիշտ է իրականության մեջ... Գավառում կան ձիեր, որոնք ունեն մի կամ երկու դեսյատին հող, մինչդեռ յուրաքանչյուր ընտանիքի անդամների թիվը 6—10 է։ Զորեղ գյուղացին ունի ավելի հող, քան նա, որ ճնշված է, նա, որ հասարակության մեջ դիրք չունի։ Հացի սակավությունը բերում է պարտքեր, որոնք անհրաժեշտ տոկոսներ են բերում պարտատերերին։ Ամենևին ստախոսություն չպետք է համարել, եթե գյուղացին հայտնում է 10 ռուբլու 100 դառնալը կարճ ժամանակվա ընթացքում։ Հետո, կան գյուղերում մարդիկ, որոնք պարապում են բացառապես վաշխառությամբ։ Դրանք շրջում են գյուղերը ամբողջ տարին և ամենայն ջանք թափում են իրենց գործը օգտավետ դարձնելու հարկերի հավաքման ժամանակ։ Մի գյուղացի, որին մտրակով ստիպում են շաբաթվա ընթացքում, որտեղից էլ լինի, փող ճարել և վճարել արքունի հարկը, անկասկած թեթևություն է զգում, երբ տեսնում է, որ վաշխառուն պատրաստ է անհրաժեշտ գումարը տալ իրեն։ Բայց ինչքա՞ն թանկ է նստում այդ թեթևությունը գյուղացուն։

Ենթադրենք գյուղացին վերցրել է պարտք։ Կալից հետո նա տալիս է տոկոսը ցորենով, որովհետև փող չունի։ Ցորենը գնահատվում է ավելի ցած, քան կարող էր վաճառվել։ Դրամագլուխը հետզհետե մեծանում է, չնայելով որ գյուղացին վճարում է տոկոսը։ Անպաշտպան գյուղացին գանգատվել այդ անիրավության դեմ չի կարող, որովհետև գյուղական դատարանը պաշտպան է վաշխառուին. տանուտերը հաճախ ինքը վաշխառու, իսկ բարձր դիստանցիաները մատչելի չեն ժողովրդին... Բացի դրանից, գյուղացին ունի տալու «չափար-փուլի», «գյաղմա-փուլի», «զաչի-փուլի» և պիտի տա փող՝ զանազան ոստիկանների և այլ պաշտոնյաների հյուրընկալելու համար։ Վերջապես նա ունի ընտանիքի ծախքեր։ Այն, ինչ որ կարելի է ասել գյուղական ժողովրդի ընտանեկան ծախքերի մասին 10 տարի առաջ, այժմ չի կարելի, որով-

հետև հետզհետև ավելանում են գյուղացու պահանջները։ Այսպես, եթե տասը տարի առաջ գյուղացու խմելիքը միայն սառը ջուրն էր, այժմ նա գործ է ածում թեյ, եթե մինչև այժմ նա գաղափար չուներ թանկագին խմիչքների մասին, այժմ ունեցը դասակարգի հարանիքում նա տեսնում է «կոնյակ»։ Նույն տարբերությունը և զգեստների, ուտելիքի վերաբերմամբ։

Տնտեսական պայմանների ծանրությունը կարելի է պարզել մասամբ և գործարանային բանվորների երևույթով։

Մետաքսի գործարաններում աշխատում են 8 տարեկան աղջիկներ։ Անկասկած, ընտանիքը չէր թողնի իր երեխային դեղնել, գունատվել և հիվանդանալ գործարանական կեղտոտ մթնոլորտի մեջ, եթե նա ապահովված լիներ։ Այդ նշանակում է, որ ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը հարկադրված է աշխատել՝ պահելու յուր զլուխը։ Եթե գործարանը տար նշանավոր օրավարձ, ապա կարելի էր ասել, թե գյուղացուն գրավում է այդ, մանավանդ որ ժողովրդի մեջ փողը բացակայում է։ Բայց չէ՞ որ երեխան ստանում է 7—10 կոպ. օրավարձ։ Գործարաններում աշխատում են նույնպես հասակավոր կանայք։ Անշուշտ բարոյականության առաքյալները, տեսնելով հայ կնոջը գործարանի պատերի մեջ՝ ծախելիս յուր աշխատանքը և իրեն, պիտի պոռային ազգի կորստի մասին։ Բայց հայ «բարձրակոչ» բարոյականությունն անդամ չդիմացավ զոյության պաշտպանության հարցում, իրականությունն այսպես է։

Գործարանների սաեումը նույնիսկ ցույց է տալիս երկրի բնակիչների տրամադրությունը։ Մի գյուղ, որ ունի փող, բացի բնական հարստություններից, ամենևին թույլ չի տա յուր որդիներին գործարանում աշխատելու։ Այդ դիպվածում գործարանատերը կամ պիտի յուր հետ բանվորներ բերի, որ շատ թանկ կնստի նրան, կամ գործարան չբանա այդ գյուղում։ Ընդհակառակը, մենք տեսնում ենք, որ նույնիսկ կան ձեռքեր, որոնք կառաջարկեին իրենց աշխատանքը, եթե նորանոր գործարաններ բացվեին։ Մի փասա էլ։ Այն գյուղերը, որոնք ունեն մետաքսի գործարան, հարկերի հավաքման ժամանակ դժվարություն չեն զգում, փող ունեն։ Այստեղից էլ այն եզրակացությունը կարելի է անել, թե գործարան ունեցող գյուղի ծխերից մեծ մասը տալիս են բանվորներ...

Բացի վերը հիշած «Кавказский календарь»-ներից, ես ունեցել եմ 1895 թ. գավառապետի տարեկան հաշիվը, հետո, արհեստավորների և բանվորների մասին ինձ տեղեկություններ ավել է պր. Լ. Աթաբեգյան։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հացահատիկներ. Երկրագործությունը Շուշու գավառում ամենակարևոր պարապմունքն է։ Գավառի դաշտային և լեռնային մասերում հողը մշակվում է արորով (սալթ), իսկ գութանը, որը պահանջում է ավելի մեծ թվով բանվոր և անասուն, պրեթե վերացված է։ Եթե չհաշվենք մի քանի ունևոր գյուղացիներին, զավառում ժողովուրդը երկրագործական եվրոպական տեսակի զործիքներ չունի։ Տիրապետող սակավահողությունը չի ստիպում գյուղացիներին ունենալ կատարելագործված մեքենաներ, որովհետև նրանք չունեն փող, զավառում չկա հանրնական վարկ և ժողովուրդը չունի տեխնիկական գիտելիքներ։ Հայ երկրագործը բոլորովին չի պարարտացնում հողը. ապը նա գործածում է իրրև վառելիք (եթե անտառներ չկան) և սակավ անդամ միայն կըտրում է այգիները։ Միակ միջոցը, որով գյուղացին ուժեղացնում է հողը, դա արաերի անցան թողնելն է (запущение)։ Եթե երկու-երեք տարի մի արտում ցանեն, երրորդ կամ չորրորդ տարին նույն արտը չեն մշակում, այլ թողնում են մի կամ երկու տարի, որից հետո ցանում են կամ զարձյալ առաջվա արմտիքը կամ մի այլը։ Հազիվ է պատահում, որ միևնույն արտը երեք տարի իրար վրա ցանվի, սովորաբար երրորդ տարին ուրիշ հացահատիկ են սերմում։ Ջրովի արտեր մեր երկրագործը չունի։

Սակավահողությունը, բանող անասունի պակասությունը հաճախ ստիպում են գյուղացիներին կամ բոլորովին չպարապել երկրագործությամբ, պանդխտել, կամ եթե պարապում են՝ միանալով իրենց համագյուղացիների հետ, ընկերովի։ Այսպես, եթե գյուղացին չունի գոնե մի լուծ եզ, մինիմում երկու զույգ, նա ընկերանում է իր համագյուղացու հետ, և երկուսը միասին մշակում են ունեցած հողերը, կամ՝ համագյուղացիները միանալով վերցնում են մի երրորդից հող և մշակ ու հոտաղ վարձելով, միասին տանում են զործը։ Ստացած բերքի չորրորդ մասը տրվում է նրան, որից վերցվել է հողը, իսկ մնացածը կիսվում է։

Հացահատիկների ցանքով պարապող գյուղացիների թիվը հետզհետև ընկնում է։ Թաղլարում այդ ավելի աչքի է ընկնում, որովհետև այդտեղ բնակիչների մոտ 2/3-ը միայն պարապում է այդ ցանքով։

Ցանվող հացահատիկները հետևյալներն են. աշնանացան և գար-

նանացան ցորեն, գարի և կորեկ։ Ձեռքի տակ ունեցած նյութերից հանելով Շուշու գավառին վերաբերյալ թվերը, երևում է, որ ստացված հացահատիկների ընդհանուր քանակությունը հետևյալ ութ տարիներում եղել է.

Տարիներ		1886	1889	1890	1891	1892	1893	1894	1895
Ձեռվերանք	Ստացված է հացահատիկ գավառում	424,566	149,146	147,745	257,417	386,750	481,358	508,230	620,700
	Մի հոգուն ընկնում է	4,11	1,39	1,37	2,37	2,52	4,31	4,51	5,8

1886 թվականին Շուշու գավառի գյուղացին ունեցել է ավելի մեծ քանակությամբ հացահատիկ, քան հարկավոր էր նրան կերակրվելու և սերմահատիկ պահելու համար։ Գալիս է 1889 թվականը, երբ գյուղացին չունի հացի անհրաժեշտ քանակությունը. 1890 թ. նույնպես, նույնը կարելի է ասել 1891 և 1892 թվերի մասին, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ գյուղացին բացի անհրաժեշտ քանակությունից, պիտի շատ ավելի ունենար, որպեսզի կարողանար ծածկել նախորդ տարիների վնասները։ Չմոռանանք, որ 1879, 1880 և 1881 թվականներն էլ գյուղացին անց է կացրել դժվարությամբ և անկասկած պարտքերի տակ է մնացել։ Գյուղերում շատերից կարելի է լսել սովի տարու պարտքերի մասին։ Այսպես ուրեմն, 1889 թ. ցանքի անբերրիությունը և նրա հետևանքները մասամբ մոռացվում են միայն 1893-ին, որից սկսած մինչև 1895 թ. գյուղացին արդեն բավական հաց ունի, որը, սակայն, չի տալիս այն օգուտը, ինչ որ սպասում էր նա, որովհետև 1894 թվականից հացի գինը նկատելի կերպով ընկնում է։

Հիշելու է և այն հանգամանքը, որ գավառը զբաղվում միայն տալիս է քաղաքին հաց։ Իրավ, եթե Ջիբրայելի և Ջիվանշիրի հացահատիկ բերին Շուշու շուկաները, անկասկած պիտի չունենային այն օգուտը, ինչ որ ունենում է մեր գյուղացին։ Այդ բավական պարզ է, որովհետև ճանապարհների հեռավորությունը, ժամանակի և աշխատանքի վատնումը Ջիբրայելի կամ Ջիվանշիրի գավառի գյուղացիների համար ավելի մեծ է, քան Շուշու գավառի, մինչդեռ քաղաքի շուկաներում հացի տիրապետող գինը մնում է գավառի ամենամոտիկ և ամենահեռու, ամենալավ և ամենավատ հացերի գնի միջինը։

Հացահատիկի ցանքը և բերքը Շուշու գավառում

Ժողովուրդ	Ցանք								Բերք								Ձեզիթ մսիատոր վերդ-հիկոդժ վատիոթ
	Աշնանացան				Գարնանացան				Գարնանացան				Գարնանացան				
	տարիդՀ ի գոիդաՁ	տարիդՀ ի գոիդաՁ ի գոիդաՁ	Ազիթատոս դիդՀ ՁՀիդր	ի գոիդաՁ	ի գոիդաՁ	տոս ՁՀիդր	ի գոիդաՁ դոսեոչ վր	ի գոիդաՁ	ի գոիդաՁ	ի գոիդաՁ	տոս ՁՀիդր	ի գոիդաՁ դոսեոչ վր	ի գոիդաՁ	ի գոիդաՁ	տոս ՁՀիդր	ի գոիդաՁ դոսեոչ վր	
1886	58,419	292,905	5,02	5,509	23,060	4,18	3,06	17,696	95,450	5,5	0,92	1,409	12,681	9,0	0,12	103,185
1889	35,097	81,208	2,3	2,180	3,370	1,7	0,79	20,458	51,070	2,5	0,48	3,802	8,376	2,2	0,07	106,635
1891	52,335	117,630	2,5	5,600	10,400	2,0	1,7	23,893	66,227	2,77	0,6	21,059	46,260	2,1	0,4	108,942
1894	71,104	367,733	5,1	8,000	40,200	5,0	3,65	17,000	87,000	5,1	0,77	19,700	102,500	5,2	0,9	111,735

[1] 58,419. 292,905. 5,0.

Այդպես ուրեմն, Ջիբրայելի և Ջիվանշիրի գավառները, եթե վաճառում էլ են հաց Շուշու շուկաներում, այն էլ աննշան քանակությամբ։ Եթե այդպես է, նշանակում է մեր գավառի գյուղացին իր հացի մի մասը տալիս է քաղաքին։ Հետո՝ վերը բերած աղյուսակի թվերի մեջ մտնում է և կարտոֆիլի քանակությունը, որը, սակայն, գյուղացին չի գործադրում իբրև հաց։ Իսկ գարին բացառիկ դիպվածներում միայն հացի տեղ է գործադրվում։

Ցույց տալու համար առանձին-առանձին ցանվող հացահատիկները և նրանց քանակությունը, մեկից ստացածը և մի հոգու վրա եկող հացի քանակությունը միայն գավառում, դնում ենք համապատասխան աղյուսակ։ Այդ չորս տարուց ընթերցողը կարող է տեսնել, որ հացահատիկների մեջ գերազաս տեղ բռնում է աշնանացան ցորենը, որից հետո գալիս է գարին և ապա՝ կորեկը։ Այդ դասավորությունը բնորոշ է գավառի համար ոչ միայն այդ մի քանի տարիների վերաբերմամբ, այլ և ընդհանրապես։

Բամբակ. Երկրագործական պարապմունքներից մեկն էլ, իբրև գյուղատնտեսական շահավետ մի ճյուղ, բամբակի մշակումն է։ Երկար ժամանակ չէ, որ բամբակը տարածվել է Շուշու գավառում, հազիվ 10 տարի առաջ սկսված լինի տնտեսությունը։ Սակայն կարճ ժամանակի ընթացքում նա բավական առաջ է գնացել։ Հավանաբար բամբակի առաջադիմությունը բավական սերտ կապ ունի այն հանգամանքի հետ, որ տարվա որոշ ժամանակին ժողովուրդը կարող է փող ունենալ բամբակի վաճառումից, իսկ այդ փողը շատ կարևոր է գյուղացուն պետական հարկերի և զանազան ծախքերի համար, որոնք նա չի կարողանում ծածկել հացահատիկների ցանմամբ միայն։ Ներքև բերված թվերը ցույց են պալիս մաքուր բամբակի այն քանակությունը, որ ստացված է 1890, 1893, 94 և 95 թվականներին։

1890 թ.՝ 2,138 փ., 1893 թ.՝ 4,3008 փ., 1894 թ.՝ 4,474 փ., 1895 թ.՝ 4342 փ.։

Կարտոֆիլ. Գանձակի նահանգում Շուշու գավառը գրեթե երկրորդ տեղն է, ուր մեծ քանակությամբ կարտոֆիլ է ցանվում։ Հետևյալ վեց տարիներում ստացված է կարտոֆիլ (տե՛ս աղյուսակը)։

Այս աղյուսակի թվերից պարզ երևում է, որ տաս տարի առաջ գավառում կարտոֆիլ ցանում էին աննշան քանակությամբ, այնինչ այժմ շատ մեծ ծավալ է ստացել այն, և ցանվում է ավելի մեծ քանակությամբ, քան օրինակ գարնանացան ցորենը։

Տարիներ	1886	1889	1890	1891	1893	1894
Ցանված է չետվերտ	94	530	4,950	3,070	16,830	13,753
Ստացված է չետվերտ	470	3,862	18,450	16,850	85,570	73,597

Երկրագործական բանվորներ. Սրանք պատկանում են գյուղական ժողովրդի այն մասին, որը չունի երկրագործության համար անհրաժեշտ բանող անասունը, գործիքները և բավականաչափ հող, բացի դրանից ունի բավականաչափ պարտքեր։ Գյուղացիները այդ պայմաններից ստիպված՝ կամ թողնում են իրենց ծննդավայրը ավելի երկար ժամանակով, կամ պանդխտում են շրջակա թուրք գյուղերը՝ նրանց դաշտերում աշխատելու համար և կամ վերջապես, եթե հնարավոր է, աշխատում են իրենց համագյուղացիների մոտ։

Հասակավոր գյուղացին չի ծառայում յուր համագյուղացուն ամբողջ տարով. քչերը միայն գարնան կամ աշնան աշխատում են ուրիշի արտերում և ստանում 7—10 ռուբլի ամսավարձ։

Վերն ասացի, թե աղքատ գյուղացին պանդխտում է շրջակա թուրք գյուղերը աշխատանք գտնելու համար,—դրանք հետևյալներն են.

1. Վարող. Սա ցանում է մահմեդական գյուղացու արտերը, գործադրելով նրա անասունը, գործիքները և սերմնահատիկը։ Գործատերը տալիս է վարողին մի օգնական, վարողն էլ պարտավորվում է մասնակցել հնձին և ստանում է բերքի 1/5-ը։

2. Հնձող. Ստանում է 20-ից 3-ը, ինչպես ասում է գյուղացին, կամ 15%։ Եթե վարձը տրվում է փողով, հնձողն ստանում է յուրաքանչյուր փանջակի համար՝ 5 խուրձ, 20—25 կոպ. և կարող է հնձել օրը 4 փանջակ, մինիմում 2 փանջակ։

3. Հոտաղ. Սա տարիքով ավելի փոքր է, քան վարողն ու հնձողը, որովհետև յուր գործը համեմատաբար ավելի քիչ ֆիզիկական ուժ և փորձություն է պահանջում։ 10—15 տարեկան գեղջուկը ծառայում է յուր պարտատիրոջ տանը. վարձվում է ամբողջ տարով. գործատերը նշանակում է նրան 10—20 ռուբ. տարեվարձ, ստանում է ուտելիքը, հագուստն ու տրեխը։

Հոտաղը վարձվում է ամսով. այս դիպվածում նա ստանում է 4 ռուբլի ամսավարձ, ուտելիքն ու տրեխը։

Կին բանվորներ. Հայ կինը յուր գյուղից դուրս, ուրիշ գյուղի դաշտերում չի աշխատում։ Նրա զբաղմունքը, իբրև երկրագործ բանվորի, քաղհանն է։ Քաղհան անող կինն ստանում է 15—20 կոպ. օրավարձ։

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Այգեգործությունը գավառում վաղուց տարածված պարապմունք է ժողովրդի համար, իսկ վերջերս այն նկատելի կերպով ծավալվում է և երկրագործությունից հետո առաջ է գալիս իբրև ամենակարևոր տընտեսություն։ Չի կարելի ասել, թե գյուղացին մեծ օգուտներ ունի այգիներից, որովհետև նա առայժմ մեծ քանակությամբ օղի[2] կամ գինի չի արտահանում։

Այգեգործության արդյունաբերածը մեծ գումարներ է տալիս հարուստ գործարանատերերին, իսկ գյուղացին ինքը հաճախ ծախում է յուր այգին կամ ավելի լավ ասել, որոշ վարձատրություն ստանալով գիշում է մի որևէ հարուստ գործարանատերի՝ շահագործելու մի տարի և այդպես գրեթե՝ յուրաքանչյուր տարի։ Խաղողի այգիներից ստացած գինին հայ գյուղացին գործադրում է տանը և միայն քիչ քանակությամբ վաճառքի է հանում։ Գավառում յուր գինով հայտնի է Ղզղալան. վերջինիս տված գինին վաճառվում է ավելի թանկ գնով, քան մնացած տեղերինը։ Թուրք ազգաբնակությունը խաղողի այգիները կամ ծախում է՝ (գրեթե յուրաքանչյուր տարի) շահագործելու հայերին, կամ ինքը խաղողը վաճառում իբրև պտուղ։ Խաղողից թուրքերը պատրաստում են բեքմեզ։

Շուշու գավառի հայ գյուղացու պատրաստած գինին շուտով թթվում է։ Այս վերջին երևույթը, բացի այն որ գիտության բացակայության հետևանք է, ունի մի այլ պատճառ էլ. դա գավառի աշխարհագրական դիրքն է, և սրա հետ կապված վաղաժամ ցրտերն ու ձմեռը, որոնք ստիպում են գյուղացուն խաղողը քաղել դեռ չհասած։ Գավառի դաշտային մասերում և ավելի տաք տեղերում միայն քիչ ուշ է սկսվում խաղողաքաղը։

[2] Այգեգործությունն այստեղ սահմանափակվում է խաղողի և թթի այգիների մշակմամբ, որովհետև գավառում պտղատու ծառերի այգիները շատ չեն։

Գինին պատրաստվում է շատ հասարակ կերպով։ Խաղողը թափվում է հնձանի կամ «ջրվիչի» մեջ և հետո տղամարդիկ մերկ ոտերով սկսում են կոխոտել խաղողը. գոյացած հեղուկը թափվում է հնձանից կարասների մեջ,—այդքանով վերջանում է գինի պատրաստելու պրոցեսը։

Ներքև բերած վեց տարիներում գավառում պատրաստված է գինի՝ վեդրոներով (դույլ) հաշված.

1884 թ.՝ 95,406, 1885 թ.՝ 40,000, 1890 թ.՝ 130,000, 1893 թ.՝ 180,000, 1894 թ.՝ 186,000, 1895 թ.՝ 17,900։

1895 թվականին գավառում ստացված գինու փոքր քանակը պիտի բացատրել այն հանգամանքով, որ այդ տարի գավառում տիրում էր խաղողի հիվանդություն։ Իսկ ընդհանրապես թվերից երևում է, որ խաղողի այգիները բավական նշանավոր տեղ են բռնում երկրում։ 95 թ. տեղեկություններից երևում է, որ գավառում խաղողի և թթի այգիները բռնում են 7—8 հազար դեսյատին հող, որից 5 հազարը միայն խաղողի, իսկ 2—3 հազար դեսյատինը թթի այգիները։

Թթի այգիների շահագործությունը հայ գյուղացուն տալիս է որոշ չափով օղի և կերակրում է նրա շերամին։ Թուրք ազգաբնակությունը բոլորովին չի պատրաստում օղի. թթի այգիները նա նվիրում է շերամի որդերի կերակրելուն։

1895 թվականին գավառում պատրաստված է 300,000 վեդրո օղի, հաշվելով վեդրոյի գինը 4 ռ. 50 կոպ., կտեսնենք, որ այգեգործությունը միայն օղի արտադրելով, տվել է 1,300,000 ռուբլի. եթե ավելացնենք դրա վրա գինին 17,900 վեդրո՝ 23,270 ռուբլու արժողությամբ, կունենանք 1,323,270 ռուբլի։ Այդ միլիոնը միայն ցույց է տալիս գավառի այգեգործության ահագին նշանակությունը իբրև գյուղատնտեսական նշանավոր և օգտավետ ճյուղերից մեկի, բայց նա չի ցույց տալիս ժողովրդի տնտեսական գրության աստիճանը։ Իսկապես Շուշու գավառը տալիս է եկամուտներ, որոնց ամենամեծ մասը մնում է հարուստ հարուստ այգետերերի և գործարանատերերի, իսկ ժողովուրդն այդ բոլորից վերցնում է այնքան, որքան կարող է վերցնել անփող, արդյունաբերական ձեռնարկության անկարող գյուղացին։ Արդյունաբերված օղին և գինին գրեթե ամբողջովին դուրս է եկել նրա այգիներից և նրա աշխատանքի պտուղն է, սակայն այդ բոլորից նա շահել է այնքան, որ պիտի շահեր, եթե տասնապատիկ պակաս աշխատած և քրտինք թափած լիներ, որովհետև նա ստիպված է եղել անձեռնտու պայմաններով վաճառել յուր այգիների պտուղը։

Այլգործական բանվորներ. 1. Գարիչի. սա ստանում է ամբողջ սեզոնի համար, որը տևում է 6 կամ 7 շաբաթ, 10—15 ռուբլի։ Հասակով դարիչիները լինում են 12—15 տարեկան։

2. Թուրք թափողներ. ստանում են ամսական 20 ռուբլի, ամբողջ սեզոնի համար 30—35 ռուբլի։ Սեզոնը տևում է Հունիսի 10-ից մինչև Հուլիսի վերջը։

3. Շալրոնող կանայք ստանում են ամսական մաքսիմում 6 ռուբլի։

4. Խաղող քաղող կանայք ստանում են 10—20 կոպ. օրավարձ։

5. Խաղող կրող (ուղամարդ) ստանում են 30—40 կոպ.։

6 Խաղող կոխող « » 40—60 »

Գարնանը խաղողի այդիների հողը փափկեցնում են. դրա համար վարձվում են բանվորներ, որոնք բահում են այգու հողը և ստանում են 30—50 կոպ. օրավարձ։

Օրավարձ բանվորը գործատիրոջ դրամական վարձատրությունից բացի ստանում է նաև կերակուր։

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Անասնապահությունը հայ ազգաբնակության մեջ զարգացած չէ։ Նա կապված է երկրագործության հետ։ Հայ ազգաբնակությունը չի պահում ավելի մեծ քանակությամբ անասուն, քան որքան հարկավոր է երկրագործական պահանջներին մինիմալ կերպով բավարարություն տալու համար։ Նրա ամենաանհրաժեշտ մասը միայն ունի մեծ քանակությամբ տավար, ոչխար, այծ ու խոզ։ Տավարը նիհար է, հասակով ցած ու վատուժ։ Մի քանի հայ գյուղեր միայն՝ Տումի, Թաղոտ, Ավետարանոց և Շոշի, պարապում են անասնապահությամբ, սակայն այստեղ էլ վերջինս երկրագործության չափ զարգացած չէ, իսկ մնացած գյուղերում ավելի հաճախ պատահում են ծխներ, որոնք տավար բոլորովին չունեն, ինչու և երկրագործությամբ չեն պարապում։ Տավարն արածում է արոտատեղերում և ցված արտերում։ Արոտատեղերը ըստ մեծի մասի գրաված են թուրք էյլաչիների ձեռքին, որոնք գարնանը չվում են տափարակներից լեռները։

Պր. Ա. Քալանթարի աշխատությունից[3] տեսնում ենք, որ տավարի

[3] Калантар А. А., Состояние скотоводства на Кавказе. В книге: «Материалы для устройства казенных летних и зимних пастбищ и исследование скодоводства на Кавказе» Вып. II, Тифлис, 1890.

քաշը 5—7—8 փութ է։ Կովը տալիս է օրական 8—15 ֆունտ կաթ՝ մայիսին և հունիսին։ Ամբողջ տարվա համար, միջին թվով, կովը տալիս է ոչ ավելի քան 9,5 ֆունտ։

Շուշու գավառում թուրք ազգաբնակության մեջ անասնապահությունը բռնում է դեբաղաս տեղ՝ համեմատելով գյուղատնտեսության մյուս ճյուղերի հետ։ Գարնան սկզբներին գավառի թուրքերը թողնելով իրենց բնակության վայրերը, չվում են լեռները, որտեղ անասնապահության վերաբերյալ բոլոր գործերը կատարում են կանայք։ Տղամարդիկ մասամբ մնում են տափարակներում՝ իրենց վար ու ցանքին նայելու և հունձը հավաքելու։ Գարնանը և ամռանը ստացած արդյունքներից թուրքերը վաճառքի են հանում մի մասը։ Բուրդը, յուղը և պանիրը նրանք ծախում են հայերին, փոխանակում են ցորենով և այլն։

Կովից ստանում են օրական 8—15 ֆունտ կաթ՝ մայիսին և հունիսին, հետո՝ 4—6 ֆունտ։ Կարելի է ասել, թուրքերի կովը տալիս է 8,25 ֆունտ կաթ, միջին թվով։ Գտնելով առաջին և վերջին թվերի (9,5 և 8,25) միջինը, ստանում ենք մոտ 8,9 ֆունտ։ Այդքան, ուրեմն, կաթ է ստացվում մի կովից պ. Ա. Քալանթարի տեղեկությունների համաձայն։

Ներքևում դնում եմ 1891 և 1895 թվերում գավառի ունեցած անասունների ցուցակը։

Անասուններ	1891 թ.			1895 թ.		
	քաղաք	գավառ	բոլորը	քաղաք	գավառ	բոլորը
Ձի	210	6,212	6,422	370	12,600	12,970
Էշ	85	13,000	13,085	320	13,200	13,520
Ջորի	145	800	945	160	840	1,000
Եզ-կով	550	59,161	59,711	580	64,400	64,980
Գոմեշ-մատակ	—	10,000	10,000	—	11,200	11,200
Ոչխար (հատ.)	650	139,221	139,871	220	155,000	155,200
Այծ	66	5,644	5,710	380	8,200	8,580
Խոզ	—	12,880	12,880	60	22,000	22,060
Ուղտ	—	219	219	—	256	256

խոզապահությամբ պարապում են միայն հայերը, իսկ ուղտերը պատկանում են թուրքերին։

Բացարձակ թվերից էլ երևում է, որ 1891 թ. մինչև 1895-ը անասուններն ընդհանրապես բազմացել են։ Այժմ տեսնենք ինչպես է արտահայտվում այդ զարգացումը գավառի ազգաբնակության թվի վերաբերմամբ։ Վերցվում է միայն գավառը։

Անասուններ[1]			Տխերի մոտ. թիվը		Բնակիչն. մ. թիվը		Մի ծխին գալիս է		Մի հոգուն գալիս է	
	1891	1895	1891	1895	1891	1895	1891	1895	1891	1895
Ձի	13716	20250	18157	18778	108942	112668	0.75	1,07	0,125	0,179
Եզ-կով	79161	86800					4,38	4,56	0, 75	0, 79
Ոչխար	143926	161835					7, 9	8, 6	1, 32	1, 43
Խոզ	12880	22000					1,22	2,02	0, 2	0, 37

Վերը բերված թվերից երևում է, որ յուրաքանչյուր ծխին 1891 թ. ընկնում է ձի 0,75. ասել է թե՝ այդ թվին գավառում կային ծխեր, որոնք ամենևին ձի չունեին։ Եթե թվերն էլ չլինեին, այդ կարելի էր ասել համարձակ կերպով գոնե հայերի համար։ Նույն բանը կարելի է ասել 95 թվականի մասին. կոտորակն աճել է մինչև մի ամբողջ և ավելի։

Այսպես թե այնպես, թվերը ցույց են տալիս գավառի վերացական բարեկեցությունը, միջին հարստությունը, բայց իրողությունը։ Եթե լինեին թվեր տնտեսական դրության մասին, որոնք ցույց են տալիս ձի, եզ, ոչխար և այլն չունեցող ծխերի քանակությունը, մենք պիտի տեսնենք, որ այդպիսիները կազմում են նշանավոր կոնտինգենտ։ Հետո այդ չորս տարվա ընթացքում կրկնապատկվել է գավառի ձիերի թիվը։ Այդ կրկնապատկումը բացատրել ձիերի աճմամբ չի կարելի՝ ընթերցողը կարող է ենթադրել, թե ազգաբնակությունը վերը հիշած ժամանակի ընթացքում հարստացել է որոշ չափով, բայց գուցե այդ երևույթը հեռանք է գյուղական ունևոր դասակարգի հարստության զարգացման և ոչ գավառի ժողովրդի ընդհանրապես, որն ավելի հավանական է։

Ինչ վերաբերում է խոզերին, վերջիններս պատկանում են հայերին, որովհետև թուրք ազգաբնակությունը խոզապահությամբ չի պարապում, ուստի երկրորդ աղյուսակի վերջին չորս սյունակների թվերը վերաբերում են միայն հայերին։

1891 թվականից մինչև 1895 թ. յուրաքանչյուր տարի մի հազար մարդու վրա գավառում ավելացել է մոտ 37 հոգի, յուրաքանչյուր հազար ձիուն՝ 102 հատ, հազար ոչխարին՝ 102 հատ, հազար եզ-կովին՝ 125 հատ[5]։ Թեև այս թվերից գավառի համար օրինաչափություն հանել չի կարելի, բայց նրանք գոնե ցույց են տալիս, որ անասուններն այդ չորս տարվա ընթացքում աճել են ավելի արագ, քան մարդիկ։

Համեմատության համար մենք այստեղ բերում ենք Իռլանդիայի մի քանի նահանգների[6] վերաբերյալ թվեր, որոնցից ընթերցողը կտեսնի, որ այդ նահանգում յուրաքանչյուր ծուին ավելի քիչ տավար և այլ անասուններ ունի, քան մեր գավառում։

Անասուններ	Մի ծխին գալիս է ոուս. նահանգ.		Մի ծխին գալիս է Շուշու գավառ.	
	1862	1893	1891	1895
Ձի	2,06	0,59	0,75	1,07
Տավար	2,47	0,84	4,38	4,56
Ոչխար	7,87	2,02	7,9	8,6
Խոզ	1,66	0,37	—	—

1895 թվականին գավառում ստացված է բուրդ 10 230 փութ, որից ծախսել են 8 300 փ. — 3 ռ. 20 կոպեկով փութը, ընդամենը՝ 26 560 ռուբլ.։

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Շերամապահությունը մեր գավառում վաղուց տարածված է։ Գավառի բոժոժը մի ժամանակ եղել է իտալական դեղին տեսակից։ Շերա-

[1] Այս աղյուսակի մեջ բոլոր ջորիներն ու էշերը դարձված են ձիեր, գոմեշներն ու մատակները՝ կովեր, ուղտերն ու այծերը՝ ոչխարներ, հաշվելով մի ձին հավասար 2 էշի և 4/5 ջորու, մի կովը կամ եզը՝ 1/2 գոմեշի կամ մատակի, իսկ մի այծը՝ 5/6 ոչխարի։

[5] Հազար խոզին՝ ավելացել է 115 հատ։

[6] Այդ թվերը վերաբերում են Նովորոսիայի, Մալորոսիայի և Ջերնոզյոմի մի քանի նահանգներին։ Տե՛ս „Нов. Время“ № 7312, 14, 17 և 20։

մապահ գյուղացին յուր տանը ոտնաշարխով պատրաստելիս է եղել թել, որը գնել են տեղական վաճառականները և արտահանել արտասահմանյան քաղաքները։

Յոթանասնական թվականներին դալիս են մեր գավառը ֆրանսիացիներ, որոնք մեծ քանակությամբ սերմ են հանում տեղական բոժոժից, իսկ արտասահմանյան հիվանդոտ սերմը բերում են տարածում գավառում։ Այդպիսով հիվանդանում է սերմի գործադրվող տեսակը և տեղի է տալիս ուրիշ տեսակներին։ Սակայն այդ թվականներին տեղական (շուշեցի) վաճառականները արտասահմանից օրինակում են մանարանը և մետաքս ոլորող մեքենան, և այնուհետև սրանց բոլոր ջանքերը լինում են բերել առողջ սերմ Յելլյուսի եղանակով պատրաստած։ Այդպիսով շերամապահությունը կրկին առաջ է գնում։ Այժմ գյուղացին սերմ ստանում է կամ գործարանատերերից, կամ ուրիշ մարդկանցից, որոնք շրջում են գյուղերը և սերմ բաժանում որոշ պայմաններով։

1890 թվին գավառում ստացված է բոժոժ 2 138 փութ, 1893-ին 4300 փութ, 1894-ին 17 000 փութ և 1895-ին 9 000 փութ։ 1895 թվին, գավառապետի տեղեկությունների համաձայն, 1 300 փութ բոժոժ ուղարկված է արտասահման։

ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գավառում մեղվապահությամբ պարապում են քչերը միայն, և ստացած մեղրը գյուղացին մեծ մասամբ օգտագործում է տանը։ Ժողովուրդը մեղու պահել չգիտե, այնպես որ հաճախ փեթակները լցվում են որդերով, որոնք ոչնչացնում են մեղուներին։ Այդ է պատճառը, որ գյուղացիների մեջ մեղվաբուծությունը տարածված չէ։

Ես ունեմ թվեր, ստացված մեղրի և մոմի քանակության մասին միայն 1895 թ. համար, որ և բերում եմ.

Մեղվապահությամբ պարապող ծխերի թիվը	Փեթակների թիվը	Ստացված է մեղր		Ստացված է մեղրամոմ	1000 ծխին ընկնում է մեղվապահ ծխեր	Մի փեթակից ստացվել է մեղր մոմ
			փութ	փութ		փութ
46	283	75,6		9,8	2,44	0,3

ՁԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ

Վարանդայում մեծ լճեր և գետեր չլինելու պատճառով հատկապես ձկնորսությամբ պարապողներ չկան, միայն սիրողները, այն էլ ապատ ժամանակներում, որսում են մի քանի տեսակ ձկներ, որ պիտավորապես իրենք են գործածում և կամ շատ քիչ դեպքերում վաճառքի հանում։ Բացի սովորական ուռկանից (թոռ), գործ են ածում և ճվարան։ Սա կոնաձև հյուսված մի կողով է, մեջը մտցրած մի երկրորդը, որ ավելի փոքր է և երկու ծայրից էլ բաց։ Մեծի մեջ թափում են հացի փշրանքներ և առհասարակ այնպիսի բաներ, որ կարող են գրավել ձկներին։

Ճվարանը տեղավորում են մի այնպիսի անկյուն, ուր ջուրը թափվում է աննշան բարձրությունից։ Ձկները մտնում են ճվարանի մեջ, և երբ վերջինս հանում են, նրանք մեջն են մնում։ Ջուկ որսում են նաև ցրի ընթացքը փոխելով։

ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Որսորդությամբ պարապում են նույնպես սիրողները, գործածելով առավելապես ամբողջ Կովկասում գործածական հին ձևի զենքերը։ Ապրանած որսը մեծ մասամբ իրենք են գործածում և կամ ծախում են սովորաբար իրենց գյուղում։ Առավելապես Ավետարանոց, Թաղլար, Թաղավարդ և այլ գյուղերի բնակիչները. իրենց շրջակա անտառներում որսում են եղջերու, այծյամ (քոշ), արջ, գայլ, վայրի կատու, շաղալ և այլն։

Առհասարակ խմբով են գնում որսի և թռչուն որսալու համար տանում են իրենց հետ «դամլա», որ քառանկյունի մի շրջանակի վրա կպցրած գույնզգույն կտոր է։ Սրա վրա կան երեք ծակ, երկուսը որսորդի աչքերի, իսկ երրորդը հրացանի համար։ Թռչնորսը դամլան ձեռին առաջ է գնում, ծածկվելով նրա ետևում։

Թռչուններին «ծղարակով» էլ են որսում։ Այգու մեջ կամ որևէ հարմար տեղ մի փոս են փորում և բերանը ծածկում երկու բարակ տախտակով՝ փեղկերի նման։ Սրանք հենվում են չիլիֆների վրա—թարմ ու ճկուն ոստիկներ, որոնք թվով չորս են, յուրաքանչյուր փեղկի համար երկուսը և կատարում են զսպանակի դեր։ Երբ թռչունը կանգնում է տախտակների վրա, չիլիֆները նրա ծանրությունից կռանում են, փեղկերը բացվում են փոսի մեջ, և նա ընկնում է ծղարակը։ Դրա-

նից հետո չիլիֆները կրկին ուղղվում են, փոսը ծածկվում է, և թրուչունը մնում է փակված։

ԱՐՀԵՍՏՆԵՐ

Արհեստները մեր գավառում բավականին տարածված են, և նրանցով պարապում են բացառապես հայերը։ Իհարկե, խոսքը գյուղերի մասին է, և ոչ քաղաքի, ու թուրքերն էլ զբաղվում են արհեստներով, բայց շատ սահմանափակ կերպով։ Ամենից ավելի տարածված արհեստները՝ քարտաշությունը, որմնադիրությունը և հյուսնությունն են։ Չնայելով արհեստավորների թվի մեծության, նրանցից միայն քչերը մնում են գավառում, իսկ մեծ մասը պանդխտում է զանազան կենտրոններ՝ աշխատանք գտնելու համար։ Դրանք պանդխտում են հաճախ կարճ ժամանակով և հետո վերադառնում, մնում են տանը որոշ ժամանակ և դարձյալ գնում են։ Ինչ վերաբերում է գավառում մնացող արհեստավորներին, նրանք մեծ մասով երկրագործներ էլ են։ Դրանք բոլորը ստանում են գործատերից կերակուրը, իսկ գործատերը աշխատությունների մեջ ակտիվ մասնակցություն է ունենում։ Կան և այնպիսի արհեստավորներ, որոնք մի քանի արհեստ գիտեն։

Արհեստավորների բանվորական օրն սկսվում է գյուղում վաղ առավոտից և տևում է մինչև երեկոյան վերջալույսը՝ մի ժամի չափ դադար ունենալով։

Վարպետը գավառում յուր աշակերտի տերն է։ Գործ մտնելու օրից աշակերտը յուր տան համար գրեթե չպիտի աշխատի։ Նա, մինչև քարգահ դառնալը, բացի վարպետի հետ աշխատելուց, արհեստին վերաբերյալ գործերը կատարելուց, ծառայում է և նրա տանը։

Արհեստավորի բանվորական օրը քաղաքում սկսվում է գրեթե ժամը 5-ից և մինչև 6 կամ 7-ը։ Կան արհեստավորներ, որոնք ավելի շուտ են վերջացնում օրվա աշխատանքները։ Դադարը լինում է միայն կեսօրին, ճաշի համար և տևում է այնքան ժամանակ, որքան հարկավոր է ճաշելու համար։

Ներքև գնում եմ ցուցակ գավառի այն արհեստավորների, որոնք պարապում են միայն իրենց արհեստով, ապա պիտի հիշեմ նրանց, որոնք զբաղվում են իրենց արհեստով միայն ձմեռը։

1. Դերձակներ. սրանք կատարում են ոչ միայն մի գյուղի պատվերները, այլև շրջակա հայ և թուրք գյուղերինը։

2. Հյուսներ՝ նույնպես։

3. Դարբիններ. ձմեռը գնում են թուրք գյուղերը և այնտեղ աշխատում։

4. Պայտառներ, որոնք աշխատում են որևէ գյուղում և շրջակա թուրք գյուղացիների համար։ Պայտառները շաբաթվա օրերն աշխատում են մալականների շուկայում։ Նրանք պայտերն ստանում են Շուշուց։

5. Տակառագործներ։

6. Որմնադիրներ։

7. Երաժիշտներ. բոլոր գյուղերում երաժիշտներ չկան. եթե որևէ գյուղ ունի երաժիշտներ, շրջակա թուրք և հայ գյուղերն էլ հրավիրում են նրանց։

8. Ականարուժներ։

9. Մսագործներ։

Դերձակներ, կլեկչիներ, դարբիններ և տակառագործներ, որոնք ուրիշ արհեստներ էլ ունեն։ Սափրիչներ. Թաղլարում կա մի սափրիչ, որը և որմնադիր է, և հյուսն, և ձեթ պատրաստող, և օղեգործարանատեր։

Նույն գյուղում կա մի համեստագործ և մի դերձակ, որոնք աշխատում են պատվիրատուի տանը, գործադրելով նրա մատերիալը։

Արհեստավորների աշակերտներ. Բոլոր աշակերտները մինչև քարգահ դառնալը ստանում են իրենց վարպետներից հագուստ և կերակուր, իսկ վարձ չեն ստանում։

1. Դերձակի աշակերտը երկու տարի վարձ չի ստանում, հետո իբրև քարգահ ստանում է 25—50 ռ. տարեվարձ։

2. Դարբնի աշակերտը երկու և կես կամ երեք տարի սովորում է. դարբնի քարգահն ստանում է եղած արդյունքի 1/4-ը։

3. Կլեկչու (կլայեկող) աշակերտը սովորում է արհեստը 6 ամսում, դրանից հետո, եթե ընկերանում է վարպետի հետ, ստանում է արդյունքի 1/3-ը։ Կլեկչիները գյուղում իրենց վարձն ստանում են արմտիքով։

4. Տակառագործի աշակերտը սովորում է արհեստը 2,5 կամ 3 տարվա ընթացքում, հետո իբրև քարգահ ստանում է 40—50 ռուբլ. տարեվարձ։

Կին արհեստավորներ. 1. Հացթուխ. Բացառապես հացթուխությամբ պարապող կանայք գավառում շատ քիչ են, որովհետև յուրաքանչյուր տանտիկին գիտե հունցել և թխել։ Երբեք պատ հաց թխելուց հետո—մի ժամում նա ստանում է 3 հատ բոզ։

2. Բուրդ գզող
3. Թել մանող } ստանում են 10 կոպ. օրավարձ։

4. Կարպետ գործող կինը մի կապ երկարության և երկու կապ լայնության կարպետը գործելուց հետո ստանում է 2 ռ. 50 կ.—3 ռուբլի։ Գործը տևում է մոտ մի ամիս։ Օրավարձով կապերտ գործողն ստանում է 10—20 կոպ.։ Պետք է ասել, որ Շուշու գավառում բավական զարգացած է գորգագործությունը։ Թեև առանձին գործարաններ չկան, բայց շատ տներում գործում են գորգ, կապերտ, ձիու չուլ և այլն։

1895 թ. գավառի արհեստավոր վարպետների, աշակերտների և բանվորների թիվը ցույց է տալիս ներքև զետեղածս աղյուսակը։

Արհեստավորներ	Շուշի քաղաք			Շուշու գավառ		
	վարպետ	բանվոր	աշակերտ	վարպետ	բանվոր	աշակերտ
1	2	3	4	5	6	7
Հացթուխ	13	9	3	6	4	—
Կանդիտեր	4	3	5	—	—	—
Մսագործ	12	11	—	9	—	—
Դերձակ	80	29	62	12	—	7
Կին դերձակ	1	1	—	—	—	—
Գլխարկ կարող	24	1	20	3	—	1
Կոշկակար և մաշկակար	85	2	60	3	—	2
Դարբին	18	—	5	10	—	—
Պողպատագործ	15	5	9	—	—	—
Պղնձագործ	3	2	1	—	—	—
Զինագործ	1	-	1	—	—	—
Վառոդանագործ	3	1	—	—	—	—
Թիթեղագործ	11	3	6	—	—	—
Գայտաք	12	—	—	9	—	—
Դանակ սրող	4	—	4	—	—	—
Կլայեկող	9	—	3	2	1	2
Հյուսներ	12	6	9	1	—	1
Ատաղձագործ	10	3	7	7	—	—
Ալակեզործ	3	—	—	1	—	—
Կաղ շինող	1	—	1	1	—	1
Քարտաշ	13	—	6	8	—	—
Ժամագործ	4	—	4	—	—	—
Սափրիչ	34	8	29	2	2	—
Ներկարար (պոյաձի)	10	2	8	—	—	—
Ներկարար	2	—	—	—	—	—
Կաշեգործ	7	—	2	—	—	—
Թամբագործ	4	—	4	—	—	—
Սառաճ	16	8	—	—	—	—
Թաղիքագործ	4	1	2	—	—	—
Անասնաբույժ	2	—	—	3	—	—
Սափրիչ	15	—	9	19	—	4
Լուսանկարիչ	2	—	—	—	—	—
Տպարանատեր	2	—	10	—	—	—

1	2	3	4	5	6	7
Կառապան	—	—	—	15	—	—
Լապնագործ	6	2	3	—	—	—
Ընդամենը	410	120	273	111	7	18

Հազար հոգուն ընկնում է քաղաքում 22 արհեստավոր, իսկ գավառում՝ 1,27։ Քաղաքում և գավառում հազար հոգու վրա գալիս է 8,6 արհեստավոր. քաղաքում և գավառում եղած արհեստավորների թվի 17,75 տոկոսը կազմում են կոշկակարները, դերձակները 19,6 տոկոս, սափրիչ՝ 7,74 տոկոս։ Հետո գալիս են գլխարկ կարողները, դարբինները, հյուսները, սառաճները, քարտաշները և այլն։

Այս աղյուսակն առանց թերությունների չէ։ Կան արհեստավորներ, որոնց թիվը շատ ավելի պակաս է, քան պետք է լինի, օր., քարտաշները, հյուսները և այլն։

ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերության այս տեսակը մեր գավառում օրըստօրե աճում, զարգանում է. 1893 թ. տեղեկությունների համաձայն, նահանգի գինու և օղու գործարանների 2/3-ը գետեղված է Շուշու գավառում։ 1895 թ. պաշտոնական տեղեկությունների համաձայն գավառում այդ տարի եղել են հետևյալ գործարանները։

Գործարանների տեսակը	Շուշի քաղաք				Շուշու գավառ	
	գործարանների թիվը	արդյունաբերական արժեքը ռուբլի	բանվորների թիվը	գործարանների թիվը	արդյունաբերության արժեքը ռուբլի	բանվորների թիվը
Մետաքս մանող	1	14100	80	12	210000	720
Մետաքս ոլորող	1	13000	90	4	87500	310
Գինու և օղու	—	-	—	7	360000	500
Կաշու	6	2500	9	—	.	—
Մեռաքի	4	2300	6		.	—
Պոյաձու	10	3200	17	—	. .	—
Ակդյուսի	2	1200	6	—	.	—
Բոլորը	24	36200	209	23	657500	1530

Ինչպես տեսնում ենք, ըստ արդյունաբերած արժողության գործարանների մեջ առաջին տեղը բռնում են մետաքսի, օղու և գինու գոր-

ծարաններիը։ Ինչ վերաբերում է գինու և օղու գործարաններին, սրանցից յոթը կատարելագործված են, իսկ մոտ հազարը տեղական ձևի են։

Ըստ պաշտոնական տեղեկությունների՝ 1895 թվականին գավառում եղել են 18 մետաքսի գործարաններ, իսկ այս տարի, մի ֆաբրիկանտ ասելով, ամբողջ գավառում կա 26 գործարան, որոնցից 16 մանարան և 10 մետաքս ոլորող։ Անկարելի է ենթադրել, որ մի տարվա ընթացքում գործարաններն ավելացել են 8-ով։ Հավանաբար պաշտոնական տեղեկությունը անսխալ չէ։

1895 թվականին պատրաստված է 1100 փութ մետաքս և 280 փութ ֆրիզոն։

Մինչև 1883 թվականը գավառում պատրաստված թելն ուղարկվում էր Մարսել, բայց այդ թվից հետո մինչև այժմ մետաքսի թելն ուղարկվում է Մոսկվա, իսկ ֆրիզոնը Ֆրանսիա։

Բանվորները մետաքսի գործարաններում երկու սեռի են։ Դրանց մեջ փոքրահասակ երեխաները ավելի շատ են, որովհետև ֆաբրիկանտներին ձեռնտու է ունենալ շատ սովորող և աննշան վարձ ստացող բանվորներ։ Մի քանի տարի առաջ այժմյան աղջիկ բանվորների տեղը բռնում էին տղաներ, բայց ֆաբրիկանտները վերջիններին այլևս չեն պահում, որովհետև աղջիկները թե՛ մաքուր աշխատող են, թե՛ կարգերին անսպայման հնազանդվող, իրենց խոսքով՝ «լսող» են։

Բանվորների օրավարձը 7—40 կոպեկ է, մինիմալ վարձ ստանում են այն բանվոր երեխաները, որոնք հավաքում և դուրս են հանում գործարանում թափված որդերը։

Բանվորական վարձերի աղյուսակ (գավառի համար)

Անտիպանները	Ամսավարձ բանվորներ					Օրավարձ բանվորներ									
	երեխաներ մինչև 12 տարեկան	հասակ	հարիսի	թելի թաղում	թելի կարում [1]	հասակ	գինի հավաքում	գինի հավաքում հասակ	գինի հավաքում հասակ	գինի հավաքում հասակ	գինի հավաքում հասակ	գինի հավաքում հասակ	գինի հավաքում հասակ	գինի հավաքում հասակ	գինի հավաքում հասակ
	Ռուբլի					Կոպեկ									
Մինիմում	7	1	5	6	3	45	15	10	30	40	30	7	—	—	10
Մաքսիմում	10	4	8	7	6	90	20	20	40	60	50	40	10	10	20

[1] Մետաքսի գործարաններում աշխատող բանվորները միայն։

Աշխատանքը մետաքսի գործարաններում սկսվում է առավոտյան ժամը 6-ից և տևում է մինչև 8-ը ամառը, իսկ ձմեռը 6-ից մինչև 6-ը մանարան գործարաններում։ Ոլորող գործարաններում բանվորները թե՛ ձմեռ և թե՛ ամառ աշխատում են 6-ից մինչև երեկոյան 8-ը։ Դադարը լինում է կեսօրին, որը տևում է մոտ մի ժամ։ Ուրեմն աշխատանքը տևում է 11—13 ժամ։ Չպետք է մոռանալ, որ գործարաններում աշխատող բանվորների, մանավանդ կին բանվորների, մեծ մասը կազմում են 8—12 տարեկան երեխաներ։

Բոլոր գործարաններում գավառում և քաղաքում աշխատել են 1895 թվին 1739 բանվոր, որոնցից մեծ մասն ընկնում է մետաքսի, գինու և օղու գործարաններին, ուրեմն բանվորների մեծ մասը գավառում են։

Պետք է ասել, որ գործարանի շուրջը գտնված գյուղերից էլ (մոտիկ, իշարկե) բանվորներ են գալիս։

Հաղար հոգու համեմատ քաղաքում և գավառում ընկնում է 11,9 գործարանական բանվոր, գավառում միայն հազարի համեմատ՝ 13,3, քաղաքում միայն —6,2։ Հազար հայ բնակչի համեմատ միայն գավառում ընկնում է 23,4 գործարանական բանվոր։

ԱՄԵՆԱՏՈՒՐԸ ԳԱՎԱՌՈՒՄ

Ժողովրդի աննշան մասը միայն պարապում է առևտրով։ Վերջինս աչնչով չի տարբերվում հասարակ մանրավաճառությունից։ Գյուղերում պատահում են խանութպաններ, որոնք գյուղական ժողովրդի պահանջների համեմատ պահում են զանազան տեսակի ապրանքներ։ Գյուղացիք իրենց հարկավոր առարկաները գնում են նույնպես քաղաքում և ավելի հաճախ՝ շուկաներից, որոնք երկուսն են ամբողջ գավառում։ Այդ շուկաներում շաբաթվա որոշ օրերին վաճառքի են հանում հացահատիկներ, կերպասներ, մրգեր և այլն, և անշուշտ մեծ փող է շրջում այդտեղ։

Գավառը ներքերում են ցորեն և այլ հացահատիկներ, աղ, նավթ, պտուղներ և այլն։ Հացահատիկները, բացի բրնձից, աղը, նավթը և պտուղները վաճառվում են փողով, իսկ մնացած իրերը փոխանակվում են ցորենով, գարով և կորեկով։ Օրինակ, գյուղացին տալիս է երկու բաշ ցորեն և ստանում է մի քաշ բրինձ, կամ մի քաշ խաղողի համար տալիս է 2 քաշ գարի կամ 3 քաշ կորեկ։

Գավառից քաղաք արտահանում են ցորեն, ալյուր, գարի, գինի, պտուղներ և այլն, իսկ տնայնագործական հյուսվածքներից՝ գորգ և կապերա։ Գորգերը գյուղերումն էլ վաճառում են գորգ հավաքողները։

Հայ ժողովուրդը յուղի, պանրի և բրդի հարկավոր քանակությունը ձեռք է բերում թուրքերից։ Ավետարանոցում և նրա շրջակա գյուղերում բնակիչները տալիս են սար չվող թուրքերին ցորեն, գարի, որոշելով դրանց գինը և պայմանավորվում նրանց հետ՝ ստանալ տվածի փոխարեն բուրդ, յուղ և պանիր, որոնք նույնպես կանխօրոշեն գնահատում են։

Քաղաքի բյուջեն. *1895 թվականին քաղաքն ունեցել է եկամուտ 39 296 ռուբլի 82 կոպեկ, ծախք՝ 33 956 ռ. 90 կ., դրամագլուխ՝ 33 887 ռ. 44 կոպ.։*

Եկամուտը կազմում է 14 տոկոս, տուրքը քաղաքի անշարժ կայքերից և ռեալական դպրոցի պահպանության համար ստացված 7 500 ռուբլին։

1885 թվականին քաղաքն ունեցել է և մուտք . . . . 29 512 ռ.
ծախք . . . . 25 316 »
Դրամագլուխ . . . . 19 002 »
Չվճարված տուրքի փող . . . . 26 639 »

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑՆԵՐ

Շուշի քաղաքում և Վարանդայում կան հետևյալ դպրոցները

	Դասընթացի տևողությունը	Դասատուների թիվը	Ուսուցիչ. Դասատուներ	Ուսուցիչ. Քահանաներ	Սովորող. Լատ.	Սովորող. Հայոց	Սովորող. Թեմական	Սովորող. Ռեալական	Սովորող. Գիմնազիական	Սովորող. Գիմնազիական	Սովորող. Ռեալական	Սովորող. Գիմնազիական	Սովորող. Ռեալական	Սովորող. Գիմնազիական	Գումարը	Գումարը
Հայոց թեմական	1843	6	4	12	550	—	—	—	39	45	322	183	550	547	14843	14843
Ռեալական	1881	7	7	16	252	12	5	47	121	8	136	51	316	161	35413	35413
Քաղաքային	1875	3	—	9	131	4	—	36	44	7	21	29	171	354	10399	8326
Թուրքերի դպրոց	1896	1	—	4	—	—	—	209	53	6	246	4	309	—	2510	2510
Հինգ միդասյան ադայոց մասնավոր ուսումնարան	—	—	—	5	276	2	—	13	7	9	275		291	—	10000	10000
Բոլորը	—	—	11	46	1209	18	5	305	264	75	1070	267	1437	1062	73165	71092
Օրիորդաց Մարիամյան արքունական ուսումնարան	1894	4	—	10	137	12	1	—	30	8	212	—	250	—	4610	4610
Ընդամենը Նոր-Թաղլար, Սարուշեն և Վարանդաքուն գյուղերում եկ. ծխ. ուսումնարան	—	—	11	56	1346	30	6	405	294	83	1282	267	1687	1062	77775	75602
	1890	1	—	3	267	—	—	—	—	5	—	262	267	—	1800	1800

Այս աղյուսակից հետևում է.

ա. Այժմյան դպրոցների մեջ ամենահինը Հայոց հոգևոր թեմական դպրոցն է։

բ. Ամենից շատ աշակերտներ ուսանում են հոգևոր դպրոցներում։

գ. Արհեստավոր, հոգևորական և գյուղական դասակարգերի որդիները առավելապես սովորում են Հայոց թեմական դպրոցներում, իսկ ազնվական դասակարգերը՝ ռեալականում։

դ. Ռեալական դպրոցը յուր ամեն մի աշակերտի համար ծախսում է 112 ռ., քաղաքականը՝ 49 ռ., Հայոց թեմականը՝ 27 ռ., ռուսաց օրիորդացը՝ 18 ռ., թուրքերինը՝ 12 ռուբլի։

ե. Որովհետև սովորողների շրջանում գտնվողների թիվը Հայտնի չէ, ուստի չի կարելի հաշվել, թե սրանց որ տոկոսն է սովորում. միայն ընդունելով, որ մոտավորապես բնակչության 20 տոկոսը գտնվում է այդ հասակում, կարելի է ասել, որ Հայերից 52, իսկ Թուրքերից 22 տոկոսն է սովորում։

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Շուշում Հայոց Բարեգործական ընկերության տեղական ճյուղն ունի գրադարան-ընթերցարան, որ հիմնվել է 1889 թ. մարտի 10-ին։ Ունի կանոնադրություն 14 պարագրաֆից բաղկացած, որը օրինավոր հաստատության է ենթարկված Հայոց Բարեգործական Ընկերության Ութիֆլիսի խորհրդի կողմից։

Գրադարան-ընթերցարանից օգտվելու համար վճարում են. ունևորները՝ տարեկան 4 ռուբլի, ամսական 50 կոպ., օրական 5 կոպ., չունևորները՝ տարեկան 1 ռուբ. 50 կոպ., ամսական 20 կոպ, օրական 2 կոպ.։ Գրքեր կամ ամսագրեր տուն տանելու համար դրավական է պահանջվում։

Գրադարան-ընթերցարանն առաջին տարին ունեցել է ընդամենը 587 կտոր գիրք։ Հետզհետե ավելացնելով, այսօր գրադարանն ունի մոտ 4000 կտոր գիրք՝ 6000 ռուբ. արժողությամբ։ Ընթերցարանն էլ շարունակ ստանում է պարբերական հրատարակություններ Հայերեն և ռուսերեն լեզուներով։ Առաջին տարում ստացել է 17 պարբ. հրատարակություն, իսկ այժմ ստանում է 30։ Ունի կահկարասիք՝ մոտ 350 ռուբ. արժողությամբ։

Գրադարանը չունի ձեռագրերի բաժին։ Գրքերն էլ միայն Հայերեն և ռուսերեն լեզուներով են։

1889 թվականի մարտի 10-ից մինչև 1896 թ. հունվարի 1-ը գրադարանից օգտվել են.

	1-ին տարի 1889	2-րդ տարի 1890	3-րդ տարի 1891	4-րդ տարի 1892	5-րդ տարի 1893	6-րդ տարի 1894	7-րդ տարի 1895	Ընդամենը
Տարեկան անդամներ	9	1	4	3	5	6	9	37
Ամսական »	161	215	228	230	233	359	395	1822
Օրական »	270	423	323	306	246	327	344	2239
Յոթ տարվա ընթացքում օգտվել են	—	—	—	—	—	—	—	4098[1]
Գրքեր և ամսագրեր են տարվել կարդալու	1834	2631	3353	4202	3506	5371	6723	27620[2]

Յոթ տարվա ընթացքում ունեցած անդամների թվի՝ 4098-ի վրա եթե ավելացնելու լինենք և ընկերության հաճախորդ անդամների թիվը, հաշված միջին թվով տարեկան 50 հոգի, կստանանք 4448 թվանշանը, հետևապես և գրադարան-ընթերցարանից օգտվողների թիվը տարեկան եղել է, միջին թվով, մոտավորապես 635։

Գրադարան-ընթերցարանից օգտվողները բաժանվում են, ըստ ազգության՝ Հայեր—85 տոկոս, ռուսներ—8 տոկոս, թուրքեր—4 տոկոս և այլազգիներ՝ 3 տոկոս. ըստ դասակարգի՝ ուսումնառուներ (ուսանողներ, աշակերտներ և աշակերտուհիներ) —55 տոկոս, առևտրականներ 25 տոկոս, արհեստավորներ—10 տոկոս, ուսուցիչներ և վարժուհիներ 7 տոկոս, արհեստավորներ—3 տոկոս։

Կանանց բացակայությունը նկատելի է. դրանց հաճախորդների թիվը մի շատ աննշան մաս է կազմում, այն է՝ 2 տոկոս...

Ավելի շատ կարդացվել են հետևյալ հեղինակների աշխատությունները, որոնց գնում ենք այստեղ ըստ առավելության։

Հայերեն՝ Բաֆֆի, Պոռշյան, Աբովյան, Շիրվանզադե, Ծերենց, Աղայան, Շեքսպիր, Էժեն-Սյու, Դյուման, Ժյուլ-Վերն, Շիլլեր, Պարոնյան, Սունդուկյան, Խրիմյան, Մոլիեր, Շահազիզյան, Գամառ-Քաթիպա և Լեո։ Ռուսերեն՝ Տուրգենև, Տոլստոյ, Ժյուլ Վերն, Գոգոլ, Լերմոնտով, Պուշկին, Դիկկենս, Դոստոևսկի, Շպիլգագեն, Գոնչարով, Գարշին, Զո-

[1] Այդ գումարի մեջ չեն մտնում ընկերության անդամները, որոնցից հաճախորդների թիվը տարեկան մոտավորապես 40—60 է հասնում։

[2] Այդ գումարի մեջ չեն մտնում ընթերցարանում կարդացված գրքերը և ամսագրերը։

լա, Օստրովսկի, Հյուգո, Դոդե, Բելինսկի, Բայրոն, Մոլիեր, Շեքսպիր, Շիլլեր, Գյոթե, Սենկևիչ և Չեխով։

Առաջ բերելով հեղինակների անունները, տեսնում ենք, որ ընթերցողների շրջանը մեծ մասով բելլետրիստ հեղինակների գրքեր է կարդացել, միանգամայն անուշադրության առնելով գրականության և այլ ճյուղերին պատկանող գրքերը։ Վերջիններովս հետաքրքրվողները մի շատ աննշան կոնտինգենտ են կազմում։

Ի դեպ, գրադարանը, կարելի է ասել, բավական հարուստ է գիտական գրքերով։

Պարբերական հրատարակություններից (ամսագրերից) առավելապես կարդացվել են հայերեն. «Մուրճ», «Փորձ», «Արաքս», «Տարազ», «Հանդ. գրակ. և պատմ.», ռուսերեն՝ «Вестник Европы», «Артист», «Сев. Вестник», «Русская мысль», «Книжки Недели», «Мир Божий», «Русское богатство».

Եկամտի կողմից գրադարան-ընթերցարանը այնքան էլ նախանձելի չէ։ Յոթ տարվա ընթացքում մուտք է ունեցել ընդամենը 1151 ռուբլի 92 կոպ., մինչդեռ ծախք ունեցել է 6328 ռուբ. 64 կոպ.։ Դեֆիցիտը, այն է՝ 5176 ռուբ. 72 կոպ., ծածկվել է ընկերության վարչության ունեցած եկամտի մյուս աղբյուրներից. անդամակցական վճարներից, նվերներից, ներկայացումներից և այլն։

Բացի ընկերության գրադարան-ընթերցարանից, Շուշու կլուբը (ակումբը) ևս ունի մի հարուստ գրադարան-ընթերցարան, որից նույնպես բավական օգտվում են թե՛ հայերը, թե՛ ռուսները և թե՛ թուրքերը։

Ի նկատի պետք է առնենք նույնպես հոգևոր թեմական և ռեալական դպրոցների գրադարանները, որոնցից օգտվում են այդ դպրոցների աշակերտները, ուսուցիչները և մասամբ՝ կողմնակի անձիք։

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շուշի քաղաքում և գավառում ստացվել են.

Թվական	Արձագանք	Մշակ	Մուրճ	Նոր-Դար	Տարազ	Բյուրեղ	Ռուսերեն	Ընդամենը
1894	25	58	7	82	16	188	412	600
1895	38	63	5	92	21	219	479	694
1896	33	59	6	66	18	149	523	672
Ընդամենը	96	180	18	240	55	536	1410	1966
Միջին թվով	32	60	6	80	18	179	470	655

Այս աղյուսակից հետևում է.

ա. Շուշում ամենից ավելի տարածված է «Նոր-Դար»-ը, սակայն հետզհետե պակասել է։

բ. «Նոր-Դար»-ից հետո ավելի տարածված է «Մշակը», որ հետզհետե ավելացել է։

գ. Ռուսաց թերթերը ավելի և ավելի տարածվում են, և մինչև անգամ ավելի, քան հայկականը։

դ. Հազար հոգուց միայն 19 հոգի են թերթ ստանում։

ԹԱՏՐՈՆ

Շուշում առաջին ներկայացումը տեղի է ունեցել դեռ վաթսունական թվականներին, երբ հայերենիք վերադարձած ուսանողները ոչ միայն տղամարդու, այլև կանանց դեր են կատարել։ Այնուհետև թեմական դպրոցի ուսուցչական խումբը և շրջիկ դերասանները ներկայացումներ են տվել թեմական դպրոցի դահլիճում, որ բավական ընդարձակ է։ Սակայն թատրոնը այստեղ կանոնավորվել և յուր կրթիչ ազդեցությունը որ ավուր ավելացրել է, երբ 1891 թ. կառուցվել է պ. Ն. Խանդամիրյանցի թատրոնական շենքը։

Սա թեև արտաքուստ և կամ ներքուստ ճարտարապետական կամ գեղարվեստական մի առանձին նշանակություն չունի, սակայն յուր ընդարձակ դահլիճով, բավական հարմարավոր բեմով ու երկար ֆոյեով (հնմատարահ), միանգամայն բավականացուցիչ է Շուշվա պես մի գավառական քաղաքի համար։ Ունի նաև բավական դեկորացիաներ, մի բավական ճաշակով նկարված վարագույր և այլն։

Թատրոնի բացման օրից մինչև այժմ եղել են.

1891 թվականին	13	ներկայացում,	4030	ռ.	մուտք
1892	»	19	»	5100	»
1893	»	20	»	5694	»
1894	»	19	»	4824	»
1985	»	24	»	7014	»
1896	»	24	»	6700	»
Ընդամենը		119 ներկ.		33362	ռ. մուտք
Միջին թվով		20 ներկ.		5560	ռ. »

Այսպես ուրեմն, տարեկան միջին թվով տրվում է 20 ներկայացում, յուրաքանչյուր ներկայացման տոմսակ է վաճառվում 278 ռ., որից դուրս գալով ծախսը, մոտավորապես 128 ռ., զուտ արդյունք մնում է 150 ռուբլի։ Բոլոր տոմսակները ծախված դեպքում մուտք է լինում 325—350 ռուբլի։

ՏՊԱՐԱՆՆԵՐ

Քաղաքում կա երկու տպարան, մինը Հայոց հոգևոր տեսչության, որ բացված է Բաղդասար մետրապոլիտի ջանքով 1830-ական թվականներին։ Մամուլը բավական փոքր է և բազմատեսակ տառեր չունի։ Այնքան անկանոն են պահվում գործերը, որ հակառակ մեր բոլոր ջանքերին, չկարողացանք իմանալ, թե մինչև այժմ այդտեղ քանի գիրք են տպած։

Մյուսը Ա. Մահտեսի-Հակոբյանինն է։ Սա բացված է 1877 թ. նոյեմբերին, ունի բավական լավ մամուլ և նոր ձևի տառեր։ Մինչև ներկա թվականը տպված է 83 գիրք, հետևապես և տարեկան միջին թվով 4 գիրք, որ շատ քիչ է։

ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս, թե 6 տարվա ընթացքում որքան ոճրագործություններ են կատարվել Շուշում։

Թվական	Սպանություն		Ինքնասպանություն		Պատահական մահ	
	Հայ	Թուրք	Հայ	Թուրք	Հայ	Թուրք
1890	1	2	1	—	—	1
1891	1	3	1	—	2	2
1892	1	7	1	—	1	1
1893	1	3	1	—	2	2
1894	2	5	2	—	—	2
1895	1	4	1	—	2	4
Ընդամենը	7	24	7	—	7	12

Այս աղյուսակից հետևում է.

Հայերի և Թուրքերի սպանության թվերը հարաբերում են միմյանց, ինչպես 1 : 3,5, մինչդեռ այդ երկու խմբերի թվական հարաբերությունը համարյա հավասար է 2 : 1։

Մյուս ոճրագործությունները, ինչպես՝ վիրավորել, ծեծել և այլն, նույնպես Թուրքերի մեջ են ավելի պատահում։

Հետևյալ աղյուսակում բերված է Շուշու և Ջիբրայիլի[1] գավառների այդ երկու ժողովուրդներից բանտարկվածների թիվը։

Թվական	Հայեր		Թուրքեր	
	արբ.	իգ.	արբ.	իգ.
1890	92	1	524	2
1891	68	3	651	12
1892	52	2	459	—
1893	98	—	696	5
1894	62	1	369	2
1895	56	3	423	3
Ընդամենը	428	10	3122	24

«Кавказский календарь»-ի 1896 թ. համաձայն այս երկու գավառների հայերի ընդհանուր թիվն է 94 750, Թուրքերինը՝ 91 916։ Այսպես՝ մինչդեռ երկու ազգաբնակություններն էլ համարյա հավասար են միմյանց, Թուրք ոճրագործների թիվը համարյա 7 անգամ ավելի է հայ ոճրագործների թվից[2]։

ՓՈՍՏ

Պետք է ասել, որ այդեղի քաղաքացիները մեծ կարիք են զգում փոխանակ շաբաթական երեք անգամի, ամենայն օր փոստ ունենալու և կանոնավորված տեսնելու նամակների ցրումը, որ շատ անկանոն կերպով է կատարվում։ Ցրիչը մարդկանց, երեխաների, ծառաների մի ահագին խմբի հետևողությամբ հանդիսավոր կերպով իջնում է փոստատնից դեպի Թուփխանան և մտնելով քաղաքային ժողովարանի բակը, բարձրանում է պատշգամբը, իսկ հետևողները մնում են ներքևում։ Հետո բարձր ձայնով կարդում է բոլոր լրագրերի և հասարակ նամակների հասցեները և շպրտում որ կողմից որ «իմն է» է հնչում։ Այսպիսով, բացի այն, որ շատ նամակներ կորչում են, այլև բոլորը իմանում են, թե ովքեր նամակներ ունեն։

---

[1] Այդ գավառում առանձին բանտ չկա։

[2] Այս տեղեկություններն ուրիշ մի քանի տեղեկությունների հետ միասին ովկ է մեզ բժիշկ պ. Բահաթրյանը, որին խորին շնորհակալություն ենք հայտնում։

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս փոստի գործունեությունը, որից հետևություններ հանելը թողնում ենք իրեն՝ ընթերցողին։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Շուշին փոստային ճանապարհներով կապված է Գորիսի և Անդրկովկասյան երկաթուղու Բաքու—Թիֆլիսյան գծի Եվլախ կայարանի հետ։ Շաբաթական երեք անգամ օմնիբուս է գնում և գալիս Շուշիից Եվլախ, անցնելով ճանապարհը մոտ 11 ժամվա ընթացքում։

Քաղաքում կա «նադեժդա» և «Ռոսսիյսկոյե» հաղորդակցության ընկերությունների գրասենյակները, որոնք կատարում են ապրանքների տեղափոխությունը։

Քաղաքի և գյուղերի, ինչպես և միմիայն գյուղերի միջև չկան կանոնավոր ճանապարհներ, և քիչ տեղեր են սայլեր բանում։ Սովորական գործածական կենդանիներն են էշը, ջորին և ձին։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՍԱՆՅԱՑ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրորոցի նշանադրություն. *Առաջները շատ հաճախ, իսկ այժմ շատ տակավ է պատահում օրորոցի նշանադրություն, որ տեղական բարբառով «օրորոցախազ» է կոչվում։ Միմյանց համակրող գերդաստաններ և կամ մի ընտանիք ցանկանալով միմյանց և կամ մի հալալ-ծիծ ունեցող օջախի հետ կարելվույն չափ շուտ բարեկամանալ, ուխտում են միմյանց տալ իրենց սպասելիք որդիները, եթե նրանք տարբեր սեռի լինեն և կամ, եթե մինը արդեն արու զավակ ունի, խոստանում է նշանադրել նրան մյուսի սպասած աղջկա հետ։ Շատ անգամ պատահում է, որ այս ցանկությունը ծագում է ծնողների մեջ, երբ տղան արդեն մի քանի տարեկան, իսկ աղջիկը մի քանի օրական է լինում։ Այս ժամանակ տղայի հայրը խաղում է աղջկա օրորոցը և կամ նոսդույն մի թել կապում օրորոցի լծից և այսպիսով արդեն նշանադրում այդ երկու փոքրիկներին։*

Երբեմն էլ պատահում է, որ փոքրիկ տղաները համակրանք են ցույց տալիս դեպի փոքրիկ աղջիկները, և սրանց հայրերը խոստանում են պսակել նրանց, երբ մեծանան։

Այս խոստումից հետո այդ փոքրիկները նշանված են համարվում, և տղան պարտավորվում է յուր մրդից միշտ բաժին հանել յուր փոքրիկ նշանածին։

Անցյալներում և մասամբ այժմս էլ շատ հաղիվ էր պատահում, որ փոքրիկ նշանածները հրաժարվեին իրենց ծնողների խոստումը կատարելուց։ Եվ մինչև անգամ եթե ծնողներից մեկը կամենար հետ կենալ յուր խոստումից, մյուսը կարողացածին չափ կստիպեր և կնախատեր նրանց։

Երբ այդ փոքրիկ նշանած աղջիկը մեռնում էր, հաճախ պատահում էր, որ տղան նրա քրոջ հետ էր ամուսնանում, իսկ եթե տղան էր մեռնում, սրա եղբայրն էր ամուսնանում աղջկա հետ։

7—700

Շատ անգամ պատահել է, որ հիվանդության, ընտանիքի դժբախտության և այլ պատճառներով այսպիսի նշանադրությունները լուծվել են։ Շատ անգամ էլ նշանվածները միմյանց անհամապատասխան լինելով, փոխադարձաբար թշվառացրել են միմյանց։

Շալակի նշանադրություն. Երբ երիտասարդը սիրահարված է և ուզում է խնդրել աղջկա ձեռքը, բայց ամաչում է, լուռ ու մունջ և գաղտագողի «շալակ» է տանում։ Վերցնում է մի քթոց թարմ պտուղներ՝ խաղող, տանձ, խնձոր, վարունգ և կամ մի կապոց շոր միրգ և գիշերը տանում նշանածի դռանը կամ դրսում քնած տղամարդու գլխի վերևը դնում։ Մի քանի անգամ այս կրկնելուց հետո աղջկա ազգականներից մինի միջոցով հայտնում է, թե շալակ տանողը ինքն է։ Եթե աղջկա ծնողները համաձայնում են իրենց աղջիկը տալու, շալակի քթոցի մեջ դնում են «խոնչա»՝ մի եփած հավ, մի քանի ձու, մի քանի գաթա և մի զույգ գուլպա և ուղարկում տղին՝ հանդ, ուր նա բանելիս է լինում։ Այս լուռ ծիսակատարությունից հետո աղջիկն ու տղան նշանված են համարվում։

Բարգյան կամ Ծաղկազարդին նշանադրություն. Ծաղկազարդին եկեղեցում, նախապես տոնելով աղջկա ծնողների համաձայնությունը, տղայի մայրը կամ մի մոտիկ ազգական կին Ծաղկազարդի ծառի վրա վառվող մոմերից վառելով մի խաչաձև մոմ, որի վրա երբեմն մի արծաթե մատանի է անցկացրած լինում, տանում է և լռելյայն տալիս է յուր ուզած աղջկա ձեռքը, և կամ նրան մոտեցնելով ծառին, ձգում է գլխին մի կարմիր շարդաթ (մետաքսե գլխաշոր)։ Այնուհետև այդ աղջիկը նշանված է համարվում։

Օջախի պսակ. Գրեթե ամեն մի գյուղում կա մի կամ երկու օջախ, որ սրբատեղի է համարվում. եկեղեցի չեղած գյուղում պսակի խորհուրդը թոնրի և կամ այսպիսի օջախների վրա է կատարվում։ Այսպես մինչև 1882 թվականը Խերխան գյուղում պսակը Փարամազենց օջախի վրա է կատարվել, որովհետև գյուղում եկեղեցի չի եղել։ Սխտորաշենում մինչև այժմ էլ պսակը Սահակ քյոխանց (տանուտեր) և Շվերդունց օջախների վրա են կատարում, որովհետև այժմ միայն սկսել են եկեղեցի կառուցել։ Բացի սրանից միշտ և բոլոր գյուղերում նորապսակները եկեղեցուց դուրս գալուց հետո անպատճառ բոլոր հանդիսականների ուղեկցությամբ և դավուլ—զուռնի առաջնորդությամբ գնում են այդ օջախները համբուրում և ապա գնում իրենց տուն։

Կիրակի և տոն օրերին էլ շատ կանայք գնում ուխտ են անում այդ օջախների վրա։ Սրանք սովորական «զարագամի» օջախներից ոչնչով չեն տարբերվում, տնեցիները սովորական ձևով գործածում են և հետո մոտը

մի մոմակալ և մի խնկաման դնում, որ ուխտավորը կարողանա յուր բերած մոմը վառել և խունկը ծխել։

Հավաքածս տեղեկություններից երևաց, որ այս օջախները պատկանում են գյուղի հիմնադիրներին և կամ գյուղի մեջ ահագին ազդեցություն ունեցող մարդկանց։

Հիշենք այս օջախներից մի քանիսը.

Զանախչի գյուղում.—Մելիք Շահնազարենց օջախը. հայտնի է, որ Մելիք Շահնազարը գյուղի տերն է եղել։

Գ. Ճարտար գյուղում՝ Խոճանց և Միրզաբեկանց և Տողցունց (Տող գյուղից գաղթածների) օջախները։

Հիրհերում՝ Զալունց օջախը։ Ասում էին, թե Զալին է հիմնել այս գյուղը, և նրա տոհմից են մի քանի սերունդ շարունակ տանուտերեր եղել։

Ծովատեղ գյուղում՝ Բղերանց օջախը։ Սա գյուղի մելիք՝ Մելիք Փարսադանյաններից է։

Սարուշենում՝ Քյոխանց օջախը (Միրզաբեկյան Ղահրամանի)։

Թոնրի պսակ. Սրանից մի 10—20 տարի առաջ դեռևս գործադրվում էր թոնրի պսակը. սա գլխավորապես տեղի էր ունենում 1) երբ գյուղում եկեղեցի չէր լինում, 2) երբ եկեղեցում ենջեցյալ էր լինում[1]։ 3) երբ ամուսնացողներն այրիներ էին[2], 4) երբ շհաստություն կար և 5) երբ հարսնացուն բարոյական կյանք չէր ունեցել։

Ժողովուրդը սուրբ է համարում թոնիրը։ Գրեթե բոլոր գյուղերում թոնիր շինելիս կանչում են քահանային, որ օրհնում է թոնիրը և մի բանի տեղ մեռոն քսում։

Թոնրի պսակին թոնրի վրա շուրջանակի մոմեր են վառում։ Հարս ու թագվոր գալիս երեք անգամ պտտում են թոնրի շուրջը և կանգնում նրա արևմտյան կողմը, երեսները դեպի արևելք դարձրած։ Ապա շորում և երեք անգամ համբուրում են թոնիրը։ Այնուհետև քահանան կատարում է պսակադրությունը, և նորապսակները կրկին համբուրելով թոնիրը, վերադառնում են, շատ անգամ մինչև թոնրատնից դուրս գալը

[1] Շոշի գյուղում մեկին պսակել են թոնրի վրա, որովհետև եկեղեցում ենջեցյալ է եղել։ Հետո ծնողները դժկամ լինելով՝ կրկին նույն օրը եկեղեցի են տարել և նորից պսակի ծեսը կատարել տվել։ Երեք տարուց հետո այդ երիտասարդը մեռել է։ Նրա վաղաժամ մահի պատճառը պսակի միջոցին եկեղեցում եղած ենջեցյալը համարելով, հուսահատության մեջ են ընկել և թաղել երիտասարդին յուր հարսանյաց շորերով։ Մի քանի օրից էլ նրա կինն է անձնասպանություն գործել և հարսանեկան շորերով թաղվել։

[2] Գոնավարդ գյուղում Մարտիրոս անունով մի այրի կույր մարդ թոնրի վրա պսակվելիս ընկել է թոնիրը։

ետ-ետ գնալով, որպեսզի մեջքերը չդարձնեն դեպի թոնիրը, մեղք համարելով այդ[3]։

Առանգմամբ ամուսնություն. Դեռ մինչև այսօր էլ հաճախ պատահում է, երբ մի երիտասարդի մերժում են տալ յուր սիրած աղջիկը, որի պատճառը սովորաբար երիտասարդի ստոր գերդաստանից կամ աղքատ լինելն է լինում, վերջինս հավաքելով յուր մի քանի մտերիմ ընկերները, փախցնում է աղջկան։ Շատ անգամ առնելով աղջկա համաձայնությունը և ժամադրվելով նրա հետ, երիտասարդը ձիու գավակն է առնում աղջկան, որը յուր հետ առած է լինում յուր բոլոր զարդերը, և փախչում։ Եթե աղջկա ծնողները շուտ են իմանում այս, իսկույն մի քանի ձիավորներ հետևում են նրանց, և եթե հասնում են, տեղի է ունենում մի կատաղի կռիվ, որի ընթացքում երբեմն մարդիկ էլ են սպանվում։ Եթե չեն կարողանում աղջիկը ետ բերել, տղան տանում է նրան մի ուրիշ դյուղ յուր մի բարեկամի տուն։ Անմիջապես աղջկա հայրը հայտնում է մարմնավոր և հոգևոր իշխանություններին, որոնք աղջկան կանչում հարցաքննում են։ Եթե աղջիկը խոստովանում է, որ յուր ազատ կամքով է փախել երիտասարդի հետ, նրանց թույլ են տալիս պսակվելու, իսկ եթե ոչ, բաժանում են նրանց, աղջկան վերադարձնում հորը, իսկ տղին պատժում պետական օրենքներով։

Երբեմն պատահում է, որ երիտասարդը փախցնում է աղջկան, առանց նրա համաձայնությունը առնելու. այսպիսի դեպքերում հազիվ է պատահում, որ աղջիկը չզիջեր երիտասարդի և նրա բարեկամների աղաչանքներին՝ հայտնելու թե յուր կամքովն է փախել։ Փախցրած և վերադարձած աղջիկը հասարակության մեջ հարգանք չվայելելով՝ թշվառ աղջիկները նույնիսկ ակամայից համաձայնվում են ամուսնանալու փախցնողի հետ։

Գնմամբ ամուսնություն. Գնմամբ ամուսնությունը դեռևս գոյություն ունի Վարանդայում, որ երևում է «հրդեհ կտրել» ծեսի մեջ։ Այստեղ աղջկա և տղի հայրերն ու բարեկամները երկար սակարկելուց հետո որոշում են, թե տղի հայրը որքան փող պիտի տա աղջկա հորը՝ աղջիկը առնելու համար։ Այդ գումարը տատանվում է 20—100 ռ. միջև։ Եվ մինչև որ այդ փողը չհանձնվի աղջկա հորը, որ սովորաբար այդ օրն է տեղի ունենում, պսակը չի կարող կայանալ։

Լեվիրատ. Այս սովորությունը մասամբ կա Վարանդայում, միայն փոքր-ինչ ձևափոխված։ Եթե մինը նշանված ժամանակ մեռնում է, նրա եղբայրն է շատ անգամ ամուսնանում նրա հարսնացուի հետ։ Եվ եթե հարսնացուն է մեռնում, փեսացուն է ամուսնանում սրա կրտսեր քրոջ հետ։ Դեպքերը բազմաթիվ են. օր. Գիշի գյուղի քահանան ամուսնացրել է յուր կրտսեր որդուն յուր մեռած որդու հարսնացուի հետ։

Ծախսը. սովորաբար աղջկա կողմից շատ քիչ ծախս է լինում, իսկ տղի կողմից մոտավորապես լինում են հետևյալ անհրաժեշտ ծախսերը.

Նշանդրեքին.

Մի ոչխար	3—5 ռուբ.
Մի մատանի	3—5 ռ.
Օղի և գինի	3—8 ռ.
Մանր ծախսերը	10—15 ռ
Ընդամենը՝	19—33 ռուբ.

«Խոնչա» և այլ մանր ծախսեր մինչև հարսանիքը՝ 10—10 ռ.

Հարսանիքին.

Մի ոչխար կամ մի եզ	3—15 ռ.
Գինի և օղի	15—40 ռ.
Հարսի զգեստը	30—60 ռ.
Հարսի գլխի արծաթ կամ ոսկի փողը	8—72 ռ.
Քահանային	3—5 ռ.
Աթոռահաս	5—7 ռ.
Եկեղեցուն	1—2 ռ.
Հարսնեղբորը	1—3 ռ.
Բրինձ, շաքար, թեյ	5—10 ռ.
Դավուլ-զուռնին և մանր ծախսեր	15—20 ռ.
Ընդամենը՝	86—214 ռուբ.

Աղջիկ ուզել. Հարսնացուի ընտրության խնդրում երիտասարդը շատ փոքր ձայն ունի. այդ առավելապես պատկանում է մորը և հորը։ Հազիվ է պատահում, որ մի երիտասարդ ամուսնանա յուր ծնողների չուզած աղջկա հետ, մինչդեռ աղջիկները ավելի հաճախ փախչում են իրենց սիրելիների հետ, եթե իրենց ծնողները հակառակ են լինում իրենց միությանը։ Սրա պատճառն այն է, որ երիտասարդները առանձին, ինքնուրույն կյանք չունենալով և տնտեսապես կախված լինելով հորից, չեն համարձակվում նրա կամքին հակառակ գնալու։ Աղջիկը առնել փախցնելուց հետո, նրանք հազիվ կարողանում են մի ամիս անց կացնել այս կամ այն բարեկամի տանը, այնուհետև կամա ակամա ստիպված են

[3] Թոնրի վրա կնունք ևս կատարում են. տե՛ս Տղաբերք։

վերադառնալ իրենց տուն, որովհետև սեփական հող, դրամագլուխ չունեն և բանվորական կյանքն էլ, մանավանդ ձմռանը, դյուրություն չունի վարանդայում։

Այսպես ուրեմն, երբ ծնողներն ընտրում են մի աղջիկ, առավելապես նրա ընտանիքի և մանավանդ մոր բարոյական հատկությունները նկատի ունենալով, մի կնոջ ուղարկում են աղջկա մոր մոտ խնամախոսության։ Այդ կինը գովելով երիտասարդի ընտանիքը, օջախը և երիտասարդի աշխատությունն ու կորիճությունը, «կտրիել (կատարյալ) ռաշիտ (քաջ) տղա ա», առաջարկում է տալ յուր աղջիկը նրան։

Աղջկա մայրը ժամանակ է խնդրում ամուսնու և մանավանդ յուր եղբոր հետ խորհրդակցելու, միանգամայն խոստանալով աշխատել հաջողացնելու։

Մի քանի օրից աղջկա մայրը հայտնում է յուր համաձայնությունը և կամ մերժում։ Համաձայնած դեպքում ամուսնացող երիտասարդը յուր եղբոր կնոջ հետ, առնելով մի հասարակ, 20—60 կոպեկանոց մատանի, գնում է աղջկա տունը։ Փոքր-ինչ խոսակցությունից հետո աղջիկը, յուր երեսը քողով ծածկած, թեյ է բերում։ Երիտասարդի հետ եկած կինը աշխատում է բանալ աղջկա երեսը և տեսնել նրա գեղեցկությունը, ապա համբուրում է ճակատից և բերած մատանին դնում մատը։ Այս ծեսը ռեգական բարբառով «բեհ (առհավատչյա) տանել» է կոչվում։ Հետո ընթրիք են տալիս ու մի մի զույգ գուպպա նվիրում փեսացուին ու կնոջը, որոնք, որոշելով նշանադրության օրը, վերադառնում են տուն։

Նշանադրությունը գլխավորապես տեղի է ունենում մեծ պասին, իսկ հարսանիքը նավասարդից մինչև մեծ պաս և առավելապես Բարեկենդանին։ Հարսանիքի պատրաստությունը սկսվում է չորեքշաբթի տղայի, իսկ հինգշաբթի՝ աղջկա տանը։ Հարսանիքն իսկապես տևում է յոթը օր, չորեքշաբթի օրից մինչև երեքշաբթի, միայն բուն հարսանիքը կատարվում է երեք օրվա ընթացքում՝ ուրբաթ, շաբաթ և կիրակի։ Այս օրերն անելու գլխավոր պատճառն այն է, որ նախ ուրբաթ օրը պասվա կերակրեր մատուցանելով, ավելի քիչ կծախսեն և երկրորդ՝ «կանչը» կընկնի կիրակի օրը, երբ գյուղացիները բոլորովին ազատ լինելով, ավելի մեծ թվով կհավաքվեն։

Նշանդրեմ. Որոշված օրը առավոտյան փեսացուի տնից ուղարկում են աղջկա տունը մի ոչխար (եթե միայն հարուստ են), ճակատը սպիտակ և կարմիր ներկած, պոչերից և վզից խնձորներ և ընկույզի շաբուկ ձգված, մի շիշ օղի, մի թունդի գինի, մրգեղեն և շաքարեղեն։ Սրանք տանողը ստանում է 40—80 կոպեկ նվեր և հյուրասիրվում։

Երեկոյան թե՛ տղի և թե՛ աղջկա ծնողները հրավիրում են իրենց տղամարդ բարեկամները։ Տղի տանը հրավիրվում է նախ քահանան, քավորը և տանուտերը։ Մի մի բաժակ օղի խմելուց հետո, առաջ են բերում մի խնձոր, մեջը արծաթյա կամ ոսկյա մատանի և տան կանանց կողմից մի քանի աբասի խրած։ Քահանան առնում է խնձորը, շնորհավորում, մի աբասի էլ ինքը մեջը խրում և տալիս յուր մոտ նստողին։ Սա ևս մի աբասի է խրում, նույն կերպ շնորհավորելով։ Երբ խնձորը պատյան գործելով աբասիներով լցվում է, դնում են մի շարաթի մեջ, երկու զույգ կանաչ-կարմիր քոշերի հետ, որոնցից մի զույգը հարսնացուի, իսկ մյուսը նրա մոր համար է լինում, և կապում։

Այս ժամանակ աղջկա տանից մի տղա է գալիս և հրավիրում սրանց բոլորին աղջկա տունը։ Անմիջապես բոլորը վեր են կենում, ծերունիները վերադառնում են իրենց տուն, իսկ մյուսները գնում են աղջկա տունը։ Փեսացուն չի գնում հարսնացուի տունը, սակայն այժմ մի քանի գյուղերում սկսել են նրան ևս տանել։ Երբ հասնում են հարսնացուի տանը, տանեցիները ընդառաջ են գալիս և սիրով ընդունում։

«Ձեր ոնը գալուքը բարի ինի», ասում է հարսնացուի մայրը փեսացուի մորը, «ուրախ բարեկամ ընիք»։

— Դեհ մըտալ ենք էս օճախեն մին հափուռ վեղ յոր օնինք,— պատասխանում է փեսացուի մայրը,— ատված տա անփոշմնելի սովատա (առատություն) ինի։ Մեր ջհալների կապն էլ էրկան ինի։

Հետո մտնում են զարադամը և նստում օջախի շուրջը։ Անմիջապես թեյ են մատուցանում և հետո հաց փռում։ Այս ժամանակ տղայի հայրը դառնում է քահանային և ասում. «Աղեր, կարգի, պատարագի ըլիս, ըն մեր հարսնացուն մի ուրախանանք, գիտյումըմ, օր մեր խնամին կարմիր գինի շատ օնե, կ'օտինք, կը խմինք քեփ կ'անինք»։

Իսկույն մի կնոջ առաջնորդությամբ հարսնացուն, երեսը մինչև գոտին շարդաթով ծածկած, գալիս է և կանգնում քահանայի մոտ։ Այս ժամանակ մի սկուտեղի մեջ մրգեղեն, մի քանի մոմ, մի քանի խնձոր, և նշնի մատանին դրած մոտեցնում են քահանային։ Քահանան օրհնում է այս և վերցնում տալիս փեսացուին։ Սա էլ անցկացնում է այն հարսնացուի մատանեմատը։ Այս միջոցին ման են ածում սկուտեղը, և հյուրերը շնորհավորելով ու բարեմաղթություններ անելով մի մի բաժակ գինի կամ օղի են խմում, շաքարեղենից ուտում և մի մի արծաթյա քսան կամ տասնհինգ կոպեկանոց խրում խնձորի մեջ։ Այս փողերը, որ ռեղական բարբառով «հարսնացուին տված թաս» են կոչվում, պատկանում են հարսնացուին, և մոտավորապես 3—8 ռուբլու է հասնում,

որից տալիս են քահանային 50 կոպ.—մի ռուբլի և 30—50 կոպ. հարսը առաջ բերող կնոջը։

Սրանից հետո սկսում են հաց ուտել։ Մատուցանում են խորոված, խաշու (մսով եփած ջրալի կերակուր) և ճէաշ (փլավ), եփած հավը վրան։

Մինչև առավոտ քեֆ են անում, ուտում, խմում, պարում, շատ անգամ էլ կռվում և լուսաբացին ցրվում տները։

Մյուս օրը աղջկա տնից ուղարկում են տղի տունը՝ մի շիշ օղի, մի թունգի գինի, մի եփած հավ, 3—5 զույգ էլ լավ գուլպա։

Այն դեպքերում, երբ փեսացուն նշանդրեքի երեկոյին աղջկա տունը չի գնում, աղջկան էլ առաջ չեն բերում, այլ աղջկա մայրը տանում ձգում է նրա գլխին օրհնած չարշաֆը և մատանին անցկացնում մատը։

Պատահում էլ է, որ երիտասարդը գյուղից անգամ բացակա է լինում, և ծնողները մինչև անգամ առանց նրան հարցնելու նշանում են իրենց ընտրած աղջկա հետ։ Երբեմն էլ երիտասարդի բացակայության ժամանակ նրա դատակը՝ փափախն են տանում և նրա հետ նշանադրում։

Ավելորդ է ասել, որ քահանաներն անգամ մի առանձին նշանակություն չտալով նշանվողների փոխադարձ համաձայնության, չեն էլ հարցնում, թե նրանք համաձա՞յն են։

Նշանադրության հրկրորդ օրը փեսացուն հոր կարգադրությամբ պատրաստություն է տեսնում դնալ հարսնացուին տեսնելու։ Առնում է մի փոքրիկ հայելի, մի փոքրիկ դանակ, մի մատնոց, մի ասղամատ և մի քանի ֆունտ մրգեղեն (չամիչ և տկողին)։ Մայրը կապում է այս բոլորը մի թաշկինակում։ Գիշերը ուշ, երբ բոլորը քնած են լինում, երիտասարդի վերցնում է այդ թաշկինակը և զգուշությամբ գնում աներ-բանց տուն։ Եթե փողոցում նրան տեսնեն, կբռնեն և կթակեն, մինչև որ նրանից մի ընծա չստանան։ Այսպես գաղտագողի նա հասնում է յուր հարսնացուի տունը և կամացուկ մի փոքրիկ քար ձգում հերթիկից՝ այս նրա այցեատոմն է, որ ուղարկում է զոքանչին։ Երբ այս միջոցը չի օգնում, նա մի հարևան կին է ուղարկում իմացնելու։ Վերջապես զոքանչը կամացուկ բաց է անում դուռը և ընդունում փեսացուին։ Այս ժամանակ բոլորը, եթե ոչ քնած, գոնե այդպես են ձևացնում։ Անմիջապես մի հավ են մորթում և փլավ պատրաստում։ Փեսան նստում է միայնակ ընթրելու. զոքանչն էլ մի քիչ հետո նստում է մոտը և սկսում գովել յուր աղջկան։ Տղան աչքերը գետին ձգած պատասխանում է այս

գովասանքներին. «Դե վէր իմ ապեր հավան ա կացալ, ես հի՞նչ ըմ բսբլական, ես լ՚ա հավան էմ հավան»։

Հետո մայրը գնում բերում է աղջիկը։ Տղան կամ մի մատանի է գնում մատը և կամ մի ռուբլի փող նվիրում։ Մի քիչ հետո մի զույգ գուլպա նվեր է ստանում և վերադառնում տուն։ Մյուս օրը տղի մայրը հարցնում է տղին, թե հավանե՞ց աղջկան, սա էլ կարմրելով պատասխանում է. «Դե ես տեսե ոչ իրան, ամա մարը շատ թարիփ ըրավ, դե որ դու, ապերը հավանըք կացալ, օղալ ըք՝ հի՞նչ բիդի ասիմ»։

Նշանադրությունից հետո տղի բարեկամները գնում շնորհավորում են աղջկա ծնողներին և մի մի ընծա տալիս հարսնացուին, որ բաղկացած է լինում մատանիներից, ասղամանից, հայելուց, սապոնից և այլն։ Տնեցիները նրանց լավ հյուրասիրում և մի զույգ գուլպա նվեր են տալիս։

Պատահում է, որ մի քանի հոգի միասին են գնում։ Այս դեպքերում մի բաժակի մեջ գինի են ածում և «Աստված շնորհավոր անե» ասելով միմյանց տալիս ու մի մի քսան կոպեկանոց ձգում մեջը։ Հետո այս բաժակը ուղարկում են հարսնացուին, որ թափում է գինին, վերցնում դրամները, նորից գինի ածում և բաժակի վրա մի խնձոր դրած վերադարձնում։ Այսպիսով նա հայտնում է յուր շնորհակալությունը։

Խոնչա տանել. Նշանադրությունից մինչև պսակը տևում է երեք ամսից մի տարի։ Լինում են դեպքեր, որ մինչև 7 տարի էլ է տևում, երբ փեսացուն բացակա է լինում։ Այս երկար միջոցում աղջկա և տղի անեցիները շարունակում են միմյանց հետ երթ ու գալ ունենալ և նշանավոր տոներին (ազիզ օրերին) միմյանց ընծաներ ուղարկել, որ տեղական բարբառով «խոնչա» է կոչվում։ Երիտասարդը թեև մի մի անգամ տեսնում է հարսնացուին, սակայն երբեք միմյանց հետ խոսել չեն համարձակվում։

«Խոնչա» ուղարկվում է տղի տնից աղջկա տունը առավելապես պատկին, ջրօրհնեքին, բարեկենդանին, վարդավառին և նավասարդին։ Սրանցից ամենանշանավորը զատկինն է, որ «ախար» էլ է կոչվում։ «Խոնչան» տղի տնից տանում են մի աղջիկ կամ մի հարս, լավ հյուրասիրվում և ստանալով մի զույգ գուլպա, նույն օրը վերադառնում է։

Աղջկա տնից ևս, «խոնչան» ստանալուց հետո նրա փոխարեն նվերներ են ուղարկվում։ Եվ ամեն անգամ ստացված զաթաներից մինը մի լավաշի մեջ փաթաթված վերադարձվում է։

Ահա նշանավոր խոնչաները և նրանց դարձվածքները.

Ա. Ծաղկազարդին փեսացուի տնից ուղարկվում է հարսնացուին

հինա, որպեսզի նա յուր ընկերուհիների հետ միասին այդ գիշերը ձեռքերը հինա դնի։ Ժամասացության ժամանակ էլ փեսացուի մայրը և կամ մի աղգական կին բերում ելևեջեցում մի շարդաթ (քող) է գցում հարսնացուի գլխին։

Բ. Զատկին փեսացուի մայրն անձամբ է տանում «խոնչան», որ բաղկանում է հետևյալից. 20—100 հատ ներկած հավկիթ, որոնցից մի քանիսը գեղեցիկ կերպով նշխված են լինում, մի շալ աղլուխ, մի թունգի գինի, մի շիշ օղի և մրգեղեն (ընդամենը 4 ռ. արժողությամբ)։ Նաև հինգ զույգ գաթա և մի խաշած «անդեմնը» (ոչխարի բուդ)։

Փեսացուի մորը մեծ պատվով ընդունում, 3—5 օր[1] պահում, շարունակ ուրիշ բարեկամներ էլ հրավիրում, որպեսզի նա ուրախ ժամանակ անցկացնի, և երբ վերադառնում է, նվիրում են նրան մի շալ սրխալուզացու (մոտ 5—8 ռ. արժողությամբ) կամ մետաքսե մի շապկացու (4—8 ռ. արժողությամբ)։ Բացի սրանից տալիս են նաև մի քանի զույգ գուլպա, մի ներկած հավկիթ, գինի, օղի և այլն։

Գ. Վարդավառին տղի տնից մի աղջկա կամ մի հայրի ձեռքով ուղարկվում է աղջկա տունը մի շարդաթ, կամ մի զույգ շմոշկ (1—3 ռ. արժողությամբ) և մրգեր։ Սրան իբրև դարձվածք նույն կամ հետևյալ օրը դարձյալ մի աղջկա կամ հարսի ձեռքով աղջկա տնից ուղարկվում է տղի տունը 5—8 զույգ գուլպա, մի քանի գաթա, մի ման սեր, մի ման ձվածեղ և մրգեղեն։

Դ. Նավասարդին տղի տնից ուղարկվում են աղջկա տունը մի շալ աղլուխ (1 ռ.), մի թունգի գինի, մի շիշ օղի, մեխակ և մրգեղեն (ընդամենը 2 ռ. 50 կոպ. արժողությամբ), մի քանի զույգ էլ գաթա։ Մեխակը ուղարկվում է, որ հարսնացուն և յուր ընկերուհիները իրենց համար «վլենոցներ»՝ մանյակներ շինեն։

Փեսացուն ևս ամեն անգամ յուր նշանածի տունը գնալիս նրա համար ընծաներ՝ շալակ է տանում, որ գլխավորապես մրգեղենից և պտուղներից է բաղկանում։ Բացի սրանից նա պարտավոր է ամեն կերպ ծառայել աներոջը, օրինակ, օգնել նրան տուն շինելիս, փայտ կրել անտառից, աշխատել նրա այգում, օգնել դաշտային պարապմունքներին մեջ և այլն։

Հղե կտրել. հարսանիքից մի ամիս կամ մի քանի շաբաթ առաջ տղի հայրը, կնքահոր և մի քանի ուրիշ բարեկամների հետ գնում է աղջկա տունը, տանելով յուր հետ մի թունգի գինի, մի շիշ օղի, մի քանի զույգ գաթա։ Աղջկա հայրը անմիջապես կանչում է յուր եղբորը,

[1] Բնագրում օր բառը բացակայում է, հավանաբար վրիպակ է (Ա. Կ.)։

մեծ փեսին և մի ուրիշ մարդու։ Լինում են և քահանան ու տանուտերը։ Մի կարճ խոսակցությունից հետո քահանան, և կամ, ինչպես շատ անգամ. տղի բարեկամներից մին ասում է.

«Դե, խնամի, մունք՝ եկել ընք հրդեհ կորելի, ըսեցեք, տեսնանք հինչ էք օղում մրգանա»։

Խնամին պատասխանում է.

«Նա ոչինչ օգմ չըմ ծրգանա. եկել ըք՝ շատ լավ ըք ըրալ, կերեք, խոսեցեք, քեֆ ըրեք. հիբը էլ ուզիս ըք, եկեք ձեր հարմնը եր կալիք տարիք»։

Այս ժամանակ մեծ փեսան հանդիմանում է նրան, ասելով. «Ապեր, էրկուիրեսանե մե կենալ, հինչ օր ինձանա իք կալալ՝ էն էլ ընտրանա պիտի ինք օնիս, ես 40 մանեթ նաղդ փուլ ըմ տրվալ, մին մսացուկ մը տրվալ, 7 խալաթ ըմ տրվալ, դրանք էլ պիտի տա»։

Աղջիկա հայրը իբր ստիպված՝ դառնում է տղի հորը. «Խնամի, տեսնումբս, ես զատ չըմ օղում, համա փեսաս ինչիմիշ ա ընում, դե, դու բ՝ գլուտում, հինչ օղըմ բս, տո բրի»։

Տղի հայրը պատասխանում է.

«Թե մատաղ. իմ անըմըսուդյորա հունց վեր սըզական ա, հունց վեր խալխեն մհար ատաթ ա, ես էլ տլական ըմ»։

Այսպես շարունակվում է խոսակցությունը մինչև որ երկար շողոքորթություններից ու սակարկություններից հետո, որ երբեմն մի քանի օր էլ է տևում, որոշվում է, որ տղի հայրը տա աղջկա հորը 5—50 ռ. փող, մի եզ, 7—5—3 խալաթ, որից մի ձեռք ալրշի շապկացուն հարսնացուի. երկրորդը՝ սրա մոր, իսկ մյուսները սրա բարեկամների համար է։ Սրանից հետո էլ փեսացուի կողմն է ձայն բարձրացնում և պահանջում. որ հարսնացուի հայրը որոշի, թե ինչ է տալու որպես օժիտ։ Պետք է ասել, որ հետզհետե տղի տվածը փոքրանում և հարսի օժիտը մեծանում է, և մինչև անգամ պատահում են դեպքեր, երբ տղի հայրը ասում է, թե այսքան օժիտ կտաս, կառնեմ, չես տա՝ նշանը ետ կտամ։ Սակայն այդպիսի դեպքերը դեռևս հազվագյուտ են։

Նույն միջոցին որոշում են և պսակի օրը։ Այնուհետև փեսացուի հայրը սկսում է պատրաստվել պսակը կատարելու։ Մի օր հրավիրում է քահանային յուր մոտ, լավ հյուրասիրում և նրանից ստանալով մի վկայական, դիմում գործակալին։ Այստեղ իրեն աղքատ ձևացնելով և երկար սակարկելուց հետո վճարում է 5—7 ռ. և ստանում պսակի հրաման։

Սակայն շատ անգամ գործը այստեղ բավական քաշքշվում է։ Եր-

քանի չհաստությունը, երբեմն գործակալի ընչաքաղցությունը ուշացնում են հրամանը։ Տարեկան առնվազն 50 չհաստության խնդիրներ են պատահում, որոնք ԼՊԻ փողի միջոցով չեն լուծվում, ապօրինի կնապահությամբ են վերջանում։

Բայց հողևոր իշխանության հրամանը դեռ բավական չէ, որ քահանան կատարե պատակադրության խորհուրդը, հարկավոր է նաև տանուտիրոջ «տեր-ողորմյան», ուստի և փեսացուի հայրը գնում է նրա մոտ, մի շիշ օղի, 30—40 կոպ. դրամ տալիս և ստանում այն։

Տըշոբմաղ. Պատակի պատրաստվելով, աղջկա և տղի տնեցիները լավ մաքրում են տները և սյուների ճակատները ալյուրով խաչաձև նախշում։ Ապա տղատերը չորեքշաբթի, իսկ աղջկա տերը հինգշաբթի պատրաստում է հարսանյաց հացը։ Մի կին շրջելով բոլոր բարեկամների մոտ հրավիրում է դալ տըշոբմաղը (ուսշտ և մաղ) շնորհավոր անելու։ Ամեն մինը վերցնում է կամ մի կտոր պանիր, կամ յուղ, կամ թել, կամ մի քանի ձու և կամ մի քանի կոպեկ և գալիս հրավիրողի տունը, շնորհավորում, օրհնում և բերածը տալիս ալյուր մաղողին։

Երբ մեծամասնությունը հավաքված է լինում, մի քանի գյուղերում մի պառավ կին սկսում է մաղել այսպես. մի բուռ ալյուր վերցնելով, ածում է մաղի մեջ և ասում. «Էս հորս փայը, էս մորս փայը, և այլն, էս մեռելների օրհնությունը ընի, էս խեր պընատեղիս վերա»։ Նրանից հետո արդեն մաղում է հացարարը։ Իսկ մի քանի ուրիշ գյուղերում, օրինակ, Սգնեքում, սկզբում յոթը աղջիկ են մի մի մաղ մաղում ապա հացարարը, այն էլ մինչև մի ռուբլի նվեր ստանալուց հետո։ Նույն գերդաստանի ամենից պառավին էլ բերում են, որ նա առաջինը ջուր ածե։ Ալյուրը մաղելուց հետո բոլոր հյուրերին ընթրիք են տալիս, որից հետո հեռավոր բարեկամները գնում, իսկ մոտիկ բարեկամներից մի քանիսը մնում են օգնելու։ Այդ գիշեր թխում են բավական թվով գաթա և հաց։ Թխելուց հետո մի մի զույգ հաց են բաժանում բոլոր բարեկամներին։

Առաջները համարյա միշտ, իսկ այժմ միայն մի քանի հարուստ գյուղերում նույն օրը, կամ ուրբաթ տղի տանից տանում են աղջկա տունը մի կենդանի եղ, մսացուք, վզովը մի շարք խնձոր կապած։ Առաջից գնում են գավուլ-գուռնան, իսկ նոսկից եզ մորթողը, դանակը ձեռին պատրաստ։ Աղջկա տան առաջ բավական ածելուց հետո, եզ մորթողը վայր է ձգում եզը և դանակը դնելով վզին սպասում, մինչև որ մի ռուբլի նվեր է ստանում, և ապա մորթում։

Այս եզի կեսը տալիս են աղջկա տնեցիներին, իսկ մյուս կեսը տանում տղի տունը։

Մորթելու ժամանակ փեսացուն և քավորը դնում են իրենց աջ ոտները եզի վրա, իսկ փեսացուի քույրը կամ մի ուրիշ մոտիկ ազգականն բերում է մի կողպեք և արյան տակ բռնելով կողպում, որպեսզի բոլոր բարեկամները ևս կողպված մնան և չկարողանան վնասել։ Այդ կողպեքը այդպես կողպված պահում են մինչև թաղի վերացումը, երբ նորից հանդիսավոր կերպով բաց են անում։

Նույն օրը կանայք պատրաստում են մի կամ երկու հավ փեսի տուսչ տանելու։ Հավը մորթելուց և փետրելուց հետո ղլուխը նորից կարում են վզին, ապա թելի վրա քիշմիշ անցկացնելով՝ փաթաթում հավին, այնպես որ ամբողջ հավը պատած է լինում քիշմիշով, ապա մեջքին էլ նույն քիշմիշով մի թամք շինում, փորոտիքն էլ լցնում են ալիվեղենով։

Աղջկա տանն էլ պատրաստում են ծառը, հատկապես փեսացուի տուսչ բերելու համար։

Ծառը պատրաստում են աղջիկները, վերցնում են մի փայտ և ամրացնում գույնզգույն թելերով զարդարված մի կտոր տախտակի վրա։ Հետո ուրիշ փայտեր են կապում այդ փայտից, և սրանց վրա կապում խնձոր, տանձ, նուռ և այլն։ Ծառի ճյուղերը միացնում են միմյանց հետ վրան քիշմիշ և սիսեռ անցկացրած թելերով։ Ծառի ծայրին էլ ամրացնում են վերոհիշյալ կերպով պատրաստված մի հավ։ Ծառի վրա սովորաբար լինում է մի ֆունտ քիշմիշ և 5—8 ֆ. միրգ։ Ծառը տանելիս տախտակի վրա վառում են 2 կամ 4 մոմ։

Քավոր. Գյուղերում քավորները մեծ նշանակություն ունեն։ Նրանք ոչ միայն հարսանյաց, այլև ուրիշ հանդեսների ժամանակ միշտ հրավիրվում և լավ հյուրասիրվում են։ Յուրաքանչյուր գերդաստանի քավոր է լինում մի ուրիշ գերդաստան, և մեծ անպատվություն է, որ մինի պատկի ժամանակ ցեղական քավորենց թողնեն և մի ուրիշ գերդաստանից քավոր հրավիրեն։ Չի պահանջվում, որ միշտ միևնույն անձը լինի քավոր, այլ որ միշտ միևնույն գերդաստանի անդամներից մինը կատարե այդ պաշտոնը։

Հարսները երբեք չեն խոսում իրենց քավորների հետ և մինչև անգամ նրանց դռնով անցնելը մեղք են համարում, այնքան ակնածում են նրանից։ Հարսանիքից մի քանի օր առաջ տղայի հայրը պատրաստել է տալիս մի «սեղան», որ բաղկանում է հետևյալ իրերից. մի լաստիկ արխալուղացու, մի թունդի գինի, մի շիշ օղի, 10 հատ գաթա, հինգ

գրվանքա միրգ։ Հետո կամ ինքը՝ տղայի հայրը, և կամ յուր եղբայրը, տանում է քավորին ընծա և խնդրում նրան գալ որդու խաչը բռնելու։ Քավորը սիրով ընդունում է խնդիրը և նրան լավ հյուրասիրում։ Հետո պատրաստում է մի թունդի դինի, մի շիշ օղի, մետաքսի եռապույն թելերով ասեղնագործած մի զույգ քոշ և մի ուրիշ, մոտ 5 ռ. արժողության մի ընծա Հարսանիքի օրը հարսին նվեր տանելու։

ՀանդեռձորՆՆԼ. Հարսանիքի օրը մոտենալիս հարսնացուի մոտիկ ազգականները հրավիրում են իրենց մոտ հարսնացուին, երբեմն միայնակ, երբեմն էլ ընկերուհիների հետ, լավ հյուրասիրում և վերադառնալիս էլ մի մի ընծա տալիս։ Այս օրերին հարսնացուին, ինչպես և փեսացուին հանդիսավոր կերպով լողացնելը այս կողմերում վերացել է։ Սրանք իրենք իրենց սովորական եղանակով լողանում, մաքրվում են։

Ուրբաթ օրը դավուլ-զուռնան գնում է թե փեսացուի և թե հարսնացուի տների առաջ ածում է «սահարի» հատուկ հարսանեկան եղանակը, որով իմացնում է գյուղին, որ այդ օրվանից սկսվում է հարսանիքը։ Նույն օրը փեսացուն գնում է և պատվավոր հյուրերին յուր հոր կողմից հրավիրում։

Երևկոյան մոտ հյուրերը հավաքվում են և ծալապատիկ նստում օջախի շուրջը, փափուկ գորգերի վրա։ Փոքր-ինչ հետո մի մարդ մի ձեռին կոնք, մյուսին մի սափոր, ուսին էլ մի անձեռոցիկ շրջում է հյուրերի մեջ և ջուր ածում՝ լվանալու ձեռքերը։ Այս նահապետական սովորությունից հետո անմիջապես սփռում են գետնին սփռոցներ։ Գերդաստանի ամենաձլատ անդամներից մին, որ մառանապետ է ընտրված լինում և տեղական բարբառով «մառանապետ» է կոչվում, բարձրանում է այլուրի շանմարանի վրա և այնտեղից սոխ նետում սփռոցի վրա։ Ոչինչ, եթե սոխը փոխանակ սփռոցի վրա, մինի գլխին կամ երեսին ընկնի, մի բարձր քրքիջ կհաջորդե սրան, և սոխը կդրվի յուր տեղը։ Մի ուրիշն էլ միևնույն մառանապետի կարգադրությամբ լոբի է շաղ տալիս սփռոցների վրա և հետո բերում ամեն մի մարդու առաջ երկու հաց գնում։ Հետո մատուցանում են լոբախաշու՝ մեծ մեծ քարդաններով, որոնց միջից խումբ-խումբ ուտում են։ Ընթրիքի ժամանակ կառավարում է «թոյպաշին», որ սովորաբար թագվորի փեսան, հորեղբոր որդին կամ մոտիկ ազգականն է լինում։ Սա օգտվում է ընդարձակ իրավունքներից, սրանից է կախված հարսնևորների ուրախությունը։ Սա է մի կողմից խմեցնում հարսնևորների և մյուս կողմից հրամայում հարսնեաիրոջը՝ կրկին լցնելու շշերը։ Սա է որոշում թե ում պիտի

հրավիրել, ինչ պիտի տալ քահանային, եկեղեցուն, սա է հսկում, որ հարսի օժիտը խոստացածի համեմատ լինի։

Ընթրիքից հետո թագվորը և քավորը մի մի վառած մոմ ձեռքերին կանգնում են քահանայի առաջ։ Բերում են թագվորի հանդերձը՝ շուխան և դդակը, և քահանան օրհնում է այն։ Հանդերձի հետ լինում է և երկու թաշկինակ, որոնցից մինը կապում են թագվորի, մյուսը՝ քավորի կողքից։

Սափրելու ծեսը. Հանդերձօրհնեքից հետո քավորը ընտրում է մի «մակարբաշի», որ կազմում է «մակար»-ների խումբը երիտասարդներից և ամեն մեկին մի մի մոմ տալիս։ Մակարները, թվով 20—30, թագվորի անձնապահներն են համարվում և միշտ նրան շրջապատած պահպանում են։

Սրանից հետո կանչում են սափրիչին։ Թագվորը նստում է մի աթոռի վրա, կողքին կանգնում է քավորը, ձեռին մի վառած մոմ, իսկ մակարները, ձեռներին վառած մոմեր, շրջապատում են սրանց։ Սափրիչը սափրում է թագվորի մորուքը, և երբ վերջացնում է, տալիս է յուր փոքրիկ հայելին թագվորի ձեռքը։ Նախ քավորը և ապա բոլոր մակարները համբուրում են թագվորի ճակատը և 5—20 կ. դնում հայելու վրա։ Սափրիչը վերցնելով դրամը, սկսում է քավորին սափրել։ Այս ժամանակն էլ թագվորն է մոմը ձեռին նրա կողքին կանգնում։ Մի քանի գյուղերում առաջ քավորին են սափրում և ապա թագվորին։

Մինչև այդ ժամանակ թագվորի տանից մի կնոջ ձեռքով ուղարկվում է հարսնացուի մորը հարսի զգեստը, որ բաղկացած է լինում մի թավշե մուշտակից (25—50 ռ. արժողությամբ), մի շալի կամ մետաքսի արխալուղից (5—10 ռ.), մի շարդաթից (7 ռ.), մի գիլանի գոտիից (5 ռ.), գլխին կապելու արծաթ կամ ոսկի դրամներից (8—72 ռ.), մի զույգ չմշկներից (1 ռ. 20 կ.) և մի զբրայի (մետաքսի) շապկից (5—8 ռ.). ընդամենը 54—172 ռ. արժողության։ Բացի սրանից ուղարկում են նաև մի թունդի գինի և մի շիշ օղի։ Իսկ արխալուղի գրպանները և չմշկները լցված են լինում տեսակ-տեսակ մրգերով։ Այս հանդերձը տանողը չի հանձնում, մինչև որ մի ընծա չի ստանում։

Հարսնատ գնալ. Մինչդեռ տղի տանը հանդերձներ են օրհնում, հարսի տնից մի երիտասարդ, ձեռին մի կարմիր խնձոր բռնած, գալիս և բոլորին հրավիրում է։ Անմիջապես մակարբաշու կարգադրությամբ մակարները գնում զինվում և գալիս են։ Իսկույն ձեռներին մի մի մոմ առած՝ շրջապատում են թագվորին ու քավորին և դավուլ-զուռնի առաջնորդությամբ ուղևորվում դեպի հարսնացուի տունը։ Ճանապարհին մա-

կարները պարում, երգում, բղավում և հրացաններ ու ատրճանակներ են արձակում։

Երբ հասնում են աղջկա տուն, հարսնացուի հայրը յուր հյուրերով դիմավորում է սրանց։ Մինն էլ մի երկար մաշալլա (ձողի ծայրին կուպրի մեջ թաթախած շոր կապած և վառած) ձեռին ,առաջնորդում է նրանց։ Այս տեսնելով, մակարները արձակում են իրենց հրացանները այդ մաշալլայի վրա և «ուռա» բղավում։

Հարսնացուի մայրը մոտենում է թագվորին և համբուրում նրա և քավորի ճակատները ու հրավիրում ներս։ Սակայն թմբկահարը կտրած է լինում դուռը և թույլ չի տալիս ներս մտնելու, մինչև որ քավորից մի քանի կոպեկ նվեր չի ստանում։ Մի քանի րոպեում բոլորը խուժում են ներս։ Ղարադամի մի անկյունում մի վարագույրով (գյարդակ) կտրած է լինում, որ կոչվում է «պուճախ»։ Այստեղ է լինում հարսնացուն յուր մի քանի ընկերուհիների հետ։ Վարագույրի մոտ պատից կախված է լինում հարսի օժիտի գորգը կամ կապկտը։

Մակարները գնում նստում են վարագույրի մոտ, իսկ քավորը, թագվորը և փեսեղբայրը կանգնում են կախված գորգի առաջ, վառ մոմերը ձեռքներին։ Տան ծերունին մոտենում է թագվորին և նվիրելով նրան մի գոտի կամ մի ուրիշ բան խնդրում է նստել։ Թագվորը եթե գոհ է մնում, նստում է, իսկ եթե ոչ՝ կանգնած է մնում։ Այս ժամանակ թագվորի մոտիկ ազգականները մոտենում և համոզում են նրան, որ բավականանա տվածով և նստի։ Վերջապես թագվորը քավորի հետ միասին նստում են։

Այս ժամանակ աղջկա ազգականները «լույս» են բերում՝ մի սկուտեղի շուրջ շարում են խնձորներ, որոնց վրա ամրացնում են վառած մոմեր։ Սրանց մեջտեղը ածում են մրգեր, գաթա, հավ, ձու և այլն։ Իսկ ամենամոտիկ ազգականները «ծառ» են բերում։ Ամեն մի «լույս» կամ «ծառ» բերելիս մակարները «ուռա» են կոչում, ածում, պարում, գինի և օղի խմում, և հետո մակարբաշին առնում է այն և տալիս տանեցիներից մինին պահելու։ Այդ բոլորը մակարներին է պատկանում։

Քիչ հետո ընթրիք են տալիս և մատուցանում են պասվա կերակուրներ։ Օղին և գինին առատությամբ մատուցանում են։ Պարն ու «ցայլին», ծաղրն ու հանաքը երկար շարունակվում են, մինչև որ հարբած ու հոգնած, կես գիշերին ամենքը ցրվում են տները. մնում են միայն քավորը, փեսան և մի քանի մակարներ։ Այս ժամանակ տան հարսները ու աղջիկները գալիս շրջապատում են թագվորին և սկսում խոսեցնել նրան։ Զոնքանչն էլ բերում նրան և նրա հետ մնացողներին նորից հաց է տալիս, որ կոչվում է «շնթոկաճաշ» կամ «թաքուն պատառ»։ Առաջինը նշանակում է, որ թագվորը կարող է այդ ժամանակ աղատ նստել և ճաշել, առանց հյուրերից նեղվելու, երկրորդը, որ զոքանչը յուր պահած լավ պատառը թաքուն տալիս է յուր փեսին։

Երբ հարսը ուրիշ գյուղից է լինում, հարսնատ գնալը տեղի է ունենում շաբաթ առավոտյան։ Թե՛ մակարները և թե՛ թագվորը ձիով են լինում, թեև պատահում է, որ բոլորն էլ հետի են գնում։ Այս գնացքի ժամանակ երիտասարդ մակարները, գլխները օղուց տաքացած, ահագին աղմուկ բարձրացնելով իրենց բոլոր շնորհքները թափում են։ Արշավելով առաջ ու ետ, նրանք կանգնում են ձիու վրա, քշած միջոցին ոտը խփում գետնին և կրկին թռչում ձիու մեջքին, մտնում ձիու փորի տակ և ատրճանակ արձակում և այլն։

Փրքեթորհնեք. Շաբաթ առավոտյան վաղ մակարները նորից հավաքվում են աղջկա տունը։ Այստեղ նրանց նախ մի մի բաժակ օղի և ապա մի մի թերթաշ (թերը խարավ)[1] ձու են տալիս։

Ժամը 10-ին մոտ դավուլ զուռնան մի որոշ եղանակ ածելով հրավիրում է բոլորին պատրաստվել պսակ գնալու։ Գալիս է քահանան և որոշում հարսի հանդերձը։ Այս ծեսը տեղական բարբառով կոչվում է «փրթեթորհնեք» (փաթեթ օրհնեք)։ Մի սկուտեղի մեջ դնում են թագվորի տնից բերված հարսի հանդերձը և հարսի ծնողների կողմից թագվորին տալու ընծան՝ մի գոտի կամ մի շորեղեն։ Թագվորը մոմը ձեռին կանգնում է հանդերձի մոտ, իսկ հարսնացուն պուճախումն է լինում։

Հանդերձն օրհնելուց հետո թագվորը վերցնում կապում է գոտին։ Հարսի հանդերձներն էլ տանում են պուճախը, ուր մի հարս հագցնում է նրան և գլուխը կապում, զարդարում։ Այս միջոցին հրավիրում են քավորին հարսի գոտին կապելու։ Սա ուրախությունով գալիս կապում է և թեթևությամբ խփելով մեջքին ասում. «Աստված քեզ մին ղոչ որդի տա»։

Այս ժամանակ թոյպաշին շտապեցնում է. «Հրթնամար, պա հինչ անում, ախեր շենքմը օրիշ հրրսանեք կա, կը գան մեր ըռըշկենն կարին. առաջ մունք պիտի քընինք»։

Գյուղացիները հավատացած են, որ եթե պսակի գնալիս մի ուրիշ հարսանիք պատահի, թագվորը կդժբախտանա։

Պսակ գնալ. Վերջապես հարսը, կողքերին մի մի հարսնաքույր (հրրսնաքուր), հանդերձ հագցնող կնոջ առաջնորդությամբ դուրս է գա-

[1] Բնագրում թքնիարավ է, հավանաբար վրիպակ է (Ս. Կ.)։

լիս պուճախից և ծանր քայլերով գալիս թագվորի աջ կողմում կանգնում։ Սրա ձախ կողմումն էլ քավորն է լինում։ Իսկույն թոյպաշին մի մեսաքսե թաշկինակ կապած մի երկար ձողի ծայրին, առաջ է ընկնում։ Դավուլ-զուռնան ավելի ուժգնությամբ ածելով՝ առաջնորդում է դեպի եկեղեցի։ Մակարները շրջապատած հարս ու թագվորին, «ուռա» են բղավում, պարում, գինի, օղի խմում և ատրճանակ արձակում։ Մի քանի մակարներ էլ «ծառեր» ձեռքներին բռնած պարելով առաջ են գնում։ Երբ հասնում են եկեղեցուն, մի քանի մակարներ պահապան են կանգնում եկեղեցու շուրջը, որպեսզի թույլ չտան թշնամի մարդկանց եկեղեցու կտուրը քար ձգելու և այդպիսով ամուլ դարձնելու հարսին։ Մյուսները մտնում են եկեղեցի։ Իսկույն թոյպաշին հանձնում է քահանային տանուտիրոջ համրիչը և խնդրում պսակել։ Այստեղ էլ թագվորաքույրերն են հսկում, որ չարամիտ կանայք թել չհանդուստեն և այդպիսով ամուլ դարձնեն հարսին։ Քահանան նախ խոստովանեցնում է հարս ու թագվորին և ապա երկուսին միասին շոքեցնելով սեղանի առաջ, յուր շուրջառը ձգում գլխին։ Այս ժամանակ թագվորը հանում է յուր գրպանից մի խնձոր, որի մեջ արծաթ դրամներ են խրված լինում և ծածկաբար տալիս հարսին։ Երբեմն էլ բավարարվում է միայն մբրդեղեն տալով։

Երբ քահանան գինու բաժակն օրհնելով տալիս է թագվորին, առաջ է գալիս հարսնեքույրը, առնում բաժակը և մնացած գինին խմեցնում հարսին։

Պսակի խորհուրդը կատարելուց հետո քահանան ասում է. «Գնա՛, թաքավերին, թագուհուն սիրողը կյա տեսնում»։ Ամենքը մի առ մի մոտենում, համբուրում են թագվորի բռնած ավետարանը և խաչհամբույր ձգում։ Եվ եթե մինը չի ձգում, քահանան բարկանում է վրան, գնում սյուների ետևից քարշ տալիս բերում, որ մի քանի կոպեկ էլ ձգի։

Երբ տեսնում են, որ այլես ոչ ոք չի մոտենում, շարժվում են դեպի տուն։ Սակայն այս անգամ թագվորն ու հարսը միևնույն կերպով չեն գնում։ Դեռ մինչև ամուսնանալը հարսը թագվորին հավասար էր համարվում, ուստի և նրա կողքից էր գնում, բայց այժմ, արդեն ամուսնացած լինելով, ժողովրդի կարծիքով, նրանից ստոր է, ստիպված է ամեն բանում նրան հետևելու, ուստի և թագվորը գնում է առջևից, աջ կողմում քավորը, ձախում՝ փեսեղբայրը, իսկ հարսը թագվորի ետևից, նրա զուռուց ամրացված թաշկինակը բռնած։ Նրա կողքից էլ գնում են հարսնաքույրերը։

Եկեղեցուց դուրս գալիս քավորը հանում է յուր կողքից կապած

թուրը և խրում դռնագլխին, որ փեսան ու հարսը տակովն անցնեն, և սատանաները չկարողանան նրանց խփել։

Այժմ արդեն մակարների ուրախությունը յուր գագաթնակետին է հասնում, պարը, «ուռան», հրացանաձգությունը քանի գնում սաստկանում են։

Ամենից առաջ գնացքն ուղղվում է դեպի «օճախ»-ները, ուր հարս և փեսա երեքական անգամ չոքում և համբուրում են օճախից, խունկ մխում, խաչհամբույր ձգում։ Ճանապարհին հարսի կամ փեսի բարեկամները և քավորանք հրավիրում են հարս ու թագվորին իրենց դուռը, ուր սրանք կանգնում են, իսկ մակարները սրանց առջև պարում են։ Հրավիրողը օղի կամ գինի է բաշխում մակարներին և մի նվեր տալիս թագվորին կամ հարսին, օրինակ, մի շարդաթ, մի լաչակ ձգում հարսի գլխին մի թաշկինակ կամ մի օսկապ կապում՝ թագվորի վիզը։ Հետո բարեկամներն էլ մի մի ման ձվածեղ, հալվա, կարմիր ձու, փլավ, ընկույզ, գինի, օղի և այլն են բերում, նախ մի մի բաժակ տալիս թագվորին ու քավորին և մի մի էլ պատրաստած պատառ ներկայացնում նրանց, և ապա մնացածը տալիս մակարներին։

Մի քանի բարեկամ կանայք էլ հարս ու թագվորն իրենց դռնով անցնելիս՝ կտրից ընկույզ են շաղ տալիս վրանները։ Գիտի հրեակայել, թե ինչպիսի իրարանցում է տիրում մակարների մեջ, որ աշխատում են միմյանց ձեռքից խլելով ընկույզները։

Վերջապես գնացքը մի երկու ժամից հասնում է «հարսնքատունը»՝ հարսի տունը։ Մի քանի գյուղերում այս միջոցին մի հավ են բերում բավորի տանից։ Մի մակար այդ հավը, իսկ ուրիշը մի դաշույն ձեռներին բռնած պարում են։ Եվ երբ պարը վերջանում է, քավորն առնում է դաշույնը և հորիզոնական կերպով բռնում և հրավիրում թագվորին։ Սա էլ վերցնում է հավը, գլխից և ոտներից բռնում, խփում դաշույնին, վիզը կտրում։ Բոլոր մակարները «ուռա» են բղավում և գովում թագվորի քաջությունը։ Հետո բոլորը խառնիխուռն խուժում են ներս և նստում գորգերի և ներքնակների վրա։ Հարսին կրկին տանում են պուճախ, իսկ թագվորին կանգնեցնում են վարագույրի մոտ, նրանից ներքև՝ բավորը և փեսեղբայրը։

Դրսում զուռնան շարունակում է ածել «նվախք» եղանակը։ Թոյպաշին գնում մի ընծա է տալիս և հրավիրում ներս։

Կեսօրին հաց են ձգում և մատուցանում են բոզբաշ, դոլմա և կոր-

Օսկապը (ուս-կապ) մի ծակ քսան կոպեկանոց է, որ կանաչ կարմիր թելերով կապում են ուսովը։

կոտ։ Նախ ճաշում են տղամարդիկ։ Սակայն այս ժամանակ էլ թագվորը ոչ նստում և ոչ էլ հաց է ուտում։ Աներանք մի երկու զույգ գուլպա և մի գդակ են բերում և նվիրում, որ նստի, հաց ուտի։ Այս նվերը կոչվում է «բերանբացուկ»։ Երբ ճաշը ավարտվում է, թագվորն ու քավորը 20—40 կոպեկ են ձգում ափսեի մեջ, խոհարարին նվեր։ Հացի ժամանակ գյուղի գգիրը գալիս պահանջում է մի փոքրիկ աման հալվան, որ հատկապես պատրաստված է լինում և բաժանում բոլոր հրավիրյալներին։ Եթե մեկին չհասնի, նա աղմուկ կբարձրացնի և կպահանջի։

Տղամարդկանցից հետո կանայք են նստում հաց ուտում և վերջն էլ «կանչ անում»։ Այս «կանչից», որին միայն կանայք են մասնակցում, գոյանում է մոտ 30 ռ., որ հանձնվում է հարսի մորը։

Սրանից հետո հեռու բարեկամները ցրվում են, մնում են միայն մոտիկ ազգականները և մակարները։ Իսկույն թոյպաշին խնդրում է բերել և ցույց տալ հարսի օժիտը։ Անմիջապես բերում են և բաց անում։ Թմբկահարը վերցնում մեկ-մեկ բարձրացնում է իրերը և բոլորին ցույց տալով՝ բղավում. «Թագավերին մկընե՛»։

Մակարները ձայն են տալիս. «Հրամմա՛»։

Թմբկահարը՝ «Հրամանքդ աստծու, խնամին տվավ յուրան ըղչկանը մին սիրուն կապերտ, որ եմի պակասը՝ 20 մանեթ. (մինչդեռ արժե 10 ռ.)։

Բոլորը միասին բղավում են. «Շեն կենա, շե՛ն»։

Այսպես ցույց են տալիս ամբողջ օժիտը, որ բաղկացած է լինում հետևյալ իրերից։

Հարսի օժիտը. Մի ձեռք շոր, արխալուղի վրա մոտ տասը ռուբլու արծաթ դրամ սարմակոճակ կարած։

Երկու ձեռք սպիտակեղեն։

Մի ձեռք անկողին, բաղկացած մի ներքնակից, մի վերմակից, երկու բարձ և մի մութաքայից։

Մի կապերտ։

Մի փոքրիկ կապերտ (գյաբա)։

Մի գորգ։

Երկու մաֆրաշ։

Մի բակեղաթ։

Մի հատ աղաքսակ, շորից կարած։

Մի կաթսա բռնելու շոր (թուֆաճախ)։

Մի կուժ։

Մի կոնք։

Մի սափոր (ալթավա)։

Մի սկուտեղ (մաժմահի)։

Մի ասմալըզ՝ թելերից գործած գդալակալ.

Պղնձյա ափսեներ։

Մի «սնդուկ»։

Հարսը տանել. Երեկոյին պատրաստվում են գնալու թագվորի տունը։

Օժիտը բարձում են մի ձիու, հարսնեղբորն էլ նստեցնում վրան։ Դավոլ-զուռնան ուժգնությամբ ածում է։ Հարսի հայրը բռնում է հարսի ձեռքից, առաջ բերում և ձեռը տալով թագվորի հորը, ասում. «Առ ամանաթդ, տար խերը տես»։ Հարսը խոնարհում և համբուրում է կնքարարի ձեռքը։ Սա էլ շնորհակալ է լինում խնամուց, օրհնում հարսին և մոտեցնում նրան թագվորին։ Ապա թագվորն ու հարսը ծունր դնում համբուրում են օճախը։ Այս ժամանակ թագվորը մի քիչ մոխիր է վերցնում և լցնում դրպանը։ Հետո թագվորն առաջ է անցնում և քավորի ու փեսեղբոր հետ գնում, իսկ հարսը հետևում է նրան, նրա գոտուց կապած թաշկինակից բռնած։ Մակարները սրանց շրջապատած են լինում և պարելով, «ուռա» բղավելով առաջ գնում։ Երբ մոտենում են տանը, թագվորի մայրը մի սկուտեղի մեջ երկու լավաշ հաց և մի փոքրիկ ափսեի մեջ կրակ, վրան խունկ դրած, պատեցնում է տան շորս անկյունը, ապա դուրս գալիս և երեք անգամ պատում թագվորի և թագուհու յուրջը։ Հետո բարձրանում է մի բարձր տեղ և ընկույզ կամ կաղին շաղ տալիս հարսի գլխին[6]։ Ապա մոտենում և համբուրում է հարսի ճակատը։ Սա էլ խոնարհում և համբուրում է նրա ձեռքը։ Այս միջոցին տանեցիներից մին յուղի կարասը բերում, ներկայացնում է թագուհուն, և սա մի քանի կոպեկ ձգելով յուղի մեջ, մատը յուղոտելով քսում է գոնագլխին և սկեսրոջ մազին։ Իսկ սկեսուրն ասում է. «Ջեռնդ ընի եղի մոցին, քըմատաղ»։ Հետո հրավիրում է ներս, բայց սա չի գնում, մինչև որ կնքարարը գալիս և մի ընծա է խոստանում։ Հարս ու թագվոր մտնում են ներս և շոքում, համբուրում օճախը։ Այս ժամանակ հարսը գրպանից խունկ է հանում և ձգում օճախը։ Իսկույն տան ծերունին մոտենում և հենց այդ օճախի մոտ օրհնում է նրանց[7]։ Հետո հարսին տանում կրկին փակում են նույն կերպ պատրաստված պուճախում։ Անմիջապես սկեսուրը մի տղա գրկում, տանում հարսի գիրկն է դնում, ասելով «Բարով դու էլ մին տղա բիրես, քըմատաղ»։ Հարսը, որ մինչ այդ

[6] Շոշու գյուղում կոպեկանոցներ էլ են շաղ տալիս։

[7] Որքան նմանություն էրուսկների սովորություններին։

ժամանակ կանգնած է լինում, գրկում է երեխային և նստում։ Հետո գրպանից հանում է մի զույգ փոքրիկ գուլպա և տալիս երեխային։

Մի քանի գյուղերում էլ (օրինակ՝ Շոշում) պուճախում մի համեստ են դնում և դիտում. եթե հարսը վրան նստի, դա նշանակում է, որ նա հիմար է, իսկ եթե մոտը կանգնի, դա ապացույց է, որ խելացի է։

Երևկոյին տեղի է ունենում հարսի ուսն նման ընթրիք, որի ընթացքում «ծառեր» են բերում։ Գիշերը ուշ հյուրերը ցրվում են, և մնում է միայն փոքրիկ հարսնեղբայրը, որ քնում է հարսի մոտ և հսկում նրա վրա։ Սա չի թույլ տալիս, որ հարսի քնած ժամանակ բանան երես, տեսնելու թե նա որքան գեղեցիկ է։

Մեծարք. Կիրակի օրը գնում ամբողջ գյուղի տղամարդ մեծերին հրավիրում են, և այդ օրվա հրավերը մեծարք է կոչվում։

Կեսօրին մոտ նաշ են տալիս, որի ընթացքում առատությամբ բաշխում են գինի և օղի, որ հրավիրյալների գլխները տաքանան և գրպանները փոքր ինչ լայնանան։

Երբ հացկերույթը վերջանում է, թմբկահարը երեք անգամ խփում է թմբուկին և կանչում. «Ա՛ ջամհատ, մեր խնամին գինի շատ օնի. հալա քեփը Լանան ա ընկական. մինչի խոզը ծառը երբենելը քեփ ինք ընկական. հմեկ մին պատառ տալ ըրեք մին թագա խաբար ա նկալ՝ ասիմ»։ Մեծամասնությունը լռում է։ Սա իսկույն թմբուկը տանում գնում է տանուտիրոջ առաջ։ Այս ժամանակ առաջ է գալիս թագվորի հայրը կամ մայրը և բերում մի կարմիր մետաքսե մեծ շարսավ և ձգում թմբուկի վրա։

Հյուրերը մեկ մեկ, ազգակցության և կամ հարստության կարգով դրամ են նվիրաբերում հօգուտ թագվորի։ Թմբկահարը առնում է դրամը, ցույց տալիս բոլորին և բղավում. «Ա՛ թագավորեն ջամհատ»։ Զուռնաչին պատասխանում է. «Հրամմա՞»։ Թմբկահարը՝ «Աստուծենց հրամանքը քեզ, (այսինքը) մեր թագավորեն սերին բերալ ա մին հինգ մանեթ, շեն կենա, շե՛ն»։

— Շե՛ն կենա,—կրկնում են բոլորը։ Սովորաբար ամեն մինը 20 կոպեկից մինչև 20 ռուբլի նվեր է տալիս։ Եվ երբ մինը ավելի պակաս է տալիս, քան թագվորի տնեցիները նրա տնեցիների կանչին տվել են, կռիվ է ծագում։ Թագվորի հայրը և կամ բարեկամները նախատում են նրան և ստիպում եթե ոչ ավելի, գոնե այնքան տա։ Այս կանչից գոյանում է 50—100 ռուբլի։

Կանչից հետո մի սկուտեղի վրա գրված երեք բաժակ են բերում և գինի ածելով առաջարկում հյուրերին, որոնք երեք բաժակ էլ միմյանց

Լանից խմում են՝ մեկը թագվորի, մյուսը հարսի և երրորդը քավորի կենացը։ Ով դժվարանում է կամ հրաժարվում է խմելուց, նրան որպես պատիժ չորրորդ բաժակն էլ են խմեցնում։

Մկրկոչեմ. Կիրակի երեկոյան, բայց առավելապես երկուշաբթի առավոտ, միայն մակարները հավաքվում են թագվորի մոտ և քեփ անում. «ծառի», «լույսերի» վրա եղած մրկեղենն ուտում, մնացածը իրենց մեջ բաժանում և ապա թագվորի և սրա ծնողաց հետ գնում այդ գերդաստանի ենթեցյալներն օրհնել տալիս և վերադառնում։ Այս ժամանակ քահանան կատարում է թագի վերացման ծիսակատարությունը, որի ընթացքում քավորը յուր սուրը բռնում է թագվորի և հարսի գլխին, որպեսզի արգելք շարքերին սրանց խփելու։

Այդ օրը, գիշերը թագվորն ու հարսը առագաստ են մտնում։ Հարսնաքույրը պատրաստում է անկողինը, մոտը դնում գինի, միրգ և գինու բաժակով փոքր ինչ մեղր։ Քավորը կտրան և մի կին դռան Լանը թաք կացած են լինում։ Խստությամբ պահանջվում է կուսության ապացույց տալանը, որ հարսնաքույրը տանում հարսի մորը և սկեսուրին ցույց է տալիս։ Եթե հարսը կույս չի լինում, որ սակավ է պատահում, շատ անախորժ դեպքեր են տեղի ունենում։ Մի քանիսը բավարարվում են միայն մի լավ թակելով և բավական երկար ժամանակ արհամարհելով, ուրիշներն ուղղակի վերադարձնում են հորը, և երկար խոսակցություններից հետո, զիջանելով հոր աված նվերներից, կրկին ընդունում։

Առավոտյան վաղ տղան վեր է կենում փախչում մի բարեկամի տուն, ամաչելով մինին երևալ։ Մի քիչ հետո գալիս են մոտ ազգական կանայք «աչքի լույս», այսինքն շնորհավորելու, որ հարսը կույս է եղել։ Ճաշին մատուցանում են «քյալլա-փալա» (ոտ ու գլուխ)։ Այս ժամանակ մի ինձոր են ման ածում, որի վրա ամեն մինը մի արծաթ գրամ է ցցում և ուղարկում հարսին։ Սա սիրով ընդունում և մինի առաջնորդությամբ գալիս բոլորի ձեռքերը համբուրում է։ Սրանք էլ համբուրում են նրա ճակատը և գովասանքներ թափում նրա գլխին։ Երևկոյան մոտիկ ազգական տղամարդիկ դավուլ-զուռնի առաջնորդությամբ թագվորին բերում են տուն, որ ամաչելով մոտենում է ծնողներին և համբուրում ձեռքերը։

Երբ հյուրերն արդեն վերադարձած են լինում, հարսը ջուր է տաքացնում և բերում բոլորի ոտներն ավազության կարգով լվանում և փոքր-ինչ խոնարհելով՝ համբուրում է. թեև շատերը թույլ չեն տալիս և մի մի քսան կոպեկանոց ձգում կոնքի մեջ, իբրև հարսին նվեր։ Ետ

լվանալիս հարսը զգուշանում է, որ ձախ ոտը առաջ չլվա, որպեսզի անհաջողություն չպատի։

Մյուս օրն առավոտյան շատ վաղ հարսը վեր է կենում ամբողջ տունը մաքրում, ավլում, աղբը դռան մոտ հավաքում և յուր քոշերն էլ վրան է դնում։ Երբ սկեսուրը վեր է կենում, գովում է հարսի ջանասիրությունը, և մի քանի կոպեկ դնում քոշերի մեջ։ Հարսը վերցնում է կոպեկները և նոր դին ածում աղբը։

Մի քանի շաբաթից հետո հարսի մայրը կամ հորեղբոր կինը վերցնում է մի քանի գաթա, մի հավ, մի քանի ֆունտ սապոն, մի սանրը, թել, ճաղեր, մի ձեռք հանգերձ և գնում թագվորի տունը «գլխը-լվա»։ Սա լուցացնում է հարսին, լվանում շորերը, այդ գիշեր էլ մոտը մնում և առավոտյան վերադառնում։

Երբ առաջին անգամ հարսը գնում է աղբյուր ջուր բերելու, յուր հետ ցորեն է տանում և լցնում աղբյուրի ակը[8]։

ՏՂԱՔԵՐՔ ԵՎ ԿՆՈՒՆՔ

Մինչդեռ կնոջ արգասավորությունը մեծ ուրախություն է պատճառում ինչպես ամուսնուն, այնպես էլ ամբողջ գերդաստանին, նրա ամլությունը դժգոհություններ և երբեմն ապօրինի կնապահության տեղիք է տալիս։ Սակայն դեռ այդ աստիճանին չհասած, ամուլ կինը զիմում է «փալճինների» միջնորդության և նրանց «զիր անել տալով» հույս է տածում երեխա ունենալու։ Երբ մարդկային միջոցները անզոր են գտնվում և հաճախ տեսնվող երազները տրամադրում են սրբերի օգնությունը հայցելու, վերցնում է մի սպիտակ խոյ և ոտաբոբիկ գիմում սրբի դուռը։ Այս տեսակի սրբերից Վարանդայում նշանավոր են Սարիբեկը, Ամարասի ս. Գրիգորիսը, Սարուշենի Ավետարանը, Սղնեքի ս. Հովհաննեսը և այլն։

Մոտենալով սրբի դռանը, ամուլ կինը երեք անգամ շոքեշոք պտտում է նրա շուրջը և ապա համբուրելով սրբությունը, չոքած և ձեռքերը գետնին հենած՝ անշարժ մնում է։ Այս ժամանակ մի անմեղ մանուկ վերցնում է մի կտոր քար և դնում նրա վզին։ Քահանան անմիջապես ձգում է նրա վրա յուր շուրջառը և աղոթքներ կարդում։ Մի կին էլ նրա մոտ հսկում է, որ ոչ ոք չդիպչի նրան և խանգարի նրա խընդրվածքը։

Կինը ջերմեռանդությամբ աղոթելուց հետո խոստանում է յոթը գյուղ ման գալ, «մատաղ հավաքել», ոչխար առնել և բերել «նրա ոտքի տակը», եթե յուր խնդիրը կատարի ու մի որդի տա։

Եթե այս միջոցը ևս չի օգնում, գնում երեք անգամ անցնում է տղա տվող Ծակ քարերից՝ նույն խնդիրը կրկնելով։

Միևնույն ժամանակ լսելով կախարդ կանանց, ամուլ կինը փոխում է իր ննջարանը, կարծելով թե այդտեղ քաջքեր կան, որ թույլ չեն տալիս որդի ունենալու։ Մութ ժամանակ տաք ջուր դուրս չի ածում, մութ տեղը ջուր չի խմում, որովհետև շար սատանան այդպիսի տեղերից պակաս չի լինում։ Երբեմն էլ չքերությունը «կոխից» առաջացած է համարում։ Այս պատահում է, երբ նոր պսակված ժամանակ հարսի մոտ շար և անմաքուր մարդիկ են գալիս։ Կոխված կինը յոթը տարի ամուլ է մնում, և եթե սրանից հետո էլ որդի չի ունենում, այն ժամանակ նրան տանում, սպանված մարդու գերեզմանի վրա ջուր են խմեցնում, ննջեցյալի տակով անց կացնում, կամ նոր պսակվածների տան կտրով ման ածում և այլն։

Մինչդեռ քաղաքում հղի կնոջ դրությունը փոքր-ինչ լավ է, գյուղում սաստիկ աննախանձելի է։ Գյուղացի կինը հղիության նույնիսկ վերջին օրերում չի ազատվում տնային ծանր աշխատանքներից. պատահել են դեպքեր, երբ կինը տղա է ծնել կուժը ուսին, աղբյուրի ճանապարհին և կամ այգում, միայնակ աշխատելիս։ Տատմոր օգնությունը բոլորին չի հասնում։

Երկունքը սկսված միջոցին հրավիրում են տատմորը և կնոջն առանձնացնում մի սենյակում։ Եթե երկունքը երկար է տևում, սկեսուրը փեշը ջուր ածած՝ առաջարկում է ծննդկանին խմելու, որով և ներվում են նրա՝ սկեսրոջ և կամ տան մյուս անդամների դեմ գործած հանցանքները։

Մոտիկ ազգական կանայք գալիս են օգնության և խփելով ծննդկանի մեջքին բղավում. «Ղոշուն էկա՞վ, թալանեցի՞ն տարա՞ն»։ Մեկն էլ հերթիկից մի ձու է վայր ձգում, ասելով. «Բերում ըս բեր, բերում չեմ՝ ես բերում ըմ»։

Երբեմն պատահում է, որ ծննդկանը ուշաթափվում է։ Իսկույն նրա մոտի կանայք, հավատալով, որ արդեն քաջքերը տիրապետել են ծննդկանին, սարսափած փախչում են. մնում են միայն արիասիրտները, որոնք քանդում են նրա գլխի փաթեթները և դնում գլխին կրնկ-

[8] Այս հոդվածը պատրաստելիս բացի այն, որ ես անձամբ ներկա եմ գտնվել մի քանի հարսանիքների, այլև իմ տված ծրագրով ինձ համար նյութեր են հավաքել տարբեր գյուղերից Պ. Պ. Տեր-Սարգսյան, Բալայան, Իշխանյան, Մելիք-Ալլահվերդյան, Ապրեսյան, Տերտերյան և ուրիշներ, որոնց շնորհակալություն եմ հայտնում։

քահոր գլխարկը, որպեսզի քաջքերը կարծեն, թե նա տղամարդ է։ Անմիջապես գալիս է կնքահայրը և սկսում ապտակել, խփել ծննդկանին, ամբողջ մարմինը հարել։ Մյուսներն էլ հրացան են արձակում, վառոդ վառում, քաջքերին հալածելու և ծննդկանին ուշքի բերելու նպատակով։ Եթե երեխան արդեն աշխարհ է եկած լինում, նրան վերցնում, տանում դնում են երդիկը, որով նվիրում են նրան քաջքերին, խնդրելով խնայել մորը։ Այս բոլոր ժամանակ սաստիկ զգուշանում են ծննդկանի անունը տալու, որպեսզի քաջքերը նրան էլ իրենց «դասը չդասեն»։ Բացի սրանից, ծննդկանի երեսին լեղակ են քսում և բարձի տակին էլ շամփուրներ, սանդերը, պողպատի կտորներ և հմայիլներ դնում։ Երբ ծննդկանը ուշքի է գալիս, նրան տալիս են մի կծիկ կծկելու և կամ մի ուրիշ գործ, որպեսզի նրանով զբաղվի և քաջքերին ուշք չդարձնի։

Երբ երեխան աշխարհ է գալիս, տատմայրը երեսը երեք անգամ խաչակնքելով և «հայր մեր» շշնջալով կտրում է պորտը և բամբակի թելով կապում։ Եթե երեխան տղա է լինում, պորտից ընկած կտորը տանում ձգում են մի ընդարձակ տեղ, որպեսզի երեխան մեծանալիս հասարակության մեջ մտնող ելնող լինի, շամաշի, իսկ եթե աղջիկ է, ձգում են մի ետ ընկած անկյուն, որպեսզի համեստ և ամոթխած ատանտիկին դառնա։ Դանակն էլ պահում են, որ մկրտության ջրով սրբեն։ Սրանից հետո տատմայրը ծննդկանին կանգնեցնում է տաշտի մեջ, Ս. Մարիամ Աստվածածնա աղոթքն ասելով կիսից վայր լողացնում և պառկեցնում։ Ապա երեխային է լողացնում, վրան աղ ցանում, փաթաթում շորերի մեջ և երեք անգամ խաչակնքելով՝ դնում ծննդկանի աջ կողմը։

Այդ ժամանակ տան «մշտուլուղչին» վազում ամենից առաջ ծնընդկանի ծնողների և ապա կնքահոր տնեցիներին «աչքի լույս» է ասում, ավետելով նորածնի աշխարհ գալը, որի փոխարեն և մի բան նվեր է ստանում։

Մի քանի բոպեից հետո ազգականներն ու հարևանները տեսության են գալիս, իրենց հետ բերելով ձվածեղ, խավիծ, եփած ձու և այլն։ Տատմայրը ծածկում է նորածնի երեսը և թույլ չի տալիս նորեկներին տեսնելու, մինչև որ նրանցից մի քանի կոպեկ և կամ մի «խաչաթ» չի ստանում։ Գալիս է նաև ատանամայրը, բերելով յուր հետ մի սպիտակ և մի կարմիր կտոր, աղնաթաթ։ Տնեցիները հյուրերին հյուրասիրում են թեյով և կամ դայնարով. սա պատրաստում են այսպես՝ մի ջրով լի կաթսայի մեջ դցում են զանճաֆիլ, կինամոն և հիլ ու երկար եփ տալիս։

Մի քիչ հետո հրավիրում են քահանային տունը «փարատելու», որովհետև պիղծ և քաջքերով լի են համարում։ Քահանան օրհնում է մի գավաթ ջուր, որը սրսկում են ծննդկանի սենյակում և ողողում տան ամանները։ Թեև այսպիսով տունն ու ամանները սրբվում են, սակայն ծննդկանը դարձյալ մնում է անսուրբ, նրան ոչ ոք ձեռք չի տալիս, նրան կերակրում են առանձին ամաններով, որ միմիայն տատմայրը կարող է մատուցանել և հետո էլ լվանալ։ Ինքը ծննդկանը նույնպես ինքն իրեն անսուրբ զգալով, զգուշանում է որևէ բանի դիպչելու։ Պատահել է, որ տատմայրը ամբողջ օրը բացակայել է, և խեղճ ծննդկանը բաղցած մնացել է, չհամարձակվելով հացատեղից յուր ձեռքով մի կտոր հաց վերցնելու։ Սակայն այս տևում է մինչև մկրտությունը, որ սրբում է նրան։ Մինչև այս ժամանակ, որ սովորաբար ութ օր է տևում, ծննդկանին ջրի փոխարեն գինի, պղպեղով պատրաստված տաք կերակուրներ և քաղցրեղեններ են տալիս։ Տատմայրն էլ օրը մի անգամ լողացնում է նորածնին և լվանում շորերը։

Մկրտության նախընթաց երեկոյին ծննդկանի տնից «սեղան» են ուղարկում կնքահորը, որ բաղկացած է լինում ղույգ թվով գաթայից, երկու ղույգ հացից, մի եփած հավից, մի գավ գինուց, մի շիշ օղուց և մի ղույգ գուլպայից։ Տանողը միևնույն ժամանակ հրավիրում է կնքահորը գալ մյուս օրը երեխան կնքելու։ Նույն երեկոյին ուղարկում են նաև քահանային մի ղույգ հաց, մի ղույգ մոմ, մի գավ գինի կամ մի շիշ օղի և հրավիրում գալ երեխային մկրտելու։ Մյուս օրը տատմայրը վաղ առավոտյան գալիս է և պատրաստում երեխային եկեղեցի տանելու։ Գալիս է և կնքահայրը, յուր հետ բերելով մի ղույգ մոմ, նարոտը և մի գունավոր թաշկինակ։ Գյուղերում սովորաբար եկեղեցումն են մկրտության խորհուրդը կատարում և միայն եկեղեցի չեղած դեպքում տանն են մկրտում և համարյա միշտ՝ թոնրի վրա։

Մինչդեռ եկեղեցում կատարում են մկրտության խորհուրդը, տատմայրը մի փոքրիկ շշի մեջ մեռոնաջուր ածած շտապով վերադառնում է տուն և լվանում ծննդկանի ձեռքերը, որպեսզի նրանք սրբված լինեն և կարողանան գրկել մեռոնված մանկան։ Լվացած ջուրն էլ ածում է սեմերը, իսկ շշի միջի ավելացած ջուրը տալիս տնեցիներին պահելու, որպեսզի ապագային կարողանան «հարամոտած» ամաններն ու իրերը սրբել։ Նույն միջոցին գալիս են և ատանամայրն ու ծննդկանի մայրը։ Առաջինը բերում է «ծննդգեվաթ», մեղրով ու շաքարով պատրաստված ծվածեղ ծննդկանի համար, իսկ երկրորդը մի ձեռք հագուստ նորածնի համար։

Վերջապես քահանան «Լույս 'ի լուսոյ» շարականը երգելով առաջնորդում է կնքահորը, որ երեխան բազուկների վրա առած բերում է տուն և տալիս ծննդկանին։ Սա համբուրում է կնքահոր ձեռքը և ապա առնում երեխան։ Քահանան յուր «Պահպանիչը» ավարտելուց հետո շնորհավորում է հետևյալ կերպով. «Շնորհավոր մկրտություն, աստված տվել է, ամուր ձեռքը պահն, հորով, մորով ու բախտավոր զավակ լինի. այն հացիցն ուտե, որ ոչ հատնե, ոչ պակասե»։ Հետո դառնալով ներկա եղողներին, ասում է. «Ես ձեզ համար մի մեռոնաթաթախ երեխա բերի, որով ամենքդ էլ ուրախ եք. դե՞հ, եկեք տեսնեմ դուք ինձ ի՞նչ եք տալու, որ ես էլ ուրախանամ»։ Նախ ծննդկանը և ապա կընքահայրն ու հանդիսականները համբուրում են խաչը և խաչհամբույր ձգում։ Սրանից հետո բոլորը նստում են ճաշելու, օրվա որ ժամանակն էլ լինի, միևնույն է, որից հետո արդեն ցրվում են։

Երեք օրից հետո տատամայրը նորից է գալիս և «երեխայի մեռոնը վեր անում»։ Քթի տակ աղոթքներ շշնջալով՝ լվանում է երեխայի մեռոն քսած տեղերը մի մաքուր ամանի մեջ, հետո լողացնում է նրան մաքուր ջրով, առանց սապոնի և ջուրն ածում թոնիրը։ Սրանից հետո արդեն նա յուր վարձն ստանում և գնում է։ Այնուհետև տնեցիներն են մինչև քառասունքը լրանալը երեխային օրը մի անգամ լողացնում։

Մի քանի օրից էլ ծննդկանն է վեր կենում։ Առաջին անգամ ոտը գետնին դնելիս նա երեք անգամ խաչակնքում է երեսը և աղոթքներ շշնջում։ Սակայն մինչև քառասունքը լրանալը նա տանից դուրս չի գալիս, արեգակի երես չի տեսնում, ոչ լողանում է և ոչ էլ գլուխը լվանում, այլ ամբողջ ժամանակը զբաղված է նորածնի հոգսով, այսպես՝ երբ տան մոտով ննջեցյալ են անց կացնում, իսկույն ինքը կանգնում և երեխային էլ բարձրացնում է. երբ մի ուրիշ ծննդկան և կամ մի կասկածելի անձնավորություն է գալիս ծննդկանի ննջարանը, նա չի թույլ տալիս նրանց ներս մտնելու, մինչև որ նորածնին դուրս չի հանել տալիս և ապա ներս բերում։ Եվ եթե նա այդպես չի վարվում, երեխան «կոխվում» է, այսինքն սաստիկ լղարում է և միշտ լալիս է։ Այդպիսի հիվանդությունից բժշկելու համար նրան լողացնում են կատվի ձագի և կամ հոր դուլպաների վրա, և եթե սրանք չեն օգնում. տանում են սպանված մարդու գերեզմանի վրա երեխայի ոտները լվանում են, հետո գերեզմանի քարերից մինը վերցնում են, երեխայի վրայով երեք անգամ պտտեցնում և վերջը մի ձու և մի մեխ թաղում գերեզմանի մոտ, որպեսզի հիվանդությունն այնտեղ մնա։

Քառասունքը լրանալիս ծննդկանը լողանում և գլուխը լվանում է ծղոտի վրա։ Հետո այս ծղոտը վառում են, որպեսզի քաջքերի հետքերը կորեն։ Ապա նախ օրորոցը, հետո երեխային և վերջը ծննդկանին դուրս են հանում տնից և «արևի երես դուրս բերում»։ Երեկոյին հավաքվում են բարեկամներն ու հարևանները և նրան ու երեխային եկեղեցի տանում, ուր քահանան կատարում է քառասունքի ծեսը։ Այնուհետև արդեն ծննդկանը աղատորեն կարող է դուրս գալ տնից։

Երեխայի եղունգները առաջին անգամ ոսկու կամ արծաթի վրա են կտրում, որպեսզի նրա մատները միշտ ոսկու և արծաթի մեջ լինեն։

Եվ երբ երեխայի առաջին ատամները երևում են, մայրը «կճեխաշ» է անում՝ եփում է ցորեն, լոբի, նոխուդ (սիսեռ), բակլա և հետը խառնում կաղին, քիշմիշ, լաբլաբու։ Հետո նստեցնում է երեխային մի սփոռոցի վրա և առաջը մի դանակ և մի հայելի դնում։ Ուրիշ փոքրիկ երեխաներ էլ կանչում նստեցնում է այդ երեխայի շուրջը և պատրաստված կճեխաշը ածում ատամ հանող երեխայի գլխին։ Մինչդեռ երեխաները խլխլելով կճեխաշը ուտում են, մայրը դիտում է, թե յուր որդին նախ դանակը, թե հայելին է վերցնում, որովհետև եթե առաջինը վերցնի, ապագայում մի եղբայր է ունենալու, իսկ եթե երկրորդը՝ մի քույր։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔ

Ընտանիքի մեջ ամենից հարգվածը մայրն է։ Մոր անմիջական իրավասության տակ է գտնվում ընտանիքի ներքին կառավարությունը, ընտանիքի դեկը։ Նա վերին աստիճանի աշխատասեր է և գործունյա, յուր անձնական օրինակով ազդում է ընտանիքի մյուս անդամների վրա։ Մայրը միաժամանակ հրամայում է հարսներին, աղջիկներին, թոռներին և թե հասակն առած, ամուսնացած որդիներին։ Ընտանիքի մեջ ոչինչ ծածուկ չէ նրանից. նրա սուր աչքը տեսնում է ամեն ինչ, նա գիտե ամեն մի գաղտնիք, բայց և վերին աստիճանի գաղտնապահ է։ Նա դեպի յուր ամուսինը շատ զգույշ է և միմիայն ամենակարևոր տեղեկություններն է հաղորդում կամ նրա հետ խորհրդակցում։ Այդ պատճառով ընտանիքի անդամներն իրենց կարիքները կամ սրտի դարդերը համարձակ հայտնում են մորը, հաստատ հավատացած լինելով, որ տան մյուս անդամները չեն իմանա այդ։

Հայրն այստեղ համարվում է մի հյուր կամ ավելի լավ է ասել, մի մշակ, որ աշխատում է դրսում, լցնում տունն ամեն տեսակ բարիքներով, այդ բոլորը հանձնում կնոջը և հաշիվ պահանջում ընտանիքում տեղի ունեցող ծախսերի մասին, հաստատ հավատացած լինելով, որ կինն ավելի ժլատ է, քան ինքը։ Սակայն հայրը տան մեջ մի խորհրդավոր անձնավորություն է, նրա տանը եղած ժամանակ ընտանիքում տիրում է սրբազան լռություն, հարսները ծածկում են երեսները, աղջիկները քաշվում են մի անկյուն և իրենց բանին կենում, ամուսնացած տղամարդիկ իսկույն հեռացնում են իրենց դավակներին, որպեսզի հայրը չտեսնե և նախատի[1]։

Հոր ու մոր այս հարգանքը տևում է մինչև նրանց ծերությունը։ Հետզհետե ծերանալով նրանք կորցնում են և իրենց դիրքը։ Որդիներն այլևս չեն լսում ծնողներին, հարսները ջղաք (խոսքին խոսք բերել) են տալիս, շատ անգամ ծաղրում, ծիծաղում։ Նույնիսկ ամենաբռնակալ հայրը ծերանալով և ուժից ընկնելով խոնարհվում, մեղմանում է և ամենածում որդիներից ու հարսներից։

Հորն ու մորը քիչ ու շատ հարգում են այն ժամանակ, երբ երկուսն էլ կենդանի են։ Նրանց կենդանության ժամանակ որդիներն ու հարսները ոչ մի դժգոհության նշան ցույց չեն տալիս։ Իսկ մեկը կամ մյուսը պրանցից պակասելով, կարծես պակասում է և կենդանի մնացածի հարգանքն ու իրավունքը։ Այս է պատճառը, որ ծերունիները հաճախ կրկնում են. «Աստված, էնքան մեր խեզանը պահիս, շքքորանը ես մեռնիմ, հարսին նան տգի ումուդ չընգնիմ»։

Կինն է ասում է ամուսնուն. «Քու շոքը ոչ պըկասի իմ գլխան. թա չի տղերքդ նան հարսներդ ինձ սաղ-սաղ կոլ կտան»։

Աշխատանքի անընդունակ մարդուն տան անդամները հավասարապես ատում են, նրա գոյությունը ձանձրույթ է պատճառում ամեն մի անդամին։ Մանավանդ վերջինիս գոյությունն անտանելի է, երբ իրենց կենդանության ժամանակ ընտանիքի անդամներից մի ջահելը մեռնում է։ Ամենքը կշտամբում են ծերունուն, ամենքն էլ վրան գոռում են. «Քավթառ գըլխակեր, էնքան կընենական ըս, որ լոխշիս գըլխըներն ոտիս, եռավ գիտրբագիտ ընիս»։ Խեղճ ծերունին ակամայից լռում է և ոչինչ չի ասում, կարծես ինքն էլ խոստովանում է, որ շատ է ապրել։

Սովորություն կա, երբ այդ տեսակ երկարակյաց ծերունին մեռնում է, և եթե նրա մահից հետո ընտանիքի անդամներից մեկն ու մեկը հիվանդանում է, պետք են մեռած ծերունու գերեզմանը փորում, դագաղը մարմնից բաժանում և աչքի մեջ մի փայտ տնկում, որպեսզի հիվանդն էլ չմեռնի։ Ասում են իբրև թե աչքը տան վրա է գնացել, և մինչև ընտանիքի անդամներից մեկին չտանի, չի հանգստանա։ Գլուխը մարմնից բաժանելով իբրև թե ազատվում են այդ փորձանքից։

Հոր մահից հետո ընտանիքի կառավարության դեկն անմիջապես անցնում է մեծ որդուն՝ եթե վերջինս չունի որևէ պակասություն և շատ փորձված է, իսկ եթե անընդունակ է և դիրք չունի թե տանը և թե հասարակության մեջ, այս դեպքում կառավարությունն անցնում է մյուս եղբայրներից ամենից ընդունակի ձեռքը։

Ընտանիքի գլուխը հոր մահից հետո համարվում է մեծ որդին, թեև չունի այն լայնածավալ իրավունքները, ինչ որ հայրն ուներ։ Մեծ եղբայրը հարգված է ընտանիքի անդամներից հավասարապես։ Նա միմիայն կատարում է թեթև աշխատանքներ և տարվա մեծ մասը տանն է լինում։

[1] Որդին կամ հարսը մեծ ամոթ են համարում հոր ներկայությամբ երեխային գրկել և գգվել, ուստի նրա ներս գալուն պես երեխային հանձնում են տան պառավին կամ աղջկան։

Այնուհետև նա համարվում է հասարակության մի պատվավոր անդամ (աղսախկալ) և միջամտում է հասարակական գործերին։ Նա հագնվում է պատշաճավոր և մաքուր, և որ գլխավորն է, շինամեջ (շնամաչ) դուրս գալիս հագած պիտի լինի կոշիկներ (չմշկներ), որից զզրկված են մյուս եղբայրները։

ԱԶԳԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԱՏԻՃԱՆՆԵՐ

Տատի մորը ասում են պապունց այան։
Տատին՝ տատի, այան, մեծադի, նանի։
Մորը՝ ազի, աքա, սիրուն նան կամ ուղղակի տալիս են անունը։
Հորեղբորը՝ ամի, պիծ ամի, զիզ ամի։
Հորեղբոր կնոջը՝ հարս, աքեր, հասի։
Մորեղբոր կնոջը՝ քռակին։
Մորեղբորը՝ դայի, քեռի։
Հորաքրոջը՝ հաքուր, աքեր կամ տալիս են անունը։
Մորաքրոջը՝ մաքուր, աքեր և անունը։
Քրոջը՝ բաջի, աքուր կամ անունը։
Եղբայրը եղբորը՝ բաբա, ապա, ապեր, օր. Մակիչ բաբա, պիծ ապա, մեծ ապա։
Կնքահորը՝ պելի, խըշաղբեր։
Կնքամորը՝ պլակին, սընամար։

ԽՆԱՄՈՒՆՔ

Կնոջ հայրը կոչվում է՝ աներ, հաներ։
Կնոջ մայրը՝ զոքանջ, ղենքուշ։
Ամուսնու հայրը՝ պատրոն։
Ամուսնու մայրը՝ սկեսուր։
Ամուսնու եղբայրը՝ տեզր, տազբր։
Ամուսնու քույրը՝ տալ։
Ամուսնու եղբոր կինը՝ տրգրակին։
Կնոջ քույրը՝ քենի։
Կնոջ եղբայրը՝ հընը տղա։
Կնոջ քրոջ մարդը՝ բաջանաղ։

Հարսի համար ամուսնու ազգականները կոչվում են պատրոննք, իսկ փեսայի համար հարսի բարեկամները՝ աներանք։

Կինը ամուսնու մասին խոսելիս սկեսրոջ առաջ կոչում է՝ տղադ, տալին՝ քու ախպեր, տեզրկնոջ՝ քու տազբր, իր ծնողների առաջ՝ փեսադ, ուրիշների առաջ՝ ինքը, մեր մարդը, մեր հայրը, մեր տղամարդը, Առաքելին հարը (որդու անունով), Սընամանց տղան (ազգանունով), իմ տարը և այլն, իրեն կոչում է աղա։

Ամուսինը կնոջը կոչում է. իր ծնողների առաջ՝ հարսը, կամ ծագումով, օրինակ՝ Բրդդբսարեն թոռնը, Գևուն աղջիկը։ Աներոջ մոտ՝ աղջիկդ, օտարների առաջ՝ մեր խիզանը, մեր տանըցին, կողակիցս, այսինչի թոռը կամ աղջիկը, կնոջը՝ ախչի։

Ընդհանրապես Վարանդայում գերդաստանները բազմանդամ չեն։ Շատ հազվադեպ է պատահում, որ մի քանի եղբայրներ երկար ժամանակ միևնույն հարկի տակ ապրեն։ Եղբայրներն ամուսնանալուց կարճ ժամանակ հետո բաժանվում, նոր գերդաստան են կազմում։ Ծնողներն ապրում են կամ ամուրի կամ նոր ամուսնացած որդու մոտ։ Բազմանդամ են լինում միմիայն երկրագործությամբ պարապող ընտանիքները, և սա էլ ունի յուր հարգելի պատճառը։ Երկրագործությամբ պարապելու համար հարկավոր են շատ աշխատավոր ձեռքեր, ուստի եղբայրներն սովորված ապրում են անբաժան։

Բաժանվելու գլխավոր պատճառը տեզրկնիկներն են լինում։ Վերջիններս ապրում են միմյանց հետ շատ անհաշտ, օր չի լինիլ, որ մի որևէ պատճառով երկու տեզերկնիկ միմյանց հետ չկռվեն, մանավանդ վերջիններիս մեջ շատ զարգացած է նախանձը, այսպես, օրինակ, ասում են. «տեզրակինը տեզրակնկան օձին ծակին կոզի», այսինքն՝ չի ուզենա, որ նա բախտավոր ապրի, այլ միշտ նեղության և թշվառության մեջ։ Բազմաթիվ օրինակներից առաջ բերենք ժողովրդական մի ասացվածք, որը շատ պարզ բնորոշում է ընտանիքի անդամների միմյանց հետ ունեցած հարաբերության չափը։

Պատմում են, իբրև թե մի հարս հիվանդ ժամանակ աղերսական ձայնով դիմում է ընտանիքի անդամներին և մի գդալ ջուր ուզում, ասելով.

Սկեսուր, սկեսուր՝ սկսրհան,
Սերտս էրեց, մի գդոլ ջուր.
Պատրոն, պատրոն պտրհան (պահարան),
Սերտս էրեց, մի գդոլ ջուր։
Տալիկ, տալիկ՝ սև սալիկ,

Սերտս էրեց, մի գդալ ջուր։
Տեգրակին, տեգրակին՝ օձին ծակին,
Սերտս էրեց, մի գդալ ջուր.
Նշանած, նշանած՝ ըստրծու խրզըհանած,
Սերտս էրեց, մի գդալ ջուր։

Սակայն այնքան քարասիրտ են լինում, որ ոչ մեկը գրանցից ջուր չի տալիս իրեն, մինչև ամուսինը գալիս է և հիվանդը դիմում է նրան ու ջուր խնդրում։ Ամուսինը տալիս է ջուրը, և նա խմելուն պես մեռնում է։ Այստեղից երևում է, որ ընտանիքի մեջ ամենասիրելին իր ամուսինն է։

Հաճախ սկեսրոջ և հարսների մեջ կռիվներ են պատահում, որ շատ անգամ տուրուդմփոցով է վերջանում։

Կռվի պատճառները լինում են.

Ա. Երբ սկեսուրը մի հարսին ավելի է սիրում, հարգում և պաշտպանում, քան մյուսին։

Բ. Երբ մի թոռան սիրում է ավելի շատ, քան մյուսին, մայրական խնամք է տանում, լավ հագցնում և յուր «ապիղ բալա», այսինքն միակ սիրելի որդի է կոչում։ Մյուս մայրերը նախանձում և սկեսրոջ հետ կռվում են։

Գ. Երբ մի հարս շատ աղջիկ է բերում։ Այս դեպքում ոչ թե միայն սկեսուրն է նրա հետ կռվում և սկսում ատել, այլև ընտանիքի մյուս անդամները, մինչև անգամ յուր ամուսինն սկսում է վատ աչքով նայել նրան և կծու խոսքերով սիրտը խոցոտել։ Սկեսուրն անտանելի հայհոյանքներ, անեծք է թափում հարսի գլխին։ «Քու հոր տունը պրիշակ մնա, խոխես տունը քընդրլական ը՞ս»։ Աչքալույս, կերուխում, կնունքի խնջույք տեղի չեն ունենում այս դեպքում։ Բարեկամները աչքալույսի փոխարեն մխիթարում են ծնողներին. «Աստած ձեզ պահի, վնաս չունի, եկող տարի էլ մի ղոչ տղա կը բերիս»։ Խեղճ կինը կարծես մահվան ոճիր գործած, լսում է յուր դատավճիռը և լռությամբ տանում ընդհանուրի այդ նախատինքը։

Վարանդայում աղջիկ բերելը մի դժբախտություն է համարվում։ Շատ դեպքեր են պատահել, որ մի քանի աղջիկ բերող կնոջ դուրս են արել տանից։

Աղջիկը ծնված օրից մինչև մահը ծնողների համար մի ծանր բեռ, մի մեծ հոգս է, մանավանդ աղքատ ընտանիքների համար. պատահում է, որ աղջիկները սնանկացնում և վերջին չքավորության մեջ են հասցնում իրենց ծնողներին։

Ծնողները ստիպված են աղջիկներին լավ հագցնել և հագուստի վրայից կախել արծաթե կամ ոսկե դրամներ՝ ամենաքիչը 20—30 ռ. արժողությամբ, այդ դրամներն աղջիկը պսակվելիս տանում է յուր հետ։ Վարանդայում աղջիկը շատ վաղ է նշանվում, համարյա 5—6 տարեկան հասակում, շատերին նույնիսկ օրորոցում են նշան դնում (օրորոցը խաղում)։ Նշանված մնում են 6—7 երբեմն ավել տարիներ։ Այսքան երկար ժամանակամիջոցում երկու կողմի խնամիները միմյանց հետ բարեկամություն են անում, փոխադարձաբար միմյանց հյուրասիրելով և օգնելով։ Բայց ծանրությունը ընկած է ավելի աղջկա ծնողների վրա։

Աղջկա ծնողները հաճախ հրավիրում և հյուրասիրում են փեսայի ծնողներին կամ բարեկամներին։

Ամեն նշանավոր տոն օր ստիպված «խոնչա» են ուղարկում խնամոնց տուն, որը բաղկացած է լինում գլխավորապես գաթայից, հալվայից, հավերից, մեղրից, գինուց, արաղից և այլն, արժողությամբ 1—3 ռուբլի։ Խնամոնց կողմի բարեկամներից եթե մեկը պսակվելու լինի, աղջկա տերը պետք է «խոնչա» տանի «խալաթ» տա և հարսանիքի ժամանակ «կանչ» (դրամական նպաստ) անի։ Այս բոլորը մոտավորապես արժենում է 10—15 ռ.։ Բացի դրանից, աղջկա տերն օգնում է յուր խնամուն վարելու, ցանելու, հնձելու, կալսելու և այլ ժամանակ, իսկ կանայք բուրդ գզելու, մանելու, գործելու կամ թե թութ թափելու, արտը քաղհանելու ժամանակ առանց վարձատրության հավասար աշխատում են խնամոնց հետ։ Այսքանը մինչև հարսանիքն է։ Հարսանիքի ժամանակ աղջկա ծնողները բավական ծախք են անում, լավ բաժինք և փեսային արծաթե գոտի խալաթ են տալիս, իսկ փոխարենը շատ չնչին «կանչ» են վերցնում։

Վերև հիշածներից պարզ երևում է, թե որքան ահագին ծախք են անում ծնողները, և այդ բոլորը դեռ մեկի համար, իսկ եթե ենթադրենք, թե մեկի փոխարեն մի քանիսն են, այն ժամանակ երևակայելի է ծնողների դրությունը։ Պատահում է, որ միաժամանակ նշան են դնում մեկ, երկու և երբեմն երեք աղջկա, և ծնողները ստիպվում են երեք տան հետ բարեկամություն անել։

Այս է պատճառը, որ Վարանդայում աղջիկ բերելը տնաքանդություն է համարվում և հաճախ կռիվների պատճառ դառնում։ Ընդհանրապես, երբ հարսը տղա է բերում, ամբողջ ընտանիքում ցնծություն

և ուրախություն է կատարվում, տեղի են ունենում աչքալուսանք, խընջույք, կերուխում։ Տղաքեր հարսին զանազան խալաթներ են տալիս. «Մեջդ կանանչ կենա» կրկնում է ամեն մի եկող։ Սկեսուրը տղաքեր հարսին կերակրում է և լավ խնամում։ Սկեսրոջ այդ վերաբերմունքը մյուս հարսերի նախանձը շարժում է և կռվի պատճառ դառնում։

Դ. Չբերություն պատճառով ևս կռիվներ են ծագում հարսի և սկեսրոջ միջև։ Երբ հարսը չբեր է, սկեսուրը այս դեպքում ավելի շարանում և շարունակ անիծում է. «Ծոիդ կտրե հունց վէր իմ խոխեն ծոխը կտրեցիր, ա՜յ չոր տառեխ»։ Անեծքը դեռ բավական չէ, երբեմն էլ հարսին դուրս են անում տանից, փոխարենն ուրիշ հարս կամ աղջիկ բերելով, կամ թե խզճում են և չեն ուզում տանից դուրս անել, միայն երկրորդ կին են բերում, որպեսզի երեխա բերի և որդին անժառանգ չմնա[1]։ Երկրորդ կնոջ երևան գալը պատճառ է դառնում կռիվների ու տուրուդմփոցի, որ տեղի է ունենում ապօրինի և հարազատ կնոջ միջև, կամ թե սկեսրոջ հետ։ Վերջինս ավելի պատվում, մեծարում է ապօրինի հարսին և ընդհակառակը՝ հարազատ հարսից միշտ գանգատվում է որդուն։ Այստեղից առաջանում են անվերջ կռիվներ և երկպառակություններ։ Հարազատ կինն այլևս չկարողանալով տանել այդքան զրկանք ու նախատինք, թողնում ու հեռանում է։

Ե. Հարսի ծածուկ մի տեղ գնալը կամ մի բան ուտելը, յուր պարտականության մեջ ճշտապահ չլինելը, վերջապես, օտար մարդու հետ խոսելը կռիվների պատճառ են դառնում։

Սկեսուրը հարսի հետ կռվելիս անտանելի հայհոյանքներ է թափում, գլխավորապես ծնողների հասցեին, օրինակ՝ «Քու մոր մագարը կտրե, որ քեզ նմանը ինձանու քցից». «Քու հար շոն դառնա», «Քու մոր մարդը՝ մեռնի»։ Հարսը լսում է այդ բոլորը և համբերում, նա ոչ մի զժգոհության նշան ցույց չի տալիս, մանավանդ երբ նորահարս է։ Մի քանի տարվա հարսն այդ տեսակ դեպքերում կամ քթի տակին փընթփնթում է և դրանով արտահայտում յուր դժգոհությունը կամ ուղղակի պատասխանը դարձնում է և սկեսրոջը հայհոյում։

Ընդհանրապես հարսները շատ ամոթխած և համբերատար են լի-

[1] Պատմում է երբեմն մինչև չորս կին են պահում, միայն թե երեխա ունենան։ Թաղլար գյուղում մի դարբին, որ ուներ մեծ հարստություն, պահում էր չորս կին, բայց ոչ մեկից երեխա չուներ. փորձում է բերել հինգերորդը։ Այս վերջինը հղիանում է, բայց դարբնի բարեկամները կամենալով դարբնի հարստությանը տիրանալ, հղի կնոջը խեղդում են և խեղճ դարբնին թողնում անժառանգ։

նում։ Սկեսրոջ անտանելի վարմունքը, զրկանքը, անեծքն ու ծեծը հարսը լռելյայն տանում է և ոչնչով չի փոխարինում, միայն, ինչպես ասում են, «դանակը ոսկորին հասնելուց հետո» այլևս չի համբերում և «ջոդաբ» է տալիս։ Պատճառ, որ Վարանդայում աղջիկը շատ շուտ են մարդու տալիս։ 13 տարեկանում ամուսնանալը սովորական երևույթ է այստեղ։ Մատաղ հասակում աղջիկը զրկվելով ծնողների խնամակալությունից և ընկնելով իրեն բոլորովին անծանոթ մի ընտանիք, կորցնում է յուր ազատությունը և համարձակությունը։ Նա զատապարտվում է լռության և անվերջ համբերության։ Սկեսուրը հայհոյում է, մազերը քաշում, մինչև անգամ ծեծում, հարսը համբերում է և չի համարձակվում ամուսնուն գանգատվել, իսկ եթե փորձում է գանգատվել, փոխարենը կամ հայհոյանք և կամ ծեծ է ստանում։ Մինչև անգամ երբ աղջիկը հուսահատված դիմում է ծնողներին և յուր վիճակի մասին դանդատվում, վերջիններս ոչ միայն չեն ուզում լսել նրա գանգատը, այլև նախատելով ետ են ուղարկում սկեսրանց տուն, առարկելով, թե հարսը պետք է համբերե։ Հարսը բացի տեգերկնիկների և տալիրի հետ խոսելուց, ուրիշների հետ երկար ժամանակ անխոս է մնում։

Սկեսուրի հետ չի խոսում մինչև երեխա բերելը[2]։ Կեսարի հետ՝ մինչև մահը, իսկ եթե սա ցանկանում է, որ հարսը յուր հետ խոսի, մի ընծա է տալիս և հետը խոսեցնում, բայց դա լինում է այն ժամանակ, երբ հարսը տղային կամ աղջկան պատկում է։

Տեղրի հետ մնում է անխոս մինչև 10 տարի և խոսում է միմիայն տեղրի հաճությամբ. կնքահոր հետ՝ մինչև մահը, կնքահոր կողմի բարեկամներից ամենափոքր երեխայի հետ նույնիսկ անխոս է մնում։

Գերդաստանի մեջ ամենից շատ կռվում են տեղերկնիկները։

Կռիվը ծագում է հետևյալ պատճառներից։

Երբ մեկը յուր երեխայի համար նոր հագուստ է կարում, մյուսը՝ ոչ. մանավանդ երբ հարսներից մեկը երեխա չի ունենում և պահանջում է, որ նոր կտորից իրեն ևս բաժին տան։

Երբ լվացքի ժամանակ մեկը շատ լվացք է անում, մյուսը՝ քիչ։

[2] Պատմում են, թե Նոյի կինը հարցրել է յուր հարսներին, թե ինչո՞ւ թոռները չեն վազել. սրանցից մինն էլ պատասխանել է, թե թոռի միջից ջուր է դուրս գալիս։ Ասածն շատ անհաճո է եղել, որ հարսը համարձակվել է սկեսուրի հետ խոսել, ուստի և հրամայել է, որ տափից ջուրը բարձրանա և ջրհեղեղ լինի։ Պատմող կինը սասարկ հարձակման էր շուշեցի հարսների վրա, որոնք խոսում են իրենց սկեսուրների հետ։ Ստան. խմբ.։

Երբ մեկին շատ են բանեցնում, մյուսին՝ քիչ։

Երբ մեկը ճակատին ոսկեդրամներ է շարում, մյուսը՝ ոչ։

Երբ տեգերկնիկը ծածուկ մի բան է կատարում և մյուսները հայտնում են իրենց ծնողներին։ Եթե մեկի օժիտը շատ են բանեցնում, մյուսինը քիչ։

Երբ մեկն ունենում է մի կամ մի քանի փեսա՝ և նրանց ծածուկ ուտեցնում, խմեցնում է։

Երբ մեկի ամուսինը ծածուկ սիրում է տեգերկնիկներից մեկին և ինքն իմանում է։

Կռվելու ժամանակ միմյանց հայհոյում են. «Պոչերդ կտրիմ», «Ծամերդ տըխտակին սանրիմ», «Աչքերդ հըրթըլուսին մնա, նոքդ ճըլկըվորին փոսին», «Ծծերավդ չանգալ ընկնիս», «Քանց ջուր շատ քրքքար կյաս», «Մին ծըկիս, հըզևր փքիս», «Հանց օրի կյաս, օրին ծնընդկանը թըմաշա կյա»։

Ամուսինների մեջ ևս կռիվներ են պատահում, բայց ոչ այնքան ստեպ, սակայն նույն ծեծը, նույն կռիվը, նույն հայհոյանքը տեղի է ունենում և այստեղ։

Առավելապես կռվում են.

Երբ կինը ծածուկ սիրած է ունենում, և ամուսինն իմանում է։

Երբ սկեսրոջ հետ «յոլա» չի գնում, և սա գանգատվում է որդուն։

Երբ աղջկա ծնողները խոստացած օժիտը չեն տալիս և ձգձգում են։

Երբ ամուսինն օտարությունից գառնալով իմանում է, որ կինն իրեն դավաճանել է։

Երբ մարդն ուզում է կնոջ բերած գորգը կամ կապերտը ծախել և պարտքը տալ, կինը հակառակվում է և թույլ չի տալիս։

Երբ ընտանիքի մյուս անդամները շատ են վիրավորում և վշտացնում կնոջը, վերջինս մի քանի անգամ գանգատվում է ամուսնուն և բավականություն չստանալով թողնում, գնում է հորանց տուն։

Ամուսինը գնում է մի կերպ համոզելու և տուն բերելու, կինը դիմադրություն է անում և չի համաձայնվում, այստեղ ամուսինը դիմում է ծեծի և բռնությամբ տուն բերում։

Աշխատանքն ընդհանրապես ընտանիքի անդամների մեջ չի բաժանված։ Բուրդ գզել, մանել, գորգ ու կապերտ գործել, այս և սույնանման գործեր կատարում են միասին, և ոչ ոքի մասը որոշված չէ։ Որոշված են միմիայն հետևյալ աշխատանքները.

Կերակուր եփելը և հաց թխելն սկեսրոջ պարտքն է, տուն ավլելն ու ջուր բերելն աղջիկն է կատարում, տղամարդկանց պլուխն ու ոտքերը

լվանում է հարսներից փոքրագույնը, իսկ կով կթել, խնոցի հարել, խմոր հունցել և այլ նման գործեր կատարում են մյուս հարսները։

Բայց վարանդացի կնոջ գործունեությունը դրանով չի վերջանում։ Բացի տնային գործեր կատարելուց նա օգնում է նաև յուր տղամարդին դաշտում։

Գյուղացի կինը աշխատանքի տեսակետից ոչնչով ետ չի մնացել յուր ամուսնուց։ Նա կատարյալ տնտես է տանը և ժրաջան մշակ՝ դաշտում։

Տան աշխատանքը վերջացնելուց հետո նա շտապում է դաշտ։ Պետք է տեսնել, թե ինչպես նա մանգաղը ձեռքին հնձում է արտը և խուրձեր կապում, խուրձերը կրում կալը, աշան անում, կալը կալսում, թեղում, ցորենը շվատում, ջրաղաց տանում, ալյուր պատրաստում։ Արտը քաղհանում, խոտը հարում, չորացնում և դիզում։ Այդ դեռ բավական չէ, այդում ևս թուք թափելիս կամ խաղող քաղելիս հավասար աշխատում է յուր ամուսնու հետ։ Մինչև անգամ անտառ է գնում, փայտ բերում, պտուղներ ժողովում, ահագին դագանակը ուսին տավարը կամ ոչխարը պահում։ Մի խոսքով, կինը գյուղացու համար յուր անբաժան ընկերը, յուր աջ կուռն է։ Նա մինչև անգամ կովի ժամանակ ահագին դագանակը ձեռին պաշտպանում է յուր ամուսնուն։ Դաշտային աշխատանքը երբեք չի խանգարում գյուղացի կնոջը յուր տնային գործերը կատարելու։ Նա այդ բոլոր գործերի համար ժամանակ է գտնում։ Ուշ գիշերը, մինչդեռ ամենքն օրվա աշխատանքից հոգնած հանգիստ են առնում, կինը նստած ճրագի աղոտ լույսի տակ կամ տղամարդու պատռոտած շորերն է կարկատում, կամ երեխաների համար գուլպա գործում, պատռածը կարում, կեղտոտ շորերը լվանում, մաքրում։

Եթե ժամերով որոշելու լինինք նրա աշխատության չափը, կարելի է ասել, որ նա ամառը բանում է օրական 18 ժամ և հանգստանում է միայն 6 ժամ։ Գյուղացի կինը մինչև անգամ չի հանգստանում կիրակի և տոն օրերին։ Սակայն այդ բոլոր աշխատանքը նա կատարում է առանց հոգնելու, առանց մի փոքր տրտունջ հայտնելու։ Նա գիտե, որ յուր ամուսինն այդքան աշխատանքը միայնակ չի կարող կատարել, ուստի օգնության է հասնում, և ո՞վ կարող է ասել, թե դա մի թույլ արարած, մի քնքուշ կին է։ Ամառը մարդու չափ աշխատում է, ձմեռը գորգ ու կապերտ (որ շատ տարածված է գավառիս բնակիչների մեջ) է գործում, վաճառում, հարկ ու բեգարը վճարում, տան կարիքները հոգում։ Այսքան մեծ է վարանդացի կնոջ կոչումը և աշխատանքը, բայց և այնպես ոչ մեկը չի գանգատվում, այլ կատարում են միասին և սիրով։

Բարոյական հասկացությունները հետզհետե փոխվում են այս գավառում։ Այժմ շատ գյուղերում, համարյա առանց բացառության, նկատվում են վատառողջ երևույթներ, որոնք և տարածվում են շրջակա բնակիչների մեջ։

Վարանդան, որ սրանից տասնյակ տարի առաջ ներկայացնում էր մի կուսական երկիր, ուր թագավորում էին բարոյականությունն ու անարատ սերը, այժմ նահապետական այդ պարզ ժողովուրդն սկսել է արդեն տեղի տալ ու նահանջել բարոյական ավանդական կանոններից։ Վարանդացի կինը, որ գիտեր հաշտվել ամեն տեսակ դառն պայմանների հետ և բացի յուր ամուսնուց, ուրիշին չէր ճանաչում, այժմ սիրում է պճնվել և ջահելներին դուր գալ։ Բարոյական կանոնների խախտումներ նկատվում է գլխավորապես Թաղավարդ, Ավետարանոց (Զանախչի), Թաղլար, Գիշի, Ճարտար, Քաթուկ և Նախիջևանիկ գյուղերում։

Բարքերի անկման գլխավոր պատճառները կարելի է համարել.

Ա. Պանդխտությունը, որ սաստիկ տարածված է գավառիս բնակչության մեջ։ Գլխավորապես պանդխտում են Բաքու, Զաղախ, Պետրովսկ և Անդրկասպյան երկրները։ Վարանդացուն տակավին նոր ծանոթ այդ երկրները, մանավանդ Բաքուն՝ յուր նավթահորերով, գրավել և գնել է։ Օտար երկրների հարստությունից շլացած, վարանդացին ծախում է յուր եզն ու գոմեշը, այգին ու արտը և դիմում հարստության ու ախտերի այդ բույները։ Տարիներով նա քաշքշվում է այդտեղ, երեսի վրա թողնելով ջահել կնոջն ու երեխաներին։ Նա գրավվում է օտար աշխարհի թեթևաբարո կյանքով, ընկնում է այդ հոսանքի մեջ և վերջիվերջո կամ կուլ է գնում, կամ թև շոր կմախք դարձած ու զանազան ախտերով վարակված տուն դառնում։ Խեղճ կինը տարիներով սպասում է յուր ամուսնու վերադարձին, համբերությամբ տանում է ամեն տեսակ զրկանք, քամում է դառնության բաժակը մինչև վերջին կաթիլը, միայն թե չի ուզում դավաճանել յուր ամուսնուն, նրան, որի հետ կապել է յուր բախտը, յուր պատիվն ու կյանքը։

Սակայն բնության այս թույլ արարածը երկար չի կարողանում դիմանալ։ Շարունակ լուրեր է լսում, իբր թե յուր ամուսինն օտար կին է պահում, մտադիր չի տուն դառնալու, կամ թե թղթախաղով և հարբեցողությամբ վատնում է յու բվերջին կոպեկը։ Այդ տեսակ աննպաստ լուրերը, ամուսնու անտարբերությունը դեպի յուր ընտանիքը, կարիքը

և վերջապես կրքերը ակամայից դուրս են հանում կնոջը յուր առագաստից և ձգում բախտի քմահաճույքին։

Բ. Երկրի դիրքը։ Առհասարակ նկատված է, որ այդեշատ տեղերում շատ է տարածված անբարոյականությունը։

Գ. Գործարանները։ Սա կարելի է համարել անբարոյականության բուն աղբյուրը։ Վարանդայի շատ գյուղերում կան մետաքսի գործարաններ, ուր տղա և աղջիկ, թվով մոտ 100, բանում են միասին։ Հսկողությունն այստեղ շատ թույլ է, մանավանդ որ գործակատարները նույնպես ջահել և ամուրի երիտասարդներ են լինում։ Ծնողների հսկողությունից հեռու, աղջիկներն ասում, խոսում և կատակներ են անում տղաների հետ և հետզհետե այնպես է լինում, որ ճարպիկ տղաները շատ հեշտությամբ կարողանում են մոլորեցնել աղջիկներին։ Գործարանն ունի մի առանձին բաժանմունք, որտեղ բանում են միմիայն պառավ կանայք, այդ պառավները նույնպես մեծ դեր են խաղում աղջիկներին մոլորեցնելու գործում՝ միջնորդի դեր կատարելով։

Դ. Ներկարարները, որոնց խանութը կանայք ազատ մուտք են գործում։

Ե. Մանրավաճառները, որոնք շարունակ տնետուն շրջում են և առևտուր անում, գլխավորապես կանանց հետ։

Զ. Տատմայրերը, որոնք միջնորդի դեր են խաղում և շատ անգամ մոլորեցնում կանանց։

Է. Տեղային երաժիշտները։

Ը. Զորքը։

Վարանդայում գլխավորապես ջահել աղջիկներին ամուսնացնում են հասակն առած մարդու հետ, և երբ կինը հասնում է յուր արբունքին, մարդն արդեն ծերացած է լինում, և սա պատճառ է դառնում կնոջ շեղվելու ճանապարհից և սիրելու ավելի ջահելներին։

Գյուղի ջահելները զանազան միջոցներով աշխատում են գեղեցիկ հարսներին ձեռք ձգել, մանավանդ երբ վերջիններիս ամուսինները բացակայում են գյուղից։ Ջահելները մի տեսակ պարծանք և քաջություն են համարում, որ կարողացան այսինչ կնոջը որսալ, նույնիսկ պարծանքով պատմում են իրենց շրջանում։

Եթե տղամարդն ուզում է մի հարսի ձեռք ձգել, մի առանձին տեղ հանդիպելիս աչքով է անում[1]։ Եթե կինը նույնպիսի նշանով պատաս-

[1] Աչքով անել՝ նշանակում է ձախ աչքի կոպերը միմյանց մոտեցնել և աջը բանալ, որով արտահայտում են իրենց սերը։

խանում է, նշանակում է համաձայն է, և այնուհետև որոշում են տեսակցության տեղը և ժամանակը։

Պատահում է, որ կինն է մոլորեցնում տղամարդուն, այդ դեպքում կինը նրան ծաղրում, զանազան ակնարկներ է անում, հայհոյում է, կամ տեսնելիս ճմլկոտում է և կամ թվելով տղամարդի զանազան պակասությունները, նրան բարկացնում է։ Այս տեսակ միջոցներով կինը հայտնում է յուր ցանկությունը, եթե տղամարդին դուր է գալիս՝ առիթ է տալիս շարունակելու և խոսակցությունը հետզհետե փոխվում է սիրային ակնարկների, ապա որոշում են տեսակցության տեղը։ Իսկ եթե տղամարդուն դուր չեն գալիս կնոջ ակնարկները, մի սուր նկատողությամբ վերջ է տալիս խոսակցությանը և հեռանում։

Տեսակցության տեղերը լինում են գետերը, ուր կանայք գնում են լվացք անելու, և երկու սիրահարներ նշանակած տեղը միմյանց հետ տեսակցում են։ Անտառները՝ ուր տղամարդիկ և կանայք գնում են պտուղներ ժողովելու։

Ուխտատեղիները, ուր մի քանի ընտանիք գիշերում են մի վրանի տակ։ Արտերը, ուր գնում են քաղհանելու։ Ջրաղացները։ Տները։ Այրի կամ ամուսինն օտարության գնացած կանայք սիրածի հետ շատ անգամ տեսակցություն են ունենում հենց իրենց տներում, երբ արգելք չկա։

Սիրահարական դեպքեր Վարանդայում հազիվ են պատահում։ Գլխավորապես սիրահարություններ տեղի են ունենում քիչ ու շատ հոգսերից ազատ երիտասարդների և հասակն առած աղջիկների միջև։

Երկու սիրահարներ իրենց սերը թաքցնում են ամենքից, նույնիսկ իրենց ծնողներից, որովհետև դեպի այդ տեսակները ժողովուրդը զզվանքով է վերաբերվում և երես առած են անվանում։ Այդ է պատճառը, որ շատ անգամ այդ տեսակ սիրահարության վերջը եղերական է լինում։ Պատճառ՝ ծնողները բոլորովին անտեղյակ իրենց աղջկա կամ տղայի սիրահարությանը, նշանում են իրենց ցանկացած անձնավորության հետ։ Որդիները չեն համաձայնվում իրենց սիրաը բանալու ծնողների առաջ և երբ տեսնում են՝ այլևս հնար չկա ազատվելու կամ ինքնասպանություն են գործում, կամ թե ծածուկ փախչում են սիրածի հետ։

Սիրահարական դեպքերի հաճախ չկրկնվելու պատճառը կարելի է համարել նախ այն, որ Վարանդայում աղջիկներին ամուսնացնում են վաղ։ Ամուսնացող աղջիկների ամենամեծ տոկոսը կազմում է, ինչպես վերը հիշեցի, 13 տարիքը, իսկ նշան դնում են, ավելի վաղ՝ 6—7 տարեկանում։ Պարզ է, որ 12 տարեկան աղջիկը տակավին տեղեկություն չունի կյանքից և չգիտի, թե ինչ է սերը, ուստի հեռու է նրա մտքից և սիրահարությունը։

Տղամարդիկ ևս մանուկ հասակից ծանրաբեռնված լինելով ընտանեկան հոգսերով, ժամանակ չեն ունենում սիրահարության ետևից ընկնելու։

Երկրի դիրքն ու կլիման ևս անմիջական ազդեցություն են ունենում։

Ահագին, մինչև երկինք բարձրացող լեռները, թանձր և անմատչելի անտառները, շարունակ մշուշով պատած երկիրը, հաճախ տեղացող անձրևներն ազդել են վարանդացու բնավորության վրա. նա դարձել է սառը, մտախոհ, լուրջ և անտարբեր դեպի շրջապատող առարկաները։ Մարդը դարձել է իշխող և հրամայող, իսկ կինը՝ հպատակվող և ենթարկվող։

Տղաները և աղջիկները միմյանց հետ քիչ հարաբերություն ունեն։ Աղջիկը հասնելով ութ տարիքի, կտրվում է դրսի աշխարհից և փակվում տանը, իսկ դուրս ելնելուց աչքերը գետին ձգած շտապում է գործին, ճանապարհին տղամարդ պատահելիս կամ փոխում է ճանապարհը, կամ երեսը դարձնելով դեպի հակառակ կողմը, քարացած կանգնում է մինչև տղամարդու անցնելը։ Բայց և այնպես այդ չի խանգարում աղջիկներին՝ աշխատել երիտասարդներին դուր գալու։

Աղջիկները, սկսած ամենահարստից մինչև ամենաաղքատը, մաքուր են հագնվում, հագուստներից կախում են դրամներ, մեջքին կապում արծաթե քամար, գլխներին ձգում կարմիր դիպակ (շարդաթ), որպեսզի կարմրությունը տա երեսին և դեղնցիկ երևան, քայլում են սիգաճեմ, երկար ծամ են պահում և գեղեցիկ հյուսում, գոտին պինդ կապում են, որպեսզի կուրծքը դուրս ցցված երևա։ Աշխատում են ամոթխած երևալ և երիտասարդներին տեսնելիս երեսները դարձնում են դեպի պատը ու աչքի տակով նայում։

Երիտասարդներն աղջիկներին դուր գալու համար իրենց միջոց գործ են դնում.

1. Երգելը։ Լավ ձայն ունեցող և լավ երգող երիտասարդին աղջիկները շատ սիրում են։

2. Քաջությունը, որ երիտասարդները ցույց են տալիս ջիրիդի, գոանմարտի, մահակակռվի և այլ խաղերի ժամանակ։

Լավ պարելը, ճաշակով հագնվելը, ուսումը ևս մեծ դեր են խաղում այդ դեպքում։

Ամենից շատ դուր են գալիս աղջիկներին օտարությունից դարձած և նոր ձևի հագնված երիտասարդները։ Վերջիններս ոչ միայն աղջիկների ուշադրությունն են գրավում, այլև մայրերի նախանձն են շարժում, սրոնք ամեն միջոց գործ են դնում նրանց իրենց փեսայացնելու։

Տղա և աղջիկ միմյանց հետ տեսակցում են.

1. Բինաներում, ուր աղջիկները գնում են կաթ կամ յուղ բերելու, այնտեղ հանդիպում են տավարածներին և միմյանց հետ խոսակցում։

2. Եկեղեցիներում։ Վարանդայում ջահել հարսներն ու աղջիկները տարևկան երկու անգամ են եկեղեցի գնում՝ Սաղկազարդին և ուիթուրբաթ գիշերը։

Սիրահարներն այդ դիշեր փոքրիկ երեխայի միջոցով որոշում են տեսակցության տեղը, և մինչդեռ շարունակվում է ժամերգությունը, աղջիկն աննկատելի կերպով դուրս է գնում եկեղեցուց և շտապում տեսակցության տեղը։

3. Արտերում՝ քաղհան անելիս։

4. Այգիներում՝ թութ թափելիս։

5. Անտառներում՝ պտուղներ ժողովելիս։

6. Միջատեղ, ուր հավաքվում են բավականին թվով աղջկերք և քուրդ զղում։ Մի առիթով գալիս է երիտասարդը և դևպի սիրած աղջիկը դանազան ակնարկներ անելով հայտնում է յուր սերը։

7. Փողոցներում պատահելիս աղջիկը կանգ է առնում մինչև երիտասարդի անցնելը, իսկ վերջինս աղջկա մոտովն անցնելիս մի բան ասում և հեռանում է։

8. Աղբյուրներում, ուր աղջիկները գնում են ջուր բերելու, իսկ երիտասարդները, տանում են կենդանիներին ջրելու, և այդ ժամանակ միմյանց հանդիպում են ու սիրում։

Սիրահարության ժամանակ երբեմն զանազան սիրահարական երգեր են հորինում և երգում[1]։ Այդպիսի երգեր լինում են և թուրքերենով

[1] Բերենք այդ երգերից մի նմուշ։

Տղան

Սարերը ձինը կոխալ ա,
Քա՛րհա, ես հո՞նց կյամ,
Փողոց, փողոց պղնձի ա,
Քա՛րհա ես հո՞նց կյամ։
Կտոր, կտոր, լուսնունկյա ա,
Քա՛րհա, ես հո՞նց կյամ։
Ձեր պառավը մրթմրթում ա,
Քա՛րհա, ես հո՞նց կյամ։

Սիրահար երիտասարդը ցանկանալով երկրորդ անգամ սիրած աղջկա հետ առանձին տեսնվել ու խոսել, յուր բարեկամ մի հարսի կամ աղջկա հայտնում է յուր ցանկությունը։ Միջնորդ հարսը մի առիթով հայտնում է որոշված տեղը, ապա գալիս է տղան և իրեն ձևացնելով գործին բոլորովին անտեղյակ, հարցնում է. «Ախչի՛, թորնըքքիս»։ «Հընչիդ ա, քիս ընք սեր ընելու», պատասխանում է միջնորդը և ավելացնում. «Մի հարս էլ չըս պուհրում, թա մեզ նըհետ պերենք, էս չիմաններս շոռ ածինք»։

«Դե հորա, մին աղջիկ ճարի օղիմ ըլի, բաս հինչիս բարեկամն ըս».

— Յանի օղըմ ըս պտակվիս, ախչիկ չկա՞։

«Բա որ օղիմ վուչ, կասի՞մ»։

— Դե օղըմ ըս մեր Մրնըշական լավ ախչիկ չըս ճըրըլական, եկ էնա օղի,—ասում է միջնորդը և ցույց տալիս ընկերուհուն։

Աղջիկն ամաչելուց սաստիկ կարմրում է և կմշտում հարսի կուրը։

«Ախչի, յանի հինչ ըս կոռնըս կմշտում, մեր Գրսպարին անա լավ տղի ըս քընական, հագըր բոյավ, բուսաթավ տղա ա».—ասում է միջնորդը և դառնալով աղջկին, ավելացնում. «Ադաթըն ա՝ նըշընծացու տղին ջուքումը բարեղան կինի, իսկ՞ մին գատ չըս տալի մեզ»։

Տղան հանում է բերած մրգեղենը, որ գլխավորապես լինում է

Ձեր շոնը հաչմաչում ա,
Քա՛րհա, ես հո՞նց կյամ։
Ձեր որցակը ծկլթում ա,
Քա՛րհա, ես հո՞նց կյամ։
Ձեր դեռոնը ճռճռում ա,
Քա՛րհա, ես հո՞նց կյամ։

Աղջիկը պատասխանում է.

«Սարերը ձինը կոխալ ա,
Կանանչ թրլավ եկ։
Փողոց, փողոց պղնձի ա,
Էնն կրմնչավն եկ։
Կտոր-կտոր լուսնրկյա ա,
Ծառն շոքավը եկ։
Մեր պառավը մրթմրթում ա,
Ետնուց դրլվավն եկ։
Մեր շոնը հաչմաչում ա,
Պատառը քցի, եկ։
Մեր որցակը ծկլթում ա,
Կոտան քցի, եկ։
Մեր դեռոնը ճրլվրլզում ա,
Տափանը եղե, եկ»։

տանձ, խնձոր, չամիչ, կաղին և կոնֆետ, տալիս է յուր բարեկամ հարսին և խնդրում, որ ընկերուհու հետ բաժանի։

Միջնորդը մրգեղենի մի մասը տալիս է աղջկան և ավելացնում. «Ինքատ ա՛խչի, տեսնըմըս, որ քնաս մեր Գրսպարին, էզան սաի զատեր կոտիս»։ Եթե աղջիկը վերցնում է, արդեն համաձայնության նշան է, և տղան գոհ սրտով թողնում, հեռանում է։

Աղջիկը փոխարենը նույն միջնորդի միջոցով ուղարկում է տղային մի գավլուխ (փողի քսակ) մրգեղենով լցրած կամ յուր գործած մի զույգ գուլպա, իսկ զատկին՝ նախշած ձու։

Ժողովուրդն ընդհանրապես հարգում է աղջկա պատիվը և ոչ մի կերպ թույլ չի տալիս նրան անպատվել. նույնիսկ ամուրի տղաները կերպ թույլ չի տալիս նրան անպատվել. նույնիսկ ամուրի տղաները կույս աղջիկների հասցեին ոչ մի խոսք չեն արտասանում, իսկ եթե պատահում է, որ տղաներից մեկը ետին մտքով մի որևիցե աղջկա մասին խոսում է, ընկերներն իսկույն նախատում և լռեցնում են։

Բայց եթե աղջիկն արդեն խախտել է յուր կուսությունը, այնուհետև դառնում է ծաղրի և խոսակցության առարկա։ Հասարակությունը խիստ դատապարտում է այդպիսիներին, նրանցից խուսս են տալիս նույնիսկ յուր ընկերուհիները և ոչ մի հարաբերություն չեն ունենում հետը։ Նա դառնում է ընտանիքի նախատինք և գյուղի տղաներից ոչ մեկը չի ուզում ամուսնանալ հետը։ Մնողները վերջապես ստիպված ամուսնացնում են կամ այրի մարդու կամ երկու կին ունեցողի կամ օտար գյուղացու հետ և իրենցից հեռացնում։ Այս բոլորը կատարվում է այն ժամանակ, երբ աղջկա վարմունքը հայտնվում է, իսկ երբ ծածուկ է մնում, անցնում է առանց հետևանքի։

Իսկ եթե տղան իմանում է, որ կինը նախքան յուր հետ ամուսնանալը ուրիշի հետ հարաբերություն է ունեցել, հետևանքը շատ վատ է լինում՝ կամ ուղղակի խեղդում, սպանում է, կամ ետ է դարձնում հորանց տուն, կամ թե կանչում է ծնողներին և հայտնում աղջկա դրությունը, որից հետո տղան կամ բոլորովին մերժում է այդ տեսակ կնոջ հետ ապրել, կամ թե մեծ փող ստանալով հաշտվում է։

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Վարանդան յուր լեռնային մաքուր օդով, բարեխառն կլիմայով բազմաթիվ հստակ աղբյուրներով և օդը մաքրող անտառներով բավական առողջարար երկիր է։ Սակայն ժողովրդի տգիտության և բժշկության միջոցների բացակայության պատճառով մահացությունը հասնում է 11 տոկոսի։

Հիվանդությունների գլխավոր պատճառն է կեղտոտությունը։ Թեև այստեղի գյուղերը՝ գոմերը գյուղից մի փոքր ինչ հեռու, առանձին տեղ լինելու պատճառով ավելի մաքուր են, քան թե Ախալքալակի, Ախալցխայի և Աղեքսանդրապոլի գյուղերը, սակայն և այնպես՝ շատ հեռու են մաքուր կոչվելուց։ Տեղի սղության պատճառով տները միմյանց կից շինված լինելով, մինի կտուրը ծառայում է մյուսին որպես բակ և աղբանոց, իսկ վերջինիս ծուխը առատությամբ լցվում է երկրորդի տունը՝ եթե միայն դուռը բաց է լինում։ Ղարադամների սարսափելի ծուխը, լույսի սաստիկ պակասությունը, խոնավությունը և կեղտոտությունը քայքայում են վարանդացու երկաթի առողջությունը։ Բարեբախտաբար այժմ այլևս չեն շինում այդպիսի բնակարաններ, և գյուղերը կամաց-կամաց ունենում են երկհարկանի, պատուհաններով տներ, որ տաքանում են թիթեղե վառարաններով։

Հիվանդությունների տարածվելու մի ուրիշ պատճառն էլ այն է, որ սուրբ պարտականություն է համարվում անշուշտ այցելել հիվանդին, այնպես որ անհնարին է լինում նրան առանձնացնել, որի պատճառով և տարափոխիկ հիվանդությունները սաստկությամբ տարածվում են։

Քանի որ քաղաքը զուրկ է հիվանդանոցից ու բժշկանոցից, ի՞նչ կարող ենք ասել դավառի մասին։ Միայն կես տարի առաջ Աղդամում նշանակվեց մի գյուղական բժիշկ և բացվեց գյուղական դեղատուն ու մի ապաստարան։ Սակայն այս օգնությունը գլխավորապես տարածվում է Աղդամի շրջակա թուրք ազգաբնակության վրա, իսկ Վարանդայի հայը դարձյալ մնում է առանց բժշկի և ստիպված դիմում է սափրիչներին, «սնդչիներին» (хирург), տատամայրերին, կին «հյաքիմներին» և մանավանդ սուրբ աղբյուրներին, ծառերին, քարերին և «գիր անող» կախարդներին։

Վարանդացու ամենագործածական դեղը «խնոթունն» է՝ սրբի մոտից վերցրած հողը և կամ սուրբ ծառի փտած փոշին, որ ջրի մեջ խառնվելով ընդունվում և կամ քսվում է ցաված տեղը։

Հիվանդությունների վերաբերյալ ոչ մի հավաստի թվեր չլինելով, կարելի է միայն ասել, որ երեխաների մեջ առավելապես տարածված է ծաղիկ և կարմրուկ հիվանդությունը։ Ժողովուրդը դեռևս լավ չի ըմբռնել ծաղիկ կարելու նշանակությունը, և թեև տարին մի քանի անգամ ծաղկահատներ շրջում են գյուղերը, սակայն և այնպես շատ երեխաներ մնում են առանց ծաղիկը կարելու և գոհ են գնում ծնողների տգիտու-

թյան, որոնք, սակայն, նրանց առողջացնելու նպատակով ամենայն երեկո մոմեր են վառում, կիրակի պահում (անգործ նստում), միմյանցից հեռու մնում, միս ներս չեն բերում և այլն։

Երիտասարդությունն էլ վարակված է վեներական ախտերով, բացի Նոր-Շեն, Հացի և Կաղարծի գյուղերից, ինչպես վկայում է դավառական բժիշկը։

Զափահասների և մանավանդ հնձվորների մեջ տարածված են տենդ և շրգողություն հիվանդությունները։

Քաղաքում կան մի քաղաքի, մի դավառի, մի զինվորական և երկու մասնավոր բժիշկներ։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՂԵՐ

Ականջի վշվշոց. Ձվի դեղնուցը քսում են քեչի երեսը և դնում ականջի վրա։

Աչքացավ. աղջկա մոր կաթը կաթեցնում են հիվանդի աչքի մեջ և կարմիր ներկ քսում կոպերը։ Ձվի դեղնուցը խառնելով շիբի փոշու հետ, հարում են մինչև սպիտակելը և բամբակի վրա քսած դնում աչքին։

Անքնություն. Խաշխաշի կեղևը եփում են և ջուրը խմեցնում հիվանդին։

Արյունահոսություն քթից. Շարհամի կոչված սանրը քերում են և փոշին քթին քաշում։

Այտուցություն. Գինձ, գյուլխատանի, էմմանի դիլ ծեծում և դնում են երեսին։

Ատամնացավ. սխտոր կամ խորոված ընկույզ են դնում ատամի վրա։ Սև մեխակ են դնում ատամի տակ կամ մեխակի յուղի մեջ բամբակ թաթախելով դնում են ատամի տակ։ Շիբը այրում են հին բամբակի մեջ և փոշիացնելով՝ բամբակով վերցնում և դնում ցավող ատամի տակ։

Այրված մարմին. Կարագը քսում են այրված տեղը և քաթան-հինդի մանրացնում վրան են դնում։ Մոլաբաշի կոչված բույսի յուղը քսում են այրված տեղը։ Ձվի դեղնուցով խմոր են շինում, կրակի վրա շորացնում և ապա փոշիացնելով ցանում այրված տեղի վրա։

Բարակացավ. Մոշի արմատը քերում, ծեծում, օդի քաշում, խմեցնում են հիվանդին։

Բերանեարեն. (բերանի մեջ լեզուն սպիտակում է և ծածկվում սպիտակ բշտիկներով). Շիբլեղի մի փոքր կտոր ձգում են բերանի մեջ և պտտեցնելով լեզվի օգնությամբ, թողնում են մի քանի ժամ, այդ միջոցին բերանի թուքը չպետք է կուլ տալ։ Շիբլեղը այրում և մանրացնելով խառնում են սարու նաբաթիի փոշու հետ, մատով վերցնում և ածում լեզվի վիրավոր մասերի վրա։ Քացախ են առնում բերանը։ Տաբեխ ձկան գլուխը այրում են և փոշին ցանում լեզվի վրա։

Գլխացավ. Քացախ և մանանեխ են քսում։ Մեղի մեջ ձու են եփում, դնում հիվանդի գլխին։ Տզրուկներ են կպցնում ճակատից։

Լուծ. լուծելու համար վերցնում են սինամաքի (?) կոչված տերևը, նեփ ածում և ջուրը խմում։

Խավարան. Մուկը այրում, կարագով շաղախում, դնում են խավարտնոտ մարմնի վրա։

Խոլերա. Ճմրթում և կռան մեծ ջղից արյուն են տալիս։

Խլություն. Նավթի անոթը տաքացնում, դնում են ականջին։ Երբեմն էլ խոռն կոչված բույսն են խաշում, դնում ականջին։

Կատաղած շան կծած. Կարմիր լոբի և շան մազ են դնում խածած տեղը։

Կողքի ծակոց. Աղը աղանձում կամ թեփը տաքացնում դնում են կողքին։

Կտրված մաշկ. Սարդի ոստայնը ծեծում դնում են կտրած մասի վրա։ Շորը այրում, խանձիլը կապում են վրան։ Օճառը և սև նավթը եփում, շորի վրա քսելով դնում են կտրածի վրա։ Մի քանի տեղերում կտրած մորթու վրա դնում են սև-յոնջա։

Կապույտ վերք. Ջամիշ, անանխաթուն, լեղակ, աղբի ճիճու ծեծում կապում են վերքի վրա, հետո վերքից սկսում է ժահր թափվել։

Հազ. Մանիշակի թել են խմում։ Սերկևիլի կորիզը եփում և ջուրը խմում են։ Սալեպ կոչված արմատը չորացնում, աղում և թեյի հետ խառնում, խմում են։

Հարբուխ. Քթի տակ շոր են ծիրում։ Թթու թան են տալիս հիվանդին։

Միզակապություն. Թեփը խաշում դնում են փորին։ Թեփի տեղ գործ են ածում և անկվա բուրդ։ Քարավուզի արմատը եփում և ջուրը խմացնում են։

Մատնաշունչ. Մատնաշունչը հասցնելու համար խաշած սոխը կամ անալի խմոր են դնում։

10—700

Սազոլ. *Շիբի և աղի խառնուրդի ջրով լվանում են։ Տավարի լեղին հինայի հետ խառնում քսում են։*

Մոլոմոր. *Մոլոքորից ազատվելու համար մերկանում են, մի ոսկե դրամ տրորում ջրի մեջ, և ածելով մարմնի վրա փաթաթվում կարմիր մետաքսե սավանի մեջ։*

Ոսկրաբեկ. *Կոտրած մասի վրա տախտակ են դնում կապում մինչև կոտրած մասերի ձուլվելը։*

Ոռների բռտինք. *Աղաջրով կամ շիրաջրով լվանում են։*

Վերք գնդակի. *Գնդակից ստացած վերքի վրա դեղնահող են տալիս։*

Տաֆուրյուն. *Կատվահոռի կոչված ծառի արմատի կեղևը մաքուր լվանում, քերում, թանձր եփում, հիվանդին խմացնում են։*

Ցավ տված մկանունք. *Ցավ տված մկանունքի վրա դնում են ծեծած միս։ Տաք ջրով միշտ լվանում են։*

Փայծաղի մեծանալը. *Էշի կոշի են կապում։ Սև կաչաղակը կապում են փայծաղին դրսից։*

Փորացավ. *Տաք ապյուսի վրա նավթ են ածում և դնում փորի վրա։*

Փորկապություն. *Փորկապության համար խմում են նռան ջուր։ Հյուն (հոն) են ուտում։*

Օձի բույն. *Օձ պահողները կծած տեղը պինդ կապում են, թմրեցնում, հետո պատռում ածելիով վերքը և միջի թույնը ծծելով՝ բերանից թափում։ Դրանից հետո կոթն կոչված բույսը վրան են տալիս կամ մածուն քսում, ժահրը հանում և 8 օրից հետո հիվանդը առողջանում է։ Մածնաթանը ածում են կոնքի մեջ և կծած անդամը դնում մեջը։*

ՄԱՀ, ԹԱՂՈՒՄ ԵՎ ՄԵՌԵԼՈՑ

Ժողովուրդը հավատում է, թե մարդու մահվան օրը նախապես որոշված և գրված է ճակատին, որ ոչ մի միջոց չի կարող հեռացնել և մոտեցնել այն։ Այդ օրերի հաշիվը պահվում է երկնքում դարսված կճուճներով, որոնց մեջ յուրաքանչյուր տարի մի կաթիլ ջուր է կաթում։ Երբ կճուճը լցվում է, օրը լրացած է լինում, և մարդը մեռնում է։ Միևնույն ժամանակ ամեն մարդ մի աստղ ունի երկնքում, երբ օրը լրանում է, աստղը ընկնում է, և մարդն էլ մեռնում։

Երբ մարդու վախճանը հասնում է, եթե բարի է՝ բարի, իսկ եթե չար՝ չար հրեշտակը գալիս է հոգին առնելու։ Բարի մարդը շատ հանգստությամբ, ասելով, ծիծաղելով հանձնում է հոգին հրեշտակին,

ստանալով նրանից ծաղկի մի փունջ, իսկ չարը երկար տանջվում է չար հրեշտակի հարվածների տակ։ Վերջինս սուրը խրելով հիվանդի կողքը, ամուր սեղմում է բկից, այնպես որ, նա ոչ մի բան չի կարողանում ասել, և յուր «սրտինը սրտումն է մնում»։ Մեռնելու րոպեին մեռնողը լսում է յուր ազգական ննջեցյալների ձայնը, որոնք կանչում են. «Ե՛կ, ե՛կ, այստեղ լավ է»։ Ինքն էլ պատասխանում է. «Գալիս եմ, գալիս»։

Երբ մարդը հոգին ավանդում է, բոլոր տնեցիները սաստիկ լալիս են, իսկ փոքր-ինչ ավելի՝ սրտոտները դարձնում են մեռելի երեսը դեպի արևելք, շորերը հանում են, կզակին մի թաշկինակ կապում, ոտների բթամատները բամբակի թելով կապկպում, աչքերը ծածկում, ձեռքերը կրծքին խաչաձև ծալում, վրան մի շոր ձգում և մի հաց դնում սրտին։

Իսկույն գալիս են ազգականները և ծանոթները, մխիթարական խոսքերով հանգստացնում սգավորներին։ «Ասված սրտերդ մխիթարի, զուք ողջ լինիք։ Բոլորս էլ մեռնելու ենք, ստված ննջեցյալի հոգին լուսավորի, համբերող եղիք» և այլն։ Գալիս է և քահանան ու օրհնում ջուրն ու պատանը։ Տղամարդ ննջեցյալին լողացնում են դյուղերում՝ հարևանները, իսկ քաղաքում՝ ժամկոչները։ Կին ննջեցյալներին՝ գյուղում հարևան կանայք, իսկ քաղաքում ազգատ կանայք և կամ, եթե հարուստ է եղել, կույսերը՝ աղոթքներ մրմնջալով։ Լողացնելուց հետո ննջեցյալի ձեռքերին մի մի մոմ են դնում, որպեսզի մյուս աշխարհում յուր բարեկամ ննջեցյալներին ճրագի լույսով տեսնի։ Հետո պատանում են սպիտակ կտավով, փաթաթում մի կապերտում և դնում մի նաժի մեջ և վրան ձգում դիակարդը։

Տասը տարեկանից բարձր ննջեցյալների համար ութ օր շարունակ մոմեր կամ կանթեղներ են վառում նրանց լողացած տեղերում, որպեսզի նրանց հոգիների ճանապարհը դեպի երկինք լուսավոր լինի։

Երբեմն պատահում է, որ հարուստ ննջեցյալների համար դագաղ են պատրաստել տալիս և հետևելով քաղաքի սովորություններին, ծերին անում են սև, հասակավորինը՝ կապույտ, իսկ երիտասարդինը՝ կարմիր, գունդգույն ծաղիկներով զարդարված։

Նույն օրը քահանան կատարում է տան կարգը և ննջեցյալը տանում է եկեղեցի։ Ննջեցյալը վերցնելուց հետո անմիջապես նույն տեղը մի քար են դնում, որպեսզի ննջեցյալի հիշատակը հաստատ մնա այդ տան մեջ։

Մինչև թաղման օրը թե՛ սգավորները և թե՛ նրանց ազգականներն

ու ծանոթները ժամերգությունների ժամանակ եկեղեցի են գնում, իսկ առաջին ժամերգությունից հետո բոլորը դալիս են ննջեցյալի տուն, քահանային հոգոց ասել տալիս, մխիթարում սգավորներին և մի մի բաժակ օղի խմում, հեռանում։

Թե՛ գյուղերում և թե՛ նույնիսկ քաղաքում կան դալկան կանայք, որոնք հրավիրվում են ննջեցյալի վրա հատկապես լաց լինելու։ Սովորաբար «մայր ողբոց» հանդիսանում է ննջեցյալի մայրը և կամ մեծ քույրը։ Սա նստում է ննջեցյալի սնարի, իսկ մի ուրիշը՝ ոտների մոտ, մյուս կանայք շրջապատում են ննջեցյալին։ «Ողբոց մայրը» թվում է ննջեցյալի առաքինությունները երգի եղանակով, մյուսները կրկնում են վերջին խոսքերը և բարձրաձայն լալիս։

Երբ ննջեցյալը եկեղեցումն է դրված լինում, միևնույն երևույթը այնտեղ էլ է կրկնվում, և շատ անգամ ավելի սաստկությամբ, որովհետև ավելի մեծ բազմություն է ներկա լինում։ Սակայն սրանով էլ չի վերջանում, և միշտ շարունակվում է տանը։ Այստեղ առաջ են բերում ննջեցյալի շորերը և մեկ մեկ բարձրացնելով, հոտոտելով, համբուրելով գովում և լաց են լինում։ Գյուղի ամենահեռավոր կետից էլ լսելի է լինում ննջեցյալի տան ողբն ու կոծը։

Եթե ննջեցյալը հարուստ է եղել, նրա համար պատարագ են մատուցում և հետո թաղում, իսկ եթե աղքատ, շուտով տանում թաղում են։

Թաղման ծեսը կատարելիս կանայք դարձյալ շրջապատում են ննջեցյալին եկեղեցում և ողբեր ասելով լալիս։ Եթե ննջեցյալը նոր նշանադրված է եղել, սգավորները կարմիր խնձորի վրա սպիտակ դրամներ շարած, նշանի մատանին սև քողով պատած դնում են ննջեցյալի վրա և լաց լինում։

Շատ անգամ լալկան կանայք ննջեցյալի կողմից մնաս բարև են ասում նշանածին և պատվերներ տալիս նրան։ Սովորաբար քահանան էլ նպաստում է ողբ ու կոծին գանձ ասելով, չնայելով որ այդ արգելված է։

Լացն ու կոծը գնալով սաստկանում են, և շատ անգամ ննջեցյալի մայրն ու քույրը պատառոտում են իրենց երեսները, քանդում, քաշում մազերը, թակում գլուխները, ուշագնաց լինում։

Վերջապես կանանց հեռացնում են և վերցնում դագաղը, տանում դեպի գերեզմանատուն։ Կանայք լաց լինելով և բարձրաձայն ողբեր ասելով վերադառնում են տուն և շարունակում շորերի վրա կոծելը։

Տղամարդիկ քահանայի և խաչ ու խաչվառի առաջնորդությամբ տանում են ննջեցյալը գերեզմանատուն։ Դիակառքեր գյուղերում բոլորովին չկան, իսկ քաղաքում կա մի շատ հասարակը։ Չորս կամ վեց

հոգի բռնած նաժից կամ դագաղից, առաջ են գնում, շուտ-շուտ փոփոխվելով։ Նոր բռնողն ասում է. «Աստված ողորմի»։ Մյուսը թողնելով դագաղը՝ պատասխանում է. «Աստված ողորմի ծնողացդ»։

Այս հուղարկավորության ժամանակ քահանան զգուշանում է ետ նայելուց, որովհետև եթե ետ նայի, նույն տնից մի ուրիշն էլ կմեռնի։

Վերջապես հուղարկավորությունը հասնում է գերեզմանատուն։ Գերեզման փորողներից մինը առաջ է գալիս, դագաղից բռնում, տանում գերեզմանի աջ կողմը դնում։ Սովորաբար գերեզմանները փորում են գյուղերում ննջեցյալի աղգականները և կամ հարևանները, իսկ քաղաքում՝ ժամհարները։ Գերեզմանների խորությունը լինում է 2—3 արշին, իսկ լայնությունը մի արշին։ Ավարտելուց հետո թին ու բահը խաչաձև դնում են գերեզմանի վրա, որպեսզի սատանաները չմտնեն ներս։

Եթե գերեզմանը լավ փորված է լինում և հողը կակուղ, ասում են, թե ննջեցյալը արդար էր, իսկ եթե գերեզմանը վատ է փորված և հողը քարքարոտ է լինում, շշնջում են, թե ննջեցյալը մեղավոր էր, աստված նրան հողի մեջ էլ մի հանգիստ տեղ չտվեց։

Նախքան ննջեցյալը գերեզման իջեցնելը մոտիկ ազգականները գրկախառնում են նաժը, համբուրում ննջեցյալին և լաց լինում։ Հետո ննջեցյալին հանում են նաժից և իջեցնում գերեզման։ Քահանան օրհնում է հողը մոտիկ ազգականի ձեռքում և ձգել տալիս գերեզմանի մեջ։ Անմիջապես բոլոր հուղարկավորները և մի մի բուռ հող են ձգում ննջեցյալի վրա՝ ասելով. «Աստված ճանապարհդ բարի անի, բարև տար մեր հին ննջեցյալներին»։ Հետո արդեն գերեզման հատողները ածում են հողը գերեզմանի մեջ և վրան մի թումբ կազմում։

Թաղման ծիսակատարությունը կատարելուց հետո քահանան ննջեցյալների տնեցիների կողմից հրավիրում է հուղարկավորներին ննջեցյալի տունը՝ ճաշելու։ Այս ճաշը տեղական բարբառով կոչվում է «ժըմահաց» կամ «պատարագ»։ Սովորաբար եփում են շիլաճաշ, շատ անգամ մորթում են մի եզ և կամ մի քանի ոչխար, թխում են 10—15 փութ հաց, գնում են մեծ քանակությամբ օղի և գինի։ Ոչ միայն եկողներին, այլև բացակա անձանց և հիվանդներին կերակուրներ են ուղարկում, որպեսզի տեղի չտան ոչ մի չարախոսության։ Ահագին բազմությունը լռելյայն և մեծ ախորժակով ճաշելուց հետո լսում է քահանայի օրհնությունը նույն տան հին և նոր ննջեցյալների հոգու փրկության մասին և ապա, մխիթարություն բարեմաղթելով տնեցիներին, ցրվում։

Մյուս օրը լուսաբացին, ննջեցյալի հայրը և կամ եղբայրը գնում են գերեզմանատուն, համբուրում ննջեցյալի գերեզմանը և երեք անգամ

վայ կանչում, որպեսզի հոգին, որ մինչև այդ կանչը սավառնում է գերեզմանի շուրջը, անդորրությամբ ուղևորվի դեպի երկինք։

Նույն օրը, ժամը 10-ին, սգավորները գնում են գերեզմանատուն «իքնավոդը» (այդ) կատարելու։ Այնտեղ են հավաքվում և ննջեցյալի ազգականներն ու ծանոթները, մանավանդ կանայք, բերելով իրենց հետ օղի, գինի և խմորեղեն։

Քահանան օրհնում է գերեզմանը, իսկ սգավորները լաց են լինում, ողբեր ասելով։ Վերջապես երբ այլևս արցունք չի մնում աչքերում, վերջ են կենում, համբուրում գերեզմանը և խաչհամբույր տալիս։ Մի կինջուր է ածում գերեզմանի վրա, որից բոլոր սգավորները խմում են, կրծքերին քսում, երեսները լվանում, որպեսզի եթե վախեցած են, վախն անցնի։ Հետո գերեզմանի հողից վերցնում, սգավորների «սրտերին» են քսում, որպեսզի «սրտերը հովանան» և այլևս երկար չսգան։

Այս ամենից հետո բոլորը, թե՛ տղամարդ և թե՛ կին, մի մի բաժակ օղի են խմում երկար բարեմաղթություններով, ուտում բերած խմորեղենը և ապա թողնելով մնացորդները գերեզմանի մոտ, վերադառնում սգավորի տունը ճաշելու։ Ճաշից հետո կրկին մի քիչ լաց են լինում, ննջեցյալի մասին խոսում և ապա ցրվում։

Հյուրերը հեռանալուց հետո տնեցիները ննջեցյալի շորերը մաքուր լվանում են, որպեսզի հոգին մաքուր և անարատ գնա հասնի յուր տեղը։

Գյուղերում ութ օր շարունակ սգավորները առավոտ երեկո եկեղեցի են գնում, ժամասացությունից հետո քահանային հոգոց ասել տալիս։ Իսկ քաղաքում քառասուն օր շարունակ կանայք տնից դուրս չեն գալիս։ Շատերը նույնիսկ մի տարի սուգ են պահում և տնից դուրս են գալիս միայն գերեզմանատուն գնալու։

Թաղման վեցերորդ օրը ննջեցյալի ազգական ու հարևան կանայք նորից հավաքվում են ննջեցյալի տունը և լվանում սգավորների գլուխները, որ մինչև այդ ժամանակ անլվա են մնում։ Նույն երեկոյին մոտ ազգականներից «սգահան» է ուղարկվում սգավորներին։ Սգահանը բաղկացած է լինում զանազան տեսակ խմորեղենից՝ եփած հավից, օղուց, գինուց և մեծ սգավորի համար մի «խալաթից»։

Յոթերորդ օրը, այսինքն՝ «յոթին», ազգականներն ու հարևանները նորից հավաքվում են ննջեցյալի տունը և սգավորների հետ միասին գնում գերեզմանատուն, քահանային օրհնել տալիս գերեզմանը, երկար լաց լինում, ողբեր ասում և հետո վերադառնում տուն, ճաշում։ Ճաշից հետո քահանան օրհնում է բոլոր հին և նոր ննջեցյալների հոգին և ստանում 40 կ.—մի ռուբլի վարձատրություն։

Առաջ բերենք մի քանի նախապաշարումներ.

Եթե գյուղում ննջեցյալ լինի, ոչ ոք գլուխ չի լվանա, ոչ էլ լվացք կանի, վախենալով, թե միգուցե հրեշտակը, որ ննջեցյալի պատճառով գյուղումն է «կուփե» (խփե)։

Կնոջ գերեզմանը մի արշին ավելի խոր են փորում, որովհետև կինը խոսք ման ածող է, խռովարար և սատանի հետ բարեկամ։

Եթե մի ննջեցյալից հետո տնեցիներից հիվանդանում են, կարծում են, թե ննջեցյալը իսկապես մեռած չէ և տնեցիներից յոթը հոգի տանելու է։ Որոշելու համար, թե ննջեցյալը իսկապես մեռած է, թե ոչ, գերեզմանի վրա գարի են ածում և ձին տանում մոտը։ Եթե կերավ, այդ ապացույց է, որ ննջեցյալն իսկապես մեռած է։ Իսկ եթե չկերավ՝ դա նշան է, որ մեռած չէ։ Այդ դեպքում բաց են անում գերեզմանը, ննջեցյալի գլուխը ջախջախում կամ մի մեխ խփում գլխին, մեկն էլ սրտին։ Մի քանիսն էլ մեռելի սրտից մի կտոր կտրում և հիվանդին են տալիս, որ ջրով ընդունի և առողջանա։

Արևը մայր մտնելուց հետո ննջեցյալ չեն թաղում, ապա թե ոչ գիշակեր կենդանիները կհանեն գերեզմանից և կուտեն։

ՀՈԳՈՒ ԵՎ ՀԱՆԴԵՐՁՑԱԼ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Մարդը տարբերվում է կենդանիներից նաև նրանով, որ սա հոգի, իսկ նրանք միայն շունչ ունեն։ Մարդու հոգին մի լուսավոր բան է, որ բնակվում է մարդու ձախ կողմում։ Մեռնելիս հոգին դուրս է գալիս բերանից, եթե արդար է՝ աղավնու, իսկ եթե մեղավոր՝ սև թռչունի նմանությամբ։ Մի պառավ պատմում էր, թե մի ծառի տակ յուր հիվանդ թոռը խնամելիս ննջում է և տեսնում մի աղավնի, որ երեխայի բերանից դուրս է գալիս և կանգնում ծառի վրա։ Արթնանալով նա գտնում է յուր թոռանը մեռած։ Բոլոր երեխաների հոգիները արդար են, իսկ չափահասներինը մեծ մասով մեղավոր։

Հոգին բերանից դուրս գալուց հետո մինչև այգը կատարելը սավառնում է դիակի շուրջը, և երբ մյուս օրը վաղ առավոտյան տան մեծը գալիս երեք անգամ «վայ» է բղավում, ապահով սավառնում է դեպի երկինք։ Այստեղ բոլորը թռչունների կերպարանքով մնում են՝ արդարները մի ծաղկալից, ծառազարդ այգում, մեղավորները՝ մի մթին տեղ, իսկ ոչ արդար, ոչ մեղավորները՝ արդարների ետևը։ Այստեղից նրանք հսկում են իրենց գերեզմանների վրա, շատ անգամ այցելում են իրենց ազգականներին, երևում են նրանց երազների մեջ։ Նավակատյաց,

մեռելոց օրերին իջնում են իրենց գերեզմանների վրա և սպասում, որ իրենց ազգականները գան, գերեզմանները օրհնել տան։ Եվ եթե օրհնել են տալիս, իրենք ուրախացած, օրհնում են օրհնել տվողներին և սավառնում երկինք, իսկ եթե չեն օրհնել, տխուր տրտում, ազգականներին անիծելով բարձրանում են։

Երբեմն էլ պատահում է, որ հոգին դեռ մարդու կենդանության ժամանակ թողնում է մարմինը և ինքը գնում։ Այդ թափառման միջոցին մարմինը բոլորովին անզգա ընկած մնում է, մինչև որ հոգին նորից վերադառնում է։ Այսպես, մի անգամ Քառասնի գյուղացի Աղաջանը գիշերը գնում է եկեղեցի և գրկելով որդու դագաղը, երկար ժամանակ լաց է լինում և անզգայացած ընկնում վայր։ Երբ մի երկու օրից զգաստանում է, պատմում է, թե ինչպես յուր որդու հոգու հետ միասին ինքն էլ է բարձրացել երկինք, տեսել դրախտը, խոսել աստվածության հետ և այլն։

Այստեղ, այս երկնային կայանում հոգիները անհամբերությամբ սպասում են վերջին դատաստանին, երբ Քրիստոսը կգա և Գաբրիել հրեշտակապետի փողով բոլոր նեղեցյալները հարություն կառնեն։ Այն ժամանակ կկախեն արդարության կշեռքը, և բարի ու չար հրեշտակները, որոնք մարդու կենդանության ժամանակ նստած բարին՝ աջ, չարը՝ ձախ ուսին, գրում էին նրա գործերը, կհանեն իրենց մատյանների միջից բարին՝ բարության, իսկ չարը՝ չարության գործերը և կդնեն կշեռքի նժարների մեջ։ Եթե բարությունը կշռե, մարդը կանցնի Քրիստոսի աջ կողմը, իսկ եթե չարությունը՝ ձախ։ Հետո արդեն աջակողմյանները դրախտ, իսկ ձախակողմյանները դժոխք կերթան։

Դրախտը մի հրաշալի այգի է, լի մշտադալար ծառերով, անուշահոտ ծաղիկներով, քաղցրահամ աղբյուրներով և բյուրավոր գեղեցիկ թռչուններով։

Իսկ դժոխքը մի խոր անդունդ է, որ թոնիրներից, խարույկներից, կուպրի կարասներից ահագին հուր է բարձրանում և տանջում երկաթյա որեխներ հագած մեղավոր մարդկանց։

ՀԱՎԱՏՔ

ԼԵՌՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Վարանդացին հեռու անցյալում և մեծ մասամբ այժմս էլ աստվածացրել է ամբողջ բնությունը և ծունր դրել նրա առաջ։ Քիրս լեռը յուր սպիտակափառ գագաթով նվիրական է եղել նրա համար. շատերը ծունր չոքած աղոթել են նրա առաջ։ Դեռ մինչև այժմս էլ Քիրսի աստվածացման վերաբերյալ ավանդություններ շրջում են ժողովրդի մեջ, և լեռան վրա գտնվող բազմաթիվ ուխտատեղիները խլել են նրանից նրա աստվածացումը։ Ներքևան գյուղի Ծծքարի ավանդության մեջ՝ Թշվառ կինը Քիրսին է դիմում և խնդրում իրեն քար դարձնել, որ և կատարվում է։

Աշան գյուղի Ցից քարը[2] դարձյալ մի կին է եղել, որ ավազակներից հալածված խնդրել է Քիրսին և քար դարձել։

ՔԱՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Վարանդայում կան քարեր և ժայռեր, որ պաշտվում են. ժողովուրդը ուխտի է գնում նրանց, մոմ վառում, աղոթում և մատաղներ կտրում։ Այսպես՝ Սղնախ գյուղի մոտ գտնվում է մի ահագին ժայռ քար, որ մի ժամանակ ժայռից պոկվելով, գլորվել, եկել է մինչև գյուղ և հենց գյուղի մոտ կանգ առել, առանց մի որևէ վնաս պատճառելու։ Գյուղացիները գոհ լինելով, որ այդ քարը ավելի առաջ չի գլորվել և վնասներ պատճառել, պաշտում են նրան։ Այս քարը կոչվում էր Պուկ-քար, այսինքն՝ պոկ եկած քար։ Ամուլ կանայք գալիս երեք անգամ թել են փաթաթում այս քարի շուրջը և ապա տանում, գուլպա գործում հագնում, որպեսզի երեխա ունենան։

[1] Տե՛ս էջ 154։
[2] Տե՛ս էջ 157։

Կաթ չտվող կովերին էլ տանում են երեք անգամ պտտեցնում նրա շուրջը։

Հանդիպակաց ժայռն էլ, որտեղից պոկ է եկել այդ ահագին ժայռ քարը, նույնպես պաշտվում է։ Այնտեղ առավելապես երաշտ ժամանակ են մոմեր վառում, որ անձրև գա և կամ կարկուտ չիփի։

Մի այսպիսի ժայռ էլ գտնվում է Հիրհեր գյուղում, լեռան լանջին, որ եթե գլորվի, գյուղը ավերակ կդարձնի։ Վառված բազմաթիվ մոմերից ժայռի լանջը բոլորովին սևացել է։

Բայց ավելի հետաքրքիր է Գյունեյ Ճարտար գյուղի Շմանեքը, որ կարծես դոլմեն լինի։ Մի կանգնած ժայռ քարի վրա ընկնում են երկու մեծ ժայռ քարեր, մյուս կողմից հենված լինելով իսկական ժայռի վրա։ Սրանց միջև կա երկու փոքրիկ խորշ։ Կատաղած անասուններին, մանավանդ այն կովերին, որոնք կթելիս հանգիստ չեն մնում և կամ հորթին թույլ չեն տալիս ծծելու, բերում կոխում են այս խորշերի մեջ, նախապես մոմեր վառելով ժայռի առաջ, որ խելոքանան։ Այս ժայռի առաջ մի ծառ կա, թիքեռնը, ծածկված բազմաթիվ շորերի կտորներով։

Մի մեծ ժայռ քար էլ Սիսորաշենի մոտ կա, որ կարծես մահիճ լինի։ Սրա առաջ չորս սրբական ծառեր էլ կան, ծածկված շորի կտորներով։ Բացի սովորական ուխտ անելուց և մոմեր վառելուց, ամեն մի անցորդ պարտավոր է սուրբ քարի մոտից մի փոքրիկ քար վերցնել, դնել սուրբ քարի վրա և մի ուրիշը վայր ձգել։

Մի այսպիսի քար էլ Քարին-տակը գյուղում կա։

Սակայն առանձին ուշադրության արժանի են՝

Ծծաքարերը. Սրանք ծծի նմանությամբ պտուկներ են, որ գտնվում են ժայռ քարերի լանջին, երբեմն ահագին ժայռերի և երբեմն այրերի մեջ։ Սրանցից կաթ-կաթ ջուր է հոսում, որ սակավակաթ կանանց կաթը ավելացնելու դեղ է համարվում։ Կաթ չունեցող կինը յուր երեխան գըրկած գալիս է այդ քարի առաջ շոքում, աղոթում, մի քանի մոմ վառում և ծծերը բռնում այդ կաթիլների տակ և կամ վերցնում այդ ջրից, մի մասը խմում, մյուսն էլ ծծերին քսում։ Ասում են՝, որ անմիջապես կաթը առատանում է։

Այսպիսի ծծաքարեր շատ կան, որոնցից նշանավոր են. Խերխան գյուղի ներքև գտնվածը։ Սա մի ժայռ է, որ հեռվից մի երեխային ծիծ տվող կնոջ նմանություն է տալիս։ Ունի և պտուկներ, որոնցից ջուր է կաթկթում։ Ասում են, որ մի զմբախտ մայրը այդ տեղում յուր օրորոցի մեջ պահած երեխային ծիծ տալով՝ խնդրել է Քիրս լեռից[1], որ իրեն քար դարձնե, որովհետև այլևս չի ուզում տուն վերադառնալ և յուր սկեսուրի ձեռին տանջվել։ Քիրսը կատարել է նրա խնդիրը, միևնույն ժամանակ նրան կաթ տալու շնորհքը պարգևելով։

Մի այդպիսի ծծքար կա և Սարիբեկում, որ գտնվում է մի ժայռի մեջ, մինն էլ Փյուրման գյուղում։ Մի ուրիշն էլ Թաղլարի մոտ, Ղուրուչայի արևելյան կողմը գտնվող այրի մեջ, ինչպես և մինը Ծովատեղ գյուղի մոտ, լճի ափին, որի անունով և լիճը Ծծաքարի ծով է կոչվում։

Այստեղ կովեր էլ են բերում ուխտ անելու, որ շատ կաթ տա։ Միայն բերելիս հորթը կապում են կովի մեջքին, և իրենք առնելով ջուր, քսում նրա պտուկներին։

Կան քարեր ևս, որոնք պաշտվում են, որպես մի որոշ հիվանդության բժշկություն տվող։ Այդպիսիներից էլ հիշենք մի քանիսը։

Որպես հաղ հիվանդության բժշկող սուրբ քարեր.

Ա. Սարիբեկի ուխտատեղից փոքր-ինչ բարձր գտնվող ժայռը, որի միջով մի անցք է բացվում։ Հաղողները նախապես մոմեր վառելով այդ ժայռի առաջ, 3 կամ 7 անգամ անցնում են այդ անցքով, հուսալով որ հաղը կանցնի։

Բ. Ալամանց գոմերում գտնվող «բխտըլահաղ» (խեղդող հաղ) ուխտատեղին։ Սա մի ծառի մոտ երկու ահագին քարեր են, որ միմյանց վրա ընկնելով՝ մի փոքրիկ անցք են թողել։ Խեղդող հաղ ունեցողները նույն կերպ բժշկվում են։

Գ. Բողբխանի լեռան վրա, վանքից մոտ կես վերստ հեռավորությամբ անտառի մեջ գտնվող մի սաժեն հեռավորության մեկուսի ընկած քարը, որի մեջ մի փոքրիկ անցք կա։ Այստեղ նույն կերպ բժշկում են փոքրիկ երեխաներին։

Դ. Սարուշենի «բխտըլհաղը», որ նույնպես մի ծակ քար է և նույն կերպ բժշկում է հաղողներին։

Հացի գյուղում կա Քոլեն (թփերի) խաչ, որ մի կաղնու տակ երկու սրածն քարեր են. թե՛ ծառը և թե՛ քարերը պաշտվում են և համարվում ծծի վերքերը դարմանող։

Շուշում, Թուրքերի թաղում գտնվում է «Քամու-խաչ» անուն քարերի կույտը, որ պաշտվում է որպես «քամի»՝ ռևմատիզմ հիվանդության բժշկություն տվող։

Նույն հիվանդությունը բժշկող մի ժայռ քար էլ Դոնավարդ գյուղում կա, որ նույնպես «Քամու խաչ» է կոչվում և պաշտվում է։

Կան նաև քարեր ու ժայռեր, որոնց միջով անցքեր են բացված. ամուլ կանայք երեք անգամ անցնում են այդ անցքերի միջով, որպեսզի

[1] Հատկապես շատերին պատմել եմ ավել և բոլորն էլ ասանց բացառության ասել են, թե խնդրել են Քիրսից։

որդի ունենան։ Ասում են, թե անցքը մեծանում և թույլ է տալիս կնոջը անց կենալու, եթե որդի է տալու, և նեղանում ու արգելում անց կենալու, եթե որդի չի տալու։ Այսպիսի քարերից նշանավոր են Պակեսիքերքում և Սարիբեկում գտնվածները։

Ավդուտ գյուղում գտնվում է «Ավգալ-օճախ» ուխտատեղին, որ հասարակ քարերի մի կույտ է։ Այստեղ ուխտ են գալիս չբերք կանայք և կամ նրանք, որոնց որդիները տարին լրացած մեռնում են, որպեսզի առաջինները որդի ունենան, իսկ երկրորդների որդիները երկարակյաց լինեն։

Դոնավարդ և Քառասնի գյուղերի միջև կա երկու քար, որոնք միմյանց վրա ընկած լինելով, տակովը մի անցք են թողել։ Այս անցքի տակ ևս մի փոքրիկ քար կա, ուր գտնվում է մի խորշ։ Եթե տասներկուտարեկան ժամանակ այդ խորշը ջուր ածեն և խմեն, 17 տարեկան հասակում սաստիկ զորեղ կարող են լինել, որովհետև այդ քարերը նրանց ուժ կտան։

Ալամենց գոմեր կամ Մատաթքենդ գյուղի մոտ մի մեծ քար կա, որի մասին ասում են, թե Մարիամ Աստվածածինը դրա վրա նստած է եղել, երբ հրեշտակը ավետիս է տվել նրան, թե որդի պիտի ունենա։ Այժմ ամեն մի անցորդ մի քար է վերցնում և դնում դրա վրա, և նշանյուր հարգանաց։ Շատերն էլ պտուղներ են դնում և կամ մոմեր վառում։

Հին Քյաթուկի մոտ Գիզատ ուխտատեղում կա մի ծակ ժայռ քարերաշտ ժամանակ կանայք գնում մոմեր են վառում ժայռի լանջին և ծակից ջուր վայր ածում։ Ասում են, թե այդ սուրբն այնքան զորեղ է, որ անմիջապես անձրև է անում։

Մի այսպիսի քար էլ Ներքին Թաղավարդ գյուղում կա, միայն սա ծակ չէ։ Երաշտ ժամանակ բերում ջուր են ածում վրան, կաթնաճաշ եփում, բաժանում, որ անձրև գա։ Մի անգամ մի տղա ծաղրել է այդ քարը և վեր կացել կանգնել վրան, բայց անմիջապես ոտները կուչ են եկել։

Մի քար էլ Դոնավարդում կա, որ նույն կերպ անձրև է տալիս։ Միայն այս քարը նրանով էլ է նշանավոր, որ երբ երկար ժամանակ անձրև չ գալիս, բերում այս քարի տակ կրակ են վառում և անմիջապես անձրևը կտրվում է։

Հացի գյուղից դեպի արևելք մոտ երկու վերստ հեռավորությամբ կա ժայռից պոկ եկած և առանձին ընկած մի ահագին ժայռ քար, որ մեջտեղից ճեղքված է։ Այս քարը պաշտում են թե՛ հայերը և թե՛ թուրքերը։ Վերջիններս ասում են, թե Ալին է թրով խփել և ճեղքել։ Այս

քարի մոտ մի աղբյուր կա, որ կոչվում է «Ալի-բուլաղ» (Ալու աղբյուրը)։

Խաչմաչ, Հարավ և այլ գյուղերում կան քարեր, որոնք պաշտվում են միմիայն կայծակի հարված ստանալու պատճառով։

Քարեր էլ կան, որոնք թեև չեն պաշտվում, բայց որոնց մասին պատմվում են զանազան ավանդությունները։

Այսպիսիներից նշանավոր են.

Ուղտամարեր. Մեծ Քիրս լեռան վրա կան ուղտանման և մարդակերպ քարեր, որոնցից փոքր-ինչ հեռու մի ուրիշ քար, որ շատ նման է ասեղը թելով մի հարսի։ Պատմում են, թե մի ժամանակ այդտեղով մի հարս են տարել։ Պատահմամբ սրա զգեստի ծայրը պատռվել է, և նա առանձնացել է կարելու։ Այս միջոցին մի աղքատ պառավ կին մոտեցել է հարսին և ողորմություն խնդրել, իսկ սա բարկացել է վրան, որ այսպիսի նեղ ժամանակ եկել ողորմություն է ուզում։ Պառավն էլ յուր կողմից բարկացել և անիծել է բոլորին, որ քար կտրեն։ Եվ այդ օրվանից հարսն էլ, մակարներն էլ, ուղտերն էլ քար կտրած մնացել են այդտեղ։

Ցից քար. Աշան գյուղից փոքր-ինչ վերև գտնվում է «Ցից քարը»։ Սա մի ժայռ քար է, որ փոքր-ինչ նմանություն է տալիս երեխան գըրկած կնոջ։ Ասում են, թե մի ժամանակ մի հարս, երեխան գրկած գնալիս է եղել, երբ ավազակները հարձակվել են վրան։ Սա չկամենալով նրանց ձեռքն ընկնել, խնդրել է Քիրսից և քար դառել։

Հովվի քարեր. Ա. Խաղագի լեռան վրա կան երկու մարդ, չորս ոչխարի և մի շան քարի արձաններ։ Ավանդությունն ասում է, թե մի ժամանակ դրանք կենդանի էին։ Աստված ուղարկել է դրանց մոտ յուր հրեշտակին աղքատի շորերով, որպեսզի փորձե դրանց ողորմածությունը։ Հովիվները ոչ միայն բան չեն տվել խեղճ աղքատին, այլև քարկոծել են նրան։ Այդ ժամանակ վերջինս անիծել է նրանց և քար դարձրել։

Բ. Գրիգոր անունով մի ճգնավոր ավազակներից փախչելով թաք է կենում, հետո սրա անվամբ կոչված Լուսավորչի քերթի մեջ։ Մի հովիվ հայտնում է ավազակներին նրա տեղը, և սա նախքան նահատակվելը անիծում է հովվին, որը յուր կնոջ և ոչխարների հետ քար է կըտրում։ Այժմ ցույց են տալիս հովվին, նրա կնոջը և ոչխարներին նմանություն բերող քարերը։

ԿՐԱԿԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Կրակի պաշտման վերաբերյալ դեռևս շատ մնացորդներ կան. այսպես, շատ սովորական է կրակով երդվիլը, միշտ ասում են՝ կրակը տրնի, մեղք համարելով ասել՝ կրակը հանգցրու։ Եվ գրեթե բոլոր պառավները նախքան կրակ հանգցնելը խաչակնքվում են և «Հիսուս ու Քրիստոս» ասում։

Կրակի վրա ջուր չեն ածում, որովհետև այդպիսի դեպքերում նա ասում է, թե ե՞րբ ես մեռել, որ շիլաճաշդ չեմ եփել։

Կրակը չեն ծեծում և ոչ թքում վրան և կամ ոտը դնում, մեղք համարելով այդ, ինչպես և չեն անցնում վրայից։

Փիշերները կրակ փոխ չեն տալիս, հավատալով, որ տնեցիներից մինը կմեռնի։

Կաթի տակից ոչ մի կտոր կրակ չեն վերցնում, որ կաթը չշաղի (փսորի)։ Եթե ստիպված են վերցնելու, նախապես կաթի վրա մի տերև կամ մի կանաչ բան են դնում։

Եթե փայտը վառվելիս ձայն է հանում (վրթվրթում է), ասում են. «Աչքը դուրս գա, մեր մասին խոսող կա»։ Հետո կամ մի քիչ մոխիր են ածում, որ դադարի և կամ զանազան անուններ տալիս, որի ժամանակ որ դադարեց, այդ ապացույց է, որ նա է խոսում։

Երեկոյան լողանալիս մի կրակ են ձգում ջրի մեջ, որ շարերը չխփեն և թողնեն փախչեն։

Վառած փայտը աջ ու ձախ չեն շարժում, որ իրենց հայրը չմեռնի։

Կրակը հանգցնելիս չեն փչում, մեղք համարելով այդ, այլ մոխիր են ցանում վրան։

Կրակը կայծակից մնացել է կայծքարի մեջ, և հետո մարդիկ գայլախազով (չախմախ) խփել հանել են։

Կրակն ու ջուրը քույր և եղբայր են։ Մի անգամ նրանց մեջ վեճ է ծագել, թե ո՞րն է ուժեղ, և վճռել են փորձել։ Քույր կրակը յուր ուժը ցույց տալու համար գնացել սարերի իտոը վառել է, իսկ եղբայր ջուրն էլ գնացել բոլորը հանգցրել է։ Այն օրվանից նրանք միմյանցից բաժանվել են։

Կրակի պաշտման հետ կապված է և օճախի պաշտամունքը։ Հայտնի է, որ օճախ բառն ունի և գերդաստան իմաստը։ «Մեծ օճախի տղա է»,—սովորական գովասանքն է, որ տրվում է մեծատուններին որդիներին։ Մեծ օճախից աղջիկ ուզելը և կամ մեծ օճախին աղջիկ տալը ամեն մի ծնողի տենչանքն է կազմում։ Երբ գնում են աղջիկ

ուզելու, սովորաբար ասում են. «Մունք եկալ ընք մըն հափուռ մոխիր էր օնինք քու օճախետ, տանինք մեր օճախին հետ խառնինք»։

Երբ մի ընտանիք գերդաստանից բաժանվում է, նոր շինած օճախը առաջին անգամ վառում է գերդաստանի մեծը, նույն գերդաստանի օճախից բերած կրակով։

Երբ նոր հավեր են դնում, բռնում են օճախի վրա, և ոտներին ջուր ածում, որպեսզի ընտանենան և չհեռանան այդ օճախից։

Գյուղի հիմնադրի կամ նշանավոր տան օճախը նվիրական է դառնում ոչ միայն այդ գերդաստանի, այլև ամբողջ գյուղի համար. հարսանյաց ժամանակ հարս և թագվոր եկեղեցուց դուրս գալով այդտեղ են գնում համբուրելու։ Եկեղեցի չեղած տեղում պսակը այդպիսի օճախի վրա է կատարվում[1]։

Հարսը թե՛ յուր տնից դուրս գալիս և թե՛ սկեսրանց տուն մտնելիս համբուրում է օճախները[2]։

ՋՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Վարանդայում դեռևս մնացել է ջրի պաշտամունքը։ Մեղք են համարում ջրի վրա թքել և կամ նախատինքով վերաբերվել։ Նորահարսը առաջին անգամ աղբյուրի մոտ գալով, զոհ է բերում նրան ցորեն։ Կիրակի օրերը մոմեր են վառում սուրբ համարված աղբյուրների առաջ։ Առողջություն հայցող հիվանդը մոմեր է վառում, աքաղաղներ զոհում, երկրպագում և աղոթում աղբյուրին։

Աղբյուրներից մի քանիսը ամենայն տեսակ, իսկ մյուսները որոշ հիվանդությունների բուժիչ սրբատեղիներ են համարվում։ Առաջիններից նշանավոր են Շոշու գյուղում, Ձորակի մեջ գտնվողը, Վերին Սղնեբում «Կանաչ խաչ» անուն աղբյուրը։ Հղորդի գյուղում «Մոշ-աղբյուրը», որ յուր անունը ստացել է մոտի մոշի թփերից, և որի մոտ մի մեծ, պաշտվող կաղնի ծառ կա։ Ջանախչի գյուղում՝ «Մեծ աղբյուրը», որի վրա մի բանի անգամ լույս է իջել։ Ներքին Թաղավարդում երկու թքոնի ծառերի տակ պաղպաջող «Կարմիր աղբյուրը», որի մոտով անցնողը պարտավորված մի բան է դնում աղբյուրի քարի վրա և այնտեղից մի ուրիշ բան վերցնում։

---

[1] Տե՛ս էջ 98—99։

[2] Տե՛ս էջ 113—115։

Որպես մի որոշ հիվանդության բուժիչ, նշանավոր է Գյունեյ-Ճարտարի «Դավաչիչակ» աղբյուրը։ Ղալին-խութի հսկայական ժայռերի գագաթից կաթիլ-կաթիլ ջուր է հոսում և հավաքվում ժայռի մեջ փորված մի նեղ և երկար փոսի մեջ։ Մոլորոր հիվանդություն ունեցողները գալիս այս ջրի առջև մի զույգ մոմ են վառում, երկու հավկիթ և երկու բևեռ (քոռամեխ) թաղում ջրի մոտ, աղոթում և այդ ջրով լողանում են։ Եթե հիվանդը անձամբ չի կարող բարձրանալ այդտեղ, որովհետև սաստիկ զառիվայր է, գալիս են նրա համար ջուր առնելու։ Սրանք էլ նույն կերպ վառում են մոմեր, թաղում հավկիթ և քոռամեխ, աղոթում և բացի գրանից, վերադառնալիս էլ բոլորովին ետ չեն նայում և ջրի ամանը երբեք գետին չեն դնում։

Որպես բոր հիվանդության բուժիչ նշանավոր է Հյունոտ գյուղի ջրվեժը, որի տակ նստում լողանում են, նախապես մի զույգ մոմ վառելով ու աղոթելով։

Մյուս գրեթե բոլոր սուրբ համարված աղբյուրները բժշկում են ջերմ ու սենդ հիվանդությունը։ Այդպիսիներից նշանավոր են. Հղորդի գյուղում «Զրավոր» (Զորավոր) աղբյուրը, Փիրիճամալ գյուղում «Ծարավաջուր» աղբյուրը, Շոշկա վանքի մոտ՝ կաթնանման աղբյուրը, Ջանախչի գյուղում «Հոռնաղբյուրը» և «Քոսին» աղբյուրը, Խաչմաչ գյուղում «Թոխոպվա» աղբյուրը։ Այս վերջինս բխում է մի ավերակ մատռան մեջ։ Ավանդությունն ասում է, թե մի կին յուր երեխայի հետ եկած է եղել այս մատուռը աղոթելու։ Մոր աղոթքի ժամանակ երեխան շատ լաց է եղել և ջուր խնդրել։ Մայրը աղոթքը չընդհատելու համար խնդրել է աստծուց, որ երեխայի ծարավը հագեցնի։ Աստված լսել է նրա խնդիրը, և այդ աղբյուրը բխել է մատռան մեջ։

Առհասարակ գրեթե բոլոր սուրբ համարված աղբյուրների մոտ կան ծառեր, որոնք նվիրական են համարվում։ Հիվանդները լողանալուց հետո իրենց վրայից մի կտոր են պատռում և փաթաթում ծառին, հուսալով իրենց հիվանդությունը այդ շորի հետ միասին թողնել այդ ծառի մոտ։ Մի քանիսի մոտ էլ, ինչպես Փիրիճամալինը, ծառ չկա։ Այդպիսի դեպքում հանդերձի մի կտոր կապում են մի փոքրիկ քարի վրա և դնում աղբյուրի գլխին։

Իսկ վերջին Թաղավարդի «Շիշմա» (ընտիր) աղբյուրի մոտով անցնողը և կամ ջուր խմողը անպայման մի քար է ձգում աղբյուրի գլխին, հավատացած լինելով, որ եթե այդ չանե՝ ինքը կամ ազգականներից մինը կմեռնի։

ԾԱՌԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Վարանդայում սաստիկ տարածված է ծառերի մեծարանքը, համարյա բոլոր գյուղերում կան մի կամ մի քանի ծառեր, որ սուրբ են համարվում, որոնց առաջ մոմեր են վառում, աքաղաղ և կամ ոչխար մատաղում, նրանց տերևներից գուշակություններ անում։ Շատ մեծ մեղք է համարվում այդ սրբազան ծառերը և կամ նրանց ճյուղերը կոտրտելը, մեղանչողը անմիջապես պատժվում է։ Այսպես, պատմում են, թե մի մարդ, սրանից 40 տարի առաջ կտրել է Սարիբեկի ծառից մի ճյուղ, որի պատճառով և անմիջապես հիվանդացել, մահճե է ընկել։ Նրա հիվանդությունը մինչև այժմս էլ տևում է. նա այժմ պառկած է մի ջախպի մեջ։ Կինը միշտ հոկում է նրա վրա և ջախպի կողքից կապած մի գդալով շուտ-շուտ կերակուր ածում նրա բերանը։ Այժմ ամեն տարի մի անգամ նրան ուխտ են տանում Սարիբեկ։

Այս ծառերի ճյուղերը ծածկված են բազմաթիվ գույնզգույն շորերի կտորներով, որ ուխտավորները կապում են, իրենց հիվանդությունն էլ դրանց հետ միասին այստեղ թողնելու հույսով։

Երբ ուզում են գուշակություններ անել, առավելապես աղջիկները գորթի (ճինճի) են ձգում այդ սրբազան ծառերի վրա, ինչպես, օրինակ, շատ հաճախ անում են Նոր-Շեն գյուղում Սաղունց կաղնու վրա և սկսում ճոճալ։ Մի որոշ բան մտները դնելով, նրանք լարում են իրենց բոլոր ուժը և ճյորթիով բարձրանալով՝ աշխատում մի տերև կարել և իրենց հետ բերել (պաշար բերել)։ Եթե հաջողում են, դա ապացույց է, որ իրենց մտադրած բանը կատարվելու է, լավ է և այլն, իսկ եթե չեն հաջողում, նշանակում է, թե չպիտի կատարվի, լավ չէ և այլն։

Այսպիսի ծառերից մի քանիսը պաշտվում են որպես ամենայն տեսակ հիվանդությունների բժշկող և ամեն տեսակ խնդիրներ կատարող, իսկ մյուսները որպես մի որոշ հիվանդության բժշկող և կամ մի որոշ զորություն ունեցող։

Առաջին տեսակի ծառերից նշանավոր են.

Ա. Սիտորաշեն գյուղի այգիների մոտ գտնվող չինարի ծառը, որի շրջապատը 25 մետր է։ Սրա բունը բոլորովին դատարկ է, և տասնյակ մարդիկ պաշտպանվում են դրա մեջ անձրևի և ուրիշ ժամանակ։ Առավելապես Համբարձման օրը շրջակա գյուղերից մեծ բազմություն է գալիս այստեղ, մոմեր վառում և կաթով ճաշ (կաթնապուր) եփում՝ բաժանում իրար մատաղ։

Բ. Վերին Թաղավարդ գյուղից արևմտահարավ անտառապատ բլրի վրա գտնվող «Պըրևածառ» (բարևածառ) ուխտատեղու ծառերը։

Գ. Սարիբեկի երեք հաստաբուն թեղի ծառերը։

Դ. Հին Գրախտիկից հյուսիս մի բլրակի վրա գտնվող «Կախան» ուխտատեղու ծառերը։

Ե. Գյունեյ-Ճարտար գյուղի «Կոհակ» կամ «Հակովիկ» ուխտատեղու ճապկի ծառերը։

Զ. Հին Քյաթուկ գյուղի Գիզավոր (զորավոր) ուխտատեղու երկու ահագին կաղնու ծառերը։

Է. Հարավ գյուղի «Զրավոր» (զորավոր) անունով հինավուրց կաղնին։

Ը. Նույն գյուղի հարավային կողմում մի վերսա հեռավորությամբ «Ջամալի խաչ» անունով թեղի, հացի, կաղնու ծառերը։

Թ. Ղավախան գյուղի թեղի և ընկույզի ահագին ծառերը։

Ժ. Սղնախ գյուղի «Խնձորախաչ» կաղնին։ Սրա մասին պատմում են, թե մի ժամանակ խնձորենի է եղել։ Մի օր մի թուրք ճիպոտով խփել է, որ խնձորները թափե, իսկույն ևեթ կաղնու է փոխարկվել։

ԺԱ. Միրիշալլու գյուղի տնձրի ծառը, որ մի բունի վրա բուսած չորս ահագին ծառեր են։ Պատմում են, թե Սուսաննենց տնից մինը կտրել է այս ճյուղերից մինը և անմիջապես մեռել։ Նրա տունն էլ կամաց-կամաց քանդվել է և սերունդը ոչնչացել։ Եվ այժմ գյուղի կանայք անիծելիս ասում են. «Սուսաննենց օճախի օյինը դա դլխուտ»։

ԺԲ. Ավդուր գյուղի արևմտահարավային կողմում, բլրակի վրա «Մաթիկ բաբա» կոչված կաղնի և այլ ծառերը։

Այստեղ ամեն մի անցորդ դնում է յուր ձեռնափայտը մի խոռոչավոր կաղնու մեջ, հուսալով փայտի հետ յուր ցավն էլ այնտեղ թողնելու։ Զոհ մատուցողներն գործ են ածում այդ փայտերը մատաղներն եփելու։

ԺԳ. Նույն գյուղում, մի ուրիշ բլրակի վրա գտնվող «Ծառեխ» անունով ուխտատեղու կաղնու, բոխու և այլ ծառերը։

ԺԴ. Նոր-Շենի Սաղունց կաղնին։

ԺԵ. Գիշի գյուղի «Ոսկի խաչ» անուն ահագին կաղնին։

ԺԶ. Գյունեյ-Ճարտարի Շամանեքի մոտի թիքեռնը ծառը։ Ասում են, թե քահանան կտրել է դրա մոտ եղած մյուս ծառը, որի պատճառով և հիվանդացել և երեք օրից հետո մեռել է։

ԺԷ Սղնեք գյուղի «Կաղնի խաչը»։ Սա մի ահագին կաղնի է, որի մոտ մի խաչ քար կա։

ԺԸ. Նույն գյուղի «Կանաչ խաչը»։ Սա էլ մի քարակույտ է, շրջապատված ընկուզենի և ուռի ծառերով։

ԻԹ. Դոնավարդ գյուղի «Խաչին հարթ» անուն սղնի ծառը և այլն։

Միմիայն մի որոշ հիվանդության բժշկող և կամ մի որոշ շնորհք տվող սուրբ ծառերից նշանավոր են հետևյալները.

Սարիբեկում կա մի հարյուրամյա թեղի ծառ, որի բնի մեջ առիշեղ 1/2 մետր երկարության մի նեղ անցք է ձգվում։ Մկնատամ ունեցողները մոմեր վառելով ծառի առջև, մի ճյուղի վրա շոր են փաթթում, անցկացնում անցքի մեջ և ապա հանում և հյութը քսում մկնատամին։ Ասում են, թե անմիջապես լավանում է։

Քերթ գյուղի մոտ կան չորս ահագին կաղնիներ, որոնց բնի հողից վերցնում քսում են երեսներին, որ մկնատամն անցնի։ Սրա ուխտի օրը Ավագ շաբաթի օրն է, երբ բազմաթիվ մոմեր են վառում և մատաղներ կտրում։

Սարգսաշենի մոտ մի քլբվերդի ծառ կա, որ կոչվում է «Ալիսբյուհազի խաչ»։ Հաղորդները գալիս են այս ծառի առաջ մոմեր են վառում և բևեռներ դամում ծառին, շորի կտորներ կապում, որ այլևս չհպտան։

Դոնավարդ գյուղում կա մի խաչքար, շրջապատված կաղնի ծառերով։ Այս տեղը կոչվում է «Գյորդնուկախաչ» և այստեղից գալիս են մեռելների վրա «գորդնուկ» ունեցողները բժշկություն հայցելու։

Խաչմաչ գյուղի հանդեպ մի բլրակի վրա գտնվում է «Հարնա եղջի» անունով մի փոքրիկ մատրան ավերակ, ուր կան վեց ընկույզի և թեղի ծառեր։ Սա բժշկություն է տալիս հոդացավի և մեջքացավի։ Միևնույն ժամանակ ամեն մի անցորդ նախ ուխտ է անում այստեղ և ապա անցնում։ Մինը պատմում էր, թե մի անգամ հարբած լինելով՝ անցել է այդ տեղի մոտով և չի համբուրել, տուն հասնելուն պես վիզը դավել է, և միայն երկրորդ օրը, երբ մի աքաղաղ է զոհել այդ ուխտատեղուն, ուղղվել է։

Հացի գյուղում «Որդոտեն (որդերի) խաչ» անունով մի ահագին կաղնի կա, որ բժշկություն է տալիս ջերմ ու տենդ հիվանդության։

Փիրիճամալ գյուղի «Զրավար» (զորավոր) անունով խոռոչավոր ծառը և Նախիջևանիկի «Քամու-խաչ» անուն բարձր ծառերը ռևմատիզմի բժշկող են։

Գիշի գյուղի մոտ էլ կա Բբբրջամալ կոչված ուխտատեղին, որ մի մատրան հիմնահատակ ավերակ է, պատած թքեռն և թեղի ծառերով։ Հատ լաց լինող երեխաներին տանում այդ ծառի տակ պառկեցնում և մի քար դնում են փորին ու մոմեր վառում ծառերի առաջ, որ երեխան այլևս շատ լաց չլինի։

Նոր-Շենում մի պաշնի ծառ կա, որի բնի մեջ մի ծակ է գոյացած։ Նախապես մոմեր վառելով, լղար երեխաներին անց են կացնում այդ ծակով, որ գիրանան։

Եմեշչան գյուղում գտնվում է «Ջյարկյա մարագ» անունով ուխտատեղին, որ մի շարք մսուրների տեղեր են մի քանի խաչքարեր։ Սրանց մոտ կան շատ ծառեր, որոնց ուխտ են գալիս խուլ մարդիկ, բժշկություն հայցելու։

Նախիջևանիկում մի նահատակի գերեզման կա, խաչքարերով և ծառերով շրջապատված, ուր բերում են խելագարներին, բժշկություն հայցելու։

Դոնավարդ գյուղի հանդեպ, մի բլրակի վրա գտնվում է մի փոքրիկ կաղնի, որ կոչվում է «Մատաղախուտ»։ Այստեղ այս կաղնուն զոհեր են մատուցանում, մանավանդ երբ մորեխ է գալիս։ Ասում են, թե մորեխը գալիս այդ կաղնու վրա հանգստանում է, և երբ մատաղ են կտրում, ուտում և անմիջապես հեռանում է։ Մատաղախուտի մոտ կա մի հին ամրոցի ավերակ, որ տեղացիները «կռապաշտի դալա» են կոչում։ Ավանդաբար ասում են, թե այստեղ բնակվող կռապաշտներն էլ այդ մատաղախուտին զոհեր են մատուցելիս եղել։

Շոշկա վանքում կան հինավուրց ծառեր, ուր բերում են թե՛ հիվանդ և թե՛ առողջ անասուններ, երեք անգամ պտտեցնում ծառերի և վանքի շուրջը և մահակը կոտրում, որպեսզի հիվանդ անասունները առողջանան, իսկ առողջները պահպանվեն հիվանդանալուց։

Դոնավարդ գյուղի արևելյան կողմը կա մի ճապկի ծառ, որ շատ բարձր է։ Հիվանդ անասուններին բերում երեք անգամ պտտեցնում են այս ծառի շուրջը և մահակը կոտրում ծառի տակ, որով և անասունի հիվանդությունը այդ կոտրված մահակի հետ մնում է այդտեղ ու անասունը լավանում։

Նույն գյուղում կա և «Տրվերբախաչ» անուն ուխտատեղին, որ մի խաչ քար է, շրջապատված բոխի ու տանձի ծառերով։ Ամուլ կովերին տանում են այնտեղ, որ ծնեն։

Սուրբ համարված ծառերը չորանալուց հետո էլ ժողովրդի համար նվիրական են մնում։ Ոչ ոք չի կտրտում, վառում և կամ ուրիշ տեղ տանում այդ փայտերը, այլ շարունակում են մոմեր վառել և աղոթել դրանց առաջ։ Եվ երբ սկսում է փտել, փոշին ջրի մեջ են ածում և խմում կամ քսում գորտնուկի (ձեռի հիվանդություն) վրա, որ առողջանա։ Այսպիսի փոշին «խնոթուն» է կոչվում։

Այսպիսի ծառերից նշանավոր են Սգնեք գյուղի կաղնին, Գյունեյ-Հարտարի օճախի մոտինը և այլն։

Մի քանի ծառեր էլ, ինչպես և մի քանի քարեր, պաշտվում են լոկ այն պատճառով, որ կայծակի հարված են ստացել։ Ժողովուրդը հավատում է, որ անձրև կամ կարկուտ գալիս քաջքերը պաշտպանվում են ծառերի կամ քարերի տակ, իսկ հրեշտակները իրենց ձեռքի գավազանով՝ կայծակով, խփում են նրանց և հալածում այնտեղից, միանգամայն սրբելով և ծառը կամ քարը։ Այսպիսի ծառերից հիշենք օրինակ Հարավ գյուղի կենտրոնում, ձորակի մեջ գտնվող կաղնին։ Խաչմաշ գյուղում Հարևան եղցու ընկուզենին և այլն։

Մի քանի բույսերի և ծաղիկների մասին էլ կան հետևյալ ավանդությունները.

Բամբակ. Աստված մարդուն կավից շինելուց հետո կավոտ ձեռքերն իրար է քսել և կավի մնացորդները եթկիր թափել, որից բամբակ է բուսել։

Խաղող. Խաղողը առաջացել է Նոյ Նահապետի մատուցած զոհի սակորներից, գետնի մեջ թաղելուց հետո։

Վարդ և մանուշակ. Վարդն ու մանուշակը քույր և եղբայր են, որ միմյանց միշտ կարոտ են մնում։ Եթե մինը կարողանա պահել մանուշակին և ցույց տալ քրոջը, ինչ որ խնդրե, անմիջապես կկատարվի։

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

ԹՌՉՈՒՆՆԵՐ

Միծեռնակ. Վարանդայում թռչուններից ամենից ավելի ծիծեռնակն է պաշտվում։ Շատ մեծ մեղք է համարվում նրան սպանել և կամ նրա բունը քանդել։ Ինձ գանգատվում էր մի մարդ, թե ուզում է տունը քանդել, նորոգել, բայց չի համարձակվում, որովհետև տան հետ միասին պիտի քանդվի և ծիծեռնակի բույնը։ Գանգատվողը պնդում էր, թե յուր հարևանի տունը հրդեհ էր ընկել և բոլոր երեխաներին այրել, որովհետև տան երիտասարդներից մին անխոհեմություն էր ունեցել ծիծեռնակի բույնը քանդելու։

Մի կին էլ գանգատվում էր, թե ծիծեռնակը բույնը շինել է օճախի անմիջապես գլխին, այնպես, որ շատ անգամ կեղտոտում է կերակուրները։ Որքան և անախորժ էր այս բանը տնեցիներին, այնուամենայնիվ նրանք չէին համարձակվում քանդելու բույնը։

Հավատացնում են, որ շուշեցի Սեյրանենց Սահակը մեղք չհամարելով ծիծեռնակին վնաս հասցնել, մի անգամ բռնել է մի ծիծեռնակ և լեզուն կտրել։ Եվ այս է եղել պատճառը, որ նրա հինգ որդին էլ համր են ծնվել։

Երբ առաջին անգամ գալիս են ծիծեռնակները, մարդիկ և կանայք նրանց նայելով երեսներին խաչ են հանում, և առհանարակ երբ նրանք ճռվողում են, ասում են, թե սաղմոս են քաղում, ժամ են ասում, օրհնում են մեզ և այլն։

Այսպես պաշտելու մասին ասում են, թե մի անգամ խայթող սողունները հավաքվել են և խորհուրդ արել, թե ո՞ր կենդանու արյունը ամենից քաղցր է, որ առավելապես նրան խայթեն։ Երկար վիճաբանությունից հետո մոծակին ուղարկում են, որ գնա բոլորի արյունն էլ փորձե և ապա իրենց տեղեկացնե։ Սա գնում բոլորին խայթում և մարդու արյունը ամենից քաղցր է գտնում։ Երբ վերադառնում է յուր ղեկուցումն անելու, ծիծեռնակն իմանալով այդ, հարձակվում է վրան և սպանում։

Մի ուրիշ ավանդություն էլ ասում է.

Մուկը ապաստան գտնելով Նոյի տապանում, կրծեց և ծակեց տապանը։ Ջուրի սկսեց ներս լցվել։ Նոյը այս տեսնելով՝ բարկացավ մկան վրա, որը գնաց, մի անկյունում թաք կացավ։ Հետո Նոյն առաջարկեց ֆենդանիներին, որ փակեն ծակը, սակայն ոչ ոք չկարողացավ։ Վերջապես օձը ոլորվելով տարածվեց ծակի վրա և ծածկեց այն։ Երբ ջրհեղեղը անցավ, Նոյն առաջարկեց օձին վարձատրություն խնդրել մատուցած ծառայության համար, և սա հանելով յուր լեզուն, մարդու արյունն ուզեց։ Այդ ժամանակ ծիծեռնակը, որ Նոյի ոտի վրա նստած էր, հարձակվեց և օձի լեզուն կծեց։ Եվ այս է պատճառը, որ դեռ այժմս էլ օձի լեզուն միջից կտրված է։ Օձն էլ իսկույն հարձակվեց ծիծեռնակի վրա, սակայն կարողացավ միայն նրա պոչից կծել։ Ուստի և՝ նրա պոչը երկու մասի բաժանվեց։ Օձի խայթած տեղից երկու կաթ արյուն ընկավ, մինը Նոյի վրա, որ անմիջապես ոջիլի փոխարկվեց, մյուսն էլ գետնին, որ լու դարձավ և թռավ։

Աղավնի. Սա էլ ծիծեռնակի պես, բայց ոչ նրան հավասար, պաշտվում է։ Սրան ևս չեն սպանում և կամ վնաս հասցնում։ Միայն թե սրա մասին մի առանձին ավանդություն չի պատմվում, տարածված են միայն ս. գրքի մեջ պատմվածները։

Կաչաղակ. Պաշտվող թռչուններից է և կաչաղակը, որի մասին պատմում են, թե մի անգամ սա մի պառավի տան գլխին նստած ավետում է նրան, թե որդին օտարությունից գալիս է։ Պառավը առանց հասկանալու նրա ավետիքը, մի կտոր հաց է ձգում նրան։ Նա իսկույն տանում է այդ հացը և տալիս որդուն, որ սաստիկ քաղցած է լինում։ Հետո վերադառնալով նույն բանն է ավետում և մի կտոր հաց ևս ստանալով, խեղճ որդուն տանում։ Այս բանը մի քանի անգամ կրկնվում է, մինչև որ պառավը ձանձրանալով, մի քար է ձգում դեպի կաչաղակը։ Սա էլ վերցնում է այդ, և տանում ձգում որդու գլխին։ Որդին իսկույն ևթ մեռնում է։ Պառավը գալիս է մեռած որդու մոտ և ճանաչում յուր ձգած քարը։ Այնուհետև այս քարը չեն ձգում կաչաղակին, այլ միշտ հաց են տալիս ու խնդրում. «Բարին մեզ, չարը թըշնամուն»։

Պատմում են, թե մի անգամ մի գյուղացի մի կաչաղակի ոտներից մի քիչ հարդ է կապել և կրակ տալով՝ բաց թողել։ Խեղճ թռչունը իսկույն այրվել է։ Ուղիղ մի տարուց հետո այդ միևնույն գյուղացու փոքրիկ աղջիկը յուր տատի տանը միայնակ եղած միջոցին շորերը վառվում են, և մինչդեռ նա վազում է տուն, կրակը լափում է նրան։ Գյուղացին նոր զգում է յուր արած մեղքը և կրած պատիժը։

Թռչուններ էլ կան, որոնք թեև չեն պաշտվում, բայց որոնց մասին կան հետևյալ ավանդությունները.

Կուկու (կկու). Մի հարս ծառերից մի ճոճք է կապում, դնում յուր միակ երեխային մեջը և ինքը գնում քաղհան անում։ Երբ մի քիչ հետո վերադառնում է, երեխային այլևս ճոճքի մեջ չի գտնում։ Ցավից և սկեսուրի վախից թռչուն է դառնում և կուկու[1] կանչելով պտրտում յուր երեխային։

Հուպուպ կամ Սաեբակապ (Հոպ-հոպ). Սա մի հարս է եղել, որ մի անգամ թողել է խմորը կիսատ հունցած և սկսել է մաղերը սանրել։ Հանկարծ կեսուրը վրա է հասել, և սա ամոթից ու վախից թռչուն է դառել, սանրը գլխին, և թռել։

Կաքավ. Սա ժամանակով մի հարս է եղել։ Մի օր, երբ սա խմոր է հունցել, սկեսուրը բարկացել է վրան, թե ինչո՞ է պինդ հունցել. սա էլ դիմադարձություն է արել, ասելով թե կակուղ է։ Սկեսուրը բարկանալով անիծում է հարսին, որ իսկույն կաքավ է դառնում։ Բայց մինչև այսօր էլ նա դիմադարձություն է անում սկեսրոջը, անդադար կրկնելով. թե «Կակուղ ա, կակուղ ա»։

Բուլբուլ. Աստված Ադամին ստեղծելուց հետո, երբ տեսավ, որ մե-

[1] Վարանդայի գյուղերում երեխային կուկու են կանչում։

նակ տխուր է, ասաց նրան, որ յուր համար մի ղրուցընկեր ընտրի, և նա ընտրեց բուլբուլին։ Սակայն այս անգամ էլ բուլբուլի ընկերը միայնակ մնաց և սկսեց տխրել, ուստի և աստված ստեղծեց Եվային և բլբուլին վերադարձրեց յուր ընկերոջը։

Պղուղուս (բվեն). Մի պառավ ունենում է Պղուղուս անունով մի հատիկ որդի։ Մի անգամ եկեղեցուց վերադառնալով, պառավը երեխային մեռած է գտնում։ Խփելով յուր գլխին, պառավը խնդրում է աստծուց, որ իրեն թռչուն դարձնե, որ և կատարվում է։ Եվ այդ օրվանից այդ խղճուկ պառավը կանչում է յուր որդուն՝ Պղուղուս, Պուղուս, այն էլ գիշերները, որովհետև ոչ հանգիստ և ոչ էլ քուն ունի։

Աղռավ. Երբ Կայենը սպանում է Աբելին, Ադամը սկզբում կարծում է, թե քնած է, բայց երբ հետո հաստատվում է, որ մեռած է, պատանում է նրան և թաղում։ Աստված խղճում է Ադամին և ագռավին ուղարկում, որ ասե Աբելին, թե՝ պատանդ մաշիր եկ։ Սա էլ գնում է, և փոխանակ այդ, ասում է, թե՝ տապանդ մաշիր, եկ։ Աստված բարկանում է ագռավի վրա և անիծում, ասելով, թե բերանդ դրած յոթը պատառից մինը միայն կուլ գնա։ Եվ այդ է պատճառը, որ մարդիկ այդքան ատում են նրան, և որ ագռավը այդքան անկուշտ է, որովհետև յոթը պատառից միայն մեկն է կուլ գնում։

Անգղ. Անգղը ամենաիմաստուն թռչունն է համարվում, որի համար և նրան չեն սպանում։ Նա շատ երկար է ապրում և միայն 700 տարեկան ժամանակն է ձու ածում և ձագ հանում։ Պատմում են, թե շատ հին ժամանակներում Հարուն-Ղարուն մի շատ հարուստ մարդ յուր ահագին հարստությունը բարձում է ուշխարների վրա և տանում մի սարի մեջ թաղում, ուշխարներին էլ մորթում։ Սրա թոռը իմանալով այդ հարստության մասին, կամենում է պտրել և գտնել, բայց միջոցները ի դերև են ելնում։ Վերջապես մի իմաստուն մարդ խոստանում է անգղներից իմանալ տեղը և այս նպատակով շատ ուշխարներ մորթելով տալիս ու տարածում մի դաշտի մեջ։ Ինքն էլ մի քթոցի մեջ, գոմեշի ստամոքսով ծածկվելով թաք է կենում։ Իսկույն անգղներն ամեն կողմից հավաքվելով ուտում են ուշխարները, երբ կշտանում են, գնում իրենց պապին էլ են բերում, որ նա ևս կշտանա։ Երբ սա ևս կշտանում է, թոռները հարցնում են նրան, թե ուրիշ անգամ էլ այդպես կշտացե՞լ էր։

Մեկ էլ, ասում է պապը, Հարուն-Ղարունի ժամանակն եմ կշտացել, երբ ուշխարներին բարձեց յուր ահագին հարստությունը և տարա՛լ, այն սարի մեջ թաղեց և հետո էլ բոլոր ուշխարները կոտորեց։

Իմաստուն մարդը անմիջապես դուրս է գալիս քթոցից, գնում փորում ցույց տված սարը և գտնում անթիվ հարստություն։

Հարուն-Ղարունի ժառանգը առաջարկում է իմաստունին իբրև վարձատրություն վերցնել հարստության մի մասը, սա էլ խնդրում է ասել այնքան, որքան կկշռի մի մարդու գանգ։ Սակայն Հարուն-Ղարունի բոլոր հարստությունը չի կարողանում կշռել մի մեռելի գանգ։ Այս ժամանակ իմաստունն ասում է, թե մի բուռ հող ածեք նժարի մյուս կողմը, և երբ ածում են, իսկույն կշռում է։ «Ահա, տեսնո՞ւմ եք,— ասում է իմաստունը,— մարդու աչքը միայն մի բուռ հողը կկշտացնի։ Այդ անթավ հարստությունը բավական չեն նրան, ես էլ բացի այդ մի բուռն հողից, ուրիշ բան չեմ ուզում»։

Զչրթան կամ չափարծիտ. Մի անգամ աստված հրամայել է, թե ով որ շուտով ինձ մոտ գա, ես նրան թռչունների թագավոր կնշանակեմ։ Արծիվը իսկույն սկսում է թռչել դեպի երկինք, բայց ճանապարհին հոգնում է և ուզում է հանգչել, այս ժամանակ չչրթան կամ չափարծտին, որ նրա թևի տակ ապաստանած, հանգիստ բարձրանում էր, պուրս է թռչում և գնում աստծու մոտ։

— Ինչո՞ւ ես եկել,—հարցնում է աստված այս փոքրիկ թռչունին։

— Եկել եմ, որ թռչունների թագավոր նշանակես ինձ,—պատասխանում է չափարծտին։

— Դեհ, որ այդպես է, ասում է աստված, գնա մի ճիպոտ բեր, որ ոչ կարճ լինի, ոչ երկար, ոչ ծուռ, ոչ ուղիղ։

Այդ օրից սկսած նա պտրում է չափարների (ցանկապատ) տակ ճիպոտներ, և երբ գտնում է, ասում է. «Չի՜, չի՜, էս չի՜, էն չի՜»։

ՄԻՋԱՏՆԵՐ

Մեղու, շերամ և ոռդան կարմիր. Հոբ երանելին որդունքը վերցրել դրել է վերքերի վրա ասելով. «Կերեք, կերեք, աստված ձեզ կերակուր է ավել»։ Որդերն էլ իսկույն փոխարկվել են մեղվի, շերամի և ոռդան կարմիրի։

Աստծու կով. Աստծու կով կամ զատիկ կոչված միջատը (божья коровка) սուրբ են համարում և երբեք չեն սպանում։

Զկներ. Զկների մասին ընդհանրապես շատ քիչ ավանդություններ կան, երևի մեծ գետեր և լճեր, հետևապես և զանազան տեսակ ձկներ լինելու պատճառով։ Հայտնի են միայն մի քանիսը։

Ծձաձուկը. Սա Գաբրիել հրեշտակի փողն է համարվում, որ հանկարծ ընկել է ջուրը։ Ապացույց՝ որ նրա վրա կան 12 ծակի հետքեր։ Այս ձկները խմբով են շրջում, սրնգի ձայն հանելով։ Ձկնորսներն էլ ականջ են դնում, լսում սրնգի ձայնը և ուռկանը ձգում, որսում։

ՕՁԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Քյաթուկ լեռան վրա, «Սիպոտակ հյուղ» ուխտատեղում և Սխտորաշենի ահագին չինարի ծառի մեջ կան մի մի ահագին օձ։ Ճանապարհորդները անցնելով այդ ուխտատեղիների մոտով, գնում ուխտ են անում, մոմ վառում, աքաղաղներ զոհում, որպեսզի այդ օձերը պաշտպանեն իրենց և ճանապարհորդության ժամանակ օձերը չխայթեն իրենց։ Զոհաբերությունների ժամանակ այս օձերը դուրս են գալիս և հանգիստ կերպով շրջում, ոչ մի վնաս չպատճառելով ուխտավորներին։

Ուխտավորները վերցնում են այդ օձերի շապիկների (խորխի) կտորները և պահում գլխարկների մեջ։ Երբ օձ է պատահում, հանում այդ շապկի կտորը ցույց են տալիս։ Հավատացնում են, թե օձը անմիջապես ետ է քաշվում և ոչ մի վնաս չի տալիս։

Ընդհանրապես հայերը ոչ մի վնաս չեն հասցնում լոկին (լորտու), մինչդեռ օձերին աշխատում են սպանել։

Պատմում են, թե մի անգամ մի հայ մարդ մի կատաղած ուղտի վրա հրացան է արձակում, բայց հրացանը վրիպում է, և ուղտը ընկնում է հայի ետևից։ Սա շունչը կտրված ցատկում է մի ցանկապատից և ընկնում է մի այդի։ Այս միջոցին մի լոկ դուրս է պրծնում և խայթում, սպանում կատաղած ուղտին։ Այնուհետև հայերը լոկին հայ են համարում, և նրա արած լավության համար պաշտում։

Լոկը օձերի սատրիչն է համարվում, և երբ սկսում է սատրել մի օձի գլուխ, հանկարծ մի հարված է տալիս գլխին և անմիջապես սպանում։

Լոկին բարկացնելիս ասում է. «Կհամբերեմ, չեմ կծի, բայց եթե կծեցի, միայն հավի պանիր պիտի քսեք, որ առողջանա»։ Եվ որովհետև հավի պանիր չկա, ուստի լոկը սրանով ուզում է ասել, թե յուր կծածը ոչնչով չի լավանա։ Այս է պատճառը, որ վարանդացիները երբեք չեն շարշարում կամ սպանում լոկին, հաստատ գիտենալով, որ նա, իբրև հայ, իրենց չի կծի, այլ միայն թուրքին, իսկ իրենց կծում է օձը, որ թուրք է և թուրքերին չի կծում։ Եվ այս է պատճառը, որ թովչիները (ովսոնչի) միայն թուրքերն են լինում։

Քաղաքի գյուղից փոքր-ինչ բարձր մի բարձր ժայռ կա, որ մի քիչ առիշեղ կտրված է։ Այդ կտրված, տափարակ տեղում, երկու թզենիների տակ ապրում է մի ոսկեղջյուր օձ, որ երբեմն յուր լուսաճառագայթը դուրս է ցցում ժայռից։ Ասում են, որ եթե մինը կարողանա մի սնդրավարտիք ձգել նրա գլխին, այն ժամանակ օձը կփախչի, բայց կթողնե յուր ոսկի եղջյուրները, որոնք իմաստություն կտան, ում մոտ էլ որ լինին։

Շատ տներ էլ օձեր կան, որ տան «գյովլաթ» համարվելով, ոչ մի հալածանքի չեն հանդիպում։ Տնեցիները ամանով կաթ են տալիս նրանց, որ խմելուց հետո ոսկիներ են ձգում ամանի մեջ։

Պատմում են, թե մի մարդ միշտ կաթ է տվել յուր տան մի օձի և ամեն անգամ մի ոսկի ստացել։ Մի անգամ այդ մարդը մի ուրիշ երկիր գնալու պատճառով որդուն է հանձնարարել օձին կաթ տալ։ Որդին տեսնելով օձի տված ոսկին, մտածում է սպանել նրան և միանգամից ստանալ նրա անթիվ ոսկիները։ Հարվածը վրիպում է, օձի ագին կտրվում է, և սա խայթում է տղին, որ մի քիչ հետո մեռնում է։

Եվ երբ հայրը վերադառնում է, իմանում է ամեն ինչ և շատ ցավում։ Մի ժամանակից հետո հայրը դուրս է հրավիրում օձին, գնում է նրա առաջ մի ման կաթ և առաջարկում հաշտվել և առաջվա պես շարունակել։ Սակայն օձը մերժում է կաթը և ասում. «Քանի որ ես տեսնում եմ իմ կտրված ագիս, և դու մտաբերում ես քո սպանված որդին, մենք չենք կարող բարեկամներ լինել»։ Այս ասելով օձը բոլորովին հեռանում է, և կարճ միջոցում այս մարդը աղքատանում և թշվառանում։

ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐ

Այս կենդանիների պաշտամունքից բուն Վարանդայում մնացել են միայն կատվի վերաբերյալ մի քանի սնոտիապաշտություններ։ Այսպես՝ կատուն սուրբ է համարվում, և նրան սպանողը յոթ եկեղեցի պիտի շինե, որ կարողանա այդ մեղքից ազատվել։ Եվ եթե այդ չի կարող անել, մեղքից թեթևանալու համար գոնե մի խալվար (ցորեն մաղելու մաղ) պիտի առնե, հատկապես դրկիցներին փոխ տալու։

Նրա մասին կան հետևյալ ավանդությունները.

Կատու. Ա. Քրիստոսին փշե պսակով շարշարելիս արցունքը հորդուբխյամբ հոսում էր, և նա թաշկինակով սրբում էր։ Մինը խլեց նրա ձեռ-

քից թաշկինակը և գցեց աղբանոցը, ուր անմիջապես կատվի փոխարկվեց։

Բ. Մի անգամ Քրիստոս իբր մի հասարակ մարդ հյուր է լինում մի տան, մկները շատ նեղում են նրան և տնեցիներին։ Այս ժամանակ նա ձգում է յուր թաշկինակը դեպի մկները, որ կատու դառնալով՝ բռնում է նրանց։

Վարանդացիները պատմում և ուխտ են գնում մի քանի կենդանիների պաշտման տեղեր, որոնք թեև Վարանդայում չեն գտնվում, սակայն նրան սահմանակից լինելով, այնքան էլ հեռու չեն։

Այսպիսի ուխտատեղիներից նշանավոր են.

Զանգեզուրի գավառում, Տաթև վանքի հանդիպակաց լեռնաշղթայի մեջ գտնվում է Եզան ուխտատեղին, կամ ինչպես սովորաբար Թուրքերեն կոչում են՝ «Օկյուզ-ղիարատ»-ը։ Սա քարերի մի ահագին կույտ է, որ օր ավուր ավելանում է, որովհետև ամեն մի անցորդ պարտավորված մի քար է բերում ձգում այդ կույտի վրա։ Ավանդությունն ասում է, թե այդտեղ թաղված է մի եզ, որ ինքնակամ և առանց մարդու ճիպոտի այդտեղի քարհանքից ահագին քանակությամբ քար է կրել Տաթևի եկեղեցին շինելու։

Այս ուխտատեղին նվիրական է ինչպես հայերի, այնպես և Թուրքերի համար։

Երբ կենդանիների մեջ տարափոխիկ հիվանդություններ են տարածվում, թե՛ հայերը և թե՛ Թուրքերը բերում են կենդանիներ և այդ քարակույտի շուրջը երեք անգամ պտտեցնում։ Եվ եթե, հիվանդության սաստկության պատճառով, կենդանիներին բերել չեն կարող, գալիս, այդ քարակույտի տակից մի բուռ հող են հանում և տանում, աղի հետ խառնում, տալիս հիվանդ կենդանուն։ Շատ դեպքեր են պատմում, երբ կենդանիները անմիջապես լավացել են։

Խաչենի Պոկսաբերի հինավուրց եկեղեցու մոտ թաղված է մի արջ։ Ավանդությունն ասում է, թե այդ եկեղեցին շինելիս մի արջ շարունակ քար է կրել շրջակայքից։ Երբ եկեղեցին ավարտել են, պակասել է միայն մի մեծ քար, և այս արջը երկար որոնելուց հետո շատ հեռվում գտել է և շալակած բերել։ Երբ վայր է դրել քարը, վարպետը տեսել է, որ թոկը կտրելով արջի ուսերը՝ սաստիկ արյունոտվել է, վերցնում է թոկը և խփում եկեղեցու պատին։ Դեռ մինչև այժմ էլ ցույց են տալիս այդ արյան հետքերը։

Հետո արջը օգնել է վարպետին քարը յուր տեղը դնելու, և երբ ամեն ինչ ավարտել են, շունչը փչել է։ Վարպետը մեծ ցավակցությամբ

ամփոփել է նրա մարմինը եկեղեցու մոտ և վրան քարեր դարսել։ Ուխտավորները մոմ են վառում այդ քարակույտի վրա և մատաղներ անում։

Արջ. Սրա մասին կա հետևյալ ավանդությունը.

Արջը ժամանակով մարդ ջրաղացպան է եղել։ Երբ շատ գողություններ է արել, աստված բարկացել է վրան և արջ դարձրել։ Եվ ապացույց սրան՝ երբ սպանում են արջին, սա առաջին թաթերը միմյանց վրա դնելով՝ խաչում է։

Բոլոր կենդանիները և բույսերը լեզու ունեն և կարող են խոսել։ Որպեսզի մարդիկ կարողանան նրանց հասկանալ, պետք է, որ Շահմար օձը յուր լեզուն քաշե մարդու բերանը։ Այս բախտին արժանացել են օվչի (որսորդ) Փիրումը և Լոխմանին։

ԼՈՒՍԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Արև և լուսին. Վարանդայում դեռ մինչև այժմ էլ ծերունիներ և պառավներ կան, որոնք պաշտում են արեգակ և լուսին։ Շատ անգամ պատահում է, որ սրանք ծունր են շոքում նոր ծագող արեգակի և նոր նորոգ լուսնյակի առաջ և աղոթում նրանց այսպես. «Աստծո ցնծուղն ված ըրիգնակ, ա՜յ մորա նոր ըլած լուսնինկյա, իմ երեսս քո ոտանդ տակը, դու իմ խոխեքս պահես» և այլն։ Լուսնի նորին գրեթե բոլոր գյուղացիները առաջին անգամ լուսնին նայելիս, մի քանիսը բախտավոր համարված երեխայի կամ մարդկանց երեսին են նայում, հուսալով, որ այդ ամիս բախտավոր կերպով կանցնեն, ուրիշները դրամի վրա հայացք ձգելով համբուրում և ճակատին են դնում, հուսալով շատ գրամ շահել այդ ամսում։

Արևով երդվելը շատ սովորական է. «Իմ արևը վկա, քու կանաչ արեգ վկա»։

Միհր աստծու պաշտման մնացորդ՝ խոտի կամ փայտի կույտեր վառելու սովորությունները դեռ մինչև այժմ էլ շարունակվում է Վարանդայի գյուղերում, թեև քաղաքում արդեն վերջացել է։

Տյառնընդառաջի երեկոյին նշանված երիտասարդները ցրտնի ծառի ճյուղեր են բերում և դարսում եկեղեցու գավթում։ Հետո եկեղեցու ջահից բերած մոմով վառում են այդ կույտը, ծուխի ուղղությունից գուշակություններ անում, նորահարսին, ինչպես և նորածին երեխային երեք անգամ պտտեցնում շուրջը։ Երիտասարդները թռչում են կույտի վրայով, ուրիշները պար բռնում շուրջը։

Արևի և լուսնի մասին կան հետևյալ ավանդությունները.

Ա. Ժողովուրդը լուսինն ու արևը քույր և եղբայր է համարում։ Մի օր քույր արևը ասել է, թե ինքը վախենում է գիշերը մահ գալուց և ցերեկը էլ ամաչում է, երբ իրեն են նայում։ Այդ ժամանակ եղբայր լուսինը պատասխանել է նրան, թե ինքը գիշերը կշրջի, թող ցերեկը նա պատվի, միայն վերցնի մի քանի թոփ ասեղ և խրի իրեն նայողի աչքերը։ Եվ այդպես էլ եղել է։ Արևը նստած մի առյուծի մեջքին, սլանում է երկնակամարով և երեկոյան գնում հանգստանում մոր գրկում։ Առյուծը յուր վիթխարի թրով պաշտպանում է նրան քաջքերից։

Բ. Մի օր լուսնի և արևի մայրը խմոր էր հունցում, որդին՝ լուսինը գալիս և խնդրում է, որ իրեն համար էլ մի բլիթ շինի, մայրը բարկանում և խմորոտ ձեռքով խփում է երեսին։ Դեռ մինչև այժմ էլ լուսնի վրա երևում են նրա խմորոտ մատների հետքերը։

Գ. Մի կին յուր որդու համար գուլպա էր գործում։ Երբ քիչ էր մնացել վերջացնելու, արեգակը ուզում էր մայր մտնի, ուստի մայրը ասաց որդուն, թե՝ թող մնա, վաղը կվերջացնեմ։ Որդին աղաչում էր մորը, որ այդ օրը վերջացնի։ Այդ դեպքում, ասում է մայրը, աղաչիր արեգակին, որ մի քիչ սպասի։ Երեխան դառնում է արեգակին և ասում. «Ջան արեգակ, մի քիչ սպասիր, մայրս վերջացնի զիպի գուլպա, հագնեմ»։ Արեգակը սպասում է, և երբ երեկոյան ուշ մայր է մտնում, մայրը հարցնում է, թե ինչո՞ւ այնքան ուշացավ։

Արեգակը պատասխանում է, թե մի երեխա խնդրեց իրեն սպասել, մինչև որ մայրը կվերջացներ նրա գուլպան։ Արեգակի մայրը բարկանում է և անիծում երեխային, որ ցերեկը մեռնի և գիշերը կենդանանա, նրա մայրն էլ երբեք չվերջացնի գուլպան։ Եվ այնուհետև այս երեխան ցերեկները մեռած է լինում, իսկ գիշերները կենդանանում և գալիս է մոր մոտ, խնդրում յուր զիպի գուլպան։ Սակայն մայրը երբեք վերջացրած չէ լինում, որովհետև գործածը ինքն իրեն քանդվում է, և խեղճ երեխան ոտաբոբիկ թափառում է։

Դ. Մի հարսնացու ցանկանալով անշուշտ ավարտել յուր փեսացուի գուլպան, խնդրել է արեգակից մի քիչ էլ սպասել։ Բարի արեգակը կատարել է հարսնացուի խնդիրը և ուշ մայր մտել։ Սակայն արեգակի շար մայրը հարցնելով նրա ուշանալու պատճառը, բարկացել է և անիծել հարսնացուին, ասելով. «Քար դառնա նա»։ Իսկույն խեղճ հարսնացուն քար է դարձել։ Եվ այսօր էլ Նինգի գյուղի մոտ ցույց են տալիս այդ քար դարձած հարսնացուն։

Խավարում. Արևի և լուսնի խավարումը բացատրում են այսպես. քաջքերը կամ սատանաները կտրելով նրանց ճանապարհը, ուզում են

վիրավորել նրանց, իսկ նրանք պաշտպանվում են և վերջ ի վերջո հաղթում։

Խավարման ժամանակ մեծ սուգ է տիրում գյուղերում. երիտասարդները հրացաններ են արձակում դեպի վեր, մտածելով, թե կարող են քաջքերին խփել, ուրիշները պղնձյա ամաններ ծեծելով և զանգերը խփելով ահագին աղմուկ են բարձրացնում, դարձյալ քաջքերին փախցընելու նպատակով։ Իսկ կանանցից շատերը լալիս են և ցավից, և երդյուղից։

Օր. Երկնքում կա երեք թռչուն։ Երբ սրանցից առաջինը ձայն է հանում, բացվում է առավոտը, երկրորդի ձայնելիս դառնում է կեսօր, իսկ երբ երրորդ թռչունն է ձայնում, մութը պատում է աշխարհը։

Աստղեր. Սրանցից ամեն մեկը պատկանում է մի մարդու։ Բարեգործ և առաքինի մարդունը պայծառ է լինում, չարագործ և անբարոյականինը՝ աղոտ։ Երբ աստղը վայր է ընկնում և կամ փոխում է յուր ընթացքը, մարդը մեռնում է։

Գիսավոր աստղեր երևալիս ասում են, թե մեծ աղետներ են պատահելու, թագավոր է մեռնելու և այլն։

Հարդագողի ճանապարհի մասին պատմում են, թե մի մարդագայլ հարս լվանալով իրենց հյուրի ոտները, շատ փափլիկ է գտել, և երբ յոլորը քնել են, գնացել է, որ ուտի, սակայն հյուրը դաշույնի մի հարված է տվել նրա ծծին։ Իսկույն կաթը ցայտել է երկինք, և մինչև այժմս էլ յուր հետքը թողել։

Ուրիշներ էլ հավատացնում են, թե դա աստծու արքայության ճանապարհն է։

Շատերն էլ պատմում են, թե մինը (չգիտեն, թե ով) դարման է գողացել և ճանապարհին վայր թափել, որի հետքը մնացել է ու այժմ էլ կոչվում է «դերմանհղի»։

Ամպ. Սաստիկ սպիտակ և առանձին կանգնած ամպ տեսնելիս ասում են, թե դա Աստծու միրուքն է։

Իսկ եթե այս ամպը շատ փոքր է, ասում են դարմանագող է, որովհետև դա նշան է, որ քամի պիտի լինի և կալերից դարման գողանա։

Որոտման մասին ասում են, երբ թե մի պառավ մի պարկի մեջ բարեր ածած քաշ է տալիս, որից և առաջանում է գոռգոռոց։ Ոմանք էլ կարծում են, թե դա առաջանում է «ըլրկոծն» քամու սաստիկ շարժումից։

Առաջին որոտման ժամանակ գյուղացիները երկաթ են կծում և բարով իրենց գլխներին խփում, ասելով.

«Քրրգլոխ, ըրկրթը կեռիկ» և այս այն նպատակով, որ այդ տարի կարկուտ չգա։

Որոտ. Մի բամբակե պառավ, նստած մի բամբակե ձիու վրա, ձեռին մի բամբակե մտրակ՝ քշում է երկնքով։ Նրա ձիու ոտների արոփյունից առաջանում է որոտը։

Կայծակը հրեշտակների գավազանն է, որով խփում են սատանաներին։

Ոմանք էլ կարծում են, թե երկու հրեշ կա, որ կռվում են միմյանց հետ սրերով, այս սրերի փայլից առաջանում է փայլակը, միմյանց ընդհարումից՝ կայծակն ու որոտը։ Եվ կամ երկու վիթխարի գազանները միմյանց հետ «ղոչի են տալիս»—պոզերը միմյանց խփելով կռվում են, որոնց պոզերի ընդհարումից առաջանում է կայծակը։

Ուրիշներ էլ պնդում են, թե երկնքում մի պառավ մի թզուկ ծառա ունի, որ փայտ կոտրելիս կացինը քարին է դիպցնում, որից և կայծակ է առաջանում։

Միածանը, տեղական բարբառով «կանաչ-կարմիրը» աստծու գոտին է համարվում։ Նրանով գուշակություններ են անում, այսպես՝ եթե դեղին գույնը մյուսներից ավելի է, այդ նշան է, որ այդ տարին շատ հիվանդություններ պիտի լինի. երբ կանաչ գույնն է ավելի, դա ապացույց է, որ այդ տարի ցորենը առատ է լինելու։

Մի ավանդություն էլ ասում է, թե ծիածանը այն կանաչ կարմիր թելն է, որ բերեց Գասպար թագավորը, իբրև կնքահայր Քրիստոսի պարանոցը կապելու։

Երկրաշարժ՝ մասին հետևյալ կարծիքներն են տիրում։

Ա. Գետնի տակ ապրում է մի եղջերու, որի եղջյուրի վրա դրված է մի մեծ կաթսա, լի մի տեսակ հեղուկով։ Երբ հեղուկը տաքանում է, կոտրում է կաթսան և կտորները խփում գետնին, որից և առաջանում է «ժաժքը»։

Բ. Գետնի տակ կա մի եզ, պոչը դրած մեջքին, երբ շարժում է պոչը և խփում գետնին, երկրաշարժ է լինում։

Գ. Գետնի տակ մի ձուկ կա, երբ մեջքը քոր է գալիս, շարժվում է և յուր հետ շարժում երկիրը։

Դ. Մի հրեղեն քամի մտնում է երկրի մեջ և շարժում նրան։

Ե. «Ըլլկոծն» քամին մտնում է այն ջրի մեջ, որի վրա դտնվում է մեր աշխարհը և ալեկոծում ջուրը։ Ջրի ալեկոծությունից շարժվում է և մեր երկիրը։

Դոնավարգի և Քառասնի, ինչպես և Ազոխի և Թաղլարի միջև կան խոր ձորեր, սաղարթախիտ ծառերով ծածկված։ Այս ձորերը կոչվում են «Քաջկաձոր» և լի են քաջքերով՝ սատանաներով։

Ջանախչի գյուղում էլ, Կուսանաց անապատի մոտ ահագին ժայռի մեջ մի մեծ ճեղքվածք կա։ Գյուղացիները այդ ճեղքվածքը «Քաջքատուն» են կոչում և հավատում, թե քաջքերով լի է։ Հաղիվ է պատահում, որ գիշերները մարդիկ անց կենան այդ ժայռի մոտով։

Խոր համոզված լինելով, որ քաջքերը գոյություն ունեն իրականապես, ժողովուրդը բազմաթիվ արկածներ է պատմում նրանց վերաբերությամբ, որոնցից առաջ ենք բերում միայն հետևյալները.

Ա. Դոնավարգ գյուղում Անանյանք նկատում են, որ երեկոները քաջքերը գալիս իրենց ձին հեծնում և սաստիկ այս ու այն կողմն են քշում, այնպես որ առավոտյան ձին սաստիկ հոգնած ու քրտնած է լինում։ Միևնույն ժամանակ հյուսում են ձիու մազերը և այնպես թողնում հեռանում։ Մի երեկո կուպր են քսում ձիու վրա և առավոտ տեսնում են մի սև սատանա կպած ձիուն։ Իսկույն մի ասեղ են շուլալում նրա մարմնին և վայր առնում նրան։ Յոթ տարի շարունակ աշխատեցնում են նրան, միայն միշտ իրեն ցանկացածի հակառակն են ասում, որովհետև քաջքերը միշտ մարդկանց հակառակ են գնում։ Այսպես, օրինակ, երբ կամենում էին ասել, թե գնա ջուր բեր, ասում էին. «Մի գնա և ջուր մի բեր»։ Իսկույն գնում և բերում էր։ Յոթ տարին լրանալիս սատանան դառնում է դեպի Անանյանք և ասում. «Ինչ հիմար մարդիկ եք, յոթ տարի մնացի ձեզ մոտ, չհարցրիք, թե ինչո՞ւ ջորին չի ծնում, որ ասեի»։ Եվ իսկույն անհայտանում է։

Բ. Ղավախան գյուղի Ակոբջանը պատմում էր, թե մի օր մի սատանա խաբել է իրեն և տարել սատանաների տունը ցույց տվել։ Այդտեղ, ասում է նա, եղել է մի գեղեցիկ մուշտակ, մի յաբա (երկժանի) և մի կույտ ածուխ։ Երբ նա հետաքրքրվելով հարցրել է, թե ինչի համար են այդ բաները, սատանան պատասխանել է, թե մուշտակը նրա համար է, որ առավոտները ձգեն եկեղեցի գնացող ծերունիների վրա, որպեսզի տաքությունից թուլանան և եկեղեցի չգնան, յաբան՝ որ ձգեն յարը տեսնող և բարու հետևից գնացող երիտասարդների պարանոցը, իսկ ածուխը՝ քսեն իրենց ասածը ուրացողի երեսը։

Գ. Մի անգամ Քառասնի գյուղում մի «զուռնաչու» ձայն են տալիս, թե արի գնանք, հարսանիք կա։ Սա վեր է կենում և առաջնորդի

հետ գնում Քաջքաձորը։ Մեկ էլ տեսնում է, որ մի հարսանիք եկավ, ինքն էլ սկսում է յուր զուռնան ածել։ Քաջքերը երկար պարում են։ Այս ժամանակ զուռնային նկատում է, որ կանանց հանդերձները յուր դրկից կանանց շորերին շատ նման են, կամացուկ մի քանիսից մի մի կտոր կտրում է։

Երբ առավոտյան աքաղաղը կանչում է, բոլոր քաջքերը անհայտանում են, և ինքը մնում է այդ ձորում մենակ։ Գալիս է տուն, հանում կտորները և տանում դրացի կանանց շորերի հետ բռնեցնում, տեսնում է, որ իսկապես նրանցից է կտրված։ Պատմում է դեպքը և խրատում որ հանդերձների մեջ կամ նշխարք դնեն և կամ ասեղ շուլալեն, որ քաջքերը չկարողանան տանել հագնել։

Դ. Ջանախչի գյուղում սրանից մոտ 50 տարի առաջ, մի գիշեր մինը ձայն է տալիս Տեր Հովհաննես քահանային, թե մինը հոգու հետ է, եկ ճար տուր։ Նա էլ վեր է կենում և նրան հետևում։ Սա տանում է Քաջքատան վերևը և այնտեղից վայր գլորելով՝ անհայտանում։ Հավատացնում էին, թե դա Քաջքատան սատանաներից է եղել։

Ե. Մի մարդ լսելով քահանայի քարոզներին, յուր հարստությունը բաժանել է աղքատներին, հուսալով մեկին հազար ստանալ։ Երբ բոլորովին աղքատացել է, դիմել է նախ քահանային և ապա ասածուն, յուր բաժանածի հագարապատիկը խնդրելով, բայց երբ ոչինչ չի ստացել, սարսափել և սատանային օգնության է կանչել։ Սա իսկույն ներկայացել է նրան։ Մարդը պատմել է եղելությունը և խնդրել նրան օգնել իրեն՝ քահանայից վրեժ առնելու։ Սատանան ամենայն սիրով առաջարկում է մարդուն, թե ինքը ջորի կդառնա, թող տանի քահանային ծախե։ Մարդը համաձայնում է, և սատանան իրրև ջորի ծախվում է քահանային։ Սակայն մի երկու օրից հետո սատանա-ջորին մուկ է դառնում և ծակը մտնում։ Քահանան ծախողից յուր դրամը ետ է պահանջում։ Դիմում են դատավորին։ Վերջինս պատվելով քահանային, հրավիրում է յուր հետ ճաշելու։ Այս միջոցին հանկարծ սատանա-ջորին երևում է քահանայի արգանակի մեջ, և քահանան առանց այլևայլության կոխում է ձեռքը արգանակի մեջ և աշխատում բռնել ջորուականցից, ջորին փախչում մտնում է մյուսների պնակները և քահանան, առանց տատանվելու, կոխում է ձեռքը այս պնակից այն պնակը։ Երբ հարցնում են նրան այդպես անելու պատճառը, նա հանդիմանում է նրանց, թե՝ չե՞ն տեսնում ջորին, որ պնակից պնակ է վազում։ Անմիջապես դատավորը հրամայում է կապկպել այդ քահանային և որպես խելագար գժատուն ուղարկել։

Օրորոցագող. երբեմնապես պատահում է, որ մայրերը երեխաներին ծիծ տալիս, օրորոցի վրա ընկնում քնում են։ Այսպիսի դեպքերում ծիծը ծածկում է երեխայի բերանն ու քիթը և խեղդում նրան։

Իրենց հանցանքը սատանաներին վերագրելով, մայրերը երևակայում են, թե օրորոցագող քաջքեր կան, որ գալիս երեխաներին տանում են։ Եվ որպեսզի արգելեն նրանց երեխաներին մոտենալու, սրանց սնարի տակ նշխարք, պողպատ, հմայիլ են դնում, քնեցնելիս խաչակնքում և երեխայի վրա ասեղ շուլալում։

Սրանց մասին պատմում են, թե մի անգամ շոշեցի ջինդար (կախարդ) Ակոփին սատանաները տանում են սարը, ուր նա տեսնում է նրանց գլխավորին և մյուսներին պար բռնած։ Պարի տաքացած ժամանակ գլխավորը հրամայում է օրորոցագող քաջքին գնալ երեխա բերել։ Սա գնում է և մի քիչ հետո մի երեխա ձեռին վերադառնում։ «Այս անգամ շատ պարեցի,—ասում է նա,—տալով երեխան գլխավորին,—մի երեխա խաչակնքված էր, մի ուրիշի բարձի տակ նշխարք կար, մի երրորդի վրա ասեղ էր շուլալված, միայն այս երեխան էր մեղ արժանի, որ վերցրի բերի»։ Այս ժամանակ գալիս են ուրիշ մի քանի քաջքեր էլ, բերելով իրենց հետ կանանց հանդերձներ։ Իսկույն միմյանց ձեռքից խլելով հագնում են այդ հանդերձները և շարունակում պարել։ Պարի տաքացած միջոցին վերցնում են բերած երեխային և պարելով միմյանց ձգում։ Վերջին սատացողը դժոխային ձայներ հանելով խփում է երեխային գետին և սպանում։ Այս իրարանցման ժամանակ կրակին դրված յուղը շուռ է գալիս և յուղոտում մի քանիսի հանդերձները։

Լուսաբացին, երբ սատանաները չքանում են, ջինդար Ակոփը գալիս է գյուղ և իմանում, որ յուր հարևանի հարսը «ծծով է արել» յուր երեխային և խեղդել, որի համար և նրան սատիկ նախատում են։ Անմիջապես գնում է նրանց մոտ, պատմում է երեկոյան անցքը, օրորոցագողի երեխային գողանալն ու սպանելը և յուր խոսքերին ապացույց բերում է այն, որ յուղը թափվել և յուղոտել է հանդերձները։ Կանայք գնում նայում են իրենց հանդերձները և տեսնելով, որ հիրավի յուղոտվել են, հավատում են։

Ոչ միայն օրորոցագողերը տանում են երեխաներին, այլև պատահում է, որ «հյուրի-փարիները» իրենց երեխաները փոխում են սրանց հետ։ Փոխվածներն սկսում են լղարել և շարունակ լաց են լինում։ Այսպիսի դեպքերում տանում երեխային դնում են երկու գերեզմանի միջև

և ասում. «Իմը տար, քոնը բեր», հավատալով, որ «հյուրի-փարիները» կվերադարձնեն իրենց երեխային։

Ծաղիկ և Կարմրուկ. Ծաղիկն ու Կարմրուկը քույր և եղբայր են, որոնց ման է ածում մի ապիտակահեր պառավ կին, աջ ձեռքով ծաղիկը, ձախով կարմրուկը (պռուկ) բռնած։

Երեխան ծաղկով կամ կարմրուկով հիվանդացած՝ միջոցին, մինչև առողջանալը ձեթի ճրագը վառ են պահում, կամ մոմեր վառում, կիրակի պահում, առաղաստ չեն մտնում, միս ներս չեն բերում և այլն։

Մարդագայլ. Առավելապես կանայք, բայց երբեմն էլ տղամարդիկ գիշերները գայլ են դառնում, գնում երեխաներ գողանում, ուտում և կամ նոր թաղած ննջեցյալները հանում լափում։ Սրանք ման են գալիս գայլերի հետ միասին, խմբով, և երբ լուսանում է, հանում են իրենց մորթին, մարդ դառնում և տանում մորթին մի ապահով տեղ պահում, գիշերը նորից հագնելու և գայլ դառնալու։

Այս պատիժը նրանք ստանում են աստծուց՝ իրենց բազմաթիվ մեղքերի համար, ուտելով երկնքից թափված կարկտանման բանը, որ թափվում է հատկապես գայլերի համար։ Ուտելուց հետո անմիջապես երկնքից մի գայլի մորթի է ընկնում ուտողի վրա, և սա իսկույն գայլ է դառնում։

Յոթ տարի գայլություն անելուց հետո գայլի մորթին ինքն իրեն անհայտանում է, և մարդը այլևս գայլ չի դառնում։

Պատմում են, թե երբ կարողացել են մորթին գտնել և կրակը ձգել, մարդը այլևս գայլ չի դարձել, սակայն միշտ մարդագայլերը ահագին խնամքով թաքցնում են իրենց մորթիները։

Առաջ բերենք սրանց մասին եղած ավանդություններից գոնե երկուսը։

Ա. Դոնավարդ գյուղում մի որսորդ գիշերը նկատում է, որ անտառի մեջ կրակ է արած, և մի կին միայնակ միս է խորովում։ Կամացուկ առաջ գնալով, որսորդը բռնում է կնոջը ետևից, կապում ծառից և շուրջը պտտելով գտնում է մի գայլի մորթի, որ անմիջապես կրակն է ձգում։ Կինը ամեն ճիգ գործ է դնում մորթին ազատելու, բայց չի կարողանում։ Առավոտյան որսորդը բերում է կնոջը Դոնավարդ, ուր նա խոստովանում է, թե ինքը նուխեցի է և իբրև մարդագայլ եկել է այդ կողմերը։ Անմիջապես իմացնում են ամուսնուն, որ գալիս և նվերներ տալով՝ տանում է կնոջը։

Բ. Մի չանախչեցի որսորդ անտառում գիշերած միջոցին տեսնում է, որ կարկտանման բան է թափվում երկնքից, և գայլերը հավաքում,

ուտում են։ Ինքն էլ վերցնում մինը ուտում է, երբ հանկարծ երկնքից մի գայլի մորթի է ընկնում վրան, և ինքն էլ գայլ դառնում ու գնում միանում գայլերին։

Այնուհետև յոթ տարի շարունակ գիշերները գայլ դառած թափառում է և լեշեր ուտում։ Յոթը տարին լրացած օրը գայլերի հետ միասին գնում է Արաքսի ափը մի ձիու լեշ ուտելու, բայց այս անգամ սաստիկ գարշում է, և մորթին ընկնում է վրայից։ Այնուհետև այլևս գայլ չի դառնում։

ՍՐԲԵՐ

Սարիբեկ. Թուրք քույր և եղբայր հյուրընկալելով Երուսաղեմից եկող մի վարդապետի, դռան բացվածքից տեսնում են, թե ինչպես նա օդի մեջ կանգնած աղոթում է։ Այս հրաշքից հափշտակված, նրանք ընդունում են քրիստոնեություն և մի նորահավատ ծառայի հետ փախչում Վարանդա։ Թուրքերը հետևում են նրանց և նահատակում՝ Շուշուց մոտ 10 վերստ հեռավորությամբ, դեպի արևելահարավ, մի լեռան վրա, ուր այժմ գտնվում է նրա ուխտատեղին։ Սղբոր անունը դրված է եղել Մարտիրոս, բայց սրով նահատակվելու պատճառով վերակոչվել է Սրաբեկ, իսկ ժողովուրդը աղավաղելով կոչել է Սարիբեկ։

Ձորի մեջ, թփերի տակ գտնվում է ծառայի նահատակված տեղին, որ նույնպես ուխտատեղի է։

Սարիբեկից ոչ քիչ բարձր գտնվում է քրոջ նահատակության տեղին, որտեղ դրված քարը նորերս տեղափոխել են Սարիբեկ։

Ս. Ղևոնդ և Աննա. Մի Ղևոնդ անունով քահանա յուր քույր Աննայի հետ գերի է ընկնում կռապաշտների ձեռքը։ Մի անգամ, ծննդյան տոնին սրանք թույլտվություն են ստանում փոքր ինչ հեռանալու։ Անմիջապես Ղևոնդը մի ժայռի միջից հանելով յուր թաքցրած քահանայական զգեստը, հագնում է և սկսում ժամ ասել և խաչը ջուրը ձգել Մկոռիի մոտ՝ գետի մեջ։ Կռապաշտները իմանում և գալիս են սրանց նահատակելու։ Սրանք փախչում են, սակայն Հմբրատեղում (Համբուրիս տեղում) Ղևոնդ երեցի ձեռքը վիրավորվում է, և արյունը հոսում գետին։ Այժմ որպեսզի այդ արյան հոսած տեղը ոտնակոխ չլինի, ամեն մի անցորդ մի քար է դնում վրան և համբուրում։

Քույր և եղբայր վազել են դեպի լեռը, սակայն քույրը կես ճանապարհին նահատակվել է, իսկ եղբայրը բարձրացել լեռը, սակայն տեսնելով, որ քույրն արդեն նահատակված է, չոքում և աղոթում է,

մինչև որ գալիս և իրեն էլ նահատակում են։ Հետո որա վրա մի մատուռ են կանգնեցնում, որ այժմ կոչվում է ս. Ղևոնդյան անապատ կամ Ղոնդիկ։

Ս. Էջմիածնի տնտեսը. Մի ժամանակ Էջմիածնում մի տնտես կինկար, որ թե կաթողիկոսին և թե վերջին աղքատին միևնույն և միաչափ կերակուրներ էր տալիս։ Նրա աչքում բոլորն էլ հավասար էին և ինքն էլ ոչ մի խտրություն չէր դնում։ Այս բանը այնքան հաճելի էր հավասարություն քարոզող Քրիստոսին, որ նրան հրեշտակի ձեռքով մի խնձոր էր ուղարկել, որից հոտոտելով զվարթանում և գույնը ավելի կարմրում էր։

Մի անգամ կաթողիկոսը իմանում է, որ այդ տնտեսն իրեն էլ այնպես է կերակրում, ինչպես և վերջին աղքատին, բարկանում և կանչում է նրան յուր մոտ։ Երբ կինը գալիս է, կաթողիկոսը տեսնելով նրա այտերի կարմրությունը, ասում է. «Ինչո՞ւ ես կերակրի ամենալավ մասը ինքդ ուտում, երեսդ կարմրեցնում, իսկ մեզ համար ամենավատն ուղարկում»։

— Ոչ,—պատասխանում է տնտեսը,—ես հրեշտակից մի խնձոր եմ ստացել, նա է ինձ ուժ և կարմրություն տալիս։ Այս ասելով նա հանում է խնձորը և հոտոտելով՝ ավելի գեղեցկանում ու թարմանում։ Կաթողիկոսը տեսնելով այդ, ներողություն է խնդրում այդ արդար կնոջից և հրամայում տանել նրա տունը։ Ահա այս Տնտեսի տունն է, որ մենք մինչև հիմա էլ տեսնում ենք։

Մարիամ աստվածածին. Հովսեփ յուր կացինը տալով՝ ստանում է Մարիամ կույսին, որպես ամուսին։ Միաուժամանակից հետո, երբ ս. կույսը հղանում է, Հովսեփը և ծնողները հալածում են նրան, կասկածելով նրա բարոյականության վրա։ Կույսը փախչում է մի այր, ուր և ծնում է Հիսուսին։ Հովիվներն այդ իմանալով՝ վերցնում են մի քիչ աղբ և տանում տալիս նրան, կամենալով այսպիսով նախատել նրան ապօրինի որդի ունենալու համար։ Ս. կույսը խաչակնքում է այն, որ իսկույն ձվածեղ և հալվա է դառնում։ Հովիվները զարմանում և սկսում են փառաբանել նրա աստծուն։ Մի քիչ հետո հասնում են Թագավորից ուղարկված մարդիկ Հիսուսին սպանելու։ Իսկույն ս. կույսը աղոթում է, և հանկարծ մոտի ժայռը երկուսի է բաժանվում և ծածկում Հիսուսին։ Սպանիչները չգտնելով մանկան, ետ են դառնում։ Այնժամ ս. կույսը նորից «Փառք 'ի բարձունս» ասելով հեռացնում է ժայռերը և հանում մանկան։

Խաչակնքվել. Հայր Հովսեփն իմանալով, որ Մարիամը հղի է, ստատիկ բարկացավ և կանչեց յուր մոտ նախատելու։ Այս ժամանակ նա տեսավ կույսի մոտ մի հրեշտակ, որ խաչակնքվում էր ասելով. «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ ամէն»։ Հովսեփը զարմանալով, հարցրեց հրեշտակին, թե այդ ի՞նչ է նշանակում։ Հրեշտակն ասաց. «Այս աղոթքը ես Աստծու հրամանով սովորեցրի ս. կույսին և այդ դրան է վերաբերում։ Երբ «Յանուն Հօր» ասելով ձեռը վերև է բարձրացնում, սրանով նա ասում է, թե այն գաղտնիքը, որ դու հիմա չգիտես, նախ Հայր Աստվածը իմացավ, երբ տալիս է Որդու անունը և ձեռը արգանդին դնում, դրանով նա ասում է, թե հետո արգանդի զավակը իմացավ այդ։ Երբ կրծքի երկու կողմերին է նշան անում, դա նշանակում է, թե հետո այդ իմացան աջ և ձախ ուսերի հրեշտակները, իսկ երբ կրծքի մեջտեղն է դնում ու «Ամէն» ասում, դրանով ուզում է ասել, թե շուտով կիմանա այդ գաղտնիքը ամբողջ աշխարհը։

ԿԱՆՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Վեցհազարյա. Ինչպես Վարանդայի գյուղերի, այնպես և քաղաքի գրեթե բոլոր բնակիչները, հայերը և մանավանդ Թուրքերը դեռևս բավական հավատով են վերաբերվում դեպի կախարդությունն ու կախարդները։ Դեռևս բավական թվով կախարդներ շրջելով գյուղից գյուղ և նույնիսկ հասնելով քաղաքում կարողանում են միայն այդ արվեստով իրենց ապրուստը հոգալ։

Այսպիսի կախարդներից Շուշում նշանավոր է Գրիգոր Տեր Բաղդասարյանը, որ հայտնի է «դեր (Տեր) Բալին (Բաղդասարի) տղան» անունով։ Սա մի միջահասակ, խոժոռ դեմքով, սև և երեսի կոպիտ գծագրությամբ քառասնամյա մարդ է, սուր մտքով ու ճարպիկ ձևերով օժտված։

Սրան քսան տարուց ի վեր դիմում են տղամարդիկ և մանավանդ կանայք, մինը յուր կորուստը գտնելու, մյուսը որդի ունենալու համար դիր անել տալու, երրորդը յուր ապագան կամ ունենալիք երեխայի տեսը գուշակել տալու, չորրորդը մինի սերը գրավելու համար թալիսման գրել տալու, հինգերորդը գիվահար որդու դեները հալածել տալու և այլն։ Ամենայն, բայց մանավանդ չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը ահագին բազմություն լցվում է սրա տունը, որ գտնվում է Թուրքերի թաղի մոտ, ձորակի աջ լանջին։ Սա բաղկացած է երկու սենյակից, որոնցից մինը ընդունարանն է, իսկ մյուսը՝ արհեստանոցը։

Առաջին սենյակի չորս պատն էլ ամբողջովին ծածկված են պատկերազարդ հանդեսների թերթերով, այնպես որ՝ այցելուն որ կողմը նայի՝ անշուշտ պատկեր պիտի տեսնի։ Մյուսը, արևելանոցը, մի փոքրիկ սենյակ է, մի մեծ և մի փոքր պատուհանով։ Այստեղ պատի մեջտեղից խփած է մի եղջերվի գլուխ։ Իսկ պատուհանների առջև դրված մի մեծ փայտե մահճակալ, մի կապերտով ծածկված։ Մահճակալի մի ծայրում ձգված է մի փոքրիկ ներքնակ, որի վրա ծալապատիկ բազմում է կախարդը աշխատելիս, իսկ այցելուները պպզում են առջևը, հատակի վրա և կամ կանգնած մնում։ Կախարդի առջև դրված է մի մանղալ[1], որի կողքին խառնիխուռն ածված են բազմաթիվ իրեր։ Այստեղ, մի թիթեղի մեջ կա աղալու արյուն, մի շշի մեջ գայլի ոտեղ, մի ուրիշի մեջ արջի ջիղ, թիթեղի կտորներ, վրան զանազան գծեր քաշած, ջոկջոկ թղթերի մեջ փաթաթված զանազան փոշիներ, վարազներ, ներկեր, թանաքներ, չորս հինգ հատ գրիչ, գունավոր մատիտներ և այլն։ Սրանցից էլ փոքր-ինչ հեռու թափված է թղթերի մի անդին կույտ, վրան մի Վեցհազարյա և ուրիշ մի քանի, սրանից արտագրված, կախարդական գրքեր և մի ձեռագիր բժշկարան դրված։

Մենք դիտավորություն չունենք նկարագրելու, թե սա ինչ «գրեր» է անում և կամ թե ինչպես է գործում, որովհետև ինչպես հասատատ իմացանք, սա վարվում է միանգամայն «Վեցհազարյա»-ի համեմատ, որը կարող է ձեռք բերել ուսումնասիրողը։

Դանակ ցցել. Վարանդայինները հավատում են, թե երբ մի որևէ կերպով մեղանչեն մի սրբի դեմ, նա կպատժե իրենց մի հիվանդություն տալով, որից ոչ մի կերպ չեն կարող ազատվել, եթե այդ նույն սրբին մատաղ չկտրեն ու չաղոթեն։ Որպեսզի իմանան, թե հիվանդությունը որ սուրբն է տվել, որովհետև բացի նրանից մի ուրիշ սուրբ, ի պատիվ այդ սրբի, երբեք չի բժշկի նրա տված հիվանդությունը, դանակ են գցել տալիս։ Յոթը տնից մի-մի դանակ են խնդրում, ապա բոլորը լավ մաքրելուց հետո գնում են մի ման ջրի մեջ և ամեն մինին մի սրբի անուն դնում։ Ամանի շուրջը մոմեր կպցնելով վառում են և ծունր դնում աղոթում, որ ժանգոտվի այն սրբի դանակը, որը տվել է այդ հիվանդությունը։ Հետո այդ ամանը դնում են հիվանդի սնարի մոտ և մյուս առավոտ հանում դանակները նայում, թե որ դանակն է ժանգոտված, որից և իմանում են, թե որ սրբիցն է, որի գուռը և տանում են հիվանդին և կամ մի քանի ռուբլի դնում հիվանդի բարձի տակ,

[1] Կրակարան, որի մեջ բոցավառված կրակ են ածում։

խոստանալով հիվանդի առողջանալիս այդ գրամով մատաղ կտրել այդ սրբին։

Կեղ չափել. Կեղ չափելու շնորհքը տալիս են սրբերը, երբ պատով, աղոթքով դիմում են իրենց. այսպես, Սարուշենի Ավետարանը տվել է այդպիսի շնորհք Սգնեք գյուղի Հավիշոող (Հավ կշռող)[1] Մկրտիչանց Միրզիան կնոջը, Սարիբեկը Մոսունց Սանդուխտին և այլն։

Կեղ չափող կինը սոթքում է յուր ձախ ձեռքը և հետո աջ ձեռքով ձախ ձեռի միջամատի ծայրից սկսած երկու կեղ (թիզ) չափում, ապա ասում. եթե այսինչ մարդու խորհուրդը պիտի կատարվի, երկարի, թե ոչ՝ կարճանա, կամ, եթե կորուստը պիտի դտնվի, երկարի, իսկ եթե ոչ՝ կարճանա։ Հետո բութ մատը պահում է վերջին կետում և նորից մի քանի անգամ միայն մի կեղ չափում։ Նայելով դեպքին նա կամ կուչ է բերում մատները և կամ երկարեցնում։

Վախ վեր քաղել. Նինդի գյուղում ապրում է «վախ վեր քաղող» Տեր-Առաքել Տեր-Պետրոսյան անուն քահանան։ Սա մի խուլ, ասատիկ հարբեցող և համարյա անզրագետ մի անձն է, որ ոչ միայն ամբողջ Վարանդայում, այլև հեռու շրջակայքում մեծ հռչակ ունի որպես վախեցած մարդկանց անմիջապես առողջացնող։ Յուր և գյուղի ծերունիների ասելով, նրա տոհմը, պապ քահանան և նույնիսկ պապի պապը «վեր քաղող» են եղել և դեռ կլինեն, որովհետև նա սովորեցրել է այդ շահավետ արվեստը յուր որդուն, որ Երբեմն փոխարինում է իրենն։ Գլխավորապես ամառը, կիրակի օրերը Շուշուց և շրջակա գյուղերից հայ և թուրք դիմում են նրան։ Եղել են օրեր, երբ մինչև հինգ հարյուր մարդ համախմբված են եղել նրա դռանը, խնդրելով իրենց վախը «վեր քաղել»։

Գործողությունը շատ պարզ է։ Մի երկար կոթավոր փոքրիկ հալոցի մեջ արճիճ են հալում, հետը փոքր-ինչ մոմ խառնելով և հետո մի ջրով լի թաս բռնելով վախեցողի նախ աջ, հետո ձախ ականջների և ապա մեջքի և կրծքի առաջ՝ արճիճը լցնում է ջրի մեջ։ Միևնույն ժամանակ «Հայր մեր» շշնջում։ Արճիճը ջրի մեջ թափվելիս որքան բարձր ձայն հանի, այնքան ավելի վախեցած է լինում։

Մում ճալիլ. Վախեցածին գլխավորապես բժշկում է «մում հալողը»։ Սա երեսը երեք անգամ խաչակնքելուց հետո վերցնում է մի ասեղ, որ սովորաբար յուր վրա է պահում և երբեք ուրիշի չի տալիս, և կոխում մեղրամոմի մեջ։ Հետո «Հայր մեր» շշնջալով և սրբերի անուններ

[1] Եղբայրները բաժանվելիս հավերը կշռել և այնպես են բաժանել։

տալով, մեղրամոմը դնում և տաքացրած ծհանի (թաթակիշի) կամ մի մանելիքի վրա, մոմը հալչում և թափվում է տակը բռնած մի ամանի մեջ և մի որևէ ձև ստանում։ «Մում հալողը» հանում է ջրից մոմը և նրա ձևից և կամ վրայի գծերից գուշակում, թե ինչից է առաջացել վախը։

Այս գործողությունը երեք անգամ կրկնելուց և գուշակություններ անելուց հետո մոմը փաթաթում է բամբակի մեջ, թելով կապում և տալիս հիվանդին, որ գիշերը դնի ոտի տակ և առավոտյան կոնքի տակը դրած լվացվի և ապա անխոս տանի մի ծառի տակ թաղի ու այդ լվացված ջուրն էլ վրան ածի։

Մի քանիսն էլ բամբակի մեջ մի մեխ են ցցում և թաղում կամ շեմքում և կամ այն մեռելի գերեզմանում, որից, իբր, վախեցել են։

Այն ևս պետք է ասել, որ «մում հալիլ» կարող են միայն երազով սրբերից այդ շնորհն ստացողները։

Սրսմնա բռնել. Երբ մի որևէ բանից զզվելով այլևս բան չեն կարողանում ուտել, սրսմնա են բռնել տալիս, որոնցից Շուշում ամենանշանավորներն են Մարիամ-պաճին, Անթառանը և ուրիշներ։ Սրսմնա ընկնողը մի ասեղ է խրում կրծքին, ուշք դարձնելով, որ ասեղը ծուռ կամ կոտրած չլինի, որպեսզի ծուռ կամ թերի կերպով չբռնվի սրսմնան։ Հետո մի չորեքշաբթի, ուրբաթ կամ կիրակի օր, առավոտյան անոթի գնում է սրսմնա բռնողի մոտ և խնդրում սրսմնան բռնել։ Սա հանում է սրսմնա ընկնողի կրծքից նրա խրած ասեղը և ձգում յուր ձեռքին բռնած կապույտ պնակի մեջ։

Պետք է ասել, որ պնակն անշուշտ կապույտ պիտի լինի և կապտագույն շերտեր ունենա, որովհետև դրանք նման են սրսմնա ընկնողի կապուտկած նյարդերին, որոնք կապտել են սատանաների ազդեցությամբ։ Եվ այս սատանաներին միայն ասեղը կարող է հալածել։

Ապա երեք անգամ խաչակնքում է պնակը, ցուցամատը դնում ասեղի վրա և սոփալով սրսմնա եղողին շարունակ նայել պնակին, աղոթում է.

«Գնացի Երուսաղեմ, տեսա մին ծառեր,
Էդ ծառիցը դուրս էկավ մին ճյողնը,
Ընդրանից դուրս էկավ մին ուրիշ ճյողնը,
Ընդրանից դուրս էկավ մին ուրիշ ճյողնը։

[1] Կրկնում է 8 անգամ։

Ուրենի ճյողնիցը կախվեց մին ոչխար,
Մոտրկացի, բռնեցի.
Անդենակ մորթեցի,
Անջուր լվացի,
Անկրակ եփեցի.
Ես կերի՝ սրսմնա չըլի,
Դու խե՞ սրսմնա իս ըլալ»։

Հետո բարձրացնում է մատը, և եթե սրսմնա եղած են լինում, ասեղը կպած է լինում մատին։ Շարժում է մատը և երեք անգամ թափ տալիս, որ ասեղը ընկնի ջրի մեջ։ Ասեղը որչափ ամուր է կպած լինում մատին, այնքան սատիկ են սրսմնա եղած։

Այս միևնույն գործողությունը երեք անգամ կրկնելուց հետո սրսմնա բռնողը ծածկաբար մի քիչ ջուր է ածում մի բուռը և պնակը տալիս սրսմնա եղողին խմելու։ Եվ մինչդեռ նա խմում է, սա հանկարծ ցնցում է նրա երեսին բռի ջուրը, ասելով. «Էդ ա քու դեղդ»։ Հետո դարձեն սրսմնա եղողը այդ պնակը, առանց վայր դնելու, միջի ջուրը ածում է մի ամանի մեջ և տանում տուն, քիչ-քիչ խմում, մի քիչ էլ ցցնում է սառը ջրի մեջ և լվանում ոտներն ու ձեռքերը։

Այդ ջուրը պարունակող ամանը երբեք գետնին չեն դնում, այլ միշտ կախում են և երբ առողջանում են, ավելացած ջուրը ածում են յոթը սև քարի վրա և կամ մի, սովորաբար տանձի ծառի տակ։

Եթե միանգամից չառողջանան, կրկնում են էլի մի կամ երկու անգամ։

Աչքին հատը վեր բաղել. «Աչքին հատ» կոչվում է այն հիվանդությունը, որ պատում է աչքի մի մասը սպիտակ թաղանթով։ Այս հիվանդությունը բժշկելու համար դիմում են որոշ կանանց, որոնք հայտնի են որպես «աչքի հատը վեր քաղողներ»։ Սա վերցնում է 7 ոսպ և 7 բրինձ, երեք անգամ խաչակնքում յուր երեսը, մի ամանի մեջ ջուր ածում, տալիս հատ ունեցողի ձեռքը և հետո «Հայր մեր» շշնջալով ու սրբերի անուններ տալով տրորում է այդ ոսպերն ու բրինձը հատ ունեցողի աչքերին, թողնելով, որ թափվին ամանի մեջ։ Ապա մատները թաթախում նույն ջրի մեջ և երեք անգամ քսում աչքերին։ Վերջը այդ ոսպերն ու բրինձը տալիս են հավերին։

Զոփշի. Սրբերի տված շնորհներից մինն էլ չոփշությունն է։ Ստացողը սովորաբար ուշաթափվում է՝ «շտապում» է, և մի կամ մի քանի օր անզգա մնալուց հետո ուշքի գալիս և պատմում, թե այդ ինչ սուրբ

երևեցավ իրեն և չոփչություն անելու շնորհք տվեց։ Այսպես, Ներքին Թաղավարդ գյուղում մի տասներկու տարեկան ամուսնացած կին «շտապում» է, երեք օր «շտապած» մնում և ապա հայտնում, թե Սարուշենի Ավետարանը երևացել է իրեն և չոփչության շնորհ տվել։ Այժմ դա գյուղի նշանավոր չոփչին է, և տարին մի քանի անգամ էլ «շտապում» է։

Գրեթե ամեն մի գյուղ ունի յուր չոփչին։ Քաղաքն էլ զրկված չէ դրանցից։ Նա էլ ունի Թաղլարեցի Հյուրին, Նանա-խանումը, Ճողերը, Սառան, Փահլվանին կինը։

Ասում են, թե շատ անգամ կորիզներ և կամ ոսկորի կտորներ են մնում երեխաների կոկորդներում, որից և հիվանդանում են։ Ցոփչին նստեցնում է երեխային յուր ծնկների վրա և նախ բերանից և ապա քթից բոլոր ուժով փչում։ Իսկույն կորիզը կամ ոսկորը դուրս է ընկնում բերանից։

Մկնատամի գիր. Մկնատամը բժշկելու համար թե՛ քաղաքում և թե՛ գյուղերում գիր են անել տալիս։ Քաղաքում այդպիսի գիր անողներից նշանավոր է Տեր Գ. քահանան։

Գիր անողը թանաքով մի դիծ է քաշում վերքի շուրջը և մեջը գրում։

Ամ, Ամուն, Արամուն,
Պորպոյ (?), Երիպոյ (?)
Դուք չորացուցեք զմկնատամս։

Այս «գիրը» անել են տալիս առավելապես չորեքշաբթի օրերը, մանավանդ մեծ պասի վերջին, «չիք» չորեքշաբթի օրը։

Գելկապ (Կյուլկապ). Երբ գյուղացիների կենդանիները կորչում են, գայլի և առհասարակ բոլոր գազանների բերանները կապել են տալիս, որ չուտեն կորած անասունը։ Գայլի բերան կապողը սովորաբար մի աղոթք է ասում ամբողջը մի անգամ միայն շունչ առնելով և հետո կամ մի բաց դանակ փակում, կամ կացինը մտցնում սանդերքի մեջ, կամ մի թել առանձին և կամ մի դաշույնի վրա երեք անգամ հանգուստում։

Ահա մինը այդ աղոթքներից.

«Եվ ի ծովուն խաչ մի կայր,
Եվ ի սուրբ լերինն այն խաչին
Յոթը թիվ երկաթի,
Ամեն թվի յոթ խորան.
Եվ ամեն խորանի յոթ նարդյոս.
Ծածքն պղնձեղեն,

Եվ բանալին երկաթի.
Կապյալ եմ զգայլի բերանն
Եվ զգողի շարժումն.
Եվ գայլ գազանի բերանն,
Որ շրջի ի մեջ գիշերի.
Երեք բեռ Քրիստոսի,
Մեկն ի սիրտ սև սատանի,
Մեկն ի բերան գել գազանի,
Մեկն ի շարժումն ավազակիս։

Այսպես կապելուց հետո գազանները յոթ օր շարունակ ոչինչ չեն կարող ուտել։ Պատմում են բազմաթիվ դեպքեր, որոնցից հիշենք գոնե մինը։ Խաչմաչ գյուղում գայլի բերանը քահանայի հորը դաշույնի վրա կապել տալուց հետո գնում են կորած կովը պտրելու և գտնում են հանդարտ կանգնած մի գայլի մոտ։ Գայլը բերանը կապած նայելիս է եղել կովին։ Կովի տերը դաշույնի վրայից ձգել է գայլկապի թելը, որպեսզի սպանե գայլին։ Սակայն հենց որ թելը արձակվում է, գայլը հարձակվում է կովի վրա և պատառում նրան։

Կորուստը գտնելու համար գայլի շրթունքները կամ ետին ոտի ճիլը կրակն են ձգում։ Ասում են, թե գտնողը և կամ գողացողը անմիջապես կուշ եկած գալիս է և հանձնում իրը։

Մի աղջկա ձեռքը ստանալու համար չ ղ ջ ի կ ի թելը քսում են վրան։

Կաքավի փետուրները ձգում են գետի մեջ, որ փետուրն որ ջրի ընթացքին հակառակ գնաց, վերցնում պահում են և նրանով կախարդություն անում։ Բավական է, որ այդ փետուրը մինին քսեն, նա սաստիկ կսիրահարվի քսողի վրա։

Կկու թռչունի փետուրները և կամ 4 տերևանի առվույտ յուր մոտ ունեցողը կարող է աչքակապ կախարդների արածները տեսնել։

Հավանմայություն. Եթե կաշաղակը մինի տան վրա կչկչա, գուշակում են, որ հյուր և կամ տան պանդուխտներից մինը պիտի վերադառնա։

Եթե կաշաղակը երեսը դեպի տունը դարձրած կոկոա, գուշակում են, որ լավ համբավ պիտի ստանան, իսկ եթե պոչը դեպի տունը դարձրած լինի՝ վատ համբավ պիտի գա։ Ուստի և ասում են. «Թե խեր ա, տեղդ փոխ տուր, թե շառ ա, երևսդ շուռ տուր»։

Եթե ծիտը լողանա, ուգռավը կռավի, կանաչ գորտը (գորտնուկը) կոկոա՝ անձրև կգա։

Եթե բուն գիշերը մինի տան վրա բվա՝ այդ տնից մեկը կմեռնի։

Եթե հավը աքաղաղի պես կանչե, տնեցիներից մինը մեռնելու է, առաջն առնելու համար հավը դռան շեմքում մորթում են։

Եթե գիշերը հավը կամ աքաղաղը անժամանակ կանչեն, այդ նշան է որ մի չարիք պիտի գա, իսկույն մի կրակ են շպրտում դեպի հավաբունը, որ չարը հավերին գնա։

Եթե անցորդի գլխի վրայով ագռավը կռռա, սա մի վատ բան է գուշակում և բարձր ձայնով կանչում է. «Ա քաշ, խեր ա, ա քաշ, խե՞ր»։

Եթե շունը ոռնա՝ տնեցիներից մինը կմեռնի։

Եթե կատուն երեսը լվա կամ թաթը ականջի տակով անցկացնե, հյուր կգա։

Եթե կատուն ոտերով շանգռոտե գետինը՝ անձրև կգա։

Եթե նապաստակ պատահի, անհաջողության նշան է, իսկ եթե աղվես՝ հաջողության։

ՍՆՈՏԻՍՊԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աչքով տալ. Կան մարդիկ, որոնք չար աչք ունեն և կարող են աչքով տալ։ Եթե նրանք հավանում են մի բանի և կամ նախանձում են, իսկույն աչքով են տալիս, և իրը իսկույն ևեթ տրաքվում է։

Եվ որպեսզի աչք չտան, դիմում են հետևյալ միջոցների.

Ա. Բուշնի ծառը տնկում են բակում, արտում, պարտեզում և այլն։

Բ. Քուշնի փայտի մի փոքրիկ կտոր, ուղտի բրդի և աչքահուլունքի հետ կտրում և կապում են օրորոցից, ձիու վզից և այլն։

Գ. Մի ամանով ջրի մեջ մի ձու են ձգում և դնում իրի մոտը. աչք տալիս ձուն տրաքվում է։

Դ. Եզի, եղջերվի կամ այծյամի դանգ ցցի վրա անց կացրած խփում են տան, արտի, այգու մոտ։

Ե. Հայտնի աչք տվող մարդկանց պատահելիս մի քարի վրա թքքնում են և շուռ տալիս։

Զ. Ոսկի բդուճի կաշին հանում, ուղտի մազով լցնում, կարում են երեխայի ուսին։

Է. Երեխայի օրորոցից և կամ շորերից կախում են աչքահուլունքներ։

Պատմում էին, թե հայր ու որդի անցնում էին վար անողների կողքից։ Հայրն ասում է. «Ի՞նչ լավ եզ է», և սպասում է, որ եզը իսկույն տրաքվի։ Սակայն ոչինչ չի պատահում։ Զարմացած ուղարկում

է որդուն, որ տեսնի, թե եզի սամին բուշնո՞ւց է։ Որդին գնում տեսնում է, որ հիրավի բուշնուց է և հոր պատվերով փոխում է։ Անմիջապես եզը տրաքվում է։

«Տեսա՞ր, որդի, բուշնին էր, որ արգելում էր», ասում է հայրը։

— Ինչ լավ աչք ունիս, հայրիկ,—ասում է որդին, և իսկույն հոր աչքն էլ տրաքվում է։

Մարմնախաղ. Եթե աջ ձեռքը քոր գա՝ փող կստանա, իսկ եթե ձախը քոր գա՝ փող կծախսե։

Եթե կզակը քոր գա՝ հյուր կգա։

Եթե մի անգամ փռնչտան՝ անհաջողության նշան է, իսկ եթե զույգ՝ հաջողության։

Եթե հորանջելիս չիտաշակնքվին՝ սատանան կմտնի բերանը։

Եթե աջ ձեռքը խազա՝ հաջողություն է գալու, իսկ եթե ձախը՝ ձախորդություն։

Եթե ականջը կանչի՝ մինը նրան հիշել է։ Եվ որպեսզի իմանան, թե ով է հիշողը, տալիս են ծանոթների անունները, ում անվան ժամանակ որ ձայնը կտրվեց, նա է։

Եթե աջ ականջը քոր գա՝ մյուս օրը լավ եղանակ կանի, իսկ եթե ձախը՝ անձրև կգա։

Եթե մինի ոտի տակը քոր գա՝ ճանապարհ կգնա։

Սեղան. Եթե թոնրից դուրս եկած առաջին հացը ուտեն՝ ամուսինը կմեռնի։

Եթե հացը գետից անց կացնեն՝ կքաղցրացնեն։

Եթե հաց կտրելիս մի կտոր թուչի ընկնի մյուս կողմը՝ հաջորդ տարին սով կլինի։

Եթե այրած հաց ուտեն, գայլից չեն վախենա։

Եթե մսի ճիլը ուտեն՝ մազերը կերկարեն։

Եթե ոչխարի ուղեղ ուտեն՝ խելքը կշատանա։

Եթե երիտասարդը կաթսայի տակը սրբե՝ հարսանիքի օրը ձյուն կգա։

Եթե ափսեն մաքուր սրբեն՝ կնոջ երեսը դեղեցիկ կլինի, իսկ եթե չսրբեն՝ շեշտ կլինի։

Ով որ մանկության ժամանակ աղջկա հետ միասին մի ափսեի միջից ուտի՝ գող կլինի։

Եթե մթին տեղը ջուր խմեն՝ քաջքերը կկոփեն։ Եվ եթե ստիպված են խմելու, կանգնում են շեմքի վրա և մի ձեռը դնելով պարանոցի հետևը, խմում։

Եթե երեկոյան սփոռոցը թափ տան՝ տան բարաքաթը կկորչի։

Թռչուններ. Եթե գիշերը աքաղաղները կանչեն, մարդիկ կխաչակնքեն երեսները և կասեն. «Օրհնյալ է աստված»,—որովհետև նախ երկնքի աքաղաղն է կանչում և ապա սրանք և կամ մարդկանց պահապան հրեշտակները, որ մարդկանց քնելուց հետո համբառնում են երկինք, նորից վերադառնում են, և միայն աքաղաղներն են տեսնում նրանց։

Եթե երեխան հավի գլուխ ուտի՝ ծնողներից մինը կվախճանվի։

Եթե հավի սիրտը հում-հում կուլ տան՝ սրտոտ կդառնան։

Եթե ձվի կեղևը այրեն՝ հավը ձվից կկտրվի։

Եթե հավի փետուրը այրեն՝ անձրև կգա։

Հավը թուխս դնելիս շարում են հավկիթները, մի ձեռում բռնում հավը, մյուսում մի հավկիթ։ Հետո այս մի հավկիթը երեք անգամ պտտեցնում են բոլոր հավկիթների շուրջը և դնում մնջտեղը և հավը թուխս նստեցնում, ասելով.

«Ոչխարը կյա սրերավը,
Տավարը կյա քուլերավը,
Էծերը կյա հյուլերավը,
Դու էլ կյաս քու ճտերավը»։

Եվ կամ՝

«Լոխ ծակ,
Մինը լակ»։

Գորա. Եթե գորա տեսնեն և ձեռների ու ոտների վրա չթքեն՝ ձեռների վրա գ ո ր տ ն ո ւ կ կբուսնի։

Գայլ. Եթե արևով անձրև գա՝ գայլերը կծնին։

Նռ. Եթե սխտոր ցանեն բակում և կամ կախ տան դռնից կամ առաստաղից՝ օձերը չեն կարող մոտենալ։

Եթե սոխ դնեն գրպաններում և կամ սխտոր քսեն տրեխներին՝ օձերը կփախչեն։

Եթե սպանեն օձը, մինչև արուսյակի դուրս գալը չի սատկիլ։

Եթե սպանած օձը գլուխը դուրս հանած չթաղեն՝ կողջանա։

Բույսեր. Եթե սոխի կճեպը խնկի հետ կրակը ձգեն՝ արքայության հոտը կբուրե։

Եթե դալար բույսը այրեն՝ անձրև կգա։

Եթե մինը ընկուզենի տնկի՝ 7 տարուց հետո կմեռնի։

Եթե չիք-չորեքշաբթի պատուղ չբերող ծառերին երեք անգամ առանց խոսելու խփեն՝ պտուղ կտա։

Կարկուտ. Եթե մի պառավ և կամ մի ծեր սուրբ Սարգսի պասի երկուշաբթի օրը ցորեն աղանձ և կարկուտի ժամանակ շաղ տա՝ խոկույն կարկուտը կկտրի։

Եթե վառեն Տյառնընդառաջի մոմերը կամ շամփուրները խաչաձև դնեն, քսկարենքը (Լոռոտանին) հակառակ դարձնեն, զատկի ձվի կճեպը և կամ նույն օրվա մատաղի ոսկորները դռանը դնեն՝ կարկուտը կկտրի։

Եթե պղինձ կամ կավե ամանի կտորներ թակեն և կամ հրացաններ արձակեն՝ կարկուտը անձրևի կփոխվի։

Վախ. Վախեցողը բժշկվելու նպատակով գիմում է հետևյալ միջոցների.

1) Վախեցողի բռից կամ փեշից ջուր է խմում։

2) Մի քանի, որոշ գերեզմանների վրա կան փոքրիկ փոսեր, ինչպես օրինակ Ծովատեղ գյուղի գերեզմանատեղում մի փոքրիկ երեխայի և կամ Նիղոի գյուղի վախ բռնող Տեր-Աբաքելի հոր՝ նույնպես վախ բռնող քահանայի գերեզմանը և այլն։ Վախեցողին բռնում կացնում են այսպիսի մի փոսի վրա և ծոծրակին այնպես ջուր ածում, որ փոսի մեջ լցվի, հետո վախեցողը չոքում և խմում է այդ փոսի միջի ջրից։

3) Մի կավե ամանով ջուր դնում են մի կիրակմուտք օր մի որևէ առանց հայրդության մեռած ննջեցյալի գերեզմանի վրա և հետևյալ օրը մի քանի ումպ խմում այդ ջրից և ամանը կոտրում։

4) Արջի լեղի են խմում։

5) Ննջեցյալից վախեցողին տանում են այն ննջեցյալի գերեզմանի մոտ, որից վախեցել է, վերցնում են գերեզմանաքարը, մի քիչ քանդում հողը, մի հավկիթ դնում և մի մեխով ծակում ու նորից ծածկում։ Ապա այդ գերեզմանաքարի վրա մի քիչ ջուր ածում և խմեցնում ու հանկարծ ջրի ամանը կոտրում։

6) Եթե ննջեցյալից են վախեցել, այդը կատարելիս հանկարծ հող են ածում վախեցածի պարանոցին։

ՆՇԱՆԱՎՈՐ ՏՈՆԵՐ

Նոր տարի. Վարանդայի գյուղերում նոր տարին գրեթե բոլորովին չի առնվում։ Բաքվից վերադարձածները միայն այցելում են միմյանց և իրենց բարեկամներին ու նրանց նոր տարին շնորհավորում։ Շուշում,

ընդհակառակը, բոլոր քաղաքացիները միմյանց փոխադարձ այցելություններ են տալիս, խմբովին գնում են առաջնորդի և գավառապետի մոտ, նրանց նոր տարին շնորհավորելու։

Մնուանդ և ջորհնեմ. Խաչման նախընթաց օրը, հունվարի 4-ին, ամեն տուն պատրաստում է «դովլաթ-կերդենեհ», ձիթով կամ բաքմազով պատրաստած մի մեծ կարկանդակ, մեջը մի դրամ կամ մի լորի և կամ մի սիսեռ դրած։ Այս նշանը կոչվում է «դովլաթ» (բախտ)։ Նույն երեկոյին, ընթրիքից հետո տան բոլոր անդամները համախմբվում են, և տանտիկինը հանդիսավոր կերպով կտրում է կարկանդակը, բաժիններ հանելով բոլոր ներկա և բացակա անդամներին, օ ջ ա խ ի ն, օտարին և կենդանիներին։ Ուրախությունը շատ մեծ է լինում, երբ դովլաթը դուրս է գալիս օջախի բաժնից, որովհետև դրանից դուշակում են, որ այդ տարի ամբողջ գերդաստանը, օջախը բախտավոր, «դովլաթվոր» պիտի լինի։ Իսկ եթե օտարի բաժնի միջից է դուրս գալիս, տխրում են, համոզված լինելով, որ տան դովլաթը օտարին է անցնելու։ Ուրախանում է նաև այն անդամը, որի բաժնի միջից դուրս գալով դովլաթը, ավետում է նրան ապագա բախտավորության մասին։

«Դովլաթ» կորիզը ձգում են տան մի անկյունում, որ միշտ մնա, իսկ եթե դրամ է, երբեք չեն ծախսում և քսակի մեջ խնամքով պահում են։

Հետևյալ օրը շատերը ծոմ են պահում։ Երեկոյան «Ի ա ն ի ել» ասողը մեծ գովասանքի է արժանանում և յուր ծնողներից նվերներ ստանում։ Ժամերգությունից հետո շատ շուտով ցրվում են տները և ընթրում, ուտելով ձուկ և փլավ, որը պատրաստում են անպատճառ կարագ յուղով։ Ընթրիքից հետո գրագետ երեխաները շրջում են տները և «Ավետիս»՝ ասելով նվերներ ժողովում։

Գյուղացիները հավատում են, թե այս գիշերվա ընթացքում կետը մի քանի բոպե կանգ է առնում, ուստի և առավոտ շատ վաղ հարսներն ու աղջիկները գնում են գետից ջուր բերելու, հուսալով հանդիպել կանգնած միջոցին, երբ արված ամենայն տեսակ խնդիր անմիջապես կատարվում է։

Կեսօրին, երբ քահանան կատարում է Քրիստոսի մկրտության խորհուրդը, եկեղեցու մեջ հրապարակավ աճուրդի է դրվում քավորության պաշտոնը, և նա է դառնում քավոր, որը ամենից ավելի է վճարում։

Բազմությունը վրա է թափվում մկրտության կաթսայի վրա և սրվակներով ջուր վերցնում, խմում, ճակատին ու կրծքին քսում, ձեռները, ամանները, լվանում և ջուրը լցնում օճախի կամ թոնրի մեջ։

Նույն օրը, ինչպես և նախընթաց երեկոյին, քահանան շրջելով տները, օրհնում է և նշխարներ բաժանում, ստանալով 15—20 կոպեկ։ Նշխարներից մի կտոր դնում են աղաքսակի մեջ, որ աղը «բարաքյաթով» լինի։

Սուրբ Սարգիս. Առաջավորաց պասին վարանդացիները «Խաշլին կամ սուրբ Սարգսին պասն» են կոչում։ Այս միջոցին շատերը միաժում են մնում, այսինքն՝ օրը միայն մի անգամ՝ կեսօրին են հաց ուտում։ Շատ հաճախ եկեղեցի են գնում, մոմեր վառում և զգուշանում գուխ լվանալուց և լվացք անելուց, որովհետև անողները կուրանին, կտրաքվին։

Ուրբաթ օրը փոխինդ են մաղում, հետո շաքարով կամ մեղրով և կամ բաքմազով շաղախում և փոքրիկ, կլորակ շինում և բաժանում տան անդամներին։ Ջափահաս տղաներն ու աղջիկները առաջին կծած պատառը բերաններից հանում, կրկին կլորում և պահում են իրենց մոտ, որպեսզի հետևյալ առավոտը վաղ, առանց մի որևէ մարդու հետ խոսելու, դնեն կտուրը և դուշակություններ անեն։ Եթե թռչունը վերցնի և տանի մի որևէ կտրի վրա ուտի, այն տնից է լինելու հարսնացուն կամ փեսացուն։ Իսկ եթե թռչունը վերցնելով այդ պատառը միևնույն կտրի վրա ուտի, այդ նշան է, որ չպիտի ամուսնանա։

Նույն ուրբաթ գիշերը մի ափսեի մեջ փոխինդ են մաղում, վրան խաչ քաշում, դնում դռան ետևը, մաղը վրան կոնթխում և մի վառած մոմ մոտը դնում, որպեսզի ս. Սարգիսը իրենց այցելելիս՝ ձիու պայտի հետքը մնա այդ փոխինդի վրա։

Հետևյալ շաբաթ օրը այդ փոխինդով խաշիլ են պատրաստում և ուտում։

Սուրբ Սարգսի մասին կան շատ ավանդություններ, որոնցից հիշենք միայն։ Մի անգամ մի աղջիկ յուր ծննդական մոր մոտից հեռանալով գնում է դրկցի մոտ՝ կրակ բերելու։ Վերադարձին դուռը փակ է գտնում և ականջ դնելով լսում է մի ձայն, որ ասում է, թե նորածին երեխան մեծանալիս երբ կամենա ամուսնանալ, ձուկ դառնա և ջուրն ընկնի։ Աղջիկն իսկույն հասկանում է, որ այս ձայնը այն հրեշտակինն էր, որ եկել էր երեխայի ճակատի գիրը գրելու։

Երբ երեխան մեծանում է, և հասնում են ամուսնության օրերը, այս քույրը պահում է ս. Սարգսի պասը և ջերմեռանդությամբ աղոթում նրան, որ փրկի յուր եղբորը և թույլ չտա ձուկ դառնալու։ Ս. Սարգիսը լսում է նրա աղաչանքը և ինքը գալիս իսաչեղբայր է դառնում այդ տղային։ Երբ հարսը բերում են, մի գետից կամենում են անցնել. իսկույն ս. Սարգիսը հեծնում է փեսացուի գավակը և ամուր գրկում

նրան, որ թույլ չտա ձուկ դառնալու, սակայն չի լինում, տղան, հենց որ գետի մեջտեղն են հասնում, ձուկ է դառնում և ընկնում ջուրը։ Այսպես՝ ճակատի գիրը ոչ միայն մարդիկ, այլև սրբերը, հաստատում է ժողովուրդը, չեն կարող խափանել։

Բարեկենդան. Առաջավորաց պասից մինչև Մեծ պասը վարանդացիների համար բարեկենդան է համարվում, և քեֆն՝ու ուրախությունը դնալով սաստկանում են։ Վերջին շաբաթը բուն բարեկենդան է, և այս օրերում ոչ միայն ուրախությունը, այլև կերակուրների թիվը գնալով աճում է. այսպես, պահանջվում է, որ երեքշաբթի օրը երեք, հինգշաբթի՝ հինգ, շաբաթ՝ յոթը և կիրակի՝ 12 տեսակ կերակուր լինի։ Ամբողջ գյուղը զանազան խմբեր կազմած զվարճանում է. այստեղ երեխաների խմբերը վեզ են խաղում, այնտեղ աղջիկների խումբը ճլորթիի մեջ ճոճվում է, մի քիչ հեռուն երիտասարդները «լախտի», «տարատութ», «ատտուրմա» և այլ խաղեր են սարքում, գոտեմարտում, հրացան արձակում, աշխատելով նշանին դիպցնել և այլն։ Մի ուրիշ տեղ մի խումբ նստած ուտում է և խմում, բղավում ու երգում։ Գյուղի կենտրոնումն էլ գավուլ-զուռնան է ածում և շատերին պար ածում։ Այսպես անցնում են այս օրերը, մինչև որ գալիս է կիրակի օրը. այս ժամանակ երիտասարդների խմբերը միանում են, մի ճարպիկի հագցնում ցնցոտիներ, վրայից ոսկորներ, հին սրեր կախում, մի հրացան ձգում ուսովը, գլխին մի հին, դզզված գլխարկ ծածկում, երեսը մրոտում, նստեցնում մի էգ էշի վրա, և «բյակը կամ էշակ պարոնը գալիս է հա՜, ճամփա բացեք» բղավելով՝ գավուլ զուռնի առաջնորդությամբ ման ածում տնե տուն, հավաքավոր ծամածռություններ, սրախոսություններ անում, ամեն տնից գինի, կերակուր, դրամ հավաքում և ապա, երեկոյան մոտ, խմբով նստում և քեֆ անում։

Նույն երեկոյին մոտիկ բարեկամները միասին հավաքված են անց կացնում գիշերը, միասին ուրախանալով և ուտելով իրենց բերած ուտելեղենն ու կերակուրները։ Երբ անչափ ուտում են ու խմում, «փակում են իրենց բերանները ձվով», այսինքն ամենից վերջը ձու են ուտում, որպեսզի զատկին էլ ձվով բանան։ Հետո երիտասարդները դուրս են գալիս և հրացաններ արձակում, որպեսզի մեծ պասը շուտով անցնի։ Ապա հոգնած ու հարբած՝ ընկնում են ու խոր քնում։

Տյառնընդառաջ. Այս տոնը տեղական բարբառով կոչվում է դրոդրոտաջ։ Երեկոյան ժամերգության միջոցին նշանած աղջիկների բերած ցրտնու ճյուղերով խաչաձև խարույկ են պատրաստում։ Քահանան ժամավորների հետ միասին դուրս է գալիս եկեղեցուց և մի քանի աղոթքներ կարդում։ Այս միջոցին երիտասարդները վառված մոմերով վառում են խարույկը։ Սերունդները ու պառավները ջերմեռանդությամբ շարունակում են աղոթել։ Բազմությունը ամենայն հետաքրքրությամբ դիտում է ծուխը, որովհետև հավատում է, որ միայն այն կողմի արտերը լավ պիտի բուսնեն, որ կողմը որ ուղղվում է ծուխը։

Երբ խարույկը հանգչում է, խանձողները խլխլում են և տանում տները, որպեսզի նրանով վառեն ճրագն ու կրակը և հետո դնեն հավաքնում, որ հավերն ավելի հաճախ ձու ածեն։

Եվ երբ մեծերը քաշվում են, տղաներն ու աղջիկները վերցնում են մոխիրը և դեպի վեր շաղ տալիս ու դիտում, թե որ կողմն է ուղղվում, հուսալով, որ այն կողմից պիտի լինի սպասած հարսնացուն կամ փեսացուն։

Չբեր կանայք էլ աշխատում են երեք անգամ թոշել խարույկի վրայից, որպեսզի երեխա ունենան։

Մեծ պաս. Առավոտյան վաղ հարսներն ու աղջիկները վեր են կենում և անխոս վազում դեպի աղբյուրը, ջուր բերում, տղաներն էլ գնում են փայտ կամ քար բերում, որովհետև հավատում են, որ եթե բան բերեն տուն, տունը «բարաքյաթթու» կլինի։

Պառավ նոնն էլ մի ոտի վրա 7 փետուր ամրացնելով՝ կախում է հերթիկից, որ թե երեխաներին վախեցնե պաս պահելու, և թե իբր մեծ պասի օրացույց ծառայի, որովհետև ամեն կիրակի երեխաները մի փետուրը պոկում են։

Մի քիչ հետո երեխաները մի-մի խնձոր ձեռներին գնում են իրենց մեծերին մեծ պասը շնորհավորելու և տալիս են նրանց խնձորները. որանք էլ փոխադարձաբար մի որևէ միրգ են ընծայում։

Եվ մինչև կանայք զբաղվում են տան ուտելավոր ամանները լվանալով՝ տղամարդիկ գնում են տանուտիրոջ, քահանայի և մոտիկ բարեկամների մեծ պասը շնորհավորելու։

Կեսօրին մոտ երիտասարդները ձիեր նստած դուրս են գալիս մի հարթ տեղ և մականախաղ (ջիլիթ) խաղում։

Երեկոյան մոտ միայն խաշմաշ գյուղում մի էշ են թամքում, մի կին նստեցնում վրան, երեսին մուր քսում, գավուլ զուռնի առաջնորդությամբ շրջեցնում տնե տուն և դրամ հավաքում։ Հետո այս դրամը պահ են տալիս որ զատկին մատաղ անեն։ Այս սևերես կինը ներկայացնում է մեծ պասը, և նրան պատվով շրջեցնում են, որպեսզի մեծ պասը առանց փորձանքի անցնի։

Մեծ պասի առաջին շաբաթը ապաշխարության օրեր համարելով՝ ծանր գործերով չեն զբաղվում. այսպես՝ կանայք ճախարակ չեն մանում, կար չեն անում, շալ չեն գործում և այլն։ Երկրորդ շաբաթի առաջին երեք օրն էլ զգուշանում են ծանր աշխատանքներից, երկուշաբթին «գայլ կերածի և կատաղած շան», երեքշաբթին «սել (հեղեղ) տարածի» և չորեքշաբթին «կայծակ խփածի» օր համարելով։ Այնպես որ՝ եթե չզգուշանան և երկուշաբթի օր ծանր գործ անեն, գայլը կուտե դրանց երեխաներին և կամ կատաղած շունը կկծե դրանց և այլն։

Սաղկազարդ. Սաղկազարդ բառը գյուղացիների բերանում աղավաղվելով դարձել է «Զբրզարդար»։ Սույն երեկոյին շատ գյուղերում աղջիկները ձեռքերին հինա են դնում, իսկ տղաները պատրաստում են ճռռան և չըխչըխկան[1]։ Պառավներն էլ իրենց հարսների և թոռների համար մոմեր են շինում, միևնույն մոմի վրա ուրիշ բարակ մոմեր ամրացնելով։

Երբ այս բոլորը պատրաստում են, փոքր-ինչ քնում են։ Կեսգիշերի մոտ երիտասարդները վեր են կենում, բահ ու թի վերցնում և գնում երկու ուռենի արմատից հանում և առանց մի ճյուղ կտրելու տանում եկեղեցու բակը։ Այս ժամանակ երեխաներն էլ հավաքվում են այդտեղ և սկսում իրենց ճռռանով ու չըխչըխկանով այնպիսի աղաղակ բարձրացնել, որ ամբողջ գյուղը զարթնում է և եկեղեցի շտապում։ Երիտասարդները վաղում են դեպի քահանայի տան հերթիկը և շտապեցնում, որ գա։ Քահանան գալիս է, խփվում են զանգակները և բազմությունը միմյանց հրելով թափվում է եկեղեցի։ Ուռենիներից մինը տանում եկեղեցու մեջ մարդկանց, մյուսը կանանց կանգնելու տեղում կանգնեցնում են։ Անմիջապես բոլոր ժամավորները իրենց ձեռի երկու զույգ մոմերից մի զույգը ամրացնում են ծառերի ճյուղերին և վառում։ Երեխաներն էլ ծառերը շրջապատած՝ ճռռանն են ածում։ Եվ երբ քահանան օրհնում վերջացնում է ուռենին, անմիջապես բոլորը հարձակվում են այս ծառերի վրա, մի կողմից մոմերը հանդցնում, մյուս կողմից ճյուղերը կտրատում և միմյանցից խլելով։ Այս ճյուղերը տանում տնկում են, որ շուտով արմատ բռնեն։

Մի ճյուղ էլ կանայք վերցնում են, որպեսզի խնոցի հարելիս նրա

[1] Սրանցից առաջինը նույն է, ինչ որ ջավախեցունը (Ազգ. Հանդես բ. եր. 269), երկրորդը մի համեմատաբար երկար տախտակի երկու կողմերին հատ թելով ամրացրած երկու փոքրիկ տախտակներ են, որոնք խփվելով միջի փայտին՝ «չը՛խկ, չը՛խկ» ձայն են հանում։

ոնք-ից (ծակից) կոխեն խնոցու մեջ և տեսնեն, թե կարագն արդեն եղե՞լ է, թե ոչ։ Այս ճյուղը կոչվում է «խնցտեսի»։

Ժամասացությունն ավարտելուց հետո կանայք գնում են գերեզմանատուն, համբուրում իրենց ննջեցյալների գերեզմանները և մի-մի զույգ մոմ վառում։ Այս ժամանակ նոր սկսում է արշալույսը բացվել և այս բազմաթիվ մոմերը մթության մեջ փայլելով մի գեղեցիկ տեսարան են ընծայում։

Զարշաբանաց շաբաթ. Չորեքշաբթի օրը, որ «չիք չորեքշաբթի» է կոչվում, շուշեցիները գնում են Շուշու Քամու խաչը ուխտ։ Գյուղերում կանայք գնում են տան կտրին քար, մինը որպես բարության, մյուսը որպես չարության նշանակ։ Հետևյալ օրը մի երեխայի ուղարկում են, որ գնա նրանցից մինը բերե։ Եվ նայելով թե որն է բերել, զուշակում են, թե տունը «բարի՞ն է վերցնում, թե չարը», այսինքն թե՞ գերդաստանը այդ տարին երջանի՞կ թե՞ թշվառ օրեր պիտի անց կացնի։

Նույն օրը աղջիկները խաշխաշ հարելու քարը քսում են գետնին և ասում.

«Չիք, չիք, մոկնը չիք.
Չիք, չիք, լուն չիք.
Չիք, չիք կարիճը չիք.
Չիք չիք, չարակամը չիք.
Չիք, չիք, օձը չիք» և այլն։

Այս ասելով նրանք կարծում են, որ այս բոլոր հիշածները պիտի չքանան։

Հինգշաբթի օրը կանայք խնոցի են հարում և կարագ պատրաստում. երեկոյին երբ երեցփոխը զանգը խփում է, գալիս կանգնում է մի բարձր կտրի վրա և հրավեր կարդում տանտիկիններին, որ օրհնելու համար յուղ բերեն։ Կանայք էլ մի-մի գունդ կարագ առած գնում են եկեղեցի և տալիս երեցփոխին։ Սրանից մի փոքր մասը օրհնում են, մնացածը ուղարկում քահանայի տունը։ Ոանլվային քահանան լվանում է բոլոր ծերունիների ոտները և կանանց, շափահասների ու երեխաների այլ ձեռքերը և մի-մի քիչ կարագ քսում։ Այս յուղը քսում են ճակատին, ձեռքին, կրծքին, աչքերին և այլն։ Մի քիչ էլ ձգում յուղի կարասի մեջ, որ յուղը «բարաքաթով» լինի։

Գիշերը մեծ բազմություն է հավաքվում եկեղեցում, ուր մոմերն անցկացնելիս բավական անկարգություններ են լինում։ Զարաճճի երիտասարդները կարում են կնքվարտող կանանց զգեստները միմյանց, ասեղ են ցցում շորերին և այլն։

Նույն երեկոյին ոսկերիչները անխոս շինում են երկաթե մատանիներ, որ կանայք գնում և գնում են մատները, որպեսզի մուտ տեղերից անցնելիս սատանաները չիփեն։

Ուրբաթ օրը կանայք մի քիչ կար են անում, որպեսզի Հուդայի աչքերը ծակեն, ծուռը չեն գնում, որովհետև Հուդան է գետնին, և Քրիստոս խաչին, չեն խաչակնքում, որովհետև Քրիստոս ինքն է խաչված։

Շաբաթ օրը շատ վաղ լվացք են անում, կանայք իրենց և երեխաների գլուխները լվանում են և երեկոյան մոտ մաքուր շորեր հագնում։ Տանտիկիները սկսում են պատրաստել ձուկ, փլավ և կարմիր ձվեր։ Քահանան տիրացուի ձեռը մի զամբյուղ տված շրջում է տնեատուն և օրհնում, սատանալով մի քանի կոպեկ և ձու։ Երեկոյան նախատոնանքը շատ վաղ է սկսվում։ Ժամվորներից շատերը ծոմ են լինում, մի քանիսն էլ գրպաններում մի քանի ձու են պահած լինում։ Երբ քահանան «առեք կերեք» է ասում, իսկույն, նույնիսկ եկեղեցու մեջ կճպում են ձվերը և ուտում։ Հետո անմիջապես վերադառնում են տուն, ուր իրենց պասը ձվով ու գինով բանալով, ընթրում են։ Սովորաբար ջրօրհնեքը ճրագի լուսով (ճրագլուսավ), իսկ զատիկը արևի լուսով (ըրըվլուսավ) են լուծում։

Ընթրիքից հետո մյուս օրը շարունակ ոչ միայն երեխաները, այլև չափահասները ձու են կովեցնում։

Զատկի առավոտյան անում են հասարակաց մատաղ։ Մի քանի նախաձեռնող մարդիկ գյուղացիներից հավաքած դրամով առնում են մի քանի ոչխարներ և մատաղում։ Մորթելուց առաջ ոչխարը երեք անգամ պտտեցնում են եկեղեցու շուրջը, աջ ականջը փոքր-ինչ կտրում, օրհնված աղ ուտեցնում և ապա մորթում ու արյունից էլ մի քիչ եկեղեցու պատին քսում։ Երբ պատրաստ է լինում, բաժանում են բոլոր գյուղացիներին առանց խտրության, մինչև Շուշիում տալիս են միայն նրանց, ովքեր որ հատուկ այդ նպատակով նվեր տալով՝ տոմսակ են ստացել և ներկայացնում են։

Նշանած աղջիկների կեսրանքը բաժին են ուղարկում իրենց հարսնացուներին և հետո էլ իրենք գնում նրան տեսության։ Ծանոթ և ազգական մարդիկ էլ գնում են միմյանց զատիկ շնորհավորելու։

Հետևյալ օրը, մեռելոցին, ամեն մի գերդաստան ուտելիքներ է տանում գերեզմանատուն ուր, իրենց ննջեցյալների գերեզմանների վրա քաց են լինում և գինի, օղի խմում, իբրև «օղորմաթաս» և հաց ուտում։

Երբ վերադառնում են, մնացորդները թողնում են գերեզմանների վրա, որպես հոգեբաժին։

Զատկից մինչև Համբարձում երեկոյան ժամասացությունից հետո այլևս չեն գործում, որպեսզի «հավկուր» չինին, այսինքն չզրկվեն գիշերները տեսնելու կարողությունից։ Երիտասարդներն էլ ուրբաթ օրը հերկ չեն անի, որպեսզի հասկը լավ բուսնի։

Համբարձում. Այս օրը բոլոր տներում կաթնապուր են եփում և բաժանում որպես զոհաբերություն։ Մի քանի տներ էլ տանում արտերի մոտ են եփում այս կաթնապուրը և մի քանի շերեփ շաղ տալիս արտի շուրջը, որպեսզի նախ հունձը լավ լինի և երկրորդ՝ կարկուտը չխփի, մորեխը չկարի և այլն։

Վիճակ հանելու սովորությունը չկա։

Նուռավոր՝ պասը դալիս է ամառվա ամենատաք ժամանակ, երբ գյուղացիները սատիկ զբաղված են հունձ անելով։ Վարանդացիները այդ պասին «պատվի պաս» են կոչում և պատմում են, թե ժամանակով մի պառավ այդ շաբաթին պաս է պահել, որպեսզի ասված հով եղանակ տա, որ որդին հեշտությամբ կարողանա հունձ անել։ Մի ուրիշ ավանդություն էլ ասում է, թե այդ պասը պահվում է ի պատիվ այն պառավին, որն օրական մի հաց ձգելով Խոր Վիրապի մեջ, կերակրել է ս. Լուսավորչին։

Վարդավառ. Այս տոնը կոչում են «վրդևոր»։ Ժողովուրդը մեծ մասամբ ուիտ է գնում Սարուշենի Ավետարանը, Ամարաս, Նինգ գյուղի ս. Գրիգոր Լուսավորիչ, Սարիբեկ և այլն։

Ժողովրդի կարծիքով այս գիշեր բոլոր սրբերի վրա լույս է իջնում, և ով որ տեսնի այդ լույսը՝ ինչ որ խնդրե՝ կկատարվի։

Ոմանք էլ պատմում են, թե հոգեպատության բոլոր սրբերը բարձրանում են երկինք, իսկ վարդավառին կրկին իջնում իրենց տեղերը, ընդունելով լուսավոր աստղերի կերպարանք։ Եվ ով որ տեսնի նրանց իջնելիս և մի բան խնդրի, անշուշտ կկատարվի։

Նավասարդ. Վարանդացիները տոնում են այս տոնը որպես սրբավամուտ, ինչպես մեր նախնիքը։ Նախընթաց երեկոյին թխում են գաթաներ, կաթնահունց, «անկաճ» և այլ խմորեղեն։ Պատրաստում են նաև «կորկոտ»[2], առավոտյան ուտելու։

[2] Կորկոտը այսպես են պատրաստում. մի կաթսայի մեջ դնում են ոչխարի յուղոտ միս, վրան կորկոտ (կճեպը հանած ցորեն) ածում, ապա մի երկրորդ շարք յուղոտ միս դարսում, նորից կորկոտ ածում, և այսպես շարունակ, մինչև որ կաթսան բոլորովին լցվի։ Հետո մի քիչ աղ են ցանում, ջուր լցնում և ծածկելով կաթսայի բերանը՝ դնում թոնրի մեջ, որ մարմանդ կրակով ամբողջ գիշերը եփվի։

Նույն երեկոյին, երբ ամենքը իրենց տները քաշված ընթրում են, բարեկամ մարդիկ, մանավանդ խնամոնք, քավորանք ընկույզ, տանձ, խնձոր կապելով թաշկինակների մեջ տանում են, հարսնացուի և կամ քարեկամ մարդկանց երդիկից ցած ձգում և ոնկատելի կերպով հեռանում։

Նավասարդի առավոտյան հանում են կորկոտները և ուտում։ Հետո մի-մի շիշ գինի, մի քանի խնձոր առած գնում են շնորհավորելու տանուտիրոջ և քահանայի նավասարդը, որոնցից և հյուրասիրվում են։

Շատերը ի նշան ուրախության ծառերի վրա կարմիր շորեր, կարմիր կտորներ են ձգում և կարմիր թելերով ճյուղերը կապկպում[3]։

[3] Բացի իմ հավաքած նյութերից ինձ համար տարբեր գյուղերից նյութեր հավաքեցին և պ. պ. Ալլահվերդյան, Վարդապետյան, Հովհաննիսյան և ուրիշներ, որոնց շնորհակալություն եմ հայտնում։

ԳԱՆՁԱԿԻ ԳԱՎԱՌ

(ՆՅՈՒԹԵՐ ԱՊԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գանձակի գավառը յուր այժմյան սահմաններով բռնում է հին Ուտյաց աշխարհի Շակաշեն[1], Գարդման[2] և Արցախի Փառիսոս[3] գավառները։ Սրա մեջ է մտնում նաև Ջրաբերդի Գյուլիստան[4] կամ Ըգմիրիզորդ մահալը, բացի Թալիշ գյուղից, Գյուլիստան բերդից և Հոռեկա վանքից։

[1] Շակաշեն գավառը կոչվում է նաև Շիկաշեն (Մովսէս Խորենացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ 610), Մովսէս Կաղանկատվացին մի տեղ (Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մոսկուա, 1860, էջ՝ 251) կոչում է Շակաշեն, մի ուրիշ տեղ՝ Արշակաշեն (էջ՝ 265)։ Ամենից ճիշտ պետք է հասկանալ Շակաշեն անունը, որ հավանորեն ծագած պետք է լինի Սագասինի կոչումից, սկյութական Սագ ցեղի անունով, որը, ըստ Ստրաբոնի, արշավելով Հայաստան, տիրեց այս գավառին։ Սա բռնում է Կուր գետի, Կուրակ ու Շամքոր գետակների մեջ ընկած երկիրը։

[2] Այս գավառը ընկնում էր Կուրակ ու Շամքոր գետակների գաշտաբերանի և Մռավյան լեռնաշղթայի գագաթնադծի շարունակության մեջ։ Սա կոչվում է նաև Գարդմանաց ձոր. (Խորենացի, Մատ., էջ՝ 258), Գարդմանիկ (Վարդան Բարձրաբերդցի, հիշատակված Մ. Բարխուդարյանի «Արցախում», էջ՝ 24)։

[3] Փառիսոսի գավառը, որ կոչվում է նաև Փառնես (Խորենացի, Մատ., էջ 602), (Կաղանկատուացի, Պատմ. էջ՝ 273 և 279), Փառիս (Կաղանկատուացի, Պատմ., էջ՝ 273), ընկնում է Շամքոր գետակի միջին օժանդակի և Գեղամա լեռնաշղթայի գագաթնադծի շարունակության և Տավուշ գետակի հարավ-արևելյան օժանդակի (Ախնջի) ափերի և գաշտաբերանի մեջ։ (Բարխուդարյան, Արցախ, էջ 24)։

[4] Գյուլիստան կամ Իգիրմիզորդ մահալը ընկնում է Կյուրակի և Ինճալայ գետերի մեջ։

Այս գավառն ևս, ինչպես ավանդում է Խորենացին, Վաղարշակ Ա. Արշակունի թագավորի ժամանակ ենթարկվում էր Սիսակյան Առան կուսակալին, բայց հետո անցավ Աղվանից թագավորությանը, սակայն շուտով հայերը կրկին տիրեցին այն, ինչպես ասում է Բյուզանդ (Գ. 13). «(Սպարապետն Մուշեղ) Թափէր ի նոցանէ (այսինքն՝ Աղվանից) նաղում գաւառս, զոր հատեալ էր նոցա ի նոցանէն (այսինքն ի Հայոց) զՈւտի և զՇակաշէն և զձորն Գարդմանայ, զԿողթ և այլն»։

Խորենացու ժամանակ աղվանները կրկին տիրում են այս գավառին, բայց Սմբատ Ա-ն (892—914) նորից հետ է առնում, իսկ նրա հաջորդ Աշոտ Բ-ն (915—928), որին շատ սիրելի էր Ուտին, երբեմն պատերազմով, և երբեմն սիրով նվաճված պահում էր, որովհետև շուտ-շուտ ապստամբվում էին[5]։

Թ դարում այս գավառն ևս ենթարկվում է Բուղայի արշավանքին, որ 855 թ. գալիս է Գարդմանացվոց գավառը, ուր փախել էր Վասակ Սիսականը։

Սա ջարդել էր Բուղայի զորքերը, վայր էր գլորել նրանց զորապետին և յուր ձիու ոտքերի տակ կոխկոտելով՝ փախել էր Գարդման ամրոցը՝ Կարիճ անունով իշխանի մոտ։ Սա թեև սիրով ընդունել էր նրան, բայց հետո դավաճանությամբ կապել էր նրան և ուղարկել Բուղային, հուսալով եթե ոչ պատվի արժանանալ, գոնե չենթարկվել նրա բռնությանն։ Բայց հակառակն է պատահում. Բուղան առնում է քերդը և իշխանին կալանավորում[6]։

Ինչպես այժմ, այնպես և հին անցյալում այս գավառի ամենանշանավոր քաղաք եղել է Գանձակը (այժմ Ելիսավետպոլ)։ Սա գտնվում է հին Շակաշեն գավառում և Մովսես Կաղանկատվացու ասելով (եր. 265) հիմնարկվել է 836 թ. Բաղդադի ամիրայի հրամանով, որաք խաղը-Փատգոսի որդու ձեռքով։

Կարճ միջոցից Գանձակը դառնում է Աղվանից մայրաքաղաք, ուր և փոխադրվում է աղվանից կաթողիկոսարանը[7]։

Տասներորդ դարի վերջում Փաղլուն ամիրան տիրում է Գանձակին, որի սերնդի ձեռին մնում է նա մինչև 1088 թվականը, երբ պարսից Մելիք շահի հրամանով Պուղան ամիրան պարսպի մի կողմը քանդելով առնում է այս քաղաքը և յուր կողմից կուսակալ նշանակում[8]։

[5] Ինճիճեան Ղ., Ստորոգութիւն Հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ՝ 337։

[6] Յովհան Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1853, էջ 71։

[7] Մատթեոս Ուռհայեցի, Պատմութիւն, Երուսաղէմ, 1869, էջ 278։

[8] Ինճիճեան Ղ., Ստորոգութիւն, էջ 311. Զամչյան Մ., Պատմութիւն Հայոց, Գ, Վենետիկ. 1784, էջ 13։

Սույն միջոցներին Գանձակը անցնում է Շեդդադինյան հարստության երկրորդ ճյուղին, որի նախահայր Շեդդադին Աբուլ Սուարը 1072 թ. դնել էր Անի մայրաքաղաքը յուր Մանուչի որդու համար և այնտեղ հիմնել Շեդդադինյան հարստության առաջին ճյուղը[9]։

1139 թվականին սաստիկ երկրաշարժից կործանվել է Գանձակը, շինությունների փլատակների տակ թաղելով ժողովրդին։ Այս ժամանակ վրաց թագավոր Դիմիտրին, Դավթի և Գեորգի հայրը, եկել և տարել է քաղաքի գոները յուր երկիրը[10]։

Գանձակը մնացել է Պարսից Շեդդադինյան հարստության ձեռքին մինչև ԺԲ դարը և եղել է նրանց գլխավոր, իշխանանիստ քաղաքը, մինչև Տափար սուլթանի ժամանակ, որը յուր երկիրը յուր որդիների մեջ բաժանելով, Գանձակը տվել է յուր կրտսեր որդուն։ Սրա ժամանակ պարսիկները շատ վատ են վարվել քրիստոնյաների հետ, մինչև անդամ, իբրև նախատինք քրիստոնեության, քաղաքի գլխավոր դռան սյամի տակ դրել են խաչը, որպեսզի անցնող-դարձողը ոտնակոխ անե այն։

Այս միջոցներում վրացիները հետզհետև մոտենում են Գանձակին, և Զաքարե ու Իվանե սպասալարները (ԺԲ դարում) առնում են Գետաբեկը և Զարեքը[11]։

1235 թվականին թաթարները Մուղանի դաշտից հարձակվում են Գանձակի վրա։ Բնակիչները սկզբում պաշտպանվում են, բայց երբ թաթարները քանդում են պարիսպը մեքենաներով, նրանք հուսահատված, իրենց ունեցվածքը թաքցնում են գետնի տակ, կրակ են տալիս տներն ու փախչում։ Թաթարները ներս են խուժում, մնացածներին սրի քաշում, խնայելով միայն երեխաներին, ապա պեղում են վառած տեղերը և գտնում թաքցրած անթիվ գանձերը, թալանում և այսպես լցնելով քաղաքն ավերակ և ամայի, վերադառնում են Մուղան։ Սակայն կարճ միջոցից Զարմագան նորից շինում է քաղաքը և մարդկանց վերաբնակեցնում այստեղ[12]։

Այնուհետև պատմությունը Գանձակի մասին լռում է մինչև 1579 թվականը, երբ օսմանցոց Օսման փաշան առնում է Գանձակի հետ և Զարաբերդը, Զարեք գետից մինչև Երասխը։ Այս արշավանքի հետևան-

[9] **Стэнли Лэн Пуль**, Мусульманские династии.

[10] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1858, էջ 65։ Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկուա, 1861, էջ 162։

[11] Զամչեան Մ., Պատմութիւն հայոց, Գ, Վենետիկ, 1786, եր. 149։

[12] Զամչեան, Գ, եր. 206, Ինճիճեան, Ստորոգութիւն, եր. 312։

քը լինում է մի սոսկալի սով, որ լրացնում է պատերազմի աղետները[13]։ Ապա, 1607 թ., երևում է Շահ-Աբասը, որն առնում է Գանձակը, կոտորում բոլոր այլազգիներին, ավերում է հին քաղաքը[14] և նորից փորձում հեռու հիմնարկում նորը, վերակոչելով[15] Աբբասապատ, ուր և կանգնեցնում է մի գեղեցիկ մզկիթ։

Շահ-Աբասն առնում և կործանում է նաև Շամքորը։

Այնուհետև Գանձակը կառավարվում է պարսից կողմից նշանակված խաններից։

1721 թ. լեզգիները Ալիսուլթանի առաջնորդությամբ 8000 հոգով հարձակվում են Գանձակի վրա և մտնում քաղաքը, բայց այստեղ քաղաքացիները գանազան փողոցներում հարձակվելով նրանց վրա, կոտորում են մոտ 1220 մարդ և մնացածներին փախցնում։ Սակայն սրանք դնում են Շամքորը ասպատակելու, Գանձակի Օղուրլու խանը հալածում է նրանց, բայց հաղթվում և նա է գաղտնում։ Այս հաղթությունից քաջալերված լեզգիները գանազան կողմեր ասպատակություններ են սփռում և կրկին գալիս Գանձակի վրա։ Այս միջոցին գանձակեցիները վրաց Վախթանգ թագավորին օգնության են կանչում, և երբ նա գալիս առնում է Շամքորը, լեզգիները փախչում են։ Վախթանգը Գանձակի մոտ բանակ է դնում և սպասում մի ամիս։ Այս միջոցին գանձակեցիները ստիպում են Վախթանգին, որ կոտորել տա թարաքյամաներին, որոնք կրոնակից լինելով լեզգիներին, հրավիրում են նրանց այս երկիրը։ Վրաց զորքը տարածվում է ամեն կողմ և կոտորում ու թալանում ոչ միայն թարաքյամաներին, այլև հայերին և շատերին Թիֆլիս գերի տանում[16]։

Հազիվ Վախթանգը վերադառնում է Թիֆլիս, երբ 1722 թ. լեզգիները նորից հարձակվում են Գանձակի վրա, առնում են քաղաքը, ծերերին և պառավներին կոտորում, իսկ աղջիկներին և մանուկներին գերի տանում[17]։

Դեռ մի ամբողջ տարի էլ չանցած, 1723 թ. օսմանցիների զորքը սուլթան Ահմեդի հրամանով առնում է Գանձակը, ինչպես և Երևանն ու Դավրեժը և ահագին ավերածություններ գործում։

---

13 Շամչյան, Պատմ. Գ, եր. 531։

14 Անդ, եր. 555։

15 Ալիշան Ղ., Տեղեկագիր հայոց Մեծաց, Վենետիկ, 1853, եր. 86։

16 Եսայի Հասան-Ջալալյան, Պատմություն համառոտ Աղվանից, Երուսաղեմ, 1868, եր. 80։

17 Չամչեան, Պատմ., Գ, եր. 781։

Բայց կարճ միջոցից Գանձակը նորից անցնում է պարսից ձեռքը, և խան է կարգվում Օղուրլի-խանը, որին 1740 թ. հաջորդում է որդին՝ Շահվերդի խանը։ Սրա երկու օրինավոր կանանցից մինը՝ Գյուլ-Գունչեն հայուհի էր։ Շահվերդի-խանին 1756 թ. հաջորդում է որդին՝ Ջավադ-խանը։ Այս վերջին երկու խաների մասին մենք կխոսենք Մելիք-Բեկլարյանների պատմության մեջ։

Մահմադ-շահը Թիֆլիսը ավերելուց հետո գալիս է Գանձակ, որտեղից մեծամեծ ասպատակություններ է սփռում Արցախ, Գուգարաց և Աղվանից երկրներ։ Բայց երբ Նուխում և Շամախում ապաստանածները ընդդիմադրում են սրա զորքերին և մինչև անգամ վնասներ հասցրնում, Մահմադ-շահը կատաղած հրամայում է ձիերի և ջորիների ոտների տակ ձգել և սպանել 600 գերիները, որոնց Թիֆլիսից բերած գերիների միջից դատել էր իբրև ծերեր և ցավագարներ, և բացի սրանից, շինել է տալիս մի կրաղանգված ուղղաձիգ պատ, որի մեջ թողնում է 52 ծակ այնքան նեղ, որ մի մարդու գլուխ հազիվ կարող էր անցնել, և ապա Արցախի գանազան գավառներից բռնած 52 հայ մելիքներին, որոնց մեղադրում էր, թե ձեռնտու են եղել Իբրահիմ խանին փախչելու, բերում է այս պատի մոտ, գլուխներն անց կացնում ծակերի մեջ և եռապատիկ թոկերը ձգելով վզերից, կապում է ամեհի ջորիներին և այնքան ծեծել է տալիս ջորիներին, որ նրանք քաշքշելով պոկում են մելիքների գլուխները։ Այս միջոցին լսում է որ Շիրազի բնակիչները և նրանց խանը ապստամբել են, իսկույն գնում է դեպի Թեհրան, որպեսզի նրանց առաջն առնե։

Սրա հեռանալուց հետո Արցախի Իբրահիմ-խանը, որ Դաղստան էր փախել, վրաց Հերակլի հետ դաշն կապելով վարձում է կովկասյան 12000 զորք և միանալով վրաց զորքի հետ 1796 թ. գալիս է Գանձակի Ջավադ-խանի վրա։ Սա չկարողանալով նրանց ընդդիմադրել, Մելիք-Մեջլումի հետ ամրանում է բերդում, սակայն դաշնակիցները պաշարում են բերդը և բուրգերից մինի վրա սպանում Մելիք-Մեջլումին, որ հրամանատար էր։ Հինգ օրից հետո Ջավադ-խանը հաղթելով՝ հաշտություն է խնդրում և ստիպվում է վարձված լեզգիներին վճարել խոստացված վարձը և վերադարձնել յուր և Մելիք-Մեջլումի ունեցած մի հարյուր թիֆլիսեցի գերիները։ Բացի սրանից Հերակլը գերի է տանում Վրաստան Գանձակի բնակիչների մեծ մասը[18]։

1796 թվականի դեկտեմբերին ռուսները Զուբովի առաջնորդու-

---

18 «Գիւան հայոց պատմութեան», Դ, Թիֆլիս, 1895, եր. 742—43։

թյամբ, որի հետ էր և հայոց Հովսեփ արքեպիսկոպոսը, առնում են Գանձակը, սակայն Կատարինե կայսրուհին վախճանվում է, և Ալեքսանդր Ա-ն Լոռ է կանչում յուր հաղթական զորքը։ Տեղական Ջավադ-խանը նորից գլուխ է բարձրացնում, մինչև որ 1804 թ. հունվարի 3-ին ռուսները Ցիցիանովի առաջնորդությամբ կրկին առնում են Գանձակը, սպանելով Ջավադ-խանին և նրա կրտսեր որդուն։ Գնդապետ Պավել Միխայլովիչը եգերյան գնդով թողնվում է այստեղ, ինչպես և Կ. Պոլսեցի Գեղարդակիր Հովհաննես եպիսկոպոսը[19], որ Տիֆլիսի առաջնորդ էր։

1826 թվականին, երբ Աբբաս-Միրզան պաշարել էր Շուշին, Գանձակի թուրքերից պատգամավորներ գնացին և խնդրեցին գալ վերականգնել Գանձակի խանությունը։ Աբբաս-Միրզան էլ յուր ավագ որդի Մահմեդ Միրզին, յուր փեսա Ամիր-խան-սարդարին և Ջավադ-խանի որդի Ուզուբլու-խանին ուղարկեց սրանց խնդիրը կատարելու։ Սրանք առան Գանձակը, ավերեցին Ելենենդորֆ և Անենենֆելդ գաղութները, որոնցից առաջինի բնակիչներից շատերը կարողացան «ազատել իրենց կյանքը միայն հայերի օգնությամբ, թաքնվելով նրանց տներում հենց Գանձակի մեջ»[20], իսկ անենենֆելդցիք փախան Թիֆլիս և միայն դույքերը կորցրին։ Այս միջոցին (սեպտեմբերի 2-ին) հայազգի Մազաթովը 2000 հոգի զորքով եկավ դեպի Ջյազամ և պատահեց 10—12 հազար պարսից զորքի։ Մյուս օրը Շամբոր գեղակի մոտ տեղի ունեցավ մի ահեղ կռիվ, և պարսիկները, 2000 գիակ և մեծ ավար թողնելով պատերազմի դաշտում, փախան դեպի Գանձակ և այս բերդն էլ անխնամ թողնելով, նահանջեցին մինչև Ղարաբաղ։ Ամսի 4-ին Մազաթովը մտավ Գանձակ, որտեղ նրան ընդառաջ եկան տեղացի հայերն ու հայ հոգևորականությունը խաչով ու խաչվառով[21]։

Այս միջոցին Պասկևիչը Կովկասյան զորքերի ընդհանուր հրամանատարի պաշտոնը ստանձնելով, յուր զորքերով եկավ Գանձակ և սեպտեմբերի 13-ին քաղաքի առաջը եղած ընդարձակ դաշտում ճակատամարտ տվեց Աբբաս-Միրզայի բազմաթիվ զորքին և հաղթելով փախցրեց դեպի Թավրիզ։ Այս պատերազմի մեջ մեծ գործ կատարեց ինչպես իշխ. Մազաթովը, այնպես և հայոց հեծելազունդը՝ Մանուչարյան Գրիգոր եպիսկոպոսի առաջնորդությամբ։ Այսպիսով Գանձակը կրկին մտավ մուսայ տիրապետության տակ և Պասկևիչի առաջարկով վերակոչվեց

[19] «Դիտան հայոց պատմության», Բ, Թիֆլիս, եր. 174—175։

[20] Потто В. А., Кавказская война, т. III, вып. I, стр. 101.

[21] Երիցյան Ա., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում. հատ. Ա, Թիֆլիս, 1894, էջ 261։

Ելիսավետպոլ, ի պատիվ Ելիսավետա կայսրուհու։ Այնուհետև սկսեց կամաց-կամաց զարդանալ և 1870 թ. դարձավ համանուն նահանգի նահանգային քաղաք։

ՀԱՅ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գանձակի գավառում եղել են Մելիք Բեկլարյան, Մելիք Մնացականյան, Մելիք Նահնազարյան և Մելիք Թոստոմյան մելիքները։ Սրանցից առաջինը իշխել է Իպիրմիդորդ կամ Գյուլիստան մահալին, որ նախնի բաժանմամբ ընկնում է Ղարաբաղի խանության մեջ։ Այս մելիքությունը կազմում էր եամսա (հինգ) մելիքություններից մինը, որ սկզբներում բոլորովին անկախ, իսկ վերջերում ենթարկված էր Ղարաբաղի խաներին։ Մյուս մելիքությունները գտնվում էին Գանձակի խանության մեջ և գրեթե շարունակ ստորադրված են եղել Գանձակի խաներին։ Սրանք այնքան էլ նշանավոր չեն եղած։

Տալիս ենք սրանցից յուրաքանչյուրի պատմությունը։

Մելիք-Բեկլարյանները. Ավանդության համաձայն, Մելիք-Բեկլարյանների տոհմը սկսված է Սև-Աբովից, որ տասնվեցերորդ դարի վերջում, հայտնի չէ թե ինչ պատճառներով նուխու գավառի Նիժ գյուղից գաղթում է Գյուլիստան ուրիշ 7 ընտանիքի հետ և առժամանակ բնակում վրաններով Թութրուլաղ (Գյուլիական) գյուղում։ Հաստատապես հայտնի չէ, թե Սև-Աբովը բուն նիժեցի (ուտի) է եղել, թե պարսից կամ լեզգիների արշավանքներից ստիպված, թափառելիս է եղել այն կողմերը։

Նոր գաղթած ավերակ գյուղատեղում Սև-Աբովը, որ մի վիթխարի, հաստաբազուկ և սևերես մարդ է եղել, առժամանակ օրական ապրուստը հայթայթելիս է եղել պլխավորապես որսորդությամբ։

Մի օր, երբ մի սպանած եղջերու շալակած, հաստ մահակը ձեռին վերադառնում է վրանը, տեսնում է հեռուն, մի ծառի տակ յոթը ավազակներ նստած։ Սրանցից մինը մոտենում է Սև-Աբովին և ցանկանում է եղջերուն խլել, բայց Սև-Աբովը մահակի մի հարվածով նրան գետին է գլորում։ Իսկույն ընկերներից մինը օգնության է հասնում, բայց սա ևս նույն վիճակին է ենթարկվում։ Հետո գալիս են հետզհետե մյուսները, որոնց բոլորին էլ Սև-Աբովը մահակի հարվածներով գետին է գլորում։ Այս միջոցին վրա են հասնում Բարգայի խանի մարդիկ, որոնք ուղարկված էին հենց այս ավազակներին բռնելու, և կապկպելով նրանց,

առնում տանում են։ Բարդայի խանը առատապես վարձատրում է յուր մարդկանց, որոնք պատմում են, իբր թե իրենք են բռնել ավազակներին, միևնույն ժամանակ հրամայում է բանտարկել այնքան ավերածություններ անող ավազակներին, որպեսզի բայրամի տոնն անցնելուց հետո նրանց գլխատեն։ Երբ հասնում է գլխատման օրը, ավազակները դիմում են խանին և ասում. «Պատժիր մեզ, ինչպես կամենում ես, որովհետև հիրավի մեծ վնասներ ենք տվել քեզ, բայց մի անպատվիր մեզ, վարձատրելով այդ խաբեբաներին, որովհետև մեզ բռնել է մի քաջ տղամարդ Թուքբուլաղում, և ոչ թե այդ վախկոտները»։

Խանը անմիջապես բերել է տալիս Սև-Աբովին և երբ հարցնում է, թե ինչ վարձատրություն է ցանկանում յուր քաջության համար, Սև-Աբովը, որպես գաղթական, բնակության տեղ է խնդրում նրանից և ստանում է Թառիջ կամ Թալիշ գյուղը, Հոռեկա վանքի մոտ։

Այսքանն է միայն հայտնի Սև-Աբովի մասին, որի գերեզմանը գտնվում է Հոռեկա վանքի մոտ և կրում է Հայոց ՌՃԱ (1081—Փրկչական 1632) թվականը, որ է Աբովի մեռած տարին։

Սև-Աբովին հաջորդում է Մելիք-Յավրին, որի անունը թեև հիշվում է ժողովրդի մեջ, սակայն գործերի մասին ոչ մի հիշատակություն չկա։ Սրա գոյությունը հաստատվում է և այն փաստով, որ Թալիշ գյուղի Ավետարանի հիշատակարանում ասված է, թե 1650 թ. (երբ կազմել են ավետարանը) Թառիջ գյուղում իշխան է եղել Սև-Աբովի որդի Մելիք-Յավրին։

Մելիք-Յավրուն հաջորդում է Մելիք-Բեկլարը, որ քաջ և խելացի անձնավորություն է եղել։ Սա խլում է այս կողմերի հին տիրապետող Աբրահամ-Յուղբաշուց (Իբրահիմ-գյավուր) մի քանի գյուղեր, ինչպես և Վերիշենը, Ներքին շենը, Էրքեջը և այլն։ Նա տիրում է նաև Գյուլբստան բերդին, վերանորոգում է և յուր բնակությունն այնտեղ հաստատում։ Նա ունենում է երեք որդի՝ Մելիք-Աբով, որ հաջորդում է իրեն, Մելիք-Թամրազ (մահ. 1750) և Իսայ-խան-ագա (մահ. 1752)։

Մելիք-Բեկլար Ա-ին հաջորդում է ավագ որդին՝ Մելիք-Աբով Բ, որ Կաղ մականունն էր ստացել, որովհետև գնդակի հարվածից ոտքը վնասվել էր։

Սա մի անգամ Գանձակ գնալիս ջերմում է, ուստի իջնում է ձիուց և Տուլուզ (Ղարբուլախ գյուղի հանդեպ, այժմ ավերակ) գյուղի մոտ մի ծառի տակ նստում է հանգչելու։

Այս միջոցին Գանձակի մեծ կալվածատեր Միրզա-Մահմատ Մուստաֆի աղջիկը, գեղեցիկ Ղամար-Սուլթանը, աղախիններով շրջապատված, զբոսնում է յուր հոր խաշների մոտ։ Կաղ-Աբովը հենց որ տեսնում է նրան՝ մոռանում է յուր ջերմը, առանգում և յուր ձիու գավակն առնելով փախցնում է Ամենափրկիչ վանքը, ուր մկրտել է տալիս և ամուսնանում հետը։ Միրզա-Մահմատ Մուստաֆան մի քանի անգամ յուր մարդկանցով գալիս է յուր աղջիկը կռվով ետ խլելու, սակայն Մելիք-Աբովը հաղթում է նրան և ետ դարձնում։ Վերջ ի վերջո անները հաշտվում է փեսայի հետ, և բացի այդ աղջկանից ուրիշ ժառանգ չունենալով՝ յուր բոլոր կալվածքները թողնում է նրան[1]։

Մելիք-Աբովը սուրը ձեռին պաշտպանում է յուր ժողովուրդը լեզգիների արշավանքներից, և երբ 1721 թ. Պետրոս Մեծն առնում է Դերբենտը, Մելիք-Աբովն էլ յուր զորքով գնում է Գանձակի մոտ բանակած վրաց Վախթանգ թագավորի և հայոց մյուս մելիքների մոտ, որպեսզի ռուսների հետ միանալով թոթափեն պարսից լուծը։

Սակայն երբ Պետրոս Մեծը հանկարծ ետ է դառնում, և Վախթանգ թագավորը շտապով վերադառնում է Թիֆլիս, Մելիք-Աբովը հայոց մելիքների հետ միասին անպաշտպան մնալով, ցրվում են իրենց երկրները և ամրանում ամուր տեղերը, որովհետև արդեն սաստիկ զրգռել էին պարսից բարկությունը։ Սակայն Մելիք-Աբովը հույսը չի կորցրել ռուսների օգնությունից, ուստի երբ օսմանցիները տանում են Թիֆլիսը, Երևանը և Նախիջևանը, 1725 թ. մարտի 10-ին Գանձասարի նստայի կաթողիկոսի և Աբրահամ, Հոհան, Պապի Իվան մելիքների հետ թուղթ է գրում Պետրոս Մեծին, որի մեջ ասում է. «Այժմս որ մեր թուականս ռՃԿԴ է, մարտի ամսոյ մէկումն, 14700 հեծեալ սայ զօշուն եկին մեզ վերայ. 3 փաշայ էր, Շահէն, Սալահ և Ալի անուն։ Մեք էլ տեսանք, որ զատէն կռուելով չէ լինել, յառաջ յառաջ գնացինք զօնաղ արինք, մեր գեղերանց վերայ բաժանեցինք, որք բճ-ով, գճ-ով, դճ-ով, և եճ-ով տեղ ու տեղ կոտորեցինք. բ. փաշան ևս սպանեցինք. Սալահ փաշան ողջ պահած ունեմք. ապա մէկ ՃՇ մարդ փախան բրծան. ԲՃ էլ աւելի քրիստոնեայ էսիր կայր ազատեցինք։ Ահա այս արարք և գործ մեր ոչ թէ մերով կարողութեամբ է, այլ զբո ամենայաղթ զօրութիւնդ և օգնութիւն յուսալով, ապաւինեմք և համբերեմք սպասելով. այժմ այսուհետև մուշախաս նոցա մեծ զօրք և զօշուն կուգայ մեզ վրայ, եթէ փութանակի մեզ օգնութիւն և թիկունս ոչ հասցէ ի հզօրէդ, յատու կտոր ամենայն ազգս հայոց քրիստոնեից բնաջինջ առնելոյ են. խնդրեմք,

[1] «Записка из апеллоционного дела «Мелик-Бекларовых», որ գտնվում է Պ. Ս. Մելիք-Բեկլարյանի մոտ։

աղաչիմք, ժտիմք, զի վասն անուան Քրիստոսի մի անտես արասցես զՀայոցուածս մեր»[2]։

Սակայն այս խնդրած օգնությունն ուշացավ, չնայելով որ Մելիք Աբովը մի տարի առաջ, 1724 թ. փետրվարի 5-ին յուր եղբոր՝ Մելիք Թամրազի և Ավան ու Միրզա Յուզբաշիների ստորագրությամբ դարձյալ դիմած էր Պետրոս Մեծին և գրած. «Ահա մինչև ցայս թարիղս թէպէտ չորից կողմանց թշնամիք զօրեղք յարուցեալք կան ի վերայ մեր, ապա աստուծով և քոյին կարող զօրութեամբ և աղօթիւք զմեզ և զմեր մերձակայս ողջութեամբ պահեալ եմք. թէպէտ կոտուլով, և թէ այլովք հնարիւք և ակն ունիմք զի մինչև ի տերութիւն քոյ առ մեզ հասանելոյ և յորժամ մերձեսցի զօրքն թագաւորական ի սահմանս մեր, յայնժամ և մեք ելցուք ըստ չափու կարողութեան մերում զօրօք ընդառաջ զօրաց հզօրիդ.... և վասն այն այժմս ոչ արկաք՝ի թիւ զհամար զօրաց մերոց, զի յոյժ ցիր և ցան են աստ և անդ... բայց պակասութիւն զինուց պատերազմականաց յոլով ունին»[3]։

Այս խնդրին ի պատասխան Պետրոս Մեծը 1724 թ. նոյեմբեր 10-ին հրովարտակ է ուղղում մասնավորապես Եսայի կաթողիկոսին, Ավան և Միրզա Յուզբաշիներին (չգիտենք, ինչու էր մոռացված Մելիք-Թամրազին, քանի որ նա էլ էր ստորագրել խնդրին) ամբողջ հայ ազգին ընդհանրապես, որով առաջարկում էր զայթել ռուսների՝ Պարսիկներից խլած Գիլան, Մազանդարան և Բաքու երկրները։ Բայց մելիքները հանձն չեն առնում։

Մելիք-Աբով Բ-ն մեռնում է 1728 թվականին, և որովհետև նրա որդի Հովսեփ կամ Յուսուփը դեռ պատանի էր, մելիքության պաշտոնը ստանձնում է Մելիք-Թամրազը։ Սակայն սա չէ կառավարում որպես ժամանակավոր խնամակալ յուր մատաղահաս եղբոր որդու, այլ որպես երկրի իսկական տեր։ Եվ որպեսզի կարողանա իշխանությունն ընդմիշտ վարել, սկսում է ճնշել պատանի Հովսեփին, նրան հեռու պահել գործերից և նույնիսկ մատադրվում է նրա կյանքին վերջ դնել։ Այս ժամանակներում Հովսեփը մոր հետ ապրում էր Գյուլիստան բերդում, իսկ

[2] Эзов, Сношения Петра Великого с Арм. народом, стр. 418.

[3] Անդ, եր. 367։

Մելիք-Թամրազը Հոռեկա վանքի մոտ շինել էր մի դեղեցիկ ապարանք և բնակություն հաստատել։

Մերոնիները պատմում են, թե մի ինչ որ հարկահան է եկել՝ Գյուլիստանի մահալիցն էլ հարկ հավաքելու։ Մելիք-Թամրազը ամենայն կերպ նպաստել է նրան և նույնիսկ սաստիկ գովել է նրա մոտ յուր հանդուցյալ մելիք եղբոր հրացանը, որ գտնվելիս է եղել նրա որդու՝ պատանի Հովսեփի ձեռքին։ Հարկահանը կանչում է Հովսեփին, խնդրում է ցույց տալ հրացանը և խլում է նրա ձեռքից։

Երբ Հովսեփը լալով գնում պատմում է այս անցքը յուր մորը՝ սա սաստիկ հանդիմանում է նրան, որ հոր հիշատակը այդպես հեշտությամբ թողել է ձեռքից։

Հովսեփը սաստիկ հուզված, մի քիչ փող է խնդրում մորից և զենքեր առնելով, յուր մի քանի երիտասարդ ընկերներով հետևում է հարկահանին։ Իրր հարձակման նշան՝ որոշում է «ծկըտ», իսկ դադարման «մկըտ» խոսքերը։ Երբ հարկահանը մտնում է Թարթառի նեղ ձորը, Հովսեփը «ծկըտ» գոչելով հարձակվում է նրա վրա, կտրում նրա գլուխը և խլում յուր հոր հրացանը[4]։ Ընկերներն էլ հարձակվում են ջորեպանների վրա և բոլորին կոտորում։ Ապա հարկահանի հավաքած ոսկիներն առած վերադառնում են Գյուլիստան բերդը[5]։

Հովսեփը երիտասարդության հասնելով բարեկամանում է Ջրաբերդի Մելիք-Ադամի հետ, որ թշնամի էր Մելիք-Թամրազին և նրա խորհրդով ու օգնությամբ հարձակվում է Մելիք-Թամրազի ապարանքի վրա, մի քանի օր կռվելուց հետո առնում է ապարանքը և բռնում Մե-

[4] Այս հրացանը Մելիք-Բեկարյանների ժառանգները վաճառել են Գեներալ Երմոլովին հազար ռուբլով, և սա ուղարկել է Պետերբուրգի Զենքերի թանգարան։

[5] Բազմարդյուն Բաֆֆին յուր «Խամսայի մելիքություններին» մեջ (եր. 17) այս անցքը պատմելով հարկահանին Միրզա-Թահիր է կոչում, և Շահ-Սուլթան Հյուսեինի գահընկեցության միջոցին վերագրում։ Մեզ թվում է, թե այստեղ մի ժամանակագրական սխալ պիտի լինի, որովհետև Մելիք Հովսեփի հայրը Մելիք Աբով Բ-ն վախճանվել է 1728 թվականին, երբ արդեն Շահ-Սուլթան Հյուսեինը վախճանված էր (1722 թ.) և այս կողմերը 1723 թվականից ընկած էին Օսմանցիների իշխանության ներքո։

Ճշմարիտ է, Միրզա-Թահիրը եկել է Ղարաբաղ և Գանձակ հարկ հավաքելու, սակայն այս եղել է 1702 (ՌՃԾԱ) թվականին, ինչպես վկայում է Եսայի կաթողիկոսը (եր. 47) և Միրզա-Թահիրն էլ յուր հետ 1100 մարդ է ունեցել, որոնց պատանի Հովսեփը չէր կարող ջարդել։ Կարծում ենք, որ այս հարկահանը օսմանցիներից է ուղարկված եղել, և եթե Հովսեփը անպատիժ է մնացել, պատճառն այն է եղել, որ նույն գավառները կրկին Պարսից ձեռքն են անցել։

լիք-Թամրազին, իսկույն հրամայում է նրան կախել չինարի[6] ծառից և իրեն հռչակում է մելիք։

Մելիք-Թամրազը թողնում է երկու որդի՝ Դանիել, որ թեև կրում էր մելիքի տիտղոսը, բայց մելիքություն չէր անում և Սարուխան-բեկ, որ 1723 թ. հայոց գնդերի շորս քաջ զորապետներից մին էր։

Այնուհետև Մելիք Հովսեփը, սերտ միացած Ջրաբերդի Մելիք-Ադամի հետ, գործում է Փանահ-խանի դեմ։

Երկու խոսք սրա մասին. Փանահ-խանը Ջիվանշիրի թուրք ցեղի Սարիչալու տոհմից էր։ Սա Թեհրանում շահի մոնետիկի պաշտոն էր կատարում, երբ մի անկարգության համար գլխատման դատապարտվեց, ուստի փախով եկավ Ջիվանշիր։ Այստեղից նա դիմեց Ջրաբերդի Մելիք-Ալլահ-Ղուլի-սոլթանին և նրա մոտ դարձավ հարկահան (տուրքեր հավաքող)։ Թեև Պարսկաստանից մի քանի անգամ պահանջեցին, որ Փանահին բռնեն և ետ ուղարկեն, սակայն Մելիք-Ալլահ-Ղուլի-սոլթանը պաշտպանեց նրան։

1747 թվականին Նադիր-շահը սպանվեց, և պահաժառանգության համար կռիվներ ծագեցին, որից օգտվելով, Նադիրի խորասան տարած ջիվանշիրցի զորականները վերադարձան իրենց հայրենիքը՝ Ղարաբաղի անապատները։ Ջառչի Փանահը անմիջապես գնաց նրանց մոտ և կարճ միջոցից հրաժարեցնել տվեց նրանց նախկին տանուտերին և ինքը ընտրվեց։ Եվ երբ Ագիլ-շահը թագավորելով, Ամիր-Ասլան խանին ուղարկեց Ղարաբաղը խաղաղեցնելու, Փառչի Փանահը ընծաներ տալով՝ նրա միջնորդությամբ շահից ստացավ խանի տիտղոս։

Ջիվանշիրցիները թափառական խաշնարածներ լինելով, սեփական երկիր չունեին, նրանք ձմեռը թափառում էին Կուր գետի աջ ափի տափարակներում, իսկ ամառը բարձրանում Ղարաբաղի լեռները, որոնք հայ մելիքների իշխանության տակ գտնվելով, ջիվանշիրցիները ստիպված էին ոչխարներից տասանորդ տալու։ Փանահ-խանը ցանկանում է այս լեռներից մինի վրա մի հաստատուն տեղ ունենալ, ուստի և գնում է Բայաթ (Գարգար գետի մոտ) և սկսում մի բերդ շինել։ Բայց Գյուլիստանի Մելիք Հովսեփը և Ջրաբերդի Մելիք-Ալլահ-Ղուլի-սոլթանը Շիրվանի Հաջի-Չելեբի կառավարչի հետ հարձակվում են այդ բերդի վրա և հիմնահատակ անում։

Հետո Փանահ-խանը փորձում է Թարնակյուրտ (Տիգրանակերտ) ավերակների վրա մի ուրիշ բերդ կառուցել, որ կոչում է Ասկարան։

[6] Այս չինարի ծառը կոչվում է Ղանլու-չինար (արյունալից չինար), որից այժմ միայն կոճղերն են մնացել։

Սակայն Գյուլիստանի Մելիք-Հովսեփը, Ջրաբերդի Մելիք-Ալլահ-Ղուլի-սոլթանը և Խաչենի Հասան Ջալալյան Մելիք-Ալլահվերդին դարձյալ քանդում են այդ բերդը, որովհետև իրենց երկրների սահմաններին մոտ էր գտնվում։

Այսպես՝ մինչդեռ հայ մելիքների միաբան գործունեությունը ի դերև էր հանում Փանահ-խանի բոլոր հույսերը, և նա չէր կարողանում ոչ մի տեղ հաստատվել, մի տիուր դիպք եկավ խանգարելու այդ միաբանությունը և նպաստելու Փանահ-խանին ոչ միայն հաստատվելու հայ մելիքների երկրի սրտում, այլև իշխելու նրանց վրա։

Վարանդայի իշխող Մելիք-Հովսեփի եղբայր Մելիք-Շահնազար Բ-ն, որ վերին աստիճանի անբարոյական մարդ էր և միաժամանակ երկու կնոջ հետ էր ամուսնացել, սպանում է յուր եղբորը՝ Մելիք-Հովսեփին և նրա տեղը ինքը մելիք դառնում։ Այս անիրավությունը պատժելու համար Գյուլիստանի Մելիք-Հովսեփը, միացած Ջրաբերդի Մելիք Իսրայելյան Ալլահ-Ղուլի-սոլթանի, Խաչենի Մելիք-Ալլահվերդու և Դիզակի Մելիք-Ավանյան Մելիք Եսայիի հետ՝ պաշարում է նրա Ավետարանոց ամրոցը։ Սակայն ձմեռը վրա հասնելով, նրանք չին կարողանում ամրոցը առնել, այլ միայն ավերելով և ավարելով շրջակա գյուղերը, ետ են քաշվում, գարունքին կրկին հարձակվելու պայմանով։

Հենց որ սրանք հեռանում են, Մելիք-Շահնազար Բ-ն բոլորովին անճարացած և անօգնական մնալով, ձեռք է մեկնում Փանահ-խանին և նրա խորհրդով 1752 թ. հիմնում է Շուշի բերդը, միանգամայն պատերազմ մղելով դաշնակից մելիքների դեմ։

Այս պատերազմները տևեցին մոտ քսան տարի, որի ընթացքում Փանահ-խանը թեև հաջողացրեց դավաճանությամբ սպանել տալ Խաչենի Մելիք-Ալլահվերդուն և նրա մելիքությունը խնձորեստան գյուղի տանուտեր, դավաճան Միրզախանին հանձնելով (1755 թ.), Խաչենը իրեն հպատակ և դաշնակից դարձնել, բայց և այնպես չկարողացավ մյուս երեք դաշնակիցներին ընդդիմադրել և ստիպվեց հաշտություն խնդրել։ Բանակցության համար որոշվեց գնալ մի չեղոք տեղ՝ Ամարասա վանքը։ Այստեղ եկավ Փանահ-խանը յուր սիրելի Մելիք-Շահնազար Բ-ի հետ և բանակցեց հայ մելիքների հավատարմատար Ջրաբերդի Ալլահ-Ղուլի-սոլթանի հետ, որին Նախիջևանի Հեյդար-Ղուլի-խանի դրդմամբ և հակառակ յուր դրած պայմանին, կալանավորեց, տարավ Շուշի բերդը և գլխատեց (1756)։ Ալլահ-Ղուլի-սոլթանին հաջորդեց եղբայրը՝ Մելիք-Ադամը, որ ավելի սերտ կերպով միացավ Գյուլիստանի Մելիք-Հովսեփի հետ և ավելի ոխերիմ կերպով սկսեց կռվել

Փանահ-խանի դեմ։ Մելիք-Ադամը մանկությունից պատանդ էր եղել Դաղստանի խոսրով սուլթանի մոտ և լավ վարժվել էր լեռնականների պատերազմական կարգերին։ Նրան ազատել էր Նադիր-շահը։

Ահա այս Մելիք-Ադամը, յուր եղբոր մահվան վրեժխնդիր լինելով, միացավ Գյուլիստանի Մելիք-Հովսեփի հետ, ամրացավ Ջերմկա բերդում, և սկսեց պատերազմել Փանահ-խանի դեմ։ Այս պատերազմը ամբողջ չորս տարի տևեց և մեծամեծ վնասներ տվեց Փանահ-խանին։

Փանահ-խանը հպատակեցնելով Խաչենը և գրկելով Ջրաբերդը յուր նշանավոր պաշտպանից, կարծում էր, թե արդեն բոլորովին թուլացրել է մյուս մելիքների ուժը, ուստի և մարդ ուղարկեց Գյուլիստանի Մելիք-Հովսեփի մոտ և խստիվ պահանջեց հպատակություն։ Մելիք-Հովսեփի քաջ, վիթխարի և գյուրաբորբոք որդին՝ Բեկլարը թույլ չտվեց յուր հորը պատասխանելու, ասելով. թե ինքը կտա Փանահ-խանի պատասխանը և տալա յուր թուրը բռնելով պատգամավորի գլխի վրա, ստիպեց կուլ տալ հրամանագիրը։ Եվ երբ նա սարսափած կուլ տվեց թղթի վերջին կտորը, Բեկլարը ասաց. «Դե՛հ, դնա այժմ, այստեղ կերածիդ արտադրությունը կլինի Փանահ-խանի պատասխանը»...

Այս խոսքերից վրդովված՝ Փանահ-խանը շարունակեց ավելի խրատությամբ պատերազմել, սակայն դաշնակից հայ մելիքների՝ Գյուլիստանի, Ջրաբերդի և Տիգակի զորքերը շարունակ պաշարման մեջ էին պահում Շուշու բերդը։

Այս միջոցներում (1761 թ.) Ղարաբաղ եկավ Ուրմիեցի Աֆշար Ֆաթալի խանը, որ Նադիր-շահի քաջ զորավարներից մին էր և նրա մահից հետո սրի ուժով հնազանդեցրել էր ամբողջ Ատրպատականը։ Իսկույն Գյուլիստանի Մելիք-Հովսեփը և Ջրաբերդի Մելիք-Ադամը միանում են նրան և բանակ դնելով Խոջալու գետի ափին, ամբողջ վեց ամիս շարունակ պաշարում են Շուշու բերդը։ Վերջապես Փանահ-խանը և Մելիք-Շահնազարը անձնատուր են լինում։ Բայց Ֆաթալի-խանը փոխանակ յուր խոստման համեմատ այդ երկուսին հայ դաշնակից մելիքներին հանձնելու, որ ինչպես կամենան, այնպես վարվեն նրանց հետ, տասը հազար թուման փրկանք և Փանահ-խանի որդի Իբրահիմ-աղային պատանդ է առնում և գնում Պարսկաստան[8]։

Հայ մելիքները դժգոհ մնացին Ֆաթալի-խանից՝ Փանահ-խանն էլ

[7] Ադիգյոզալ. Ձեռագիր նյութեր, էջ 14—15։ Շնորհակալություն եմ հայտնում պ. Ա. Երիցյանին, որ բարեհաճեց այս ձեռագիրը տալ ինձ օգտվելու։

[8] Ադիգյոզալ. Ձեռագիր նյութեր։

ավելի թշնամացավ իրենց հետ, որովհետև նա գիտեր որ միայն իրենց ձեռնտավությամբ Ֆաթալի-խանը կարողացավ հաղթությունը տանել, ուստի և հետացան գնացին վրաց Թեյմուրազ իշխանի (Հերակլի հոր) մոտ և առաջարկեցին նրան միանալ իրենց հետ Փանահ-խանի իշխանությունը ոչնչացնելու։ Թեյմուրազը սիրով հանձն է առնում, որովհետև ինքն էլ թշնամացած էր Փանահ-խանի հետ։ 1762 թվականին վրաց և հայոց զորքերը պաշարում են Ասկարանի բերդը և Գարգար գետի ափին ճակատամարտ տալիս։ Փանահ-խանը հաղթվում է և փախչում Պարսկաստան, բայց Խուդափերինի կամուրջի մոտ, Դալի Մահրասան և Թյուլի-Արզման քաջերից բռնվում է և հետ բերվում։ Մելիք-Շահնազար Բ-ն էլ, որ Մելիք Միրզախանի հետ ամրացած էր Շուշու բերդում, փախչում ապաստանում են Ավետարանոց ամրոցում։ Հայոց և վրաց զորքերը պաշարում են այս բերդը և մի քանի օր կռվելուց հետո առնում, ավերում, կողոպտում և Մելիք-Շահնազարին ու Մելիք-Միրզախանին էլ գերի բռնում։

Թեյմուրազը թալանելով ու ավերելով ընդհանրապես Փանահ-խանի երկրները, սրանց իշխանությունը տալիս է Մելիք-Հովսեփին ու Մելիք Ադամին և ինքը ուզում է վերադառնալ, տանելով յուր հետ Փանահ-խանին, Մելիք Շահնազարին և Մելիք Միրզախանին։ Հայ մելիքները պահանջում են, որ իրենց պայմանի համեմատ Թեյմուրազը իրենց ձեռքը հանձնե այդ երեք գերիներին, որոնց հետ կվարվեն ինչպես իրենք կկամենան։ Սակայն Թեյմուրազը յուր խոստումի կատարումը ձգձգելով վերադառնում է Թիֆլիս և մեծ փրկանքներ առնելով այդ երեքին էլ արձակում։

Մելիք-Հովսեփ և Մելիք-Ադամ սաստիկ վշտացած Թեյմուրազի խարեբայությունից, դիմում են Շիրվանի կառավարիչ Հաջի-Չելեբի խանին և առաջարկում իրենց հետ միանալ Թեյմուրազից վրեժ լուծելու։ Սա սիրով հանձն է առնում, որովհետև ինքն էլ թշնամի է եղել Թեյմուրազին։ Սրանց միացյալ զորքը արշավում է դեպի Թիֆլիս, սակայն Գանձակի մոտ հանդիպում է վրաց զորքին, որ ընդհարում ունենալով Գանձակի Շահվերդի-խանի հետ նրան գերի էր բռնել։ Միացյալ զորքը հարձակվում է վրաց զորքի վրա, ջարդում և հետ փախցնում, խլելով Շահվերդի-խանին և այն ահագին ավարը, որ նրանք խլել էին Փանահ-խանից։

Հայ մելիքները ազատում են Շահվերդի-խանին, որով և բարե-

[9] Երասխի վրա։

կամություն են հաստատում նրա հետ և միաժամանակ մնում Գանձակում։

Այս միջոցում Շահվերդի-խանը միջնորդ է հանդիսանում Փանահ-խանի և հայ մելիքների միջև և աշխատում է նրանց հաշտեցնել։

Մելիք-Հովսեփը և Մելիք-Ադամը քսան տարվա պատերազմներից սաստիկ վնասված և ձանձրացած համաձայնում են և ի նշան հաշտության Մելիք-Հովսեփը առնում է Մելիք-Շահնազար Բ-ի դուստր Ամարանին (Մարիամին) յուր որդի Բեկլարին կնության։ Փանահ-խանի հետ հաշտություն են կնքում հետևյալ պայմաններով.

ա) Փանահ-խանը տեր է լինում Շուշի բերդին, առանց իրավունք ունենալու միջամտել մելիքների երկրի և հպատակների գործերի մեջ. բ) նրա հարկավոր լինի պատերազմ արտաքին թշնամիների հետ, պետք է վճռվի ընդհանուր համաձայնությամբ, գ) Փանահ-խանը ինքնագլուխ ոչ որի հետ պատերազմելու իրավունք չպիտի ունենա, դ) Հայոց մելիքների երկրներից հավաքված հարկերը պետք է գործ դրվեն տեղային պետքերի համար. ե) Փանահ-խանը Ղարաբաղում նոր նվաճումներ անելու համարձակություն չպիտի ունենա և այլն[10]։

Այս պայմանները Փանահ-խանը քանի կենդանի էր պահպանեց, սակայն նրա որդի և հաջորդ Իբրահիմ խանը բոլորովին ուշադրություն չդարձրեց և շատ անգամ խնդրեց Գանձակի Շահվերդի-խանից, որ իր մոտ եղած Մելիք-Հովսեփին և Մելիք-Ադամին հանձնի իրեն։ Սակայն Շահվերդի խանը չկատարեց նրա խնդիրը, որի պատճառով այս երկուսի մեջ հարաբերությունը լարվեց, միևնույն ժամանակ Շահվերդի-խանը թույլ չէր տալիս այս մելիքներին, յուր մոտից հեռանալ, այնպես որ Մելիք-Հովսեփը սաստիկ զզված՝ մի օր թողեց ամեն ինչ և փախավ գնաց վրաց Հերակլ թագավորի մոտ և նրան գրգռեց Շահվերդի-խանի դեմ։ Հերակլ թագավորը նույնպես թշնամացած լինելով Շահվերդի-խանի հետ, օգուտ քաղեց այն հանգամանքից, որ Շիրվանի Հյուսեին խանը պատերազմ է գնացել Շահվերդի-խանի վրա և Իբրահիմ խանն էլ մյուս կողմից հարձակվել է Գանձակի վրա, ուստի Մելիք—Հովսեփին զազախեցի զորքեր և յուր պատվավոր ծառաներից մինին՝ Իվանին տալով, ուղարկեց նրա վրա։ Այս միջոցին Գանձակի և Ղազախու միջև բնակված Շամշադին կոչված թուրք ցեղը, որ ենթարկվում էր Գանձակի խանին, նրանից ապստամբում և մանում է Հերակլի իշխանության տակ։ Այսպիսի նեղ հանգամանքում Շահվերդի-խանը դիմում է ճարեցի

[10] Բաֆֆի, Խամսայի մելիքությունները, II տպ., եր. 80։

լեզգիներին և մեծ խոստումներով նրանց օգնության կանչում։ Դիմում է նաև շրջակա խաներին, բայց միայն Երևանի խանը մի փոքրիկ գունդ է ուղարկում։ Կշռելով, որ յուր ուժերը շատ փոքր են այս երեք թշնամիների հետ կռվելու համար, Շահվերդի խանը հաշտություն է կնքում Հյուսեին և Իբրահիմ խանների հետ և նրանց հետ զորձնում։ Այս միջոցին Հովսեփը դեռևս Շամշադինումն էր, ուր դիմեցին բյուլանեցի Զբաղ և Ալթա փախստականները և պատմեցին, թե Շահվերդի խանը չկարողանալով վարձատրել յուր հրավիրած լեզգիներին, նրանց ուղարկել էր Երևանի կողմերը թալանելու։ Գեղամա ծովի ափին սրանք հանդիպում են բյուլանցիներին, որ Երևանի խանից ապստամբելով գնում էին Տուզախ՝ Փանահ-խանի որդու իշխանության տակ մտնելու։ Այստեղ սրանց մեջ կռիվ է տեղի ունեցել, և լեզգիները թալանել են և գերել շատերին, որանց մեջ և 20 հայ ընտանիք։ Արդ խնդրում էին, որ Մելիք-Հովսեփը օգնության հասնի և ազատի գերիներին։ Մելիք-Հովսեփը հարգում է նրանց խնդիրը և Իվանի ու Շամշադի Ալիահվերդի սուլթանի հետ ընկնում է լեզգիների հետից և Գետաբեկ գյուղի մոտ մի ջարդ տալով նրանց, բոլոր գերիներին ու ավարը առ է խլում։ Լեզգիները հաղթված և բոլոր ավարից զրկված փախչում են իրենց երկիրը։ Այս լսելով Շահվերդի-խանը մարդիկ է ուղարկում փախստականների հետևից և հորդորում է յուր մոտ դառնալ, որպեսզի ինքը կարողանա նրանց շահել։ Նրանք չեն համաձայնում հետ դառնալ, այլ կրծքերը ծեծելով պատասխանում են, թե Շահվերդի-խանն եղավ իրենց թշվառության պատճառը և թե իրենք մի օր վրեժը կհանեն։ Իսկ վիրավորվածներից ու փախստականներից մի քանիսը վերադառնում են Շահվերդի-խանի մոտ, որոնց նա ուտեստ, հանդերձ, ձի է տալիս և բժիշկ նշանակում բժշկելու։

Երբ նրանք ճանապարհ են ընկնում, գանձակեցիները ընկնում են նրանց հետևից և կողոպտում նրանց, որովհետև իրենք շատ անգամ կողոպտվել էին նրանցից։ Սակայն Շահվերդի-խանը մարդիկ է ուղարկում, որ սաստիկ ծեծելով հետ են բերում այդ գանձակեցիներին, և Շահվերդի-խանը նրանցից շատերի քիթն ու ականջները կտրատել է տալիս։ Այս վարմունքի համար գանձակեցիները սկսում են սաստիկ տանել Շահվերդի-խանին։ Մի քանի օրից հետո Շահվերդի-խանը կանչում է Գանձակի մեծամեծներին և նրանց ասում է թե՝ ինձ դրամ տվեք, որովհետև լեզգիներին վարձատրություն խոստացա և չտվի, որով նրանց թշնամացրի ինձ հետ. այժմ պետք է տամ։ Մեկ էլ ուզում եմ որդուս ամուսնացնել և դրամ չունիմ։ Քաղաքի մեծամեծները առանց որոշ

պատասխան տալու դուրս են գալիս նրա մոտից և իրենց մեջ խորհուրդ անելով տալիս են նրա պահանջած գումարը։ Սակայն մի երկու օրից մի երկու բոլորը հավաքվելով հարձակվում են Շահվերդի-խանի տան վրա, բոլորին կոտորելու նպատակով։ Այս դավադրության մասին Շահվերդի-խանը միայն մի ժամ առաջ լսելով, առնում է յուր որդուն և մերկ ու բոբիկ փախչում է Շամքոր, Մելիք-Ադամի մոտ, որ իրեն բարեկամ էր։ Խանի մյուս որդին և կինը, որոնք սարը ամառանոց են գնացած լինում, այս բոթը լսելով փախչում, ապավինում են Երևանի խանի մոտ։

Գանձակեցիները անմիջապես հրավիրում են Փանահ-խանի որդի Իբրահիմ-խանին, որը սիրով հանձն է առնում և գալիս է Գանձակ։ Շահվերդի-խանը Մելիք-Ադամի ձեռնտվությամբ նամակ է գրում շամշադինցիներին, որոնք իրենից ապստամբել էին և աղերսում է նրանց՝ իրեն օգնության հասնել։ Սրանք հարգում են նրա խնդիրը և շուտով գնում են նրա մոտ։ Գիմում է նաև Հերակլ թագավորին ու Շիրվանի Հյուսեին-խանին և օգնություն հայցում։ Նույն խնդիրը անում է և ուրիշ ճարեցի լեզգիներին, խոստանալով յուրաքանչյուր անձին 5 թուման։ Եվ առանց սպասելու սրանց օգնությանը, շամշադինցիներին և Մելիք-Ադամի հետ հարձակվում է Գանձակի վրա և սկսում պատերազմել Իբրահիմ-խանի հետ։ Այս ժամանակ Մելիք-Հովսեփը Հերակլ թագավորի կարգադրությամբ վրաց զորքով գալիս է Շահվերդի-խանին օգնության։ Այս լսելով Իբրահիմ-խանը թալանում է Շահվերդի-խանի պալատն ու կայքը և յուր հետ տանելով խանի մի կնոջը, որ մնացել էր Գանձակում, վերադառնում է Շուշի։ Նրա հետ գնում են իրենց ընտանիքներով և այն գանձակեցիք, որոնք այդ դավադրությունը սարքելով հրավիրել էին Իբրահիմ-խանին։

Շուտով հասնում են և ճարեցի լեզգիներն ու Շիրվանի Հյուսեին խանը։ Լեզգիները բռնում են Շահվերդի-խանին և խստիվ պահանջում են, որ վճարի իրենց թե տուրին և թե այս անգամ խոստացած վարձատրությունը։ Շահվերդի-խանը անճարացած փախչում է Հյուսեին-խանի վրանը, և սա սկսում է համոզել լեզգիների գլխավորներին, որ այդպես պահանջող չլինին, սակայն նրանք ոչ մի ուշադրություն չեն դարձնում և պահանջում են թույլ տալ ավարել կամ Շամշադինը և կամ Քիլիսաքենդը։ Հյուսեին-խանը անճարացած փախցնում է Շահվերդի-խանին վրաց բանակը, Մելիք-Հովսեփի մոտ, և սա խիստ կերպով սկսում է խոսել լեզգիների հետ։ Այս պատճառով նրանք գալիս բանակում են Քիլիսաքենդի հանդեպ, մտադրություն ունենալով այն ավարել։ Այս միջոցին Շահվերդի-խանը մի փոքր գումար է գտնում և տալիս է լեզգիներին և միջնորդներով ու աղաչանքով գոհացնում նրանց և նա դարձնում։ Մելիք-Հովսեփը վրաց զորքով Շահվերդի-խանին մտցնում է Գանձակի բերդը և այստեղ բավական միջոց մնում է կարգը վերականգնելու և ապա վերադառնում է Հերակլ թագավորի մոտ։

Այս հաղթությունների պատճառով Հերակլ թագավորը Գետաշեն գյուղը նվիրում է Մելիք-Հովսեփին, ուր նա յուր մարդկանցով պիտի ապրեր առանց կախում ունենալու Շահվերդի-խանից։

Այս պատճառով Շահվերդի-խանը ավելի ևս ոխակալում է Մելիք-Հովսեփի հետ և մի առիթ է փնտրում նրան վնասելու։ Մի օր նրա երեց որդին՝ Մահմեդ-Հասան-խանը հոր հրամանով առնում է զորքը և հայտարարելով, թե գնում է Կուր գետի կողմը, ուր, իբր, լեզգիներ են երևացել, կես գիշերին փոխում է ճանապարհը և հանկարծ ընկնում Մելիք-Հովսեփի վրա Գետաշեն գյուղում և սկսում կոտորել նրա բանակը։ Իսկույն Մելիք-Հովսեփի որդի քաջ և արի Բեկլարը վեր է թռչում և սուրն առած միաչեակ դուրս է վազում և ընկնում Հասան-խանի զորքի վրա. հայերը և ծառաներն էլ օգնության են հասնում և կոտորելով դուրս են քշում հարձակվողներին, ապա իր բոլոր զորքն առած Մելիք-Հովսեփը դուրս է գալիս խանի զորքերի դեմ և մեծ կոտորած տալով փախցնում։ Իսկ նրանց զորքերի մեջ եղած հայերին խնայում են և ձայն տալիս, որ հեռանան անօրիններից։ Մահմեդ-Հասան-խանը մեծ ամոթ համարելով հաղթված ետ դառնալը, սրով ետ է դարձնում փախչողներին, իսկ ով չէր ետ դառնում կռվելու, նրան ինքն էր սպանում։

Այսպիսով պատերազմը կրկին սաստկանում է, և Մելիք-Հովսեփը կոտորելով առաջ է անցնում մինչև Գանձակի բերդի դուռը, որը պաշարած պահում է մի քանի օր շարունակ։

Այս միջոցին Շահվերդի-խանը դիմում է Հերակլ թագավորին և խնդրում հեռացնել Մելիք-Հովսեփին, սա էլ գրում է մելիքին, որ թողնի պաշարումը և քաշվի յուր հայրենի Իգիրմիզորդ գավառը, որպեսզի այդպիսի կռիվներ այլևս չպատահեն։ Իբրահիմ-խանն էլ հաշտվում է նրա հետ և հրավիրում է նրան վերադառնալ յուր երկիրը, Իգիրմիզորդ, նրդվելով, որ այլևս արշավանքներ չի գործի նրա երկրի վրա։

Մելիք-Հովսեփը գնում է Իգիրմիզորդ և այստեղից հաճախ հարձակումներ է գործում Գանձակի երկրի վրա և մեծ վնասներ է պատճառում[1]։

---

[1] Գետաշենում Մելիք-Հովսեփի շինած ձիթհանքն ու լրաղացը վերջին տարիներս Մելիք-Բեկլարյան ժառանգները ծախեցին Մելիք-Մնացականյաններին։

Մելիք-Ադամն էլ Մելիք-Հովսեփին հետևելով հաշտվում է Իբրահիմ-խանի հետ և վերադառնում է յուր երկիրը՝ Ջրաբերդ։

Այսքան պատերազմներ վարելուց հետո Մելիք-Հովսեփը մեռնում է 1775 թ. և թաղվում է Հոռեկի վանքի մոտ։

Մելիք-Հովսեփը երկու որդի ուներ՝ Բեկլար և Աքով։ Նրա մահից հետո նրան հաջորդում է Բեկլարը, որ սակայն երկար՝ չի իշխում։ Մելիք-Բեկլարը հաղթանդամ, բարձրահասակ, քաջ և արի մարդ էր։ Նա կարդալ էլ գիտեր, որ այն ժամանակ մելիքների մեջ հազվադյուտ երևույթ էր։ Քերականությունը նրան ուղարկել էր Սիմեոն կաթողիկոսը[12]։

Նա մասնակից էր լինում յուր հոր պատերազմներին և դեռ նրա կենդանության ժամանակ ինքնագլուխ գործում էր և կառավարում։ Բայց դժբախտաբար նրա կառավարությունը երկար չտևեց՝ նա ընկավ լեզգիների դեմ պատերազմ մղելիս Գյորան գյուղի մոտ։

Այդ անպարտելի քաջի անակնկալ մահը ժողովուրդն այսպես է բացատրում.

Մինչդեռ քաջ Մելիք-Բեկլարը նստած յուր սեաթույր ձին, հրաման էր ուղարկում, որ Բորսունլուում բանակած յուր հինգ հարյուր զինվորները շտապեն յուր նետից հասնելու, որպեսզի ջախջախեն լեզգիների առաջնորդ Բահարշինի գլուխը՝ նրա մայրը՝ խաղաղասեր Հերիքնազը դուրս է գալիս առաջը և ազերսում է, որ չկնա պատերազմ, որովհետև ինքը գիշերը վատ երազներ է տեսել և այժմ էլ սաստիկ սիրտ է։ Որդին չի լսում մորը, և երբ սա ձիու սանձից բռնած ուզում է բռնի արգելել, մելիքը հրում է նրան, վայր ձգում և ինքն առաջ անցնում։ Որդու այս անօրինակ կոպտությունից հուզված մայրը անիծում է նրան թե՝ հետ չդառնաս։

Մելիք-Բեկլարը գնում է առաջ յուր սպասավորների ուղեկցությամբ։ Երբ հասնում է Սաֆի-քյուրդ կյուղի սարոտը, մելիքն իջնում է ձիուց և հրամայում է սպասել, որ զորքը դա։ Նստած մի ժայռի վրա, նա տխուր մտածում է, և երբ հեռվից բարձրանում է զորքի ձիերի փոշին, հրամայում է յուր մարդկանց մի քիչ հաց ուտել, որ նրանց գալիս անմիջապես ճանապարհ ընկնեն։ Ինքն էլ մի օղի է խմում և մի կտոր գաթա գնում բերանը, բայց սա կուլ չի գնում։ Ծամում է, վայր թափում և տխուր նախազգացությամբ նստելով ձին, առաջ է գնում կովի գաշտը։ Այստեղ մոր անեծքը կատարվում է, և նա ընկնում է հրացանի գնդակից...

[12] «Գիվան հայոց պատմ.», հ. Գ, Թիֆլիս, 1894, էջ. 535։

Բայց իսկապես Մելիք-Բեկլարի կյանքի մեջ հետևյալ սիրային վեպն է տեղի ունենում։

Մելիք-Բեկլար Բ-ն ամուսնացած էր Մելիք-Շահնազար Բ-ի դուստր Ամարանի (Մարիամի) հետ, բայց չնայելով դրան, նա պահում էր մի սիրուհի Բալա անունով։ Սրա համար նա խարխափուտի ձորում մի գեղեցիկ այգի էր տնկել և ամառանոց կառուցել։ Այս շինության հետքերը մինչև այժմ էլ կան, և մրգատու ծառերը խառնվելով վայրի ծառերի հետ բռնել են ամբողջ ձորը, որի միջից կարկաչելով հոսում է մի վտակ։

Երբ մելիքի օրինավոր կինը լսում է ամուսնու դավաճանության մասին, սաստիկ հուզված, տանում է օրորոցը, որի մեջ քնած է լինում փոքրիկ Ֆրիդոնը և գնելով սկեսրոջ առաջը ասում է. «Քանի որ քո տղան մի ապախնի է սիրում, Մելիք-Շահնազարի աղջիկը այլևս գործ չունի, վերցրու թողա»։ Տիկին Հերիքնազը աշխատում է խաղաղեցնել նրան, խոստանալով ուղիղ Ճանապարհի բերել որդուն։ Սակայն ինքը՝ Մարիամը, որ յուր հոր նման միջոցների մեջ խորություն դնել չգիտեր, վճռում է ինքը դրա առաջն առնել, ուստի և կաշառում է իրենց Հալա Ծատային, որ սպանե Մելիքի սիրուհուն։ Որոշում են այն գիշերը, որի հաջորդ առավոտը մելիքը պատրաստվում էր պատերազմի ելնելու։ Հալան մտնում է Բալայի սենյակը և քնած միջոցին նրան խեղդում է հենց նրա երկար մազերով և ապա տանում մի հորի մեջ ձգում։ Առավոտյան, երբ մելիքը ձի նստած շտապում էր գնալու, տարածվում է Բալայի սպանման լուրը։

«Երբ կվերադառնամ, ես կգանեմ սպանողներին»—ասում է նա և գնում։

Հալան սարսափում է այս խոսքերից։ Նա գիտեր, որ մելիքը կարող է իմանալ, թե ով է սպանել և այն ժամանակ ոչ միայն յուր գլուխը, այլև յուր ամբողջ ընտանիքը դժոխք կգնա նրա վրեժխնդրության։ Ուստի և ոտիրից ոտիրի անցնելով, պատերազմի խանդուրզի ժամանակ հրացանի մի գնդակով վայր է գլորում քաջին և ինքն առաջինը վրա վազելով՝ գրկում է դիակը և յափնջու մեջ փաթաթած գնում ձիու վրա ու բերում տուն...

Մելիք-Բեկլարը որդի չունենալով, մելիքությունը անցնում է նրա եղբորը՝ Մելիք-Աբովին։ Սա մի քաջ, պատերազմասեր, հանդուգն, նախաձեռնող և անխոնջ անձնավորություն էր[13]։

[13] Коваленский П., Записка о Грузии, «Кавказский календарь», 1864; Տե՛ս նաև՝ Акты Кав. Арх. Ком. т. I, № 34.

Այս ժամանակ ռուսաց ազդեցությունը Կովկասում առավել ևս զորեղացել էր, և Կատարինե կայսրուհին մտածում էր տիրել ամբողջ Տաճկաստանին և Կոստանդնուպոլիսը դարձնել բրիստոնեական պետության մայրաքաղաք, ինչպես և Անդրկովկասում վերականգնել երկու քրիստոնեական տերություններ՝ Հայոց և Վրաց, որ մեկայն Ռուսաստանից կախում ունենային։ Այս մտքի իրականացումը հանձնված էր իշխան Պ. Պոտյոմկինին, որ ցանկանալով կրել Հայոց թագավորության թագը, որտով կպած էր գործին և իշխան Հովսեփ արքեպիսկոպոս Արզությանի միջոցով անձանձրույթ գործում էր։ Եվ որպեսզի հրապուրե մյուս գավառներին ևս ռուսաց հովանավորությունը խնդրելու, իշխան Պոտյոմկինը մեծամեծ շնորհներ էր արել վրաց Հերակլ թագավորին, որ 1784 թ. երդվել էր հավատարիմ լինել ռուսաց գահին։

Այս միջոցին դեներալ Պ. Ս. Պոտյոմկինը գրում է Մելիք-Հովսեփին, թե ինքը հրամայել է ռուսաց զորքին՝ Բուրնաշևի հրամանատարությամբ գնալ Վրաստան. արդ թող ինքը պատրաստվի յուր հպատակներով գուրս գալ Ղարաբաղից։ Եվ որովհետև Մելիք-Հովսեփը կենդանի չէր, այդ պատճառով այս նամակը ստանում է Մելիք-Ֆրիդոնը։

Նույնպիսի նամակներ ստանում են և Մելիք-Ադամ Իսրայելյանը, Մելիք Դանիել Մելիք-Բեկյանը, որոնք Աբովի հետ ժողովի են հավաքվում Գանձասարի վանքը և Հովհաննես կաթողիկոսի հետ միասին, 1781 թ. դեկտեմբերին խնդրողական նամակներ են ուղարկում կայսրուհուն, Պավել Պոտյոմկինին և Հովսեփ արքեպիսկոպոսին, որոնց պատասխանն էլ ստանում են 1782 թ. հունիսին։ Այս միջոցին հիշյալ Մելիք-Ադամ Իսրայելյանը մեռնում է։ Հովհաննես կաթողիկոսը, Մեժլում Ադամյանը, Աբով Հովսեփյանը, Մելիքբեկյանը կրկին նամակներ են ուղարկում կայսրուհուն իրենց Դանիել և Գարրիել մարդկանց ձեռքով, որոնց պատասխանն էլ յոլ ժամանակին ստանում են։ Այս բանն իմանալով Իբրահիմ խանը՝ 1784 թ. նոյեմբերի 5-ին հրավիրում է յուր մոտ Հովհաննես կաթողիկոսին և հիշյալ մելիքներին ու յուզբաշիներին, կեղծելով, իբր թե ոչինչ չգիտե։ Երբ հրավիրվածները գալիս են, սպանել է տալիս Հովհաննես կաթողիկոսին, իսկ սրա եղբայր Սարգիս եպիսկոպոսին, մյուս երեք եղբայրներին և Մելիք-Մեժլումին բանտարկում է Շուշու բերդում և 9 ամիս և 6 օր այնտեղ պահում։

Միևնույն ժամանակ հրամայում է թալանել Գանձասարի վանքը։

Մելիք-Աբովն էլ ուղևորվել է դեպի Շուշի, սակայն Ասկյարանի մոտ լսում է Թուրքերից, որ խանը բանտարկել է Մելիք-Մեժլումին, ուստի անմիջապես ետ է դառնում և Ֆրիդոնի և յուր ընտանիքի հետ

փախչում Թիֆլիս, Հերակլ թագավորի մոտ, ուր և գալիս է Մելիք-Մեժլումը, փախչելով բանտից։

Վերջապես 1787 թ. ռուսները օգնության են հասնում և Բուրնաշով զորապետը ռուսաց զորքով և Հերակլ թագավորը յուր 5000 զորքով գնում են Իբրահիմ-խանի վրա։ Սրանց հետ են լինում Մելիք-Աբովը, Մելիք-Ֆրիդոնը և Մելիք-Մեժլումը։ Սրանք բոլորը իշխ. Օրբելյանի հրամանատարության տակ գալիս են մինչև Գանձակ, բայց այստեղ հանկարծ գեներալ Բուրնաշևը հրաման է ստանում անմիջապես վերադառնալ Ռուսաստան, որովհետև ծագել էր երկրորդ ռուս-պարսկական պատերազմը։ Հերակլը ռուսաց զորքերի հետ ետ է դառնում, նրանց հետ են գնում և մելիքները, սակայն ճանապարհին Մելիք-Ֆրիդոնը ընկնում է Իբրահիմ-խանի մարդկանց ձեռքը, որոնք սաստիկ տանջում են նրան, մինչև որ նրա մորեղբայր Ջումշուդը 10 000 ռուբլի փրկանք տալով ազատում է նրան[14]։

Իբրահիմ-խանը այսպես անակնկալ կերպով ազատվելով ռուսներից, ավելի ևս բռնանում է. թալանում, ավերում է Իգիրմիդորդն ու Ջրարերդը, առաջինի վրա մելիք է նշանակում Իսրայելին, իսկ երկրորդի վրա՝ Գյուլ-յաթաղ գյուղի Ռուստամ-բեկին։ Մելիք-Մեժլումի մորն ու Մելիք-Աբովի ընտանիքից մի քանի հոգի բռնում և տանում է Շուշի։ Այս հալածանքների ժամանակ այս երկու գավառներից մոտ 500 տուն փախչում են և գալիս վերաբնակում Շամքորում, Գանձակի մոտ։

Մելիք-Աբովն ու Մելիք-Մեժլումը Թիֆլիսից Հովսեփ արքեպիսկոպոսի միջոցով նորից դիմում են անում կայսրուհուն, խնդրելով իսկապես օգնել իրենց գոնե մի փոքրաթիվ զորքով, որովհետև իրենք կարող են նրանց ահարկու անունով ոչնչացնել պարսից զորությունը և ջնջել նրանց խանությունը։ Իսկ եթե օգնություն չպիտի լինի՝ թույլ տան իրենց գաղթելու Կասպից ծովի ափերի մոտ, Դերբենդի շրջակայքը, ուր իրենց տրվելիք երկրները իրենց սեփականություն համարվեն, և իրենք՝ մելիքներն ու նրանց ժառանգները լիակատար իշխանություն ունենան իրենց հպատակներին տիրելու։

Հովսեփ արքեպիսկոպոսը այս երկու մելիքների խնդիրը իշխան Պ. Պոտյոմկինի միջոցով ներկայացնելով Կատարինե կայսրուհուն, ի միջի այլոց ասում է[15]. Մելիքները պահանջում են, որ բարեհաճեն հաստա-

---

[14] Акты, т. 1, եր. 871։

[15] Բաֆֆի, Խամսայի մելիքություններ, II տպ., եր. 114։

տելու իրենց վաղեմի արտոնությունները, որ ամենահին ժամանակներից վայելում էին իրենք, և որ մինչև անգամ իրենց թշնամիները չեն կամեցել խափանել, այսինքն, որ նրանք իրավունք ունենան տիրելու իրենց հպատակների վրա և նրանց հաջորդները նույնպես իրավունք ունենան ժառանգելու նույն իշխանությունը, նույնպես և այն երկրները, որ կտրվեն իրենց՝ բնակության համար, կարողանան սեփականացնել միևնույն իրավունքով։

Այս խնդիրների պատասխանը հայտնի չէ։ Ռուսները զբաղված լինելով տաճկական պատերազմով, չկարողացան օգնության հասնել հայ մելիքներին, որոնք անհամբեր սպասում էին դրան։ Վերջը տեսնելով, որ ռուսաց օգնությունն ուշանում է, նրանք սկսեցին համոզել Հերակլին, որ հայ-վրացական զորքով հարձակվեն Իբրահիմ-խանի վրա, սակայն Հերակլը ոչ միայն չհետևեց այս առաջարկին, այլև համաձայնեց հանձնել նրանց Իբրահիմ-խանին այն պայմանով, որ սա էլ նա դարձնե այն երկու հարյուր թուրքերը, որոնք առաջ վրաց հպատակության տակ էին և Բորչալուից փախել եկել էին Ղարաբաղ և Ասկերանի շրջակայքում բնակություն հաստատել։

Յուր այս տմարդի վարմունքը հեշտությամբ կատարելու համար Հերակլը հրավիրում է մելիքներին Թիֆլիսի Օրթաճալա կոչված այգիներում հացկերույթի, որպեսզի հարբեցնել և այդ դրության մեջ հեշտությամբ բռնելով ուղարկե Իբրահիմ-խանին։ Բարեբախտաբար հայ մելիքները Հերակլի հայ քարտուղարի միջոցով իմանում են նրա այդ մտադրությունը, ուստի և առարկելով թե մինչև ճաշը կամենում են որս անել մի քիչ, հեծնում են ձիերը և փախչում դեպի Գանձակ։

Ճանապարհին Մելիք-Մեժլումը վրացի սայլապանների միջոցով լուր է ուղարկում Հերակլին, թե չի մոռանա նրա հյուրասիրությունը։

Գանձակում Ջավադ-խանը սիրով ընդունում է նրանց, տեղ և միջոց տալիս ապրելու։

Իբրահիմ-խանը Հովհաննես կաթողիկոսին սպանելուց հետո Գանձասարի կաթողիկոսությունը տվել էր յուր հլու հպատակ Իսրայել կաթողիկոսին, որ Երիցմանկանց վանքի կաթողիկոս էր համարվում, թեև նստում էր Գանձակ, իսկ Երիցմանկանց վանքի կաթողիկոսությունը անցել էր այդ ժամանակ Փոքր Սիմոն անունով մեկին, որ նույնպես Իբրահիմ-խանի հլու հպատակն էր։ Այս պատճառով մելիքները ցանկանում են ունենալ իրենց կաթողիկոսը, ուստի մեծ դժվարությամբ Հովհաննես կաթողիկոսի եղբայր Սարգիս եպիսկոպոսին Գանձասարից փախցնում

են Գանձակ և այստեղ 1724 թ. Աղվանից կաթողիկոս օծել տալիս։ Այսպիսով Աղվանից փոքրիկ երկրում միաժամանակ երևացին երեք կաթողիկոսներ, որոնք միմյանց դեմ կռվելով, զբաղեցրին ժողովրդին և վնասեցին ընդհանուր գործին։

Մելիք-Աբովն ու Մելիք-Մեժլումը տպրելով Գանձակում Ջավադ-խանի մոտ, հետզհետե միմյանց հետ թշնամացան։ Մի անգամ երբ երկուսն էլ Ջավադ-խանի մոտ ճաշի էին հրավիրված, միմյանց հետ սաստիկ կռվեցան այն պատճառով, որ Մելիք-Մեժլումը պասը ուտում էր։ Եվ երբ պարսից Աղա-Մահմադ խանը 1795 թ. պաշարեց Շուշի բերդը, Մելիք-Աբովը միանալով Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարյանի և Իբրահիմ-խանի հետ, սկսեցին պաշտպանել Շուշու բերդը, իսկ Մելիք-Մեժլումը Ջավադ-խանի հետ անցավ Աղա-Մահմադ-խանի կողմը և նրան համոզեց միաժամանակ թողնել Շուշու բերդի պաշարումը և գնալ ավերել Թիֆլիսը։ Աղա-Մահմադ-խանը հետևեց Մելիք-Մեժլումի խորհրդին։ 1795 թ. սեպտեմբերի 12-ին առնվեցավ Թիֆլիսը և թալանվեց, որով և լուծվեց Մելիք-Մեժլումի դեպի Հերակլը պահած ոխը, նրա ցույց տված անհյուրասիրության համար։

Մելիք-Աբովը Աղա-Մահմադ-խանի Պարսկաստան վերադառնալուց հետո կրկին վերադարձավ Գանձակ, Ջավադ-խանի մոտ։ Եվ երբ 1796 թ. ռուսները Զուբովի հրամանատարությամբ և հայոց Հովսեփ արքեպիսկոպոսի առաջնորդությամբ առանց պատերազմի առան Դերբենդը, Ղուբան և Շամախին ու հետևյալ տարին մոտեցան Գանձակին, Մելիք-Աբովը համոզեց Ջավադ-խանին, որ առանց պատերազմի անձնատուր լինի ռուսներին։ Իբրահիմ-խանն էլ տեսնելով, որ բոլոր խանները ընդունեցին ռուսաց հպատակությունը, որովհետև նրանց կողմն էր հայ տարրը՝ երկրի գլխավոր ուժը, ինքն էլ խոնարհվեց ռուսաց գահի առաջ։ Բայց երբ (1796 թ. հունիսի 6) Կատարինե կայսրուհու մահվան պատճառով Զուբովը հանկարծ ետ կանչվեց, այս բոլոր իանությունները նորից գլուխ բարձրացրին և սկսեցին ավելի բարբարոսաբար նեղել հայերին, որոնք ռուսների կողմնակից լինելով, ստիպել էին խաներին՝ հպատակություն ընդունելու։

Դեռ այս բավական չէ՝ այս պատերազմների պատճառով հայերը չկարողացան երկիրը մշակել, ուստի և շուտով սաստիկ սով ընկավ, որին և հետևեց սարսափելի ժանտախտը։ Աղա-Մահմադ-խանն էլ կրկին դիմեց Շուշի և առավ այն, ասպատակ սփռելով ամբողջ Ղարաբաղ։ Սովից, ժանտախտից և պարսից բռնակալությունից տագնապած թշվառ հայ ժողովուրդը սկսեց գաղթել, բայց ո՞ւր՝ ամեն կողմ, ուր մի

աղոտ հույս ձգում էր նրան. Վրաստան, Ռուսաստան, Պարսկաստան։

Մելիք-Աբովը դիմեց Վրաստան, նրա ժողովուրդը հետևեց նրան, սոսկալի նեղություններ կրելով ճանապարհին։ Ավանդությունն ասում է, թե էրքեճցի մի գերդաստան ճանապարհին այն աստիճան նեղվում է սովից, որ կինը ստիպում է ամուսնուն գնալ անտառից փայտ բերել և խորովել իրենց որդիներից մեկին։ Երբ հայրը ազի «արտասուքներով ուղևորվում է անտառ՝ տեսնում է մի եղջերու, որի եղջյուրները ծառի ճյուղերի մեջ բռնված լինելով, չի կարողանում փախչել։ Այս եղջերուն փրկում է խեղճ երեխայի կյանքը։ Վերջապես հասնում են Վրաստան։ Սարկությունը, որ այդ ժամանակ տիրում էր Վրաստանում, բոլորովին խորթ էր հայերին։ Սրանք ցանկանում էին այս երկրի մեջ ևս ունենալ մի անկյուն, ուր կարողանային ապրել իրենց վաղեմի օրենքներով։ Բայց վրաց վարմունքը այնքան հուսահատեցուցիչ էր, որ մելիքները վճռեցին ռուսաց կայսեր դիմել, և ահա, 1799 թ. Մելիք Ֆրիդոն Մելիք-Բեկլարյանը և Մելիք-Ջումշուտ Մելիք-Շահնազարյանը[16] անձամբ գնացին Պետերբուրգ։

Այստեղ մելիքները խնդիր մատուցին Պավել կայսեր, որի մեջ ի միջի այլոց ասում էին. «Երբ իշխան Պոտյոմկինը և նույն անուն մյուս գեներալը, բարձրագույն բարեհաճությամբ, գրավոր կերպով կանչեցին մեզ բարբարոսների լծից ազատվելու, մենք, հանդիսավոր կերպով և եռանդով ամբողջ աշխարհի առաջ արտահայտեցինք թե ենթարկում ենք ամենքիս և ամեն ինչ, գործով իսկ պատրաստ ենք միացնելու մեզ և մեր ընտանիքները ձեր համայն Ռուսիո կայսրության.... բայց անբարեբաստիկ բախտով, որ անհագ է յուր հալածման մեջ, և մեր դրժբախտությունից այս բոլոր մեր սպասած բարիքները մեզ համար դարձան չարիք և լիկատարյալ կորուստ։ Մեծ կայսր, փրկիր անօգնականներիս, աղաչիր մեզ, որ դեպի Ռուսաց գահն ունեցած մեր անձնվիրության պատճառով կորչում ենք. արդարացրու Քո օգոստափառ անվան վրա գրած մեր հույսը. մի մերժիր այս աղերսը»։

Մելիքները խնդրում էին հետևյալ երեք միջոցներից մեկը. ա) ընդունել կայսերական հովանավորության և իշխանության տակ և Ղա-

[16] Մելիք-Ջումշուդը Մելիք-Շահնազար Բ-ի ավագ որդին էր, որ օրենքով պիտի ստանար մելիքությունը։ Սակայն Իբրահիմ-խանը զրկեց նրան իրավունքից և մելիք նշանակեց մյուս եղբորը՝ Հուսեինին, որ Իբրահիմ-խանի կնոջ՝ Հուրի-Ջան խանումի հարազատ եղբայրն էր։ Մելիք-Ջումշուդը, ինչպես հետո կտեսնենք, այս բանից ոխակալելով, սկսեց ընդդեմ գնալ Իբրահիմ-խանին։

բաբաղը. բ) զորք ուղարկել, որի օգնությամբ կարելի կլիներ գաղթեցնել մելիքների հպատակ հայերին և մահմեդականներին և նրանց բնակության տեղ տալ Մաշարից մինչև Եկատերինոդար ընկած երկիրը և նրա շրջակայքը կամ գ) Հրամայել վրաց թագավորին, որ նրանց բնակության համար տա յուր իշխանության տակ գտնված դատարկ երկիրը, որ այժմ Ղազախ է կոչվում և տարածվում է մինչև Լոռի գավառը, ուր և առաջները կային հայկական գյուղեր, որոնք պարսից զանազան ավերածություններից դատարկվել են։ Եվ եթե այս երեք խնդիրներից ոչ մեկը չի հարգվի, այն ժամանակ «հայրենիքից, հպատակներից, իշխանությունից և բոլոր կալվածքներից զրկված» խնդրատուները իրենց անտանելի կյանքի վիճակը հանձնում են Նորին Մեծության բարեհաճության»[17]։

Կայսրը հարմար գտավ երրորդ միջոցը և 1799 թ. հունիսի 2-ի հրովարտակով բարեհաճեց առաջադրել վրաց թագավորին՝ Ղազախի երկիրը հանձնել մելիքներին։ Հրովարտակի մեջ ասվում էր, ի միջի այլոց. «Թողնել բոլոր այն իրավունքները և արտոնությունները նրանց (մելիքների) հպատակ հայերի վրա, որ նրանք ունեին իրենց նախկին հայրենիքում, չզրկելով երբեք նրանց պատկանած այս իշխանությունից. քանի որ հավատարիմ կմնան, իսկ այն դեպքում, երբ նրանցից մինը, որ կարելի չէ սպասել, ընդհանուրի բարեկեցության շահերին ընդդեմ կերթա... վարվել ինչպես որ մենք կհրամայենք»[18]։ Սրանից անկախ, Վրաստանում մինիստր Ս. Ս. Կովալենսկուն 1799 թ. ապրիլի 16-ին տրված հրահանգի 10 կետում բացատրված էր, թե կայսրը ցանկանում է, որ այս նոր քրիստոնյա հասարակությունը Վրաստանում որքան կարելի էր ծաղկեր. «Նույնիսկ այդ երկրի սեփական օգուտների համար դուք պետք է աշխատիք, որ թագավորը այդ հողերը զիջեր մելիքներին ամենաձեռնտու պայմաններով և որովհետև մի այդպիսի հասարակություն չի կարող հաստատվել և զարգանալ, եթե նրան ի վաղուց հետե հատուկ սովորությունները և կառավարությունը պաշտպանած չլինին, ուստի և ցանկալի էր, որ նրանք Վրաստանից միմիայն որպես վասալ կախումն ունենային», վճարելով թագավորին մի չափավոր հարկ և մասնակցելով երկրի պաշտպանության[19]։

[17] Акты Кавк. Арх. ком., т. I, № 872, հիշված Эзов Г., Сношения Петра Великого с арм. народом, стр. CXIII.

[18] Անդ, № № 875 և 876. հիշված Эзов-ի նշվ. գրքի մեջ։

[19] Акты Кав. Арх. ком., т. 1, № 1. 87. հիշ. Эзов-ի գրքի մեջ։

Միևնույն ժամանակ Մելիք-Ֆրիդոնին և Մելիք-Ջումշուդին տրվեցին շքանշաններ և թոշակներ,—Մելիք-Ֆրիդոնին՝ տարեկան 1000 ռուբլի, Մելիք-Ջումշուդին՝ 1400 ռ. և սրա որդի Մելիք-Պողոսին՝ 600 ռ.։

Վրաց թագավոր Գեորգի ԺԲ կայսեր հրովարտակի հիման վրա տրվեց մելիքներին հողեր, որոնք, ինչպես երևում է 1802 թ. մայիսի 8-ին կազմած Վրաստանը գավառների բաժանելու վավերաթղթից՝ հետևյալներն են. Մելիք-Ֆրիդոնին՝ Ուզունլյար, իսկ Մելիք-Աբովին՝ Բոլնիս[20]։ Իսկ Հաճի-կալեի (Աղճի-դալա) մոտ բնակված նոր գաղթականները պատկանում են Մելիք-Ջումշուդին և Մելիք-Ֆրիդոնին[21]։

Ստանալով այս գյուղերը, Մելիք-Աբովը և Մելիք-Ֆրիդոնը[22] վերադառնում են Իգդիրիդորդ և մեծ նեղություններով իրենց հպատակներին տեղափոխում են այս նոր տեղերը։ Ճանապարհին սրանք հալածվում են ոչ միայն Իբրահիմ-խանի մարդկանցից, լեզգիներից, այլև Գանձակի Ջավադ-խանից։ Բանավոր աղբյուրները ասում են, թե երբ Ջավադ-խանը լսում է, թե Աբովը ուզում է գաղթել, կամենում է թույլ չտալ, բայց Մելիք-Աբովը նրան հավատացնում է, թե ոչ թե Վրաստան է գնալու, այլ ուզում է Գանձակի մոտ, Շըխ կոչված տեղում գյուղ հիմնել և վերաբնակվել։

Ջավադ-խանը հավատում է, մանավանդ երբ Մելիք-Աբովը գյուղի հիմքը ձգում է, բայց հենց որ Ջավադ-խանը միամտած հեռանում է, Մելիք-Աբովը գիշերով անցնում է Գանձակի մոտից։

Նույն բանավոր աղբյուրներն ասում են, որ լեզգիներին երկյուղ պատճառելու համար սպանված լեզգիներից իրավիլակներ էին պատրաստում և տնկում Ճանապարհին։ Վերջապես 7000 հոգուց մոտ 4000 կորցնելով, Մելիք-Աբովը հասնում է Բոլնիս։

Այստեղ յուր նախնի մելիքական իրավունքներով և նախնի սովորություններով Մելիք-Աբովը կառավարում է յուր հպատակներին։ Այս իրավունքները չխլվեցին նրանից և այն ժամանակ, երբ 1801 թ. սեպտեմբերի 12-ին Վրաստանը միացվեց Ռուսաստանին, որովհետև Վրաստանի ներքին կառավարության կազմակերպության մասին նույն թվին կազմված կանոններում ասված է. «Ղարաբաղից գաղթած հայերը, որոնք կառավարվում են առանձին արտոնություններով, մնում են իրենց մելիքների իշխանության ներքո»[23]։

Մելիք-Աբովը հաճախակի հարձակումներ էր գործում Ախալցխայի վրա, որ այն ժամանակ օսմանցոց իշխանության տակ մի առանձին փաշայություն էր կազմում, այս հարձակումները դուցե շատ երկար տևեին, եթե 1801 թ. մայիսի 1-ին գեներալ մայոր Լազարևը չպուշացներ նրան, թե այդ քայլը ընդդեմ է Ռուսաց պետության և կարող է ծանր հետևանքներ ունենալ, քանի որ Ռուսաստանը խաղաղության դաշն է կապած օսմանյան պետության հետ[24]։

Մելիք-Աբովը թեև դադարեցնում է յուր հարձակումները[25], բայց շուտով մի նոր հանգամանք պատճառ է դառնում նրանց վերանորոգելու։ Ախալցխայի Շերիֆ փաշան ապստամբում է օսմանյան կառավարությունից, որովհետև նրա պաշտոնը հանձնվում է Ախալցխայի նախկին փաշա Սուլեյմանի որդուն։ Շերիֆ փաշան դիմում է Մելիք-Աբովին և օգնություն խնդրում, իսկ սա այդ մասին հայտնում է գեներալ մայոր Լազարևին և Գեորգի ԺԲ թագավորին, որոնք խորհուրդ են տալիս ոչ թե Շերիֆին օգնության, այլ ընդդեմ գնալու[26], և Մելիք-Աբովը լսում է նրանց խորհրդին, իսկ մի կարճ միջոցից հետո էրզրումի Սիրասկիր փաշան գրում է Կնորինգին, թե Մելիք-Աբովը եկավ Ախալցխայի (ապստամբ) փաշայի դեմ կռվելու, որի համար և շատ շնորհակալ եմ և այդ մասին հայտնել եմ սուլթանին։ Միևնույն ժամանակ խնդրում էր, որ թույլ տրվի Մելիք-Աբովին զորքերն ավելացնել[27]։ Մելիք-Աբովի օգնության դիմում է նաև թագաժառանգ Աղեքսանդրը, որ պարսից կողմը հակված՝ կամենում էր ապստամբեցնել վրացիներին ռուսաց դեմ։ Սակայն Մելիք-Աբովը հավատարիմ մնալով ռուսներին, չի կատարում նրա խնդիրը, որով և գրգռում է նրա թշնամությունը, միանգամայն ենթարկվելով ռուսների կողմից կասկածանքի, և երևի այս է եղել պատճառը, որ երբ Կովալենսկին Վրաստանում մինիստր

---

[20] Акты, т. 2, стр. 1149.

[21] Акты, т. 1, стр. 123.

[22] Պատմական անեկդոտներից մի երկուսը. Երբ Մելիք-Ջումշուդն ու Մելիք-Ֆրիդոնը գնացին Պետերբուրգ, պալատում նրանց հյուրասիրեցին թեյով։ Մելիք-Ջումշուդը գդալով խառնեց թեյը և ապա գդալը կոխեց յուր ականջի հետևը, փափախի մեջ, որ չխանգարի իրեն թեյ խմել։

Տեսնելով արքունիքում սեղան և աթոռ, որ այն ժամանակ բոլորովին չկային Կովկասում, Մելիք-Ֆրիդոնը հարցնում է մորեղբորից, Մելիք-Ջումշուդից, թե ինչի՞ համար են դրանք։ Սա բացատրում է, ցույց տալով սեղանը, թե նստելու համար է, իսկ մյուսը (աթոռը) ոտները վրան դնելու, որպեսզի հանդիստ նստի։

---

[23] Акты, т. I, № 550.

[24] Акты, т. I, стр. 637. 887.

[25] Акты, т. I, стр. 638.

[26] Акты, т. I, № 69.

[27] Акты, т. I, № 1031.

նշանակվելով եկել է Թիֆլիս, գալ է Մելիք-Աբովին 2—3 ամիս առաջ բանտարկված, որին և ինքը արձակել է տվել։

Այդ միջոցում Մելիք-Աբովը, Կովալենսկու ասելով, ունեցել է 400 ընտանիք յուր Իպիրմիդորդի գաղթականներից և 300 ընտանիք ուրիշ տեղերից եկած հպատակներ և կարող է մինչև 1000 զինվոր հանել[28]։

Մելիք-Աբովի օգնությանն է դիմում նաև վրաց թագուհի Դարիջանը, որ յուր ամուսնու՝ Գեորգի ԺԲ-ի մահից հետո աշխատում էր գահը հանձնել Աղեքսանդր որդուն, որի հետ և սկսում է բանակցել[29]։

Ահա այսպես Մելիք-Աբովը Վրաստանում առաջնակարգ նշանակություն ունեցող մարդ դարձավ։ Նրա նյութական դրությունն էլ Վրաստանում բավական բարելավվել էր, որովհետև բացի սովորական եկամտից նա ստանում էր նաև տարեկան 500 թուման (1500 ռ.) եկամուտ քարվանքաշության պաշտոնից, որ ավել էր Գեորգի ԺԲ։ Այս պաշտոնի նշանակությունն այն էր, որ մելիքը պետք է Ախբյորպու[30] ճանապարհի վրա պահականոցներ պահեր և յուր ձիավորները պետք է ուղեկցեին կալանավորներին մի իշխանից մինչև մյուս իշխաններ, և այս ծառայության համար հարկ էին վերցնում, բացի ուտելեկենից և աղից, րեոից մի ռուբլի։ Միևնույն ժամանակ նա պիտի ուղեկցեր և այն կարավանին, որ գնում էր Կողբից ավ բերելու։

Մելիք-Աբովի համարումը Գեորգի ԺԲ-ի մոտ այն աստիճան բարձրացավ, որ երբ Ղարաբաղի մյուս մելիքների հպատակներից մի քանի հարյուր ընտանիք փախան Փամբակ, Մելիք Աբովը կարողացավ նրանց ևս իր իշխանության տակ առնել, և երբ Մելիք-Ջումշուդը բողոքեց Գեորգի ԺԲ-ին և նա պահանջեց յուր հպատակներին, Գեորգին փոխանակ Մելիք-Աբովից գաղթականներին պահանջելու, Բորչալուի խան-արիս կոչված ջրանցքը ժամանակավորապես տվեց Մելիք-Ջումշուդին, որ այլևս պահանջ չանե[31]։

Գեորգին շատ անգամ գովում էր Մելիք-Աբովին նրա մատուցած ծառայությունների համար և մի անգամ էլ գրում է. «Կենցե՛ս, կենցե՛ս, իսկապես Մելիք-Հովսեփի արժանավոր որդի, ձեր այնքան գովելի և հաճելի քաջությունները մեզ շատ ուրախացրին, և մենք գտնելով դրա մեջ մեզ ծառայելու այնպիսի եռանդ, որպիսին մի ուրիշը չէր կարող

[28] **Коваленский П.** Записка о Грузии, «Кавказский календарь», 1864. Տե՛ս նաև Акты, т. I.

[29] Акты, т. I, стр. 640.

[30] Լավար լեռան մոտ գյուղ. Թիֆլիսից Ջալալօղլու վրայով Երևան տանող նանապարհի վրա։

[31] Акты, т. II, стр. 1158—1163.

ցույց տալ, հայտնում ենք ձեզ մեր շնորհակալությունը և նորից կրկնում ենք՝ կենցե՛ս»[32]։

Սակայն շատ երկար չեն տևում այս բարեբաստիկ օրերը։ Գեորգի ԺԲ-ն մեռնում է, ուստ կառավարիչները և վրաց իշխաններն այնպես բարեկամաբար չեն վարվում նրա հետ, հետզհետե սահմանափակում են նրա իրավունքները։ 1804 թ. նրա ավագ որդին՝ Ռուստամ-բեկը ռուս-պարսկական պատերազմում գերի է բռնվում և Թավրիզում զլխատվում, վշտացած մելիքը յուր ցավերը հայտնում է Մինաս-աղա Լաղարյանին յուր 1807 թ. նոյեմբերի 23-ին գրած հետևյալ նամակով[33]։

«Գերապատիվ բարձր բարեծնունդ իշխանապետ աղայ Մինաս.

Ակնկալութիւն ապպիս Հայոց և յատկապէս իմ ողորմած և ամենաբարեբար ապնուագութ տէր։

Բրրև դարեկակն փայլի բարձր և ամենացանկալի անուն ձեր ընդ ծագս աշխարհի բարեհրչակեալ քարոզի անդադար յամենայն մեղեաց ի դուք էք այս օր ակնկալութիւն մեր և յոյս և ես օրհնութեամբ մնացեալ յողկուզայն յերեկից և վեր ի նախնեաց յարանց քաջանց և օրհնեալ արմատաց։

Արդ եթէ դուք որ այսօր իբրև ծառ սաղարթախիտ և պտղալից ծագկեալ էք ամենաղօր բազկաւ Բարձրելոյն և ունիք համարձակութիւն բարեհաճեալ վասն ազգիս առ աստուածատիպ կայսերդ առաւտապարգև և բարեշնորհս առնել, և մեք մերով զանազան ազգի ազգի քաջագործութեամբ և մեծագոյն հաւատարմութեամբ մնայցեմք անքարձ և անպսակ յանկեալք ուրեք, և իբրև աննշան ոք, և հասարակ անձն համարիցեմք, ապա Ե՞րբ լինիցիմք բարեբախտ և ո՞ւմ հայանիցիմք զգաւն մեր։ Եթէ լուսահոգի Շահամիր ազայն լսելով զմեծագործութենէ Ղարաբաղու մելիքացս՝ ցնծայր յոգի, զանազան կերպիւ ուժաւոր լինէր մեզ մելիքացս, գուք, որ այս օր ողորմութեամբ Քրիստոսի առաւել էք քան զնա փառօք և պատուով, որչափ ևս առաւել պարտիք ձեռնտու լինել մեզ և բարեբաստիկութեան մերոյ ցանկալ, և չթողուլ զի աշխատանք մեր և անուն ընդ վայր կորիցէ և իբրև անարի ոք վատահամբաւ մեռանիցեմք։ Մեծագոյն հաւատարմութիւնք իմ առ սուրբ աթոռդ Ռուսաց և

[32] Акты, т. II, стр. 1156—1157. Նաև՝ «Кавказская старина», 1872, № 2, стр. 26.

[33] Այս նամակի իսկականից առած պատճենը ստացա մեր պատկառելի պատմաբան պ. Ա. Երիցյանից, որին և խորին շնորհակալություն եմ հայտնում։

քաջութիւնք իմ առ Զուպով զօրապետն որ ի Շուշի, յայտնիք են ամենից, գուցէ և Ձերդ վեհանձնութեան, թէ զի՞արդ զհզօրն այն վիթխարի աղայ Մահմադ խան անշահ ամօթապարտ կոր ի գլուխս յետս դարձուցաք և զամենայն զօրութիւն նորին թուլացուցեալ ցան և ցիր յերեսն երկրի սփիւռ տարածեցաք։ Նմին իրի արքայն Հերակլ ցանկացեալ ունել զմեզ ինքեան պաշտպան՝ երդմամբ և թղթովք հավատարմացոյց մեզ զալ առ ինքն և բնակիլ յերկրի իւրում և համարուիլ ընդ գլխաւոր թաւադսն և կնիազսն իւր, որք և եկաք և ըստ խոստման իւրում ետ մեզ Պօլնիս անուանեալ տեղին և 'ի պալատի իւրում բարձրագոյն քան զամենայն երևելիս իւր յատկացեալ կայր վասն մեր տեղի և այնպէս էաք մինչ ցվախճան Հերակլեայ և Գօրգնայ, այժմ ոչ հողի տէր եմք և ոչ կալուածոց և ոչ թէ պատուոյ, զի ամենեքեան նեղեն զմեզ և յափշտակել ջանան զՊօլնիս և տասանորդս պահանջեն ի վաստակաց մերոց, վասնորոյ բոլորիմք զզուեալ բնաւին ոչ կամիմ բնակիլ անդ, զի այժմ մինչ ես շինութեամբ և բարութեամբ լցի և զամենայն աւազակս և զթշնամիս անտի վանեցի, տիարք բազումք յայտնեցան, մինն ասէ, թէ այն ջուրն իմ մուլքն է, միւսն թէ այն սարն իմս է, իսկ այլ միւսն՝ այն հողն իմն է, և տասանորդս խնդրէ թէ ի ցորենոյ և թէ ի խոտոյ, ոչ թողուն զմեզ վարել, ոչ թողուն խոտ հնձել. և ոչ թողուն զի հոտք և անդիայք մեր ճարակեսցին, վասնորոյ, ամենայն անասունք մեր սատակեցան և մեք կամք երերեալ և տատանեալ և յայսմ ամի առանց վարուցանի մնացեալ. վասնորոյ, եթէ ամենայն քարինք Պօլնիսոյ յոսկի դարձցին՝ հրաժարելով հրաժարիմք, ոչ փող մնաց ի քսակի մերում, ոչ ամօթ յերեսս մեր և ոչ սիրտ համբերելոյ այսպիսի անտանելի թշուառութեանց, զի միշտ ի դրունս դատաստանաց մաշիմք և չունիմ ուստէք մեզ օգնութիւն։ վասն որոյ ահա զաղերս մատուցի Նորին Կայսերական Մեծութեան զի ի գութ շարժեալ հրամայեսցէ մեզ երթալ ամենայն ժողովուրդով մերով ի հայրենի երկիր մեր ի Ղարաբաղ և անդ բնակիլ և զարդարեալ շինութեամբ, և որպէս խոստացեալ եմ ողորմած կայսերն իմով թղթով, այժմ ես զնոյնն ուխտեմ և խոստանամ կատարել վասն ջահաւեւութեան արքունի գանձարանի։

Մելիք Ջումշուտին հրաման եղև գնալ յերկիր իւր, մեզ ընդէ՞ր ոչ լինիցի. վասնորոյ խնդրեմ, ողորմած տէր, զի ամենայն զօրութենե և ամենայն սրտէ գուն գործել և ի տեղի մեր բերան և լեզու եղեալ փոյթ արասջիք այսմ, ոչինչ խնայեալ ի ծախս, զի ունիմք շնորհակալութեամբ հատուցանել զամենայն ծախսն, որ լինին վասն այսմ, մնալոց եմք զամենայն կենաց մերոց պարտաւոր Ձերդ ամենամեծ բարերարութեան։ Հերակլ արքայն բաց 'ի Պօլնիսոյ, խոստացաւ մեզ հարիւր տուն մարդ և ի քաղաքիս ես տուն և տան տեղի մեզ վայել, բայց ինքն վախճանեցաւ և մեք փոյթ չտարաք հոգալ, որպէս ահա նորին թղթոյն կոպիայն առաքեցաք ընդ թղթոյս առ ձերդ վեհանձնութիւն 'ի գիտելի։ Ունէաք պատիւ առաւել քան զթաւադսն և զկնիազսն ի ժամանակս նոցա, այժմ 'ի ժամանակի յետին մուժիկի չափ էլ չեմք։ Գօրգի արքայն տուեալ էր մեզ քեարվան պաշութիւն, որով ամենայն տարի 500 թուման արդիւնք լինէր մեզ, այն ես զկնի վախճանի նորին ի ժամանակս սոցա կորեալ, որ այժմ մէկ փողի արդեանց տէր չեմք։

Ցիցիանովին յայտնեցաք Գօրգի արքայի թուղթն, խոստացաւ մեզ գրել առ կայսրն և փոխանակ քարվանպաշտութեան տոնուլ և աստիճան վասն մեր հաստատել, այն ես մնաց այնպէս կիսակատար, ինքն մեռաւ և Գիորկու թուղթն մնաց 'ի նորին կնանցելարի։

Այլ և թէ որքան հաւատարմութիւն արարեալ ողորմած կայսերն իմոյ ոչ մինն յայտնի չէ եղեալ տէրութեան. ես զինչ արարից, մի միայն անդրանիկ որդի ունէի Իսստամ-բէկ, որդի ծերութեան իմոյ և ժառանգ նախնեաց իմոց, այն ես զոհ մատուցի ինքնակալ կայսերն իմոյ ողորմածի, քան զայս աւելի ոչ ոք կարէ առնել զոր ես արարեալ եմ, և այժմ ես առնեմ. մէկ կաթիլ արիւն ունիմ՝ այն ես յամենայն ժամու 'ի պատրաստի կամ հեղուլ վասն անուան ողորմած կայսերն իմոյ, այլ քան զայս առաւել զի՞նչ արարից, չգիտեմ։ Երևի ճշմարտապէս, զի հայ եմ, վասնորոյ նախանձն ամենայն կուսակալք և զօրապետք դորին ընդ յաւաջադիմութիւն իմ և քաջագործութիւն և ոչ կամին յայտնել ստուգութեամբ ուր հարկն է, զի այսպէս մնացեալ, յուսահատեցայց և փչացայց։ Աստուծով այսու ցաւով իմով չեմ մտանելոյ ի գերեզման և չեմ յուսահատեալ փչանալոց, որպէս մինչ ցարդ գործեալ եմ զմեծամեծս, այլ ես Աստուծով գործելոց եմ զնորանորս ի սքանչելացումն լսողաց և տեսողաց, և արիութեամբ, քաջութեամբ ի հող մտնելոց, և ոչ իբրև անզոր և տկար յանկողնի մեռանելոց և մուրթաթ[34] սատակելոց։

'Ի ժամանակս Գօրգի արքային ի մինիստրութեան Կաւալենցկուն, թէ զինչ եմ գործեալ, և որքան հաւատարմութիւն արարեալ տէրութեան այսմիկ, կարէք գիտել ի թղթոց նորին Կաւալենցկուն, զոր ընդ գրոյս առաքեցի առ ձեզ։ Ցիցիանովին և իւր բոլոր զօրացն կենաց և փրկութեան ես եմ եղեալ պատճառ, առաքելով աստի յԵրևան հաց, բարութ և գիւլլայ ձեռամբ իմ քաղցր, միածին, անդրանիկ որդի Իսստամ բէ-

[34] Թուրքացած։

կին՝ հանդերձ յիսուն վաթսուն իմոյին քաջ արամբք։ Աստուծոյ ողորմութեամբն 'ի կէս աւուրն բարութ գիւղայն և հացն է հասեալ Ցիցիանովին Ռօստոմ բէկին և ի նոյն գիշերի շահն է եկեալ յանկարծակի բազմութեամբ անհամար զօրաց ի վերայ Ցիցիանովին. մտածելի է թէ չէր հասեալ վեց սահաթ յառաջ Ռօստոմ բէկն, զինչ էր ելինելոց նորա կեանքն, այսուամենայնիւ ոչ շատացեալ կրկին առաքեալ էր Ցիցիանովն զորդին իմ իւր մարդովք ի Ղարաքիլիսայ և այն, որք ի ճանապարհին 10, 12 հազարի զօրաց պատահելով, ոմանք ի մարդկանց նահատակեցան յանուն ինքնակալին ամենայն Ռուսաց և զամենեսեանս կապեալ խաղացուցին ի Դավրէժ հանդերձ իմ անդրանիկ որդի Ռօստոմ բէկի իբրև զոչխար ի սպանդ, ուր և կատարեցան ազգի ազգի տանջանօք և չարաչար մահուամբ, վասն անուան ինքնակալ կայսերն և այսպէս որդիս գնաց և վաթսուն մարդս ևս ընդ նմա գնացին իւրեանց ձիովք, ապրանքով, զինուք, սրովք և ամենայն իրոք և թէ որքան վնաս եղև ինձ այսու թողում ձեզէն քննել, և ինձ ցաւովք և վշտօք լցելոյս ցաւակից և վշտակից լինել։ Եւ այսոցիկ ամենայն գրեցելոյս բաց այլոց, կենդանի վկայք են յաստուածակոյս կողմէ ղեներալ պարոն Տուչկովն և պարոն Լևոնդովն։

Պարոն Վօլխոնցկուն թէ զինչ հաւատարմութիւնք եմ ցուցեալ, թող ինքն վկայեսցէ, կուսակալ գրաֆ Կուտովիչին ևս ոչ պակաս ծառայութիւն ցուցի, ի վերայ ամրոցին Ախալքալաքու զահ և երկիւղ ամենեքեանս արկանելով և այլն. սա ևս նման միւսոց ոչ դիտաց և ոչ շնորհակալ եղև, և ոչ կայսերն յայտնեաց ինչ վասն մեր, ի յանձնարարութեանց ձերոց ոչ ինչ շահ յառաջացաւ, զի որպէս թուղթ ողորմած տեառն իմոյ ետ ինձ և ասաց, թե ազայ Մինասն վասն քո յանձնարարութիւն արար ինձ և այլն։ Բայց արժանի և շահավէտ պտուղ ինչ ոչ եցոյց։ Քանիցս խնդիր մատուցաք թէ հրամայեա մեզ գնալ ի Ղարաբաղ ի հայրենի աշխարհն մեր, նման մելիք Ջումշուդի, ոչ հաճեցաւ, թէ դուք որ երթայք, Պօլնիս գիւղն աւերի. և ախալցխացիք և լէզկիք և այլ գողք և աւազակք յավարի առնուն զշրջակայ գիւղօրայս Թիֆլիսու։ Իսկ ինչ ասեմք թէ որպէս արքայն Հերակլ տուեալ էր մեզ զՊօլնիսն շրջակայ հողովն և ջրովն և ամենայն իրօք, դու ևս նման նմին զնոյն հաստատեա, պատասխանէ մեզ թէ ոչ կարեմ այլոց մուլքն տալ և այլն։ Զորով և դանձ առնեմ չտալ պատուական լսելեաց ձերոց զտաղտկութիւն։

Արդ՝ զորս ինչ խնդրեմ այժմ Նորին Կայսերական Մեծութենէն միջնորդութեամբ ձերով, նախ՝ հրամայել մեզ և ամենայն ժողովրդոց մերոց գնալ ի Ղարաբաղ, ի հայրենի աշխարհն մեր, որպէս ի վերդ գրեցաք. մեզ ոչ Պօլնիս է պիտոյ, ոչ հարիւր տուն մարդն, և ոչ ի մէջ քաղաքիս՝ տուն և տեղի, զորս տուեալ էր արքան Հերակլ։

Երկրորդ վասն մեր պենցիա հաստատել ի տեղի քարվանպաշութեան, զոր տուեալ էր մեզ արքայն վրաց Գէօրգի, որով տարին 500 թուման ստանայք, որպէս և Ցիցիանովն խոստացել էր, զոր ի վերդ գրեալ եմք։ Երրորդ վասն մեր աստիճան պոլկովնիկութեան հաստատել վասն ամենայն հաւատարմութեանց իմոց, ըստ զօրութեանց թղթոց արքային Հերակլայ և ըստ խոստմանց Ցիցիանովի։

Եւ չորրորդ՝ որովհետև Ռօստոմ բէկ որդիս հանդերձ իւր վաթսուն քաջ արամբ զոհ եղան յանուն ինքնակալիդ և զրկեցան ի կենաց և ի պսակաց, ի տեղի նոցա խնդրեմ չին մայեօրութեան վասն իմ որդի Եսայի բէկին և վասն իմ քեռ որդի Ադամ բէկին մելիք Մեջլումեան, զայսոսիկ զամենայն յանձնեալ ըստ ամենայնի, մնամ բազում յուսով և ակնկալութեամբ օր ըստ օրէ սպասեալ։

Ամենախոնարհ ծառայ ձերդ վեհանձնութեան
Մելիք Ապով մելիք Յովսէփեան Ղարաբաղու։
'ի նոյեմբ. 23. 1807, ի Թիֆլիս

Մելիքի խնդիրը չկատարվեցավ, նա չկարողացավ վերադառնալ յուր հայրենի երկիրը։ Իսկ նրա հարաբերությունները օրեցօր ավելի և ավելի լարվեցան վրաց ազնվականների հետ, որոնք մի հրավերքի մեջ լոքու մեջ թույն խառնելով թունավորեցին նրան, Մանաս-բեկ որդուն և Միրզա-Իսաքաշխ քարտուղարին։ Մանաս-բեկը ազատվեց, բայց Մելիք-Աբովն ու Միրզա-Իսահակը մեռան 1808 թ., կարճատև հիվանդությունից հետո։

Մելիք-Աբովի մարմինը փոխադրվեց Հոռեկ և թաղվեց տոհմական գերեզմանատունը։

Մելիք-Աբովը ուներ երեք որդի. Ռոստոմ-բեկ, Եսայի (Սայի)-բեկ և Մանաս-բեկ։

Երեց որդին հոր նման քաջ էր՝ և՛ պատերազմասեր, հաստատակամ, և՛ անձնավստահ։ Բացի այն, որ միշտ մասնակցում էր յուր հոր արշավանքներին, նա 1804 թ., ռուս-պարսկական պատերազմի ժամանակ սկսեց գործել և ռուսաց զորքերով երկու անգամ պաշար և վառոդ հասցրեց իշխան Ցիցիանովին, որ Երևանը պաշարած միջոցին ինքը չորս կողմից շրջապատվել էր պարսկական զորքերով։ Երբ երրորդ անգամ Ռոստոմ-բեկը 500 ռուս զինվորներով վառոդ էր տանում, Փամ-

բակի ձորում, Ղարսալի գյուղի մոտ պատահեցավ Փիր-Ղուլի-խան զորավարին 8000 զինվորներով, որին շուտով միացավ վրաց ապստամբ թագաժառանգ Աղեքսանդրը՝ 3000 զինվորով։ Ռոստոմ-բեկը, չնայելով որ անհամեմատ փոքր զորք ուներ, այնուամենայնիվ պատերազմից խույս չտվեց, այլ ընկավ թշնամու վրա և սկսեց կոտորել։ Նրա ձին գնդակահար լինելով գլորվեց՝ Ռոստոմ-բեկը ուրիշ ձիու վրա ցատկեց և առաջ սլացավ, չնայելով, որ արդեն երկու վերք էր ստացել, բայց երբ գնդակը վիրավորից և աջ ձեռքը, այն ժամանակ վայր ընկավ։ Պարսիկները կոտորեցին բոլոր զինվորներին և 16 հոգու հետ նրան գերի բռնեցին և տարան Աբաս-Միրզայի մոտ։ Սա շղթայած ուղարկեց նրան Թավրիզ և հրամայեց նրան բանտարկած պահել և բժշկել վերքերը մինչև յուր վերադարձը։ Երբ հաղթված և վրեժխնդրությամբ լցված Աբաս-Միրզան վերադարձավ Թավրիզ, կանչեց Ռոստոմ-բեկին և առաջարկեց ընդունել մահմեդականություն, բայց Ռոստոմ-բեկը վճռականորեն մերժեց, ուստի Աբբաս-Միրզան հրամայեց նրան գլխատել։

Թավրիզի հայերը մեծ սգով թաղեցին նրան եկեղեցու գավթի գերեզմանատանը և պահպանեցին հետևյալ տխուր երգը, որ հորինել էր նա բանտում.

«Մունետիկն ի ձայն բարձր ի գալուստդ,
Ժանտ գահիճն սուր ի ձեռին անյագ սրէ,
Վագեր հանգոյն զիմ կենաց թիկ կտրել խնդրէ,
Ի կախաղան և կամ ի սպանդ,—ո՞ւր զիս տանի։
Քաղաքս հոմայն մահմեդական, ասա խուռն գան, զիմ մահ սգան,
Գառնագին լան զիս Աբովիան՝ քաջ տխոյնան։
Մի՞թե չիք ոք ասա քրիստոնեայ, զիս փրկեսցէ,
Ցայս ամենի և մահագոյժ վայրագ դահճէ։
Ընդէ՞ր զանմեղ արիւն թափել, լե՞ր ցանկայ։
Նուիրական զենման իմոյ լերուք վկայ։
Սեր հայրենեաց ի թշնամեաց ձեռս մատնեաց,—ուրախ մեռայց,
Եւ դասեցայց ընդ դիւցազանց իմոց նախնեաց։
Փշրանք մնացեալ իմ սիրելի հայոց ազգի,
Որք գոսանիք ի ձեռս պարսից յայս բազաքի,
Մի՛ մոռասջիք պատմել և զայս յորդւոց յորդի,
Թէ քաջն Ռոստոմ վասն հայրենեաց ի սպանդ վարի։
Թէպէտ ցավիմ՝ զի լմեանիմ ի մարտ ընդդեմ թշնամեաց իմ,
Այլ յուժարիմ, զի զոհ լինիմ այսպէս վսեմ։
Այս քաջ բազուկք յարեալք պարեալք հսկայ հզօր
Տապաստ արկին ի բաղում նուազս հարիւրաւորս.
Ա՜խ, կնատ անգութ դահճի նոն ես որս,
Պատեսջի՛ք զայս վեհ դիւցազին՝ զառամեալ հօրս.
Քաջ նահատակ որդիդ միակ ի ձեռս վայրագ պարսից էանկ,

Իւր յաղթանակ մահ դժնդակ էաս պսակ։
Մեծդ յարյաց, արքայորդիդ Աբաս-Միրզա,
Սուր ի ձեռին դահիճն հէգ առ ընթեր կայ,
Ձիս թշնամիս քոյոյ ազգի պատրաստ ի մահ
Ջիա՞րդ կամիս սպանանել՝ շուտ հրամայեա։
Միայն սգամ, զի կապեալ կամ, թե մյուս անգամ հրացան, սուր իմ
Ի ձեռս ունիմ,—զբազուկս իմ ձեզ ցուցանեմ...»։

Մելիք-Աբովի միջնակ որդին՝ Մելիք Սային կույր էր։ Սրա պատճառը, բանավոր աղբյուրների ասելով, Մեհտի-Ղուլի խանն էր, որի ուղարկած բժիշկը փոխանակ լավացնելու Սայիի ցավոտ աչքերը, դիտմամբ կուրացրել է նրան։ Սային կույր լինելով, չէր կարող հաջորդել հորը, ուստի և մելիքությունը մնում էր նրա կրտսեր որդի Մանաս-բեկին։ Բայց որովհետև մելիքության օրինավոր ժառանգ Ֆրիդոնը՝ Մելիք-Բեկլար Բ-ի որդին, արդեն չափահաս էր, ուստի և նա մելիք ճանաչվեց։

Սակայն նա երկար չապրեց, որովհետև մի անգամ յուր եղբոր՝ Սամի հետ վեճի բռնված ժամանակ սա դաշույնի մի հարված է տալիս Մելիք-Ֆրիդոնի գլխին, որից նա վախճանվում է։ Եղբայրասպան Սամին փախչում է Գյուլիստան գյուղը, ուր յուր դաշույնը դնում է կրակի վրա և երբ տեսնում է, որ դաշյունի վրա մնացած եղբոր արյունը եփ չէ գալիս, զուշակում է, որ եղբայրն արդեն մեռել է, ուստի և փախչում, գնում է Երևան և խանին ապաստանում։

Մելիք-Ֆրիդոնի մահից հետո մելիքությունը պիտի անցներ Մանաս-բեկին, ուստի և նա դիմեց գլխավոր հրամանատար զորապետ Տորմասովին, խնդրելով, որ իրեն հաստատեն իբր ժառանգական տիրապետող Բոլնիսի բնակիչների, բայց նրան ոչ միայն մերժեցին, ասելով, թե Բոլնիսը և նրա բնակիչները ոչ ոքի չեն պատկանում, բացի թագավորից, այլև կալանավորեցին և պահեցին Թիֆլիսում, «որպեսզի նա Բոլնիսի բնակիչների մեջ այլևս վրդովմունք չհարուցանե»[35]։

Ժողովուրդը հուսահատված սկսեց վերադառնալ յուր հայրենի երկիրը։ Նույնն արավ և Մանաս-բեկը, բոլորովին հրաժարվելով Բոլնիսից, որ յուր հորն էր նվիրված կայսեր հրամանով։

Վերադարձած գաղթականները նորից ձեռք բերին իրենց գյուղերը, նորից շինեցին իրենց տները և սկսեցին ապրել դարձյալ վաղեմի սովորություններով, սակայն նրանց պետերը կառավարության կողմից

[35] Акты, Арх. Ком., т. II.

այլևս չճանաչվեցան որպես մելիքներ, այլ լոկ կալվածատերեր և մանավանդ նախարի։ Երկիրը բաժանվեց Մելիք-Աբովի և Մելիք-Ֆրիդոնի ժառանգների մեջ, որոնք ռուսական սովորության հետևելով, սկսեցին կոչվել իրենց պապերի անունով. առաջինները՝ Մելիք-Հովսեփի թոռները՝ Մելիք-Հովսեփյաններ, և երկրորդները՝ Մելիք-Բեկլարի թոռները՝ Մելիք-Բեկլարյաններ։ Առաջինների ավագը համարվեց՝ Մանաս-բեկը, իսկ երկրորդներինը՝ Մելիք-Ֆրիդոնի որդի Մելիք-Հովսեփը։ Մանաս-բեկը մի նշանավոր գործ շարավ, բացի այն, որ որպես նախիր մի անգամ հարձակվեց փախստականների ետևից և ձիուց ընկնելով ոտները կոտրեց։ Մի քանի տարուց հետո նա սպանվեց Ջեյվա գյուղի թուրքերի կողմից, որոնք գիշերով հարձակվելով նրա տան վրա, կամենում էին սպանել նրա որդի Սողոմոն-բեկին, որ հողային վեճի պատճառով սպանել էր իրենց ընկերներից մեկին։

Մելիք-Ֆրիդոնին հաջորդեց որդին՝ Մելիք-Հովսեփ Բ-ն։ Սրա նշանավոր գործն եղավ այն, որ 1826 թ. պարսից արշավանքի ժամանակ միանալով Սարգիս մետրոպոլիտի և Ջրաբերդի Մելիք-Վանի Աթաբեկյանի հետ, գնացին Աբաս-Միրզայի մոտ, խանքենդ ավանը և աշխատեցին իջեցնել նրա՝ հայերի դեմ զգացած ցասումը և թույլ չտալ հայերի ընդհանուր կոտորած առաջացնել, որովհետև Աբաս-Միրզան լավ հասկանալով, որ ռուսները հայերի ձեռնավորությամբ կարողացան տիրել Ղարաբաղին, կամենում էր կոտորել բոլոր հայերին։ Այս երեքը կարողացան իջեցնել Աբաս-Միրզի բարկությունը և հետ կանգնեցնել նրան այդ մտադրությունից։ Եվ ապա նույնիսկ ընծաներ ստանալով նրանից, վերադարձան։

Սակայն պարսից պարտությունից հետո իշխան Մադաթովը դավաճանություն համարելով դրանց՝ ռուսաց թշնամու հետ ունեցած տեսակցությունը, երեքին էլ կալանավորել տվեց. Սարգիս մետրոպոլիտին ուղարկեց Թիֆլիս, ուր նրան բանտարկեցին, իսկ Մելիք-Հովսեփին և Մելիք-Վանուն ուղարկեցին Բաքու, որ այնտեղից Սիբիր աքսորեն։ Բայց սրանք երեքն էլ կարողացան արդարանալ և ազատվել[36]։ Մելիք-Հովսեփը վերադարձավ Իգիրմիդորդ և կառավարության կողմից նախիր կարգվեց այս մահալի վրա։

Այնուհետև որպես մահալ նախիր նա գրեթե մելիքական իրավունքներով կառավարեց յուր ժողովուրդը մինչև 1843 թվականը, երբ մեռավ և թաղվեց Հոռեկա վանքի տոհմական գերեզմանատանը։

[36] Բաֆֆի, Խամ. մելիք., II տպ., եր. 232—233։

Մելիք Հովսեփ Բ-ին հաջորդեց երեց որդին՝ Ֆրիդոնը, որ Բեուկ-Աղա (մեծ պարոն) էր մականվանված։ Սակայն սա կնամոլ լինելով՝ սպանվեց ոմն Հալությունից Գրիգորյանից, որ այդ տրավ յուր կնոջը նրա ճիրաններից ազատելու համար։

Սրա որդին՝ Հովսեփ բեկը ժառանգեց տոհմական կալվածքները առանց մելիքական մի որևէ իրավունքի, և այժմ էլ իբրև կալվածատեր ապրում է Ղարաչինար գյուղում։

Մելիքների հասարակական և իրավական սովորությունները. Մելիք Բեկլարյանները՝ գլխավորապես Աբով Բ-ի, Բեկլար Բ-ի, Հովսեփ Ա-ի ժամանակ, գրեթե բոլորովին անկախ և միահեծան տեր են եղել Իգիրմիդորդին։ Նրանք անվանապես հպատակվել են պարսից շահերին, որոնց պահանջած միջոցին միայն մի փոքրիկ տուրք են տվել։ Վերջին Աբով Գ-ի և Ֆրիդոնի միջոցին նրանք ճանաչել են վրաց թագավորների գերիշխանությունը և որոշ հարկ տվել, իսկ վերստին Իգիրմիդորդ վերադառնալուց հետո, մի առ ժամանակ հարկատու են եղել Մեհտի-Ղուլի-խանին։

Իրենց երկրի մեջ նրանք ունեցել են անսահման իրավունք, նրանց կամքը հպատակների համար օրենք է եղած, և նրանք տնօրինել են ոչ միայն մարմնավոր, այլև շատ անգամ հոգևոր իշխանության վերաբերյալ գործերը։ Այսպես, օրինակ, նրանք են թույլ տվել պսակ և այն լուծել[37], նրանց հրամանով են քահանաները ձեռնադրվել, նրանց կամքով Սարգիս եպիսկոպոսը կաթողիկոս է կոչվել և այլն։

Այսպես, ուրեմն, մելիքները իրավունք են ունեցել իրենց հպատակ երկրում.

1) հարկ վերցնելու
2) զինվոր առնելու
3) դատ կարելու
4) կարգ պահպանելու

Երկիրը կառավարելու համար մելիքը յուրաքանչյուր գյուղում ինքը նշանակում էր տանուտեր կամ հաստատում էր ժողովրդի ընտրածին։ Սա կատարում էր մելիքի հրամանները, յուր գղիրի հետ հավաքում էր հարկը, փոքրիկ դատեր էր կարում, հսկում էր կարգի վրա, զինվորներ էր հավաքում և հաճախ նրանց առաջնորդում մելիքի մոտ, որ ընդհանուր հրամանատար էր համարվում։

[37] Մելիք-Հովսեփ Ա-ին դանդատվում է Մուսին, թե կինը յուր հետ լավ չի վարվում։ Սա էլ հրամայում է անմիջապես նրան բաժանել և մի ուրիշի հետ պսակել, որ և կատարում են։

Յուր այս ծառայությունների համար տանուտերը թեև ոռճիկ չէր ստանում, բայց ժողովուրդը երկու օր վարում էր նրա հողը, նրա համար փայտ էր բերում և այլ ծառայություններ կատարում։

Ստացված է. Մելիք-Բեկլարյանները տիրապետել են ամբողջ Գյուլիստանին, ուր 24 գյուղ է եղել։ Ափսոս որ ոչ մի վիճակագրական տեղեկություն չկա նրանց բնակիչների թվի մասին։

Մելիքությունը կորցնելուց հետո էլ այս կալվածքների մեծ մասը դարձյալ մնացել է նրանց ժառանգորդների ձեռքը։

Այսօր էլ այդ ընդարձակ կալվածներից նրանց ձեռքին են մնացել հետևյալները.

Մելիք-Բեկլարյաններին. Գյուլիստան գյուղը (մոտ 2000 դեսյատին), Զարխի կալվածքը (2500 դ.), Խարխափոտ գյուղը (1500 դ.), Ղարաչինար գյուղը (700 դ.), Ղաղիքենդ կալվածքը (499 դ.), Ղողթութ գյուղը (200 դ.), Հայոց Պարիս գյուղը (4000 դ.), Թոդան գյուղը (1200 դ.), Մանաշետ (1200 դ.), Բուզլուխ գյուղը (2000 դ.), Ղարաբուլախ գյուղը (1500 դ.), Դիշտիխ կալվածքը (1000 դ.), Միլ կալվածքը (1600 դ.), Ղաղիան կալվածքը (400 դ.), Խանագե կալվածքը (5000 դ.), Թալիշ գյուղը[38] (3500 դ.), Թութբուլախ գյուղը (1333 դ.), Քյուլուկ Սիղնախ կալվածքը (1250 դ.), Բարամբադ կալվածքը (3210 դ.)։ Ընդամենը՝ ավելի քան 33000 դեսյատին։

Մելիք-Հովսեփյաններին. Էրքեճ գյուղը (5000 դ.), Ղազան-բուլախ կալվածքը (2000 դ.), Ենկի-քենդ գ. (500 դ.), Ղըզըլ-Իլդուն (1000 դ.), Աղարամ (1000 դ.), Սուլուկ գ. (300 դ.)։ Ընդամենը՝ մոտ 10 000 դ., միասին՝ ավելի քան 40 000 դեսյատին։

Հարկեր.—Իգիրմիդորդի բնակիչները, քանի որ մելիքները Շուշու խանին չէին ստորադրվում, վճարում էին հետևյալ հարկերը, որից միայն հոգևորականները, տանուտերները, քյաթխուդաները, զզիրները և սափրիչներն էին ազատ։

Մալչեհատ—հացահատիկի 1/5 մասը։

Սալյան—չկարողացա որոշել։

Գլխահարկ կամ ռսկի—յուրաքանչյուր տուն վճարում էր ռուսական փողով հաշված մոտ երեք ռուբլի։

Գյունվուլի—գյուղացիները պարտավոր էին մելիքի հողերը վարել, ցանել, հնձել, կրել և այլն։ Առաջներում այդ օրերի թիվը որոշված չի եղել և միայն կախված է եղել մելիքի կամքից, բայց վերջերում որոշել են տարվա ընթացքում 20 օր։ Կարելի էր այսքան օրը աշխատելու փոխարեն չորս ռուբլի տալ, ռուսական փողով հաշված։

Ծառա և աղախին—յուրաքանչյուր 25 տուն մի ծառա և 30 տուն մի աղախին էր տալիս մելիքի տանը ծառայելու։ Եթե գյուղը այդքան տուն բնակիչ էլ չունենար, այնուամենայնիվ ազատ չէր այդ պարտականությունից։

Փայտ—յուրաքանչյուր տուն պարտավոր էր տարին մի իշաբեռ փայտ տանել մելիքի համար։

Պսակի—յուրաքանչյուր պսակի հրաման տալիս հպատակները մելիքին վճարում էին 3—6 ռուբլի, ռուսական փողով հաշված։ Բացի դրանից պարտավոր էին տանել մելիքին մսացուի սուկին, երիկամունը, 2 հավ և 2 շիշ օղի։ Երբ հարսը ուրիշ գյուղ էին տանում, պարտավոր էին ավելի վճարել։

1825 թվականին Թալիշի կամ Իգիրմիդորդ մահալը, յուր Ղարաչինար, Թալիշ, Էրքեջ, Ղարաբուլախ, Բուզլուխ, Վերին և Ներքին Աղճաբենդ գյուղերով, ուր կային 143 հարկատու և 102 հարկից ազատ տներ՝ վճարում էր խանին թե հացահատիկով և թե դրամով 1472 ռ. 98 կ. և 114 չերվոնեց (ռուսական ռսկի), հաշված 300 ռուբլի (խան ռուբլիով հաշվածը), որ գնում էր որպես շափար փուլի[39]։ Խաներին ստորադասված միջոցին վճարում էին նաև հետևյալ հարկերը, որոնցից մի քանիսը յուր տարօրինակ են.

Օթախ—խարջի և Զափար-փուլի.—խանի ձիավոր ծառաների վարձ։

Ղուլլուղ և թաղվիլանի.—խանի ծառաների օգտին տան գլուխ առնում էին 50-ական կոպեկ օթախ-խարջի անվամբ առնված յուրաքանչյուր չետվերտ[40] հացահատիկից և յուրաքանչյուր բեռ փայտի համար՝ 25 կ. ղուլլուխ։

Միրզայանի.—հօգուտ խանի քարտուղարին, գյուղից 20—100 ռուբլի և 2—10 չետվերտ ցորեն։

Շերբեթչի-փուլի.—հօգուտ խանի շերբեթչիների (օշարակ պատրաստողների) գյուղից 10—80 ռուբլի և 2—10 չետվերտ ցորեն։

Աղ.—գյուղից 8—40 բաթման։

Աբարփասի.—խանի ձիերի համար գարի։

Բայրամլի.—100—200 ռ. խանի ծառայողներին, զվարճանալու համար։

---

[38] Բանակցում են մասկվաբնակ ժամհարյան եղբայրներին վաճառելու։

[39] Описание Карабагской провинции. Магилевского и Ермолова. 2-го, Магал Талышинский.

[40] Չավալի չափ—10 փութ ցորեն պարունակող։

Խանի ջորեպանի համար յուրաքանչյուր գյուղ տալիս էր մի-մի ձեռք շոր, ջորիների համար՝ մի-մի չուլ, համեմի համար կտոր և թել, մի քանի զույգ պարկ։

Քյարխանա-խարջի.—*խանի խոհանոցի համար գյուղից 1—5 բաթման յուղ, 2—20 ոչխար, մի եզ, 1—5 բաթման բուրդ և այլն։*

Զ n r f p.—*մելիքների ժամանակ կանոնավոր, մշտական զորք չկար, այլ հարկավոր դեպքում հավաքվում էին և ապա կրկին ցրվում և պարապում իրենց գործերով։*

Ամեն մի տուն պարտավորված է եղել մելիքի պահանջած միջոցին մի զինվոր տալ, իսկ երբ դրությունը ծանր էր լինում, զինվում էին բոլոր զենք կրելու ընդունակ մարդիկ։ Զինվորն ինքն էր հայթայթում իր համար զենքեր և ձի, իսկ եթե նա բոլորովին աղքատ էր լինում, մելիքն էր տալիս։ Առանձին զինվորական համազգեստ չկար։ Զինավարժության համար հատուկ օրեր և ծառայություն չէր նշանակված, բայց կային որոշյալ հանդեսներ, երբ երիտասարդ զինվորները մելիքի և ժողովրդի ներկայությամբ վարժվում էին հրացանաձգության և ձիարշավի մեջ։ Այսպես՝ հարսանիքներին ձիարշավներ էին կազմվում, բացի սրանից, երբ նորապսակները եկեղեցուց վերադառնում էին նորահարսի տունը, մի բարձր ծառից բարակ թելով մի խնձոր էին քաշ տալիս, և մակարները աշխատում էին զնդակով վայր ձգել խնձորը, և ով հաջողեցնում էր՝ մի զույգ գուլպա կամ մի այլ բան նվեր էր ստանում։ Մելիքն ինքը ներկա էր գտնվում այս խաղերին։

Մեծ պասի առաջին օրը բոլոր գյուղացիները ձի էին հեծնում և դավուլ-զուռնի առաջնորդությամբ գալիս մելիքին առնում և գնում մի հարթ տեղ ձիարշավի։ Հետո խմբով շրջում էին գյուղում, նշանավոր տներից «խոնչա» (ուտելեղեն և գինի) էին դուրս բերում նրանց առաջ և նրանց հյուրասիրում։ Վերջը մելիքին տանում էին իրենց տունը, անմիջապես մելիքը հրամայում էր յուր ծառաներին գինի տալ բոլորին, և սրանք. «Մելիքի մին օրը հաղար» բղավելով խմում էին և ուրախ, երջանիկ ցրվում տները։

Զինվորները ոռճիկ չէին ստանում, միայն խլած ավարը, մելիքի բաժինը վերցնելուց հետո, իրենց մեջ բաժանում էին։

Բայց մելիքները մոտ 300 զինվոր միշտ պահում էին իրենց մոտ որպես թիկնապահներ, որոնց կերակրում և թոշակ էին տալիս։

Մելիքներն իրենք էին համարվում զորքի ընդհանուր հրամանատարը, բայց յուրաքանչյուր խումբ ուներ յուր յուզբաշին, այս պաշտոնը ժառանգական էր, երբեմն էլ մելիքը տալիս էր այդ պաշտոնը յուր քաջությամբ աչքի ընկնողին[41]։

Զինվորների թիվը որոշ հայտնի չէ։ Մելիք-Աբով Գ-ն 1000 զինվոր ուներ, իսկ Մելիք-Հովսեփ Ա-ն և Մելիք-Բեկլարը կուցե 3—4000։

Պատերազմի ժամանակ որոշյալ կարգ ու կանոն չկար. մելիքը ընկնում էր առաջ, նրան հետևում էր զորքը։

Զինվորների սպառազինությունը կազմում էին՝ դաշույն, թուր և հրացան։

Հրացանը շինում էին Գյուլիստանի բերդում, իսկ վառոդը՝ Երիշենում, ուր կա շորա (селитра)։ *Վառոդ պատրաստելը մելիքի արտոնությունն էր կազմում։*

Դատ. —*Դատավարության իրավունքը պատկանում էր մելիքին և նրա հաստատած տանուտերին։ Ծանր հանցանքները ինքը՝ մելիքն էր քննում, իսկ թեթևները՝ տանուտերերը։ Այս վերջիններիս վճիռներից դժգոհը կարող էր բողոքել մելիքին, որի վճիռը վերջնական էր։ Սակայն լինում էին դեպքեր, որ մելիքի վճռից դժգոհ հպատակները, նրան թըշնամանալով, անցնում էին թշնամի մելիքի կողմը և կամ դիմում խաներին և զանազան բամբասանքներ և լրտեսություններ անում իրենց մելիքի դեմ։*

Կատարողական իշխանությունը դարձյալ կենտրոնանում էր տանուտիրոջ և մանավանդ մելիքի ձեռքում։ Երբ մի վճիռ արձակվեց, տանուտերը հրամայում էր յուր գզիրին, իսկ մելիքը յուր դռանը կանգնած հիսունի չափ ծառաներից մինին, որ գատախազի հետ գնա և վճիռը գործադրե։ Վճիռը արձանագրված չէր հանձնվում ծառային, այլ միայն մի թղթի վրա խփված մելիքի կնիքը և կամ նրա համրիչը։ Վճռի էությունը բերանացի բացատրում էին ծառային, նա էլ դատապարտվածին, և իբր հաստատություն յուր ասածին՝ ցույց էր տալիս մելիքի կնիքը կամ համրիչը։ Թեև մելիքը, ինչպես և տանուտերը, յուր դատավարության համար վարձ չէր պահանջում, բայց ծառան պոկում էր ինչքան կարող էր թե՛ մեկ և թե՛ մյուս կողմից։

Դատավարության համար որոշ օրենքներ կամ օրենսգիրք չկար. մելիքները ղեկավարվում էին սովորության իրավունքով և իրենց բարեհայեցողությամբ։

Դատավարության համար հատուկ շենք չկար. դատը տեսնվում էր

[41] Акты Арх. ком., т. III, № 874, стр. 633.

մելիքի տան բակում կամ ապարանքի սենյակներից մեկում։ Շատ անգամ պատահում էր, որ մելիքը փողոցում, հրապարակում էլ դատ էր կըտրում։

Նույնպես չկային դատավարության հատուկ օրեր. մելիքը դատ էր կտրում, երբ ցանկանում էր, բայց առավելապես նա դատի էր նստում կիրակի օրերը, երբ գործից ազատ լինելով, ուրիշ գյուղերից էլ գալիս էին գանգատվելու։

Սովորաբար գանգատավորներից պահանջում էին հաստատել իրենց ասածները վկաներով և կամ երդումով։ Ընդհանրապես երդման հետևյալ ձևերն էին գործ դրվում։

ա) Եկեղեցում կամ մի սրբի առաջ գանգատավորը մի զույգ մոմ էր վառում և բռնելով մեղադրվածի կոնից, մոտեցնում էր մոմերին, որ փչե հանգցնե։ Եթե հանգցներ, անմեղ էր համարվում։

բ) Գանգատավորը մի վառ ածուխ էր տալիս մեղադրվածին, և սա վրան ջուր ածելով ասում էր. Այսպես անցնիմ, թե որ արել եմ։

Երբեմն բարձրաստիճան մարդիկն էին երդվում իրենց ստորադրյալների փոխարեն։

Ընդհանրապես երդվելը շատ ծանր էր համարվում, և ոչ միայն շատ հաղիվ էին պատահում ստոր երդվողներ, այլև երբեմն հանցանքը հանձն էին առնում, որպեսզի չերդվեն։

Մելիքները հետևյալ պատիժներն էին տալիս.

ա) Ծեծ.—սա ամենասովորական և ամենագործածական պատիժն էր։ Երբեմն ինքը՝ մելիքն էր ծեծում, բայց սովորաբար ծառաներին էր հրամայում այս պատիժը գործադրել։ Շատ անգամ էլ պառկեցնում էին և բարակ ճիպոտներով ծեծում։ Նաև կապում էին ծառից և այնպես ծեծում։ Շատ անգամ էլ այդպես կապված 2—3 օր պահում էին։

բ) Տուգանք.—տուգանք էին վերցնում մելիքներն իրենց օգտին։

գ) Բանտարկություն.—հատուկ բանտ սկզբներում չկար. մելիքի ախոռը, փայտատունը, իսկ ավելի ուշ՝ մի որոշ սենյակ ծառայում էր որպես բանտ։

գ) Անվանարկություն.—այս պատժին գլխավորապես ենթարկվում էին անառակ կանայք, որոնց իշի վրա նստեցնում, իշի պոչը ձեռը տալիս, երեսին մուր քսում և շրջեցնում էին գյուղով։ Ավելի փոքր հանցավորների երեսին թրիք էին քսում և գյուղով ման ածում։

ե) Դամղա խփել.—մերկացնում էին նստատեղին և մելիքի կնիքը խփում։

զ) Այրումն.—փլավ-քամին կրակի մեջ կարմրեցնում էին և դնում դատապարտվածի գլխին, որ անմիջապես մեռնում էր։ Այսպես է պատժել Մելիք-Բեկլարը հովիվ Հախվերդուն։

է) Կախ տալ.—առանձին կախաղան չկար. սովորաբար ծառերից էին կախ տալիս։ Այսպես, Մելիք-Աբով Գ-ն կախ է տվել Փանոսանց Հայրապետին Բոլնիսում, որ չէր ուզում իրեն հնազանդել։

ը) Ձիու պոչից կապել և քարշ տալ.—այս պատժին ենթարկվում էին անուղղելի պոռնիկ կանայք։ Այսպես, Մելիք-Հովսեփ Ա-ն նույն պատժով սպանել է պոռնիկ Մարիամին։

Մելիքների կյանքը. Մելիքները առավոտները շատ վաղ էին վեր կենում, մի բաժակ օղի խմում և մի քանի թերխորով ձու ուտում։ Անմիջապես փոքրիկ, 12—15 տարեկան մանկլավիկը, գլուղեցիկ հագնված և ոսկեջրած ունելին գոտկում խրած, մատուցանում էր դայլանը և ինքը մի քիչ հեռու կանգնում, որ դայլանը հանգչելու դեպքում կրակ բերե։ Ժամը մոտ 10-ին մելիքը նախաճաշում էր։

Նախաճաշիկից հետո մելիքը դատ էր կտրում։

Կեսօրից քիչ անց մելիքը ճաշում էր։ Սովորաբար մելիքի համար առանձին էին ճաշ պատրաստում։ Իսկ գանգատավորներին, ուրիշ գյուղից եկած գյուղացիների և հասարակ հյուրերի համար միշտ առատությամբ ճաշ էր պատրաստվում քարխանայում, որ մելիքի տնից մի քիչ հեռու էր գտնվում և ուր ամեն մի եկվոր կարող էր ճաշել։ Սովորաբար մելիքները հյուրասեր էին, և նրանց սեղանը ամենքի համար բաց էր. մի գանգատավոր, մի գյուղացի չէր կարող գալ մելիքի տունը և առանց հաց ուտելու վերադառնալ։

Ճաշին մելիքին մատուցանում էին մի քանի տեսակ կերակուրներ, բայց առավելապես՝ փլավ և գոմեշի թափան։ Փլավի համար գործ էին ածում արծաթյա սկուտեղներ, նույնպիսի ծածկոցներով։ Սովորաբար ուտում էին մեկ ամանից, դանակի և պատառաքաղի գործածությունը անծանոթ էր, կար միայն գդալ։

Սաղի կոչված մի ծառա մելիքի առաջը կանգնած զինի էր լցնում և մատուցում։

Բաժակը սովորաբար մի հատ էր լինում, և ձեռքից ձեռք անցնում։ Հյուրեր եղած միջոցին առաջին բաժակը ինքը՝ մելիքն էր խմում։

Գինի խմելիս հպատակները բարեմաղթություններ էին անում, ասելով. «Մելիքի մին օրը հազար»։ Միևնույն դարձվածքը գործ էին ածում և այն բոլոր դեպքերում, երբ կամենում էին իրենց գոհունակությունը հայտնել։ Շատ անգամ մելիքի հատուկ աշուղական խումբը զվարճացնում էր սեղանակիցներին։

Ճաշից հետո մելիքը փոքր-ինչ քնում էր և հետո կամ գնում զբոսնելու կամ կրկին դատ կտրում և կամ որսի գնում։

Մելիքի անցնելիս բոլոր տեսնողները ոտքի էին կանգնում և խոնարհությամբ բարևում նրան։ Մելիքը սիրով ընդունում էր նրանց բարևը և հետները խոսելիս նրանց խոխեմ (երեխայք) անվանում, թեկուզ նրանք իրենից շատ հասակավոր լինեին։ Նա, որպես մելիք, յուր բոլոր հպատակների հայրն էր համարվում։

Երեկոները մելիքն անց էր կացնում յուր մտերիմների հետ, բավական վաղ ընթրում էր, ապա մի քիչ զվարճանում նարդի և այլ խաղերով և ապա պառկում քնելու։

Մելիքների ամենամեծ զվարճությունը որսորդությունն էր։ Նրանք շատ հաճախ գնում էին որսի բազեներով և որսկան շներով, մի քանի կտրիճների ուղեկցությամբ։

Կիրակի օրերը մելիքները եկեղեցի էին գնում և կանգնում իրենց հատուկ տեղը, որտեղ մի գորգ էր լինում փռված։

Մելիքները մասնակցում էին ժողովրդի ուրախության և տխրության։ Հարսանիքի ժամանակ հարսանքատերը գավուլ-զուռնով գալիս էր մելիքի դուռը, մի ոչխար կամ գառ, 2—3 հատ հաց, մի շիշ գինի նվեր բերում և խնդրում ներկա գտնվել հարսանիքին։

Մելիքը դրամ էր նվիրում հաց բերողին, որ հացթուխի կողմից էր լինում։ Հետո դավուլ-զուռնի առաջնորդությամբ գնում էին հարսնատուն, ուր բոլոր հանդիսականները վեր էին կենում, և թագվորը գալիս, համբուրում էր մելիքի ձեռքը։ Պարզ է, որ առաջին տեղը, առաջին բաժինը, առաջին բաժակը սրան էր պատկանում։

Ոչ միայն առաջին բաժակը նրա կենացն էին խմում, այլև բոլոր մյուս կենացների ժամանակ կրկնում էին «Մելիքի մին օրը հազար» դարձվածքը։

Երբ նորապսակները պատրաստվում էին հարսի տնից փեսայի տուն գնալ, նախ և առաջ դավուլ-զուռնի առաջնորդությամբ գնում էին մելիքի տունը և դռան առաջ կանգնում։ Մելիքը հանդիսավոր կերպով դուրս էր գալիս, մակարները՝ ուրախության աղաղակ արձակում, նորապսակները համբուրում էին մելիքի ձեռքը, և սա մի «խալաթ» (նվեր) էր տալիս նրանց։

Նավասարդին ժողովուրդը խնձոր, ընկույզ, գինի առած գալիս էր շնորհավորելու մելիքի Նոր տարին և հյուրասիրվում մելիքի ճաշով։ Նույնն էր լինում և մյուս տոներին, բայց ավելի պարզ կերպով։

Ինչպես որ մելիքը մասնակից էր ժողովրդի ուրախության և տխրության, այնպես էլ ժողովուրդը բաժանում էր մելիքի ուրախությունն ու տխրությունը։ Երբ մելիքը պսակում էր յուր որդուն կամ աղջկան, ամբողջ ժողովուրդը յոթն օր յոթ գիշեր քեֆ էր անում և բազմաթիվ ոչխարներ ու գառներ նվեր բերում։

Երբ մելիքը մեռնում էր, նրան գնում էին անկողնու մեջ և ձեռքերը վերմակի վրա խաչում, ապա բոլոր գյուղերի բնակիչները գալիս էին և համբուրում մելիքի ձեռքը։ Հետո արգեն մելիքին պատանում էին և բոլորի հուղարկավորությամբ մեծ շուքով թաղում։ Երբ գանձ էին ասում, բոլորն աշխատում էին որքան կարելի է շատ խաչհամբույր ձգել, կամենալով սրանով արտահայտել իրենց տածած սերն ու հարգանքը դեպի հանգուցյալ մելիքը։ Այնուհետև մի առժամանակ սուգ էին պահում։ Ամբողջ գյուղը մի տարվա ընթացքում հարսանիքներին դավուլ-զուռնա չէր ածում։

Մեռած մելիքի քառասունքը տալուց հետո մելիքի ժառանգը հրավեր էր անում և ընդունում շնորհակալություններ մելիքական դահը ժառանգելու առթիվ։

Մելիքների կանայք։ Մելիքները կին էին առնում սովորաբար ուրիշ մելիքների աղջիկներ։ Հազիվ էր պատահում, որ մելիքներն ամուսնանային իրենց հպատակներից մինի աղջկա հետ։ Եվ նույնիսկ ժողովուրդը վատ աչքով էր նայում դրա վրա։ Այսպես, երբ Մելիք-Աբով Գ-ն առաջին կնոջ մահից հետո, որ Մելիք-Ռոստոմի դուստրն էր, այդպիսի մի քայլ արավ, ժողովուրդը նրան մեղադրեց, թե նա ամուսնացավ յուր թ ո վ ու խ չ ու (հավ պահողի) աղջկա հետ, ուստի և սերունդը փչացավ և քաջ որդիներ այլևս չեղան։ Նույնպես հազիվ էր պատահում, որ մելիքին աղջիկ տար իրեն հպատակներից մեկնումեկը։ Շատ-շատ՝ նրա յուզբաշին կարող էր այս բախտին արժանանալ։

Մելիքի կանայք իրենց հպատակներից մտավորապես շատ բարձր չէին, և նրանց նման հեռու էին պահում իրենց տղամարդկանցից. տան մեջ հարսնություն էին անում, թեև ավելի կարճ ժամանակ։ Հագնում էին նույն ժողովրդական տարազը, միայն ավելի թանկագին կտորներից։ Բայց Մելիք-Աբով Գ-ի և Մելիք-Հովսեփ Բ-ի կանայք Թիֆլիսի վրացնակ շորեր ունեին։

Սրանք մի քանի աղախին և ծծմայր ունեին և տան կառավարությամբ չէին զբաղվում, միայն մեսաքսից թեշիկով թել էին մանում, ասեղնագործում, քսակ և այլ ձեռագործներ շինում։ Հասարակ կանանց հետ էլ այնքան մոտ հարաբերություն չունեին, միշտ իրենց բարձր էին

պահում։ Տոներին գյուղացի կանայք խնձոր, մրգեր առած գալիս էին նրանց շնորհավորելու։ Երբ մելիքի կինը անցնում էր, բոլոր կանայք և աղամարդիկ ոտքի էին կանգնում։

Մելիքների որդոց դասատարակությունը աննախանձելի զրության մեջ էր։ Քանի փոքր էին, ծծմոր և աղախինների հսկողության ներքո էին լինում, երբ փոքր-ինչ մեծանում էին՝ տան ծառաներն էին դառնում նրանց դասատարակները, որոնք իրենց հետ զբոսանքի էին տանում, ձի նստել, հրացան ձգել էին սովորեցնում։ Միմիայն Մելիք-Բեգլար Բ-ը դրագետ է եղել, իսկ մյուսները բոլորն էլ անգրագետ են եղել։ Մելիքները եթե շատ որդի էին ունենում, երբեմն կրասերներից մինին ուղարկում էին էջմիածին կամ Գանձասար՝ կարդալու, որ հոգևորական դառնա։ Այսպես Մելիք-Ֆրիդոնը յուր Դավիթ որդուն էջմիածին էր ուղարկել կարդալու, որտեղից նա յուր ուսուցիչ եպիսկոպոսի հետ անցել է Հընդկաստան և այնտեղ մնացել։ Երբեմն էլ պատահում էր, որ մելիքը յուր որդիներից մինին պատանդ էր տալիս կամ պարսից շահին և կամ Շուշվա խանին, ուր նրանք սովորում էին պարսկերեն գրել-կարդալ։ Այսպես, Մելիք-Ֆրիդոնի որդի Շամիր-խան-բեկը Իբրահիմ-խանի մոտ պատանդ է եղել և սովորել պարսկերեն։

Մելիքներից այդ ժամանակներում քաջություն էր պահանջվում, սուր խաղացնել, հրացան ձգել, իսկ այս հմտությունները նրանք կատարելապես ունեին։

Ձ ի ն ա ւ։ Մելիքների զգեստը ժողովրդի զգեստի տարբից չէր տարբերվում, միայն կարվում էր ավելի ճաշակով և ավելի թանկագին կտորներից։ Նրանք ունեին իրենց հատուկ գերձակը, որ ամբողջ Իգիրմիդորդում հայտնի էր լինում։ Այսպես, օրինակ, Մելիք Հովսեփ Բ-ի գերձակը Պարիս գյուղից էր, Մուսի անունով։

Մելիքները միաժամանակ շատ ձեռք զգեստներ չէին ունենում, և լիավուրը (առօրյա) գոնավուրից (տոնական) յուր տարբերով չէր տարբերվում, միայն ավելի հասարակ կտորից էր կարված լինում։ Գոնավուրը՝ ամենալավ շորերը մելիքներն առավելապես հագնում էին պատերազմ գնալիս, ասելով թե՝ կյանքս գնալու է, թող շորերս էլ գնան։

Մելիքների զգեստը բաղկանում էր հետևյալ կտորներից։

Շապիկ.—որ կարում էին նաշուր կոչված կապտավուն կտավից։ Սա կարճ էր լինում, և կուրծքը կոճկվում էր ձախ թևի տակ։

Փոխան.—Կարվում էր սպիտակ կտավից կամ կարմիր ալշից, խոնճանով կապվում էր շապկի տակից։

Շալվար.—Կարվում էր դ ա վ ա գ յ ո ւ լ ի կոչված կտորից, որ պատրաստվում էր ուղտի մազից։ Փողքերը բավական լայն էին լինում։ Վերևի մասում մի քիչ լայնության կարմիր մետաքսյա երկծալ կտոր էր կարվում, որ կոչվում էր լյավա։ Սրա միջով անցնում էր մետաքսից գործած գեղեցիկ փնջերով խոնջանը, որ կապվում էր առջևից։

Շալվարը հագնում էին փոխանի վրայից և փողքերը բաց թողնում, իսկ փոխանի փողկերը դնում էին գուլպի մեջ և վրայից դուրս կապում։ Սա 6—8 սանտիմետր լայնության և կես մետր երկարության երկծալ կտոր էր, որի ծայրին ամրացրած էր ժապավեն։

Դոշլուղ.—Երիտասարդներինը կարմիր, հասակավորներինը՝ մանիշակագույն մետաքսյա կտորից էր կարվում։ Սա մի քառանկյունի կտոր էր, որի ծայրից կարված ժապավենները հանգուցավում էին երկուսը՝ վզի և երկուսը՝ մեջքի վրա։

Զմեռվա դոշլուղը բամբակած էր լինում։ Երիտասարդների դոշլուղը մետաքսյա թելերով ասեղնագործած էր լինում։ Վերջի ժամանակներում դոշլուղ այլևս չէին գործածում, որովհետև արխալուղի կուրծքը բաց չէին թողնում։

Արխալուղ.—Հագնում էին դոշլուղի վրա, կարում էին մետաքսյա կտորից, երիտասարդինը՝ կարմիր, հասակավորներինը՝ մանիշակագույն։ Փեշերը կարճ էր լինում, կուրծքը եռանկյունաձև բաց և պորտի մոտ երեք դայթանի կոճակներով կոճկվում։ Կրծքի եռանկյունաձև բացվածքը տակից ծածկվում էր դոշլուղով։ Վերջերը արխալուղները կարում էին առանց կրծքի բացվածքի, ուստի և դոշլուղ այլևս չէին գործածում։ Արխալուղի աստառի վրայից, եղերքին, մի քիչ նեռսով, այնպես որ չէր երևում, երկու մատ լայնության կտորև քյոպա էր կարվում։

Արխալուղի վրա կապում էին ոսկյա թ ո ղ ք յ ա, իսկ ավելի վաղ՝ գ ո ա ֆ։

Զուխա.—Կարվում էր բրդե կտորից, մեջքի վրա բուղմայով սեղմվում էր և իջնում մինչև ծնկները. կուրծքը եռանկյունաձև բացված էր և գոտկատեղի մոտ երեք դայթանի կոճակով կարող էր կոճկվել, բայց սովորաբար չէին կոճկվում։ Թևքերը կարճ էին։

Քյուլանա.—Սա սամույր մուշտակ էր, քիրմաշալ երեսով, որ ձմեռը հագնում էին արխալուղի վրայից, յուխայի փոխարեն։

Ոտներին հագնում էին՝ գուլպա և չմուշկ, իսկ ձի նստելիս՝ լապչին։

Գլխներին ծածկում էին մուզայի սև երկար փափախ։

Քնելիս գլխները ծածկում էին զենա-բյուլի, որ կարվում էր զանազան սպիտակ մորթուց, նույնպիսի աստառով։

Զեմբեր.—*Մելիքները կրում էին ձախ կողքին կ ե ռ թ ու ր, առջևից՝ դաշույն, ձախ ուսովը ձգում էին շաղ՝ վառոդաման, որից վառոդ էին ածում հրացանի կայծառի մեջ։ Աջ ուսով ձգում էին ղ ա թ ա ր՝ փամփուշտաման, որի մեջ շարում էին վառոդ պարունակող փամփուշտները։*

Մելիքին հետևում էր հրացանակիրը, տանելով յուր հետ 1—3 հրացան մելիքի համար։

Մելիքների կնիքը[42]: *Բոլոր մելիքները, մանավանդ անգրագետները, գործ էին ածել կնիք, որ ներկայացնում էր մի կեռ թուր, շուրջը գրված. Քսի ծառայ մելիք... (այսինքն)։*

Շատ դեպքերում կնիքի փոխարեն գործ են ածել համրիչը։ Այսպես, օրինակ, պսակի գրավոր, կնքած հրաման տալու փոխարեն մելիքը բավականացել է միայն յուր համրիչը տալով, որ ներկայացրել են քահանային, և սա կատարել է պսակը։ Մելիքի ծառաները մելիքի հրամանը կատարելիս նախ ցույց են տվել նրա համրիչը և կամ մի ուրիշ իրը, օրինակ՝ թաշկինակը և այլն։

Ապարանք: *Գյուլիստանի մելիքների պալատը, որ գտնվում է Հոռեկա լեռան ստորոտում, բաղկացած է չորս սենյակներից, մի կամարակապ սրահից և ամբողջապես շինված է սրբատաշ քարով։ Չորս սենյակներն էլ մի շարքում են։ Առաստաղները գմբեթաձև են։ Վերջին երկու սենյակների գմբեթաձև առաստաղները վերջանում են բոլորակ ծակերով։ Այս սենյակների անկյուններում պատերի մեջ շինված են ծալքեր։ Ամբողջ շինությունը զուրկ է պատուհաններից, դռները ցած են և լայն։ Սրահի երկարությունը 40 մետր է և զարդարված է 7 գեղեցիկ սյուներով։*

Սրանց կից շինված են խոհանոցներ և մի քանի մութ սենյակներ և մի փոքրիկ ախոռ, ուր միշտ մի ձի պահվում էր վտանգավոր ժամանակ մելիքին փախցնելու։ Գլխավոր շինության դիմացը կա մի այլ շինություն, որի աջ ծայրում գտնվում է մարտկոցի ավերակը։ Այս շինություններից 25—30 քայլ դեպի հյուսիս-արևմուտք գտնվում է մի այլ շինություն՝ 3 սենյակից բաղկացած, որոնցից երկուսի առջևի պատերը փլած են, երրորդ սենյակի դռան ճակատին արձանագրված է.

«Յիշատակ է Ոհան Բաբուն մերէն Մելիք Թամրազ ՌՃՍ (1701)»։ Թե այս և թե վերոհիշյալ երկու շինությունները շրջապատված են պարիսպներով, որոնցից մի մասը դեռ կանգուն է։

Ամրոցը: *Մելիքներն ունեին իրենց տոհմական ամրոցը, ուր ապաստանում էին վտանգ սպառնալիս և ուր խաղաղ ժամանակ մնում էին մի քանի տասնյակ զինվորներից բաղկացած մի փոքրիկ գունդ։ Այս ամրոցը կոչվում էր Գյուլիստան-բերդ և այժմյան աշխարհագրական բաժանմամբ ընկնում է Ջիվանշիրի գավառում*[43]։

Մելիքների գերեզմանները: *Մելիքներն ունեին տոհմական գերեզմանատուն, որ գտնվում է Հոռեկա վանքի*[44] *հյուսիսային կողմում։ Գերեզմանները միմյանց շատ մոտ են գտնվում և ունեն 2,13 մետր (1 սաժեն) երկարություն, 1 մետր (1 արշ. 6 վերշոկ) լայնության և 0,72—1,5 մետր (1 արշ.—2 արշ.) բարձրության քառանկյունի միակտուր տապանաքարեր, որոնք եղրափակված են գեղեցիկ, նուրբ նշխերով։ Նորագույնների վրա ռելիեֆ դուրս է փորված կեռ թուր՝ Մելիք-Բեկլարյանների տոհմադրոշմը։ Մի քանի ուռենիներ սավեր են սփռում գերեզմանների վրա։*

---

[42] *Բնագրում եղել է կյանքը, հավանաբար վրիպակ է։ Ս. Կ.։*

[43] *Այս բերդի հիմնադրումը ավանդությունը վերագրում է մի աղջկա, որը և իրը արձանագրել է մի քարի վրա, թե ես բանվորներիս համար օրական երկու չվալ աղ դործածելով, կարողացա միայն այս բերդը շինել, ինձանից հետո ուրիշները ի՞նչ պիտի կարողանան շինել։*

Գյուլիստան-բերդը գտնվում է համանուն գյուղից հազիվ չորս վերստ հեռու, մի բարձր, սեպացած քարաժայռի վրա, որի երեք կողմից հոսում է Ինձա-չայը և նրան հրվանդանի դիրք տալիս։ Քարաժայռի երեք կողերը սատարկ ժայռոտ և ուղղահայաց են, այնպես որ ոչ մի ճանապարհ չի կարելի գտնել, իսկ հյուսիսային կողմը փոքր-ինչ թեք է և այստեղից է բարձրանում միակ, նեղ ճանապարհը, որի համար տեղ-տեղ հարկ է եղել ժայռերի կրծքերը տաշել։ Քարաժայռի տափարակ գագաթին կա մի հատ պարիսպ, չորս աշտարակներով ամրապնդված, իսկ հյուսիսային կողմում, մի քիչ ներքևից կա մի երկրորդ պարիսպ, որ գնալով ընդհարվում է մյուս կողերի ժայռերին։ Եվ որովհետև միակ մատչելի փեղը այս կողմն է եղել, ուստի և սրան կից բլրակի վրա կա չորս աշտարականի մի փոքրիկ մարտկոց։ Բերդի մեջ դեռ մինչև այժմ էլ մնում են մի և երկհարկանի տների և մի եկեղեցու ավերակներ։ Հարավային կողմում մի բավական լայն և բարձր ստորերկրյա անցք իջնում է մինչև գետի ափը, որտեղով պաշարման միջոցներին իշով ջուր են կրել։ Բերդի հյուսիսային ստորոտում, մարտկոցի բլրի լանջին կա մի մեծ մեհեանի ավերակ, մոտը՝ խանութների, տների հետքեր։ Բերդի շուրջը, բլրակների վրա կան փոքրիկ գիտանոցներ։

[44] *Հոռեկա վանքը գտնվում է Թալիշ գյուղի արևմտյան կողմում, մի լեռան լանջին, որտեղից երևում են նույն, Ջիվանշիր գավառի դաշտերը, Կուր և Թարթառ գետերը։ Վանքը մի փոքրիկ, քառանկյունի, թաղակապ շինություն է, հասարակ քարով շինված և ունի փոքր-ինչ ավելի մեծ գավիթ։ Շենքը շատ հասարակ է, միայն պատերի մեջ կան գեղեցիկ, հին տապանաքարեր, որ իրը քար գործ է ածված։ Գավթի մեջ կան շատ գերեզմաններ։ Վանքը շինել է ոմն տեր Հովհաննես՝ ՉԻԸ (1279) թվին, իսկ գավիթը՝ հինգ տարի հետո։*

Վանքի արևմտյան կողմում կան միարանների խցերի ավերակներ։

Այժմ վանքը բոլորովին անխնամ է թողված։

Հին տապանագրերը եղծված են և շատ դժվարությամբ են կարդացվում։ Ես կարողացա կարդալ հետևյալները.

Այս է տապան Մելիք Բակլարի Ռձկի,
Այս է տապան Հուռումսին,
Որ է կողակից Մելիք Ապովին թվ. ՌՄՁ թ.
Այս է տապան մելիք Փրիդոնին
Ժառանգ մելիք Բեկլարեանին,
Անպատմելի է մարդոց պատ զմահին
Քանզի զայսպիսիս սակաւ պատահին։
Ոչ Այ հրամանի եւ ոչ ըստ կամաց
Թողի աշխարհքս քառասուն ամաց
ի 6 փետրուարի 1808 ամի Փրկչին։
Այս է տապան մելիք Յովսէփին,
Որ է որդի մելիք Փրիդոնին,
Տիրապետողն աշխարհային,
Ղարաբաղու մեծ իշխանին։
Մեծ իշխան էի և յոյժ փառաւոր
Ժողովուրդս բազում էր շատ ծառայ,
Բազումս գործող և աշխատաւոր
Ունայն էր զամէն աշխարհս անցաւոր
Թվին 1843 յունուարի 20 ՌՄՂԲ։

Մելիքների ժառանգները. Մելիք-Բեկլարյանները թողել են բավական թվով ժառանգներ։ Սրանցից մի քանիսը շարունակում են ապրել իրենց տոհմական գյուղերում և կառավարել իրենց կալվածները, մյուսները վերաբնակել են Գանձակ, Թիֆլիս, Կալկաթա և այլ քաղաքներ, ուր կամ արքունի ծառայության են մտած և կամ վարում են մասնավոր պաշտոններ։

Գյուղում մնացողներն ընդհանրապես, և սրանցից զարգացածները մասնավորապես[45], թեև պաշտոնապես զրկված են նախնի մելիքական ընդարձակ իրավունքներից, բայց և այնպես, օգտվում են դրեթե այդ միևնույն իրավունքներով։ Այսպես, թեև ոչ տիրապետող, բայց որպես հողատեր նրանք, այս բեկերը, տասնորդ են վերցնում երկրի բոլոր բերքերից և երեսնական կոպեկ ստանում այն ամեն դեսյատին հողի համար, որ կառավարության միջամտությամբ իրենց կալվածքներից բաշխված է գյուղացիներին։ Երկրորդ՝ թեպետ ոչ դատավոր, բայց որպեսզի գյուղի ամենաազդեցիկ և հեղինակավոր մարդ, դատ են կտրում, կամ գյուղական դատավորների և տանուտիրոջ վրա ճնշում գործելով, դատը իրենց կամեցածի պես վճռել տալիս։ Գյուղացիները այս բեկերին գյուղական պաշտոնյաներից ավելի խելացի և ավելի հեղինակավոր անձնավորություն համարելով, սիրով նրանց են դիմում և խնդրում վերջացնել իրենց դատը։ Պատահում են դեպքեր, երբ բեկի ախոռը մի երկու օր իբրև բանտ է ծառայում հանցավորներին։ Երրորդ՝ թեպետ այս բեկերը գյուղական պաշտոնյաներին ոչ նշանակող և ոչ հաստատող են, սակայն նրանց ընտրության և հաստատության խնդրում բավական մեծ դեր են խաղում և հաստատությունից հետո էլ միշտ կախման դրության մեջ պահում նրանց։ Եվ այս՝ որովհետև այդ պաշտոնյաները նախ որ միշտ քաղցարցնում են իրենց բերանները բեկերի տանը, նրանց հետ ուտելով խմելով, երկրորդ՝ միշտ հույս ունեն նրանցից շահվելու, երրորդ՝ գիտեն, որ դրանք ոստիկանի կամ գավառապետի հետ մոտիկ հարաբերություն ունենալով, կարող են վնասել իրենց և կամ հայտնել իրենց կատարած զեղծումների մասին։ Չորրորդ՝ նույն կախման դրության մեջ է և քահանան, որ պաշտոն է մատուցանում իրենց՝ բեկերի և կամ սրանց նախնյաց շինած եկեղեցում։ Սրա ընարությունն էլ եթե ոչ բոլորովին, գոնե մեծ մասամբ կախված է բեկերից. բավական է, որ սրանք մի քանի անգամ գովեն քահանացուին, և ժողովուրդն անմիջապես նրան կընտրե, առաջնորդն էլ չի մերժի բեկերի միջամտությունը, որովհետև շատ բաներում նրանք կարող են օգտավետ լինել թե եկեղեցիներ շինելիս կամ վերանորոգելիս, կամ թե ժողովրդական մի որևէ աղետի ժամանակ։

Բեկերը մեծ պատիվ և համակրանք են վայելում նաև ժողովրդից։ Նրանց անցնելիս բոլորը՝ կին թե տղամարդ, ծեր թե երիտասարդ, նըստած տեղերից ոտքի են կանգնում և շատ խորը գլուխ տալիս։ Նավասարդին և մյուս տոներին խնձորներ, գառներ առած գալիս են բեկերի տունը շնորհավորելու։ Հարսանիքներին հրավիրում են նրանց և առաջին տեղը, առաջին բաժինը նրանց տալիս և առաջին բաժակը նրանց կենացին նվիրում։ Դեռ մինչև այժմ էլ ժողովուրդը պահպանում է մելիքների ժամանակ գործածված դարձվածքը՝ «մելիքի մին օրը հազար», միայն մելիքի փոխարեն ասում էին «բեկի»։

Սակայն պետք է ասել, որ բեկերը նախկին մելիքների նման որոշ պարտականություն, որոշ զբաղմունք չունենալով, իրենց կյանքը անց են կացնում անգործության մեջ, ուստի և պարապությունից ձանձրացած, կամաց-կամաց դիմում են գնալի քաղաք, ստանձնելու մի որևէ

[45] Ինչպես, օրինակ, Սարգիս Մելիք-Բեկլարյանը, որ ավարտել է Մոսկվայի Պետերբուրգյան ակադեմիան, որա որդին՝ Դավիթը, որ գյուղատնտեսություն է ուսել արտասահմանում։ Նշանավոր է նույնպես սրա դուստրը, որ բժշկուհի է։

պաշտոն։ Այս պարապությունը նրանց բարոյական անկման է տանում, որ ցոլանում է և ժողովրդի վրա։ Բեկերը հետզհետե կորցնում են նախկին տիրապետողների առանձնաշնորհումները և դառնում սոսկ կալվածատերեր, ուստի և ժողովուրդը նրանց վրա սկսում է նայել ոչ որպես յուր տիրոջ, կառավարչի և պահպանողի, այլ որպես մոսկ կեղեքիչների, որ տասանորդ են վերցնում, առանց մի որևէ ծառայություն մատուցանելու։ Ներկայացված պատկերը մի տեսարան է բեկերի կյանքից. այրի կինը յուր աղջկա ձեռին մի ավել և մի հավ տված, բերում է բեկին նվեր և խնդրում գալ տասանորդը ստանալու։

Մելիք-Շահնազարյաններ. *Մելիք-Շահնազարյանները տիրել են Մսկանապատ, Միրզիկ, Մուռութ և Բրաջուր գյուղերին։ Սրանց նախնայրը եղել է Մելիք Նազարը, որ մելիքություն է ստացել Շահ-Աբասից 1691 թ. և վերակոչվել Շահ-Նազար, այսինքն՝ Շահի-աչք, որովհետև շահին շատ սիրելի է եղել։*

Մելիք-Շահնազարին հաջորդել են, ինչպես երևում է տապանագրերից, Մելիք-Հովսեփ Ա-ն, Մելիք-Յավրի (վախճ. 1720), Մելիք-Յուսուփ Բ-ն (վախճ. 1730), Մելիք-Գաբրիել (վախճ. 1780) և Մելիք-Յուսուփ Գ. (վախճ. 1826), որի եղբայրն էր Քոչար-բեկ (վախճ. 1740) և որդիներն էին Բեկլար-բեկ և Յավրի-բեկ։ Միայն Մելիք-Յուսուփ Գ-ի մասին գյուղի ծերունիները և ժառանգները կարողանում են մի քանի անգամ պատմել, մյուսների մասին ոչ մի տեղեկություն չկա։

Մելիք-Յուսուփը ունեցել է մի աղջիկ, որի գեղեցկության մասին Ղարանց Պետին պատմել է Ջավադ-խանին։ Սա էլ ցանկացել է նրան ևս ունենալ յուր կանանոցում, ուստի և մի օր վեր է կացել և եկել Ոսկանապատ, իբր քեֆ անելու։ Մելիք-Յուսուփը մի մատակ գոմեշ յուր ձագով նվեր է ուղարկել նրան և ապա գնացել տեսության։

Ջավադ-խանը սիրով ընդունել է նրան և ասել. «Անասի սանա, բալասի մանա» (մայրը քեզ, որդին ինձ)։

Մելիք-Յուսուփը, կարծելով, թե այդ խոսքերը նվեր ուղարկած գոմեշի և նրա ձագին են վերաբերում, պատասխանել է.

«Անասի դա սանա, բալասի դա» (մայրն էլ քեզ, որդին էլ)։

Ջավադ-խանը շատ զոհ է մնացել և լավ քեֆ արել, մտադրվելով շուտով առնել աղջկան և վերադառնալ, սակայն շուտով կանչվում է Գանձակ, որովհետև ռուսների հարձակման մասին լուրեր են եկած եղել։ Այս միջոցին Ջավադ-խանի մտերիմներից մեկը՝ Իսմայիլ-բեկը հայտնում է Մելիք-Յուսուփին, թե Ջավադ-խանը եկել էր նրա աղջիկը

տանելու, և նրա վերոհիշյալ խոսքերը վերաբերում էին նրա աղջկան և ոչ թե գոմեշի ձագին։

Մելիք-Յուսուփը սաստիկ վրդովվում է և տեսնելով, որ ոչ մի ուրիշ միջոց չկա, վճռում է ծածկաբար փախչել յուր գերդաստանով։ Բայց նախ և առաջ պետք էր ազատվել խանի լրտեսից՝ Ղարանց Պետից։ Ուստի Մելիք-Յուսուփի եղբայրը՝ Քոչար-բեկը, Սարգիս և Հայրապետ Միրզայանների հետ, տանում են Պետին Սուրուն-խաչերի մոտերքը գրոսնելու։ Այստեղ հերթով ընկնում են աղբյուրի վրա ջուր խմելու, և երբ հերթը Պետին է հասնում, դաշույնների հարվածներով սպանում են նրան։

Հետևյալ օրը Մելիք-Յուսուփը հրամայում է բոլոր գյուղացիներին, կանանց և յոթ տարեկանից բարձր երեխաների հետ հավաքվել եկեղեցում աղոթելու, որ աստված հաջողություն տա սկսված պատերազմում։ Մի քանի ոչխար էլ մատաղ է անում։ Երբ բոլոր բնակիչները հավաքվում են եկեղեցում, «Սուրբ-սուրբի» ժամանակ Մելիք-Յուսուփը Քարիտ (Մարգարիտ) աքերը (քույրը) դուրս է կանչում եկեղեցուց, փակում եկեղեցու դուռը, բանալին տալիս նրան և պատվիրում դուռը չբանալ, մինչև որ արեգակը այսինչ տեղը չհասնի։ Հետո իրենց բոլոր ամեցիներին ձիով ճանապարհ է ձգում դեպի Շուշի, իսկ ինքը մի երկու ժամ դեռ շրջում է գյուղի շուրջը, որպեսզի ոչ ոք չկարողանա գյուղից դուրս գալ և իրենց փախուստի մասին իմաց տալ Ջավադ-խանին։

Ապա ինքն էլ գնում է միանալու յուր գերդաստանին։ Ճանապարհին տեսնում է յուր հարսի յոթ շաբաթական երեխային (Նարիմանբեկին) վայր ընկած, վերցնում է և հետը տանում, հանձնում մորը, որ լոելյայն արտասվում էր։ Խեղճ մայրը մյուսներից ետ մնացած լինելով, վայր էր ձգել յուր գրկի երեխային և «հարսնություն անելով» չէր համարձակվել այդ ասելու ոչ տեգրին և ոչ սկեսրոջը։

Երբ երեկոյին մոտ Քարիտ աքերը բաց է անում եկեղեցու դուռը, անմիջապես մի քանի լրտեսներ շտապում են Գանձակ և Մելիք-Յուսուփի փախստյան լուրը հասցնում Ջավադ-խանին։ Սա էլ իսկույն Իսմայիլ-բեկին ուղարկում է նրանց ետևից, հրամայելով բոլոր ազամարդկանց կոտորել, իսկ կանանց բերել Գանձակ։

Իսմայիլ-բեկը մի խումբ զինվորներով գալիս է Աղբյուրփիի մոտ և այստեղ գիշերում, մտածելով, որ մեղք է մի աղջկա համար այնքան արյուն թափել, լավ է՝ թող փախչեն-գնան։ Հետևյալ օրն էլ մի քիչ սրոնում է և ապա վերադառնում։

Մելիք-Յուսուփը հասնում է Շուշի և այստեղ մնում, մինչև որ ռուսները առնում են Գանձակը, սպանում Ջավադ-խանին, և այս ժամանակ միայն կրկին վերադառնում է Ոսկանապատ։

Մելիք-Շահնազարյանների ժառանգները այժմ էլ ապրում են Ոսկանապատ գյուղում և տիրապետում են հողերի մի մասին։ Սրանցից ամենամեծը Քոչար-բեկի ավագ թոռ Մեժլում-բեկն է, որ Մելիք-Հովսեփ Գ-ի կյանքից պատմեց վերոհիշյալ անցքը, որ հաստատեցին և գյուղի ծերունիները։

Մելիք-Աստամյաններ։ Այս տոհմի նախնիքը ընակվելիս են եղել Լոռի գավառում, ուր և ունեցել են ժառանգական կալվածներ։ Այս գերդաստանի անդամներից մինը մտել է նախ վրաց արքունիքը ծառայելու և ապա դիմել է Պարսից Շահ-Աբասին և նրանից խանություն ստացել։ Ավանդությունը այս խանին Թավադ-խան անունն է տալիս, ինչպես հասարակ ժողովուրդը սովորություն ունի վրաց բարձր ծառայողներին Թավադ անվանել։

Թավադ-խանի որդին եղել է Մելիք-Առստամ, սրանը՝ Մելիք-Այտին, որոնց մասին նույնպես ոչինչ հայտնի չէ։ Մելիք-Այտինի որդին՝ Մելիք-Առստամը Ջիվանշիր գավառի Գյուլ-Յաթաղ գյուղի մելիք դառնալով, Պարսկաստանից գաղթել է այդտեղ և ամուսնացել կսապատցի Ապրես-աղայի Վարդխաթուն աղջկա հետ, որի վրա Իբրահիմ-խանը աչք է ունեցել։

Մելիք-Առստամի մեծ եղբայր Միսայել-բեկը, գրավվելով Իբրահիմ-խանի խոստումից, թե Ջրաբերդի մելիքությունն իրեն կտա, փորձում է սպանել Ջրաբերդի Մելիք-Մեժլումին, սակայն բռնվելով, ինքը գլխատվում է նրանից։ Երբ Մելիք-Մեժլումը Հերակլի հետ մեկնում է Թիֆլիս, Իբրահիմ-խանը Մելիք-Առստամին Ջրաբերդի մելիք է նշանակում, միանգամայն իրեն հլու հպատակ դարձնելով։ Բայց երբ Իբրահիմ-խանը նրա կնոջը պատանդի անունով տանում է յուր հարեմը, մելիքը վշտացած դիմում է Նուխիի Սելիմ-խանի՝ Իբրահիմ-խանի թշնամու մոտ։ Սա սիրով ընդունում է նրան և Դաշ-բուլաղ գյուղը նրան ընծայում։ Այստեղից Մելիք-Առստամը շարունակ հարձակումներ է գործում Շուշի քերդի վրա և բավական վնասներ պատճառում։

Մի ժամանակից հետո Մելիք-Առստամը Ղարաբաղից և Նուխուց մոտ 300 ընտանիք առնելով գաղթում է Գանձակի խանությունը, ուր Ջավադ-խանը (1756—1801) սիրով ընդունում է նրան և Մլղնաբերդից մինչև Յոթն-աղբյուր տեղը նվիրում նրան։ Այստեղ էին գտնվում Հանգշափոր, Քարատակ, Վերին և Ներքին Ղութուլները, որ այժմ ավերակ են։

Մելիք-Առստամը ապրում է Գանձակում և շատ սիրելի է լինում Ջավադ-խանին։ Այս բանի վրա նախանձելով խանի մյուս շրջապատողները սպանում են նրան 1794 թ.[46]։

1800 թվականին Մելիք-Առստամի ժողովուրդը լեզգիների հարձակումից ստիպված հեռանում է Մելիք-Բեկլարյան Աբով Գ-ին, որ Մելիք-Առստամի փեսան էր և գաղթում է Բոլնիս, իսկ մի ուրիշ մաս՝ Թիֆլիս, ուր Հավլաբարի Շամքորեցոց թաղն է կազմում։

Դեռ Բոլնիսում եղած ժամանակ Մելիք-Առստամի որդի Ստեփանաղան վախճանվում է, իսկ սրա որդի Ապրես-աղան յուր ժողովրդի մի մասով վերադառնում է Բարսում գյուղը և այնտեղ բնակություն հաստատելով, յուր տոհմի կալվածքներին տիրում։ Այժմ այս տոհմի ժառանգները նույնպես ապրում են այս գյուղում և ունին բավական կալվածքներ։

Մելիք-Մնացականյաններ. Մելիքական այս տոհմը իշխել է Գետաշեն և սրա շրջակա գյուղերում։ Դեռ մինչև այժմ էլ կանգուն է սրանց մելիքական ապարանքը Գետաշենում, և դեռ կենդանի է վերջին մելիքի թոռ Թեմուր-Բեկը։ Նա եղա այս յոթանասնամյա ծերունու մոտ, որ այժմ բնակվում է Գանձակում, եղա նաև մյուս ժառանգների մոտ՝ Գետաշենում, հարց ու փորձ արի նաև ուրիշ ծերունիների, սակայն ոչ մի հաստատուն բան չկարողացա իմանալ սրանց հին անցյալի մասին։ Չկա նաև ոչ մի գրավոր փաստաթուղթ։ Այս միայն հայտնի է, որ այս տոհմի վերջին մելիքը եղել է Մելիք-Սարգիս Բ-ն, մի քաջ անձնավորություն, որ մասնակցել է Ջավադ-խանի պատերազմներին, նախ լեզգիների և ապա ռուսների դեմ։

---

[46] Այս մելիքի մարմինն ամփոփված է Գանձակի ս. Հովհաննես-Մկրտիչ մայր եկեղեցու գավթի հարավային կողմում, որի տապանագիրն է՝ «Անմոռաց յայս տապան բաց անուն Հանգչի մարմին Մելիք Առստամի։ Յազգէն Բագրատունի Հայկազանց տոհմի։ Տիրող Բարսում, Գանձակ նահանգի, ծնեալ 1722, վախճանեալ 1794 ամիս։

ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ[1]

Սահմաններ. Գանձակի գավառն ընկնում է 41°9′ և 40°1′ հյուսիսային լայնության և 63°7′ և 64°60′ արևելյան երկարության մեջ։ Մոտավորապես (11,519) կազմում է Գանձակի և Ջիվանշիրի գավառների հարավային և հարավարևելյան սահմանների ընդհարման վերջին կետը։ Հիշյալ գավառների մեջ սահման համարվում է Ինջաչայը, որի ակունքներից հին փոստային ճանապարհից ներքև ձգվում է պայմանական սահմանային գիծը, Ջիվանշիրի անապատով դեպի հյուսիս-արևելք մինչև Կուր գետը, Արեշի գավառի Քյարխուն գյուղի հանդեպ և Կուրի վրա ձգված երկաթուղու կամրջից ներքև։

Գանձակի և Արեշի գավառների մեջ արևելյան և հյուսիսարևելյան կողմից սահման ծառայում է Կուր գետը մինչև Արեշի գավառի Քինչիլի գյուղը, որ ընկնում է գետի ձախ ափին։ Այս գետի ձախ ափով Գանձակի գավառի սահմանը ձգվում է այս գետի երկարությամբ հյուսիս-արևելքից մինչև Կոնչաշին լեռը, որտեղից, ընդհարվելով Զաքաթալայի շրջանի հետ, անցնում է նույն ուղղությամբ փոքրիկ շղթայով մինչև Մուրադա (1738) լեռը, որտեղ վերջանում է Զաքաթալայի շրջանի սահմանը, և սկսվում է Ղազախի գավառը։ Այստեղ Գանձակի գավառի սահմանը ընդունելով հյուսիս-արևմտյան ուղղություն, կտրում է Ալազան (Կանիգ) գետը, Ջալան հովիտը, Իոր (Կարբի) գետը, հասնում է մինչև Փալան-Թոքան ոչ այնքան բարձր լեռնաշղթան, որի վրայով բարձրանում է հյուսիսարևելյան ուղղությամբ համանուն լեռից (1193) փոքրինչ բարձր, որտեղից արդեն իջնում է հարավարևմտյան ուղղությամբ և ընդհարվելով Ղազախի գավառի հետ, Ջեյրան-չոլ հովիտով մինչև Կուր գետը, կտրում է նրան Գանձակի գավառի Դյուզարլի գյուղի հանդեպ։ Գանձակի գավառի արևմտյան սահմանը կազմում է Զակամ գետը, որը բաժանում է այն Ղազախի շրջանից մինչև Խաչ-յալ լեռան անտառապատ ճյուղավորությունը, ապա այս գավառների միջև սահմանը ձգվում է Զակամ գետի ձախ ափի ուղղությամբ Ջինգիլդաղ լեռը, որը և ծառայում է իբր Գանձակի, Ղազախի և Նոր Բայազետի գավառների վերջին սահմանային կետ։

Գանձակի գավառը Նոր Բայազետից անջատող սահմանը Շահ-Դաղից ձգվում է Հայ-Գանձակյան (Армяно-Гянджинская) լեռնաշղթայի ուղղությամբ հարավ-արևմուտք, մինչև Սատանա-խաչ լեռը, որտեղից նա ուղղվում է արևելք և ձգվում է նույն լեռնաշղթայով մինչև Գինայդաղ (11057) լեռը, որի մյուս կողմում մեր նկարագրած գավառը ընդհարվում է Ջիվանշիրի գավառի հետ հարավային կողմից մինչև Մոտավ-լեռը, այսինքն մինչև հարավարևելյան վերջին կետը։

Այս սահմանների մեջ Գանձակի գավառը բռնում է 8398,2 ք. վերստ կամ 9557,3 ք. կիլոմետր, կամ 173,75 գերմ. մղոն, կամ 874840 դեսյատին տարածություն[2]։ Այս թիվը ցույց է տալիս, որ Գանձակի գավառը Անդրկովկասի գավառներից մեծագույնն է, բացի Բաքվի նահանգի Ջևատու գավառը (203,31 ք. մղոն)։

Գանձակի գավառի մակերևույթը ներկայացնում է երկու, միմյանց հակադրակար գոտիներ. հարավարևմտյանը՝ լեռնային, հյուսիսարևելյանը՝ հարթ։ Լեռնային գոտին, որ հյուսիսարևելյան կողմում լայն է, նեղանում է հյուսիս-արևմուտքում։ Գանձակի հարթությունը միայն հյուսիս-արևմուտքում, Զակամ գետից մինչև Ղոչ-Ղարա գյուղը, հենվում է Կուր գետի աջ ափին, ապա հարավ-արևելք ուղղվելով, Բող լեռնաշղթայով բաժանվում է Կուրի նեղ հարթությունից, որի հետ հաղորդակցվում է միայն Գանձակ գետի նեղ ձորով։

Բող լեռնաշղթան սկսվում է Կուր գետի ափից, Ղոչ-Ղարա-չայի (Կուրի վտակ) ակունքի մոտ և հարավարևելյան ուղղությունը պահ-

[1] Գանձակի գավառի տեղագրությունը գրելիս բացի իմ ճանապարհորդական նկատողություններից, ի նկատ առյալ նաև Բանանց գյուղի արժ. Տեր-Երվանդ քահանայի, գանձակեցի Հակոբ վարժապետ Տեր-Հարությունյանի և Կար. Ղազարյանի ձեռագիր դիտողությունները։ Մի բանի արձանագրություններ էլ ինձ տվեց պ. Աղ. Քալանթարը։ Խորին շնորհակալություն հայտնելով վերոհիշյալ անձանց, հարկավոր եմ համարում հայտնել, որ ճանապարհորդությանս միջոցին իրը ուղեցույց ունեցել եմ դեր. Բարխուդարյանի «Արցախ»-ը և Հասան-Ջալալյանի «Ճանապարհորդությունը»։ Օգտվել եմ նաև Абелов Н. А. „Экономическое положение государственных крестьян Елисаветопольского уезда" (МИЭБГЗК, VII) աշխատությունից և ուրիշ երկերից, որոնք իրենց տեղերում հիշել եմ։

[2] Приложения к VIII книжке «Записок Кавказ. отд. имп. рус. геогр. общ.».

պանելով, ձգվում է Կուր գետի աջ ափով, նկարագրված գավառի սահմաններում մինչև Մինգեչաուրյան անցքը. Բոզին հանդեպ, Կուրի և Ալազանի ձախ ափին գնում է նույն հարավարևելյան ուղղությամբ Մուրադայան լեռնաշղթան, իսկ սրան զուգընթաց՝ Իոր գետի աջ ափով, Փալան-Թոքանի լեռնաշղթան, որը մոտենում է Կուր գետի ձախ ափին, Բոզ լեռնաշղթայի սկզբնավորության մոտ, կարծես նրա շարունակությունը կազմելով։

Վերոհիշյալ լեռնաշղթաների մեջ տարածված հարթությունը, որ ընկնում է Կուր գետի երկու ափերին, ինչպես Իոր (Կանիգ) և Ալազանի (Կարբի) նրանց միանալու և Կուրի մեջ թափվելու տեղում, անվանվում է սամուխ։ Սամուխի տարածությունը 75 000 դեսյատինից ավելի է։

Փալան-Թոքան լեռնաշղթայից հյուսիս-արևմուտք, Կուրի ձախ ափին, տարածվում է Ջեյրան-չոլ հովիտը մինչև Ղազախի գավառի սահմանը։ Կուրի կողմից հովիտը եզրափակում են ոչ այնքան բարձր լեռնաշղթաներ, որոնք համարյա զուգընթաց են Իորի ընթացքին և ուղիղ իջնում են դեպի նա՝ Գանձակի հարթության Կուրին մոտիկ ափի հանդեպ։

Լեռներ. Գանձակի գավառի հարավային և հարավարևմտյան սահմաններով, համարյա 125 վերստ երկարությամբ ձգվում է Հայ-Գանձակյան լեռնաշղթան, Շահ-դաղից մինչև Մռավ լեռը։ Այս լեռնաշղթան ծառայում է որպես ջրաբաշխ այն գետերի, որոնք թափվում են մի կողմից Կուր գետը, մյուս կողմից ուղղվում են դեպի Սևանա լիճը։ Այս լեռնաշղթան, Գինալ լեռից այն կողմը, ծառայում է որպես ջրաբաշխ Ղարաբաղի (Թարթառ յուր վտակներով) և Գանձակի գետերի (Կյուրակչայ, Գանձակ-գետ և այլն)։

Հայ-Գանձակյան լեռնաշղթայի միջին բարձրությունը հասնում է 9600։ Նրա գագաթների մեջ նշանավոր են՝ Ղարա-Արխաշ, (10 081), Սատանախաչ, Օղրուջա (10936), Գինալդաղ (11057), Բենյովշալի, Բազիրկյան, Ղամիշ (12263) և Մռավ (11219)։

Հայ-Գանձակյան լեռնաշղթայից հյուսիսարևելյան ուղղությամբ գնում են համարյա զուգահեռական շարքերով և շատ կողմնակի ճյուղավորություններով մանր լեռնաշղթաներ, որոնք միմյանցից բաժանվում են Կուրակչայի, Գանձակ-գետի, Ղոչղարա-գետի, Շամքոր-գետի, Ջակիր-չայի և Ջակամի խոր ձորերով։ Գլխավոր լեռնաշղթայից հեռանալով, ճյուղերը հետզհետե ցածրանում են և հետո միախառնվելով առաջացնում Գանձակի հարթությունը։

Գլխավոր լեռնաշղթային մոտիկ ճյուղերն ունեն նշանավոր գագաթներ, ինչպես են Ղոչղարա (Кошкар, 11 035), Օղրուջա (10 936), Հասան նանա, Քյափաս և ուրիշներ։ Ընդհակառակը, Բոզի, Մուրադայի և Փալան-Թոքանի շղթաներում, որոնց մասին հիշեցինք վերևում, առանձին կանգնած լեռները շատ աննշան բարձրության են հասնում, այսպես՝ Բոզի շղթայում՝ Կախադաղ (1284) և Ղարանլու (1733), Մուրադայինում՝ Մուրադա (1738) և Կոնչաշին (1440), Փալան-Թոքանիում՝ երեք համանուն գագաթներ՝ 1480, 1193 և 1219 բարձրության։

Հետևյալ բարձրությունների շարքը կարող է փոքր-ինչ գաղափար տալ գավառի ծովի մակերևույթի համեմատությամբ ունեցած դրության մասին. ճյուղավորությունների վերի մասում՝ Շաքար-Բեկ (7520), Ղզել-դաղ (7462), Օքյուզ-դաղ (6774) և Մասխիա (6599), ճյուղավորությունների միջին մասում՝ Բաղաքլանդ (4973) և Ղարաղ-Թափա (3592). ստորոտում՝ Ելենենդորֆ (2536), Սարվաղ-Թափա (2029), Գեշմալիք (2018) և Ուչ-Գյուլ (1963). և դաշտավայրում՝ Ելիզավետպոլ՝ (1449), Դյուզարլու (1626), Շամքոր (1051, Դալիլար (991), Ջյուլ-Թափա (314)։

Ամբողջ լեռնային գոտին թեքվում է հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք, իսկ հարթությունը երկու թեքվածք ունի. մինը դեպի Կուր գետը, հյուսիսարևելյան ուղղությամբ, այն գետերի ընթացքով, որ գուրս են գալիս լեռնային կիրճերից, և մյուսը՝ իրեն, Կուրի ընթացքով, հարավարևելյան ուղղությամբ։

Գլխավոր լեռնաշղթայի Գանձակին նայող կողմը ներկայացնում է անտառից զուրկ ալպյան երկիր։ Նա միանում է նույնպես անտառից զուրկ կողմնակի ճյուղավորությունների վերի մասի հետ և նրանց հետ միասին կազմում ընդարձակ ամառային արոտատեղիներ։

Անտառները ծածկում են լեռնաշղթաների և նրանց ճյուղավորությունների լանջերը, գետերի և գետակների հովիտները, ինչպես և Կուրի գետափը։

Բոզի, Փալան-Թոքանի և Մուրադայի շղթաները, անտառային բուսականությունից զրկված, իրենց ընդհարվող հարթությունների հետ միասին ներկայացնում են ընդարձակ, ձմեռային արոտատեղիներ։

Լեռների և տափարակների հարթաբանական (геогностическое) կազմությունը. Հայ-Գանձակյան լեռները կազմված են գրանիտի և պորֆիրի տեսակներից, մասնավորապես հյուսիսային կողերի կազմության մեջ մեծ դեր են խաղում կավճային

կազմության կրաքարերը։ Լեռների ստորոտը կազմված է նեպտունապլուտոնական ծագում ունեցող համախմբումներից (конгломерат), ամուր կրաքարից, կավային և կրաավազային մարնայից (мергелий)։ Բլուրների այն շարքերը, որոնցով Կուրի մոտ վերջանում են լեռների ստորոտները, կազմվել են կավճային փխրուն զանգվածից և կրաքարից։ Կուր գետի հովիտը և գետափնյա բարձրությունները վերաբերում են երրորդական (третичный) կարգի միաժամանակային (миоценовый) կազմության։ Խճային, ավազային և կավային շերտերը, որոնք կազմում են հովիտների ներքին խավը, ցույց են տալիս, որ չորրորդական կազմության շրջանին են պատկանում։

Գետեր. Թեև ամենամեծ, բայց ոռոգման համար բոլորովին անհարմար գետը Կուրն է, որ մտնում է այս գավառի սահմանը, ընդունում Ջակամ վտակը և հասնելով մոտ 125 վերստ, Արեշի գավառի Քյարիսուն գյուղի մոտ դուրս է գալիս նկարագրած գավառի սահմանից։ Կուրը այս մասում հոսում է շատ խոր ափերով, այնպես որ բնակիչները չեն կարողանում նրանից ոռոգման համար ջուր վերցնել։ Միայն Ալիֆաուտ գյուղից մինչև Կարակուլա գյուղը տարածվող նեղ գետափնյա շերտը գարնանային հեղեղների ժամանակ ծածկվում է ջրով, որով և այն ավելի հարմար է դառնում հացահատիկ ցանելու և բանջարանոցներ շինելու։

Ինձա-չայ. սկիզբն է առնում Մռավ լեռան հարավարևելյան կողմից և հոսելով Գյուլիստանի լեռնոտ երկրով, մտնում է անապատ, Ջիվանշիրի Բորսունլու գյուղի մոտ։ Սա կազմում է Գանձակի և Ջիվանշիրի գավառների սահմանը, և նրա ջրից առավելապես օգտվում է Ջիվանշիրի գավառը։

Ղարա-չայ. Սկիզբն է առնում Մռավ լեռան հյուսիսարևմտյան և Գյամիշ լեռան հարավարևմտյան կողերից, հոսելով լեռնային նեղ ձորով, ներքին Աղճաքենտ գյուղի մոտ նա երկու ճյուղի է բաժանվում՝ արևմտյան, որ կոչվում է Գյորան-չայ և արևելյան, որ պահում է նույն՝ Ղարաչայ անունը։ Այս երկու ճյուղերը միայն ջրառատ ժամանակ հասնում են Քյոռ-չային, որ թափվում է Կուր գետի մեջ։

Կուրակ-գետ. սահմանագիծ է Թիֆլիսի և Արցախի հայոց հոգևոր առաջնորդությանց, սկիզբ է առնում Քյափաս, Բագիրկյան և Բանյովշալի լեռների լանջերից, հոսելով անտառապատ ձորով, Գետաշեն գյուղից ներքև աջ կողմից ընդունում է բավական մեծ վտակ՝ Բալա-Կուրակը, որ սկիզբն է առնում Ղամիշ լեռան հյուսիսարևմտյան լանջից, ապա ուղղում է դեպի Ղարասուն, որ միանում է Քյոր-չայի հետ։

Գանձակ-գետ կամ Ոսկանապատի գետ. սկիզբ է առնում Արթինասարից կամ Ղոշղարա լեռան հարավարևելյան լանջից և ընդունելով երկու վտակներ, որ սկիզբ են առնում Սարյալ և Բանյովշալի լեռներից, անցնում է Ելենենդորֆ գերմանական գաղութից և Գանձակ քաղաքից և բանալով յուր համար մի նեղ անցք Բոզ լեռնաշղթայի մեջ, Ղարասախկալ գյուղի մոտ թափվում է Կուրի մեջ։

Արքենա-չուր կամ Բանանց-գետ և կամ Ղոշղարա-չայ. սկիզբ է առնում Արխաշան սարից և ընդունելով Խաչ-բուլաղ վտակը, անցնում է Քարհատ և Բանանց գյուղերով, և Բոլլի գյուղի մոտ միանալով Զոլդար-չայ վտակին, թափվում է Կուրի մեջ Ղարաջամիրի ձմեռանոցի մոտ։

Շամքոր. գավառիս ամենաերկար գետն է և կազմվում է գլխավոր լեռնաշղթայի Գինալ լեռից մինչև Ղարա-արխաշ և այս լեռնաշղթայի ճյուղերի՝ Ղոշղարա և Արխաշան լեռներից մինչև Օղրուջա և Գիլիխ լեռների լանջերից բխող բազմաթիվ վտակներից։ Այս վտակները, կրելով առանձին-առանձին անուններ, միանում են երկու մեծ ճյուղերում և Գետարեկի Ղոշա-քյորփիի մոտ միախառնվելով, ստանում են Շամքոր անունը, և նեղ ձորով ուղղվում է դեպի հյուսիս, ապա դաշտավայր դուրս գալով կտրում են երկաթուղին և Շամքոր կայարանից դիմում դեպի Կուր գետը և Դելիլար յայլաղի մոտ թափվում նրա մեջ։

Ջակիր-չայը սկիզբ է առնում կողմնակի ճյուղերի Շաքար-բեկ և Կրպլ զագաթներից, ընդունում է Արտապա, Գյունաշ տեղերից և Սասխիդ լեռից բխող վտակները, Մորուլ գյուղի մոտ դաշտավայր է դուրս գալիս և Արվատ-թափա կուրգանի մոտ կտրելով երկաթուղին, Թաքնալի-Օխչուլու գյուղի մոտ թափվում է Կուրի մեջ։

Ջակամ-գետ. Գանձակի և Ղազախի գավառների միջև սահման կազմող այս գետը կազմվում է Շահ-դաղ և Քյուչուկ շահ-դաղ լեռների հյուսիսարևելյան լանջերից բխող ջրերից։ Ջակամ գետը յուր երկու ափերով պատկանելով Գանձակի գավառին մինչև Խաչլալ լեռան զառիվայրը, հոսում է խոր, անտառապատ ձորով մինչև Թաթարլի, ուր ընդունելով Բաղաչայ աջ վտակը, Աշաղա-Ամպլի գյուղի մոտ դուրս է գալիս դաշտավայր և Դյուգարլի յայլաղի մոտ թափվում Կուրի մեջ։

Վերոհիշյալ բոլոր գետերը, Ինձայից սկսած մինչև Ջակամ, հյուսիսարևելյան ուղղություն ունին, նրանք համարյա միմյանց զուգընթաց են, նրանց բոլորի ակունքներն էլ, բացի Ջակիր-չայից, սկսվում են գլխավոր լեռնաշղթայի և սրա կողմնակի ճյուղերի վերի մասի անտ-

տառաղուրկ ալպյան գոտուց։ Սրանք բոլորն էլ հոսում են խոր, նեղ կիրճերով, որ տեղ-տեղ ներկայացնում են մերկ ժայռեր և քերծեր, բայց առավելապես ծածկված են անտառներով։ Նրանց գաշտերը, ափերի հետ միասին, հարթության մոտենալով, ընդլայնվում են և քնակության համար հարմարավոր տեղեր բաց անում։ Նրանց ջրից հնարավոր է լինում օգտվել նրանց միջին ընթացքում, այն էլ նրանց նեղ գետափերում, միայն բանջարանոցներն ու այգիները ջրելու համար, նրանց ստորին ընթացքում, երբ նրանք բոլորովին դուրս են գալիս լեռնային կիրճերից, կարելի է լինում երկար ջրանցքներ անց կացնել ջրելու համար ինչպես բանջարանոցներ և այգիներ, այնպես և ցանելու արտեր։

Ավելորդ է, կարծեմ, երկարորեն խոսել այս գետերի լեռնային տեղերում ունեցած արագ ընթացքը, ամառվա ամիսներին սաստիկ քշանալու, ձյունը հալչելիս և հորդ անձրևներ գալիս սաստիկ հեղեղվելու, սրանց կատաղի ալիքների՝ իրենց շրջակա հանքային և բուսական թագավորությունների վրա ունեցած համբ, բայց մշտատև և կործանիչ ազդեցության մասին։ Այս բոլոր երևույթները միատեսակ հատուկ են բոլոր լեռնային գետերին։

Հարկավոր ենք համարում հիշել նաև այս գավառի հարթ մասի երկու գետերի մասին, որոնք Քյոր-Զայ (Կուր գետ) և Ղարասուն (Սև ջուր) են։ Առաջինը՝ Քյոր-չայը սկիզբ է առնում Աղասի-Բեկլի գյուղի մոտ գտնված աղբյուրներից, հոսում է Թոզ լեռնաշղթայի հարավային ստորոտով, Կուրին զուգընթաց և թափվում է նրա մեջ Վարվարա գյուղի մոտ։ Երկրորդ գետը՝ Ղարասուն կազմվում է Կուրակ-չայի ջրերից Սարով գյուղի մոտ, հոսում է դաշտավայրով Քյոր-չայից բարձր և, Բաքու-Թիֆլիսյան փոստային հին ճանապարհի մոտ միանում է նրա հետ։ Ինչպես վերև նկատեցինք, Կուրակ-չայը, Ղարա-չայը և Գյորանը միանում են Քյոր-չայի և Ղարասուի հետ։

Լ ն ե ր. Գյոգ-գյոլ. գտնվում է Քյափաս լեռան հյուսիս-արևմտյան կողմը. սրանից մի քիչ հյուսիս կա մի ուրիշ փոքրիկ լճակ, որ կրում է Աստծու ծով անունը և միացած է առաջինի հետ։ Գյոգ-գյոլը յուր անունը ստացել է ջրի կապույտ (գյոգ) գույնից, իսկ Աստծու ծովի մասին պատմում են, թե այդտեղ մի սպիտակ գոմեշ է եղել, որ յուր ձագի հետ, պոզերին մոմեր վառած, դուրս է եկել լճից և արածել ափում։ Գոմեշը սուրբ համարելով, լիճն էլ Աստծու ծով են կոչել։ Երկու լճի ջուրն էլ շատ մաքուր և կապտագույն է, առաջինի մեջ լինում են կարմրախայտ և սև ձկներ, իսկ Աստծու ծովի մեջ բոլորովին չկան։

Աստծու ծովից սկիզբ է առնում մի փոքրիկ առվակ և թափվում է Գյոգ-գյոլի մեջ, հետո այստեղից դուրս գալով՝ Սպիտակ ջուր անունով մի քիչ հոսում է և քարերի տակ ծածկվելով, նորից երևում, ուր նա ստանում է Օբխան (կուլ տվող) անունը և ապա գնում Զրաղի ձորի հանդեպ թափվում Կյուրակ-չայի մեջ։

Այս լճի մասին Կիրակոս Գանձակեցին պատմում է. 1139 թ. փլավ Ալհարակ լեռը երկրաշարժից և արգելեց այն ձորակը, որ անցնում էր նրա միջով և կազմեց ծովակ, որ մինչև հիմա էլ կա և մեջը լինում են լավ ձկներ[3]։

Այս լճակը ամենալավ զբոսավայրն է կազմում, և Հաճիքենդ ամառանոց եկողները գալիս են այստեղ մակուլինոով զբաղնելու։

Երկրորդ լիճը՝ Սյուլյուկնածով կամ Զալի-գյոլն է, որ գտնվում է Աստծու ծովից դեպի արևմուտք։

Մի ուրիշ, սաստիկ փոքր և նույնիսկ աննշան լճակ էլ կա Մուռութ և Ոսկանապատ գյուղերի միջև, ուր ոգորուկներ են որսում։

Հ ա ն ք ե ր. Գանձակի գավառը շատ հարուստ է հանքերով, օրեցօր գտնվում են նորանոր հանքատեղեր, և ժողովուրդը կարծես հանքային տենդով բռնված՝ սար ու ձոր է ընկնում հանքեր գտնելու։ Հանքերից շատ քչերն են կանոնավորապես արտահանվում, դեռ նոր-նոր սկսվում են ընկերություններ կազմվել նրանց մշակելու։

Մինչև այժմ հայտնի հանքերը հետևյալներն են.

Ոսկու հանք. Ջակիր-չայի հոսանքում ավազի հետ աննշան քանակությամբ խառնված։ Աննենֆելդ գաղութի մոտ, Ղոչդարա գետի մոտ, Գանձակից մոտ վեց վերստ հեռավորությամբ։ Գանձակում, Գանձակ-չայի եզերքում, ավազի հետ խառն, շատ քիչ քանակությամբ արծաթաարճիճային և արճճի հանքեր։ Ղոչդարա գետի աջ ափին, Բանանց գյուղից 3—4 վերստ ներքև, այգիների մոտ։

Պղնձի հանք. Գանձակի գավառի ամենանշանավոր պղնձի հանքը գտնվում է Գետաբեկի պղնձահալական գործարանից 2½ վերստ, Սլավյանկա գյուղից 8 վ. և Շամքորի կայարանից 50 վ. հեռավորությամբ դեպի արևմտահարավ։ Սա Գետաբեկում գտնված պղնձահալական գործարանի հետ պատկանում է գերմանացի Սիմենսին, որ գնել է 1864 թ. մեծ մասամբ հույն բաժնետերերից։ Պղնձահանքը բղխում է 3 քառակուսի վերստ տեղ, 12500 ք. սաժեն էլ սատկացված է մագնիսական երկաթաքար (магнитный железняк) մշակելու և 66 դ.

[3] Կիր. Գանձ., եր. 65։

1200 քառակուսի սաժեն Գետաբեկի գործարանների համար։ Բացի սրանից Սիմենսին պատկանում է 21109 դեսյատին 2285 քառ. սաժեն տարածությամբ անտառ Ջեկամի և Շամքորի արքունական անտառներից։

Գետաբեկի պղնձահանքը ունի 12 այր (штольн) 193, 105, 84, 83, 195, 112, 236, 115, 70, 60, 92 և 43 սաժեն երկարությամբ։

Գետաբեկի գործարանում կան հետևյալ տեսակի վառարաններ.

ա) Հանքայրիչ (рудообжигательный) Կիլպ և Գերստիկգիեֆերի սիստեմի . . . . . 28 հատ

բ) Նույնպիսի Պուպֆերշտեյնի . . . . . 13 »

գ) Պղինձ հալող . . . . . 13 »

դ) Ջուգուն հալելու հալոց . . . . . 1 »

ե) Սովորական և կրակի դիմացող աղյուսների թրծելու վառարաններ . . . . . 2 հատ

Գործարանի մի մասն էլ գտնվում է Ղարաքիլիսայում, ուր կան վառարաններ՝

ա) Հանքայրիչ . . . . . 2 հատ

բ) Պղինձ հալող . . . . . 6 հատ

գ) Էլեկտրալուծական գործարան 100 փակերով (вакк) պղնձախառն հանքից ոսկի և արծաթ հանելու։

Գետաբեկի գործարանում կա նաև նեղանիվ երկաթուղի 29 վերստ 80 սաժեն երկարությամբ, 5 լոկոմոտիվով և 33 վագոնով, և նավթանցք Դալլար կայարանից մինչև Գետաբեկ՝ 42 վերստ երկարությամբ, 4 դյույմանոց Մակեսմանովյան պողպատյա խողովակներով և Վարպինգտոնի սիստեմի շոգեշարժ մղիչներով, որոնցով նավթը մղվում է ձմեռը 110, իսկ ամառը 24—25 մթնոլորտային ճնշումով։

Այս գործարանում աշխատում են չոր, թաց և էլեկտրալուծման մեթոդներով։

Թաց մեթոդով մշակվում են բոլոր սակավապղինձ ջուհարները, նրանց մեջ 5 տոկոսից քիչ պղինձ կա։

Չոր մեթոդով՝ նրանք, որոնք 5 տոկոսից ավելի պղինձ են պարունակում։

Էլեկտրալուծական մեթոդով մշակում են ոչ թե ջուհարը, այլ արտադրված սև պղնձի մի մասը։

Հինգ տարիների ընթացքում[1]

Հանված է ջուհար		Ստացված է պղինձ	Ստացված է արծաթ կամ ոսկի պարունակող ավազ		
1893 թ.	3097380 փ.	84308 փ 30 ֆ	77փ 23ֆ	1% ոսկի	22,5% արծ.
1894 թ.	2987790 »	95983 «26»	74 27¾	140%	22,45%
1895 թ.	3572447 »	122062 «08»	76 30½	135%	24,5%
1896 թ.	3548256 »	116145 «05»	67 3»	1,936%	30,784%
1897 թ.	4452710 »	118962 «30»	61 16»	2, 35%	34,44%

Տարիներ	Եղել են բանվորներ	Ծառայողներ	Վճարված է բանվորներին
1893 թ.	1828 մարդ	30 մարդ	275321 ռ. 03 կոպ.
1894 թ.	1872 »	30 »	259431 ռ. 82 կոպ.
1895 թ.	1539 »	30 »	249972 ռ. 33 կոպ.
1896 թ.	1420 »	30 »	247021 ռ. 99 կոպ.
1897 թ.	1848 »	30 »	273928 ռ. 49 կոպ.

Բանվորներն ըստ ազգության եղել են.

Հայեր		Ռուս	Գերմ.	Թաթար	Վրացի	Հույն	Տաճիկ	Պարսիկ	Լեզգի
1893 թ.	325	67	26	535	1	13	5	880	6 մ.
1894 թ.	379	35	39	559	5	22	7	845	11
1895 թ.	378	42	37	421	3	25	4	651	8
1896 թ.	309	52	29	391	1	11	29	553	5
1897 թ.	316	54	34	499	2	96	17	852	5

Այս աղյուսակից երևում է, որ գործարանում ամենից ավելի պարսիկ բանվորներ են աշխատում, ապա թաթարներ, հայեր, ռուսներ, հույներ, տաճիկներ և ապա վրացիներ։ Հայերի թիվը գնալով պակասում է։

Բանվորներն աշխատում են առավոտյան ժամը 6-ից մինչև երեկոյան ժամը 6-ը. միայն առավոտյան 8½ ժ. կես ժամ նախաճաշիկի և կեսօրին մի ժամ ճաշի համար հանգիստ են տալիս, հետևապես և աշխատանքը տևում է 10½ ժամ։

Թե՛ ծառայողների և թե՛ բանվորների ռոճիկից մի տոկոս վերցնում են, որով և պահում են մի դեղատուն, մի բժիշկ և մի հիվան-

[1] Ես եղա հանքում 1898 թ. ամռանը, ուստի և կարելի չեղավ վերցնել 1898 թ. վերաբերյալ տեղեկություններ։

դանց 16 մահճակալով։ Թե՛ դեղերը և թե՛ բժշկական օգնությունը տրվում է ի տրիտուր այս վերցրած տոկոսի։

Քսանհինգ տարի ծառայողները կենսաթոշակ են ստանում։ Դրժբախտության պատահողներին ըստ կամս օգնում են։ Կա նաև բանվորներին բնակության հատկացված երեք շինություն, որոնք առողջապահական տեսակետից շատ աննախանձելի են։

Պղնձի հանքեր անմշակ դրությամբ գտնվում են նաև Ջարդախլու գյուղից 8 վերստ դեպի արևմուտք։ Ղազախի և Գանձակի սահմանի մոտ։

Սոկյուտլի գյուղի մոտ, մի վերստ հեռու Գեռաբեկից Սլավյանկա տանող ճանապարհից։ Նախկին Սիլոն-քյանդի մոտ, Սլավյանկայից Ջարդախլու տանող ճանապարհից մի վերստ հեռու, Ջակիրից 3 վերստ հյուսիս, Սլավյանկա գյուղի մոտ, Բաշքենդ սարում։ Ղարաչայ գետի ձախ ափին, նրա Ղոշղարա (Կուրի աջ բազուկ) գետի մեջ թափվելու տեղից 2 վերստ բարձր։

Շամքոր գետի ձախ ափին, Թաքնալու գյուղից արևմուտք։

Ղոշղարա գետի քարե կամուրջից արևմտահյուսիս, 3 վերստ հեռու, այս գետի ձախ ափին, Քարհատ գյուղից բարձր՝ Քյամանդ լեռներում։

Դաստաֆուր գյուղի շրջակայքում, համանուն գետի մոտ։

Էյրալ-Թախտ լեռան հյուսիս-արևմտյան լանջին։

Դաստաֆուր գետի ձախ ափին, Դաստաֆուր և Բալլուջա գյուղերի մեջ։

Ոսկանապատ և Միրզիկ գյուղերի մոտ։

Մուռութ գյուղի մոտ։

Ղարաքեշիշ գյուղի մոտ, Կանուտ-սար ժայռի տակ։

Սուլուկ գյուղի մոտ։

Գետաշենում, Ջրաղի ձորում։

Կեփաս-սարի շրջակայքում։

Ցինկի հանք (цинковые руды).

Բեուկ-Ամբ և Գալա (Гала) տեղերում։

Մարրաքար (Stibium, Сурьмяная руда)։

Նյուզգյար և Սեյֆալի գյուղերի մոտ։

Կոբալտի հանք (Cobalt, Кобальтовая руда)։

Ղոշղարա գետի մոտ, ձախ կողմում, Բալլուջա գյուղից 6 վերստ հյուսիս։

Տուտունց-առվի ձորակում, սրա Ղոշղարայի մեջ թափվելու տեղից 2—3 վերստ բարձր։

Խալ-Բուլախ-չայի (Ղոշղարայի վտակ) հովտում, գետի աջ ափում, Վերին Քարհատի մոտ։

Համամ-չայի աջ կողմում։

Ջարունց-առվի հովտում, Քարհատ և Բանանց գյուղերի մեջ։

Նաև վերջերս գտնված է Ոսկանապատ գյուղի մոտ։

Երկաթի հանքեր. Շամքորի աջ կողմում, Սեյֆալի և Նուզգար գյուղերի միջև տարածվող բարձրությունների վրա, Մեծ-Ղալա և Մեխտի խան (Նյուզգյարի մոտ) ձմեռանոցների մոտ։

Ղուշչի գյուղի մոտ (40° 44,7 հ. լ. և 63° 46,4 ա. եր.) Ղոշղարա գետի երկու կողմի լեռներում։

Ջագադարայում. Քարհատում Սիմենսի ունեցած կոբալտի հանքից 5½—6 վերստ հարավ, Սուլլու-Դարա և Նավլու-Ղշլախ տեղերում։ Ղոշղարա գետի հովտում, Տուղոնց-առվի հետ միանալու տեղում։

Ղոշղարա-գետի վերին մասում, Գյունեյ Գյորմազ լեռան ձորում, մագնիսական երկաթ է։ Ոսկանապատ գյուղի մոտ, Ղարաշեն կոչված տեղում։

Նույն գյուղի մոտ, Քաշքի ձորում. մագնիսական երկաթ։

Գյուլիստան գյուղի մոտ։

Քարհատի լեռներում։ Այս հանքի տիրապետության մասին երկար վեճ ծագեց քարհատցիների, որոնք իբր ի վաղուց հետե այդ հանքը մշակողներ՝ պայմանավորվել էին պ. Ա. Ծատուրյանի հետ և մի քանի անձանց մեջ, որոնք այդ հանքը գտնող հանդիսանալով, սեփականության իրավունքը վաճառել էին ոմն Պաստուխովի։ Վեճը վերջացավ հօգուտ Պաստուխովի, և այժմ պատրաստություններ են տեսնվում նեղանիվ երկաթուղի անցկացնելու այդտեղ և գործարան հիմնելու։

Հրաքար (pyrite, серный колчедан).

Ղուշչի գյուղի մոտ։ Նյուզգյար գյուղի մոտ, Գանձակից 25 վերստ արևմտահարավ, Սինիխգարա ձորում։ Ղազախ-Էլչիլար գյուղի մոտ, Նազիր-դաղի ստորոտում։ Ոսկանապատի մոտ, «Ղարաշենում»։

Ջավդար գյուղից երեք վերստ հեռավորության վրա։

Փայլածո թերթաքար (ֆր. Sehiste micacé, micaschiste, горючий сланец).

Աղ-Դուզ-դաղ կամ Կոնգուր կոչված տեղում (920 ֆ. բ. բարձր)։

Քոռ-չայի (Կուրի աջ վտակ) աջ կողմում։

Նավթ. Գանձակից 30 վերստ դեպի հարավ-արևելք և Ջեյվա նախ-

կին փոստային կայարանից 4—5 վերստ հարավ-արևմուտք, Գյորանչայի աջ ափին։

Պ ա ղ լ ե ղ (ֆր. Alun, квасцы и квасцовые, камень и сланец).

Պաղլեղի ամենանշանավոր հանքը գտնվում է Փիփ կամ Զակլիկ գյուղից 4 վերստ հարավ, Գանձակից 40 վերստ հեռու, Շամքոր և Ղոչ-զարա գետերի միջև՝ առավելապես Շորուլ-Կոր լեռան մեջ։ Այս հանքը տարածվում է 17 վերստ երկարությամբ (մինչև Ղուշչի գյուղը) և 1,5—2 վերստ լայնությամբ։

Ինչպես երևում է գտնված մի քանի կավե և պղնձե ամաններից, այս հանքը շահագործվելիս է եղել դեռ հռովմայեցոց տիրապետության ժամանակ։ Պարսից տիրապետության միջոցին ևս շարունակվել է դրա շահագործումը տեղացի գյուղացիների ձեռքով, որոնք մի փոքրիկ տուրք են վճարել հօգուտ Գանձակի մեճիդի։ Նույնը շարունակվել է և ռուսաց տիրապետության տակ. սկսած 1804 թ. մինչև 1865 թվականը այդ հանքը կապալով էր տրվում նախ գյուղացիներին և ապա մասնավոր անձանց՝ տարեկան 300—6000 ռուբլով։ 1865 թ. Խարիտոնովը արքունի գանձարանից 34.000 ռուբլի պարտք վերցնելով, նոր գործարան և բնակարաններ հիմնեց, բայց հեռու միջոց չունենալով շարունակելու, թողեց հեռացավ, և մի քանի տարուց հետո հանքի մշակությունը բոլորովին դադարեց։

Այստեղի պաղլեղը ամենալավ տեսակից է, և ըստ Ստրուվեի՝ նրա բաղադրիչ մասերն են.

Կավահող	37,58
Կալի (калий)	9,00
Երկաթի օքսիդ (окись железа)	—
Ծծմբային թթվատ (серная кислота)	38,33
Խճածին (кремнезем)	0,14
Ջուր	14,28
	99,93

Միջին համեմատական (удельный) քաշն է 2,7838[5]։

Բացի Փիփից, պաղլեղի հանքեր կան նաև Ղուշչի գյուղի մոտ, որ միանգամայն նման է Փիփի հանքերին։

Բանանց գյուղի շրջակայքում։

[5] **Богачев В. И.**, Затликский квасцовый завод, в книге «Записки кавказского отделения русского технического общества», т. IV, ст. 353.

Բախշիկ գյուղի մոտ, Նյուզգյար գյուղից 3 վերստ հարավ։

Մ ա ր մ ա ր ի ո ն և մ ա ր մ ա ր ա ն մ ա ն կ ր ա ք ա ր (мрамор и мраморовидный известняк)։

Քարհատ և Զագաղարասի գյուղերի մեջ, Խաչ-Բուլախ-չայ գետի մոտ։

Խարխափուտ գյուղում։

Շինության քար. ա) Կ ր ա ք ա ր և դ ո լ ո մ ի տ (известняк и доломит) Ելենենդորֆ գաղութի շրջակայքում։

բ) Ո ր ձ ա ք ա ր, փ ի ր ա ք ա ր և շ ե ղ ջ ա ք ա ր (кварцит, песчаник и конгломерат) Աբլահի քարհատը։

գ) Տ ր ա ք ի տ (trachyte). Ելենենդորֆի գաղութից 12 վերստ հարավ։ Գանձակից 20 վերստ հարավ, Հաչիքենդի մոտ։

Ց ե մ ե ն տ ա յ ի ն ք ա ր (цементный камень).

Գանձակ գետի հովտում, վեց վերստ հարավ։

Կ ր ա կ ի դ ի մ ա ց ո ղ կ ա վ (огнеупорная глина)։ Շաքիր-Բեկ գյուղի մոտ, Գետաբեկի պղնձահալական գործարանից 8 վերստ հյուսիս-արևմուտք։ Ղարաբուլախ գյուղի մոտ։

Ո ր ձ ա ք ա ր (Quarz, кварц)։ Այբենտ գյուղի մոտ, Գետաբեկի պղնձահալական գործարանից 5—6 վերստ հարավ։

Վ ի մ ա գ ր ա կ ա ն ք ա ր. Գանձակից 10 վերստ հեռու, Մոլլաչայի սահմանում։

Հ ա ն ք ա յ ի ն օ ճ ա ռ (горное мыло). Ելենենդորֆ գաղութից 2 վերստ արևելք։

Հանքային ջրեր. Սլավյանկա գյուղից հարավ-արևմուտք 40° 23,4 հյուս. լ. և 63° 27,5 ա. եր. տակ. սառն, հանքային աղբյուր է, «Ջաֆիրա» (Джаджира) անունով հայտնի։

Հաճիքենա և Մուռութ գյուղերի միջև սելտերյան թույլ ջուր։

Ջարեքի վանքի կալվածում, Այթալու վտակի ձախ ափին, ծծմբային սառն աղբյուր[6]։

ԿԼԻՄԱՆ

Որովհետև ոչ թե Գանձակի գավառի մի քանի մասերում, այլ միայն Գանձակում կա օդերևութաբանական կայան, ուստի և ես, այդ

[6] Օգտվել ենք նաև՝ «Полезныя ископаемыя и минеральныя воды Кавказского края, сост. Миллер С., СПб, 1896» աշխատությունից։

դիտողությունների հինգ տարվա թվերն առնելով (1893—1897) Թիֆլիսի օդերևութաբանական դիտավոր կայանից, միջին թվով դուրս բերի և ստացա հետևյալ երկու աղյուսակները, որոնք պարզ որոշում են Գանձակի և նրա բարձրության վրա եղած մյուս տեղերի կլիման։

№ 1 աղյուսակից հետևում է.

1) Գանձակում օդի ճնշումը տարեկան միջին թվով հասնում է 724,8 միլիմետրի, տատանվելով 727,8-ի, որ բարձրանում է հոկտեմբերին և 720,9-ի մեջ, որ իջնում է հունիս և հուլիս ամիսներին։

2) Բարոմետրի տարեկան մաքսիմումը հավասար է 737,5, որ բարձրանում է դեկտեմբերին, իսկ մինիմումը՝ 713,8, որ իջնում է մարտին։

3) Տարեկան միջին ջերմությունն է 12,3, մաքսիմումը՝ 34,6 (օգոստոսին), միջին մինիմումը՝ 7,8, իսկ բացարձակ մինիմումը —9,7 (հունվարին)։

Ամենախոնավ ամիսները հոկտեմբերը և հունվարն են, ամենապակաս խոնավը՝ օգոստոսը։

№2 աղյուսակից էլ հետևում է.

1) Տիրապետող քամիներն են. արևմտյան (117,4) և հյուսիսարևմտյանը (109,6), հետո՝ արևելյան (64) և հարավարևմտյանը (30,8)։ Ամենից շատ հողմեր փչում են հունիսին և ամենից քիչ՝ հոկտեմբերին։ Քամին ամենից սաստիկ փչում է փետրվարին (2,9) և ամառը, երբ շատ անգամ ծառեր է տապալում, իսկ ամենից թույլ՝ հոկտեմբերին։

Ամենաշատ նստուցքը տեղի է ունենում ապրիլին (37,1) և հունիսին (35,2), իսկ ամենից քիչ՝ օգոստոսին և հուլիսին։ Այս երկու ամիսը սաստիկ երաշտ է լինում և մեծամեծ վնասներ պատճառում։

Առաջին անգամ ձյուն գալիս է նոյեմբերի վերջին (մի անգամ), ապա մի քանի անգամ միայն գալով, վերջանում է մարտին։ Առհասարակ ձյուն շատ քիչ է գալիս։

Կայծակը ավելի պատահում է հունիս ամսին, իսկ կարկուտ, թեև ոչ հաճախ, մայիսին և հունիսին։

Ամենից ավելի ամպամած օրեր լինում են ապրիլին (14), հունվարին (13) և մարտին (11), իսկ ամենից քիչ՝ օգոստոսին (3)։

Ինչ վերաբերում է ամբողջ գավառի կլիմային, հարմար դատեցի առաջ բերել պ. Աբելյանի հետևյալ հինգ գոտիների բաժանումը։

1. Առաջին, բարձր ալպյան գոտին, զրկված անտառային բուսականությունից, բռնում է գավառի հարավարևմտյան կողմը, 5500—6000′ բարձրությունից մինչև 9500—10000′ ծովի մակերևույթից, հյու-

Աղյուսակ № 1

Ամիսներ	Բարոմետր դմգ	Բարոմետր ամպ	Բարոմետր դվգ	Ջերմություն 7	Ջերմություն 1	Ջերմություն 9	Ջերմություն մթջ.	Ջերմություն մաքս.	Ջերմություն բաց. մին.	Ջերմություն մթջ. մին.	Բացարձակ խոնավություն 7	Բացարձակ խոնավություն 1	Բացարձակ խոնավություն 9	Հարաբերական խոնավություն 7	Հարաբերական խոնավություն 1	Հարաբերական խոնավություն 9	Ամպամած 7	Ամպամած 1	Ամպամած 9
Հունվար	726,6	735,6	715,9	—2,2	2,5	—1,2	—0,3	10,7	—9,7	—0,4	3,5	4,1	3,7	90,2	74,6	89,0	6,9	7,0	6,4
Փետրվար	723,9	732,9	713,9	—1,7	5,7	1,4	1,8	14,6	—9,4	—1,7	3,6	3,9	3,9	83,6	59,0	77,0	5,6	5,7	5,1
Մարտ	722,6	731,2	718,8	2,3	10,5	5,7	6,2	19,4	1,5	0,8	4,8	5,4	5,4	85,0	61,2	79,0	7,0	7,0	5,5
Ապրիլ	723,1	731,2	714,8	7,7	13,6	9,7	10,3	22,0	—0,1	5,6	6,7	7,3	7,3	84,0	63,8	81,0	7,2	7,1	6,1
Մայիս	722,4	728,7	715,4	14,5	21,0	15,6	17,1	27,2	6,3	11,8	10,1	10,6	10,7	82,2	58,8	81,2	6,4	6,8	5,4
Հունիս	720,9	726,5	715,9	18,8	26,0	20,4	21,1	33,3	11,8	14,6	11,6	12,5	12,1	71,6	48,2	69,0	4,2	5,1	4,6
Հուլիս	720,9	725,9	714,8	20,5	28,8	23,1	24,1	34,4	11,8	16,9	12,2	12,2	12,5	69,2	43,0	66,8	4,6	4,9	3,8
Օգոստոս	721,5	727,4	715,9	21,2	30,2	24,1	25,1	34,6	14,5	20,3	13,2	13,5	13,1	71,4	43,0	65,8	4,2	4,1	3,2
Սեպտեմբեր	724,2	731,5	716,9	15,5	24,2	18,0	18,8	31,2	6,5	14,3	11,1	11,9	9,5	84,6	53,8	75,4	4,6	4,8	3,7
Հոկտեմբեր	727,8	734,5	719,9	8,5	18,3	12,4	13,8	24,6	3,6	9,1	8,8	9,5	9,2	90,6	62,4	86,0	6,1	5,7	4,4
Նոյեմբեր	727,3	737,0	717,4	4,2	10,3	5,5	6,7	19,4	0,7	1,8	5,4	6,1	5,8	87,8	66,0	84,0	6,3	6,2	5,0
Դեկտեմբեր	727,1	737,5	719,2	0,5	5,8	2,0	2,8	14,1	—2,9	0	1,3	4,8	3,8	88,0	73,8	86,4	7,0	6,7	5,4
Տարի	724,0	737,5	713,8	9,2	16,4	11,4	12,3	34,6	—9,7	7,8	7,9	8,5	8,4	82,4	59,0	77,5	5,8	5,9	4,9

Աղյուսակ № 2

Տարի	Քամու ուժը		Քամիներ												Ամոնդոյ	Նստուկներ (précipitations) (осадки)			Օրեր											
	դվրտ.	I	6	N.	NE	E	SE	S	SW	W	NN		Ամպրոտ	Տրվածք	Միջին	Ժամադոդ	Տաքսիմոկ	Կոթմոկ	Սեմոն	Գոլոնոբտ	Իվմոր	Գիշերվա օդ.	Ցերեկվա օդ.	Ցրտի դվր. օդ.
Հունվար	0,7	1,2	0,6	1,2	0,2	2,5	0,2	2,0	9,8	7,6	7,6	65,2	12,1	5,2	7,0	7	5	0	5	13	0	8	8	30
Փետրվար	1,2	2,9	1,4	2,0	1,8	1,00	2,1	1,6	12,4	11,6	11,6	51,0	12,2	6,5	14,2	4,2	3	0	4	7	1,5	3	3	21
Մարտ	1,0	1,3	0,7	3,6	3,2	6,2	0,2	0,6	7,8	7,4	7,4	61,8	14,6	4,5	17,2	7,0	2	0	3	11	0,1	0	11	11
Ապրիլ	1,6	1,7	1,5	4,0	1,6	5,6	0,8	2,7	9,0	11,4	11,4	55,2	37,1	10,2	10,6	9,2	0,4	0,4	3	14	1,4	0	0	1
Մայիս	1,6	1,7	0,7	2,0	2,0	10,0	2,2	0,8	8,6	7,8	7,8	55,6	32,3	11,2	12,6	11,4	0,0	1	3	10	0,4	0	0	0
Հունիս	1,3	2,5	1,8	3,2	2,2	7,4	2,6	0,6	2,2	15,8	15,8	41,0	35,2	15,5	14,0	10,2	0	1	4	4	1,2	0	0	0
Հուլիս	1,4	2,5	1,4	3,2	4,2	11,2	4,0	0,8	0,3	8,4	10,1	50,6	17,4	6,3	12,4	7,4	0	0	2	10	1,4	0	0	0
Օգոստոս	1,2	2,6	1,1	2,8	3,4	11,2	3,0	0,8	7,5	7,2	8,0	50,6	8,8	3,9	11,0	3,6	0	0	2	11	3	1,4	0	0
Սեպտեմբեր	1,0	1,8	0,9	1,6	2,4	4,6	1,8	0,4	1,6	9,0	10,2	60,8	36,5	18,9	16,0	6,4	0	0	0	9	6	1,0	0	0
Հոկտեմբեր	0,5	0,9	0,3	0,8	0,8	2,2	1,3	0,6	2,4	6,3	3,2	76,2	12,6	6,5	15,8	5,0	0	0	0	8	1,0	0	0	0
Նոյեմբեր	0,8	1,3	1,0	0,2	0,6	1,0	0	0,2	4,5	15,4	8,6	59,0	25,2	8,7	15,6	9,4	1,0	0	0	9	2,0	0	0	11
Դեկտեմբեր	0,9	1,3	0,5	0,8	1,6	1,0	0	0,8	4,2	11,2	6,6	65,8	10,3	5,2	20,0	5,2	3,0	0	4	10	0,3	2	2	20
Տարի	1,1	1,9	1,0	25,4	24,0	64	14,8	30,8	117,1	109,6	101,8	701,8	254,3	18,9	—	86,0	11,4	2	11,4	60	10	12,6	14	94

սիսային լայնության 40°1′ և 40°8′ միջև։ Այս ամբողջ գոտում չկա ոչ մի գյուղ, թեև խաչ-բուլաղ յայլաղում եղած հայկական գյուղի և եկեղեցու ավերակները ցույց են տալիս, որ և այս գոտում, գոնե նրա հյուսիսային մասում, ապրել է հաստատաբնակ ժողովուրդ։ Այս գոտին բաղկացած լինելով լեռների գագաթներից, փոքրիկ հարթություններից, ոչ խոր ձորերից և ձորակներից, բարձր գագաթներից, ներկայացնում է ամառային արոտատեղիներ, որ կենդանություն է ստանում մայիսի սկզբից մինչև օգոստոսի կեսը, սարվորների և նրանց անասունների գալով։ Այս միջոցում տեղի են ունենում կարճատև անձրևներ, հաճախակի մառախուղ, որ շարունակ վերանորոգում են ալպյան կանաչը։ Մնացած 8—9 ամիսների ընթացքում ամբողջ գոտին պառկած է լինում ձյան սավանի տակ, և նրա վրա ազատ խաղում են բուքն ու բորանը։

2. Արոտատեղիների գոտուց ցած, դեպի հյուսիս-արևելք, 4000′ մինչև 6000′ և ավելի բարձրության վրա ձգվում է անտառային գոտին, ուր անտառոտ ընդարձակ տեղերի հետ միասին գտնվում են և վարելահողեր, խոտատեղիներ և արոտատեղիներ։ Այս գոտին տարածվում է բավականաչափ դեպի հյուսիս, մինչև լեռների ստորոտները։ Սրա հարավային մասում մշակվում են միայն կեռասենի և շլոբենի։ Հյուսիսային մասում մեծ գետերի խոր ձորերում հասնում է և խաղողի որթը։ Ամբողջ գոտին կառավարվում է առանց արհեստական ոռոգման, բացի բանջարանոցներից և խաղողի այգիներից, որոնք, անշուշտ, ջրվում են գետերի կամ աղբյուրների ջրով։ Սակայն այս գոտու գյուղերից մինում՝ Գետաշենում հացահատիկների հունձը ավելի ապահովելու համար ջրանցքներ են անցկացրել՝ արտերը ջրելու։

Այս գոտում ձմեռը, ընդհանրապես, խիստ չէ, թեև երկարատև է և ձյունառատ։ Հյուսիսային կողմում նա բավականաչափ մեղմ է, քան թե հարավայինում։ Բարձր և բաց տեղերում, որոնք ենթակա են հարավարևմտյան և հյուսիսարևելյան քամիներին, ձմեռը, բնականաբար, ավելի խիստ է, քան թե գետերի և գետակների խոր հովիտներում և առհասարակ պաշտպանված տեղերում։ Այնտեղ, ուր հովտի լանջն էլ դեպի արևելակի կողմն է նայում, հիմնվում են լեռնային ժողովուրդների ձմեռանոցները, որովհետև ձմռան արևելակի ճառագայթների տարածությունը բավական է, որ ձյունը հալչի, և նրա տակից խոտն երևաս։ Երկարատև և սաստիկ ցրտեր այս գոտում չեն լինում, միայն թիփի և բորան հաղվագեպ չեն, ձյան հյուսեր ճանապարհների վրա և անասունների չարդ ցրտից նույնպես սովորական երևույթներ են։ Վեցամսյա

ձմռան (սեպտեմբերի վերջից մինչև ապրիլի սկիզբը) հետևում է տարվա տաք եղանակը, որը միայն հուլիսի կեսից մինչև օգոստոսի կեսն ստանում է ամառվա բնավորություն։ Տարվա այս եղանակին հաճախակի լինում են անձրևներ, մառախուղ և կարկուտ։

Այստեղի երկարատև և կարճատև անձրևները, ցողելով գետինն ու մթնոլորտը, բուսական կյանքին անհրաժեշտ չափով, կազմում են գյուղացիների ցանկացած երկնային պարգևը, իհարկե, եթե դրանք լուր ժամանակին են։ Հորդ, նույնիսկ ոչ երկարատև, բայց ուժեղ անձրևները երբեմն մեծ վնասներ են պատճառում ցանքսերին, թեև ոչ այն չափով, ինչպիսին պատճառում է կարկուտը, որ այս գոտում խրոնիկական բնավորություն է կրում։ Կարկուտին ենթարկված են ավելի լեռնային, բարձր տեղերը, իսկ գետերի խոր հովիտները և ցածրանիստ տեղերը շատ հազիվ։ Կարկուտը պատահում է ամբողջ տաք եղանակի ընթացքում, բայց առավելապես հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին, այսինքն՝ ցանքսերի համար ամենավնասակար միջոցին։ Շատ անգամ անձրևներն ուղեկցվում են կարկուտով, այնպիսի դեպքերում կարկուտը ընկնելուն պես հալչում է։ Այս հանգամանքը նախագուշակում է, որ շուտով կարկուտը անձրևի պիտի փոխվի։ Կարկուտը երբեմն շատ մեծ է լինում, մինչև հավկիթի մեծության։

3. Անտառային գոտուց հետո գալիս է բլրակային գոտին, որ բաղկացած է ոչ շատ բարձր բլրակների շարքերից և գետերի լայն, ջրարբի հովիտներից։ Այս գոտու գյուղական հողերի լեռնային մասի հարավային գիծը ընդհատվում է վերոհիշյալ գոտուն և չի կարոտում արհեստական ոռոգման։ Ընդհակառակը, հյուսիսային լեռնային գիծը, որ կազմված է կրաքարից, արհեստական ոռոգման համար հարմարություններ չի ներկայացնում և ծառայում է որպես անասունների ձմեռվա արոտատեղի։ Ինչ վերաբերում է գետափնյա ցածրանիստ հողերին, դրանք բոլորովին նմանում են ցածրանիստ ջրարբի գոտուն։

4. Զակամից մինչև Ինճա-չայ և լեռնաստորոտից մինչև Կուր գետը (արևմուտքում) և Բոզ լեռնաշղթայի լանջը ներկայացնում է ցածրանիստ տաք գոտի, որի հատկանիշ գիծը անշուշտ կազմում է արհեստական ոռոգումը, ուստի և մենք նրան կոչում ենք ցածրանիստ ջրարբի գոտի։

5. Վերջապես գալիս է Կուրի նեղ գետափը, նրա երկու կողմից ցածրանիստ և Կուրի հեղեղումներով ողողված մի տարածություն։ Սակայն նրա աջ ափին կա մի ցածրանիստ, ջրարբի գոտի, որ ոռոգվում է Ալազանի ջրով։

Կլիմայի և հողի հատկության տեսակետից ինչպես Կուրի գետափնյա, այնպես և ցածրանիստ ջրարբի գոտիները լիովին նման են միմյանց։ Այդտեղ ձմեռները կարճատև են, անձրևային, ձյուն քիչ է գալիս, սաստիկ ցրտեր հազիվ են պատահում։ Այսպիսի ձմեռը նպաստում է անապատային բուսականության մշտատև վերանորոգման, որը ապահովում է թափառականների բազմաթիվ անասուններին արածելու խոտով։ Ցուրտ ձմեռներում, իհարկե, այս գոտիներում խոտի պակասություն է զգացվում և անասունների ջարդ է տիրում։

Փետրվարի կեսից արդեն ձմեռը տեղի է տալիս գարնան, որը ապրիլի վերջին այնքան տաք է լինում, որ սարվորները իրենց հոտերով շոտապում են դեպի սարերը։ Համարյա մայիսի վերջից մինչև սեպտեմբեր այս գոտիներում անձրև չի գալիս։ Մթնոլորտը սաստիկ չորանում է, բուսական կյանքը պահպանվում է միմիայն արհեստական ոռոգմամբ։ Գետերի ջրի առատությունը միանգամայն կախված է լեռնային գոտու անձրևներից. որքան ամառը լեռների վրա անձրևային է, այնքան ավելի գետերում ջուր է լինում, նշանակում է՝ ավելի ցածրանիստ տեղերի ցանքսերը ապահովված են ոռոգող ջրով։ Տիրապետող հյուսիս-արևելյան և հարավարևմտյան քամիները համարյա զրկվում են իրենց խոնավությունից մինչև կհասնեն այս դաշտավայրի սահմանին, ուստի և հասկի լցվելու ժամանակ սաստիկ վնասում են նրան, և ինչպես ասում են գյուղացիները, «վառում են» արտերը։ Երբեմն էլ այնպիսի սաստիկ քամիներ են փչում, որ կոտրատում են այգիների ծառերը և պառկեցնում ցանքսերը։

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝

Գանձակի գավառը շատ հարուստ է բուսականությամբ։ Կլիմայի և հողի հատկության տարբերությունները պատճառ են դառնում բուսականության բազմազանության։ Հայ-Գանձակյան լեռնաշղթայի և նրա ճյուղավորությունների լանջերը հարուստ են այլյան բուսականությամբ և կազմում են հիանալի արոտատեղեր, մոտ 69 029 դեսյատին տարածությամբ։

---

[1] Այս բույսերից շատերի անուններն ստացել եմ պ. Ս. Բալաղյանից, որի համար շնորհակալություն եմ հայտնում։

Այստեղ լինում են հետևյալ խոտային բույսերը.

Թանթրվենի (бузина-sambucus nigra), *փիփերթ* (мальва-malva silvestris), *ջղախոտ* (*տեղ. տիտկուս*) (подорожник-plantago major), *տավուլա* (*սիրի-սիրի*) (клевер-trifolium *մի քանի տեսակներ*), *բան գաղձ* (*ցոի ճինջաղ*) повилица-cuscuta, *արջընկուլ* (дурман-datura stramonium), *սև բանդ* (белена-hyoscymus niger), *կաղընձնի* (заразиха-orobanche), *սպիտակ եղնճամալը* (глухая крапива-lamium album), *վայրի տոլան* (марена-rubia tinctorum), *հասարակ մատուտակ* (*բիլան*) (солодка-glycyrrhiza glabra), *զանգակիկ* (колокольчики-campanula *մի քանի տեսակներ*), *մորի* (земляника-fragaria vesca), *մորի* (клубника-fragaria elatior), *կատանջար* (одуванчик-taraxacum officinale), *տատասկափուշ* (чертополох-carduus acanthoides), *վայրենի մեխակ* (гвоздика-dianthus), *հասարակ հապուկ* (дик. резеда-reseda lutea), *կակաչ կամ պոտ* (мак-papaner *դանազան տեսակներ*), *գայլուկ* (хмель-humulus lupulus), *եղինճ* (крапива-urtica), *հիրիկ* (касатик-iris germanica), *ծնեբեկ* (спаржа-asparagus officinalis), *հասարակ եղեգն* (камыш-arundo donat), *ձիաձետ* (хвощ-eguisetum), *ձարխոտեր կամ պտերներ* (папоротники-filices), *մամռոներ, սոնկեր, քարաքոսներ, ջրիմուռներ, դաշտաց ուրց* (tymus serpillum), *կորգիոն* (Satureja hortensis), *պտարինջ* (Melissa officinolis), *եղեսպակ* (Salvia), *դեղուկ խոտ* (Dictanus), *աղվեսագի* (Alopecurus pratensis), *հասարակ խոտեր* (Poa), *փեսատակ* (Phleum festuca), *խրատակ* (Bromus arvensis)։

Ոսկանապատի, Բանանցի, Շամքորի, Զեկամի լեռնոտ շրջակայքը և Դալլարի, Մինգեչաուրի և Սամուխի հարթությունները, որ ձգվում են Կուրի ցածր գետափին, ծածկված են անտառային բուսականությամբ՝ մոտ 127,529 դեսյատին տարածությամբ։ Այս անտառներում առավելապես գտնվում են հետևյալ ծառատեսակները.

Կաղնի (quereus), *լորենի* (липа- tilia europica), *լինեստրևի* (остролистный клён), *թոզուշի* (*դարագաջ* ильм), *հացի* (ясень-fraxinus etcelsior), *կեչի* (береза-betulus), *թզկի* (клен-accer tatarica), *շամ* (сосна-pinus silvestris), *կենի* (красное д-тис), *ցրբաբնի* (можевельник-juniperus), *հաճարի* (бук-fagus silvatica), *բոխի* (граб-carpinus betulus, *որից նշանավոր են կրվենենի և բիզի տեսակները*), *սրհացի* (рябина)։

Թփերից հայտնի են.

Աղնի (боярышник-ctaraegus), *զկոի* (мушмула-mespilus germanica), *կիլիմատրի* (гордовина-viburnum lantana), *կծոխուր* (барбарис-berberis vulgaris), *ֆուշնի* (каркас-celtis australis), *մասրի* (шиповник-rosa canina), *արևելյան սոսի* (чинар-platanus orientalis), *ցաքի* (держи-дерево-paliurus aculeatus), *մոռի, մորենի* (малина-rubus idacus), *մոշենի* (ежевика-rubus caesis)։

Վայրի պտղատու ծառերից հայտնի են.

տանձի (груша-Purus communis), *խնձորենի* (яблоня-malus communis), *սերկևիլի* (айва-Cydonia vulgaris), *նռնենի* (гранат-Punica granatum), *բաղեղ* (плющ-hedera helix), *թթենի* (шелковица-morus alba *և* morus nigra)։

Հովիտները բռնված են պարտեզներով, ուր մշակում են խնձորենի, տանձենի, կեռասենի, թթենի, դեղձենի, նռնենի, սերկևիլի, շագանակի և այլն։

Դաշտային ցածր մասերում տարածվում են խաղողի ընգարձակ այգիները, որ առատությամբ տալիս են խաղողի բազմաթիվ տեսակները[2]։

ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Գանձակը գտնվելով Գանձակ գետի հովտում, որ թեքված է դեպի հյուսիս և ցածր մասերում, լայն դյուղի մոտերքը ունի բավականաչափ ճահիճներ, ծածկված է եղեգնով, կնյունով (осока) *և ուրիշ ճահճային բույսերով, գրեթե բոլոր կողմերից շրջապատված է բլուրներով և լեռներով, ծածկված անտառային բուսականությամբ, որոնց մեջ ապաստան են գտնում վայրենի կենդանիների շատ տեսակներ։*

Տեղի բավական բազմազանությունը պատճառ է դառնում և կենդանական թագավորության բազմազան տեսակների։ Սա մանավանդ նկատվում է այս թագավորության փետրավոր ներկայացուցիչների վրա, որովհետև որանց բուն դնելու սովորությունները և որսի նյութերը շատ դանազանակերպ են։ Գարնան առաջին ավետաբերները լինում են սարյակները (скворцы) *և արտույտները* (жаворонок), *մանավանդ վերջիններս։ Սրանք երևում են փետրվարի վերջին կամ մարտի սկզբին։ Շատ անգամ պատահում է, որ տաք ձմեռները արտույտները չեն հեռանում և ձմեռում են այստեղ։ Փոքրիկ խմբերով ապրում են դաշտերում, և երբ հանկարծ ցրտից բռնվում են, փախչում են քաղաք։ Սրանց երկու տեսակը կա՝ մարգերի արտույտ* (жаворонок

[2] *Ինչպես խաղողի, այնպես և պտղատու ծառերի տեսակները տե՛ս այգեգործության գլխում։*

полевой, турагай, Alauda arvensis L.) և կատարավոր արտույտ (Ж. хохлатый, Al. cristata L. Galeritacristata L.)։ Արտույտները վատ չեն երգում, և տեղացիները նրանց պահում են վանդակներում։ Նրանք շատով ընտելանում են։

Սարյակները, կամ տեղական բառով ժեռերը, ձմեռը թողնում են Գանձակը։ Վարդագույն սարյակը (Розовый скворец или каменный, ширкуни—Pastor roseus L.) մարտի կեսին կամ ապրիլի սկզբին է գալիս. թռչքերը այս թռչունները սարը են համարում, որովհետև նրանք կոտորում են մորեխներին։ Թե՛ առաջին և թե՛ երկրորդ տեսակի դեղձանիկները հեռանում են հոկտեմբերի վերջին։

Մարտի վերջին, հենց որ ծառերը կանաչում են, գալիս են ծիծեռնակները (Hirundo urrica L.)։ Մի քանիսը իսկույն կարկատում են իրենց հին բները, մյուսները նորերն են շինում և մի քանի օրից վեց ձու ածում։

Ծիծեռնակից հետո գալիս են բազմաթիվ թռչուններ, որոնցից նշանավոր են. պիրոլը (крикливая иволга), կարկաչուն մշահավ, զլորդ (Oriolus galbula L.), այստեղի ամենագեղեցիկ թռչուններից մինը։ Սա լավ է երգում, մանավանդ ձու դնելիս։

Ճարեկը կամ տրդիկ (черный дрозд, թրք. Ղարաթավուղ-Turdus merula L.), ամբողջ տարին և նույնիսկ ձմեռն այստեղ է անց կացնում։ Սրա արուն սկսում է երգել մարտ ամսից և երգում է մինչև ամառ։ Պարսկական սոխակը (Соловей Гафиза или персидский-Lusciola Hafizi Severz) թռչում է այստեղ ապրիլի կեսին կամ վերջին։ Սրանք մեծ քանակությամբ են լինում և սոնն մի այգում կամ պարտեզում գտնվում են, միայն այնպես քաղցր չեն երգում, ինչպես արևելյան կամ արևմտյան սոխակները։

Խաղտրտնիկը (Пляска или трясогузка-Motacilla alba L.) ջրերի մոտ է ապրում։ Շատ անգամ ձմեռում է այստեղ, և եթե գնում էլ է, վերադառնում է մարտի սկզբին։ Նաև կան մոխրագույն անծեղ (серый сорокопут-Enneoctonus excubitor L.), խածկոտիկ, (снигирь-Pirrhula vulgaris Bechst), ճիղագռավ (сивоворонка или ракша, (Coracias garrula L.), հոպոպ (թուրք. Ֆաթմա-պաճի-Upupa epops L.), պիծակասպան (щурка или пчелоед), երաշատակավ (merops apioster) և ձըկնկուլ-ագկիոն (зимородок). Գիշերային գիշատիչ թռչուններից նշանավոր է բուն (филин-Strix Bubo, Bubo maximus L.), որ երկու ֆուտ բարձրության է հասնում։

Վերոհիշյալ թռչունները պատկանում են երգեցիկների խմբին և ոչ միայն օգտավետ իրենց երգերով մեզ զվարճացնելու պատճառով, այլև կոտորում են մի քանի վնասակար միջատներ, ձվեր և այլն։

Անտառի ավելի մեծ թռչուններից նշանավոր են կկուն և կոցարի մի քանի տեսակները։ Սովորական կկուն (обыкновенная кукушка-cuculus canarus L.) այստեղ է թռչում ապրիլի վերջին և միայն ամառն է մնում։

Կոցարներից այստեղ միայն երեք տեսակը կա. լիսեռնիկ (дятел вертиголовка-աղաջ-գալլան-Jynx torquilla L.), կանաչ կոցար (зелёный д. Picus viridis) և սև կոցարը (черный д. P. Martins L.)։

Սրանք առավելապես գտնվում են Ագատ գյուղի անտառներում։

Ագռավների (corvinae) տեսակներից համարյա բոլորն էլ կան, միայն ավելի նշանավոր է սև, հասարակ ագռավը, կոտաբ (тулам, черный ворон-corvus corax L.)։ կա նաև սերմնաքաղ ագռավ (грач-C. frigilegus), կաչաղակ (сорока белобокая, թրք. սաղսաղան-Pica caudata Briss) և ճայը կամ չարդը (сойка-garrulus glandarius L.).

Ցերեկային գիշատիչ թռչուններից նշանավոր են սպիտակագի արտիվը (орел белохвостый-Haliaetus albicilla L.), սև անդղ (черный коршун-չամաղան-Milvus niger Briss), կարմիր անդղ (красный коршун), սակը (ястреб-утятник, թրք. կիրղի-Astur palumbarius L.) և ճուտակը (սպարկ. շահեն-ястреб перепелятник-astur nisus L.)։ Սրանք մեծ քանակությամբ ոչնչացնում են գաշտային մկներին։ Ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին գալիս են որձ լորը (перепел бильдерчин-Coturnix communis Bonn), սրա հետ գալիս է և լորամարդին (дергач կամ коростель, едьба-crex pratensis bechst)։

Աշունը որսորդության ամենալավ ժամանակն է, և այս միջոցին առավելապես որսում են փասիան (фазан-phasanus colchicus L), կարտվ, մորիկ (серая куропатка чиль-starna cinerea L.)։ Սրանք շատ քնքուշ են և ցրտի չեն դիմանում, ուստի և ցուրտ օրերին գալիս են գյուղերը և մտնում դարմանատոցները, ուր հեշտությամբ նրանց բռնում են։ Սրանց բները հասարակ են և գետնի վրա, ուստի և գարնանային հեղեղների ժամանակ մեծ քանակությամբ ոչնչանում են։

Աղավնիներից գլխավորապես կան հետևյալ տեսակները. վայրասուն հովվալ (сизый голубь-գյոգարչին-columba liva Briss), աղավնի-տատրակ (горлица, ала-бахта-Turtur auritus Ray) և Palumbus torquatus

aldr։ Սրանցից միայն վայրասուն հավփալը ձմեռում է այստեղ, իսկ մյուս երկու տեսակը հեռանում են ավելի տաք երկրներ։

Օգոստոսի վերջին կամ սեպտեմբերի սկզբին ճահիճների վրա երևվում են ջրակոցարը (бекас баранек-scolopax gallinago L.), հոկտեմբերի վերջին գալիս են և վայրի կոցարը կամ ձիական թռչունը (лесной бекас или вальдшкет-S. rusticola L.)։ Ճահճային մյուս թռչուններից հաճախ պատահում են ճալը (белая цапля- ard nivea Gm), եզտլուրիկ կիվիվ (чибис-пигалица-vanellus cristatus L.)։ Գարնան գիշերները լսվում է Ardea stellaris (выра կամ водяной бык L.) ճալը։

Գանձակ գետի ափերի թանձր խոտերի մեջ ապրում է միայնակ Rallus aquaticus (водяной пастушок) և շամբահավը (камышница зеленоногая կամ чертова курица-gallinula chloropus)։ Այս երկու թռչունն էլ շատ վախկոտ են, լավ են վազում, բայց վատ թռչում։ Մի քանի քայլ թռչելուց հետո աշխատում են թաք կենալ եղեգների մեջ։ Ձմռան սկզբին սկսում են որսալ բադեր (утка) և արոս (стрепет, otis-tetrax L.)։ Այս վերջիններս գալիս են աշնան վերջին, և եթե ձմեռը տաք է՝ երկար են մնում, իսկ եթե ցուրտ՝ թռչում են ավելի հարավ և ի ժամանակից հետո կրկին վերադառնում, այսպիսով, նրանք ամբողջ ձմեռ չվում են, անցնելով մի տեղից մյուս տեղ։ Գարնան սկզբին հեռանում են հյուսիս, ուր և ձու են դնում։ Սրանց, ինչպես և մեծ արոսը (дрохв. otis tarda L.) որսում են հորդ անձրևներից հետո, որովհետև սրանց փետուրները այնպես սառուցի թրջվում են, որ սրանք մեծ դժվարությամբ են կարողանում ամենափոքր տարածությունն անգամ թռչել[1]։

Ընտանի կենդանիներից կան կով, գոմեշ, ձի, էշ, ջորի, ուղտ, ոչխար, այծ, խոզ։

Վայրի կենդանիներից՝ աղվես, գայլ, արջ, չաղալ, եղջերու, նապատակ և այլն։

[1] Օգտվել եմ **Емельянов Е.**, Елисаветполь и его окрестности в орнитологическом отношении..., в «Сборник материалов для описания местности и племён Кавказа», т. XXI։

Թռչունների մասին տեղեկություններ տե՛ս Հավաստի բաժնում։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿ

ԳԱՆՁԱԿ

Գանձակ նահանգական և գավառական քաղաքը ձգվում է հյուսիսային լայնության 40°41′ և արևելյան երկարության 64°6′ աստիճանների տակ, 1449 ոտնաչափ բարձրություն ունեցող հարթության վրա և բռնում է 11476 ք. վերստ կամ 13060 ք. կիլոմետր տարածություն։ Քաղաքի միջով անցնում է համանուն գետը, բաժանելով այն երկու նշանավոր՝ հայոց և թուրքաց մասերի։ Հայոց մասը, որ ընկնում է գետի աջ կողմը, բաժանվում է Քիլիսաքենդ և Մոլլաջալլու թաղերի. առաջինում բնակվում են գլխավորապես հայեր, իսկ երկրորդում՝ թուրքեր։ Թուրքաց մասը՝ գետի ձախ կողմը բաժանվում է Երևանցոց, Թուրքերի, Բաղբանչիլար և Նորաշեն թաղերի։ Երևանցոնց թաղում գտնվում է ս. Գևորգ եկեղեցին, քաղաքային ժողովարանը, Ցիրալովի առաջնակարգ, գեղեցիկ և այլ հյուրանոցներ, ամենալավ խանութները և այլն։ Թուրքերի թաղում՝ ընդարձակ հրապարակը, մզկիթը և այլն։ Բաղբանչիլար թաղը ձգվում է Թուրքաց թաղից դեպի արևմուտք և կորչում այգիների (բաղերի) մեջ։ Սրա բնակիչները մեծ մասամբ թուրքեր են։ Նորաշեն թաղը գտնվում է մեծ հրապարակից դեպի արևմտահյուսիս՝ մոտ մի վերստ հեռավորության վրա, Թուրքաց թաղի հետը։ Այստեղ կան ս. Աստվածածնի եկեղեցին և ս. Սարգսի ուխտատեղին։

Եթե համեմատելու լինենք հայոց և թուրքաց մասերը, կտեսնենք, որ թուրքաց մասը բռնում է ամենալավ, հարթ տարածությունը, այնինչ հայոցը՝ ավելի բարձր և համեմատաբար ավելի վատ տեղը, բայց փողոցները, շինությունները և մաքրությունը ի նկատի առնելով, հայոց մասը ավելի բարձր է։

Երևանցոց և Քիլիսաքենդ թաղերում փողոցները կանոնավոր և լայն են, մինչդեռ մյուս թաղերում ընդհանրապես ոչ, թեև այստեղ էլ կան մի քանի կանոնավոր փողոցներ։

Գանձակի կարգը մեծ հրապարակն է, որ տարածվում է թրքաց թաղում, գլխավոր մզկիթի առջև։ Սա մոտ 150 ս. երկարություն և 50 սաժեն լայնություն ունի. բարձր, հարյուրամյա չինարի ծառերը շարված են չորս բոլորը, քառակ աղբյուրը խոխոջում է մեջտեղում, բազմաթիվ խանութներ եղերում են այն, իսկ ահագին քանակությամբ հապար ու մի տեսակ մրգերն ու այլևայլ ուտելեղենները, որ անկարգ ու

անկանոն կերպով ածված, դիզված են այսուայնտեղ, շինարիների սավիրի տակ, նրան մի արտակարգ գեղեցկություն են պարգևում։ Ափսոս որ այժմ, զանազան փայտյա խանութներ շինելով, փոքրացնում և տգեղացնում են այն հրապարակը, որ հնումը և ձիարշավների համար իբր ասպարեզ է ծառայել։

Գանձակի երկրորդ սքանչելիները փողոցների երկու կողմից բարձրացող ահագին, հարյուրամյա շինարիները և սրանց մոտով՝ փողոցների երկու կողմից, քչքչալով հոսող ջրերն են։ Այս շինարիները չափազանց բարձր և հաստ են, մինչև անգամ սրանցից մինի փուչ կոճղի մեջ մի կոշկակարի խանութ է սարքված։ Ափսոս որ ձիաքարշի գիծն անց կացնելիս ստիպված եղան կտրելու այս շինարին։

Նույն բարձրուղեշ, հարյուրամյա շինարիներն են, որ զարդարում են առաջները՝ խանի, իսկ այժմ՝ հասարակաց այգին, որ գեղեցիկ զբոսավայր է։

Շինություններն ընդհանրապես աղյուսից են, որովհետև քաղաքի մոտերքում քարհանք չկա։ Տներից նորերը կանոնավոր, բավական գեղեցիկ, հարմար և բարձր են, իսկ հները, ինչպես և թուրքերինը՝ անկանոն, ցածր և տգեղ։

Հասարակական շինություններից ամենից հինը թուրքաց գլխավոր մզկիթն է, որ նշանավոր է նաև ճարտարապետական տեսակետից։ Սա շինված է Շահ-Աբաս Ա-ի ժամանակ և գտնվում է հրապարակի հարավային ծայրում։ Շրջապատված է պարսպով, որի գլխավոր դռան երկու կողմում բարձրանում են երկու մինարեներ, գավթում կա ջրի շատրվան։ Այստեղ է նաև թուրքաց տղայոց դպրոցը։

Բացի սրանից կա նաև ուրիշ երկու մզկիթ, որ ճարտարապետական կամ հնագիտական տեսակետից ոչ մի առանձին նշանակություն չունին։

Շահ-Աբասի մզկիթից հետո ամենահին շենքը հայոց ս. Հովհաննես Մկրտչի մայր եկեղեցին է, որ գտնվում է Քիլիսաքենդ թաղում։ Սա վեց հասարակ սյուների վրա հաստատված միջակ բարձրության մի շենք է, որի առաջ շինված է մի գավիթ, փոքրիկ կաթուղիկեով, որտեղից զանգակներ են քաշ արած։

Եկեղեցուս շինության թվականը գտնվում է հարավային պատում, արևի ժամացույցի տակ եղած հետևյալ արձանագրության մեջ։

Ի ժամանակն Ովանէս կաթուղիկոսի թվին ԹՂԲ[1] (1633) ամի շինեցաւ սուրբ Ովանէս եկեղեցին։

Գավթի շինության մասին էլ կա արձանագրություն արևմտյան դռան վրա.

Հիմնեցաւ ի հիմանէ գաւիթ սուրբ Յովհաննէս եկեղեցւոյս ի հայրապետութեան տեառն Եփրեմայ եւ առաջնորդութեան Ներսէսի արքեպիսկոպոսի աղեամբ եւ ծախիւ Մահտեսի Տէր Գէորգի Տեր Յովհաննէսեան, հայցեմք առ սիրելի եղբարցդ ում հանդիպիցի ընթերցող՝ զմեզ բեռան հողոմի խնդրեցէք առ Աստուած 1816 ամի։

Իսկ կաթուղիկեի մասին արձանագրություն կա բուն տաճարի արևմտյան դռան հարավային կողմում։

Ի թվին Հայոց ՌՅԺԱ. շնորհիւն Աստուծոյ ես Մահտեսի Աղաջան Խաչատուրեան իմով սեպհական աղեամբ կառուցի ճորաձեւ կաթուղիկէս սուրբ Յովհաննէս Եկեղեցւոյս ի յիշատակ հոգւոյ իմոյ և ամենայն ննջեցելոց եւ կենդանեաց իմոց։ Աղաչեմ զհանդիպողդ, յիշեսցիք զմեզ յաւժանաւոր մաղթանս ձեր, զի միջնորդութեամբ սուրբ Աստուածածնին եւ ամենայն սրբոց ջնջեսցէ Տէր զձեռագիր յանցանաց իմոց, յամի տեառն 1862-ին, Գանձակ։

Այս եկեղեցին է եղել գանձակեցիների պանթեոնը, և այստեղ, կամ սրա բակումն են թաղված Գանձակի գրեթե բոլոր նշանավոր մարդիկ, ինչպես՝

Աղվանից «սուրբ Ներսէս» կաթողիկոսը՝ հարավային խորանում, 1742 թվին։

Մելիք Հաթամի որդի Աբելը նույն խորանում՝ 1776 թ.։

Եղիշե վարդապետը (1757), չարաբերդցի Աթանաս վարդապետը (1764), սուրբ Երուսաղեմա նվիրակ Թոխաթցի Ֆարավոն վարդապետը (1786)։ Մուրթ անապատի առաջնորդ Հարությունն վարդապետը (1800), սուրբ Ստեփաննոս նախավկայի միաբան Ստեփաննոս վարդապետը (1834), եկեղեցու գավթում։ Դալի-Մահրասա մականվանված Ավագ վարդապետ Զարապերտու (1796) և Թյուլի-Աբդուման ուզպաշին (1796) եկեղեցու բակում։

Այս եկեղեցում կա 11 հատ ձեռագիր ավետարան[1] և հինգ մասունք, որոնցից նշանավոր են Տյառնեղբոր Հակոբոսի, Հովհաննես Կարապետի, Պանտալիոն բժշկի և ս. Մինասի մասունքները, արծաթյա խաչերի մեջ ամփոփված։

[1] Տե՛ս Ձեռագրերի բաժնում։

Այս եկեղեցին բավական հարուստ է, և բացի ուրիշ անշարժ նալվածներից, ունի նաև մի բաղանիս։

Բացի այս եկեղեցուց քաղաքումս կան ուրիշ երեք եկեղեցիներ էլ, որոնցից ս. Լուսավորչինը ավելի նշանավոր է ճարտարապետական տեսակետից։ Սա գտնվում է Քիլիսաքենդի վերի մասում մի գեղեցիկ շրջապարիսպի մեջ։ Չորս սյուների վրա հաստատված մի հոյակապ շենք է սա, որի գմբեթը դեռևս չի կառուցված։ Լուսամուտները նեղ և երկար են։ Դռների առաջ կան փոքրիկ, գեղեցիկ գավիթներ։ Եկեղեցու երկարությունն է 30,5 մետր, լայնությունը՝ 20 մետր։ Արևելյան պատի վրա սրտաքուստ կա հետևյալ արձանագրությունը.

Շնորհիվ եւ ողորմութեամբ Աստուծոյ հիմնեցաւ սուրբ տաճարս ի 14-ն սեպտեմբերի 1853 ամի եւ յետ աւարտելոյն տրուվ բարեպաշտ ժողովրդոց Գանձակայ ի կայսրութեան ամենայն Ռուսաց Աղէքսանդր Բ. եւ ի հայրապետութեան տեառն Գէորգ Դ. օծաւ յ9 նոյեմբերի 1869 ամի ի սրբազան Մակար արքեպիսկոպոսէ առաջնորդէ Վրաստանի և Իմերէթի եւ անուանեցաւ Սուրբ Լուսաւորիչ եկեղեցի յանուն սրբոյն Գրիգորի մեծի հայրապետին ազգիս։ Հիմնարկեցաւ սուրբ տաճարս յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի 1853 ամի եւ աւարտեցաւ 1869 ամի։

Մյուս երկու եկեղեցիները հողաշեն և անշուք են։ Սուրբ Գեորգը գտնվում է գետի ձախ կողմում, Մեծ-Շուկայի մոտ, մյուսը՝ ս. Աստվածածինը՝ Նորաշեն թաղում։ Այս երկու եկեղեցիներիս հիմնադրությունը վերագրվում է Երևանից և նրա շրջակայքից գաղթած ժողովրդին, որոնք իրենց հետ բերել են նաև ս. Գեորգա մասունքը, որ այժմ էլ պահվում է համանուն եկեղեցում։

Բացի այս եկեղեցիներից քաղաքում կա նաև ս. Աստվածածին, ս. Սարգիս և ս. Կիրակոս և Ցուղիտա ուխտատեղիները, ուր կիրակի և տոն օրերը բազմաթիվ ուխտավորներ են հավաքվում։

Ռուսներն էլ ունին մի բավական հոյակապ, փոքրիկ եկեղեցի։

Մյուս շինություններից նշանավոր են նահանգապետի տունը, տղայոց գիմնազիան, Ցիրալովի հյուրանոցը, քաղաքային ժողովարանը, Հայոց առաջնորդարանը, արհեստավորաց դպրոցը և այլն։

Քաղաքին ջուր մատակարարում են պ. Պետրոս Նանասյանի Քիլիսաքենդ թաղում և մի պարկի՝ Մեծ Հրապարակում շինած աղբյուրները։ Իսկ Նորաշենի թաղը օգտվում է ջրհորի ջրից։

Քաղաքի միջով անցնում է ձիաքարշ երկաթուղի, սկսած Քիլիսա-

բենդի վերին մասից մինչև շոգեշարժ երկաթուղու կայարանը, որ գտնվում է քաղաքից դեպի հյուսիս, 3 վերստ հեռավորության վրա։

Քաղաքը պատած է այգիներով, որոնց մեջ նշանավոր է էջմիածնապատկան ահագին այգին։

Քաղաքի շրջակայքի հնություններից նշանավոր է հին քաղաքատեղում. այսինքն այնտեղ, ուր գտնվում էր Գանձակը մինչև Շահ-Աբաս առաջինից ավերվելը, թրքաց Գեորգ-Իմամ ուխտատեղին, որ մի գմբեթավոր մատուռ է, որի դմբեթի վրա կանաչագույն աղյուսով խաչաձև շինվածքներ կան։ Հայկական ավանդության ասելով, սա եղած է Հայոց Խոսրով նահատակի գերեզմանը, որ նահատակվել է, չկամենալով մահմեդականություն ընդունել, իսկ պարսկական ավանդությունն ասում է, թե սա մահմեդականություն ընդունելու համար քրիստոնյաներից է նահատակվել։ Այս ուխտատեղու շուրջը կան նախկին քաղաքի ավերակներ։

Գանձակի բնակիչները 1886 թ. աշխարհագրով եղած են 11 543 ար., 8751 իգ., միասին՝ 20294 հոգի, որից հայերը՝ 4837 ար., 4077 իգ., միասին՝ 8914, թուրքեր՝ 6524 ար., 4615 իգ., միասին՝ 11 139 հոգի, ռուսներ՝ 100 ար., 31 իգ., միասին՝ 131 հոգի. վրացիներ՝ 77 ար., 26 իգ., միասին՝ 103 հոգի։ Մյուս ազգություններից՝ 5 ար., 2 իգ., միասին՝ 7 հոգի։ 1897 թ. միօրյա աշխարհագրով[2] Գանձակում եղել են 18 238 ար., 14 852 իգ., միասին՝ 33090 հոգի։

Գանձակում, որպես համանուն նահանգական և գավառական քաղաքում, ամփոփված են բոլոր նահանգական և գավառական վարչական հիմնարկությունները։ Այստեղ է գտնվում և նույն գավառի հոգևոր կառավարությունը, որ ենթարկվում է Վրաստանի և Իմերեթի առաջնորդական թեմին։ Այժմ հաջորդ է արժ. Բագրատ վարդապետ Գեորգ-Թավաքալյանը, որ բավական մեծ համակրություն է վայելում թե հայ և թե նույնիսկ թուրք աղգաբնակչության կողմից[3]։

---

[2] 1897 թ. հունվարի 28-ին կատարած միօրյա աշխարհագրի մատյանները դեռևս գտնվում են Պետերբուրգի գլխավոր ստատիստիկական գրասենյակում, իսկ օրանց տեղեկություններ պահվում է Գանձակի ոստիկանատանը։ Առայժմ խստիվ արգելված է թույլ տալ այս տեղեկություններից օգտվելու, որպեսզի գանազան սխալմունքների տեղիք չտրվին։ Ոչ մի հնարավորություն չունենալով օգտվելու այս աշխարհագրից, մենք Գանձակի գավառի վիճակագրական տեղեկությունների բաժինը կտպագրենք, երբ այդ մատյանները կվերադարձվին Թիֆլիսի վիճակագրական գրասենյակին, երբ և թույլ կտրվի օգտվել նրանցից։

[3] Պարտք եմ համարում իմ խորին շնորհակալությունը հայտնել ինչպես արժ.

Հաճի-քենդ. գտնվում է Գանձակից դեպի հարավ, 23 վերստ հեռավորությամբ, ուր Սարյալ լեռնաշղթայի բազուկները բոլորաձև տարածվելով կազմում են մի քանի փոքրիկ ձորակներ։ Ամառանոցը տեղավորված է այս բազուկներից մինի վրա, անտառի մեջ, և բաժանվում է երկու մասի. ներքին և վերին։ Առաջինում բնակվում են առավելապես աղքատ, իսկ վերինում՝ հարուստ մարդիկ։ Յուրաքանչյուրն էլ կրում է յուր բնակիչների հատկանիշ գույնը։ Առաջինում գտնվում է կեղտոտ բաղարը, փողոցներում վեր ածած ամերուկի և սեխի կուչտերով և սրանց կճեպներով։ Այստեղ, մի հաստաբուն ծառի տակ ապաստանած աշխատում է մաշկակարը, երեկոները յուր գործիքները ծառի բնի մեջ փորված պահարանի մեջ զետեղելով։ Նույն ծառի մյուս կողմն էլ ասիական դարբինն է յուր փուքսն ու սալը սարքել։ Սրա հանդեպ ասիական հյուրանոց է, ուր դավուլ-զուռնի և սազանդարի ձայնը երբեք չի ընդհատվում, և որը կեղտոտության և վաշխառության մի կատարյալ բուն է. ամենահասարակ, խոհանոցանման սենյակի օրավարձը երկու ռուբլի է։ Վերին մասում, մանավանդ բաքվեցիների թաղում, երևում են երկհարկանի, գեղեցիկ և բավական ճաշակով շինված տները, ընդարձակ պատշգամբով, փոքրիկ պարտեզներով և շատրվաններով։ Այստեղ կա նաև կլուբ (ակումբ)՝ մի փոքրիկ դահլիճով, երեք կանոնավոր և բավական լավ հյուրանոցներ։ Մի փոքրիկ, քարաշեն, բավական գեղեցիկ ռուսական եկեղեցի էլ շինված է հայկական մի ավերակ եկեղեցու տեղը, իսկ հայկական եկեղեցի չկա։

Բարեբախտաբար հասարակաց գրոսավայր չկա, ուր կանայք սեղմված կորսետներով և սնդույրած երեսով գրոսնեին։ Այստեղի գրոսատեղին՝ անտառն է, ուր յուրաքանչյուր գերդաստան բոլորովին ազատ և ուրիշների ընկերակցության վտանգից ազատ կարող է բոլորովին նեգլիժե (աննկատ) գրոսնել, երգել, խաղալ։ Սառնորակ աղբյուրները, որ բխում են անտառի զանազան կողմերում և փոքրիկ առվակը, որ կարկաչում է ձորակի մեջ, ամենալավ գրոսավայրերն են կազմում քեֆ և թեյ սիրող սարվորների համար, որոնց քրքիջի և երգի ձայները գալիս են ընդհատելու ծառերի քաղցր սոսափյունը և թռչունների դայլայլիկը։

Գիշերները, մինչդեռ բուն արիստոկրատ դասակարգը կլուբի կա-

Բագրատ վարդապետին, նույնպես և դավառապետ պ. Մորակուն, որ մեծապես նպաստեցին ինձ դավառում ճանապարհորդելիս։

նալ սեղանների առաջ կավճի փոշի է կուլ տալիս, իսկ նրա փափկասուն կանայք լոտո կամ կեկլի են խաղում, երիտասարդների խմբերը անտառի զանազան կողմերում և ամառանոցի արևելյան ծայրի բարձրության վրա, որտեղից երևում են Մռավն ու Քյափասը, սիրերգեր են սարքում։ Ամեն երեկո զինվորական նրաժշտախումբը ածում է կլուբի ռոտոնդում, բացի ուրբաթ օրերից, երբ իջնում է ներքին շենեցիներին էլ հաճույք պատճառելու։ Միայն կիրակի երեկոները տեղի են ունենում եվրոպական պարեր, մյուս երեկոները պարն արգելված է, որովհետև պարող զույգերը միմյանցով գրավված, կարող են դիպչել կանալ սեղաններին և կամ բախտ փորձողների ուշքը դրավել։

Լողարաններ, բաղնիս, հանքային ջրեր չկան, բացի սելտերյան ջրի մի ավազանից, որ գտնվում է ամառանոցից փոքր-ինչ հեռու, Մուսուրի մոտ, բայց նրանից էլ չեն օգտվում։

Այստեղ ամառանոց են գալիս ոչ միայն Գանձակի քաղաքացիները և կառավարչական ատյանների ծառայողները, այլև բաքվեցիներ։ Իսկ ձմեռը բացի պահապաններից, ոչ ոք չի լինում։

ՀԱՅՈՑ ՆՇԱՆԱՎՈՐ ԳՅՈՒՂԵՐ

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ Ա ՇՐՋԱՆ

Խանքենդի հասարակություն. *Ղարադաղլու կամ Խանքյանդ.* Գտնվում է Գանձակից դեպի արևելք, 18 վերստ հեռավորության վրա։ Գյուղում կա մի ազյուսաշեն եկեղեցի Դանիելյանի ծախսով կառուցված։ Հողը շատ սակավ է, միայն ունի այգիներ, որ ոռոգվում են Սափիքյուրդ անվանված արխի (առու) ջրով և տալիս են բավական լավ գինի։ Բնակիչները գաղթել են Ատրպատականի Ղարադաղից 1828 թվականին. ընդամենը 40 տուն են, 89 արս., 83 իգ., միասին՝ 172 հոգի, բոլորն էլ հայ լուսավորչական։

Գյուղից կես վերստ հեռու Կուրակ-չայ գետի ափին գտնվում է Նահատակ անուն կրող ուխտատեղին։

Ղարադաղլուի մոտ է Թուրքաց Ղարադաղլու փոքրիկ գյուղը։

Սարով. Գտնվում է Գանձակից հյուսիս, Կուրակ-չայի ձախ կողմում, ունի մի հասարակ, փայտաշեն եկեղեցի։ Գյուղը պատկանում է Կամսարականներին։ Բնակիչները գաղթած են Վերի-Առանձնակի

Սարով գյուղից, ընդամենը 35 տուն են, 83 ար., 72 իգ., միասին՝ 115 հոգի, բոլորն էլ հայ լուսավորչական։

Սարովի մոտ գտնվում է Թուրքաց Սարով գյուղը։

Ջ ա ր գ յ ա լ ա ր կամ Խ ո յ լ ա ր. Գտնվում է Ղարադաղլուից մոտ մեկուկես վերստ դեպի հարավ, Կուրակ գետի ձախ կողմում։ Ունին սեփական արխ։ Գյուղում կա մի հասարակ եկեղեցի։ Բնակիչները գաղթել են Խոյից 1828 թվականին։ Ընդամենը 86 տուն են, 189 ար., 174 իգ., միասին՝ 363 հոգի, բոլորն էլ հայ-լուսավորչական։

Խանքենդ, Սարով և Ղարադաղլու գյուղերը միասին կազմում են մի հասարակություն։ Երեքի կլիման էլ սաստիկ տաք է, ուստի և բնակիչները մյուս գյուղացիների հետ համեմատած՝ ծույլ են։ Երեք գյուղերում էլ, բացի սովորական երկրագործությունից և այգեգործությունից, պարապում են նաև շերամապահությամբ և բամբակի արդյունաբերությամբ։

ՌՈՍԻԿԱՆԱՆԱՆ Բ ՇՐՋԱՆ

Բանանցի հասարակություն. Բ ա ն ա ն ց կամ Բ ա յ ա ն գյուղ.— Տարածվում է Արթենաջրի ձախ ափին, երկու երկար ու ցածր բլրակների գագաթներին և երեք կողմից շրջապատված է Փոփոստ (կոնաձև), Ծակ-քար, Փլաթի (կաղնու)-սեռ և Տատի-սեռ լեռներով։

Ավանդության ասելով, այս գյուղը հիմնվել է Գանձակի հետ միաժամանակ, և միևնույն ժողովուրդն է բնակություն հաստատել այս երկու տեղումն էլ։

Մի ուրիշ ավանդություն էլ ասում է, թե Բանանց անունը ծագել է Բան-անոց (գործարան) խոսքից, որովհետև այստեղ եղել են Քարհատի երկաթը հալելու գործարաններ։ Գյուղում փողոցներ չկան, այլ ծուռ ու մուռ կածաններ են։ Տների մեծ մասը կանոնավոր սենյակներից են բաղկացած, որոնցից ամենահինը 33 տարի առաջ է շինված։ Մյուս, փոքրագույն մասը գետնափոր խուղեր են։ Եկեղեցին, որ կրում է ս. Լուսավորիչ անունը, շինված է մի ապառաժի վրա և բավական ընդարձակ ու գեղեցիկ է։

Գյուղի արևմտյան կողմում մի բլրակի վրա գտնվում է մի հին հանգստանան, ուր կա մի խաչարձան ՋԻԶ (1477) թվականից «Պարոն Էվէտրինայ»-ի։

Գյուղի կլիման սաստիկ տաք է և խեղդիչ, որովհետև պատած է լեռներով։ Բուսականությունը շատ հարուստ է, և ամբողջ ձորակը պատած է պտղատու ծառերով։

Բնակիչները մեծ մասամբ ընիկներ են, բոլորն էլ հայ լուսավորչական, 274 տուն, 1135 ար., 860 իգ., միասին՝ 1995 հոգի։ Մտավորապես այս գյուղացիները բավական բարձր են, իրենց երկու քահանաներն էլ միջնակարգ կրթության տեր են։ 1872 թվականից ունեցել են եկեղեցական-ծխական դպրոց, այժմս էլ պետականն է բացվել։ Շատ երիտասներ էլ ուսանում են գանազան քաղաքներում։ Այս գյուղացի են՝ բժիշկ Տեր-Միքայելյանը և ինժեներ Լևոն Տեր-Միքայելյանը, իրավաբան Հովհ. Տեր-Իսրայելյանը, ինչպես նաև Ստեփան Տեր-Ավետիքյանը, որ հայտնի է Բանանց գյուղի կյանքից գրած պատկերներով։

Փ ո ք ր Բ ա ն ա ն ց կամ Դ ա մ բ լ ա ձ ո ր. Գտնվում է Մեծ Բանանցից մի վերստաչափ հեռու, նույն վտակի աջ կողմում։ Այստեղ կա մի ավերակ եկեղեցի, որի սվազանի վրա գրված է. «Մեհրի ճան, տարան ա՞...»։

Ն ա հ ա տ ա կ. Փոքր Բանանցից փոքր-ինչ ներքև գտնվում է Նահատակ անուն ուխտատեղին, իսկ սրա հանդեպ, ձորի ձախ ափում մի բարայր, որի մեջ, ասում են, ճգնել է մի ճգնավոր։

Ջ ո վ դ ա ր կամ Հ ա ր ց - հ ա ն գ ի ս տ. Գտնվում է Բանանց գյուղից հյուսիս, Մլզնարերդ սարի հյուսիսարևմտյան կողմում, մի բարձր սարահարթի վրա, որտեղից երևում է Գանձակը յուր այգիներով ու շրջակայքով։ Մի քիչ հեռու բարձրանում է մի լեռ, ուր կան շատ հին հանդիստներ։ Գուցե հենց այս պատճառով էլ գյուղը կոչվել է Հարց-հանգիստ։ Գյուղի շրջակայքում կան լավ քարհանքեր, որտեղից քար են տանում Գեռաբեկում հնոցներ շինելու։ Գյուղում կա մի եկեղեցի, որի մեջ դրված է Մլզնարերդից բերված մի շատ գեղեցիկ, փոքր և սպիտակ խաչարձան, հետևյալ արձանագրությամբ.

Թվ. ՈԴ. Անուամբն Աստուծոյ ես Մարգարիտ դուստր Ուխտիկայ կանգնեցի զսուրբ ճշանս ի փրկութիւն նոգւոյն Զարդմբերին եւ Զարուազունին, Մխիթարայ եւ Կանանին, որ յաղաւթս յիշլ եւ զԱտամ, որ գործող էր խաչիս։

Բնակիչները հայ լուսավորչականներ են, որ տարբերվում են մյուս գյուղացիներից իրենց կոշտ բարքերով։ Ընդամենը՝ 98 տուն են, 472 ար., 383 իգ., միասին՝ 855 հոգի։

Գյուղի հյուսիսային կողմում, մի խոր ձորում, որտեղից հոսում է Հարց-հանգիստ առվակը, գտնվում է Վ ա ս կ ա թ ե լ (Ոսկեթել) կոչված փոքրիկ, փայտածածկ մատուռը, որի մասին ավանդությունն ասում է,

թե մի վսկաթել կույս աղջիկ է նահատակվել այստեղ։ Մատուռից ներքև բխում է մի սառնորակ աղբյուր։

Սրանից փոքր-ինչ բարձր գտնվում է Բախշիկ ավերակը, որ հին գյուղատեղի է, ունի եկեղեցի և մեծ հանդուստարան։

Փիփի հասարակություն. Նոր-Փիփ. Շիբլի-քար, Եղնանիստ, Լալուկ-քար, Ջիլիբիր, լեռները բոլորաձև տարածվելով, իրենց լանջերի ընդհարման վրա կազմում են մի փոքրիկ հարթ տարածություն, ուր տեղավորված է Նոր-Փիփ գյուղը։ Ավանի աղբյուրներից գոյացած մի փոքրիկ առվակ հոսում է գյուղի միջով և ջրելով մոտակա այգիները, թափվում է Շամքորի մեջ։

Եկեղեցին սրբատաշ քարերից, վեց գեղեցիկ, կլոր սյուների և ռոմանական կամարների վրա հաստատված շենք է, մի բավական գեղեցիկ գմբեթով։

Գյուղը համեմատաբար շատ քիչ է ենթարկվել քաղաքակրթության, այնպես որ տների մեծագույն մասը դեռ էլի դարագամներ են։

Բնակիչները գաղթել են Հին-Փիփից, ընդհամենը՝ 319 տուն, 1465 արական, 1331 իգական, միասին՝ 2796 հոգի։ 1877 թվականից ունեցել են Հայոց եկեղեցական ծխական դպրոց, որի շենքը կառուցվել է Ջարեքա վանքի վանահայր Աստվածատուր վարդապետ Տեր-Հարությունյանի ծախսով։ Բացման առաջին տարին ուսուցիչ է եղել Աղեքսանդր Արարատյանը, որ դպրոցի բացումը նկարագրել է յուր «Գավառական ուսումնարանի հիմնարկությունը» գրվածքի մեջ։

Հին-Փիփ. Գտնվում է Շամքոր գետի աջ ափին, այժմ ավերակ է, որովհետև բնակիչները՝ կլիման սաստիկ տաք և շատ օձեր լինելու պատճառով տեղափոխվել են Նոր-Փիփ։ Գյուղի անունը ծագել է, ինչպես ասում է ավանդությունը, Փեփրոնյա կույսի անունից, որ նահատակվել է այստեղ և ամփոփվել գյուղի եկեղեցում։ Գյուղը Ջակլիկ էլ է կոչվում, մոտակա «զակ»-շիրի հանքերի պատճառով։ Գյուղի եկեղեցին բավական մեծ և շքեղ է։ Սրա դռան վրա կա հետևյալ արձանագրությունը.

Կամաւն Աստուծոյ մեք փիփեցոց ժողովուրդս միարան շինեցաք զեկեղեցիս ի հայրապետութեան տեառն Պետրոսի ձեռամբ Սարգիս վարդապետին, յիշխանութեան Մուրբուզա Ղուլի խանին. յիշեցէք ի Քրիստոս տանուտէր Վարդանէսն եւ կողակից Մարեան։ Ավազանի վրա էլ գրված է. Յիշեցէք ի Քրիստոս Մատուռն եւ կողակիցն իւր Մարեան թվ. ՌՃԺԹ։

Եկեղեցու հարավային կողմում կա մի փոքրիկ մատուռ, որին տեղացիները կոչում են Բարսամ-Ճգնավոր։ Մատուռի մեջ կա երեք գերեզման, որոնցից միմիայն մինի տապանաքարի վրա կա արձանագրություն, որ հետևյալն է.

Ես Մաղազայ եպիսկոպոս կանգնեցի զխաչս հաւր.... Եղբաւրն իմոյ տէր Պաւ... մաւռն Եպիսկոպոսին թվ. ՉԶ։

Այս գյուղատեղին այժմ իբր ձմեռանոց է ծառայում Նոր փիփեցիների համար, որոնք իրենց անասունները ձմեռն այստեղ են պահում։

Բուսական նահատակ. Գտնվում է Նոր Փիփից հաղիվ երկու վերստ հեռավորությամբ գեպի արևմտահյուսիս՝ մի լեռան գագաթին։ Սա մի հատարակ մատուռ է դարավոր ծառերի հովանու տակ։ Լեռան ստորոտում ևս կա մի ուրիշ մատուռ, մի սառն աղբյուրի և սուրբ համարված ծառերի կողքին։ Ավանդությունն ասում է, թե մի Ասկան անունով մարդ յուր քրոջ հետ նահատակվել է այստեղ։ Քրոջ գերեզմանը գտնվում է աղբյուրի մոտ, իսկ եղբորը՝ լեռան գլխին։ Համբարձման, Վարդավառին և ս. Աստվածածնին բազմաթիվ ուխտավորներ գալիս են այստեղ ուխտ։

Փիփի արևելահյուսիսային կողմում, Շամքորի աջ կողմի մի բարձր տարահարթի վրա գտնվում է մի գյուղատեղի, Սրվրեցիք անունով, ուր ավերակ եկեղեցու լուսամուտի քարը մի տապանաքար է՝ հետևյալ արձանագրությամբ. Թվ. ՉԻԲ. Ես Համզա կանգնեցի զխաչս որդւոյ իմոյ Պապի։

Նույն գյուղից հարավ, Շիբասարի վրա կա մի մատուռի ավերակ, որ կա մի գերեզման։ Այս մատուռը ուխտատեղի է։

Գարգմանիկ. Սա հին Գարգման ավանն է, որ այժմ թրքաբնակ է, գտնվում է Գանձակից 40—42 վերստ հեռավորությամբ, Փիփ և Ղաբաղ-թափի մեջտեղը, Գարգման վտակի ձախ կողմում։ Գյուղի մեջ երևում է մի հին եկեղեցու ավերակ, կիսով չափ թաղված հողի տակ։ Եկեղեցու շուրջը կան բազմաթիվ գերեզմաններ, որոնցից 7 ունին միմյանցից մի-մի քայլ հեռավորությամբ բարձր միատեսակ խաչքարեր։ Սրանցից մինի վրա գրված է. Կանգնեցաւ խաչս Քրիստոսի թվ. ԻԿԱՄԱ։ Մյուսների տապանագրերն անընթեռնելի են։

Գյուղից փոքր-ինչ հեռու, դեպի հարավ կա մի փոքրիկ մատուռ Սրբրյան անունով, որ ուխտատեղի է։ Սրա մոտ կա մի 3½ մետր բարձրության մահարձան, հետևյալ տապանագրով. Այս է տապան տուր Սրապիոնի բռոն մեծին Սամոին մնծին Սատին թվ. ՉԶ։

Սույն գյուղից բավական վերև կա մի հին գյուղատեղի Ղաբաղ-

թափի անունով, ուր կա դեռ կիսականգուն մի մեծ եկեղեցի, որի վրա կան հետևյալ արձանագրությունները. «Ես Խուրոլս. թվ. ՌՃԽԱ» 'ի Թ. ՌՃԾԵ: Այստեղ այժմ թուրքեր են բնակվում։

Խաչակապի հասարակություն. Քարհատ-գյուղ կամ Գաշքասան. Ընկած է Բանանց գետի ձախ ափին մի խոր ձորում և երեք կողմից պատած է բարձր լեռներով։ Ունի մի հանարակ, փայտաշեն եկեղեցի։

Ինչպես ասել ենք, Քարհատը նշանավոր է իր երկաթի հանքերով։ Բնակիչները բնիկ հայեր են, 80 տուն, 435 ար., 361 իգ., միասին՝ 796 հոգի։

Գյուղից 4—5 վերստ հեռու, հարավ-արևմտյան կողմը նույն գետի աջ ափին գտնվում են Հին Քարհատի ավերակները, որոնց մեջ նշանավոր է ՌՃԻԸ թվին շինված եկեղեցին։

Խաչակապ կամ Խաչափակ և կամ Ղուշչի. Գտնվում է Կիրանցի հյուսիսային կողմը, մի հովտում, որի միջով հոսում է մի փոքրիկ առվակ։ Տների մեծ մասը գետնափոր է, մյուսները մեկ կամ երկհարկանի կանոնավոր բնակարաններ են։ Եկեղեցին չորս սյուների վրա հաստատված գեղեցիկ, թաղակապ մի շինք է, որ շինված է 1650 թվին և վերանորոգվել է 1864-ին։

Եկեղեցու մոտ կա հանգստարան, ուր նշանավոր է հետևյալ տապանագիրը. Այս է տապան մելիք Պարին թվ. ԹՄԼԷ։

Գյուղում կան երկու՝ Խաչ-քցի[1] և Միրանավոր անուններով մատուռներ, որոնք ուխտատեղիներ են համարվում։ Գյուղի չորս կողմն էլ կան բարձր խաչարձաններ։ Ավանդությունը պատմում է, թե այդ խաչարձանները կանգնեցրել է ս. Մեսրոպը, երբ Գարդմանի խուրս իշխանի ձեռնտվությամբ վերացրել է այստեղից կռապաշտության մնացորդները։ Եվ ի հիշատակ այդ անցքի՝ գյուղը կոչվել է Խաչակապ կամ Խաչափակ։

Մի ուրիշ ավանդություն էլ բացատրում է գյուղի նորագույն անունը։ Շահ-Աբասի արշավանքների ժամանակ այս գյուղից Գրիգոր անունով մեկը ցանկանում է մի բաղե բռնել, որ շահին ընծա տանի, բայց ժայռից վայր է ընկնում և մեռնում։ Շահ-Աբասը լսելով այդ, կամենում է այս գյուղը նվիրել նրա հորը, սակայն վերջինս հրաժարվում է և խնդրում է նվիրել համայնքին, որպեսզի միշտ իր հանգուցյալ որդուն ողորմի տան։ Շահն էլ կատարում է նրա խնդիրը և գյուղն էլ կոչում է Ղուշչի։

Բնակիչները բնիկ հայեր են, ընդամենը՝ 114 տուն, 676 ար., 637 իգ., միասին՝ 1313 հոգի։

Պիրանց կամ Սեիդ-քյանդ. Գտնվում է Քարհատից 3—4 վերստ արևմուտք և նույնչափ էլ Խաչակապից հարավ, Արութինի ջրի վրա։ Ունեն մի փայտաշեն եկեղեցի։ Բնակիչները գաղթել են Ղաբաղթափից, ընդամենը 35 տուն են, 237 ար., 199 իգ., միասին՝ 436 հոգի, բոլորն էլ հայ լուսավորչական։

Գյուղի մոտ կա Կաղնի-խաչ անունով մի փոքրիկ մատուռ, ուր ավանդաբար ասում են, թե ամփոփված է Գարդման զավառիս տիրապետող խուրս իշխանը, որին պատկանելիս են եղել բոլոր հանքերը[2]։

Մատուռի մոտ, որ մեծ ուխտատեղի է, կա մի հինավուրց վանք։

Միրզիկի հասարակություն. Ոսկանապատ կամ Զուռնապատ. Տարածվում է համանուն կամ Գանձակ գետակի ձախ ափին, մի փոքրիկ բարձրության վրա։ Ձորակը ծածկված է այգիներով, գյուղի փողոցները անկանոն են և կեղտոտ, տները ընդհանրապես վատ չեն, թեև կան նաև երկհարկանի գեղեցիկ տներ ևս։ Գյուղի մեջ կա Ս. Հակոբ հին եկեղեցին, ուր այժմ էլ արարողություն է կատարվում, իսկ ձորի մեջ, գետի աջ ափին, կա մի փոքրիկ թաղակապ, անսյուն մատուռ Ս. Սարգիս անունով։ Մի այդպիսի մատուռ էլ կա գետի ձախ ափին, Ս. Աստվածածին անունով։ Այս երկուսի շուրջն էլ կան քանդված խուցեր և գերեզմաններ։

Գյուղում կա պետական երկդասյան դպրոց։

Այս գյուղումն են բնակվում Մելիք-Շահնազարյանները, որոնց նախնիները երկար ժամանակ իշխել են այս գյուղում։

Բնակիչները բնիկներ են, 117 տուն, 406 ար., 334 իգ., միասին՝ 740 հոգի։

Ոսկանապատ գյուղից վերև, գետի ափին, միմյանցից փոքր հեռավորությամբ գտնվում են Դաստափոր, Ցնծահալ և Գյատամիշ թըր-

[1] Տե՛ս Հավատքի բաժնում։

[2] Մի ուրիշ ավանդություն էլ ասում է, դա քրիստոնեություն ընդունած մի թուրքի գերեզման է, որ նահատակվել է թուրքերից։ Ավանդությունն ավելացնում է, թե նահատակությունից հետո հայերի և թուրքերի մեջ վեճ է ծագել, թե ում ծիսակատարությամբ պետք է նրան ամփոփել։ Վերջապես համաձայնել են և նախ մոլլան և ապա քահանան հրամայել է նահատակին կանգնելու, և միայն քահանայի հրամայած միջոցին ենչեցյալը կանգնել է, ուստի և հայկական ծեսով են թաղել։

քաքնակ գյուղերը, ուր մինչև այժմս էլ մնում են մի-մի ավերակ եկեղեցի և ընդարձակ հանդստարան։

Բրաջուր (Աղբրաջուր, Ղարա-քեշիշ). Գտնվում է Գանձակից դեպի հարավ-արևմուտք, մոտ 15 վերստ հեռավորության վրա, Միրզիկի հյուսիսային կողմում։ Տեղը դաշտային է և լավ ճանապարհով հարաբերություն ունի քաղաքի հետ։ Շրջակայքում՝ անտառներ չկան, այլ միայն մացառներ։ Գյուղում կան փոքրիշատ կանոնավոր փողոցներ, տների մեծ մասը նոր ձևի են, միայն կալերը, մարագները և գոմերը նույնպես գտնվում են գյուղի մեջ, տների մոտ։ Ունեն մի հասարակ եկեղեցի։ Գյուղում այգիներ, բանջարանոցներ չկան՝ ջուր չլինելու պատճառով։

Բնակիչները բնիկ և Պարսկաստանից գաղթած հայեր են, ընդամենը 35 տուն. 190 ար., 163 իգ., միասին՝ 363 հոգի։ Պարապմունքը նույնն է։

Այս գյուղի հարավային կողմում կա կայծքարի և սպիտակ քարի հանք։

Միրզիկ. Գանձակից մոտ 20 վերստ արևմտահարավ, Ոսկանապատից 2—3 վ. դեպի արևմտահյուսիս, մի բլրի լանջին։ Հարավային կողմից պատած է անտառով, գյուղը շատ գեղեցիկ տեսք և քաղցրահամ աղբյուրներ ունի, միայն կանոնավոր փողոցներ չկան և կալերը, մարագները և գոմերը գտնվում են տների մոտ։ Ունեն մի քարաշեն փոքրիկ, խոնավ եկեղեցի, որի կամարակալ քարի վրա գրված է. Արդեամբ Միրզիկայ սուրբ Գաբրիել եկեղեցիս շինեցաւ 1674 ամի։

Գյուղից մեկուկես վերստ հեռավորությամբ կան բանջարանոցներ, ուր կան նաև խնձորի և տանձի ծառեր։

Գյուղի հարավային կողմում կա մի կիսավեր, հասարակ մատուռ, որ հայտնի է Ովսեպ անունով։ Սրա խորանում բուսած է մի մեծ կաղնի ծառ, որ պաշտվում է։ Գյուղից մի քիչ վերև կա մի ուրիշ ավերակ մատուռ Ս. Աստվածածին անունով և երեք խաչարձան։

Բնակիչները Հայեր են՝ 71 տուն. 339 ար., 264 իգ., միասին՝ 603 հոգի։ Բացի երկրագործությունից և անասնապահությունից պարապում են նաև ածխագործությամբ և փայտ են կրում Գանձակ։

Մուռութ. Տեղադրված է Սարի-յալ լեռան արևելահայաց լանջին մի ցիրուցան հարթակի վրա. առջևը ձգվում է խոր ձորը, որի միջով հոսում է Ոսկանապատի գետը։ Ձորը պատած է գեղեցիկ այգիներով։ Մուռութի տները գեղեցիկ են և շատերը եվրոպական կահկարասիով զարդարված։ Գանձակեցիները ամառանոց են գալիս այստեղ, որ իսկապես շատ լավ ամառանոց կարող էր համարվել, եթե խոնավ չլիներ։

Գեղեցիկ է նաև գյուղական փոքրիկ եկեղեցին։

Բնակիչները Պարսկաստանից 1828 թվին եկած հայ գաղթականներ են. 34 տուն. 131 ար., 107 իգ., միասին՝ 238 հոգի։

Միխայլովկայի հասարակություն. Աբլահ-գյուղ. գտնվում է Գետաշենից հյուսիս, ձորի մեջ. փոքրիկ գյուղ է, ուր միայն նշանավոր է Սուրբ Մինաս անունով բավական գեղեցիկ սրբատաշ եկեղեցին, որ ունի հետևյալ արձանագրությունը.

Թվ. ՌՃՁԱ. Յիշատակ է Պետրոսին, Յակոբին, Մրգին տրոպ տէր Թեոդոսին, որ էին որդիք Աւետիսի՝ ազգէն Հասանայ, որ էր ժամանակն Վալի Նամատին[3], որ կոչի Թանմազ, որ բագաւորեցաւ ի երկրին բարսից, բազում գաւառս աւերեաց։

Բնակիչները բնիկ են, մի մասն էլ Հաթերքից գաղթած. բոլորն էլ հայ լուսավորչական. 34 տուն, 111 ար., 85 իգական, միասին՝ 196 հոգի։

Ս. Հովհաննես անունով մի ուխտատեղի կա գյուղի հյուսիսային կողմում, բարձր սարի գլխին, որ մի խաչարձան է, հովանավորված բարձր և հինավուրց հացի և կաղնի ծառերի սաղարթներով։

Աղատ կամ Սուլուկ գյուղ. Հիմնված է Պանդ լեռան լանջին։ Ավանդաբար պատմում են, թե Նադիր-Շահը այս գյուղի ամեն տեսակ հարկերից ազատ է կացուցել, ուստի և կոչվել է Ազատ։ Եվ հետո միայն, Ջավադ-խանի եղբայր Իմամ-Ղուլի-խանը գյուղում տեղի ունեցած մի ապստամբության պատճառով զրկել է այդ արտոնությունից[4]։

Բնակիչները լուսավորչական հայեր են, ընդամենը 52 տուն. 189 ար., 164 իգ., միասին՝ 353 հոգի։

Գյուղի արևմտյան կողմում, մոտ մեկուկես վերստ հեռու գտնվում է մի հին, ավերակ վանք, ուր ավանդության ասելով հանգչում են Եր-

[3] Նադր-Շահին։

[4] Մի ուրիշ ավանդություն էլ ասում է, որ Լենկթեմուրը այս գյուղով անցնելիս՝ գինվորները մտել են գյուղի եկեղեցին և կողոպտել։ Այս պատճառով Լենկթեմուրի վիրը ծավել է և երեսը ետեր դարձել։ Լենկթեմուրը հարցափորձ է արել այս թշվառության պատճառի մասին և երբ մի տիրացուից լսել է, թե եկեղեցին է պատժել, հրամայել է վերադարձնել ավարը, և անմիջապես վիրը ուղղվել է. այս պատճառով էլ վանքը, ինչպես և ամբողջ գյուղը ազատ է կացուցել ամեն տեսակ հարկերից և հարձակումներից, ուստի և վերակոչվել է Ազատ (Տեր-Հարությունյան)։

մողյա քահանայի նշխարքը։ Սրա դռան կամարակալ քարի վրա գրված է.

Թիւն ՉԻԸ. Եւ Մխիթար եւ Տիրածեր շինեցաք զեկեղեցիս ի հայրապետութեան տէր Ըստեփանոսի Աղուանից կաթուղիկոսի։

Սրանից փոքր ինչ վերև.

Ապաղայ եկ խանին ու խարայնախիին Աւաս լեռով շինեցի զեկեղեցիս։

Մատուռի շուրջը կա հանգստարան, ուր կան ԺԲ դարից գերեզմանաքարեր, իսկ արևմտյան կողմում՝ գյուղատեղի։

Բ ա խ շ ի կ կամ Հ ա ճ ի - շ ե ն և կամ Հ ա ճ ի - ք ե ն դ. Գտնվում է Աբլահի հարավարևմտյան կողմում և հիմնված է 1870 թվին, երբ կառավարության կարգադրությամբ Հաճի-քենդի այժմյան ամառանոցի նախկին բնակիչները գաղթեցին այստեղ։

Բայց մոտակա ընդարձակ գերեզմանատնից և հին եկեղեցուց հայտնի է, որ հին գյուղատեղի է եղել։

Բնակիչները 38 տուն են, 141 ար., 123 իգ., միասին՝ 261 հոգի։

Գ ե տ ա շ ե ն կամ Ջ ա յ - ք ե ն դ. Գտնվում է Հաճի-քենդից դեպի արևելահարավ, մի խոր ձորում, որի միջով հոսում է Կուրակ-չայ գետակը։ Ձորը ամբողջապես ծածկված է այգիներով։ Գյուղի տները գլխավորապես գտնվում են ձորի արևելահայաց լանջին, իսկ արևմտահայաց լանջին կան հին հնձանների ավերակներ, նոր շինվեցավ պետական դպրոցական շենք։ Շինությունների մեջ նշանավոր է Տեր-Գրիգորյանի քառահարկ, գեղեցիկ տունը և Մելիք-Մնացականյանների նախկին մելիքական ապարանքը։ Գյուղի գրեթե կենտրոնում գտնվում է Ս. Աստվածածնի եկեղեցին, որ մոտ ժամանակներս նորոգել են, վերացնելով այն աղբյուրը, որ առաջ բխում էր եկեղեցու հյուսիսային պատից և թափվում եկեղեցու կենտրոնում շինված մի քառանկյունի ավազանի մեջ։ Եկեղեցին պարսպապատ է և գավթում կա մի հինավուրց բոշնի ծառ, որից կախված են եկեղեցու զանգակները։

Գյուղի վարի ծայրում գտնվում է մի փոքրիկ, հասարակ մատուռ, ուր կա մի նահատակի գերեզման։ Այս մատուռը նշանավոր ուխտատեղի է և կոչվում է «Ավազ Ս. Նշան»։ Դռան կամարակալ քարի վրա կա հետևյալ արձանագրությունը.

Թվ. ՌՃԻԶ. կամաւ ամենակալին Աստուծոյ շինեցաւ սուրբ նահատակս ձեռամբ... եւ որդուն Քամալ պակն, օգնականութեամբ գեղուս. թագաւորութեան Պարսից Շահ Սուլէման, հայրապետութեան Սիմէոնին յիշատակ Փամին։

Մատուռում պահվում է չորս նշանավոր գրչագիր ավետարան[1] և հետևյալ մասունքները. ա) Կենաց փայտի մի մասը, մի արծաթե փոքր խաչի մեջ գետեղված. բ) Եղիշե առաքյալի բազկի մի մասը, մի արծաթե, ոսկեզօծ աչի մեջ ներփակված, որի վրա կա հետևյալ գրությունը.

Այս է աչ սրբոյն Եղիշէի առաքելոյն. աշխատողմ՝ որ այ Եպիսկոպոս, որ եբեր սուրբ նշխարս ի Կաֆայու յիշատակ սորա, տէր Ոսկան եպիսկոպոս։

Կամաւն աստուծոյ Կարապետ եպիսկոպոս Նոյ նորոգեցի, Աստուած ողորմի ասացլէ։

Կամաւն աստուծոյ Մուրադ որդի Նիազի շինեցի սուրբ աչս, աստուած ողորմի ասացլէ. առաջնորդութեան Ոսկան եպիսկոպոսին, թվն ՌԿԷ Լ.Ը. *գ) Հինգ արծաթե խաչեր։*

Մատուռը բավական անխնամ կերպով պահպանում է մի քահանա։

Գյուղի վերի ծայրումն էլ կա մի փոքրիկ, կամարակապ, անսյուն եկեղեցի, որ ունի միայն մի խորան և մի ավազան։ Եկեղեցու դռան կամարակալ քարի վրա գրված է. «Այս է Մելիք Թամրազին որդի Սարուխանին եխպար Եարին. Քապանին Ապավի որդի, որդի Մելիք Սսեփին Վէլուչպէնեզ»։

Մի քիչ բարձր՝ թվ. ՌՀՂԸ։ *Ավանդության ասելով սա կուսանոց է եղել և այժմ էլ Անապատ է կոչվում։ Շուրջը կան խուցեր, որոնցից մի քանիսը դեռևս կանգուն են։*

Անապատի մոտ գտնվում է հայոց եկեղեցական դպրոցի շենքը, որ չի ավարտված։

Անապատից մի քիչ հեռու կա մի ուրիշ, փոքրիկ, կամարակապ, անսյուն և անխորան մատուռ, որի միակ դռան կամարակալ քարի վրա բանդակված է, թե ինչպես Քրիստոս կշռելու է նենգեցյալների հոգիները։

Բնակիչները բոլորն էլ լուսավորչական հայեր են, առավելապես Բոլնիսից, Ջրաբերդից և Ըստակից գաղթած. ընդամենը 446 տուն. 1357 ար., 1201 իգ., միասին՝ 2558 հոգի։ Գյուղացիները բավականաչափ կրթված են, որովհետև վաթսունական թվականներից ունեն դպրոց և շարունակ շփվում են Հաճի-քենդի սարվորների հետ, որոնք շատ անգամ գալիս են սրանց գյուղը քեֆեր սարքելու։ Կան բավականաչափ խանութներ, որոնցից մեկում կա և ֆոնոգրաֆ՝ գյուղացիներին զվար-

[1] *Տե՛ս Գրչագրերի բաժնում։*

ճացնելու։ Պատմում են, թե ինչպես գյուղացիները առաջին անգամ ֆոնոգրաֆի ձայնը լսելիս սարսափած փախել են, կարծելով թե սատանա կա մեջը նստած։

Բացի սովորական պարապմունքը՝ երկրագործությունն ու այգեգործությունը, այս գյուղացիները պարապում են նաև դարբնությամբ, հյուսնությամբ, դերձակությամբ, թամբագործությամբ, ոսկերչությամբ և այլն։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ Գ ԾՐՋԱՆ

Գյուլիստանի մանալ. *Գ յ ո ւ լ ի ս տ ա ն ի մ ա հ ա լ ը* յուր անունն ստացել է համանուն բերդից և գյուղից, սա կոչվում է նաև *Թ ա լ ի շ ի մ ա հ ա լ*, Թալիշ գյուղի անունով և Իգիրմիդորդ, այսինքն քսան և չորս, որ բաղկացած է եղել 24 գյուղերից։ Սրա նախկին սահմաններն են հյուսիսից՝ Կուրակ գետը, հարավից՝ Թարթար գետը, արևելքից՝ այժմյան փոստի ճանապարհը, իսկ արևմուտքից՝ Մռավ սարը։ Ինչպես տեսանք պատմական տեսության մեջ, այս մահալը կազմում էր մի առանձին, զորեղ մելիքություն, Մելիք-Բեկլարյանների իշխանության տակ, և այժմ էլ մեծ մասամբ պատկանում է նրանց ժառանգներին։ Այժմյան աշխարհագրական բաժանմունքով Գյուլիստանի մեծագույն մասը ընկնում է Գանձակի գավառի երրորդ ոստիկանական շրջանում, իսկ մի մասը, ինչպես՝ Թալիշ գյուղը, Գյուլիստանի բերդը, Հոռեկա վանքը, ընկնում են Ջիվանշիրի գավառում։

Գյուլիստանի մահալն ընդհանրապես լեռնոտ է, թեև զուրկ չէ նաև գեղեցիկ տափաստաններից։ Այստեղ բարձրանում են Շիշ-Թափա, Դողդ-դաղ և այլ լեռներ և տարածվում Խրխափորի, Աղջաղալի և այլ հարթությունները։ Ամբողջ տարածությունը ծածկված է հարուստ բուսականությամբ, լեռները պսակված են անտառներով, որոնց մեջ կան նաև պտղատու ծառեր։ Դաշտավայրերում հասնում է խաղողը և տալիս նշանավոր գինի, մանավանդ Մուշկետ անվանվածը, որ հրաշալի է։ Հայոց բոլոր գյուղերը պատկանում են զանազան կալվածատերերի, և մանավանդ Մելիք-Բեկլարյաններին։

Վերի-շենի հասարակություն. *Վ ե ր ի – շ ե ն* կամ *Ա ղ ջ ա ֆ ե ն դ*. Գտնվում է Ղարա-չայ գետի ձախ ափում և շրջապատված է լեռներով։ Այստեղ նշանավոր է ս. Աստվածածնի կամարակապ, անսյուն եկեղեցին, որ շինել է Մելիք-Հովսեփը 1756 (ՌՄԵ) թվականին և քարաշեն, երկարաձիգ կամուրջը Ղարա-չայ գետի վրա, որ շինել է գյուղատերը։

Ամառը գյուղի շուկան սաստիկ կենդանանում է, որովհետև այստեղով են անցնում Ջիվանշիրից սար գնացող թուրքերը։ Բնակիչները 108 տուն են, 564 ար., 453 իգ., միասին՝ 1017 հոգի, որից 100 տունը՝ 555 ար., 449 իգ., հայեր են, իսկ 8 տունը՝ 9 ար., 4 իգ.՝ թուրքեր։

Թե՛ այս և թե՛ Ներքին շենը այժմ պատկանում են թուրք Միրզատ-գյուղալովներին, որոնց անցել է Մեհտի-Ղուլի խանից։ Իսկ սա ժառանգել է յուր մայր՝ Հյուրազատա խանումից, որ Մելիք Շահնազար Բ-ի աղջիկը լինելով, մի օր հյուր է եկել յուր քրոջը՝ Մելիք-Բեկլար Բ-ի կին Ամարնանու (Մարիամի) մոտ և այս երկու գյուղերը ընծա ստացել։

Ն ե ր ք ի ն – շ ե ն. Նույն դաշտավայրի վերի ծայրում, Ղարա-չայի ձախ ափին, մի սարի ստորոտում։ Գյուղում նշանավոր է միակ ս. Աստվածածնի եկեղեցին, որ շանված է ՌՃԽԶ (1697) թվականին և շատ անգամ իբր սպասատարան է ծառայել գյուղացիներին, որովհետև պատերի վրա նկատելի են բաղմաթիվ գնդակների հետքեր։ Գյուղի հարավային կողմում մի բլրակի վրա կա մի կիսավեր վանք, որ ոչ մի արձանագրություն չունի և ժողովուրդը անվանում է Իրեք-մանկունք։ Իսկ սրանից ներքև, ձորի մեջ, կա Լիտր անվանված գյուղատեղի, գերեզմանատուն և երեք քարե խաչեր։

Բնակիչները բոլորն էլ հայեր են, 117 տուն. 502 ար., 440 իգ., միասին՝ 942 հոգի։

Ղարա-չինարի հասարակություն. *Հ ա յ ի Պ ա ր ի ս*. Գտնվում է Էրքեջի մոտ, լեռան լանջին։ Ոչ մի նշանավոր բան չկա գյուղում, մինչև անգամ եկեղեցի չունին. տներն էլ շատ հասարակ են։ Գաղթել են Պարիսից, ուր այժմ մալականներ են բնակվում։ Բնակիչները հայեր են՝ 37 տուն, 191 ար., 172 իգ., միասին՝ 363 հոգի։

Ղ ա հ տ ու թ կամ *Հ ա յ ո ց Ջ ե յ վ ա*. Մի փոքրիկ գյուղ է, Ղարա-չայի ձախ ափին, սաստիկ մոտ Ղարա-չինարին։ Եկեղեցի անգամ չունին։ Բնակիչները բոլորն էլ հայեր են, 14 տուն, 48 ար., 40 իգ., միասին՝ 88 հոգի։

Գ յ ո ւ լ ի ս տ ա ն. Գտնվում է մի երկարաձև բլրի վրա և շրջապատված է Խանալան, Ղարաբուլաղ, Գյոգ-թափա, Սաբաթ-քեշմաշ, Ղաղան-դրմաղ, Ջախմախ-բուլախ և Քամար-գյոզի լեռներով։ Գյուղի առաջից հոսում է Ինջա-չայը։ Գյուղում կան մի հին, ավեր և մի նոր, բարաշեն և գեղեցիկ եկեղեցի։ Այս եկեղեցում կա մի «Մեր-ավետարան» կոչված ձեռագիր, որ շատ հրաշագործ է համարվում և շատ ուխտավորներ ունի։

Գյուղում նշանավոր է մի հին, երեք թաղակապ սենյակներից բաղկացած քարաշեն ապարանք, որի դռան կամարակալ քարի վրա գըրված է.

Շնորհիւն Այ շինեցաւ ապարանս ի թվին Ռ եւ Մլա. ես Յակորոս ծառայ այ իշխող գեղոյս որդի Ապրահամ սպարապետին:

Գյուղի տներն ընդհանրապես շատ հասարակ են, մի քանիսը նույնիսկ գետնափոր։ Բնակիչները հայեր են, 42 տուն, 181 արական, 168 իգական, միասին՝ 349 հոգի։

Նոր-շեն կամ Ենկիքյանա և կամ Մանաս-շեն. Գտնվում է Ղարա-չինարի մոտ, Ղարա-չայ գետի աջ կողմում, մի բլրակի վրա։ Այստեղ է բնակվել Մելիք Աբով երկրորդի որդի Մանաս բեկը, որի անունով և գյուղը այժմ էլ Մանաս-շեն է կոչվում։ Գյուղում կան այգիներ և պարտեզներ, տները մեծ մասամբ շատ հասարակ են, ինչպես և եկեղեցին։ Բնակիչները բնիկ հայեր են՝ 52 տուն, 221 արական, 199 իգական, միասին՝ 420 հոգի, որից միայն երեք տուն, 6 արական և 2 իգական՝ թուրքեր են։

Ղարա-չինար կամ Աղջա-ղալա. Ընկնում է Ղարա-չայի աջ կողմում, հարթ տարածության վրա։ Գետի շնորհիվ այս գյուղը մյուսներից համեմատաբար մաքուր է։ Բազմաթիվ այգիներն ու պարտեզները գյուղին գեղեցիկ տեսք են տալիս։ Այստեղ կան բավական թվով երկհարկանի գեղեցիկ տներ և մի քարաշեն, նոր եկեղեցի և արքունական տարրական ուսումնարան։ Այստեղ է բնակվում այս երրորդ ոստիկանական շրջանի ոստիկանը ամառվա ընթացքում։ Բնակիչները բոլորն էլ հայեր են. 126 տուն, 399 արական, 369 իգական, միասին՝ 768 հոգի։

Խարխափուտ կամ Նոր-Խրխափոր. Ընկնում է մի հարթության վրա, Գյորգին սարի ստորոտում, Ղարա-չայի աջ կողմում։ Տները շրջապատված են պարտեզներով։ Գյուղի մի ծայրին կանգնած է տիկ. Մելիք-Բեկլարյանի ծախքով նոր կառուցված քարաշեն, գեղեցիկ եկեղեցին և Թալիշ-բեկ Մելիք-Բեկլարյանի նույնպես գեղեցիկ և ընդարձակ տունը։ Թե՛ եկեղեցու և թե՛ Մելիք-Բեկլարյանի տան բակում ավագ սարկավագուհի Փեփրոնե կույս Խուբյանց Մելիք-Բեկլարյանի ծախքով կառուցված են աղբյուրներ գյուղական հասարակության համար։ Մի ուրիշ բարեգործ էլ, Գրիգոր Մելիք-Բեկլարյան, կառքի ճանապարհ է շինել Նոր-Խրխափորից մինչև Գյուլիստան գյուղը։

Այս գյուղի մոտ, Կողեր անվանված գյուղատեղում կա մի ավերակ վանք և մի հին գերեզմանատուն։

Բնակիչները գաղթել են այստեղ Հին-Խրխափոր գյուղից, որ ընկած է Գյուլիստան և Նոր-Խրխափոր գյուղերի միջև մի հովտում։

Այս գյուղը այժմ ավերակ է, ծածկված պտղատու և վայրի ծառերով։

Նոր-Խրխափորի բնակիչները բոլորն էլ հայեր են, 27 տուն, 88 արական, 90 իգական, միասին՝ 178 հոգի։

Էրեջի հասարակություն. Պուղլուխ. Գետեղված է Քյափասին մերձ մի բարձրության վրա և շատ ցուրտ կլիմա ունի, որի պատճառով և ստացել է այդ (սառցային տեղ) անունը։ Սա Գյուլիստանի ամենաբարձր ամառանոցը կարող է համարվել։ Բացի գյուղական փոքրիկ եկեղեցին, գյուղից փոքր-ինչ հեռու կա նաև սուրբ Մինաս անուն մի ուխտատեղի։

Բնակիչները հայեր են, 23 տուն, 97 արական, 91 իգական, միասին՝ 188 հոգի։

Ղարաբուլախ. Ընկած է սարի լանջին, որի ստորոտով հոսում է Կուրակ գետի վտակներից մինը և մի քիչ հեռու միանում նույն գետի հետ։ Յուր գիրքի շնորհիվ գյուղը բավականին մաքուր է, և ունենալով մեղմ կլիմա, գեղեցիկ ամառանոց է։ Թեև ընդհանրապես տները հասարակ են, բայց կան մի քանի կանոնավոր, երկհարկանի գեղեցիկ շինություններ։ Եկեղեցին բավական հոյակապ է, վեց սյուների վրա հաստատված, ս. Աստվածածին անունով։ Սրա արևմտյան դռան ճակատի քարի վրա կա հետևյալ արձանագրությունը.

Շնորհիւ ամենակալին մեք Ղարաբուլաղի ժողովուրդս մեծ եւ փոքր շինեցինք սուրբ եկեղեցիս յիշատակ հոգոց մերոց եւ ամենայն ննջեցելոց ի հայրապետութեան տեառն Պետրոսի, ի թագաւորութեան պարսից Շահ Սիւլէյմանի խանութեան երկրիս Ուղուրլու խանին եւ պարոնութեան երկրիս Ֆարզալլի բէկին, տարուղէն Մուրքուզա Ղուլին. տանուտէր տէր Սիմէօն, տէր Յակովբ, տէր Ազարիէն և տէր Դաւիթ, Գրիգոր, Ազարիա, Շահնազար, Սարուի Աւան, որ ջերմեռանդ սիրով աշխատեցին. ես Մեղիդիւք էրիցս գրեցի թուին ՌՃԿԵ. որ կարդամ մեկ բերան ողորմի ասէք. ամէն:

Գյուղի մեջ կա երկու ավերակ եկեղեցի, իսկ շրջակայքում՝ չորս եկեղեցի, ավերակ գյուղատեղիներով։ Առաջինը կոչվում է Բրդի շինի եկեղեցի, երկրորդը՝ Կոսի կալ, երրորդը՝ Միջի վանք և չորրորդը՝ Երի վանք (վերին վանք)։ Չորսի շուրջն էլ կան ընդարձակ գերեզմանատներ։ Երի

վանքում մի գերեզմանաքարի վրա կարդացվում է. «Այս է հանգիստ սուրբ Գրիգորայ Գանձակայ եպիսկոպոսին»: Իսկ Կոսի կալում եկեղեցու խորանի կամարի վրա մի խաչքարի ստորոտում՝ թվ. ՌՀԹ. (1230):

Ղարաբուլաղի բնակիչները, որ մի ժամանակ բավական շատ են եղել, այժմ միայն 44 տուն են. 158 ար., 148 իգ., միասին՝ 306 հոգի, բոլորն էլ հայեր, բացի երեք թուրք տղամարդկանցից:

Մանաշիթ կամ Մանուշ շեն. Գտնվում է Պուզլուխից փոքրինչ ներքև, նույնպես մի բարձրության վրա և ունի առողջարար կլիմա ու հրաշալի տեսարան: Գյուղում կա մի նորաշեն եկեղեցի և մի մատուռ ընկուզի ծառերի տակ, որ կոչվում է Նահատակ:

Բնակիչները 40 տուն են, 217 ար., 184 իգ., միասին՝ 401 հոգի, որից միայն մի տուն, 4 ար., 2 իգ. թուրք են:

Թոդան ավերակ. Սա մի գյուղատեղի է Ղարաբուլաղ գյուղի մոտ, մի ձորակի լանջին: Դեռ կիսականգուն է հին եկեղեցին, որի հարավային կողմի խորանի վրա գրված է.

«Ժամանակս շահ Սեիին. խանութիւն Մուրբուզա Կուլի խանին թանուլդ, կաթուղիկոս Գանձասարայ տէր Գրիգորին թվ. Ի.»

Այստեղ կա նաև մի մատուռ, որ վերանորոգված է: Սրա մոտ կա մի խաչաքար 2,35 մետր երկ. և 1 մետր լայնության, որի վրա արձանագրված է.

Ի թվին ՉՄԷ (1308) ես Գրիգոր ու Պապամ կանգնեցաք զխաչս 'ի բարեխաւսութիւն ծնողաց մեոց...»:

Այս մատուռը բավական նշանավոր ուխտատեղի է համարվում: Ավերակի մոտ է համանուն թրքաբնակ գյուղը:

Էրքեջ. Ընկնում է մի ձորի մեջ և երեք կողմից պատած է սարերով: Արևմտյան կողմից հոսում է Փոքր-Կուրակը: Արևելյան սարի ժայռոտ լանջին կա երկու արհեստական քարայր, հատկապես պաշտպանության համար շինված: Հարավային սարից անձրևների ժամանակ մեծ հողաթմբեր են պրծնում և տակովն անում տները, ուստի և այս կողմի տներում այլևս չեն բնակվում:

Գյուղում կա մի եկեղեցի, ս. Սարգիս անունով, որի դռան ճակատակալ քարի վրա գրված է. «...յիշատակ թվ. ՌՃԿԵ.» (1716): Թե՛ եկեղեցու պատերի և թե՛ հին գերեզմանատնում կան ԺԳ դարուց խաչքարեր: Բնակիչները բնիկ են, որ գաղթել են Բոլնիս և ապա վերադարձել: Այս վերադարձի թվականը հայտնի է լինում եկեղեցու մոտ գտնված մի գերեզմանի հետևյալ տապանագրից.

Թվ. ՌՄԿԶ. (1817), որ է Պոլնուսու գալն մայիսի ի (20) Քրիստոսի ծառայ տէր Դանիէլ»:

Բոլորն էլ հայեր են, 94 տուն, 408 ար., 373 իգ., միասին՝ 781 հոգի:

Էրքեջի մոտ է Մկնատամ անունով ուխտատեղին և Ղոբուլախ ու Ենկիջա գյուղատեղիները, իրենց կիսավեր եկեղեցիներով:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ Դ ՇՐՋԱՆ

Պատանորի հասարակություն. Պատի գյուղ. Գտնվում է Գանձակից մոտ 67 վերստ հեռու, դեպի արևմտահյուսիս և երկաթուղու Ջակամ կայարանից մոտ 15 վերստ հեռու, դեպի արևմտահարավ, մի բարձր (4973 ոտ) տափարակ տեղում: Գյուղի արևմտյան կողմից հոսում է Պատա-գետը, որ սկիզբ է առնում Խաչ-յալ և Օքյուզ-դաղ լեռնաշղթաներից: Մոտ կես դար առաջ այս գյուղը գտնվում էր այժմյան տեղից փոքր ինչ հյուսիս, ձորակում, ուր այժմ գյուղի այգիներն են. սաստիկ շոգը ստիպել էր բնակիչներին տեղափոխվել ավելի բարձր: Գյուղում կա մի հին ավերակ և մի նոր եկեղեցի: Դպրոց երբեք չեն ունեցել: Բնակիչները Ղարա-Մուրատից, Ջրաբերդից և Փամբակից են եկել, բոլորն էլ հայ լուսավորչական, ընդամենը 246 տուն. 985 ար., 735 իգ., միասին՝ 1720 հոգի:

Բարսումի հասարակություն. Բարսում. Գտնվում է Գանձակից մոտ 46 վերստ հեռու դեպի արևմուտք, Գառնակերից 3—4 վերստ դեպի արևելահյուսիս, Շամքոր գետի ձախ ափին, ժայռոտ ձորի լանջին: Գյուղը բաժանվում է երկու մասի. առաջինում, որ գտնվում է ձորի մեջ, բնակվում են ձմեռը, իսկ երկրորդում, որ տարածվում է ձախակողմյան լեռան գագաթին, առաջինից շորս վերստ հեռավորության վրա, ապրում են ամառը, որովհետև այդ միջոցին առաջին մասում սաստիկ շոգ է լինում:

Գյուղում չկան կանոնավոր փողոցներ, տներն էլ մեկը մյուսին կից շինված լինելով, շատ անգամ մեկի կտուրը ծառայում է մյուսին որպես բակ: Կալերը և մարագները գտնվում են երկրորդ մասում, այստեղին մոտ են նաև գոմերը:

Ձմեռը գյուղի վրա արևն ընկնում է ժամը մոտ 9-ին, իսկ սրա մոտակա Զովդառ գյուղում հենց ծագելիս, այս հանգամանքն ի նկատ առնելով տեղացիներն ասում են. «Մարդ Զովդառ հաց ուտի, Բարսում բան անի»:

Գյուղում կա մի նոր, քարաշեն և երեք հին, ավերակ եկեղեցիներ։ Սրանցից առաջինը քարաշեն է, փայտաշեն ծածկով և գտնվում է հարավային հանգստարանի մոտ, ուր կան ՉԺ (1461), ԻԽ (1521) և ԻԽԵ (1596) թվականները կրող դեղաքանդակ տապանաքարեր։ Այս եկեղեցու կամարակալ փայտի վրա գրված է. ԹՎ. ԻՀԵ. ԷՐ։ Երկրորդը գտնվում է հյուսիսային հանգստարանի մոտ, երրորդը մի բարձր լեռի վրա է և կոչվում է «Թռան (թառած) եղջի». սրա միայն չորս պատերն են կանգնած մնում. մեջը բուսած է մի բշնի ծառ, որ սուրբ է համարվում։

Շամքորի ափին, ձորի մեջ տարածվում են գյուղացիների այգիները։ Այստեղ՝ Ակումբանց բաղում կա ս. Հռիփսիմեի անվանը նվիրված մի քարաշեն վանք, մի ուրիշն էլ կա գյուղի արևելյան կողմի այգիներում, որի անունը անհայտ է։

Գյուղից փոքր-ինչ հեռու, Շամքոր գետի աջ ափին գտնվում է Ներքին-Ղոթյուլ գյուղատեղին, ուր կա մի եկեղեցի և գերեզմանատուն։

Բնակիչները բոլորն էլ հայ լուսավորականներ են, որոնց մեջ նշանավոր են Մելիք-Առստամյանները՝ այս երկրի նախկին տիրապետողների ժառանգները։ Ընդամենը՝ 155 տուն. 617 ար., 556 իգ., միասին՝ 1173 հոգի։

Պարապում են բացի սովորական երկրագործությունից, այգեգործությունից և անասնապահությունից նաև շերամապահությամբ։

Գառնակերը գյուղ (Իուսերեն և թուրքերեն՝ Բարում). Գտնվում է Գանձակից մոտ 40 վ. արևմուտք, Ջակիրից 7—8 վ. հարավ, ահագին ժայռերի տակ, Շամքոր գետի ձախ ափին։ Շատ հին գյուղ է և շատ անգամ պատսպարան է եղել շրջակա գյուղացիներին թշնամիների հարձակման միջոցին, որովհետև ընկած է իսոր ձորի մեջ և սաստիկ դժվարանցանելի ճանապարհներ ունի։ Կա մի եկեղեցի ս. Աստվածածին անունով, կառուցված 1838 թ.։ Կլիման վատառողջ է, տենդային։ Բնակիչները հայեր են. 84 տուն, 380 ար., 360 իգ., միասին՝ 740 հոգի։ Բացի սովորական պարապմունքից պարապում են նաև այգեգործությամբ։

Գյուղի հյուսիսարևելյան կողմում, նույն Շամքորի աջ ափին կա մի մատուռ, ուր գտնվում է մի գերեզման՝ Նահատակ անունով։

Ջակիր. Գտնվում է Գանձակից մոտ 36 վերստ հեռավորությամբ դեպի արևմուտք, Ջարդախլուից դեպի արևելահարավ։ Ունի մի քարաշեն եկեղեցի։ Հողն արքունի է, սակայն շատ սակավ, որովհետև լավագույն մասը Նովո-Տրոիցկա գյուղին է տրված։ Բնակիչները Գյուլամբերդից են գաղթած, ընդամենը՝ 104 տուն, 437 ար., 369 իգ., միասին՝ 806 հոգի, բոլորն էլ հայ լուսավորչական։

Նուզգար. Գտնվում է Գյուլամբերդից 5—6 վերստ դեպի արևելահյուսիս, մի սարահարթի վրա։ Ունեն մի հին եկեղեցի և գյուղից փոքր ինչ հեռու մի հին հանգստարան, ուր կան ԺԴ դարուց մնացած տապանագրեր և մի հին կիսավեր մատուռ։ Բնակիչները գաղթել են դարիս սկզբին Երևանի գավառի Քանաքեռ, Ճաթղռան և Ճորվիզ գյուղերից, ընդամենը 76 տուն են. 301 ար., 261 իգ., միասին՝ 562 հոգի։

Այս գյուղացիներից մի քանի տուն տեղափոխված են Շամքոր գետակի աջ ափին մոտիկ և հիմնել են Գյուլամբերը, միայն սա դեռևս առանձին գյուղ չի համարվում։

Միսկինլուի հասարակությունն. Ղալաքյանդ կամ Փառիսոս. Սա մի քաղաքի ավերակ է, որ տարածվում է Համանուն կամ Շամքոր գետի երկու ափին, Գետաբեկի պղնձահանքից 23 վերստ հեռավորությամբ։ Տեղը մի գեղեցիկ հովիտ է ներկայացնում, որի հյուսիսային կողմում բարձրանում է Համանուն բերդը։ Հայտնի չէ, թե ով է հիմնարկել այս քաղաքը և երբ, միայն գիտենք, որ Մեծ Սյունյաց Սենեքերիմ թագավորը պայծառացրել է քաղաքս եկեղեցիներով և բերդով, և կոչվել է «Թագավոր Փառիսոսի»[1]։ Նրան հաջորդել է որդին՝ Գրիգորը, որի մահից հետո նույնպես հայտնի չէ, թե ով է տիրապետել։ Ինչպես երևում է շինությունների հետքերից, և 12 եկեղեցիների ավերակներից, քաղաքը մի ժամանակ բավական ընդարձակ և մարդաշատ է եղել։ Ավագ եկեղեցին, որ բավական մեծ է եղել, վերջին տարիներս բոլորովին քանդել են և քարերը տարել։ Սրա մոտ կան երկու տապանի խաչարձաններ ՉԻ և ՉԼ թվերի արձանագրությամբ։

Այստեղ այժմ տեղավորված է Սիմենսի էլեկտրալուծական գործարանը, իսկ ամառվա երեք ամիսներին գալիս են այստեղ մի քանի վաճառականներ և արհեստավորներ՝ սարը գնացողների պետքերը հոգալու։

Ղարաբուլաղ. Գտնվում է Ղալաքյանդի բերդի հյուսիսային սառոտից բխող աղբյուրից առաջացած առվակի ձախ ափին։ Այստեղ կա մի հինավուրց, գեղեցկաշեն, չորս սյուների վրա հաստատված եկեղեցի, որի միայն տանիքն է մի քիչ քանդված։ Եկեղեցին լցված

[1] Մ. Բարխուդարյան. Արցախ, եր. 431։

է աղբով։ Շուրջը և առվակի ափին կան բազմաթիվ գերեզմաններ, բայց տապանագիր չի նկատվիր։

Մեծ և Փոքր Ղարա-Մուրադ. Ղալաքյանդից դեպի արևելահյուսիս, Զակամ գետի ակունքների շուրջը գտնվում են մի քանի ձմեռանոցներ, ուր թուրքերը ձմեռը գալիս են իրենց անասունները պահելու։ Սրանցից նշանավորներն են՝ Մեծ և Փոքր Ղարա-Մուրադ, Գյուենազ-Գյորմազ, Գերգեր, Լեշքար, Արիկրան, մի քիչ բարձր՝ Շեյդան-դամ, Բայրամ-դամ, Թիք-խաչ։ Սրանցից Փոքր Ղարա-Մուրադում կա հայոց մի կիսավեր եկեղեցի, իսկ Մեծ Ղարա-Մուրադում կան երկու եկեղեցի. մեկը բավական մեծ է, հոյակապ, վեց սյուների վրա հաստատված և դեռ կանգուն, մյուսը փոքր է և կիսավեր։ Առաջինի աջակողմյան խորանի ճակատին գրված է.

Շինեցաւ սուրբ տաճարս ձեռամբ անարժան Զուղայեցի ուսուցայ Մուսէսին որդի եռկարին զաւակ Սողոմոնին ճրամանաւն Տէր Փիլիպոս կաթուղիկոսին. եկի շինեցի սուրբ եկեղեցիս Ղարամուրատին Հայոց թվին ՌԶԳ. ով որ կարդաք, ողորմի Մոսէին յիշեցէք ի տէր, Աստված ձեզ յիշէ. ամէն»։

Սեղանի ձախակողմը, աստիճանների վերև.

Շնորհիւն Քի շինեցաւ սր Ամենափրկիչս ի ժամանակս շն. Սփն թվին ՌԶԴ. էր, յիշեցէք Զաքարէն եւ կողակիցն Խաթուն ջան եւ մայրն Սառիկն եւ հայրն Վեղինանն եւ որդին Ղարամուրատն, Ղուկասն եւ դուստրն իւր Գուլաղէն. Զաքարի հայրն Վեղինանն, կողակիցն իւր Գուլդանէն, որդին իւր Ադամն, Հինզրն, Ովանեսը, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք»։

Փոքր-ինչ ներքև.

Սուրբ սեղանս քարն յիշատակ է Ղորստամին, իւր եղբայր Էվազին, Պարոնին, իւրեանց Խաթունին. թվ. ՌԶԴ։

Փոքր եկեղեցու դռան վրա էլ կա գրված.

Շնորհիվ աստուծոյ ես Ովանէս վարդապետս, որդի ապաշխարողի շինեցի զեկեղեցիս արդեամբք եւ գոյիւք ամենայն Քրիստոնէից յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց եւ ամենայն աշխատողաց ի մայրապետութեան անապատիս թագունւոյն եւ կայինային ի ՌՃՄ. թվ.

Այս եկեղեցուց մի քիչ հեռու, վտակի աջ կողմի հարթակի վրա կա նույնպես մի կիսավեր անապատ, քանդված խցեր և մի երկար քարե սյուն, որի վրա քանդակված է մի խաչ և գրված է «Սուրբ Սարգիս»։

Այս եկեղեցիներից և ընդարձակ գերեզմանատնից երևում է, որ Մեծ Ղարա-Մուրադը երբեմն գյուղաքաղաք է եղել։

Զարդախլուի ճառարակություն. *Զարդախլու.* Գտնվում է Զակամ կայարանից մոտ 18 վերստ դեպի հարավ մի առվակի հովտում։ Գյուղը ձգվում է առվակի ուղղությամբ և անհամեմատ ավելի երկար է, քան լայն։ Հովիտը փոքր առ փոքր բարձրանալով ընդհարվում է չորս լեռների, որի պատճառով և ասում են, գյուղը կոչված է Զարդախլու, այսինքն՝ չհար-դաղլու՝ չորսլեռանի։ Այս լեռներից հարավայինի՝ խաչյալ անվանվածի վրա կա մի գեղեցիկ խաչքար ՌՀԵ. թվականով, որ Ս. Գրիգոր Լուսավորիչ է կոչվում և ուխտատեղի է։

Գյուղում կա մի քարաշեն եկեղեցի 1878 թ. ուներ ծխական դպրոց, որ այժմ փակ է։ Գյուղից մի վերստ հեռու, Զագրի ձորում տարածվում են այգիներ, ուր առավելապես կան թթենիներ։

Բնակիչները մասամբ Թիֆլիսի Հավլաբարի մասից 1823 թ. գաղթած երևանցիներ են, մասամբ էլ Ղարաբաղից և Պարսկաստանից եկվորներ։ Բավական առաջադեմ են, ունեն Ներսիսյան դպրոցն ավարտած քահանա և բավական գրագետ անձինք։ Այս գյուղից շատ երեխաներ սովորում են Թիֆլիս և Գանձակ։ Երեք հոգի էլ ավարտել են բժշկական ֆակուլտետը։

Ընդամենը 202 տուն են. 753 արս., 561 իգ., միասին՝ 1314 հոգի։

Պարապմունքը նույնն է, կան նաև մի քանի խանութներ և արհեստանոցներ։

Գյուղից փոքր-ինչ հեռու, դեպի հյուսիս, գտնվում են շինության մնացորդներ, որ ուխտատեղի են «Մանուռ» (մատուռ) անվամբ։ Սա նախկին Աղվանից կաթողիկոսների ամառանոցի ավերակներն են։

Հայի Գետաբեկ կամ Ղազախ. Գտնվում է համանուն պղնձահանքից հազիվ 3 վերստ հեռավորությամբ մի դաշտակի վրա։ Բնակիչները վերաբնակել են այստեղ հին Գետաբեկից, ուր եկել էին Ղազախի Կոթ, Ոսկեպարիսպ, Ղալաչա գյուղերից։ Գյուղում նշանավոր ոչինչ չկա, նույնիսկ եկեղեցի չունեն, այլ օգտվում են Պղնձահանքում եղած եկեղեցուց։ Գյուղը միշտ պատած է պղնձահանքի ծխով, որ արտերին մեծ վնասներ է պատճառում, որովհետև այրում է մոտիկ տեղերի հասկերը և խանգարում փոքր-ինչ հեռուներինը՝ կանոնավոր աճման։ Ուստի և ժողովուրդը, որ այլևս այնքան գործ չի կարողանում գտնել պղնձահանքում, խնդիր է մատուցել կառավարության՝ իրենց մի ուրիշ տեղ տեղափոխելու։

Ընդամենը 44 տուն են. 178 արս., 149 իգ., միասին՝ 327 հոգի։

Հին Գետաբեկ. Գտնվում է Շամքոր գետակի ձախ կողմում, Գանձակից մոտ 56 վերստ դեպի արևմտահարավ՝ մի ձորում, որի միջով, հոսում է Գետաբեկի առվակը։ Այստեղ են գտնվում Սիմենսի պղնձահանքի գործարանները, գեղեցիկ բնակարանը, շուկան, մի հյուրանոց և այլն։ Մի բլրակի վրա կանգնած է հայոց Ս. Գևորգ եկեղեցին, որ շատ հին է։ Եկեղեցու շուրջը կա մի ընդարձակ, հին գերեզմանատուն։ Մի ուրիշ եկեղեցի էլ է եղել, բայց պղնձահանքի կապալառուն քանդել է տվել և քարերը իր շինության վրա գործածել։ Այստեղ գլխավորապես բնակվում են զանազան ազգի բանվորներ, որոնք աշխատում են այստեղի գործարաններում և պղնձահանքերում։ Երկինքը միշտ պատած է ծխով։

ՆՇԱՆԱՎՈՐ ՎԱՆՔԵՐ

Զաբեքա անապատ. Գտնվում է Գետաբեկից դեպի արևելահյուսիս, մոտ 8 վերստ հեռավորությամբ, Շամքոր գետի ձախ ափին, մի փոքրիկ հարթության վրա։ Վանքից փոքր-ինչ հյուսիս, բլրակի վրա կանգնած է զանգակատունը, իսկ փոքր-ինչ արևմուտք՝ սեղանատունը։ Վանքը պատած է պարսպով, որին կից կան այժմ քսանհինգից ավելի քարե, թաղակապ փոքր խցեր։

Այս վանքը հիմնել է Դավիթ եպիսկոպոսը ԺԷ դարում։

Վանքը, որ կոչվում է ս. Աստվածածին 17,28 մետր (8 սաժեն) երկարության, 9,72 մետր (4,5 սաժեն) լայնության և մոտ 8,64 մ (4 սաժեն) բարձրության մի հասարակ շինություն է, չորս քառանկյունի սյուների վրա հաստատված։ Ունի երկու ավանդատուն, յոթը փոքրիկ պատուհան և երկու դուռն արևմտյան կողմում, որոնցից աջակողմյանը վերաշինված է տաշած քարերով և վերին մասում մի սեղան պատրաստած։ Կարծվում է, թե երբեմն այստեղ սանդուղքներ են եղել և Համբարձման տոնին բարձրացել, այստեղ են պատարագ մատուցել։

Այս դուռը բացվում է մի նոր, կարմիր, տաշած քարից շինված գավթի մեջ, որ 8 մ (11 արշ.) երկարություն, 6,48 մ (3 սաժեն) լայնություն և եկեղեցուց 0,18 մ (քառորդ արշին) ավելի բարձրություն ունի։ Կամարները բոլորում են երկու ամբողջ և սրանց հանդեպ երկական կեղծ սյունների վրա, բաժանելով գավիթը երկու մասի (ref), որոնցից աջը ավելի լայն է։ Այս գավթի հարավային կողմում մի գեղեցիկ, նախշերով եզրափակված դուռ բացվում է նույն երկարության և 2,88 մ (4 արշին) լայնության մի սրահի մեջ, որի առաջի մասը երկու գեղեցիկ, ութակազմ սյունների վրա բոլորող երեք կամարներ են կազմում, որոնցից միջինի ձեղունը գմբեթաձև բարձրացած է։ Այստեղից երևի երբեմն զանգակներ են կախված եղել։

Գավթի հարավային դռան վրա գրված է.

Շնորհիմ Այն կալի կառուցաւ ամենափրկչի վերնատուն տեղի Հոգւոյ նշմարտացի եկեղեցիս սուրբ եւ գաւիթ գովելի ի հաճարապետութեան (տեղը բաց է թողնված) շինեցաւ այս ձեռամբ տառ Ներսէսի հանդերձ ճ. եղբարք ամեն ի փրկութիւն հոգոց մերոց, որք բնթեռնուն յիշեցէք մեզ ի Քս. ամէն թվ. ՌՃԼ Դ.

Արևմտյան դռան վրա էլ գրված է.

Սուրբ խաչս բարեխաւս տէր Մովսէսին Ներսէսեանց վասն փրկութեան հոգւոյ բարեխուտարին, որք բազում սիրով եռուն շինել զգաւիթ սուրբ եկեղեցւոյն։

Զանգակատունը 6,12 մ (8,5 արշին) լայնության, նույնքան երկարության և 2—3 մ (3—4 արշին) բարձրության քառանկյունի մի հասարակ շինք է, որի վրա բարձրանում է ութ սյունների վրա հանգչած մի գմբեթ։

Զանգակատունը ունի միայն մի դուռն, որի կամարակալ քարի վրա գրված է.

Կամօքն Այ շինեցաւ զանգակատուն յանուն սրբոյ հրեշտակապետացն Միխայէլի եւ Գաբրիէլի. ի հայրապետութեան Պետրոսի սրբազան կաթուղիկոսին ի տանս Աղուանից եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս եւ անապատիս Զաքարիայ Սարգիս վարդապետի. ձեռնտուութեամբ եւ աղօթիւք ճ. միաբանից կատարումն եղև սք խորանս ի փառս Այ. արդ ես Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետս եւ աղօթաւոր եղբարս շինեցաք զսուրբ կաթուղիկէս, ի փրկութիւն հոգոց մերոց. եւ ամենայն հետեւողաց, որք ընթեռնուք յիշեցէք զմեզ ի Քս. թվ. ՌՃ եւ Ը.

Սեղանատունը *25 մ (11 սաժեն և 2 արշին) երկարության, 8,64 մ (4 սաժեն) լայնության և մոտ 6,5 մ (3 սաժեն) բարձրության կամարակապ մի շինք է, լուսավորված նեղ և փոքր պատուհաններով։ Քարե երկշար սեղանները այժմ քանդված են։ Սեղանատան մոտ գտնվում է իտհանոցը։*

Պարսպի դռան կամարի վրա գրված է.

Ես Մկրտիչ վարդապետս շինեցի պարիսպս, որ եղեւ խարջ իր. Թուման. Ովանէս վարդապետն տուաւ Ժ թուման. շինեցաւ իշխանութեամբ սորա։

Այս եկեղեցուց փոքր-ինչ հեռու, արևելյան կողմը գտնվում է «Հարանց մատուռը», որի վրա կա հետևյալ արձանագրությունը.

Ի հայրապետութեան Տեառն Պետրոսի կաթուղիկոսին, ես Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետս կանգնեցի զխաչս ի լուսաւորութիւն հոգւոյ իմոյ, եւ ծնողաց իմոց Տէր Յաւանէսին Եղիսաբէթին եւ միաբանիցս, որ զատ կան հանգուցեալ, եւ ամենայն ոգորմածաց մերոց. Քրիստոս ասուած մեր լուսաւորեցէ հոգով եւ մարմնով ասա, եւ յաւուն դատաստանին, եւ որ ընթեռնուի յիշեցէք ի Քրիստոս զՄելիոն կազմաղս:

Այս մատրան մեջ գտնվում է Սարգիս վարդապետի գերեզմանը, որի մասին Հայր Ջալալյանը հետևյալ ավանդությունն է պատմում։ Մի պարսիկ յուր ոխերիմ թշնամուն սպանել է, և կամենալով յուր անձի վրայից քերել սպանության ոճիրը, սպանվածի դին գիշերը ձգել է վանքիս դռանը։ Եվ երբ պարսիկները լսել են այս սպանության մասին, սկսել են նեղել և տանջել վանականներին իբրև դավաճանների։ Բայց Սարգիս վարդապետը ասածու շնորհիվ, դատավորների առաջ հարցրել է մեռելին, թե ով է եղել նրա սպանողը, և սա կենդանի բարբառով ցույց է տվել յուր սպանողին, և այսպիսով ազատել միաբանությունը վտանգից[1]։

Վանքն ունի 2800 դեսյատին անտառ, հինգ ձմեռանոց, որ կապալով են տրվում անասուններ պահելու, մի ջրաղաց երկու քարանի, 40 գլուխ տավար, մի քանի ձի, էշ և այլն։

Վանքը պահպանում է արժ. Աստվածատուր վարդապետը, որ քսանևհինգ տարուց ի վեր վանահայր է այս վանքում և յուր անխոնջ աշխատությամբ վերջ ի վերջո կարողացել է նոր խլել վանքապատկան անտառը, որի համար և Վեհափառի կողմից արժանացել է խաչի և օրհնության[2]։

Վանքի արևելյան պատի մոտ կան երկու միմյանց կից տապանաքարեր, որոնք թաղված են հողի մեջ։ Սրանցից մինի վրա կա հետևյալ տապանագիրը. Այս է հանգիստ Դաւիթ եպիսկոպոսին թուին ՌԼԸ։

Փառիսոսի վանք. Գտնվում է Ղալաքյանդից արևելահարավ, Տանձուտից վերև, մի անտառապատ սարահարթի վրա։ Արևմտյան կողմից հոսում է մի փոքրիկ առվակ, որ գնում, թափվում է Տանձուտի գետի մեջ, իսկ արևելյան կողմը բարձրանում է Ջոպան-դաղը։ Այստեղ, ամուր պարսպի մեջ կանգնած են երկու բավական մեծ եկեղեցիներ և մի մատուռ, երեքն էլ գեռևս կանգուն։ Եկեղեցիները միաչափ են, 25 մետր երկարության և 12 մետր լայնության, երկուսն էլ ունին մի մի կամարակապ դավիթ։ Մատուռը ևս ունի փոքրիկ դավիթ և սրա մոտ՝ զանգակատուն, սրբատաշ քարից շինված։ Մատուռի դռան կամարակալ քարի վրա, մի անարվեստ խաչի թևերի մեջ գրված է. Ն. Խ. Փ. Մուսէս երէց։ Մատուռի մեջ, աջ կողմի պատում կա մի գաղտնի մեծ պահարան։

Պարսպի մեջ կան բավական թվով խցեր, որ բոլորովին քանդված են։ Կա նաև մի ջրավազան։ Թե վանքի շուրջը և թե պարսպից դուրս կան բավական գերեզմաններ։

Ս. Թարգմանչաց վանք.—Գտնվում է Խաչկապ գյուղից դեպի հյուսիս, հազիվ չորս վերստ հեռավորությամբ մի գեղեցիկ սարահարթի վրա։ Վանքը խաչաձև է և գմբեթավոր 11 մետր երկարության և 10 մետր լայնության։ Ունի մի ավագ և երկու փոքր խորան, ինչպես և երկու խորհրդարան։ Տասը լուսամուտ առատությամբ լույն են սփռում։ Վանքին կից կա մի դավիթ, ուր ամփոփված են վանահայրերի մարմինները, ինչպես՝ Սամվել եպիսկոպոս Դատյան, մյուս Սամվել, խաչատուր վարդապետ և այլն։ Կա և մի զանգակատուն, որ 1856 թվականին է կառուցված։ Վանքի վրա կա ՆԼԸ (989) թվականը, որ գուցե հիմնարկության թվականը լինի, թեև ավանդությունն ասում է, թե վանքը հիմնված է V դարում, ս. Մեսրոպի ներկայությամբ։ Իսկ դավիթի վրա կա հետևյալ արձանագրությունը։

Եկայք պատուեսցուք շինեալ յանուն սրբոց թարգմանչացն մեր Սահակայ եւ Մեսրովբայ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի. 1029 փրկ. թվ. Գաւիթս այս կառուցաւ ի վանահայրութեան Սամուէլ եպիսկոպոսի 1800 ամի։

Վանքն ունի և մի զանգակատուն, սրբատաշ քարից շինած, որի վրա արձանագրված է.

Զանգակատունս կառոյց Գանձակեցի Պօղոս Ամիրխանեանցը 1856 ամի։

Վանքը ունի պարիսպ, որի մեջ գտնվում են ութ գեղեցիկ խուց, պարտեզ և մի աղբյուր[3]։

---

[1] Հասան-Ջալալյան Ս., Հանապարհորդութիւն..., հ. Ա, եր. 164։

[2] Պետք է նաև ասել, որ շատ շրջանքներ կան նրա մասին։

[3] Ավանդությունն ասում է, թե այս աղբյուրը բխել է, երբ սուրբ Մեսրոպը յուր քարոզությանն միջոցին կամենալով ժողովրդին հրաշք ցույց տալ, «իբրև մի Մովսես խփել է քարին և հրամայել, որ ջուր բխիս։

Գավթում բարձրանում է մի թումբ, որի ստորոտում, կես շրջանաձև շարված են խաչքարեր, իսկ թմբի վրա կա մի ուրիշ մարմարիոնյա մահարձան, որի առաջին երեսին գրված է.

Ատ ամփոփին կմախք նախնեաց նանգուցելոց ընդ հովանեաւ մանաստանի ս. թարգմանչաց. ի թիւն 405—1800

Իսկ մյուս երեսին՝ Կանգնի այս մահարձանն ի պատիւ ոսկերաց որք ըստ երեւեցան 'ի վերանորոգման թուին 1872—1883:

Վանքում կան երեք ձեռագիր ավետարաններ, որոնցից մինը հիշատակ է Գրիգոր Սյունյաց իշխանի, 1312 թ.-Խաթարա վանքին տված։ Մյուս հնություններից նշանավոր է մի եպիսկոպոսական կերպասյա թաղ 1640 թվականից, նույնպես և մի եպիտրոն։ Մասունքներից նշանավոր է ս. Ստեփաննոս նախավկայի մասունքը, որ նվիրել է վանքին Իգնատիոս եպիսկոպոսը 1558 թվականին։

Վանքին պատկանում է 183 դեսյատին տեղ, բաղկացած վարելահողից, խոտհարքից և փոքրիկ անտառից։

Վանքին խնամակալ էր կարգված այժմ հանգուցյալ գանձակեցի Ներսես-բեկ Տեր-Ներսիսյանը, որ թե՛ յուր անձնական գումարներով և թե՛ նվիրատվությամբ մեծապես բարելավել է վանքը, վերանորոգելով շինությունները։

Վանքի վանահայրն է Թեոդորոս վարդապետ Շիրակունին, գրաբար լեզվին հմուտ մի անձն, որ երկար ժամանակ վանքում ուսուցանում էր շրջակա գյուղերից ուսման դիմող երեխաներին։

Թարգմանչաց անապատ. Գտնվում է Մեծ Բանանց գյուղից արևելահարավ, հազիվ երկու վերստ հեռու մի փոքրիկ բլրակի հարթ գագաթի վրա, որի երեք կողմը պատում են Ղաշխա-քար, Աշոռի-ծմակ, Նալթոքյան, Կարմիր-քար, Հին-ընապատ, Ճնճա-քար միմյանց կից լեռները, որոնց մեջ ձգվում են Միրանավորի և Անապատի ձորերը, որոնք միանալով կազմում են Բոլորանց ձորը։ Առաջին երկու ձորերից հոսում են վտակներ և միանալով՝ կազմում Բոլորանց գետը։ Հին-ընապատ սարի և Ճնճա-քարի միջև կա մի նեղ անցք, որ, ինչպես ասում են, ձգվում է մինչև լեռան մյուս լանջը և կոչվում է Նագիրի-ծակ։ Ասում են, թե հին անապատը եղել է այդ ծակից վերև, Հին-ընապատ սարի վրա։

Այժմյան վանքը, անտաշ քարից շինված, 15 մետր երկարության և 9 մետր լայնության հասարակ շինություն է, կամարակապ և անսյուն և ունի միայն մի ավանդատուն և մի հասարակ գավիթ։ Արևմտյան դռան կամարակալ քարը մի հին գերեզմանի խաչքար է, որի վրա

դրված է. Սբ. խաչս Ովանէսին։ Մյուս կողմում՝ Միլ խոճա Ազիզին. իսկ խաչի ներս ընկած մասում տարբեր տառերով՝ Շինեց զսբ. եկեղ. թվ. ՌՀԹ.

Վանքից փոքր-ինչ հեռու գտնվում է մի, համեմատաբար ավելի լավ շինված, գմբեթավոր զանգակատուն, ուր կա հետևյալ արձանագրությունը.

Ես Պաղդասարի որդի Մանուելի Ներսէս եւ Սէրգիս տվին զուրբ անապատիս ա. թումանի վախմ. սոխա տուին մեզ տարեն դ. ժամ. եթէ ոք խափանի, պարտական լինի առաջի աստենին Քրիստոսի. թվ. ՌՃԽԴ։

Այստեղ գտնվում է տապանը «Տէրունց Յարութիւնի որդի Գաբրիէլ եպիսկոպոսին 60 ամ վանահայր էր սա անապատիս, 96 ամեայ էր որ փոխեցաւ առ Քրիստոս. 18²/₁₃31 ՌՄՁ.»։

Վանքի հյուսիսային կողմում, ուր ձգվում է ձորակը, նկատվում են պարսպի մնացորդներ։ Վանքի մոտ կան 10 թաղակալ խցեր, որ բավական լավ են մնացել։ Վանքի սեփականություն է համարվում մի այգի, որի արդյունքով կառավարվում է այժմյան վանահայրը, 90 տարեկան Հովհաննես աբեղան, որ ինքն է հաց թխում, կերակուր եփում և մենմենակ ապրում այդտեղ։

Ծաղկոցավանք. Գտնվում է Գառնակեր գյուղից հարավ, մոտ կես վերստ հեռու, Շամքոր գետի ձախ ափին, մի բարձր ժայռի գլխին։ Վանքը անսյուն է և բավական ընդարձակ, 9 մետր 30 սմ երկարության և 6 մետր 43 սմ լայնության։ Գմբեթ չունի, առջևից կցած է մի նորաշեն քարե գավիթ։ Պատերի մեջ կան մի քանի խաչքարեր, որոնցից մեկի վրա կա ՋԻԵ (1476) թվականը, իսկ մի ուրիշի վրա՝ «Սուրբ խաչ Տէր Ունան պարօն Գաբրիէլին քաւարան թվ. ՌՃԼԸ»։ Գավթում կան մի քանի գերեզմաններ, որոնց շրջակա գյուղացիները ճբգնավորների գերեզմաններ են անվանում։

Հրեշտակապետաց վանք. Ընկնում է Ծաղկոցավանքից դեպի հարավ, փոքր-ինչ հեռու, լեռան ստորոտում։ Վանքի երկարությունն է 10 մետր 70 սմ, լայնությունը՝ 8 մետր։ Ունի մի քարուկիր փայտե գմբեթով գավիթ, ուր կան մի քանի գերեզմաններ։ Գավթի հյուսիսային պատի մեջ երկու սրբատաշ քարերի վրա արձանագրված է.

«Շնորհիւ Աստուծոյ շինեցաւ սուրբ Միխայէլ եւ Գաբրիէլս ձեռամբ Յովհաննէս վարդապետի եւ մանուելի Յովհաննէսի հանդերձ միաբան եղբարք թվ. ՌՄԿԵ»։

Գավթի մեջ գտնված շիրիմներից մեկի վրա՝

«Այս է հանգիստ ճգնակեաց Յովհաննէս վարդապետի շինող վանիս Մաղամի որդի թվ. ՌՄՀԷ»:

Վանքի հարավային կողմում գտնվում են տասը խցեր միաբանների համար, որ այժմ կիսավեր են։ Հասարակ քարի մի հաստ պարիսպ պատում է վանքը։ Կալվածքներ չունի, բացի մի այգուց։ Վանքը պահպանում է մի ծերունի քահանա։

Վանքից մի քիչ հեռու կա մի հին հանգստարան, որի մեջ կան ճգնավորների, վարդապետների գերեզմաններ։

Վանքի արևելյան կողմում, գետակի աջ ափի քերծում մի քարայր է գտնվում, որի մեջ երեք խաչքար կա։ Սա կոչվում է Հարանց և ավանդության ասելով, այստեղ ճգնել են մի քանի ճգնավորներ։

Մի քիչ էլ հեռու կա մի գյուղատեղի, ավերակ եկեղեցի և հանգստարան, որ հայտնի է Միրանավորի անունով։

Օխթը եղցի կամ Քարահերձ. Զարեքի վանքի մոտ, Շամքոր գետի ափին ձգվում է մինչև Շիպասարը մի լեռնաբազուկ, որի հյուսիսահայաց ծայրի քերծերում փորված են քարայրներ, որոնց առաջը՝ բաց տեղերը քաշված են պատեր։ Ամբողջ քերծը և մանավանդ այրերը պատած են խիտ անտառով, մի նեղ ուղի քերծի գագաթից տանում է դեպի այրերը, բայց այժմ այդ նեղ ուղին էլ խափանված է, և այս քարայրերը շատ դժվարամատչելի են։ Սրանցից երկուսի մեջ կան վիմաքարեր, հետևապես և եկեղեցի է եղած։ Կիրակոս Գանձակեցու ասելով[1], Աղվանից Հովհաննես կաթողիկոսը երկար տարիներ այս քարայրերումն է անցկացրել, հարձակումների երկյուղից ստիպված։

Այս Քարահերձից փոքր-ինչ վերև գտնվում է Աղյուսաշեն ավերակ գյուղատեղին։

Մլզնաբերդ կամ Մածնաբերդ վանք. Սա պատկանում է Աղսարդանա որդի Կյուրիկե թագավորին, որ մի առ ժամանակ էլ այդտեղ է կացել։ Գտնվում է Հարցահանգիստ (Զովգառ) գյուղի մոտ, մի առանձնացած լեռան հարթ գագաթին։ Վանքը երկու կամարների վրա հաստատված մի շենք է և ունի մի զանգակատուն։ Դռան վերև գրված է.

Հնադարեան ուխտատեղիս յանուն սուրբ Սարգսի ար է Մլզնաբերդ, հիմնովին նորոգեց Գանձակեցի Սողոմոն Յար. Նալչադարեանցն ծախիւ իւրովի ի յիշատակ իւր կնոջն Թալախանումի, որդւոյն, Լեւոնի եւ եղբայն ենչեցելոց իւրոց 'ի 1891 Ռ3Խ ամի։

[1] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն հայոց*, *Մոսկուա*, *1858*, *եր. 103, 105։*

Վանքի շուրջը պարիսպ է եղել, ինչպես և խցեր, որոնցից միայն երկուսն են այժմ կանգուն։ Վանքը այժմ ծածկված է բարձր ծառերով։

Կարմիր եկեղեցի կամ Հոռոմաշեն. Գտնվում է Նուզգարի մոտ, Շամքոր գետի աջ ափին։ Սրբատաշ քարով, խաչաձև մի շենք է, ունի գեղեցիկ կաթուղիկե, մի ավագ խորան և սրա հարավային անկյունում՝ մի փոքր և մութ խորան։ Վանքն ունի նաև մի գավիթ, ուր կան շատ գերեզմաններ, բավական թվով խցեր միաբանների համար և մի քարուկիր շրջապարիսպ, որ արդեն կիսավեր է։

Քարխանա վանք. Հիմնված է Միրզիկ գյուղի մոտ, մի լեռնահովտում, երեք կողմից պատված է բարձր լեռներով, առջևում տարածվում է մի խոր ձոր, որի միջով հոսում է մի առվակ, որ գնում, միանում է Գանձակ գետին։

Վանքը շինված է տորոնագույն սրբատաշ քարով, ունի երկու փոքր և մի ավագ խորան։ վեց լուսամուտ և մի գուռ։ Վանքի երկարությունն է 12 մետր և լայնությունը՝ 8 մետր։ Ռեմի ճակատին, մի խաչքարի վրա գրված է. Թվ. ՌԿԵ.։

Վանքը ունի և հասարակ քարից շինված մի գավիթ, ուր կան ԺԷ—ԺԸ դարից մի քանի գերեզմաններ։

Վանքը ունի և շրջապարիսպ ու մի քանի խուցեր, կիսավեր դրությամբ, շրջապարսպի մեջ կա Քյանդագիրմազ մականվանված Սարգիս վարդապետի գերեզմանը։

Վանքը բոլորովին անխնամ է թողնված։

Եղնասար վանք. Գտնվում է Գետաշենից դեպի հարավ-արևելք, հաղիվ երկու վերստ հեռավորությամբ, մի լեռնաբազկի վրա։ Վանքը, որ կառուցված է Եղիշե առաքյալի անվամբ, սրբատաշ քարերից, կամարակապ է և հանգում է երկու սյուների վրա։ Գմբեթ չունի, երկարությունն է 12,4 մետր, լայնությունը՝ 10,33 մետր։ Դռան հարավային սեմի վրա կարդացվում է. Թվ ԹՃԼԸ. ես նա..ռ..ա Մովսէս էրէց։ Հյուսիսային սեմի վրա՝ Ի հոպելիանն Ազատարարէ Գ թուականէ մեռաւան տարիմ վեր տար (1311) ես անարժան տէր Ղազարս գրեցի։

Վանքի շուրջը կան բավական թվով խցեր, որոնցից միայն երեքն են այժմ կանգուն։ Սրանք միմյանց կից են և կամարակապ։ Մուտքի վրա կա հետևյալ արձանագրությունը.

Սենեակ կերտեալ ի՛ր աշազան. վերին յարկոք եւ զանազան, Սակս տէրասէր սրբազան Եղիազարիս Անձրան։ ԹՃԿԱ (1712)։

Վանքն ունեցել է և շրջապարիսպ։ Դարիս սկզբից այս վանքն ան-

խնամ է թողնված, և այժմ այդտեղ խոզեր են պահվում։ Ջերմ ուսնեցողներն էլ ուխտ են գալիս այդտեղ, սառնորակ աղբյուրի մոտ մատաղ անում, իրենց շորերից կապում վանքի մոտ գտնված սուրբ ծառից և հիանում այն հրաշալի տեսարանով, որ բացվում է այդտեղից գիտողի առջև։

Ամենափրկիչ վանք. Գտնվում է Նուզգաթ գյուղի հարավ-արևմտյան կողմում, Շամքոր գետակի ձորից փոքր-ինչ բարձր։ Եկեղեցին կիսավեր է, և գավթի վրա կա հետևյալ արձանագրությունը.

Շնորհօքն Քրիստոսի եւ կամաւն Այ ես Ներսէս եպիսկոպոս նորոգեցի զեղեցիկս այս յիշատակ ինձ եւ իմ ծնողաց Բաղդասարին... թվ. ՌՃԻԸ։

Վանքի մեջ, բեմի առաջ կան մի քանի խաչքարեր, որոնցից ամենամեծի վրա գրված է.

Ի ճայրապետութեան Աղուանից տն. տն. Տրդատայ ս. կաթուղիկոսի, թագաւորութեան պարսից Շահապազին ես մեղապարտս .... որդիս իմ Մաղաքիա եպիսկոպոսն... նորոգեցաք ս. Ամենափրկիչս.

Վանքը ունի շրջապարիսպ և մի քանի խցեր, որ նույնպես ավեր են։ Մի քիչ հեռու, փոքրիկ բլրակի վրա կա մի հանգստարան։

Խամշի վանք. Կիրակոս Գանձակեցու ասելով, Քարահերձում բնակվող Աղվանից Հովհաննես կաթողիկոսը «նեղվելով այլազգիներից եկավ հայոց աշխարհը Զաքարե և նրա եղբայր Իվանե մեծ իշխանների մոտ։ Եվ սրանք մեծ պատվով ընդունեցին նրան և Իվանեն բնակեցրեց նրան Միափոր (Փառիսոս և Քավս կամ Քուստի գավառների վերի մասերը) գավառի Խամշի անվանված վանքում։ Սա սկսեց այդտեղ մի մեծ և հրաշալի եկեղեցի շինել, բայց դեռ չէր ավարտել երբ խափանվեց, որովհետև եկավ Խորասանի սուլտան Ջալալադինը և արշավեց վրաց թագավորության վրա»[5]։ Այնուհետև հետզհետե եկան այլազգիների զորքերը և ավերեցին հայոց, աղվանից և վրաց աշխարհները։ Սրանից հետո դարձյալ այստեղ բնակվեցան Աղվանից կաթողիկոսները և շինեցին, ավարտեցին վանքը[6]։ Ահա այս պատմական վանքն է, որ գտնվում է Մեծ Ղարա-Մուրատ ավերակի արևելահյուսիսային կողմում, մի հովտի մեջ։ Երկարությունն է 15 և լայնությունը՝ 9,5 մետր։ Երկու սրբատաշ քարի վրա հենվելիս է եղել ձեղունը, որ այժմ բոլորովին փլել է։ Հյուսիսարևելյան կողմում բարձրանում է երկհարկ զանգակատունը, նույնպես սրբատաշ քարից շինված։ Այստեղ աստիճանավոր պատվանդանի վրա դրված է մի քարե խաչ, որ շատ գեղեցիկ քանդակագործված է և կրում է վրան հետևյալ թվականը. Թվ. ՌՁԸ. (1629)։

Վանքը ունեցել է շրջապարիսպ և միաբանների խցեր, բայց այժմ բոլորովին քանդված են։

Խունիսա վանք. Սա մի փոքրիկ, գեղեցիկ, գմբեթավոր վանք է Նոր Գետաբեկի արևելյան կողմում, Գետաբեկի վտակի ձախ ափին մի հարթակի վրա շինված։ Այժմ էլ կանգուն, բայց անխնամ է թողնված։

Պանտալյոնի վանք. Սա հիմնված է Համանուն սարի գագաթին, որ գտնվում է Հաճիքենդի մոտ։ Լեռը միայնակ, բրգաձև բարձրանում է մինչև 5000 ոտնաչափ բարձրության և գագաթին ունի մի փոքրիկ հարթ տարածություն։ Այնտեղ, ուր այժմ կանգնած է մի փոքրիկ, հասարակ քարից շինած գմբեթավոր մատուռ, հնումը մի մեծ վանք է եղել, բավականաչափ խցերով և ունեցել է միաբանություն։ Այժմ միայն ս. Աստվածածնի տոնին բավական մեծ բազմություն ուխտ է գալիս այստեղ։

Սուրբ Սարգսի վանք. Սա մի փոքրիկ մատուռ է Հին Գետաբեկի մոտ, մի բարձր և գեղեցիկ սարահարթի վրա։ Գետաբեկի պղնձահանքի կառավարիչը այստեղ պատշգամբ, խոհանոց է շինել տվել և հաճախ զբոսանքի է գալիս։

Կիրակոս Գանձակեցու ասելով, այս վանքում ապաստանել է Յոհան վարդապետ Մայրավանեցին, Եղբ կաթողիկոսից հալածվելով և Մայրագոմեցի կոչվելով։

Ամենափրկիչ վանք Գյուլիստանի. Գտնվում է Գյուլիստան գյուղից երկու վերստ հեռու, դեպի հարավ-արևմուտք, Աղ-սու կոչված վտակի ձախ ափի մոտ, մի անտառապատ ձորակում։ Տաճարը շինված է անտաշ քարով չորս բոլորակ սյուների վրա և ունի 23 մետր 50 սանտիմետր երկարություն և 10 մետր լայնություն։ Երկու փոքրիկ, նեղ լուսամուտներ աղոտ լույս են սփռում ներսը, ուր կան մի մեծ ու երկու փոքր խորաններ և երկու խորհրդարան։ Միակ, հարավային դուռը այժմ քանդված է, այս պատճառով էլ տաճարը թուրքերի անասունների ապաստարան է դարձած։ Ավագանի մոտ, որ նույնպես կիսով չափ քանդված է, կա ԹՂ (1641) թվականը։

Տաճարի արևմտյան կողմին շատ մոտ կան երկու թաղակապ սենյակներ։

[5] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն հայոց*, եր. 105—106։

[6] Անդ, եր. 171։

յակներ, որոնցից մինի դռան սեմի վրա գրված է. ԹՎ ԻՃԿԻ. յիշատակ է այս օթևան Եղիա վարդապետին:

Տաճարի մյուս, հյուսիսարևելյան կողմում գտնվում են միաբանների խցերը, որ նույնպես անասնանոց են դարձած և այժմ կիսավեր դրության մեջ են: Թե՛ այս խցերի և թե՛ տաճարի կտուրին բուսած են ծառեր:

Վանքից հաղիվ քսան և հինգ քայլ հեռավորության վրա կա մի փոքրիկ, քարուկիր մատուռ, որ այժմ ուխտատեղի է: Շնորհիվ այն հանգամանքի, որ այս մատուռը դուռ ունի, մաքուր է մնացել և թուրքերի անասունները ներս չեն մտել: Այս մատուռի մեջ մի խալի վրա գրված է. «Հիւրիա ապաշխարողին»: Դռան առաջ էլ մի գերեզման կա հետևյալ տապանագրով. «Այս է հանգիստ Հիւրեղ դատին, աղաչեցէք. թվ. ՌԿԲ.»:

Դատի բէկանց վանք. Գտնվում է Կյուլիստան գյուղից ներքև, ինչա գետի աջ կողմում: Սա մի հասարակ փոքրիկ վանք է, այժմ կիսավեր: Շուրջը կան միաբանների խցեր և գերեզմանատուն:

ՆՇԱՆԱՎՈՐ ԲԵՐԴԵՐ

Գանձակի բերդ. Գտնվում է համանուն քաղաքի հյուսիսային կողմում, հարթ դաշտի վրա: Բազմաթիվ պատերազմների ասպարեզ դառնալուց ետո, 1870 թվականին հիմնովին քանդվեց ռուսաց կառավարության կարգադրությամբ: Այժմ այս տեղում շինված է և շինվում են զանազան շինություններ, ահագին բանտը, տներ և այլն: Չնայելով վերջնական ավերումից առաջ հանած պատկերը, առաջ ենք բերում Եվեցկու նկարագրությունը, որ արել է 1835 թվականին. «Գանձակի բերդը՝ ամենաընդարձակը Վրաստանում, ունի վեց աշտարակ և բռնում է մի քառակուսի վերստից ավելի տարածություն: Աշտարակներն ու թումբերը քարով են ծածկված»[1]: Բերդի մեջ գտնվում էր խանի պալատը, որ երեք դարատամներից՝ թաղակապ սենյակներից էր բաղկացած[2]:

Ղալաքյանդ կամ Փառիսոս բերդ. Տեղավորված է համանուն գյուղի հյուսիսային կողմում բարձրացող մի ժայռոտ լեռան գագաթին: Այս լեռը միայն արևմտյան կողմից միացած է Ղանդալ լեռան հետ, իսկ մյուս երեք կողմից նա առանձնացած է և սաստիկ զառիվեր: Մի հատ, մոտ 3,5 մետր լայնության պարիսպ բոլորում է լեռան գագաթին, 12 աշտարակներով և մի դռնով արևելյան կողմից: Բերդի երկարությունը կլինի մոտ 110 մետր, իսկ լայնությունը՝ 85: Դեռևս կիսավեր մնում են երկու փոքրիկ մատուռներ, իսկ մյուս շինությունների հետքերն են միայն նկատելի: Հյուսիսային պարսպին կից կան երկու ստորերկրյա թաղակապ սենյակներ, որոնք միմյանց հետ հաղորդակցվում են մի դռնով: Սրանցից առաջինը կիսով չափ լցված է հողով, իսկ մյուս մասը, ինչպես և ամբողջ երկրորդ սենյակը, լի է հստակ և սառն ջրով: Ասում են, թե այս ջուրը բերված է մոտակա Ղանդալ սարից և հաղորդակցություն ունի Ղարա-բուլաղ աղբյուրի հետ, որ բխում է բերդի հյուսիսային ձորում և աշխատեցնում է երկու ջրաղաց: Պատմում էին, թե երբ հարդ են ածել այս ջրամբարի մեջ, նկատել են, որ դուրս է եկել վերոհիշյալ աղբյուրից:

Քերծերի մեջ կան երեք հատ արհեստական քարայր:

Մամռուտ բերդ. Ըստ հայր Ջալալյանի[3], այս բերդը հիմնել է Մամռուտ իշխանը, որ միևնույն ժամանակ նպաստել է և Դավիթ եպիսկոպոսին՝ կանգնելու Ջարեքա անապատը: Կիրակոս Գանձակեցին[4] Ջարեքա բերդ, իսկ Վարդան պատմիչը[5] Շմեղ է կոչում այս բերդը:

Գտնվում է Ջարեքա վանքի կալվածքում, վանքից մոտ երկու վերստ հեռու, դեպի արևելք, Շամքոր և Գեսաբեկ գետերի միախառնման կետում բարձրացող մի անտառապատ լեռան ապառաժոտ գագաթին: Բերդը ունի թրծած կարմիր աղյուսից պարիսպ և արևելյան կողմում կրկնապարիսպ, ամրապնդված մի քանի աշտարակներով: Բերդի մեջ կա մի կոնաձև բլուր, տների ավերակներ, ջրի խանգարված ավազանի մնացորդներ և քարայրեր: Բերդն այժմ պատած է մացառներով: Բերդի տակ, գետի վրա եղել է մի քարաշեն կամուրջ, որի կամարն այժմ ընկած է, և տեղը փայտեր ձգած:

Մլզնաբերդ կամ Մածնաբերդ. Գտնվում է Հաբցհանդիստ գյուղի մոտ, մի սրածայր սարի գագաթին: Սա պատկանում էր Աղասարդանա որդի Կյուրիկե թագավորին, ուր և ինքը բնակվում էր: Բերդասարի միայն արևմտյան կողմը պատած է ամուր պարսպով, որ ունի

[1] Евецкий О., Статическое описание Закавказского края, С. Петербург, 1835.

[2] Мевес М., «Кавказ», 1884, № 35.

[3] Հասան-Ջալալյան Ս., Ճանապարհորդութիւն, հ. Ա, եր. 164:

[4] Կիրակոս Գանձակեցի, Պատմ. հայոց, եր. 103—105:

[5] Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն..., եր. 18:

երեք աշտարակ, իսկ մյուս երեք կողմերը ապառաժոտ և անմերձենալի են։ Ունի միայն մի դուռն արևմտյան կողմից։ Բերդս ունի նաև միջնաբերդ, առանձին պարսպով։ Սա տեղացիներից կոչվում է Նարին-ղալա։ Բերդի հյուսիսային մասում այժմ մի բարակ ջուր է հոսում, իսկ արևմտյան կողմում նկատելի են խեցեղեն խողովակներ, որոնցով երբեմն ջուր է բերված բերդս։

Ղալա-բոյուն. Բերդաքաղաքս գտնվում է Ջակամ գետակի ձախ կողմում բարձրացող լեռան վրա։ Ունի շրջապարիսպ, որ կիսավեր է։ Կան երեք եկեղեցու, բազմաթիվ տների ու խանութների ավերակներ։ Կա և մի ընդարձակ գերեզմանատուն։

Քարահունջ ավերակ կամ Բալլու-ղալա և Ջափար-ղալա. Առաջինը տեղավորված է Մռավ լեռան արևմտյան, իսկ երկրորդը՝ արևելյան լանջին, միմյանցից մոտ յոթ վերստ հեռավորությամբ։ Առաջինում մնում է մի փոքրիկ եկեղեցու ավերակ, իսկ երկրորդում՝ ոչինչ։ Այս երկու տեղն էլ ծառայելիս են եղել Գյուլիստանի ժողովուրդին իբր ապաստարան թշնամյաց հարձակման միջոցին։

Ղըզ-ղալա. Կանգնած է Ղուալի դյուղից վերև, Ախնջի վտակի աջ ափին բարձրացած սեպաձև և անմատչելի ժայռի գագաթին, որ միմիայն մի դժվարանցանելի ճանապարհ ունի արևելյան կողմից։ Ժայռի գագաթը մի փոքրիկ հարթություն է ներկայացնում և շրջապատված է եղել պարսպով։ Ժայռի արևելյան ստորոտում, փոքրիկ հարթության վրա դեռևս մնում են մի կիսավեր եկեղեցի և գերեզմանատուն։

Համանուն մի բերդ ևս կա Նուզդար գյուղի արևելյան կողմում, որ բավական հին լինելով, շատ քիչ հետքեր է թողած։

Կեռստավա նք բերդ. Արդեն այնպես ավերված է, որ դժվար է հաստատապես ասել, թե բերդ է եղած, որովհետև ոմանք էլ կարծում են, թե վանք է եղած։ Գտնվում է Շամքոր գետի աջ կողմի բարձրության վրա, Բուսկան նահատակից փոքր-ինչ ներքև։ Բոլոր շինություններից միմիայն պարսպի մի քանի մասերն են մնացած։

Ղալա. Ոսկանապատից դեպի վերև, մոտ մի մղոն հեռավորությամբ նույն գետակի ձախ ափին գտնվում է մի գրեթե քառակուսի, շորս աշտարակներով փոքրիկ ամրոց, որի իսկական անունը անհայտ է։ Գետակի կողմում կան և կրկնապարսպի մնացորդներ։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

Ելենենդորֆ. Գտնվում է Գանձակից դեպի հարավ, մոտ 7 վերստ հեռու, մի հարթության վրա, Գանձակ գետի աջ կողմում։ Շինք

կանոնավոր, լայն և ուղիղ փողոցներ ձգվում են գրեթե մի վերստ երկարությամբ, որոնց երկու կողմը տնկված կաղամախի, բարդի և ուռի ծառերը մի առանձին գեղեցկություն են տալիս գաղութին։ Գրեթե կենտրոնում բարձրանում է գոթական ճաշակով սրբատաշ կարմիր քարից շինած եկեղեցին, որի մի կողմը գտնվում է պետական երկդասյան, երկսեռ դպրոցը, իսկ մյուս կողմում՝ մի գեղեցիկ, երկհարկանի տուն, փոքրիկ պարտեզով, որ համայնքը հատկացրել է պաստորի բնակության համար։ Եկեղեցու առաջ տարածվում է մի բավական ընդարձակ հրապարակ, նույնպես կաղամախի ծառերով զարդարված։ Տները մեկ, երկու և մինչև անգամ եռհարկանի են, իրենց առաջը ունենալով ընդարձակ բակեր և փոքրիկ բանջարանոցներ։

Գաղութում կա բավական թվով գեղեցիկ, հարուստ խանութներ, արհեստանոցներ, գերմանական և ռուսաց զինվորական կլուբներ, մի հյուրանոց, հասարակաց այգի, փոստ և հեռագրատուն և այլն։ Բնակիչները, թվով 249 տուն, 735 արական, 722 իգական, միասին՝ 1457 հոգի, վյուրտեմբերգցի գերմանացիներ են, և 50 տուն, 116 արական, 44 իգական, միասին՝ 160 հոգի հայեր, կան նաև երկու տուն ռուսներ և երկու տուն թուրքեր։

Հայերն ունին մի շարժական խորան մի դահլիճի մեջ, ու թեև իրավունք չունին պատարագ մատուցանելու, բայց կարող են ժամասացություն և դանազան ծիսակատարություններ կատարել։

Գերմանացիները գլխավորապես պարապում են երկրագործությամբ, այգեպանությամբ, գինեգործությամբ և գարեջրի պատրաստությամբ, հայերը՝ բացառապես առևտրով և արհեստներով։

Այս գաղութում նշանավոր է Ֆորեր գերմանացին, որ միլիոնատեր է, ունի բավական թվով այգիներ, արտեր, ընդարձակ արոտատեղիներ, ձիաբուծարան, գինու և գարեջրի գործարաններ և այլն։

Այս գաղութում 25 տարուց ի վեր մնում է մի գունդ զորք, ցրված գերմանացիների տներում։

Աննենֆելդ. Գտնվում է Շամքոր գետից 8 վերստ դեպի հյուսիս, մի ընդարձակ դաշտի վրա։ Ուղիղ, կանոնավոր փողոցները բարձր ծառերով, գեղեցիկ տները ընդարձակ բակերով այստեղ էլ գյուղին բավական լավ տեսք են տալիս։ Գաղութի մոտ երևում են մի շարք կուրգաններ, որոնք դեռևս պեղված չեն։ Այս գաղութը միանգամայն նման լինելով Ելենենդորֆին, առանձին հիշատակելու բան չունի, այս միայն կարելի է ասել, որ սա այնքան առաջադիմած չէ, որքան Ելե-

նենդոցիը, որովհետև կենտրոնից ավելի հեռու է գտնվում։ Բնակիչները 116 տուն են՝ 231 ար., 261 իգ., միասին՝ 492 հոգի, որից 97 տունը, 201 ար., 236 իգ. գերմանացի են, 16 տունը՝ 23 ար., 20 իգ.՝ հայեր, 1 տունը՝ 3 ար., 4 իգ՝ ռուս, 1 տունը՝ 2 ար., 1 իգ. վրացի և 1 տունը՝ 2 ար., պարսիկ։

ԴՈՒԽԱԲՈՐՆԵՐԻ ԳՅՈՒՂԵՐ

Գանձակի գավառում կան դուխաբորների հետևյալ գյուղերը.

1) Սլավյանկա, 2) Նովո-Գարելոյե (Արթափա), 3) Նովո-Սպասկոյե, 4) Նովո-Տրոիցկոյե (Գյունալ)։

Այս չորս գյուղը միասին կազմում են մի՝ Սլավյանկայի հասարակություն և ունին 339 տուն, 1220 ար., 1226 իգ., միասին՝ 2446 հոգի։

Սրանցից Սլավյանկա գյուղը գտնվում է Գետաբեկի պղնձահանքից 8 վերստ դեպի հյուսիս, Գանձակից մոտ 70 վերստ դեպի արևմուտք, մի դաշտավայրի վրա, Արեշենկա գետակի ափերին, որ սկիզբն է առնում Ղրզբլ-չակ լեռից և թափվում Ջակիր-չայի մեջ։ Ավանդության ասելով հնումը սա հայաբնակ է եղել և կրել է Վարդանապատ անունը։ Թուրքերը սրան կոչում են Ենկիջա-Բազար։ 1837—38 թթ. Թաղեթից 40 տուն հայեր գաղթել են այստեղ, սակայն թուրքերից սաստիկ նեղվելով 1844 թ. վերադարձել են իրենց գյուղը։ Սրանց շինած եկեղեցին այժմ էլ կա գյուղի հյուսիսային կողմում։ Սլավյանկան, ինչպես և մյուս բոլոր դուխաբորների գյուղերը, ունին կանոնավոր, երկար և լայն փողոցներ։ Բնակարանների առաջ կան պարտեզներ՝ պտղատու ծառերով, որոնք գյուղին բավական գեղեցիկ տեսք են տալիս։

Գյուղում կա պետական երկդասյան տղայոց դպրոց, հիմնված 1888 թվականին։

Ամառները այստեղ են մնում գավառիս չորրորդ ոստիկանական բաժնի ոստիկանը, հաշտարար դատավորը և քննիչը։ Բնակիչները 211 տուն են, 744 ար., 763 իգ., միասին՝ 1537 հոգի։

Նովո-Գարելոյեն գտնվում է Սլավյանկայից մոտ 3 վերստ դեպի արևելք. հնումը հայաբնակ է եղել Էրենեցիֆ անունով, հետո թուրքաց ամառանոց՝ Արթափա կոչումով։ Բնակիչները 61 տուն են, 236 ար., 238 իգ., միասին՝ 474 հոգի։

Նովո-Սպասկոյեն գտնվում է Սլավյանկայից 5—6 վերստ դեպի արևելահարավ։ Հնումը նույնպես հայաբնակ է եղել Խնուս անվամբ։ Բնակիչները 31 տուն են, 108 ար., 114 իգ., միասին՝ 222 հոգի։

Նովո-Տրոիցկոյեն ընկնում է Նովո-Գարելոյի մոտ, 2 վերստ դեպի արևելահյուսիս։ Բնակիչները 36 տուն են, 102 ար., 111 իգ., միասին՝ 213 հոգի։

Այս չորս գյուղերի մեջ էլ ոչ մի առանձին նշանակություն ունեցող բան չկա։

ՄԱԼԱԿԱՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԵՐ

Նովո-Սարատովկա գյուղը ընկնում է Գանձակից մոտ 96 վերստ դեպի արևմուտք։ Սա կոչվում է նաև Փնտխլու (Կաղնուտ), Բևբևս շուրջը գտնված կաղնիների պատճառով։ Գյուղի մոտ մի փոքրիկ եկեղեցու ավերակ կա, ՌԷ (1558) թվականը կրող խաչքարերով, դռան կից քարերից մեկի վրա մի մարդ է քանդակված, ձեռին մի փունջ բռնած։ Բնակիչները, որ 1844 թ. Սարատովի նահանգից դաղթած են եղել Լոռու գավառ, իշխ. Օրբելյանի կալվածքը, 1850 թ. վերաբնակվել են այստեղ։ Ընդամենը 177 տուն են, 591 ար., 508 իգ., միասին՝ 1099 հոգի, որից՝ 375 ար., 331 իգ., մալական են, 92 ար., 72 իգ. սուբբոտնիկ, 124 ար., 125 իգ.՝ պրիգուն։

Նովո-Իվանովկա. Գավառիս արևմտյան կողմի վերջին գյուղն է, Գանձակից 103 վերստ հեռու։ Սրա սահմանում, Դեմիրգաղի մոտ գտնվում է մի եկեղեցու ավերակ, որ կրում է Սպիտակ եկեղեցի անունը, սրա անունով էլ այս գյուղը շատ անգամ կոչվում է Աղ-Քիլիսա (Սպիտակ եկեղեցի)։ Ռուս ազանդավորները վերաբնակվել են այստեղ 1853 թվականին, գալով մասամբ Շամախու գավառի Ջիրանի գյուղից, մասամբ էլ Տամբովի և Սարատովի նահանգներից։ Ընդամենը 145 տուն են, 544 ար., 406 իգ., միասին՝ 950 հոգի, որից 399 ար., 321 իգ. մալական, 38 ար., 34 իգ. բաբտիստ, 105 ար., 49 իգ., սուբբոտնիկ։

Ռուսաց-Պարիս (Բորիսի). Գտնվում է Հայոց Պարիսի մոտ, նախկին Հայոց Պարիսի տեղում, ուր կա մի ավերակ եկեղեցի և հանդուստարան։ Չորս կողմից պատած է լեռներով, որոնք ծածկված են հասարակ և պտղատու ծառերով։ Ամբողջ գյուղը բաղկացած է երկու պուգընթաց, երկար փողոցներից, տները միմյանցից անջատված են և ունին ընդարձակ բակեր, որոնց մեջ կան ջրհորներ։ Գյուղն ունի միմիայն երկու աղբյուր։ Գյուղի մոտ, լեռան լանջին գտնվում է Նահատակ անուն հայոց ուխտատեղին։

Բնակիչները ռուս աղանդավոր՝ մալականներ են, որ գաղթել են այստեղ Տամբովի նահանգից, միառժամանակ մնալով նախ Զանգեզուրի գավառի Բազարչայ, ապա Ջիբրայելի գավառի Ղարաբուլախ գյուղերում։ Բոլորը 141 տուն են, 331 ար., 316 իգ., միասին՝ 647 հոգի։ Հողը պատկանում էր Մելիք-Բեկլարյանին, որից 1888 թ. արքունի գանձարանից փոխառություն անելով, գնել են։

Միխայլովկա. Գտնվում է Հաճիքենտ ամառանոցից մոտ 3 վերստ հեռու դեպի հարավ, մի փոքրիկ հարթության վրա։ Փողոցի երկու կողմում տնկված են ծառեր։ Գյուղը հիմնված է 1870 թ. և ոչ մի նշանավոր բան չունի, բացի նրանից, որ մեղմ կլիմա և բավականաչափ լավ բնակարաններ ունենալով, ամառանոց է դարձած։ Գյուղին կից անտառ չկա։ Բնակիչները 28 տուն են, 70 ար., 61 իգ., միասին՝ 131 հոգի, որից 3 ար., 1 իգ. ստարոօբրյատցի (հնածիսական) են, 34 ար., 33 իգ.՝ մալականներ, 15 ար., 19 իգ.՝ բաբտիստ, 6 ար., 2 իգ.՝ սուբբոտնիկ, 10 ար., 5 իգ.՝ պրիգուններ։

ԹՈՒՐՔԵՐԻ ԳՅՈՒՂԵՐ

Թուրքերի գյուղերը մեծ մասամբ գտնվում են դաշտային, ջրարբի և արգավանդ մասում։ Այսպես առաջին ոստիկանական շրջանում, որ բռնում է գավառի հյուսիսային դաշտային մասը, կա 61 գյուղ։ Բոլոր թրքաբնակ գյուղերը 117 են և բոլորն էլ կրում են գրեթե միևնույն բնավորությունը՝ սաստիկ կեղտոտ, տները հասարակ և մեծ մասամբ գետնափոր, փողոցները ծուռ ու մուռ և կեղտոտություններով լի։ Համարյա ոչ մի գյուղում պատմական կամ ճարտարապետական տեսակետից նշանավոր մի որևէ շենք չկա։ Կան, իհարկե, ուխտատեղիներ, սակայն սրանք ղուտ կրոնական տեսակետից փոքրիշատե նշանակություն ունեն և ոչ մահմեդականի համար բոլորովին հետաքրքիր չեն։ Ամենաբազմամարդ գյուղը երկրորդ խիլխինան է, որ 720 տուն բնակիչ ունի, բոլորն էլ շիաներ։ Նույնպես բազմամարդ են. Վերին Ափալին (474 տուն), Այրումը (376 տ.), Ղարադաղլի Պաղարը (372 տ.), Ներքին Ափալին (349 տ.), Գյորանբոյ Ահմետին (335 տ.), ուր նստում է ոստիկանական երրորդ շրջանի ոստիկանը, Դալլյարը (329 տ.), Մոքուլը (282 տ.), Ղըզըլ-Հաջիլին (277), Գյուգարլին (252), Քեշիլին (222), Բայրամլին (214) և այլն։

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ[1]

Գանձակի գավառում բնակվում են գլխավորապես հայեր, թուրքեր, ռուս աղանդավորներ և գերմանացիներ։ Հայերն ու թուրքերը բնիկներ են, իսկ ռուս-աղանդավորներն ու գերմանացիները՝ գաղթականներ։

Թուրքեր են համարվում նաև թափառական այոումները, որոնք իրենց Ռումից (Բյուզանդիոնից) գաղթած են համարում և իրենց կոչումն էլ բացատրում են որպես ա՛յ ռում (է՛յ, ուռում) կոչականից կազմված։ Սրանք մահմեդական են, շիի աղանդին պատկանող, խոսում են Ատրպատականի բարբառով, մի առաձին արտասանությամբ և ոչինչով չեն զանազանվում մյուս թուրքերից։ Սրանք բնակվում են Ամիրվար, Աչի, Բիրգյոզ, Այքենդ, Դաստաֆուր, Դամջալի, Գյունեյ, Դամի, Ջազա-Դարասի, Ղարաբուլախ և Ղազախ էլչիլախ հասարակությունների մեջ։

Բացի այոումներից, թուրք են համարվում նաև Սաֆի-Քյուրդ Ղարաչայլի, Սաֆի Քյուրդ Քյուրակչայլի և Շադելի-Քյուրդ հասարակությունների բնակիչները, որոնք թեև աղոտ կերպով պահել են իրենց քրդական ծագման ավանդությունը, բայցևայնպես թե՛ լեզվով, թե՛ կրոնով և թե՛ սովորություններով չեն տարբերվում մյուս թուրքերից։

Նախկին բնակիչ աղվանները այնպես ձուլվել են հայերի և թուրքերի մեջ, որ հետքերն անգամ չեն նկատվում։

Կուլտուրական տեսակետից ամենից բարձր համարվում են գերմանական գաղթականները, հետո ռուս-աղանդավորները, ապա հայերը և ի վերջո թուրքերը։ Վիճակագրական բաժնում առաջ կբերենք այս ժողովուրդների ինչպես բացարձակ, այնպես էլ համեմատական թվերը։ Այժմ տալիս ենք մի քանի պատմական և ազգագրական տեղեկություններ։

ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐ

Գերմանացիներին Կովկաս հրավիրեցին կառավարչապետ Երմոլովի ժամանակ 1817 թվականին, որպեսզի տեղական ժողովուրդներին աշխատասիրության օրինակ լինեն և սովորեցնեն բնիկներին երկրագործության և գինեգործության լավագույն ձևերը։ Գաղթականները եկան

[1] Տե՛ս նաև «Ազգ. Հանդես», գիրք Ե։

Վյուրտեմբերգյան թագավորությունից, գլխավորապես նեղվելով Նապոլեոն Ա-ի արշավանքներից և ծանր հարկերից։

Այս գաղթականությանը բավական նպաստեցին այն ժամանակվա հայտնի քարոզիչ Բենգելը և Շտելինգը, որոնք գուշակելով Գերմանիայի կործանումը, համոզում էին սեպարատիստներին փրկություն որոնել հայրենիքից դուրս, Կովկասում, Արարատի ստորոտներում։ Նախ 31 և ապա 1400 գերդաստան Ռեյերի և Ֆրիկի առաջնորդությամբ Դանուբով անցան Հունգարիա և Վալախիա և եկան Իզմայիլ, ուր 40 օր կարանտինի ենթարկվեցին, իբր սնունդ գլխավորապես մրգեղեն գործածելով՝ շատերը չերմ ստացան և 1000 հոգի մեռավ։ Ապա երբ անցան Օդեսա, ուր կրկին կարանտինի ենթարկվեցին, համարյա բոլորն էլ հիվանդացան։

Այսպիսի ցավալի դրության ժամանակ ռուսաց կառավարությունը օգնության հասավ, գաղթականներին բաժանեց 10 խմբի և առանձին հանձնակատարներով ճանապարհեց, տալով հենց Օդեսայում յուրաքանչյուր գերդաստանին 500 ռ., ձի և կառք գնելու, 40 ական կոպեկ յուրաքանչյուր հոգուն օրական ուտեստի և երկուական ռուբլի ամեն մի գերդաստանին օրական պաշարեղենի համար, յուրաքանչյուր խմբին էլ տրվեց փոքրիկ, ճանապարհորդական դեղատուն։ Վերջապես 1818 թ. վերջին 1400 գերդաստան գաղթականներից Կովկաս հասան միմիայն 455 գերդաստան, մյուսները չկարողացան կրել ճանապարհի դժվարությունները։

Այս 455 գերդաստանից մի մասը հաստատվեց Թիֆլիսում և նրա նահանգներում, իսկ 194 գերդաստանը Գանձակի գավառում, որից 67 գերդաստանը Աննենֆելդ գաղութում, որ այսպես կոչվեց ի պատիվ Մեծ իշխանուհի Աննա Պավլովնա՝ Նիդերլանդիայի թագուհու, և 127 գերդաստանը Ելենենդորֆ գաղութում, որ այսպես կոչվեց ի պատիվ Մեծ իշխանուհի Հելենե Պավլովնայի՝ Մեկլենբուրգ-Շվերինինայի մեծ հերցոգուհու։

Այս երկու գաղութներին տրվեցավ հող.

Գաղութի անունը	Գերդաստանների թիվը	Հարմար հող		Անհարմար հող		Ընդամենը		Մի գերդաստան. դեսյատին
		դես.	սաժ.	դես.	սաժ.	դես.	սաժ.	
Աննենֆելդ	67	3185	—	383	2090	3568	2090	47,54
Ելենենդորֆ	127	4498	1538	1407	1784	5906	922	35,81
	194	7683	1538	1791	1474	9475	612	—

Սակայն Աննենֆելդը Շամքոր գետի անմիջապես ափին շինված լինելով, սաստիկ անառողջարար կլիմա ուներ, ուստի և բնակիչները մեծ ջարդ էին կրում, մինչև 1831 թվականը մեռել էին 360 հոգի, մինչդեռ ծնվել էին միմիայն 94 հոգի։ Այս պատճառով գաղթականները ցրվեցան զանազան գյուղեր, բայց ոչ մի տեղ ազատ հողեր չգտնելով, ստիպվեցան վերադառնալ։ Այս ժամանակ նրանց տրվեցավ 285 դեսյատին 1527 սաժեն տեղ գյուղից 18 վերստ հեռավորության վրա որպես ամառանոց։ Վերջապես 1873 թ. դրանց տեղափոխեցին ուրիշ վերստ դեպի հյուսիս, կատարելապես առողջարար տեղ և նվիրեցին 1500 արքունական դերաններ և 6000 ռուբլի դրամ, իբր նպաստ՝ նոր տներ կառուցելու։

Այսպիսով, կառավարությունը մինչև 1851 թվականը տվել է

Աննենֆելդին նվեր՝ 11 882 64, պարտք՝ 7064 32 ռ.

Ելենենդորֆին նվեր՝ 29 006 94 ռ., պարտք՝ 19345 00 ռ.,

ընդամենը նվեր՝ 40889 58 ռ., պարտք՝ 26409 32 ռ.։

Պարտքը գաղթականները լիովին հատուցել են։

Մինչև 1850 թվականները գաղթականների տները քնիկ թուրքերի և հայերի բնակարաններից ոչնչով չէին տարբերվում, միայն այս ժամանակից պետական կալվածների էքսպեդիցիայի գլխավոր, գաղտնի խորհրդական Ֆադեևը անձամբ շրջում էր այս գաղութները և բոլոր միջոցներով դրդում էր կանոնավոր, եվրոպական տներ շինել։ Մինչև անգամ առանձին նվերներ էին նշանակվում լավ տուն շինողներին, մինչդեռ մյուս գյուղերի վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում։

Այս 82 տարիների ընթացքում գերմանական այս ժողովուրդը, որ շատ անգամ կարոտ է եղել կառավարության[1] և հայերի օգնության[2], որ ամենաչնչին վարձատրությամբ ծառայել է հայերի և պարսիկների տներում, այսօր շնորհիվ յուր կուլտուրական բարձրության և աշխատասիրության, գավառի տնտեսապես ամենաապահովված տարրն է ներկայացնում։ Գանձակցիների այգիները հետզհետե նրանց ձեռքն են անցնում և հավանական է, որ կարճ միջոցում նրանք իրենց այգիներով միանան Գանձակին։ Այսօր Գանձակի գավառի առաջին հարուստը գերմանացի Ֆորերն է համարվում, և գերմանացոց տներում ու այգինե-

[1] 1826 թ. պատերազմից առաջելու պատճառով կառավարությունը նպաստ տվեց Աննենֆելդին 14534 ռ. ասս. 8850 ռ., Ելենենդորֆին 51474 ռ. ասս. 21844 ռ. (Акты Арх. ком. հ. VII).

[2] Երիցյան, Ամենայն Հայոց կաթող. և Կովկասյան Հայք, հ. Ա, եր. 236։

բում սև աշխատանքները թուրքն ու հայն են կատարում։ Եվ այն նախկին աղախին գերմանուհիները այժմ կորսետով սեղմած իրենց մեջքը, ժամանակ են անցկացնում գաղութի կլուբում կամ իրենց տանը, դաշնամուրների առաջ։ Նորաձևությունը, բարքերի այլասերումը, կամաց-կամաց ներս է ծծվում այս գաղութների մեջ և քայքայում նրանց խաղաղ կյանքն ու տնտեսական բարեբեր դրությունը։

Այս գաղթականները ոչ մի առանձին ազդեցություն չեն արել շրջապատող ժողովուրդների վրա և սրա պատճառը ոչ սակավ նրանց բնավորության նսեմական ու անհատական կողմն է։ Գաղթականները վերաբերվում են դեպի բնիկները մեծ մասամբ արհամարհանքով. նրանք սրանց վրա նայում են որպես հասարակ բանվորական ուժի, որ պետք կգա հնձի, խոտհարի կամ այգու շտապ աշխատանքների ժամանակ վարձելու և կամ որպես թշնամի՝ գիշատիչի, որից պետք է մեծ ջանքով պահպանել իրենց դաշտերն ու այգիները[3]։

ՀԱՅԵՐ

Գանձակի գավառի հայ բնակիչների մեծագույն մասը բնիկներ են, իսկ փոքրագույնը՝ գաղթականներ Պարսկաստանից, Ջիվանշիրի, Երևանի և Ղազախի գավառների գյուղերից։ Ոչ միայն բնիկներն ու գաղթականները, այլև Գյուլիստանի վիճակի և արևմտյան մասի բնակիչները միմյանցից բավական տարբերվում են թե բարքառով և թե սովորություններով։ Գյուլիստանի վիճակն ավելի նման է Վարանդային (Ղարաբաղին), որի հետ պատմական բավական սերտ անցյալով կապված է եղել։

Բնիկներն ընդհանրապես ավելի քան միջահասակ են, իսկ մելիքական և հոգևորական դասերի մեջ շատ հաճախ պատահում են բարձրահասակներ։

Հասակի միջին բարձրությունը հասնում է 1,57 մ, փոքր ինչ ցածր Բաքվի (1,668 մ) և Թիֆլիսի (1,658 մ) հայերից, բայց բարձր մյուս գավառներից։

Կրծքի միջին շրջապատը հասնում է 0,847 մ, 21 մմ ավելի բարձրության կեսից, փոքր-ինչ ավելի Թիֆլիսի (0,840 մ) և Բաքվի (0,844 մ)

[3] Օգտվել եմ հետևյալ աշխատությունից. **Никифоров Н. К.**, Экономический быт немецких колонистов в Закавказском крае. В книге: «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», т. I, стр. 99—106.

հայերի կրծքից, բայց պակաս՝ մյուս գավառներից, ինչպես Զանգեզուրի (0,852 մ), Ջիբրայիլի (0,862 մ) և այլն։ Կուրծքը պատած է սև, խիտ մազերով։

Գլխի ձևը երկար է՝ 0,177 մ երկ. և 0,156 լայն։ Քիթը՝ երկար (59,5 մմ) և նեղ (31,5 մմ), աչքերը՝ սև, ճակատը՝ ուղղահայաց։

Ավելի տեղեկություններ չենք կարող տալ, որովհետև մարդաբանական հետազոտություններ տեղացիների վերաբերությամբ կատարված չեն հմուտ բժիշկների կողմից, բացի պր. Ի. Ի. Պանտյուխովից[1], իսկ սրանք հիմնված են միմիայն մի քանի հարյուր մարդկանց չափումների վրա։ Բնավորությամբ եռասեր և հեշտասեր են։ Ղարաբաղցիների հետ համեմատելով, սրանք ավելի պակաս աշխատասեր են, բայց ավելի կոպիտ, չունեն նրանց նախաձեռնող ոգին և ոչ էլ նրանց ընդունակությունները։

Մտավոր զարգացմամբ աննախանձելի են, նվազ Շուշուց, թեև ավելի մոտ և երկաթուղով կապված են Թիֆլիսի հետ։ Սրա պատճառը, կարծեմ, նախ՝ այն է, որ համեմատաբար տաք կլիմայի և առատաբեր այգիների շնորհիվ գանձակեցին փոքր-ինչ ծույլ է և երկրորդ՝ ապրուստի միջակ միջոցներ ունենալով, շուշեցու պես ստիպված չէ տարվա մեծագույն մասն ուրիշ քաղաքներում անցկացնել և վերադարձին բերել յուր հետ դրսի քաղաքակրթություն։ Նույնիսկ քաղաքում մտավոր անշարժություն է տիրում, բացի այգիները ոռոգելու ջրի հերթի և այս պատճառով ծագած կռիվներից, ուրիշ գրեթե ոչ մի խնդրի մասին չեն խմբվում և խոսում։ Վարդագույն իդեալներով և աշխույժ գործունեությամբ երիտասարդություն գոյություն չունի ոչ գյուղում և ոչ նույնիսկ քաղաքում։

Գրագետ կանանց թիվը շատ փոքր է, իսկ տղամարդկանցը հասնում է մինչև յոթ տոկոսի։

Բարոյական վարքագծի տեսակետից նույնպես լավ չեն։ Կրոնը, շնորհիվ տգետ և մանավանդ թերուս ու թերահավատ հոգևորականների, բավականաչափ կորցրել է յուր նշանակությունը, ընկած կրոնական հավատալիքներին չեն փոխարինել բարոյական սկզբունքները, և սրանք թե կրոնական, թե բարոյական սկզբունքներից զուրկ մնացած՝ արդյունքում դիմում են դեպի ապականություն՝ հետևանք պանդխտության։ Բաքվի շռայլությունն ու զեղխությունը, ամառանոց եկողների

[1] **И. И. Пантюхов**, Антропологические наблюдения на Кавказе («Записки Кавказского отдела ИРГО», том XV, Тифлис).

շվայտությունը նպաստում են այդ բարոյական անկման։ Քաղաքին ու հանքային գործարաններին մոտիկ և առհասարակ մեծ գյուղերը բարոյապես շատ ընկած են և տանջվում են զանազան ախտերով, իսկ կենտրոններից հեռու գյուղերը բարեբախտաբար փոքր-ինչ լավ են։

ԳՆԱԿԱՐԱՆ

Գանձակի գավառը չունի իրեն առանձնահատուկ բնակարանի ձև, այստեղ կան թե ղարադամներ, որ հատուկ են ամբողջ Ղարաբաղին և մանավանդ Զանգեզուրի Ղափան մասին[1], և թե կանոնավոր սենյակներից բաղկացած բնակարաններ։ Այնպես որ, ադգագրական տեսակետից չարժե երկար կանգ առնել սրանց վրա, միայն գավառի կուլտուրայի մասին տեղեկություն տալու համար կասեմ, որ քաղաքի և մանավանդ Հաճիքենդին մոտիկ գյուղերում, ինչպես են Մոուլ, Ազատ և այլն, որոնք նույնպես իբր ամառանոց են ծառայում, արդեն դարադամները վերանում են և կան 2—4 սենյակից բաղկացած մաքուր և բավական գեղեցիկ տներ, իսկ այս կենտրոններից ավելի հեռու գյուղերում, ինչպես են՝ Փիփ, Ղարագաղու և այլն, ուր համեմատաբար քաղաքակրթությունը ավելի քիչ է թափանցել, դեռևս մեծ մասամբ ղարադամներ են։ Միայն պետք է ասել, որ ամբողջ գավառում այժմ այլևս ղարադամ չեն կառուցում, այլ՝ չքաղաքակրթված տեղերում վերանորոգում և պահպանում են, իսկ փոքր-ինչ քաղաքակրթվածներում քանդում և նոր ձևի են կառուցում և կտուրները կղմինդրով ծածկում։

Կահավորությունը ասիականի և եվրոպականի խառնուրդ է. կան աթոռներ, սեղան, բայց կա և փուվածք—կարպետներ և ներքնակներ ձգված գետնին, որոնց վրա նստում են ծալապատիկ։

Քաղաքում տների մեծագույն մասը աղյուսաշեն է, մեծ մասամբ մեկ և երկու հարկանի։ Ընդհանրապես արտաքինի վրա շատ քիչ ուշադրություն է դարձված, նույնիսկ ամենալավ փողոցի վրա գտնված տները արտաքուստ ոչ մի զարդարանք, ոչ մի գեղեցկություն չունեն, ներքուստ էլ այնքան հարմարություններ չեն ներկայացնում։

Կահավորված են մասամբ եվրոպական և մասամբ ասիական ձևով, իսկ մի քանի տներում կան նաև եվրոպական բավական լավ կահկարասիք և թանկագին գորգեր։

[1] Նկարագրությունը տե՛ս իմ «Զանգեզուրի գավառ»-ում, «Ազգ. հանդես», գիրք IV, 1898։

ՋԳԵՍՏ ՆՎ ՁԱՐԴ

Կանաց շապիկ. Կարում են կարմիր շիլաբակից կամ կարմիր ալբշից, որի արշինը արժե մոտ 20 կոպեկ։ Իջնում է մինչև ոտները։ Կուրծքը մեջտեղից բացված է և եզրերին սև քուղա (երիզ) կարած։ Կրծքի մասը կրկնակի է լինում, և կամ ավելի հասարակ կտորից աստառ ձգած, որ ավելի տաք պահե։ Թևքերը միջակ լայնության են և հասնում են մինչև ձեռքի կոճակները։ Կոճակներ չունեն, այլ վեր են քշտվում, մանավանդ գործ անելիս։

Փոխան. Կարում են շիլաբակից, միտկալից, շիլայից և այլն։ Հագնում են շապկի տակից և խոնջանով կապում։ Փողքերը երկար են, նեղ և վերջանում են քողով, որ 2—3 վերշոկ լայնության սև մահուդ է լինում, երբեմն էլ՝ թավշյա կամ մետաքսյա կտոր, իսկ սրանցից վերև նեղ ասեղնագործ երիզ-նախշը. երեսացող մասը միայն այս քողը և նախշն են լինում։

Արխալուղ. Կարում են զանազան գույնի շիթերից, մոլից և այլ կտորներից։ Մեջքի վրա բյաղմայով սեղմվելով, արխալուղն իջնում է մինչև ծնկները։ Կուրծքը եռանկյունաձև բացված է։ Արխալուղը հագնում են շապիկի վրայից, տաք ժամանակ միայն մեկ հատ, իսկ ցուրտ միջոցին՝ 2, 3, 4, մինչև անգամ՝ հինգ։ Առաջին արխալուղը կոչվում է տակի արխալուղ և ավելի հասարակ է լինում, թևքերը հասնում են մինչև մատները և վերջանում քյոպով՝ ժապավենով։ Մյուսները կոչվում են գլխի (վրայի) արխալուղ և ավելի լավ կտորից են կարված լինում, բոլոր եզրերը կարված են լինում քյոպա—ժապավեն։ Թևքերը երկար են լինում և հենց կռան տակից բացված, իսկ արմունկի մոտից դայթանով միացած, թևքերի ծայրերը եռանկյունաձև կարված։ Այս թևքերի ծայրին, կռնից մինչև ծայրը՝ մի սրածայթ շղթա է կարված, որի վրայից կամ դրամներ և կամ նշաձև դյուկմաներ են կախված։ Սովորաբար թևքերը չեն հագնում, այլ կախ են ձգում։

Առաջին արխալուղի վրայից կապում են գոտին, որ կարմիր չթից կես մետր լայնության և երեք մետր երկարության կտոր է։ Գոտին երկու անգամ փաթաթում են մեջքին, հետո առջևում մի հանգույց ձգում և ապա ծայրերը «նի են քաղում» գոտու մեջ։

Քյուլաճա. Կարում են շալից կամ մոլից, բամբակած, մեջքին բազմայով փոքր-ինչ սեղմվելով հասնում է մինչև ծնկները. կուրծքը եռանկյունաձև բաց է, թևերը հասնում են մինչև արմունկը, այնպես

որ, ամբողջ ծղիկը բաց է մնում։ Քյուլաճայի բոլոր եզրերը պատում են աղվեսի կամ ավելի թանկագին մորթով։

Գլխի հագուստը. Նախ մազերը սանրում են, հետո ուղիղ մեջտեղից երկուսի բաժանում, առանձին-առանձին ոլորում, երկուսն էլ կծում, այդպես պահում, մի եռանկյունաձև սպիտակ շոր՝ մշրդանի կապում վրայից։ Հետո երկու ղոլան իրար վրա դնում և կղակի տակից տանելով, կապում են գագաթին։ Ղոլանը շորի կտորտանք է՝ միմյանց վրա փաթաթված, այնքան, որ ունենում են 5 սմ լայնություն, 3 սմ հաստություն և այնքան երկարություն, որ հասնում են կապողի մի քունքից մինչև մյուս քունքը։ Սրա ծայրերին հաստ թել է կապած, որով և հանգուստում են։ Հետո երեսի երկու կողքից գնում են մի-մի պոչ՝ թելից ոլորած 20 սմ երկարության և երկու սմ հաստության թել և ծամերը, ծայրերը վերից դնելով, փաթաթում վրան, հետո այս երկուսն էլ կծած սպասում են և մի ճկատանոց՝ եռանկյունաձև ծալված մի շոր ճակատի վրայով անցկացնելով՝ կապում ծոծրակի վրա։ Հետո մի սպիտակ մշրդանի՝ եռանկյունաձև մահուդի կամ նման կտոր, որի երկու ծայրերին քող է կապած, ձգում են գլխին, ծամերի ծայրերը տանում դեպի կղակի տակը և մշրդանին կապում, քողը մի երկու անգամ անց կացնում գլխի և կղակի վրայով և հանգուստում։ Ապա երկու ղոլանների վրա դնում են տակի ղոլանը (սա եռանկյունաձև, մեջտեղում 5 սմ, ծայրերում հետզհետե նեղացող մի փայտ է 14 սմ երկարության, շորերի մեջ փաթաթված և ծայրերին քող կապած) և քողերը կապում գագաթին, քողոցով տակի ղոլանը մյուսների հետ ամրացնում։ Ապա դնում են ըրսանոցը (երեսնոց)՝ 26 սմ երկարության և 14 սմ բարձրության եռանկյունաձև կարմիր մահուդ է, շուրջը ղայթան, իսկ երկարությամբ գյուլապաթուն (կլապիտոնի աղնեգործ մի կտոր), եզրին արծաթի թոփեր, ոմանց մի քանի հատ էլ գույնզգույն հուլունք կարած։ Երկու եռանկյունի երեսանոցները գագաթի և ծոծրակի մասի քողերով միմյանց կպած են, իսկ երրորդ քողով կապվում են բկի տակ։

Ըրեսանոցից հետո կապում են քիթկալը, որ 1 քառ. մետր մեծության սպիտակ միտկալ է, եռանկյունի ծալված։ Սա ձգում են գլուխին, աջ ծայրը կղակի տակով տանում, իսկ ձախը բերանի վրայով բերում են և ծոծրակի մոտ երկու ծայրերը հանգուստում։ Սա ծածկում է բերանը անմիջապես քթի տակից և ամբողջ ղոլանները։ Ապա գագաթին դնում են կոպին՝ 45 սմ երկարություն և 10 սմ լայնություն ունեցող կտորի վրա խմոր են քսում, լայնությամբ երկուս ծալում, վրան նորից խմոր քսում և նոր մի ուրիշ, նույն երկարության և մի քիչ ավելի լայնության շոր քաշում, անցկացնում մի պուլիկի վրա, երկու ծայրերը իրար կարում և դնում արևի տակ, չորացնում։ Հետո մի աղնեգործած, հինգ սանտիմետր լայնության և 50 սմ երկարության թավշյա կտոր կարում կոպիի առաջի մասում, սա էլ կոչվում է ճբկբտանոց, և ծայրերին ունի երկուական քող, որոնցից մինը կապում են ծոծրակի վրայով, մյուսը բկի տակով անց կացնելով՝ կոպիի վրա։

Ապա մի եռանկյունաձև ծալված դոնավոր վարսի յաղլուղ ձգում են ճակատի վրայով և կապում ծոծրակի վրա։

Հետո ձգում են չարղաթը, որ կարմիր մետաքսյա, եռանկյունաձև ծալված մի կտոր է։ Եվ սրա վրա կապում են չալման՝ մի եռանկյունաձև ծալված հասարակ կտոր, որ ձգվում է ճակատի վրա և կապվում ծոծրակի մոտ։

Ապա անց են կացնում կեռը՝ մի կարթավոր շղթա, որ պահպանում է չալման և չարղաթը։

Արժեքը.

Բշրդանի	15—20 կ.
3 ղոլան	10—15 »
2 պոչ	5—10 »
Սպիտակ մշրդանի	15—20 »
Ըրեսանոցը	1 ռ.—60—2 ռ.
Թոփերը	4—5 ռ.
Քիթկալը	25—30 կ.
Կոպին	10—15 »
Ճկբտանոց	40—60 »
Չարղաթը	5—8 ռ.
Չալման	20—30 »
Կռեռը	» 20—25 ռ.
	32—42 ռ.

Ոտանաման. Նախ հագնում են գուլպա և ապա չմոշկ կամ չուստեր։

Սրանից հիսուն տարի առաջ Թիֆլիսից մուտք է գործել վրացական տարազը, որ այժմ բավական տարբերվում է նրանից, առավելապես յուր պարզությամբ։ Յուրքայի վրա հագնում են լեչեկ, որ սովորական, հասարակ դեյրան է, իսկ սրա վրա առաջները քյուլաճա, հանդիսավոր կամ տոն օրերին ֆյաթիպա, իսկ այժմ՝ հասարակ ժակետ, որ տեղացիները պալտո են կոչում։

Գլխի հարդարանք. *Մազերը ականջների մոտ ոլորելով, այտերի կողքից փոքր-ինչ երևացնում են, վրայից մի սպիտակ լաչակ կապում, գագաթին մի կոպի դնում, վրայից մի յաղլուխ ձգելով ծոծրակի մոտ կապում, հետո մետաքսյա հանկյունաձև ծալված մի յաղլուխ ձգում են կոպու վրա, ձախ ծայրը, բկի տակով և ամբողջ կզակը ծածկելով անցկացնում, և կոպու վրա քորոցով անցկացնում։ Ապա յաղլուխի աջ ծայրը միևնույն կողմից ետ են ծալում և ամրացնում նույն տեղում, այնպես, որ յաղլուխի կրկին ծալված ծայրը քարշ է գալիս ուսի վրա։*

Տղամարդկանց. Սովորական շապիկ և վարտիկի վրա հագնում են լայն լիփավոր շալվար, որ խոնջանով կապվում է առաջից կամ կողքից։ Փողքերի ծայրերը դնում են գուլպաների մեջ և տոլազով կապում։ Շալվարը սովորաբար կարում են շալից կամ սև ներկած կտավից։

Շապկի վրայից հագնում են արխալուղը, որի կուրծքը առաջներում հանկյունաձև բաց է լինում, իսկ այժմ ամբողջովին ծածկված է։

Արխալուղը կարում են սև կամ կապույտ ներկած կտավից։

Արխալուղի վրա հագնում են չուխա, որ մեջքի մոտ բուղմայով սեղմվելով իջնում է ներքև։ Կարում են սև շալից։ Ոտներին հագնում են **fոշեr** *կամ* **տrեխներ**։ *Գլխներին դնում են փափախ, որ կարում են գառան մորթուց։*

Հարուստները ձմեռը հագնում են շուխի տակից քյուրք (մուշտակ), գառան մորթից կարած, շուխի տարաղով։

Կտածումի (տատուաժի) սովորությունը մինչև հիմա էլ պահպանվել է Գանձակի գավառում, այսպես՝ ձեռքի հարվածներով կամ երկար տրորելով անզգայացնում են մարմնի այն մասը, որ ուզում են կտածել, ինչպես՝ ձեռքերը, այտերը, ճակատը և այլն, և հետո փոշիացած ածուխի շաղախի կամ թանաքի մեջ թաթախած թելը անցկացնելով ասեղին, անց են կացնում կաշվի միջով. ածուխը կամ թանաքը թելից անցնում է մարմնին և սև բիծ տալիս, որ շատ երկար դիմանում է։ Սրան գյուղացիները խալ են ասում. անում են երեսին, ձեռքերին, կրծքին և այլն, բայց սովորաբար մի-մի խալ անում են ունքերի մեջ, մի մի հատ էլ աչքերի տակ։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հասակ. Գանձակի գավառում ևս աղջիկներին շատ փոքր հասակում են պսակում և մանավանդ՝ նշանում։ Ութ տարեկանը արդեն նշանվում է, ինը-տասը տարեկանը՝ պսակվում։ Ես ներկա եղա Գետաշենում մի նշանդրեքի, հարսնացուն հազիվ ութ տարեկան լիներ, մի կարճ, փոքրիկ աղջիկ էր, որ մարդկանց մեջ չէր երևում։ Հայրը գրկեց նրան և կանգնեցրեց թախտի վրա, որ փոքր-ինչ երևա։ Եվ երբ քահանան առաջարկեց աջ ձեռքը մեկնել, որ մատանին դնեն մատը, նա ձախը մեկնեց։ Խեղճ աղջիկը ապշած կուչ էր եկել, նրա դեմքի արտահայտությունից երևում էր, որ չի հասկանում, թե ինչ են անում յուր հետ։ Երբ քահանան հարցրեց, թե համաձա՞յն է ամուսնանալու փեսացու երիտասարդի հետ, նա շարունակեց անշարժ մնալ և կարծես չհասկացավ էլ հարցը։ Այն ժամանակ քահանան բարկացած հրամայեց նրան, որ գլուխը շարժե։ Եվ նա իսկույն շարժեց։

Իրենց՝ գյուղացիների ասելով, եթե աղջկան գդակով խփեք, և նա վայր չընկնի՝ արդեն ժամանակն է պսակվելու, նա արդեն ուժեղ է և կարող է աշխատել։

Վերջին տարիներս միայն գյուղերի առաջավոր, փոքրիշատե կրթված մարդիկ փոքր-ինչ ուշ են պսակում իրենց աղջիկներին, սակայն սրանք էլ չեն թույլ տալիս 14—15 տարին անց կացնելու, որովհետև 17—18 տարեկան աղջիկը արդեն տանը մնացած է համարվում և միայն այրի մարդիկ կարող են նրանց ուզել։

Տղաները, աղջիկների հետ համեմատելով, շատ ուշ են պսակվում, սովորաբար 21 տարին անց, երբ զինվորական ծառայությունից կամ ազատվում են, կամ կատարում։ Բացառություն կազմում են անդրանիկ որդիները, որոնք զինվորական ծառայությունից ազատ լինելով, շարունակում են նախնի սովորությամբ շատ վաղ, 14—15 տարեկան հասակում պսակվել։

Բացի զինվորագրությունից, Բաքուն ևս բավական մեծ ազդեցություն է ունեցել պսակվողների հասակի վրա։ Պատանիները, երիտասարդները սիրով գնում են Բաքու փող դիզելու, որպեսզի հետո պսակվին։ Անցնում են տարիներ, և երիտասարդները թեև մի քանի կոպեկով հարստացած, բայց ֆիզիկապես և բարոյապես աղքատացած վերադառնում են գյուղ և մատաղահաս աղջիկների հետ ամուսնանում։ Դրժ-

բախտաբար ամուսնացող զույգերի տարբերությունը հետզհետե մեծանում է, ամուսինը շատ, ավելի քան հինգ տարի մեծ է լինում կնոջից։

Խնամության աստիճանները. Եթե պսակվողները աղգակցությամբ չորրորդ աստիճանի են, պսակի թույլտվություն ստացվում է տեղական կառավարությունից, եթե վեցերորդ՝ կոնսիստորիայից, իսկ եթե հինգ՝ սինոդից։ Այսպես և խնամության Գինգ աստիճանը թույլ է տալիս կառավարությունը, չորրորդը՝ կոնսիստորիան, իսկ ավելի մոտիկը՝ սինոդը։

Թեև ոչ եկեղեցական, բայց սովորության իրավունքով թույլ չի տրվում որդեգրին ամուսնանալ որդեգրողի որդիների կամ քույրերի, եղբայրների հետ։

Ընդհանրապես պսակի թույլտվություն խնդրում են ոչ թե նշանադրությունից, այլ պսակից առաջ, երբ պսակվող զույգը միմյանց բավական մոտեցած, և ընտանիքներն էլ բավական ծախսեր են արած։ Այս պատճառով էլ շհաստության դեպքերը շատ դժվար է լինում նրանց ետ կեցնել պսակելու խոստումից, մանավանդ որ ժողովուրդը նշանված աղջկա վրա այլևս չի նայում որպես նախկին անարատ կույսի, մի օտարի շունչ այնուամենայնիվ անցել է նրա երեսով։ Եվ ահա այս է պատճառը, որ նշանված զույգը ամեն մի միջոցի դիմում է պսակի թույլտվություն ստանալու, և երբ ոչ մի կերպ չի հաջողվում, հարսանիք են անում և փոխանակ պսակի խորհուրդը կատարելու, հարս ու թագվոր հարսնևորներով շրջապատված, դավուլ զուռնի առաջնորդությամբ դնում են եկեղեցու գավիթը, համբուրում եկեղեցու դուռը և վերադառնում։ Այնուհետև նրանք պսակված են համարվում, թեև ժողովուրդը փոքր-ինչ ծուռ աչքով է նայում նրանց։ Քահանան այլևս չի հաճախում նրանց տուն, չի օրհնում, նրանց չի հաղորդում, բայց նրանց որդիներին մկրտում է և ապօրինի զավակ համարում։ Տասնյակ տարիներից հետո կամ հոգևոր իշխանությունը զիջելով իրավունք է տալիս պսակվելու, և կամ սրանք որդեգրում են իրենց զավակներին և կամ կտակով իրենց կարողությունը նրանց թողնում։

Ամուսնացողների և սրանց ծնողների համաձայնությունը. Ընդհանրապես դեռ այժմ էլ հազիվ է պատահում, որ ամուսնացողների համաձայնությունը ամուսնության վերաբերմամբ հարցնեին և կամ նրան մի առանձին նշանակություն տային։ Եթե հարցնում էլ են, այն էլ աղջկան, իսկ աղջկան ոչ մի անգամ և ի՞նչ հարցնեն, քանի որ նա մի փոքրիկ, 8—9 տարեկան երեխա է։ Չափահասների վերաբերությամբ փոքր-ինչ զգույշ են. սրանք բռնության դեպքերում փախչում են իրենց սիրածի հետ։ Ամուսնության խնդրում գերակշիռ ձայն ունին մայրերը և մանավանդ աղջկա մայրը։ Սա յուր հավանած տղային գրավելով, երբ տեսնում է, որ նրա ծնողները և կամ չեն համաձայնում, տալիս է տղային թե՝ փախցրու, և հետո իբր թե բոլորովին անմասն է այդ գործում, խփում է ծնկներին և աղմուկ բարձրացնում, թե տարա՞ն, աչքի լույս աղջիկս տարա՞ն։

Պատահում են նաև դեպքեր, երբ ծնողները փեսացուի բացակայության միջոցին, առանց նրա համաձայնությունն առնելու, նշանում են նրան։ «Հալալ կաթնակեր» տղայի պարտականությունն է խոնարհել ծնողների կամքի առաջ։

Նշանադրության զանազան ձևեր.

ա. Օրորոցախաղ. Երբ երկու գերդաստան շտապում են շուտով բարեկամանալու, և կամ երբ մեկի երեխաները չեն ապրում, փոքր հասակում և նույնիսկ օրորոցում նշանում են մանուկներին, որպեսզի մյուս երեխայի բախտը ապրեցնեն և առաջինին։ Այսպիսի նշանադրության ժամանակ ծնողները խաչաձև քյարտում են օրորոցների լծերը և կարմիր-կանաչ թել կապում վրայից։ Այսպիսի նշանադրություն այժմ քիչ, բայց և այնպես, դարձյալ տեղի է ունենում։ Շատ հազիվ է պատահում, որ այս ձևով նշանադրվածները մեծանալիս հրաժարվեին ամուսնանալուց։ Ժողովուրդն էլ սաստիկ դատապարտում է այդպես վարվողին։

բ. Մաղկազարդի նշանադրություն. Նախապես առնելով հարսնացուի ծնողների համաձայնությունը, տղայի մայրը, կամ մի մոտիկ ազգական, ծաղկազարդի երեկոյան մի կարմիր քող է ձգում հարսնացուի գլխին և մի խաչանիշ մոմ, որի վրա կարմիր և կանաչ թել է կապված, տալիս նրա ձեռքը։

գ. Վարդավառի նշանադրություն. Վարդավառին ճաշից հետո դրեթե բոլոր գյուղացիները հավաքվում են մի ընդարձակ, հարթ տեղ և դավուլ զուռնի ներդաշնակությամբ միմյանց ձեռք բռնած պարում «զոմփի» և այլ պարեր։ Խմբական պարերից հետո սկսում են կնդապարը, կաքավ։ Այս ժամանակ նշանվել ցանկացող երիտասարդի մայրը, նախապես առած լինելով յուր հավանած աղջկա ծնողաց համաձայնությունը, բռնում է այդ աղջկա ձեռից, բերում զուռնաչու առաջ, մի կարմիր չարդաթ ձգում գլխին և հրամայում զուռնաչուն. «Աստված քո որդուն էլ էս օրին արժանացնի, մի լավ հավա (հղանակ) ածա»։

Զուռնաչին իսկույն մինչև ականջները փքում է այտերը և կար-

մբրած աչքերը ճպճպացնելով, ածում ուզուն գարան։ Աղջիկն սկսում է պար գալ, իսկ նրա ապագա սկեսուրը մի քանի պտույտ է անում շուրջը և պարի կեսին մոտենում նրան, համբուրում և մի խնձոր մեջը մի մատանի և կամ արծաթի դրամ խրած տալիս ձեռքը, մի քիչ միրգ ածում գրպանը և ծափ տալով խնդրում շարունակել պարը։ Աղջիկը խնձորը ձեռին շարունակում է պարել, կնոջ աղգականները «շորոշ» են տալիս, այսինքն զուռնաչուն նվիրելու համար դրամներ են դնում պարեկի բուռը։ Իսկ սա մի քիչ էլ պարելուց հետո բոի դրամները ձգում է զուռնաչու առաջ և խնձորը ձեռին վազում դեպի յուր ընկերուհիները։ Այնուհետև նա արդեն նշանված է համարվում այդ կնոջ որդու հետ, որ շատ անգամ հանդիսատես է լինում այդ ծիսակատարության։

Մի քանի ավելի լուսավորված գյուղերում երիտասարդը ոչ թե լոկ հանդիսատես է լինում, այլ ինքն է դեր կատարում. երբ աղջիկը սրա ազգականուհիների ստիպմամբ սկսում է պարել, երիտասարդը նրան «շորոշ» է տալիս արծաթ կամ ոսկի դրամ։ Եվ եթե նա ընդունում է, սրանով արտահայտում է յուր համաձայնությունը. պարի վերջին նա իրեն տված դրամը ձգում է զուռնաչու առաջ և ինքը փախչում։

դ. Սովորական նշանդրեք. Նախապես մի բարեկամի միջոցով աղջկա ծնողների համաձայնությունը առնելով, երիտասարդի հայրը մի քանի բարեկամների հետ մի երեկո գնում է աղջկա տունը, տանելով մի մատանի, մի թունդի գինի, մի շիշ օղի և մի քիչ շոր մրգեր, մեղր և այլն։ Այստեղ հրավիրվում են և աղջկա բարեկամները, ինչպես և քահանան։ Քիչ խոսակցությունից հետո բոլորը նստում են ընթրելու, որի ժամանակ խմում են «ջուխտ օջախի կենացը» և բարեմաղթում, որ սնտված մի օջախից մյուսին «խեր» տա։

Ընթրիքից հետո քահանան կատարում է նշանադրության ծեսը. հարսին քողով ծածկած կանանց սենյակից բերում են տղամարդկանց մոտ, կանգնեցնում երիտասարդի կողքին, քահանան հարցնում է սրանց փոխադարձ համաձայնությունը, երիտասարդը դնում է հարսնացուի աջ ձեռի մատնամատը բերած մատանին և ապա քահանան մի պահպանիչով օրհնում է սրանց։ Ի վերջո հանդիսականները մի-մի բաժակ օղի են խմում, շնորհավորում, բարեմաղթություններ անում ու ցրվում։ Ամենից ուշ գնում են խնամիները, մի-մի զույգ դուլպա նվեր ստանալով։

Այրի կնոջ նշանադրություն. Այրի կնոջը նշանադրելիս նախապես առնում են նրա համաձայնությունը և ապա պաշտոնապես

խնդրում նրա ձեռքը նրա սկեսուրից կամ սկեսրայրից։ Սրանք էլ պատասխանում են հարցնելով նրա կամքը։ Այս ձևականությունը կատարվում է մինչև անգամ այն դեպքում, երբ այրի կինը այլևս չի ապրում յուր սկեսրանց տանը, այլ յուր ծնողների և կամ ազգականի մոտ։ Համաձայնությունն ստանալուց հետո նոր փեսացուն գալիս է այրի կնոջ սկեսրանց տուն, համբուրում սկեսուրի և սկեսրայրի ձեռքերը և նրանց մայրիկ ու հայրիկ կոչում։ Սկեսուրը հիշելով յուր մեռած որդուն, լաց է լինում, համբուրում է նոր փեսացուին, նրան որդի կոչում և յուր մեռած որդու զգեստներից նվիրում նրան, որ հագնի։ Դրանից հետո նոր փեսացուն մի թաշկինակ և կամ մի դանակ է նվիրում հարսնացուին և նրանից ստանում մի այդպիսի նվեր, որով և նշանադրությունը կատարված է համարվում։

Թաս խմել. Նշանադրությունից հետո փեսացուն մի քանի անգամ գնում է յուր հարսնացուին տեսնելու և ամեն անգամ տանում է զանազան ընծաներ, ինչպես՝ դանակ, թել, ասեղ, փոքրիկ հայելի, մրգեղեն և այլն։ Զոքանչն էլ դրանց փոխարեն ամեն անգամ մի-մի զույգ դուլպա կամ շարազ է նվիրում նրան։

Մի օր էլ փեսացուն յուր ընկերների հետ է գալիս հարսին տեսության։ Այս ժամանակ ընկերներից ավագագույնը մի շիշ օղի է բերում յուր հետ և սովորական հարց ու բարևից հետո ածում է մի բաժակ օղի, վրան հաց ու աղ դնում և տալիս փեսացուին, որ զոքանչի կենացը խմի։ Փեսացուն բարեմաղթություններ անելով խմում է և աղ ու հացը ուտում, որով և նա երդվում է հավատարիմ մնալ յուր ուխտին։ Հետո ընկերներն են խմում օղի, բարեմաղթություններ անելով և հօդուտ հարսի 20—25 կոպեկ նվիրում։ Լավ հյուրասիրվելուց և ընթրելուց հետո փեսացուի ընկերները գնում են, ստանալով մի-մի զույգ դուլպա նվեր, իսկ փեսացուն մնում է այդտեղ և գիշերում։ Այս հանդեսը «թասը-խմել» է կոչվում։

Խոնչաներ. Նշանադրությունից մինչև պսակը շատ անգամ տևում է մի և երբեմն մի քանի տարիներ։ Այս երկար միջոցում խնամիները հյուրասիրում են միմյանց և նշանավոր տոներին ընծաներ ուղարկում։ Այս ընծաները, որ խոնչա են կոչվում, ուղարկվում են փեսացուի տանից, որի փոխարեն ստացվում են հարսնացուի տանից ավելի էժանագին ընծաներ։ Այս խոնչաները պարտավորական են ու որոշ, և եթե չուղարկվին, մեծ անբավականություններ տեղիք կտան։

Նշանավորները ուղարկվում են հետևյալ տոներին.

Մեծ պասին. Այս պասի առաջին օրում ուղարկվում է 7 հատ

ձեթով եփած գաթա, եփած կարտոֆիլ, լոբի, փլավ, թթու դրած շուշան, սոխ, մի թունդի գինի և մի շիշ օղի։ Սրա շշի բերանին հարսնացուն ուլունքներով զարդարում և շորից մի գեղեցիկ խցան է շինած լինում։ Այս խոնչան կոչվում է «պաս շնորհավորեքի» և տանում է տան հարսներից կամ երեխաներից մինը։ Բերողին մի թաշկինակ կամ մի զույգ գուլպա և կամ 10—15 կոպեկ նվեր են տալիս։

Միջունքին. Մեծ պասի առաջին շաբաթում ցորենը լցնում են տաք ջրի մեջ, հետո լցնում են մի տաք պուտուկի մեջ, բերանը ծածկում, հետևյալ օրերը կրկին տաք ջուր են շաղ տալիս պուտուկի մեջ և հետո ջուրը քամում, պուտուկի բերանը ծածկում։ Մի քանի օրից, երբ ցորենը ծլում է, լցնում են մի խոնչի մեջ և շարունակում ամեն օր տաք ջուր շաղ տալ և սավանով ծածկել։ Միջունքին, երբ արդեն բավականաչափ ծլած է լինում, մոտը դնելով ձեթով եփած փլավ, լոբի, խնձոր և այլն, գինի, օղի, ուղարկում են հարսնացուի տուն։ Սրանք էլ դանակով կտրտում են ծիլերը, լցնում տաք ջրի մեջ, մի քանի անգամ ձեռքով ճմլում, հետո քամում մաղի միջով և ապա նորից կաթսայի մեջ լցնելով մի քիչ ալյուր են մաղում վրան և դնում կրակին եփելու։ Մի-մի հյութը դուրս է գալիս և մի տեսակ թանձր, քաղցր հեղանյութ կազմում, որ հետո հացի վրա քսելով ուտում են։

Զատկին. Ուղարկում են մոտավորապես 15—20 հատ կարմիր ներկած ձու, մի շիշ օղի և տան մեծի համար մի զույգ գուլպա։ Երբեմն սրանց փոխարեն ուղարկում են միայն մի թաշկինակ, ծայրին 50—60 կոպեկ կապած։ Քաղաքում ուղարկում են հարսի և նրա քույրերի ու մոր համար զանազան ընծաներ, մի գառ՝ կանաչ-կարմիր մետաքսյա թելը պոզերին կապած։

Վարդավառին. Մի քանի զույգ գաթա, կաթնավ (կաթով եփած բրինձ), մի տապակած հավ, երկու ափսե ձվածեղ, որոնցից մինը պատկանում է առանձնապես փեսացուին, պանիր և այլն։

Նույն օրը հարսնացուն յուր ձեռքով փնջած ծաղիկների մի փունջ դնելով մի ափսեի մեջ և շուրջը խնձորներ դարսելով, ուղարկում է փեսացուին։

Նավասարդ. Առավոտյան շատ վաղ, արևը դեռևս չծագած, հարսնացուի տանից մինը տանում փեսացուի տան հերթիկից ընկույզ, խնձորներ և զանազան չորացած մրգեր է վայր ածում և հերթիկից «ճլոլանք»՝ խնձորի կամ տանձի շարան կախում։

Խոնչաներ է ուղարկում նաև խոտի քաղը վերջացնելիս, ցորենը կալսելն սկսելիս և այլն։

Խաչեղբայր կամ պել. Գանձակի գավառում ևս խաչեղբայրը տոհմական է լինում, մի քանի սերունդ շարունակ միևնույն տոհմի սերունդներից են հրավիրում իրենց խաչեղբայրներին։ Անհրաժեշտ չէ, որ միշտ միևնույն անձը լինի խաչեղբայր, բավական է, որ միևնույն տոհմից լինի։ Խաչեղբայրները շատ մեծ հարգանք են վայելում սանամորանց կողմից, ամեն ուրախության և տխրության դեպքում խաչեղբայրը ներկա է գտնվում և առաջնակարգ պատիվ ստանում։ Սանամայրը մինչև մահ երբեք չի խոսում նրա հետ, ի նշան յուր հարգանքի, մինչև անգամ նրան տեսնելիս թաք է կենում և նրանց տան դռնից երբեք չի անց կենում։

Խնամախոս. Պսակադրությունից մի քանի շաբաթ առաջ փեսացուի հայրը մի քանի բարեկամների և քահանայի, տանուտիրոջ, Ֆրեցփոխանի և ուրիշ մի քանի մարդկանց հետ մի երեկո գնում է հարսնացուի տունը, ուր հավաքված են լինում նաև նրանց մոտ ազգականներից մի քանիսը։ Ընթրիքից հետո ընտրում են երկու խնամիների կողմից էլ մի մի մարդ, որոնք տեղական բարբառով կոչվում են «խնամախոս» և որոնց պաշտոնն է վկա և ապագային պահանջող լինել, որ այդ երեկոյան թե՛ փեսացուի և թե՛ հարսնացուի ծնողների կողմից տված խոստումները ճշտությամբ կատարվին։ Քահանան մի-մի բաժակ գինի տալով նրանց, օրհնում է, որ իրենց գործի մեջ արդար և անշահախնդիր լինին։

Ապա այս երկու խնամախոսները խնամիների հետ որոշում են հարսանիքի օրը և այն գումարը, որ փեսացուի հայրը պիտի տա հարսնացուի հորը։ Այս գումարը, որ տատանվում է 15—100 ռ. մեջ, այս գավառում կոչվում է «պեժինքի փող», որովհետև այս գումարի մի մասը ծախսվում է հարսնացուի օժիտի վրա, կամ «երեսջուր»։

Բացի այս գումարից, որոշվում է, որ տղայի հայրը տա նաև 5—8 կուժ գինի, 16—20 ֆունտ պանիր, 1,5—2 բաթման օղի, մի խոյ, մսացու եղան կեսը (և նույնիսկ եղան կաշվի կեսը) և մի-մի նվեր հարսնամոր, եղբոր ու քրոջ համար։

Երբ խնամախոսները մի որևէ բանում չեն կարողանում համաձայնության գալ, քահանան և մյուս հրավիրյալները միջամտում են։ Ի վերջո փեսացուի հայրը վճարում է որոշված «պեժինքի փողը», և ցրվում են։

Շորձեն. Խնամախոսից մի քանի օր հետո փեսացուի բարեկամ Խանայք հրավիրում են փեսացուի տուն, ուր հանդիսավոր կերպով մի

կին նախապես նվերներ ստանալով գրեթե բոլոր հանդիսական կանանցից, ձևում է փեսացուի և հարսնացուի հարսանեկան շորերը և վերմակի ու ներքնակի աստառը։ Այս վերջինը ուղարկում են հարսնացուի տուն, որպեսզի նրանք բրդով լցնեն և երես քաշեն և ապա օժիտի հետ բերեն։

Տաշդրեք. Հարսանյաց շաբաթի հինգշաբթի օրը փեսացուի մայրը հրավիրում է ազգական և հարևան կանանց՝ հարսանիքի տաշդրեք ծեսին ներկա գտնվելու։ Երբ հավաքվում են, խմորի տաշտը դնում են տան մեջտեղը, ծայրին մի-մի մոմ վառում, մետաքսի կանաչ-կարմիր թելեր ձգում աջ կողմում, և հետո մի փոքրիկ աղջիկ շոքում է տաշտի առաջ և բռնում ձեռին մաղը, մի ուրիշ փոքրիկ ապա երեխա այլուր է ածում մաղի մեջ, և աղջիկը մաղում է։ Այս միջոցին նրանց շրջապատող հրավիրյալները «տասված շնորհավոր անե» ասելով՝ 10—20-ական կոպեկ են գնում տաշտի ափին. այս նվիրները պատկանում են հարսնացուին։ Երբ բոլորը տալիս են նվերներ, հացթուխի կարգադրությամբ երեխաները դադարում են այլուր մաղելուց և պահանջում են փեսացուի հորն ու մորը, որոնք գալով, մի թաշկինակ են նվիրում այլուր մաղողին և մի զույգ գուլպա՝ այլուր ածողին։ Երեխաները շարունակում են մաղել, բայց քիչ հետո կրկին ընդհատում են և պահանջում փեսացուին, որ գալիս է և մի թաշկինակ նվիրում հացթուխին։ Այս ժամանակ արդեն հացթուխն ինքը սկսում է մաղել այլուրը։

Անմիջապես հաշ են տալիս բոլոր հրավիրյալներին, որից հետո ավելի մոտ ազգականներից ընտրում են մեկին՝ «խմորը պչուլող», երկրորդին՝ «պչուլը ածող» երրորդին՝ «լոշը տանող», և չորրորդին՝ «թխած հացը դարսող», որոնց խմեցնելով մի մի բաժակ օղի, խնդրում են հետևյալ օրը շատ վաղ գալ, իրենց պաշտոնները կատարելու։ Եվ երբ մյուս օրը հացթուխը շրջապատված յուր չորս օգնականներով սկսում է հաց թխել, հարսնացուի տանից հինգ թաշկինակ է նվեր գալիս, մինը՝ ամենալավը, հացթուխին, իսկ մյուս չորսը՝ մյուս կանանց։

Ստանալով նվերը, հացթուխը մի քիչ այլուր և գինի է ածում թոնրի մեջ, խաչակնքում է երեսը, բարեմաղթություններ անում և սկսում թխել։ Առաջին հացը ուղարկվում է հարսնացուին, որից և ստացվում է նրանց տանը թխած առաջին հացը թագվորի համար։ Մյուս հացերից ուղարկվում է մյուս բարեկամներին, որոնք 5—10 կոպեկ նվեր են տալիս հօգուտ հացթուխի։

Իսկ քաղաքում՝ առաջին յոթ հաց և մի թունգի գինի ուղարկում են հարսնացուի տունը, սրանք էլ վից հաց (անշուշտ զույգ), փեսացուի համար մի շապիկ, մի զույգ գուլպա, մի մետաքսյա թաշկինակ և հացթուխի համար մի քանի գլխի թաշկինակներ են ուղարկում։

Մինչդեռ կանայք հաց կթխեն, տնեցիներից մի քանի տղամարդ օղու շշերը ձեռքներին շրջում են գյուղը և խնդրում մասնակցել հարսանիքին։

Մսացու մորթելը. Ուրբաթ օրը, կեսօրից հետո փեսացուի հայրը հրավիրելով խնամախոսներին և մի քանի բարեկամներ, գավուզ-զուռնի առաջնորդությամբ մի հրապարակ տեղ մի եզն են տանում։ Այստեղ հավաքվում են գյուղի հարսներն ու աղջիկներն էլ, և սրանցից մի քանիսը երեսները կարմիր շարդաթով ծածկած պարում են։ Այս միջոցին եզի ոտները կապելով վայր են գլորում. իսկույն թագվորը յուր քավորի հետ, ձեռներին մի-մի վառած մեղրամոմ բռնած մոտենալով եզին, յուր դանակով խաչաձև նշան է անում նրա բկի վրա և հետո մի քիչ կտրելով, դանակը արյունաթաթախ դնում է գրպանը։ Իսկ քավորը մոտ մի ռուբլի նվեր է տալիս մսավաճառին, որ մորթեն եզը։ Թագվորը այս դանակը այդպես արյունոտ և փակված պահում է յուր մոտ մինչև առագաստ մտնելը, որով և «բոլոր չարերը կապված են մնում և ոչ ոք չի կարողանում զրկել նրան առնական զորությունից»։

Քաղաքում դանակի փոխարեն մի կողպեք են թաթախում արյան մեջ, կողպում և այդպես պահում մինչև առագաստի գիշերը։

Մսացուն մորթելուց հետո բոլորը ցրվում են, մնում են միայն խնամախոսները, որոնք ընթրում են և գիտում, որ տղայի հայրը, յուր խոստման համաձայն, մորթած եզի կեսը, մի խոյ, որոշյալ չափով գինին, օղին և պանիրը ուղարկե հարսնացուի տունը։ Մի քանի գյուղերում այս բոլորը բարձում են մի ձիու վրա և գավուզ-զուռնի առաջնորդությամբ տանում։

Թագկապ. Շաբաթ օրը առավոտյան հրավիրվում են ազգական և հարևան կանայք թագվորին թագ կապելու։ Սրանք բոլորն էլ մի-մի խնձորի մեջ սրծաթե դրամներ ցցած և մի քանի մետաքսյա թել բերում և տալիս են խաչեղբոր կնոջը։ Սա խնձորներն ու դրամը հանձնում է թագվորի մորը. սա մի օգնություն է, որ գյուղացի կանայք անում են հարսանիքի ծախսերը թեթևացնելու նպատակով։ Հետո մետաքսյա թելերից, որ երեք գույնի՝ կանաչ, կարմիր և սպիտակ են լինում, հյուսում են մի գեղեցիկ պսակ և ամրացնում թագվորի գլխարկի վրա։ Ապա այս դնելով փեսեղբոր գլխին, պար են ածում և

վերջը հանձնում թագվորին։ Այս ծեսը կոչվում է ինչպես թագակալ, այնպես էլ կարմիր-կանաչը կապել։ Հրավիրվածներին հյուրասիրում են ճաշով։

Ք թ ե օ ր հ ն ե ր. Սովորաբար հարսնացուի հարսանեկան շորերը թագվորի հայրն է պատրաստել տալիս յուր հաշվով։ Դա բաղկացած է մի քուլաչայից, մի մետաքսյա շապկից, մի նույնպես մետաքսյա գոտուց, մի կարմիր շարդաթից, մի զույգ հողաթափերից և զանազան նվերներից, նայած թագվորանց կարողության։ Նույն շաբաթ օրը երեկոյան քահանան հրավիրվում է թագվորանց տունը՝ այս հանդերձը, որ քթեթ է կոչվում, օրհնելու։ Այս բոլորը մի սկուտեղի մեջ դնում են տան օջախի մոտ, թագվորի հայրը վերցնում է թագվորի գլխարկը և դնում քթեթի վրա, թագվորը և խաչեղբայրը մի-մի մոմ ձեռներին կանգնում են քթեթի մոտ։ Քահանան օրհնում է քթեթը և ավետարանը դնելով նրա վրա, բոլորին հրավիրում խաչհամբույր ձգելու։ Թագվորի հայրը խաչհամբույր ձգելով, վերցնում է գլխարկը և տալիս թագվորին, իսկ մի ուրիշ կին վերցնում է քթեթը և պահում։

Սափրելու ծեսը. Քթեթօրհնեքից հետո թագվորը յուր մակարներով շրջապատված սափրվում է։ Սա նստում է մի աթոռի վրա, աջ կողմում կանգնում խաչեղբայրը, ձեռին մի մոմ բռնած։ Այս միջոցին գալիս է թագվորի մայրը ձեռին մի բաժակ գինի բռնած, թաթախում է մատը գինու մեջ և խաչաձև քսում թագվորի այտերին և ապա մի քանի կաթիլ էլ ածում տան օջախի մեջ։ Սափրիչը մի քանի կոպեկ պոկելով խաչեղբորից, սկսում է սափրել թագվորի մորուքը և երբ կնոին է հասնում, դադարում է և ձայն տալիս. «Այ մակարներ, թագվորը գերի է, ազատեցեք, կը խայտառակվի»։ Մակարները համբուրում են թագվորին և մի քանի կոպեկ նվեր տալիս սափրիչին, դնելով թագվորի ձեռքը տված հայելու վրա։ Սրանից մի քանի տասնյակ տարի առաջ սովորություն է եղել, որ թագվորի գլուխն էլ սափրում էին և միայն ճակատի մոտ մի խաչաձև փունջ թողնում։ Մակարները համբուրում էին այս փունջը և նվերներ տալիս։

Թագվորից հետո սափրվում է և խաչեղբայրը, և այս ժամանակ թագվորն է մոմը ձեռին նրա մոտ կանգնում, ապա փեսաղբերը, մակարբաշին և մակարները, բոլորն առանց բացառության, այնպես որ մորուք չունեցողներին անգամ նստեցնում են և երեք անգամ ածելին քսում նրանց երեսով։

Գետաշենում և մի քանի այլ գյուղերում նախ սափրվում է խաչեղբայրը, և ապա թագվորը։

Քաղաքում սափրելու ծեսը կատարվում է բաղնիսում, ուր միայն քավորը վճարում է թե՛ սափրիչին և թե՛ բաղնիսպանին, բոլորի լողանալու վարձը։ Առաջները սովորություն էր, որ դավուլ զուռնան ածելով հրավիրում է բոլորին գնալ հարսնատուն, հարսի տունը։ Իսկույն թագվորի քույրը կամ հարսը դնում է գլխին հարսնացուի քթեթը մի սկուտեղի մեջ դարսված, մի ուրիշ սկուտեղ էլ հարսնացուի տնեցիների համար նվերներով դնում են մի երիտասարդի գլխի և պարելով, երգելով, հրացան արձակելով թագվորի հետ միասին գնում հարսնացուի տունը։ Այստեղ սկուտեղ կրող հարսն ու երիտասարդը պար են գալիս և նվեր ստանալով հարսնացուի մորից մի թաշկինակ և մի զույգ գուլպա, տալիս են սկուտեղները նրան։ Հետո, երբ բոլորը ներս են մտնում, քահանան այստեղ ևս օրհնում է նշանը և խաչհամբույր հավաքում։

Իսկույն տանում են հարսնացուի համար բերած «թագի տակի» շորերը մյուս սենյակը կամ միևնույն սենյակի կապերտներով առանձնացրած բաժինը, ուր գտնվում է հարսնացուն, շրջապատված մի քանի հարսներով և ընկերուհի աղջիկներով։ Այստեղ էլ հարսներից մինը, որ սրու առջևի զավակ է ունեցած, ընտրվում է գլխավոր և սկսում է հարսնացուի հարսանեկան շորերը հագցնել։ Այս միջոցին ընկերուհիները մեղմ ձայնով երգեր են ասում և հարսնացուին գովում։ Հարսնացուն սաստիկ զգացված լաց է լինում, ընկերուհիները գգվում են նրան։ Գալիս է նաև մայրը, փաթաթվում աղջկան, լաց լինում և ապա նրա արտասուքները կտրելու հույսով հանդիմանում նրան, ասելով. «Խի՞ ես լաց ըլում, ո՞ր աղջիկն ա իր հոր տանը մնացել, որ դու մնաս։ Մի բուռը մոխիր ես, ուրիշին ենք տալիս, պետք ա գնաս, ջուրն ենք քցում, պետք ա սուս կենաս, ընկնես, կրակն ենք քցում, պետք ա աչքերդ խփես, մեջն ընկնես։ Վախել մի, քու հերն ու մերը անջիգար չեն, քեզ ոչ ջուրը կքցեն, ոչ կրակը»։

Մինչդեռ մայրն այսպես խրատում է հարսնացուին, գլխավոր հարսը սանրում է նրա մազերը, հյուսում, կոնովը ձգում և մի համբույր դրոշմում նրա ճակատին. սա առաջին համբույրն է, որ այդ հարսը, որպես բոլորի մեջ գլխավոր, առնում է հարսնացուից։ Եվ երբ բոլոր շորերը հագցնում է, կանչում են խաչեղբորը, որ գոտին կապի։ Սա էլ մի խնձոր, մեջը մի քանի քսան կոպեկներ խրած տալիս է հարսնացուին շոր հագցնող հարսին և նրանից ստանալով գոտին, երեք ան-

գամ անց է կացնում հարսնացուի վզով և կապում մեջքին, բարեմաղթելով, որ նրա առջևեկ որդին արու երեխա լինի։

Հետո գալիս է հարսնացուի հայրը, գրկում նրան, համբուրում և ասում. «Բալա ջան, իմ ամակը (երախտիքը) չմոռանաս, հորդ օնախին խեթ աչքով չմտիկ տաս։ Ասված քեզ ջուխտ ձեռքով քոչ տիրոջը բաշխի։ Հիմիկանց դենը քու տերը առաջ ասոծն ա, եղնա այսինչը (փեսացուի հայրը)»։

Այս ասելով, հայրը հեռանում է, թողնելով, որ այժմ էլ մայրը գրկախառնե նրան և խրատեւ «Բալա ջան, ուր էլ ըլիս, մորդ կաթը մտահան չանես։ Քեզ պահել եմ, ցրտից ու կրակից ազատել, թե տան միջին՝ կտրի տակին, թե աչքիցս հեռու, թե աչքիս աղաքին հազար մի խրատներ եմ տվել, օրհնանք ու անեծք ասել. այ որդի, անեծքս ջուրը տանի, օրհնանքս գլխիդ գյոլ տա։ Ղամի բռնխը տան, սրի ծերովը ծակոտեն, գլխիդ մոխիր մաղեն՝ անունդ չկոտրես, միշտ հալալ կաթնակեր մնաս»։

Մինչ հարսնացուի բաժնում այս է կատարվում, տղամարդկանց բաժնում մի բարձր թախտի վրա թագվորը բազմած, յուր մակաբներով շրջապատված հագնում է աներոջից ստացած մի ղույդ գուլպան և վրան կապում դոլաղը, իսկ թաշկինակն առնում ձեռքը։ Այս միջոցին զուռնաչին մոտենալով թագվորին, ծվծվացնում է զուռնով և թագվորի հին գուլպաները պահանջում, օրենքով դրանք նրան են պատկանում։

Պսակ գնալ. Վերջապես պատրաստվում են գնալ եկեղեցի։ Թագվորը, աջ կողմին խաչեղբայրը, գնում կանգնում են օջախի մոտ, հարսնացուին՝ երկու հարս կռներովն ընկած և մյուս ընկերուհիներով շրջապատված, դուրս են բերում և թագվորի հետը կանգնեցնում։ Անմիջապես թագվորի և թագուհու եղբայրները, կամ մոտիկ ազգականներից երկու պատանի փոխարինում են թագուհու կուրը բռնող հարսներին. սրանք կոչվում են կռնաղբիրներ։ Եվ սրանցից հարսնաղբերը մի գդակ է նվեր ստանում թագվորի տնեցիներից։ Այս միջոցին թագուհու մայրը երկու մոմ ձեռին մոտենում է թագվորին, համբուրում նրան և մի մոմը տալիս նրան։ Թագվորը խոնարհում, համբուրում է զոքանչի ծիծը, ասելով. «Հալալ արա նշանածիս տվածդ կաթը»։ Ապա մյուս մոմը տալիս է խաչեղբորը և դուրս ելնում տանից լաց լինելով։ Զուռնեն ածում է, և բոլորն ուղղվում են եկեղեցի։ Առաջից գնում են դավուլ զուռնան, պար ածելով մակարներին, նրանց հետևից թագվորն ու խաչեղբայրը, սրանց հետևում է հարսնացուն, յուր կրոնախպերներով, իսկ մակարներն ու հարսնևորները շրջապատում են

սրանց։ Կռնախպերներն աշխատում են թույլ չտալ, որ թագվորի և թագուհու միջից մարդիկ անց կենան, որպեսզի թագվորը «չկապվի»՝ չկորցնի յուր առնական զորությունը, և այս նպատակով էլ նրանք, հարսնաղբերները, երբեմն բռնում են թագվորի և խաչեղբոր փեշերից։ Երբ մոտենում են եկեղեցուն, խաչեղբայրը մի քանի կոպեկ է նվիրում ժամկոչին, որ բաց անի եկեղեցու զուռը։ Իսկույն մակարբաշին հանում է յուր գրչահատը և բաց արած պահում, որպեսզի թագվորը եկեղեցի մտնելուն պես իսկույն փակի, որով և ազատի նրան «կապ ընկնելուց», որովհետև եթե այդ միևնույնը մի թշնամի անի, թագվորը կկորցնի յուր առնական զորությունը։

Եկեղեցում քահանան նախ խոստովանեցնում է հարս ու թագվորին, ձեռք-ձեռքի տալիս և ապա գլուխ-գլխի դրած պսակում, խաչեղբայրն էլ խաչն ավետարանի վրա դրած գնում է սրանց գլխներին։ Եվ մինչդեռ քահանան պսակի խորհուրդն է կատարում, թագվորը որոնում է թագուհու մատների մեջ այն մոմի փոքրիկ կտորը, որ վերջինիս ընկերուհիները դրել են, կամենալով փորձել նրա խելացիությունը։ Թագվորը եթե գտնում է այդ մոմը, տալիս է մակարբաշուն, սա էլ ցույց է տալիս թագուհու ընկերուհիներին և դովում թագվորի խելքն ու շնորհքը, իսկ եթե չի կարողանում գտնել, դարձյալ հայտնում է նրան, որ մի ճար անի, ապա թե ոչ՝ նրանց ծաղրի առարկա կդառնա։

Պսակի խորհուրդը կատարելուց հետո քահանան տալիս է ավետարանը թագվորի ձեռքը, իսկ խաչը՝ թագուհու, և հրավիրում հարսնևորներին խաչհամբույր ձգելու։

Ապա դավուլ-զուռնան նորից ածում են, և բոլորը նույն կարգով ուղղվում են դեպի թագուհու տուն, այս անգամ անպատճառ անցնելով խաչեղբոր տան դռնից։ Խաչեղբոր տան առաջ հարսնևորները անշուշտ կանգ են առնում. խաչեղբոր մայրը ընդառաջ է գալիս հարս ու փեսին, նրանց շուրջը պարելով մի քանի պտույտ անում, ապա համբուրում հարսին և մի կարմիր չարդաթ նրա գլխին ձգում։ Ապա բոլորին հրավիրում դռան առաջ սարքած սեղանից մի բան ուտելու և մի բաժակ գինի խմելու։ Սովորաբար սեղանի վրա դրված է լինում դաթա, հալվա, եղածու, կարագ, մեղր, տապակած հավ, խնձոր և այլն։ Այսպիսի սեղաններ սարքված են լինում նաև մյուս մոտիկ բարեկամների դռների առաջ։

Ի վերջո հարսնևորները հասնում են հարսնացուի տունը, ուր հարս ու փեսին առաջ են բերում մի ման եղածու, մի-մի պատառ ուտեցնում նրանց և մնացածը տալիս մակարբաշուն։ Ներս մտնելով, թագ-

վորը բազմում է յուր թախտին, իսկ հարսը գնում է յուր բաժանմունքը։ Մակարներն ու հարսի ընկերները մնում են, իսկ մյուս հարսնևորները ցրվում։

Փիփ, Բանանց և այլ գյուղերում այս միջոցին նորահարսենց բակում մի ձողի ծայրին ցցում են մի խնձոր, իսկ ներքևից քարշ տալիս նորահարսի ձեռքով գործած մի գուլպա, ապա մակարներն սկսում են հրացան արձակել և աշխատել գնդակով խփել խնձորին և թոցնել այն ձողի ծայրից։ Ում հաջողվում է այդ, նա բոլորից գովաբանվում է և իբր մրցանակ ստանում այդ գուլպաները[1]։

Երեկոյին, երբ զուռնան ածում է հարսնեստանը, բոլոր հարսնևորները նորից հավաքվում են հարսի տունը, ուր անմիջապես սուփրաներ են փռում և ընթրիք տալիս։ Թախտի վրա յուր մակարներով շրջապատված թագվորը նստած է լինում և բերանը մի կտոր բան չի դնում, մինչև որ անները մի որևէ բան չի նվիրում նրան իբր «բերան բացեք»։ Բայց իրեն արդեն ծանր ու մեծ պահող թագվորին սաստիկ սեվացնում են թագուհու ընկերուհիները, եթե նա գտած չի լինում նորահարսի մատների մեջ պահած մոմը։ Աղջիկները ցույց են տալիս այդ մոմը մակարներին և ծիծաղում են թագվորի անշնորհքության վրա և երբ հենց իրեն են ուղարկում, նա կարմրելով փող է վճարում, որ թաքցնեն. եթե աղջիկները քիչ են համարում այդ՝ վերադարձնում են փողը և կրկին ցույց տալիս մոմը, մինչև որ, վերջապես, գոհացումն ստանալով թագվորից, թաքցնում են։ Ընթրիքից հետո հարսնևորները ցրվում են, մնում են միայն թագվորը յուր խաչեղբորով և մտերիմ մակարներով, որ նրանց սեղանին ծառայողների հետ հացի նստելով, քեֆ են անում մինչև լույս։

Հարսանել. Կիրակի առավոտ մակարները և հարսնևորները նորից հավաքվում են հարսնացուի տանը, նախաճաշիկ անում և պատրաստվում հարսը տանելու փեսայի տունը։ Հարսը, շրջապատված յուր ընկերուհիներով, դուրս է գալիս յուր առանձնարանից և մոտենալով օջախին, ծունր է խոնարհում նրա առաջ և մի քիչ մոխիր վերցնում, ապա դառնալով յուր հորն ու մորը, համբուրում է նրանց ձեռքերը և լաց լինում։ Այս միջոցին փեսան էլ մոտենում է հարսի ծնողներին, համբուրում նրանց ձեռքերը և կանգնում հարսի մոտ։ Անմիջապես հարսի հայրը բռնում է հարսի ձեռից և տալով փեսի հորը, ասում. «Քու որդուն տվա, աստված խեր տա, աստված ամոթալի չանի»։

[1] Տեր-Ավետիքյան, նահատակը, եր. 44։

— Տվածդ բախտավոր ըլի, խնամի ջան,—պատասխանում է փեսի հայրը,—ստրան դենը սա իմ որդին ա, աչքիս լսի պես կպահեմ։

Ապա հայրը համբուրում է աղջկան և օրհնում, շմոռանալով նաև բարեմաղթել. «Կալիդ քամի ըլի, ջաղացիդ նորաթ ըլի, ջրիդ հերթ ըլի» և այլն։

Այս ժամանակ խնամախոսները պահանջում են, որ հարսի օժիտը բերեն, որ և կատարում են։ Իսկույն խնամախոսներից մեկը բաց է անում ամեն ինչ և մի առ մի բոլորին ցույց տալով, բղավում.

— Շեն կենա, խնամին տվել ա հարսին

Մի տեղաշոր,
Մի խալիչա,
Մի սանդուղ,
Մի ջեջիմ,
Մի մաֆրաշ,
Մի խուրջին,
Մի ջվալ,

Մի սանդրաման (որի մեջ լինում է մի հայելի, մի սանր, ասեղներ, քորոցներ)։

Գուլպաներ,
Դոլաղներ,
Տրխետաններ,
Թութունի ու փողի քիսաներ,
Սմետաններ,
Ջատուներ (թոկ),
Աքցան,
Կյարդակ,
Կուժ պղնձե,
Կժի պնդան և այլն[2]։

Այս ամեն մի իրը ցույց տալիս մակարները իբր պատասխան բղավում են.

— Աստված շնորհավոր անի, բարով մաշեն, հազարը մաշեն։

[2] Այժմ փոքր առ փոքր սովորություն է դառնում իբր օժիտ և դրամ տալ, իսկ փեսացուից բացի հարսանեկան հագուստից և մի քանի նվերներից, դրամ (պեժինքի փող) չպահանջել։ Քաղաքում, ուր արդեն բավական ընդունված է այս սովորությունը, աղքատ ընտանիքները դանեղուռ են ընկնում և նվերներ հայցում, իրենց աղջիկներին օժտելու համար։

Երբ բոլոր օժիտը ցույց է տրվում, փեսի հայրը 5—10 ռուբլի նվեր է տալիս հարսի մորը իբր «ջափահախ» և օժիտը պատրաստելու վարձ։ Եվ ապա բոլորը բարձում են մի ձիու, տնեցիներից մինին էլ վրան նստեցնում և ուղևորվում դեպի փեսի տունը։ Այս ժամանակ դավուլ զուռնան ածում է «տարան հա՜յ» եղանակը, և չարաչճի մակարները հարսի մորը լացացնելու նպատակով երգում են.

Մեջքդ կոտրի, հարսնամեր[3],
Կուրդ կոտրի, հարսնամեր,
Ոտդ կոտրի, հարսնամեր,
Աչքդ դուրս գա, հարսնամեր,
Ա, բեմուրվաթ, էս ի՞նչ ա,
Բախեդ գնում ա, էլ չի գալ...
Էդ ո՞ր օր էր, ո՞ր սահաթ,
Որ յաղը կոխեց էս մղակ։
Ինչի՞ չառաբ դագանակ,
Որ չկոխեն քու մղակ...
Եկան ու քեզ խոսբեցին,
Մի չիբ շամչով կապեցին,
Քու դովլաթը խլեցին,
Քու կուլտանը պատռեցին...
Էլ լաց մխիր, սրտամեռ,
Բանն անցել ա, հոբամեռ,
Բախիդ թուշեն պաչ արա,
Կուլավն քնկի, ճիտ արա,
Ճանապա դիր մեզ հրետին՝
Թունդին մակարի ձեռքին
Մանեթը զվալի ճակատին....

Մի քանի գյուղերում հարս ու փեսան նախ ուղևորվում են համբուրելու գյուղի օճախից և ապա գնում տուն։ Գյուղի օճախը, որ Վարանդայի բոլոր գյուղերում համարյա թե առանց բացառության կա, մի սովորական օճախ է, միայն պատկանելիս է եղել գյուղի հիմնադրին և կամ առաջնակարգ և երկար ժամանակ գյուղը կառավարող անձին։

Երբ հարսն ուրիշ գյուղ է տարվում, մի մարդ ուղարկում են, որ իմաց տա։ Սա տեղական բարբառով կոչվում է աղվես։ Այս կոչումը դրան տալը իրենք՝ գյուղացիները այսպես են բացատրում. որովհետև ճանապարհորդության ժամանակ աղվես տեսնելը բախտավորության, իսկ գայլ տեսնելը դժբախտության գուշակ է համարվում, ուստի և

[3] Այս և մի քանի ուրիշ երգեր և նյութեր մեզ տվեց պ. Տեր-Ավետիքյան։

ընդառաջ եկող մակարները սրան տեսնելիս «աղվես, աղվես» են բղավում, այսպիսով ցանկանալով, որ ճանապարհորդությունը հաջող և ուրախ անցնի։ Մի բան ևս ուշադրության արժանի է. այս գնացքի ժամանակ մակարները առանց այլևայլության սրով խփում, սպանում են պատահած հավերին, և սրանց ոչ մեկի տերը իրեն իրավունք չի համարում պահանջել հավի արժեքը։ Երբեմն այսպես են վարվում և պատահական գառների և ուլերի հետ, բայց այսպիսի դեպքերում թագվորը և կամ խաչեղբայրը փոքր ի շատե բավականություն են տալիս գառի կամ ուլի տիրոջը։

Ի վերջո հարսնևորները հասնում են փեսի տունը. այստեղ տնեցիներից մեկը բարձրանում է կտուրը և ընկույզ, կաղին և կամ չոր մրրգեր շաղ տալիս հարս ու փեսի գլխին։ Իսկույն մեծ իրարանցում է տեղի ունենում, մակարները և երեխաները միմյանց հրհրելով սկսում են հավաքել։ Այս միջոցին դուրս է գալիս փեսի մայրը և կամ տատը, եթե կենդանի է, մի քանի շրջան անում հարս ու փեսի առաջ, իբր թե պարում է և հետո համբուրում նախ թագվորին և ապա հարսին ու կարմիր շարդաթ ձգում գլխին։ Այս ժամանակ փեսի հայրը կամ մի ուրիշ տղամարդ, մի ափսեի մեջ եղաձու և մի ուրիշ ամանով կրակ, վրան խունկ ածած, բերում է առաջ, երեք անգամ շրջում հարս ու փեսի շուրջը և հետո մի քիչ եղաձու տալիս փեսին ու խաչեղբորը՝ ուտելու, իսկ մնացածը հանձնում մակարբաշուն՝ մակարներին բաժանելու։ Անմիջապես մեկ-մեկ մոտենում են փեսի կողմի բարեկամ կանայք և համբուրելով հարսին, մի-մի թաշկինակ ձգում գլխին։ Խեղճ հարսի գլուխը ամբողջովին ծածկվում է 20—40 թաշկինակների տակ, մինչև որ կոնեղբայրը վերցնում է բոլորը, մեկի մեջ կապում և քաշ տալիս յուր կողքից։

Մի քանի գյուղերում մակարներն այս միջոցին ստիպում են թագվորի ծնողներին հարսի առաջ պար գալ։ Նրանք պարում են, և երբ մակարները «քոլոլ, քոլոլ» են բղավում, ամուսինը հարձակվում է կնոջ վրա և ուզում է նրան համբուրել, իսկ նա ամեն մի ճիգ թափում է ազատվելու «յաղի տարած գլխամեռի» ճանկերից։ Հարսնևորները բարձրաձայն ծիծաղում են և զվարճանում։

Մի քանի գյուղերում էլ, ինչպես՝ Բանանց, Բրաջուր և այլն, մի կամ երկու ծաղրածու մուշտակը թարս են հագնում, երեսներին դիմակ դնում, պոչեր շինում և հարսնևորների առաջին ընկած հազար ու մի ծամածռություններ ու հանաքներ անում և բոլորին ծիծաղեցնում։

Սրանք կոչվում են օյին և օյնաճուռ, այսինքն ավագ և կրտսեր ծաղրածուներ։

Վերջապես հարսին ներս են տանում և առանձնացնում նրա համար պատրաստված անկյունում և կամ սենյակում։ Այստեղ հոգատար կոնախպերը և կամ ինքը հարսը նայում են գորգերի տակը, որ տեսնեն, թե հարսի խելքը փորձելու համար փայտի կտոր կամ բապուճներ չե՞ն թաքցրած նրա նստելու տեղում։

Ապա հարսնևորները ցրվում են, իսկ թագվորը խալեղբոր և մակարների հետ դավուլ-զուռնի առաջնորդությամբ գնում է գերեզմանատուն և օրհնել տալիս յուր հին ու նոր ննջեցյալների գերեզմանները։ Այստեղից վերադառնալիս մակարբաշին հրավիրում է դրանց յուր տուն, ուր մինչև երեկո քեֆ են անում և ապա վերադառնում թագվորի տուն։

Թագավորանոց. Բանանց և մի քանի այլ գյուղերում մակարբաշին յուր հետ մի հավ է տանում գերեզմանատուն։ Այստեղ ննջեցյալների գերեզմանները օրհնելուց հետո թագվորը բռնում է այդ հավի գլխից և բոլոր ուժով խփում բունը գերեզմանաքարին, այնպես որ գլուխը կտրվում է։

Այս հավը նա ուտում է այդ երեկո յուր մակարների հետ։ Այս ծեսը կոչվում է թագավորանոց։

Քաղաքում հարսին եկեղեցուց ուղղակի փեսայի տունն են տանում, այստեղ դռան առաջ երկու լավաշ հաց են ձգում նրա ուսերին և երկու հախճապակյա ափսե դնում նրա ոտների մոտ։ Նորահարսը ոտով խփում, կոտրում է ափսեները և հացերը կոտրելով դեպի ետ ձգում։ Երեխաները և մակարները խռնվում են իրար՝ հացի կտորները հավաքելու։

Մի քանի գյուղերում էլ պատահում է, որ չարաճճի մակարները փեսայի դռանը մոտենալիս հետևյալ երգիծաբանական երգն են ասում.

Թագվորի մեր, տանեն դուրս ե՛կ,
Տե՛ս քեզ համար ինչ ենք բերել.
Գլուխդ քթվող ենք բերել,
Շորերդ թափող ենք բերել,
Ոտներդ լվացող ենք բերել,
Մեջքդ քորող ենք բերել....
Թագվորի մեր, տանեն դուրս ե՛կ,
Տե՛ս քեզ համար ինչ ենք բերել.
Ալիքդ մաղող ենք բերել,
Խմորդ հունցող ենք բերել,
Տյափդ բռնող ենք բերել,
Խմորդ պյուլող ենք բերել,

Թորոնդ էրող ենք բերել,
Հացդ թխող ենք բերել....
Թագվորի մեր, տանեն դուրս ե՛կ,
Տե՛ս քեզ համար ինչ ենք բերել,
Շուշան քաղող ենք բերել,
Փիփերթ հնտրող ենք բերել,
Ճրագ վառող ենք բերել,
Կրակ անող ենք բերել,
Խորակ եփող ենք բերել,
Հաց-ջուր անող ենք բերել....
Թագվորի մեր, տանեն դուրս ե՛կ,
Տե՛ս քեզ համար ինչ ենք բերել.
Ղոմդ քերող ենք բերել,
Մարագդ սրբող ենք բերել,
Կովդ կթող ենք բերել,
Հորթդ կապող ենք բերել,
Ուլդ բռնող ենք բերել,
Այծդ կթող ենք բերել,
Խնեցիդ հարող ենք բերել,
Մածունդ մերող ենք բերել,
Թանդ կտրցնող ենք բերել,
Ցուղդ հալող ենք բերել...
Թագվորի մեր տանեն դուրս ե՛կ,
Տե՛ս քեզ համար ինչ ենք բերել.
Տունդ սրբող ենք բերել,
Կուժդ ուտող ենք բերել...
Բաղչիդ ջրող ենք բերել,
Լոբիդ քաղող ենք բերել,
Շորդ կարող ենք բերել,
Գլուխդ լվացող ենք բերել,
Ասեղդ թելող ենք բերել,
Գուլբեդ անող ենք բերել...
Թագվորի մեր, տանեն դուրս ե՛կ,
Տե՛ս քեզ համար ինչ ենք բերել.
Շիրեփդ խլող ենք բերել,
Մառանդ մտնող ենք բերել,
Ջանչ-կրող անող ենք բերել...
Թագվորի մեր, տանեն դուրս ե՛կ,
Տե՛ս քեզ համար ինչ ենք բերել.
Գլուխդ հոգող ենք բերել,
Տունդ քանդող ենք բերել,
Գլխիդ բամփող ենք բերել,
Ոմբրդ թաղող ենք բերել,
Տղեդ խլող ենք բերել,
Գոչդ պակող ենք բերել,

Ծամերդ քաշող ենք բերել,
Տունդ տիրող ենք բերել...
Թագվորի մեր, տանեն դուրս ե՛կ,
Տե՛ս քեզ համար ինչ ենք բերել.
Սատանայի նուռ ենք բերել,
Մութ դժոխքից դև ենք բերել...
Ինչ որի ա՝ քու ապրանքն ա,
Դու ես միայն սրա տերը.
Ե՛կ բրովի, կուլավն ընկի,
Ետնեդ գցի ու ներս քաշի.
Թե Տերն ուզի բախտ քու օջաղի,
Թամուղ կպահի սիրտը հարսի...

Կանչ. *Նույն երեկոյին Թագվորի տնեցիները իրենց տան կորում հնչեցնելով դավուլ-զուռնան, հրավիրում են տղամարդ հարսնևորներին ընթրիքի։ Կարճ միջոցում հավաքվում են և անմիջապես նստում ընթրելու։ Երկար և նեղ սփռոցների շուրջը ծալապատիկ նստոտում են բոլորը, աշխատելով պահպանել ավագության կարգը։ Այս երեկո աշխատում են որքան կարելի է լավ հյուրասիրել, որպեսզի դժգոհ մնալով, «կանչի» ժամանակ քիչ փող չտան։ Սովորաբար մատուցում են խորոված, բոզբաշ, կորկոտ, փլավ և այլն։*

Հարսանիքի ժամանակ ամենահարգի կերակուրը Կորկոտն *է համարվում։ Երբ նրա կաթսան հանում են թոնրից և ներս բերում հարսնևորների մոտ, ածողների խումբը տեղից վեր է կենում և սկսում ածել «Տատի-սոին»*[1] *ժողովրդական եղանակը։ և երբ պնակներն ածած բաժանում են, ղավալը մոտենում է նախ Թագվորին, քավորին և հետո հարսնևորներին և նրանց առաջ ածում, մինչև որ մի քանի կոպեկ նվեր է ստանում։*

Ընթրիքից հետո սկսվում է կանչը։ *Մի ափսե դնում են քահանայի կամ գյուղի տանուտերի առջև, զուռնաչին, որ որպես ամենալեզվանի և պնդերես մարդ, հանձն է առնում նվերներ հավաքել, դառնում է դեպի հարսնևորները.*

«Ա՜խ խալխը, ցնծացեք, շատ գիշեր ա անց կացել, ով ինչքան ուզում ա, Թագվորի սիրուն տա։ Դուք էլ տուն եք, աղջիկ ու տղա ունեք. էս հացափոխ ա, էսօր էս տանը, էքուց ձեր տանը».

[1] *Հայ զուռնաչիները (ղավալները) զանազան եղանակներ են հնարում և նրանց մի սրևէ տեղի, ձորի, սարի անուն դնում, որովհետև, ինչպես իրենք են ասում, իրենց այդ եղանակը նկարագրում, պատկերացնում է այդ վայրը։ Այսպես, բանանցցի ղավալ Թյունեի որդի ղավալ Ավագը հետևյալ անուններն է դրել յուր հնարած եղանակներին. Զկնի-ձորին, Լալուկ-քարին, Գյոլի-ղրաղին, Պաքերի-աղբյուրին և այլն։*

Ամենից առաջ տալիս է խաչեղբայրը՝ 2—10 ռ.։ Զուռնաչին ցույց է տալիս բոլորին և բղավում.

«Թագվորի մակարներ»։

— Հրամմե,—պատասխանում են մակարները։

«Աստված խերն ու բարին ձեզ կամե։ Սուրբ Սարգիսը խաչեղբորը մուրազը տա... մեր Թագվորի սիրուն բաշխեց (այսքան) մանեթ. սելով սեղա՜ն, ոտով ոչխար... շեն կենա՜»։

— Շեն կենա, շեն,—կրկնում են մակարները։

Ապա նվեր է տալիս հարսի հայրը, հորեղբայրը և այլն, մինչև վերջին հարսնևորը։ Ի վերջո տանուտերը հաշվում է բոլորը, մի կամ երկու ռուբլի տալիս զուռնաչուն, իսկ մնացածը հանձնում Թագվորի հորը։ Այս կանչից հավաքվում է 50—200 ռուբլի, մի գումար, որչափ հաղիվ ծախսված լիներ հարսանիքի ընթացքում։

Կանչից հետո տեղի է ունենում պար, որի ընթացքում մակարները և հարսն ու աղջիկ ամեն կերպ աշխատում են իրենց շնորհքները ցույց տալ։ Եվ երբ հարսնևորները ցրվում են, սեղանին ծառայողներն են նստում ընթրելու. սրանց միանում են մակարները Թագվորի և խաչեղբոր հետ։ Քեֆը վերսկսվում է։ Այս միջոցին հարսի տանից Թագվորին խոնչա է գալիս. մի մեծ սկուտեղի մեջ դրված է լինում երկու ափսե փլավ, մի նվաճ հավ, յոթը գաթա, կարմիր ներկած հավկիթներ, մի ափսե եղաձու, մի քանի լոշ հացեր և այլն։ Խաչեղբայրը մի քանի կոպեկ նվեր տալով խոնչա բերողին, առնում է այն և հանձնում մակարբաշուն, սա էլ պահ է տալիս տնեցիներին, որ մյուս օրը մակարների հետ ուտեն։ Ուտել խմելուց և երկար պարելուց հետո մակարները ցրվում են, իսկ խաչեղբայրը քնում է Թագվորի հետ։

Թագվերացում. *Հետևյալ օրը, երկուշաբթի, Թագվորի հայրը, եթե միայն գոհ է կանչի միջոցով ստացված նվերներից, հրավիրում է կանչին մասնակցողներին և հյուրասիրում նրանց ճաշով, որից հետո քահանան կատարում է Թագ-վերացման ծեսը՝ մի ափսեի մեջ դնում են երկու կտոր արած մի հաց. ափսեի ծայրերին երկու մոմ վառում, սրա մոտ կանգնում են հարսն ու փեսան՝ գլուխ գլխի հենած և խաչեղբայրը՝ սուրն ու պատյանը սրանց գլխներին խաչաձև բռնած։ Երբ քահանան վերցնում է Թագը, գնում է ափսեի մեջ, հացի վրա։*

Իրենց՝ գյուղացիների բացատրությամբ սուրը նշան է, թե միայն մահը կարող է բաժանել ամուսնացած զույգին, իսկ հացը բախտավոր լինելու նշանակ է։

Մի քանի գյուղերում, ինչպես և քաղաքում, նախքան թագվերացումը մի քիչ կտրում են հարսի մազերից, «որպեսզի նրա սիրտը սկեսրանց տան վրա լինի»։ Այսինքն՝ յուր հայրական տանից ավելի սկեսրանց տունը սիրի։

Թագվերացումից հետո մակարները թագվորի հետ գնում են խաչեղբոր տունը՝ զվարճանալու։ Այստեղ մակարբաշին պահանջում է թագվորից նրա համար նախընթաց երեկոյին աներանց տանից ուղարկված խոնչան, իսկ մյուս մակարներից՝ մի-մի հավ։ Ով անմիջապես չի բերում հավը, մակարբաշին հրամայում է կտուրից թոկ ձգել և դրա մի ոտը կապել։ Այսպես մի ոտի վրա կանգնած պիտի սպասե մակարը, մինչև որ նրա զոքանչը մի հավ ուղարկե և ազատե նրան։ Մակարբաշին սրանով էլ չբավականանալով, ավելի պահանջներ է անում և կապում է մակարների երկու ձեռները, երկու ոտքը և այլն։ Այս երեկո ծայրագույն իշխանությունը նրան է պատկանում, և նա ամեն միջոց գործ է դնում կարելվույն չափ ուրախ անցկացնելու և սեղանին շատ բան ունենալու։

Գիշերը մակարները ցրվում են, իսկ թագվորը մակարբաշու հետ գնում է չոր մրգեր նորահարսի համար և գալիս առագաստ մտնելու։ Այդ երեկո հարսի մայրը նորահարսի համար խոնչա է ուղարկած լինում, որ նորապսակները առանձին ուտում են։

Կուսությյան ապացույց սավանը խստությամբ պահանջվում է։ Չեղած դեպքում շատ անախորժ դեպքեր են տեղի ունենում։

Թ ա գ ա կ ա պ. Երեքշաբթի առավոտյան հարսնևոր կանայք են հավաքվում թագվորի տանը։ Երբ բոլորը հավաքված են լինում, խաչեղբոր կինը կամ մայրը դնում է մի առաջամատույցի վրա հարսի թագը, սրա վրա մի հաց և ապա մի ափսե։ Հետո հրավիրում է հարսնևորներին, որ հօգուտ հարսի նվերներ տան։ Ամենքը 10 կ.—5 ռուբլի ձգում են ափսեի մեջ, ոմանք էլ դրամը խնձորի մեջ խրած դնում են առաջամատույցի վրա։ Այս նվիրաբերությունից հետո հարսի թագը մի երիտասարդի, իսկ թագվորինը՝ մի աղջկա գլխի դրած պար են ածում և ապա նստում ճաշում ու ցրվում։

Ծ ա խ ս ը. Սովորաբար աղջկա կողմից շատ քիչ ծախս է լինում, իսկ տղայի կողմից լինում է մոտավորապես հետևյալը.

Ա. Նշանդրեքին

Մի ոչխար	2—3 ռ.
Գինի և օղի	2—3 »

Պանիր	1—2 ռ.
Հաց	2—3 »
Յուղ	1—2 »
Հավ	1—2 »
Զամիլ և չոր մրգեր	1 »
Մատանի	1—2 »
Մի արծաթ մանեթ շղթաներով	4 »
Բոլորը՝	15—22 »

Բ. Տարվա ընթացքում

Հարսնացուին նվերներ	25—30 ռ.

Գ. Հարսանիքին

Գինի	48—60
Օղի	30—40
Մի եզ	15—25
Ոչխար	2—3
Մի մոթալ պանիր	12—13
Հաց	13—15
Բաժինքի փող	15—200
Հարսին զգեստ	20—45
Քահանային	3—3
Եկեղեցուն	1—1
Աթոռահաս	6—6
Զուռնաչուն	5—10
Մանր ծախսեր	10—25
Բոլորը՝	180—447
Ընդամենը՝	220—499

ՏՂԱԲԵՐՔ ԵՎ ԿՆՈՒՆՔ

Դ ա շ տ ա ն. Սովորաբար դաշտանը (լուսնի) երևում է 14—15 տարեկան հասակում, երբ շատերն արդեն ամուսնացած են լինում։

Դաշտանը ընդհանրապես տևում է 3—5 օր, իսկ երբեմն նաև 4—6 օր։ Սկսվելիս տաք մոխրի վրա նստեցնում են, որ շարունակվի, իսկ

երբ երկար է տևում, գետից սառը ավազ են հանում և կապում դաշտան ունեցողի փորին և դնում նստատեղի տակը, որ ընդհատվի։

Դաշտանի միջոցին շոր են կապում և օրական գոնե մի անգամ փոխում։ Շատ քչերը սովորություն ունեն գոլ ջրով լվանալու սեռական անդամը, մինչև որ բոլորովին չի կտրվում։

Ընդհանրապես դաշտանի ժամանակ չեն զգուշանում ոչ կերակուրներից և ոչ խմիչքներից։ Միայն մի քանիսը սառը ջրի փոխարեն տաք ջուր են խմում և թեյի փոխարեն լորենիի ծաղկից պատրաստած թեյ գործածում։ Միևնույն ժամանակ զգուշանում են թթվեղեններից։

Յուրաքանչյուր կին գիտե յուր դաշտանի ժամանակը, և եթե սպասած միջոցին չի սկսվում, դիմում են հետևյալ միջոցների.

1) Ոտները տաք ջուր են դնում։

2) Փորին տաք շոր են կապում։

3) Տատմորը փորը ոլորել են տալիս։

4) Սոխի կճեպը ջուրն են դնում և առավոտները թեյի փոխարեն ընդունում են ման գալիս։

5) Պուլիկի (փոքրիկ կավե աման) մեջ թուղթ են վառում և դնում փորին։

6) Յ ա խ ու են դնում փորին։ Յախուն պատրաստում են այսպես. մի սկուտեղի մեջ օղի են ածում և դնում կրակին, ապա մի կտոր հաստ թուղթ դնում վրան, և երբ սա թրջվում է, փոշիացած խունկ են ածում վրան և տաք-տաք վերցնում դնում փորին, երբեմն և մեջքին և շուտով կապում։

Դաշտան ունեցող կանանց հարաբերությունը գերդաստանի մյուս անդամների հետ չի փոխվում. նրանք դարձյալ քնում են իրենց ամուսինների հետ, նստում, կանգնում մյուսների հետ միասին, միայն սրանց վաղեմի սովորությամբ արգելվում է եկեղեցի գնալ, հաղորդություն առնել, սրբերի առաջ մոմ վառել, հաց թխել, կերակուր եփել, կով կթել և այլն։

Ամ լ ուր յ ուն. Այս գավառում ևս ամլությունը աստվածային պատիժ է համարվում, ամուլ կինը չի սիրվում ամուսնուց և շարունակ նախատվում է սկեսրոջից։ Շատ հաճախ է պատահում, որ ամուլ կնոջ ամուսինը մի երկրորդ կին է բերում, հատկապես երեխա ունենալու նպատակով, և հասարակության կարծիքը, որ ընդհանրապես դատապարտում է ապօրինի կնապահությունը, այս դեպքում շատ ներողամիտ է գտնվում։

Կանայք էլ, իրենց հերթին, սաստիկ նախատում են առնական

զորությունից զուրկ ամուսիններին և ամլության նախատինքը իրենցից վերցնելու համար «փոխում են բարձերը»։ Այսպիսի դեպքերում սկեսուրները ձեռքերը երկինք բարձրացնելով խնդրում են աստծուց, որ եթե երեխան իրենց որդուցն է՝ ապրի, իսկ եթե ուրիշից՝ մեռնի։ Եվ շատ դառն է լինում կնոջ դրությունը, եթե երեխան մեռնում է։

Երեխա ունենալու համար դիմում են հետևյալ միջոցների.

1) Որպեսզի որոշեն, թե ումի՞ց է ամլությունը, կնոջ և ամուսնու մեղը առանձնապես ածում են ամանների մեջ, հող ավելացնում և գարի ցանում։ Եվ նա է համարվում ամուլ, որի մեզի միջից գարին չի ծլում։

Իսկ եթե երկուսի գարին էլ ծլում է, այն ժամանակ կինը ծեծում է մի քանի ընկույզ, մեղրի հետ խառնում, կապում մի բարակ շորի մեջ և դնում յուր սեռական անդամի մեջ և մոտ մի ժամ այդպես պահում։ Այս միջոցը երեք անգամ կրկնելուց հետո ամուսինը մի շամայի ձուկ է ուտում և հարաբերություն ունենում։

2) Ամենից ավելի դիմում են սրբերի միջամտության և ուխտ գնում Պան, Եղնատաբ, Գետաշենի Սուրբ Նշան, Ոսկան Նահատակ, անցնում սուրբ համարված քարերի միջի անցքով և ծառերի ճյուղերի միջով։ Ուխտ գնալիս կինը շոքում է քահանայի առաջ և խնդրում գրել-խին Ավետարան կարդալ։ Երբ ավարտվում է ավետարանի ընթերցումը, կինը քանդում է յուր գոտին և դնում ավետարանի վրա. այդպես մնում է մի գիշեր, հետևյալ օրը քահանան նորից կարդում է ավետարանը և յուր ձեռքով կապում գոտին կնոջ մեջքին։ Կինը խոստում է տալիս մի նվեր բերելու ուխտատեղիին, եթե որդի ունենա։ Երբեմն գոտին կապել են տալիս իրենց տոհմական քավորին։

Եթե այսպիսի ուխտագնացությունից հետո որդի են ունենում, 5—7 տարի կտրել չեն տալիս երեխայի մազերը և ապա մի գառի հետ բերում «սրբի տակը», գառը մատղում և երեխայի մազերը հանդիսավոր կերպով կտրում սրբի գերեզմանի վրա։

3) Մի գիշեր ամուլ կնոջը սավանի մեջ փաթաթած բերում պպզեցնում են զանգակատան մեջ, զանգակների տակ, մի բաղեկաթ բռնում գլխին և մի կուժ ջուր ածում վրան։ Այս միջոցին կինը զանգահարում է մի անգամ և փախչում դեպի տուն։

4) Լարախաղացի, ինչպես և ուղտի տակից երեք անգամ անց են կացնում։

5) Դիմում են գանձակեցի մի հայտնի կնոջ, որը նստեցնում է մի կաթսա տաք ջրի վրա, նախապես մեջը ձգելով մոխիր, աղ, դարչին,

ժանճաֆիլ, պղպեղ և մի քանի տեսակ ծաղիկներ։ Այսպես 1—2 ժամ պահելով կնոջը, լավ քրտնեցնում է և ապա պառկեցնում անկողնու մեջ և դարչինից ու ժանճաֆիլից պատրաստած թեյ տալիս։ Այս կըրկնում է 3—4 օր և երբեմն ավելի։

6) Մի կիրակի օր, առավոտյան շատ վաղ ամուլ կինը գնում է գերեզմանատուն և յոթը «անմասը» (առանց հաղորդություն ստանալու) մեռածների վրա անխոս լվանում ձեռքերն ու ոտները և մի մի քիչ ջուր խմում։ Ապա գնում է «պոյանու» կարասի վրա մոմ վառում, խաչակնքվում և կարասի մեջ նայում։

7) Քրիստոսի ծննդյան տոնի երեկոյին գետի մեջ երեք անգամ սուզվում, ելնում են։

Հղիություն. Երբ դաշտանի ընդհատվելուց կինը առաջին անգամ իմանում է, որ հղիացել է, հանուն 12 դաս հրեշտակների 12 անգամ խաչակնքում է և հանուն 40 մանկանց՝ 40 անգամ ծունր դնում։ Եվ այնուհետև գրեթե ամեն կիրակի նա ուխտ է գնում գյուղի շրջակա ուխտատեղիները, տանելով յուր հետ կաթնահունց, մրգեր, որ բաժանում է բացառապես արու երեխաներին, որպեսզի յուր որդին էլ արու լինի։

Շատ քիչ գերդաստաններում հղի կնոջ դրությունը փոքր-ինչ բարելավվում է առաջվանից, շատ քիչ սկեսուրներ արգելում են իրենց հարսներին առաջվա չափ աշխատելու, խմոր հունցելու, ծանր աշխատանքներ կատարելու։ Շնորհիվ իրենց երկաթի առողջության, հղի կանայք հեշտությամբ կարողանում են տանել ամեն մի նեղություն և աշխատանքի, բեռի տակ դուրսը, անտառում և կամ դեղի տակ ծնել։ Այս պատճառով էլ սովորական մականուն է դարձած «քոլում (անտառում) ծնված» խոսքը։ Այսպես, օրինակ, Գետաշենում Բոշանց հարսը գնացել է Գյոգ-Գյոլ զկեռ քաղելու և վերադարձին, զկեռի տոպրակը շալակին, առանձնանալով անտառի խորքում, ծնել է և զկեռի հետ երեխային էլ շալակած եկել տուն։

Մի բան միայն նպաստավոր է հղի կնոջ համար. այն, որ նրա ուտեստի վերաբերությամբ ունեցած բոլոր քմահաճույքները անպայման կատարում են, որպեսզի երեխան պակասավոր չլինի։ Կնոջ այս քմահաճույքը «մտապոխություն» են կոչում և ոչ միայն տնեցիները, այլև օտարները պարտք են համարում կատարել։

Հղի կինը ցանկանալով առողջակազմ և գեղեցիկ տղա ունենալ, զգուշանում է խմիչքներ գործածելուց, բացի մի քիչ օղուց, որպեսզի

երեխայի աչքերը խարտյաշ լինեն։ Նա չի ուտում հավի միս, որպեսզի երեխան «հավի պես ճըցըցող» (նեղացող) չլինի, հարևանի տնից ձու է գողանում, որպեսզի երեխան ծիծաղելիս այտերի մեջ փոսիկներ գոյանան։ Ուխտ գնալիս աշխատում է խոզ պատահած միջոցին քորել յուր կուրծքը և կամ մի ուրիշ տեղ, որպեսզի երեխան այդ տեղում նշան ունենա։ Նա զգուշանում է ցորենի ջվալի վրա նստելուց, որպեսզի երկունքը սաստիկ չլինի. հինա կամ այլ կարմիր գույնի բաներ չի գործածում, որպեսզի երեխան այդ գույնի հիվանդություն, օրինակ՝ կարմրուկ, չհանի։ Նա պատի վրա ցեխ է ծեփում, որպեսզի երեխան արգանդում չծեփվի։ Հաց եփելիս յուր ձեռքով հաց է բաժանում հարևաններին, որպեսզի չվիժե յուր երեխան։

Հղի կնոջ պահապան համարվում են այս երկու հրեշտակները, որոնք Քրիստոսի ծնունդը հայտնեցին «ալամ (բոլոր) աշխարհքին» և Աստվածածնի հրեշտակները, որոնք երկնքում ծառայում են նրան։ Տիրամայրը ամիսը մի երկու անգամ ուղարկում է այդ հրեշտակներին հղի կանանց մոտ քաջալերելու նրանց. բացի սրանցից, յուրաքանչյուր գերդաստան մի որևէ սրբի «ղուլ» է, այսինքն նրան համարում է յուր գերդաստանական, օջախի սուրբ և ծանր բոպեներին նախ նրան է դիմում։ Ուստի և ծննդաբերության ժամանակ հատուկ նրա համար մոմեր են վառում, և տան երեխաներից մին 12 անգամ նրա առաջ ծունր է դնում։

Սրանք են հղի կնոջ պաշտպանները, իսկ թշնամին՝ չար ոգին, ալը և սատանան, որոնք ամեն կերպ աշխատում են վնասել նրան։ Սրանց հալածելու նպատակով հղի կինը յուր ուսին մի պողպատի կտոր է ամրացնում, կամ մատը պողպատե մատանի դնում։ Երբ գիշերը տնից դուրս է գնում, ամուսնու դանակը գնում է ծծերի մեջ։ Երբ գիշերը ջուր է կամենում գործածել, նախ մի պողպատի կտոր կամ կացինը դնում է ոտների տակ և ապա ջրին ձեռք տալիս։ Զգուշանում է ջուր թափելուց և այլն։

Սակայն երբեմն ոչ միայն անտես են առնում վերոհիշյալ նախազգուշությունները, այլև զանազան միջոցների են դիմում իրենց արգանդի պտուղը վիժեցնելու համար։ Եվ այս առավելապես՝ երբ երեխան ապօրինի է լինում։ Այդ միջոցներից նշանավոր են.

1) Տրորում են փորը։

2) Երկանք են դնում փորին և աղում։

3) Հոնի ծաղիկը եփում, ջուրը խմում են։

4) Ջորու սմբակը (դոնաղ) ջրի մեջ են ձգում և հետո խմում, զզվում և վիժում։

5) Դիտմամբ վախեցնում են։

Մ ն ո ւ ն դ. Երբ մոտենում են երկունքի օրերը, ավելի շատ են հետաքրքրվում իմանալու, թե արգանդի պտուղը արու է, թե էգ։ Այս իմանալու համար սովորաբար դիմում են տատամերներին, և սրանք նայում են կնոջ փորին. «Թե երեխան ձկի պես լող է տալիս՝ արու է, թե գորտի պես պպզած է՝ աղջիկ»։

Երբ սկսվում է երկունքը, անմիջապես հրավիրում են քահանային և հաղորդություն տալիս, նախ որ հեշտությամբ ծնի և երկրորդ՝ ծնընդաբերությունը մահառիթ համարելով, նախազգուշանում են անմասն մեռնելուց։

Երկունքի ժամանակ հրավիրում են տատամեր կանանց, որոնք գյուղի մեջ բավական հարգանք են վայելում։ Իսկ ամենածանր դեպքերում հրավիրում են մանկաբարձներ՝ հայտնի հովիվներ, որոնք անասունների վրա երկար ժամանակ փորձեր անելով, բավական հասկանում են մանկաբարձական արվեստից։ Այս նախնական մանկաբարձները զգալի օգուտներ են տալիս և սրանցից մի քանիսը, ինչպես, օրինակ՝ գնտաշենցի «Զորան Սաքին», բանանցեցի նախարշի Իսաքելանց Սահակը, գավառում բավական մեծ հռչակ ունեն։

Տատամերը և մի երկու կին առանձնացնելով հղի կնոջը մի սենյակում աշխատում են հեշտացնել ծնունդը և այս նպատակով դիմում են հետևյալ միջոցների.

1) Տնեցիները մի սկուտեղի մեջ ալյուր կամ հաց, վրան մի քիչ աղ դրած բերում են պատեցնում ծննդկանի գլխով և ասում. «Մայրամ Աստվածածին, դու ազատես»։ Ծննդից հետո այս ալյուրն ու աղը առաջներն աղքատի էին տալիս, իսկ այժմ՝ տատամորը։

2) Մի կին բարձրանում է կտուրը և հերթիկից հանկարծ մի ձու վայր ձգում, բարձր բղավելով. «Յա պեր (բեր, ծնիր), յա ես պերում եմ»։ Ապա իջնում են ներքև և բարձր ձայնով տալով երկնողի (ծնընդկանի) անունը, ասում է. «Աշխարքս քոչեց (չվեց), շուտ արա, մենք էլ ենք քոչում»։ Հետո անմիջապես հրացան են արձակում, որի ձայնին հետևում է երեխաների աղաղակը. «Գնացինք, մնաք պարև»։

3) Հրավիրում են յուր վերնազգեստի ափով ծննդկանին ջուր տալու այն անձին, որ ազատել է մի որևէ կենդանի օձի բերանից։

4) Կանչում են խաչեղբորը և նրա գդակը դնում ծննդկանի գլխին, հուսալով խաբել սատանաներին, թե նա տղամարդ է։

5) Հրավիրում են քահանային ծննդկանի գլխին ավետարան կարդալու։

6) Գրքացներին, մոլլաներին գիր են անել տալիս։

7) Եթե ծննդկանը ժլատ է («պինդ», «քար ու կես» է), ծնունդն էլ դժվարությամբ է լինում։ Հեշտացնելու համար ծածուկ մի քար են դնում հացի տաշտի մեջ։

Եվ կամ՝

8) Տաք մոխիրը մի շորի մեջ ածած կապում են մեջքին։

9) Լիսնահողը՝ կարմիր կամ գեղին հողը, շաղախում են և քաշում ծննդկանի փորին։

10) Շշի մեջ փչել են տալիս։

Ծննդկանը ուշագնաց լինելիս մի ձու և խոզի մազ են թաղում նրա մոտ։ Ցույթ են տալիս, որ ծամի, համբիշ և կամ կծիկ են տալիս ձեռքը որ կբաղվի, ճյումնի՝ ներքին երեսի վրա նստեցնում են։

Երբ երեխան ծնված է լինում, տատամերը ծննդկանի ոտները դնում է յուր ուսերին, գրկում ծննդկանին և թափ տալիս, որ ուզվի. և կամ տրորում փորը։

Ծնունդը կատարվում է տան օջախի մոտ, ծննդկանի երեսը դեպի արևելք դարձրած, իսկ գիշեր ժամանակ, երբ տան անդամներին չի կարելի հեռացնել՝ տան մի անկյունում, որ կապերտներով առանձնացնում են։ Այստեղ, անշուշտ, գնում են օջախի մոխրից, որպեսզի «օջախի հրեշտակներն էլ գան ծննդկանին օգնելու»։

Ծննդաբերությունը կատարվում է խոտի վրա, որի տակ հող է փռված լինում։

Ծննդկանը սովորաբար շոքում է և ձեռքերը ձգում յուր երկու կողմը կանգնած կանանց գոտիներին, իսկ սրանք բռնում են նրա թևերից։ Պատահում է, որ կողքի վրա պառկած կամ պպզած են տղատվում։

Տատամերը առնում է երեխային, դանակով կտրում է պորտը, ընկերքը թաղում տան շեմքի առաջ, իսկ պորտը՝ տղայինը ձգում է շինամեջ, որ տղան շուտ նկող լինի, իսկ աղջկանը՝ տան մի անկյունը, որ աղջիկը տանը նստող լինի։

Եթե ընկերքը շուտով չի ընկնում, ծննդկանի մեջքին տաք մոխիր են կապում և նրան կուլի մեջ փչել տալիս։ Փորը տրորում են, ոտները տաք ջուրն են դնում։ Լորենու ծաղկից պատրաստած թել[1] են խմեցնում և փոքր-ինչ ման ածում սենյակում։ Զգուշանում են, որ ըն-

[1] Կանաչատ հողի քառակուսի կտրվածքը։

կերքը շները չուտեն, ապա թե ոչ՝ երեխան պակասավոր կլինի։ Այստեղից առաջացել է. «Ընկերքդ շունն ա կերել» դարձվածքը, որ կնշանակի, թե՝ պակասամիտ ես։

Երեխան հիվանդանալիս յուր ընկերքի թաղած տեղի վրա լողացնում են, հուսալով, որ կառողջանա։

Ծննդաբերությունից հետո խոտի վրա մի կտոր շոր են ձգում և ծննդկանին պառկեցնում մի կողքի վրա, զգուշացնելով, որ շուտ-շուտ կողքից կողք չդառնա, ապա թե ոչ՝ շուտ երեխա կունենա։

Հետո տատամները լողացնում է նորածնին, աղում ամբողջ մարմինը և նույնիսկ մատը թաթախելով աղի մեջ, քսում նրա կատիկին, որ բերանից հոտ չգա, ապա փաթաթում շորերի մեջ և դնում մոր առջև։ Մի օր շարունակ ծննդկանին թողնում են խոտի վրա պառկած, նրան ամենից առաջ ժանճաֆիլով թեյ և պումաճ[2] են տալիս, հետո խավիծ, հալվա, ջրախառն գինի։

Տան երեխաները և հետո տատամները գնում են ծննդկանի մոտիկ ազգականներին «աչքիլուս» տալու՝ ավետելու երեխայի ծնունդը։ Ազգականներն էլ նվերներ են տալիս տատամորը և ասում. «Կուռդ կանաչ կենա», եթե միայն նորածինը տղա է, իսկ եթե աղջիկ՝ «Կուռդ չորնա, աղջիկ ես փաթաթել», որովհետև ընդհանրապես ոչ միայն ծնողները, այլև ազգականները տղայի ծնունդը շատ ավելի ուրախությամբ են ընդունում, քան աղջկանը։

Ծննդյան հետևյալ օրը տատամները լողացնում է նախ նորածնին և ապա ծննդկանին և այժմ միայն պառկեցնում նրան անկողնու մեջ։ Շատ կանայք հենց իրենք իրենց են լողանում և պառկում։

Այս ժամանակ բարեկամ կանայք «խոնչա» կամ «ծննդգավաթ» են բերում՝ ձու, փլավ, եղբնու, խնձոր և այլն։ Բերողին հյուրասիրում են թեյով, ճաշով, իսկ սրտակից բարեկամին փոխադարձաբար մի «յայլուղ» կամ մի այլ բան են նվիրում։

Սրանց և առհասարակ հյուր գալիս տատամները վերցնում է երեխան և դնում նրանց գիրկը, ասելով՝ «Հորավ ըլի, մորավ ըլի, դե «պըրտըկըտիր» (պորտը կտրելու վարձ) տվեք»։ Սրանք էլ տալիս են մի քանի կոպեկ։

Ծննդկանը առավելը յոթ օր շարունակ պառկած է մնում անկողնում և այս միջոցին տնեցիները ամեն կերպ աշխատում են պաշտպանել նրան չարերից, որովհետև նա այս միջոցին պիղծ է համարվում

[2] Ալյուրը կարագով և մեղրով շաղախված։

և ավելի մատչելի չարերին։ Նույնիսկ տնեցիները իրենց հեռու են պահում նրանից, նրա հետ հաց չեն ուտում, նրա գործածած ամանները առանձնացնում են, արգելում են նրան մի որևէ ուտելիքի ձեռք տալ, այլ միայն սպասել, մինչև որ նրան կտան։ Նրան, ինչպես և նորածնին չարերից պաշտպանելու համար թե՛ նրա բարձի տակ և թե՛ օրորոցում դնում են սուր, սոխ՝ մի երկաթի ծայր անց կացրած. խոզի մազ, նարեկ, համայիլ և այլն։ Միևնույն ժամանակ աշխատում են նրան երբեք միայնակ չթողնել, և երբ ստիպված են լինում բոլորը հեռանալու, ավելը բերում տնկում են նրա մոտ։ Գիշերները հոգատար սկեսուրները նախքան քնելը խաչակնքում են ծննդկաններին և հետևյալ աղոթքը շշնջում.

Ճրագ ճրագ ճշմարտահատիկ,
Ճշմահատիկ մարգարիտ.
Պանամ պղնձա դուռը,
Քաղեմ անթառամ ծաղիկը,
Փնչեմ դնեմ գլխուս.
Քուն ըլիմ՝ արագս պարի,
Աստված մուրազս կատարի.
Տեր մեր Հիսուս Քրիստոս.
Ա՜յ Մարիամ, քո՞ն ես, թե՞ զարթուն.
Հաղար քուն, հազար զարթուն.
Երկու երկու եկին հերթը,
Երկու երկու եկին դուռը,
Ով դուռը կյա՝ ետ դառնա,
Ով հերթը կյա՝ քար դառնա.
Տեր մեր Հիսուս Քրիստոս.
Էս տունը տրտրատուն ա,
Քրիստոսա ժամատուն ա.
Քրիստոսը հերթու շուտ գա,
Փիլոնը քըցինք հրրուրոցավը
Քըցինք հիվանդի պարձյավը,
Տեր մեր Հիսուս Քրիստոս։

Մի քանի բարեպաշտ սկեսուրներ էլ ծննդից հետո հրավիրում են քահանային իրենց բնակարանը չարերից «փարատելու»։

Կենսք. Ծննդից 3—8 օր հետո կատարում են կնունքը։ Տատամների ձեռքով ուղարկելով քավորին «խոնչա» (հալվա, հավ, փլավ), երբեմն էլ ոչխար՝ եղջյուրներին կանաչ կարմիր թել կապած և կամ մի փոքրիկ գլուխ շաքար, հրավիրում են գալ երեխան կնքելու։

Սովորաբար ամեն գերդաստան ունի յուր գերդաստանական քավորը, որ սերնդից սերունդ է անցնում։ Քավորին ընդհանրապես սաս-

տիկ պատվում են, նշանավոր տոներին խոնշաներ են ուղարկում, որպես օրինակ՝ Նավասարդին ուղարկում են բիշի, հալվա, գինի, օղի։ Բարեկենդանին՝ փլավ, հավ, գինի, օղի և այլն։ Զատկին՝ սեր, կարագ, ձու, հալվա, փլավ, քավորի համար՝ մի գլխարկ կամ մի թաշկինակ, տան բոլոր երեխաների համար մի զույգ գուլպա։ Վարդավորին՝ փնջեր, գաթա, հալվա, փլավ, հավ։ Քավորն էլ ամեն անգամ յուր կողմից նվերներ է ուղարկում թե՛ սանամորը և թե՛ մանավանդ սանիկին։

Եթե երեխան առաջնեակ է, ծննդկանի մայրը կնունքի նախորդ օրը նվեր է ուղարկում նորածնի համար շապիկ, բալուլի շորեր, օրորոցի ներքնակ, վերմակ, փոքրիկ բարձ, մի ձեռք զգեստ և այլն։ Մոտիկ ազգականներն էլ երբեմն կրկին խոնշա են ուղարկում ծննդկանին, առավելապես կերակրեղենից բաղկացած։

Մկրտության օրը տատմերը լողացնում է թե՛ երեխային և թե՛ ծննդկանին։ Հետո երեխային բալուլած առնում է թևերին և տանում եկեղեցի։ Երբեմն տան անդամներից մի քանիսը գնում են հետը, բայց հայրը իրավունք չունի մկրտության խորհրդին ներկա գտնվելու։

Գալիս է եկեղեցի և քավորը՝ մի զույգ մոմ և մի արշին սպիտակ միտկալ առած։ Այստեղ քահանան, որին շորս հաց ուղարկելով խնդրել էին մկրտել երեխային, կատարում է մկրտության խորհուրդը, երեխան դնում քավորի գիրկը, մի-մի մոմ տալիս քավորի ձեռքը և ինքը շուրջառը ձգած, շարական ասելով դալիս ծննդկանի տուն։

Տատմերը մի սափորի մեջ մեռոնաջուր ածած հետևում է քահանային։ Հասնելով տուն, քավորը երեխային տալիս է ծննդկանին. սա իսկույն խոնարհում, համբուրում է քավորի ոտը, առնում երեխային և ապա կրկին համբուրում քավորի ձեռքը։ Ծննդկանը կիսահագնված պառկած է լինում յուր անկողնի մեջ և աջ կողմում դրված է լինում մի խոնշա՝ վրան երկու լավաշ հաց։ Ծննդկանը երեխային դնում է հացերի վրա և քավորի ձեռի երկու մոմը վառում երեխայի գլխի և ոտների մոտ։

Երբ քահանան ավարտում է ավետարանի ընթերցումը և առաջարկում է համբուրել, տան մեծը նախ առաջ է գալիս և համբուրելով, մինչև մի ռուբլի խաչհամբույր տալիս, հետո մյուսներն են համբուրում։ Այստեղ խմբված են լինում բավական թվով հյուրեր, հատկապես կնունքի պատճառով հրավիրված։ Անմիջապես նախ տղամարդիկ և ապա կանայք առանձնապես հացի են նստում և ուտում են խուխուտ, փլավ և խորոված։

Երեխայի անունը սովորաբար տան մեծն է ընտրում, առավելապես գերդաստանի նախնիների և կամ քահանան՝ մկրտության և կամ ծննդյան օրը հիշատակված սրբերի անուններից։ Ահա մի քանի անուններ իրենց կրճատված ձևերով։

Տղամարդկանց անուններ Աբրահամ, Ապրհամ, Աբրի, Աբրամ.
Ալեքսանդր. Ալեք, Ալեքսան, Սանթրի, Սանթրո, Սաշա.
Անդրեաս, Անդրի.
Առաքել, Ռաքել, Ըռաքել.
Աստվածատուր, Աստատուր, Ծատուր
Արզուման, Արզման
Արտաշես, Արտաշ, Արտուշ
Ավետիս, Ավետ, Ավտիս
Բաղդասար, Բղդո, Բըղդասար
Գաբրիել, Կափել, Կյափի
Գասպար, Քյասպար
Գարեգին, Գարո
Գևորգ, Կևի, Կևերք
Գրիգոր, Քոքոր, Քյուքի, Գրիշա
Դանիել, Տանել
Երեմիա, Եմի, Եմո
Զարմայր, Զորիկ, Զորո
Զաքարիա, Զաքի, Զաքար
Էմանուել, Մանուել
Թովմաս, Թումաս, Թոմաս
Իսահակ, Իսակ, Սահակ
Լևոն, Լևան
Խաչատուր, Խաչի, Խաչո, Խեչո, Զատի
Կարապետ, Կաբեդ, Կարո, Գարասիմ, Գրասիմ
Կոստանդին, Կոստի
Համբարձում, Համբարձ
Հայկազ, Հայկ, Հայկո
Ղևոնդ, Ղևանդ
Մամիկոն, Մամիկ
Մարտիրոս, Մարտի, Մարտին
Մելիքսեդեկ, Սեթեկ
Միքայել, Միխայել, Մեխակ, Մուխի, Միշո
Մկրտիչ, Մակիչ, Մակի, Մակում, Նիկիտ
Մնացական, Ցական

Մովսես, Մուսես, Մուսի
Հակոբ, Ակուփ, Ակոփ
Հարություն, Թյունի, Արթյուն, Արտեմ
Հովհաննես, Հանես, Վանո, Իվան, Վանյա
Հովսեփ, Ուսեփ, Օսիկ, Յոսիֆ
Նիկողայոս, Նիկոլ, Նիկոլայ, Կոլյա, Կոլի
Պետրոս, Պետի, Պետո
Պողոս, Պուղոս, Պուղի, Պավլի
Ռուբեն, Ռուբիկ
Սարգիս, Սաքո, Սերգի
Սիմեոն, Սիմոն, Սյոմկա, Սյոմա
Տիգրան, Տիգո

Կանանց անուններ Աննա, Աննիկ, Անինգա, Անիչկա, Անյուտա
Անթառամ, Թառան
Գյուլլիզար, Գյուլի, Արիզ
Եղիսաբեթ, Սաբեթ, Լիզա
Զարզալամ, Զարի
Լուսաբեր, Լուսիկ
Հերիքնազ, Հերիկ
Հեղինե, Հեղուշ, Էլո, Ելենա, Ելի, Լյոլա
Հռիփսիմե, Հուռումսին, Հուռի, Հռիփսիկ
Մանուշակ, Մնիշակ
Մարգարիտ, Մրքյարիտ, Քյարիտ
Մարիամ, Մարո, Մարան, Մայան, Մաշո, Մանյա
Շողակաթ, Շողեր, Շուղի
Շուշանիկ, Շուշան, Շյուշի, Շուրիչկա
Սաթենիկ, Սաթո, Թենիկ
Վարսենիկ, Վարո, Վարինկա

Մկրտությունից երեք օր հետո «մեռոնը վեր են անում». հացի տաշտը դնում են թոնրի վրա, մի քիչ յուղ կամ մի ձվի դեղնուց քսում երեխայի այն մասերի վրա, ուր մեռոն է քսված և կնունքի ժամանակ գործածված երկու մոմը վառելով տաշտի երկու կողմը, լողացնում են երեխային, ասելով.

Հորավ ըլես,
Մորավ ըլես,
Կարմիր օրավ ըլես.
Ոմրըդ երկան ըլի.

Քու հորն ու մորը
Հնազանդ ըլեսι

Ապա բոլոր մազերը ձախ ձեռում հավաքելով, աջ ձեռքով երեք անգամ խփում է մազերին և ասում.

Քու հերը բան ա ուզում.
Քու մերը բալա ա ուզում.
Քու յարն էլ ծամ ա ուզում։

Եվ այս այն նպատակով, որ մազերը երկարեն, իհարկե, եթե միայն աղջիկ է։

Կնունքից մի կամ մի քանի շաբաթ հետո ծննդկանի տանից քավորին, նրա քաշած նեղությյան համար նվեր են ուղարկում մի ափսեով փլավ, մի աման ձվածեղ, երկու եփած հավ, մի քանի գաթա, մի քանի կարմիր ձու, մի շիշ գինի, մի զույգ գուլպա և երբեմն, եթե միայն հարուստ են, մի գառն և օձիքը ասեղնագործած շապիկ, հատկապես կնքավորի համար։

Մանկան հոգատարություն. Մայրերը 3—4 ամիս շարունակ ամեն օր լողացնում են երեխային, օրը երկու անգամ բալուլում, տակի շորերը փոխում, ամեն լաց լինելիս ծիծ տալիս, օրորում, նանիկ ասում և քնեցնում։

Սովորաբար ծիծ են տալիս մինչև կրկին հղիանալը, որ երբեմն տևում է 4—5 տարի։ Եթե սակավակաթ են կամ շատ շուտ են հղիացել, երեխային կովի կամ իծի կաթով են կերակրում, հետը մի քիչ ջուր և շաքար խառնելով։ Փոքր-ինչ մեծ երեխային տալիս են ջրախառն կաթով եփված աղած բրինձ։ Ծծից կտրելիս մեղր ու պղպեղը շաղախում և քսում են ծծերին։

Մոր գլխավոր հոգսը լինում է աղատ պահել երեխային «կոխից»՝ հետզհետե նիհարել և մեռնել։

Իսկ «կոխվում» է, երբ քառասունքը դեռ չլրացած՝ մի քառասունքում կին է գալիս երեխայի մոտ, երբ հայրը և կամ մի մարդ եկած միջոցին երեխային չեն բարձրացնում տեղից, երբ առաջին անգամ օրորոցը տուն բերելիս երեխային չեն տանում առաջ և դռան մոտ չեն դնում մեջը և այնպես ներս բերում։

«Կոխից» բժշկելու նպատակով դիմում են հետևյալ միջոցների.

1) Գետաշենի մոտ գտնված «Քաջքաձորում» կա մի ահագին ժայռ, մեջը մի ծակ՝ «Քաջքաբուն» անունով։ Երեխային երեք անգամ անց են կացնում այս ծակով և ասում. «Իմը քե, քունը ինձ տուք»։ Հետո հատկապես պատրաստված մի տիկին թաղում այդ ժայռի տակ։

2) Առանց հաղորդության մեռածների գերեզմանի վրա բռնելով երեխային՝ ձեռների և ոտների վրա ջուր են ածում և մի քիչ խմեցնում։

3) Լողացնում են մի կտոր մսի և կամ այն մարդու գուլպայի վրա, որից կոխվել է։

Գուշակելու համար, թե երեխան արդյոք կառողջանա, քակորով կշռում են և 3 կամ 8 օրից կրկին կշռում։ Եթե ծանրանում է՝ հավատում են, թե առողջանալու է, իսկ եթե թեթևանում՝ հույսները կտրում են։

Եթե երեխան մեռելից վախենում և հիվանդանում է, մի առավոտ շատ վաղ, անխոս, առանց հա նայելու տանում են մի առանց հաղորդության մեռածի գերեզմանի վրա և ոտներին ու ձեռներին ջուր ածում, ջրի ամանը կոտրում և հատակապես խմորից պատրաստված մեռելը այնտեղ թաղում։

Նույն նպատակով նույնպիսի ննջեցյալի գերեզմանի վրա մի կտոր կտավ են դնում և մի քիչ ջուր ածելով վրան, երեխային երեք անգամ խմեցնում են, գերեզմանի վրա կռացնելով։

Եթե ընդհանրապես մի ծնողների որդիները չեն ապրում, նորածնին մահից ազատելու հույսով երբ կնքած տուն են վերադառնում, մի թուքի գիրկ են տալիս, իբր թե նա է եղել քավորը։

Նույն հույսով նորածնին ծախում են մի քանի կոպեկով մի որևէ մարդու և ապա իբր օտարի որդի իրենք պահում։

Երեխայի առաջին, կաթնատամները դուրս գալիս կ ճ ա խ ա շ են անում՝ լորի և ցորեն խաշելով, խառնում են լարլարուի (զարդուդալի) և ընկույզի հետ և ածում երեխայի գլխին, նախապես մի թաշկինակ ձգելով։ Գուշակություններ անել չգիտեն, ինչպես անում են Վարանդայում։

Տարեկան երեխային ծննդյան օրը դնում են ծնված տեղում և երեք անգամ «թուլ են տամ» (շուռ են տալիս), որպեսզի բան գտնող լինի։

Երեխային կանգնել սովորեցնելու համար բռնում են երկու ձեռքից և կանգնեցնելով, ասում.

Տո՛տա.
Կանանչ կարմիր խոտ ա,
Փունջ մանիշակ կոխել ա։

Կայծակի հարվածից երեխային ազատ պահելու համար ուրբաթարուր են կապում նրա աջ թևին։

Չար աչքից ազատելու նպատակով աչքահլունքը յոթն անգամ աղոթում են և կարում երեխայի վրայից։

Օրորոցագողից՝ մանկանը ազատ պահելու նպատակով խոզի դունչը քաշ են տալիս օրորոցից։

Երեխան ծաղիկ կամ կարմրուկ հանելիս կորկոտ հաց են եփում և բաժանում, ընկույզի յուղով ճրագ են վառում։

Ման գալ սովորեցնելու համար գետնին մի փայտ են ցցում և նրա ծայրին մի կիսաբոլոր փայտ անց կացնում այնպես, որ պտտվի։ Երեխան հենվելով այս կիսաբոլոր փայտին, պտտվում է, կամաց-կամաց ոտները փոխելով։

Նույն նպատակով «ոտանի» են դնում։ Սա մի քառակուսի տախտակ է, մեջտեղը շրջանակաձև ծակված և չորս ոտների վրա ամրացրած։ Ոտանց ոտների վրա անիվներ կան անցկացրած, այնպես որ երեխան առաջ հրելով կարողանում է քայլել։

Մանկական թոթովանք 1. Հայր—պապի
2. Մայր—նյանա՞ (հարցական նշան ունեցող ա-երը՝ ֆր. a)
3. Հաց—տա՞տա՞
4. Ջուր—աբու կամ բու
5. Շոր, զգեստ—չյու չյու
6. Գնալ—նյալ
7. Կերակուր—փոփո
8. Շուն—տուտին
9. Կատու—ափիշ
10. Ուտել—մամել
11. Խմել—միմել
12. Քնել—նեննել
13. Օրորոց—տոտոն
14. Սպանել, խեղդել—փոթել
15. Կարել—կիտել
16. Նստել—տիտել
17. Քեռի—դադայ
18. Երեխա—կուկուն
19. Ծաղիկ—ծա՞ծա՞ղ
20. Վերք—վավի
21. Կոտրել—տոտել
22. Չի—դադահ
23. Միջատ (պղոճ)—բոբող

---

[1] Տե՛ս Հավատք բաժնում։

24. Նոր, գեղեցիկ իր—զիզի
25. Ճրագ—տիզի
26. Գդալ—թո՞թո՞լ
27 Խնձոր կամ մի այլ պտուղ—լո՞լո
28. Թեյ—չաչայ
29. Գուլպա—բյուբյուլ
30. Ճիպոտ—պատի

Խոսակցություն. 1) ա նյանա՞ ափիշը տա՞տեն մամեց—նշ.՝ մայրիկ, կատուն հացը կերավ. 2) ա պապի, տուտին աբուն միմեց—հայրիկ, շունը ջուրը խմեց. 3) ա նյանա՞, տոտոնը նեննեմ—մայրիկ, օրորոցում քնում եմ։ 4) ա նյանա՞, պապին դա՞դա՞հը տիտեց—մայրիկ, հայրիկը ձին նստեց. 5) թա՞թս վավի ա—ձեռքս վիրավորված է. և այլն, և այլն։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔ

Գանձակի գավառում այժմ միաժամանակ գոյություն ունեն թե՛ հին, նահապետական գերդաստանը և թե՛ նոր, առանձնացած ընտանիքը։ Առաջինը հետզհետե քայքայվում է, նախնի նահապետական սովորություններն անհետանում են, տան մեծի իրավունքները սահմանափակվում են, անդամների պարապմունքները տարբերվում են միմյանցից, ժամանակակից գաղափարներ և սովորություններ թափանցում են նրա մեջ և արագացնում նրա անդամալուծվելը։

Երկրորդը, անմիջապես դուրս գալով առաջինից և դեռ նոր-նոր կազմակերպվելով, պահպանում է յուր մեջ առաջինին հատուկ շատ սովորություններ և գաղափարներ, այստեղ էլ տիրում է տան մեծի բռնությունը, միահեծան կառավարությունը, միայն փոքր-ինչ ավելի մեղմացած և ձևականապես հղկված կերպով։ Թե՛ առաջինում և թե՛ երկրորդում կինը ստրուկ է, միայն առաջինում մի քանի տեր ունի, մինչդեռ երկրորդում՝ միայն մեկը։

Եվ որովհետև կինը հանդիսանում է որպես ընտանեկան կյանքի բովը, ուստի և վերջինիս մասին փոքր ի շատե ամփոփ գաղափար տալու հույսով կնկարագրենք կնոջ դրությունը մանկությունից մինչև պառավության շրջանը ներառյալ։ Ինչպես մյուս բոլոր հարցերում, այստեղ էլ մենք նկատի ունենք գյուղացուն՝ ժողովրդի արմատն ու կենցուցիչը։

Մանկություն. Աղջկա ծնունդը ոչ թե ուրախություն, այլ տխրություն է պատճառում թե՛ ծնողներին և թե՛ ազգականներին։ Մայրը կարծես մի հանցանք գործած կուչ է գալիս, ամուսինը երբեմն բարկանում է կնոջ վրա, երբեմն էլ ամենակոպիտ խոսքերով հայհոյում նրան։ Սկեսուրը անիծում է նրան ասելով. «Ջահիլ տղիս օրը սևացրիր, աղջկերք բերելով, ջինսդ (սերունդդ) կտրվի»։ Ազգական կանայք գալիս են ոչ թե աչքիլուս տալու, այլ մխիթարելու. «Բան չկա, աղջիկ բերողը տղա էլ կբերի. հերն ու մերը սաղ ըլին. հըլը ով ա գիտում, դրա ըրջին շատ չար ու բարի կա, ծաղիկ, կարմրուկ ... ասած ա, պետք ա կալովը պիրես, խախալով (մեծ մաղ) վեր օնես»։

Նույնիսկ մանկաբարձին էլ հայհոյում են, անիծում. «Ձեռքդ կոտրվի, մեկ էլ մեր տանը աղջիկ երեխա չիաթաթես»։

Իհարկե, այս դժգոհությունը այնքան ավելի է լինում, որքան շատ աղջիկ երեխաներ ծնված են այդ գերդաստանում։ Պատահել են դեպքեր, որ նորածին աղջկան տաշտի տակ են դրել և սպանել։

Այսպես վերաբերվելու պատճառն այն է, որ աղջկան «ուրիշի ապրանք, դրսի պատ» են համարում, 10—15 տարի հայրենական տան մեջ ապրելուց, ծախսերի ենթարկվելուց հետո թողնել-գնալու է։ Եթե ծնողները նեղության, խեղճության մեջ լինեն, նա հակառակ նույնիսկ յուր սաստիկ ցանկության և ունեցած կարողության, չպիտի կարողանա օգնել, իրենց գերեզմանը օրհնել տալ։ Այնինչ արու երեխան «տան սյուն է», «ծերության նեցուկ» է, «օջախի վառ պահող», «ծնողաց հիշատակը պահպանող, նրանց գերեզմանը օրհնել տվող է»։

Ուստի և սրա ծնունդը մեծ ուրախություն է պատճառում բոլորին և ուրախությամբ ընդունվում։

Որդոց դաստիարակության մեջ անգամ ծնողները անհամեմատ ավելի խնամք, գութ, հոգատարություն տածում են դեպի արու երեխաները, քան թե աղջիկները. կաթի սերը, կերակրի լավ և մեծ բաժինը, լավ հանդերձը միշտ արու երեխային է բաժին ընկնում. աղջիկը «հնովմնով», հավելցուկներով էլ կարող է մի կերպ քարշ գալ։

Երբ աղջիկն ու տղան միմյանց հետ կռվում են, մայրը գրեթե միշտ տղի կողմն է բռնում, աղջիկը, մեղավոր թե արդար, նախատինքի, պատժի է ենթարկվում։ Այս տեսակ կողմնապահությունից տղան երես է առնում և սովորում է քրոջ հետ վատ վարվել, նրան թակել։

Երբ աղջիկը 4—5 տարեկան է դառնում, ուղարկում են նրան դառներ արածեցնելու, և նա այստեղ ուրիշ տղաների հետ ազատ խաղում է ու զվարճանում, բայց երբ 6—7 տարեկան է դառնում, մայրը այլևս թույլ չի տալիս տղաների հետ ազատ խաղալու, նա նրան իր մոտ է

պահում և յուր հետ տանում հարևանների տուն, ուր տեղի ունեցած բամբասանքները, անվայել խոսակցությունները աղջիկը լսում է և սովորում։

Գյուղերում ծնողները բոլորովին կարիք չեն համարում աղջիկներին ուսման տալ, «վարպետ կույս չի դառնալու». ամբողջ գավառում օրիորդաց ոչ մի դպրոց չկա, միայն տղաների հետ մի քանի աղջիկներ, այն էլ գյուղի ամենաառաջնակարգ տներից, սովորում են երկուերեք տարի և դուրս գալիս պսակվելու։

Գեղջկուհի մոր բոլոր խնամքը կայանում է նրանում, որ աղջկանը տուն ավելել, սրբել, ման լվանալ, գուլպա գործել և կար անել սովորեցնի։

Երիտասարդություն. Գյուղերում աղջիկ երիտասարդություն չկա, որովհետև հենց որ ինը-տաս տարեկան են դառնում, խսկույն նշանում են և պսակում։ 14—15 տարեկան աղջիկը արդեն տասը մնացած, «զոդալ» է համարվում։ Եվ պետք է ասել, որ սրանց թիվը շատ փոքր է և հասարակության մեջ համարում չունենալով, մի որևէ հասարակական դեր չեն կարողանում խաղալ։

Գյուղական աղջիկներն ընդհանրապես բավական ազատություն են վայելում, նրանք միջոց ունեն շփվելու երիտասարդների հետ, նրանց ճանաչելու, «սեր կապելու», բայց սրանց ծնողները թույլ չեն տալիս նրանց «աչքերը բացվելու», շուտով նշանում, պսակում են, առանց նույնիսկ նրանց կամքը հարցնելու, որովհետև գիտեն, որ «զոտալները» այդպիսի կույր հնազանդություն ցույց չեն տալիս և փախչում են իրենց սիրած երիտասարդների հետ։

Առհասարակ տղաներն ու աղջիկները միմյանց տեսնում են հետևյալ տեղերում.։

ա) Աղբյուրի մոտ։ Ջուր բերելու պարտականությունը աղջիկների և նորահարսների վրա լինելով, սրանք առավոտը շատ վաղ, արշալույսին և երեկոյան իջնում են աղբյուրը, ուր երիտասարդները բերում են անասուններին ջուր տալու, այստեղ խոսում են միմյանց հետ, կատակներ անում, սրախոսում, երիտասարդներն իրենց սիրած աղջիկներին միրգ են տալիս և նրանցից կարած «քիսա», գուլպա և այլ ընծաներ ստանում։

բ) Հարսանիքներին, երբ աղջիկներն ու տղաները միմյանց հետ մրցում են պարով։

գ) Ուխտատեղիներում, ուր ազատ օդի և ընդարձակ դաշտի մեջ ամենքը զբոսնում, պարում, ուրախանում են։

դ) Եկեղեցիներում, ուր մանավանդ ծաղկազարդին և սուրբ Սարգսին բոլոր աղջիկները անպատճառ եկեղեցի են գնում։

ե) Արտը գնալիս և գալիս։

զ) Համբարձմանը անտառում ծաղիկներ ժողովելիս և հետո վիճակ հանելիս։

է) Վարդավառին և մյուս տոներին, երբ պարեր են սարքվում։

Գյուղերում ջերմ սիրահարություն շատ հազիվ է պատահում, այլ թեթև համակրանք, որովհետև դեռ կատարյալ արբունքի չհասած, աղջիկներին պսակում են։ Եվ այս թեթև համակրանքն էլ, որ ծնողների հալածանքի ժամանակ անմիջապես անհետանում է և մի առանձին վիշտ կամ ուրախություն չի պատճառում, սիրո երգեր հյուսվելու էլ չի նպաստում։

Այս պատճառով և սիրո երգերի մեծագույն մասը ոչ թե աղջիկների, այլ «զոդալների» և հարսների ստեղծագործությունն են։

Նշանադրություն. Մեծ մասամբ 9—11 տարեկան հասակում գեղջկուհուն նշանադրում են, ում հետ որ ծնողները կամենան։ Այսպիսի մի ծանր խնդրում նրա կամքը բոլորովին չեն հարցնում, և եթե մի որևէ համակրանք էլ ծագած է նրա մեջ դեպի մի երիտասարդ, ծնողները, եթե այդ հաճո չէ իրենց, խստությամբ ճնշում են և վերացնում։

Նշանադրության քողի հետ սարկության քողն էլ ձգում են նրա գլխին։ Այնուհետև նա այլևս իրավունք չունի ոչ մի տղամարդու և կամ չափահաս կնոջ հետ խոսելու, մենակ տանից դուրս գալու, սկեսրանց դռնովն անցնելու։ Այլ միշտ երբ սկեսրանցից մինին պատահում է, անմիջապես ծածկում է երեսը և փախչում. փողոցում մի որևէ մարդու պատահելիս շուռ է գալիս դեպի հակառակ կողմը և ոպասում, մինչև որ անցնում է։ Նա չի տեսնվում յուր նշանածի հետ, որովհետև այդ մեծ ամոթ է համարվում և նշանավոր տոներին, երբ սկեսրանք գալիս են տեսության և ընծաներ բերում, փեսան նրանց հետ երբեք չի լինում։ Նշանած աղջիկը սկեսրանցից ոչ մինի, նույնիսկ 6—7 տարեկան երեխաների հետ էլ չի խոսում, այլ լուռ ու մունջ կանգնում է նրանց մոտ և կամ ծառայում։ Խեղճ աղջիկը սկեսրանց ներկայությամբ նույնիսկ նստելու էլ իրավունք չունի. նա մի լուռ արձան է, կանգնած սկեսուրի մոտ։ Միայն փոքրահասակ տալերը, որոնք շատ անգամ ընկերուհի են եղած նշանած աղջկան, ստիպում են նրան խոսել իրենց հետ, միասին շրջակայքը ծաղիկներ, դմի և այլ կանաչեղեն քաղելու գնալ։

Եվ այսպես, ամբողջ սկեսրանց տնից միայն փոքրահասակ տալերն են, որ խոսում են նշանած աղջկա հետ և փոքրիշատե մտերմանում հետը։ Մյուսները, նույնիսկ նշանածը, մնում են օտար նրան։ Ամբողջ նշանադրության ընթացքում, որ սովորաբար մինչև մի և երբեմն մի քանի տարի է տևում, նշանածը բացարձակ չի այցելում նրան, այլ գիշերը, երբ տան մեծերը քնած են լինում, նա գաղտագողի ներս է մտնում և զոքանչի հետ խոսում, նրանից հյուրասիրվում։ Նշանած աղջիկը լուռ ու մունջ, երեսը չարշաֆով ծածկած նստում է մի քիչ հեռու, և նույնիսկ այն դեպքում, երբ նրանց մի քանի րոպե առանձին են թողնում, աղջիկը շարունակում է լռություն պահպանել և ամեն կերպ ընդդիմադրել նշանածի գգվանքներին։

Հարսանություն. Ամուսնանալով, աղջիկը ավելի ևս կորցնում է յուր ազատությունը և ենթարկվում է բավական ծանր աշխատանքների։ Նրա երեսը այժմ ավելի թանձր քողով (կարմիր չարշաֆ) են ծածկում և մացնում են գերդաստանի մեջ, որի բոլոր անդամների հետ նա օտար է, որոնցից ոչ մեկի հետ էլ փոքր ի շատե նա մտերմացած չէ և որոնց հետ նույնիսկ իրավունք էլ չունի խոսելու։ Այդ ճնշիչ դրությունը ինքը, նահապետական կյանքն էլ է զգացել, ուստի և սահմանել է, որ հարսնեզբայրները և կամ մոտիկ ազգականներից երկու պատանիներ ընկերակցում են հարսին և մնում նրա մոտ երեք օր, մինչև որ նա փոքր-ինչ ընտելանում է սկեսրանց, սկսում է խոսել ամուսնու հետ։ Բայց նա հեշտությամբ չի վճռում բանալ յուր բերանը և խոսել մի այլ սեռի, մի այլ խմբի անդամի հետ, որովհետև նահապետական կյանքը գերդաստանի անդամներին ըստ սեռի բաժանել է երկու խմբի, որոնց մեջ շատ քիչ հոգեկան կամ մտավոր կապ, հարաբերություն կա։ Տղամարդիկ առանձին են նստում, առանձին, կանանցից զատ և նրանցից առաջ են ուտում խմում, իրենց տպավորություններն էլ ոչ թե իրենց կանանց, այլ իրենց եղբայրներին, հորը պատմում։ Գործի վերաբերությամբ դարձյալ տղամարդիկ միմյանց հետ են խորհուրդ անում։ Ամուսինը մի տղամարդի ներկայությամբ ամոթ է համարում մի որևէ նյութի մասին խոսել յուր կնոջ հետ, գգվել յուր երեխային։ Բացի դրանից տղամարդիկ կարծում են, թե կանանց մազերը երկար են, խելքները կարճ, և այս պատճառով էլ նրանց կարծիքներին նշանակություն չեն տալիս, հետները չեն խորհրդակցում, իրենց դրությունը նրանց չեն պարզում։ Կանայք շատ անգամ անտեղյակ իրենց ամուսինների նյութական դրության, այնպիսի պահանջներ են ներկայացնում, որ նրանք չեն կարող կատարել, և փոխանակ պարզ խոստովանելու, ամուսինները զանազան պատճառներով մերժում են և շատ անգամ անբավականությունների տեղիք տալիս։

Այսպես միմյանցից անջատված և առանձնացված լինելով, նորահարսը նույնիսկ յուր ամուսնու հետ դժվարանում է խոսել, և երբ նա ստիպում է՝ նորահարսի նրան ուղղած առաջին բառը «ախչի» (այ աղջիկ) կոչականն է լինում։ Նա դեռ ամուսնուն իրեն համասեռի տեղ է դնում և ապա թե հետը խոսում, որովհետև նրա գլխի մեջ պինդ նստեցրել են, թե տղամարդու հետ չի կարելի խոսել, հենց որ նշանադրության քողը գլխին ձգվեց։ Սակայն գերդաստանի մյուս անդամների հետ էլ նա անխոս է մնում մինչև մի որոշ ժամանակ. այսպես՝ սկեսրայրի և մեծ տեգրերի հետ մինչև յուր մահը։ Սակայն մի դեպքում, երբ սկեսուրը մեռնում է, և սկեսրայրը զառամելով առանձին խնամքի է կարոտում, միայն մեծ հարսը, որ ստանձնում է սկեսրոջ պաշտոնը, խոսում է նրա հետ։ Սկեսրոջ հետ առաջին հարսը խոսում է անդրանիկ որդին ունենալուց հետո, իսկ մյուս հարսները՝ 5—7 տարուց հետո։ Ավագ հարսների հետ 3—4 տարի, իսկ կրտսերների հետ թեպետ ինքը խոսում է, բայց նրանք՝ ոչ։ Այսպես զատապարտված մշտատև լռության, հարսը պարտավոր է գրեթե ամբողջ օրը աշխատել, երբ նորահարս է, պարտավոր է առավոտները շատ վաղ վեր կենալ, տունդուռ ավլել, աղբյուրից թարմ ջուր բերել, օգնել սկեսուրին և սկեսրայրին հագնվելու, բոլորի անկողինները հավաքել, թել ածել[1], հաց ձգել, հավաքել, տղամարդկանց, բացի յուր ամուսնու[2] ոտները լվանալ, անկողինները ձգել, հանվեցնել սկեսրայրին և սկեսուրին, սրանց մեջքերը և ոտները տրորել, մինչև որ կհանգստանան և կքնեն։

Երբ երկրորդ հարս է՝ կով է կթում, թոնիր վառում, կարում կարկատում. երբ երրորդն է դառնում՝ երբեմնապես կերակուր է եփում, շարունակ ճախարակ մանում, գորգ և կարպետ գործում, այլուր մաղում, խմոր շաղում, գնդում։ Իսկ երբ ինքը դառնում է սկեսուր, կերակուր է եփում, հաց թխում, ճախարակ մանում։

Այս աշխատանքները նա կատարում է տանը, առավելապես ձմեռը, տարվա մյուս եղանակներին նրա աշխատանքը կրկնապատկվում է։

Այս ժամանակ նա կատարյալ ընկեր է հանդիսանում ամուսնուն և ամենայն եռանդով աշխատում է։

---

[1] Այս նոր է մտել։

[2] Գերդաստանի մյուս անդամների ներկայությամբ նորահարսը ամոթ է համարում ծառայել յուր ամուսնուն և կամ նրան մի որևէ միրգ, քաղցրեղեն տալ։

Նա հաց է տանում արտը, նա, մի քանի գյուղերում, ամուսնու հետ միասին նույնիսկ հունձ է անում, իսկ շատ տեղերում՝ խուրձեր կապում, կրում, կալը կալսում, թեղում, ցորենը շվատում, շրաղաց տանում, աղում, այգին շրում, քաղհան անում, խաղողը քաղում, թութը հավաքում, սարում կովերը կթում, յուղ ու պանիր պատրաստում և այլն, և այլն։

Նրա աշխատասիրությունն այն աստիճանի է հասնում, որ կալը կալսելիս՝ կանգնած կամի վրա. ճիպոտը կոնատակին և՛ եղներն է քշում, և՛ գուլպա գործում։ 80—90 տարեկան պառավ կանայք, որոնց մեջքերը ծերությունից ընկճվել, ծռվել են, նույնիսկ փողոցներում գուլպա գործելով են ման գալիս։ Հարևանի տունը, մի ազգականի մոտ մի որևէ գործի կամ տեսության գնալիս գեղջկուհին տանում է յուր հետ գուլպան կամ մի որևէ կար և այնտեղ աշխատում ու խոսում։

Այսպես, չնայելով, որ կինը ամուսնուն գրեթե հավասար աշխատում է, չնայելով որ տան ամբողջ հարստությունն ինչպես ամուսնու, այնպես և յուր դառն աշխատանքի արդյունքն է, բայցևայնպես, նա շատ քիչ իրավունքներ ունի այդ տան մեջ։

Պատրաստի դրամը, վաճառելի բերքը գտնվում են ամուսնու անմիջական իրավունքի տակ, կինն առանց ամուսնու թույլտվության չի կարող ոչ պատրաստի դրամից ծախսել և ոչ վաճառելի նյութերից, նրան թույլ է տրվում միայն, մի-մի անգամ մի քանի կոպեկի կաթ, մածուն, ձու ծախել և դրամը պահել իրեն, այն էլ եթե միայն ինքն է սկեսուրը, որովհետև հարսներին խստիվ արգելված է այդ ևս։ Տան համար հարկավորված բարիքները տան մեծն է հոգում, նա առնում և հանձնում է գերդաստանի մորը, որի միակ արտոնությունն է ամեն բարիքի և նույնիսկ տան բանալիները պահել։ Առանց նրա թույլտվության ոչ որդիները և ոչ հարսները իրավունք չունեն մի բան վերցնելու։ Նա ինքն էլ բոլորովին ինքնիշխան չէ. անսովորական բաներում նա ստիպված է յուր ամուսնու հաճությունն ստանալ։ Այսպես, օրինակ, եթե յուր մոտիկ ազգականը վերին աստիճանի նեղության մեջ է, և նա սրտանց ցանկանում է 1—2 ռ. բան ուղարկել նրան, իրավունք չունի, պետք է տան մեծի հաճությունն ստանալ, որը և բավական դժվար է։ Իսկ եթե հարսներից մինն է ցանկանում օգնել յուր մորը, հորը, եղբորը, նա պարտավոր է նախ մեկի միջոցով սկեսրոջը խնդրել, իսկ սա, եթե հաճի, կհարցնի տան մեծին, իսկ եթե ոչ՝ կմերժի։

Եթե հանգամանքը պատճառ է լինում, որ հասները չկարողանան հայտնի կերպով օգնել իրենց ծնողներին, ծածուկ են օգնում, գողանալով տանից[3]։ Շատ անգամ գողությունը բացվում է և մեծ անբավականությունների տեղիք տալիս։

Ծնողներն էլ գիտենալով, իր իրենց աղջիկը ամենանեղ հանգամանքներումն անգամ չպիտի կարողանա օգնել իրենց, իրենք էլ նրանից կարծես օտարանում են և շատ հազիվ է պատահում, որ հայրը օգնի յուր պսակված աղջկան։

Պառավություն. Կինը միայն պառաված միջոցին է սկսում ազատություն և հարգանք վայելել։ Նա ստանձնելով տան ներքին կառավարությունը, ստրկությունից իշխանության է բարձրանում, և որքան ծանր է եղել նրա ստրկական դրությունը, այնքան ավելի դաժան և բռնի է լինում նրա իշխանությունը։ Նա հրամայում է հարսներին, աղջիկներին, թոռներին և մասամբ որդիներին, և երբ նրանց կողմից մի դժգոհություն է լսում, իսկույն առաջադրում է նրանց յուր անցյալը, երբ ավելի բռնություն էր տիրում։ Նա կարծում է, թե ինչպիսի բռնություններ որ գործել է յուր սկեսուրը իրեն վրա, ինքն էլ գործելու է յուր հարսների վրա։ Ընդհանրապես որքան գերդաստանը նահապետական է, այնքան հարսները հնազանդ և սկեսուրները բռնակալ են։ Եվ որքան ավելի գերդաստանը ժամանակակից գաղափարներով խմորվում է, այնքան ավելի հարսը ինքնակամ, ազատ և սկեսուրը՝ յուր նախկին իրավունքներից զրկված է հանդիսանում։ Հարսը ձգտում է անկախության, սկեսուրը աշխատում է յուր բռի մեջ պահել նրան. սրանից ծագում են անվերջ կռիվներ, որոնք տանում են գերդաստանի անդամալուծման։ Մյուս կողմից էլ կրոնական հայացքները փոխվելով, խախտում են այս նահապետական կազմակերպությունը, այսպես՝ կրոնասեր հարսները հավատում են, թե ինչպես որ իրենք վարվեն իրենց սկեսուրների հետ, այնպես էլ վարվելու են իրենց հարսները իրենց հետ, և այս կրոնական համոզմունքից դրդված, զսպում են իրենց[4]։

---

[3] Հարսը կժի մեջ ցորեն է ածում և ուսին դրած գնպի աղբյուրն ուղևորվում, ապա ճանապարհը փոխելով մտնում է հերանց տուն, այնտեղ դատարկում ցորենը և շտապով գնպի աղբյուրը իջնում։ Երրեմն մի ուրիշ հարսի մատնությամբ սկեսուրը հետևում է նրան, կուժը ուսից վերցնում և բազմության առաջ թքում, մրում, հայհոյում, անիծում խեղճ հարսի հերանց։

[4] Պատմում են, թե մի հարս չկամենալով նույնությամբ կատարել յուր սկեսրոջ խնդիրը, հավի փոխարեն մի շան լակոտ է մորթել, եփել և տվել նրան ուտելու։ Եվ երբ ինքն էլ է դարձել սկեսուր, մի օր խնդրել է յուր հարսին մի հավ մորթել, եփելու։ Սա մորթում է մի հավ, բայց երբ ձգում է կաթսան եփելու, տեսնում է, որ հավը շան լակոտ է դարձել։ Դա թափում է, մի ուրիշն է մորթում, բայց այս անգամ էլ նույն կերպարանափոխությունն է կատարվում։ Միամտորեն նա գնում և սա պատմում է

Ասացինք, որ պառավ կինը վայելում է բավական ազատություն. այսպես, մինչդեռ նորահարսը կամ մյուս հարսները հարևանի, իրենց հորանց տունն անգամ գնալու համար իրավունք պիտի խնդրեն իրենց սկեսրոջից[6], պառավ կինը համարձակ դուրս է գալիս տանից առանց մինից իրավունք խնդրելու, գնում ուր որ կամենում է; խոսում ամենի, նույնիսկ անծանոթների հետ, թեև, պետք է ասել, դարձյալ ամաչելով ու շալը երեսին քաշած։ Նրան ամեն տեղ հարգանքով են վերաբերվում, նրա անցնելիս հարսները ոտի են կանգնում, կանայք համբուրում են նրա ձեռքը, տղամարդիկ ակնածությամբ են վերաբերվում. եկեղեցու, ննջեցյալների տներում, հարսանիքներին առաջնակարգ տեղը, առաջին պատիվը նրանց են տալիս։

Պառավ կանայք հասարակական դեր էլ են կատարում. նշանավոր տոներին ժողովարարություն են անում և մատաղ կտրում, երաշտ ժամանակ լծվում են արորին և գետի հոսանքին հակառակ վարում, որ անձրև գա, որբ երեխաներին որդեգրում և խնամում են, բժշկությամբ են պարապում, տատմերություն են անում, աչք տված ներին աղոթում, վախ բռնում, կուռ չափում, չոփ հանում և այլն։

Որբ աղջկա դրությունը. Գյուղերում որբ աղջկա դրությունը ծնող ունեցողներից շատ չի տարբերվում. սովորաբար մի մոտիկ կամ հեռավոր ազգական և կամ մի կողմնակի մարդ ուրախությամբ վերցնում է նրան յուր մոտ պահելու, որովհետև աղջկա աշխատանքը ավելի է արժևորում, քան նրա ապրուստը, մանավանդ որ նահապետական մեծ գերդաստանի մեջ մի աղջկա կերածը երբեք նկատելի չի լինում, բայց այդպիսի գերդաստանները միշտ աշխատող ձեռքերի կարիք են ունենում։

սկեսրոջը, և սա մտաբերելով յուր արածը, պատասխանում է. «Ոչինչ, բեր, իմ բերածն է, պիտի ուտեմ»։

[6] Պատմում են, թե մի հարս սաստիկ ցանկացել է գնալ ծնողներին տեսության, որ ապրելիս են եղել մոտակա գյուղում։ Սկեսուրը նրան պատասխանել է թե՝ երբ շորերդ մաշես, թույլ կտամ, որ քեզ տանեն։ Հարսը տանում շորերը փշերի, ծառերի է գցում, շուտով մաշում և կրկին թույլտվություն խնդրում։ Սկեսուրը պատասխանում է թե՝ սպասիր, երբ որ քոշերդ մաշես, կտանենք։ Սա էլ վերցնում է ծածուկ քոշերը գնում դռան տակը և այնքան տանում-բերում, որ մաշվում են։ Եվ երբ երրորդ անգամ թույլտվություն է խնդրում, սկեսուրը բարկանում է վրան և ասում. երբ որ դու մաշվես, այն ժամանակ կտանենք։ Եղեռ հարսն առանձնացել է լաց լինելու և անիծել է սկեսրոջը. «Հունց որ դու ինձ հորանց տան հարսաթ (կարոտ) թողիր, դու էլ արքայությանը հարսաթ մնաս»։

Եվ երբ աղջիկը արբունքի է հասնում, փեսացուից ստացած գրամով մի երկու ձեռք հանդերձ են կարում և պսակում, առանց մի որևէ ծախսի տակ ընկնելու։ Եվ որովհետև գերդաստանի մեջ առանձին խնամք, առանձին դաստիարակություն չի տրվում աղջիկներին, ուստի և որբ աղջկան հարաղատներից տարբերելու մի առանձին հանգամանք չկա։ Միայն մի բան նկատելի է, որ որբ աղջկան մյուսներից ավելի են աշխատեցնում, նրա կարիքներին ավելի պակաս կերպով են բավականություն տալիս։ Եվ այսպես, կարող ենք ասել, որ այս գավառում չկա մի գյուղ, ուր որբ աղջիկը քաղցից և անհոգատարությունից մեռներ։

Պատահում է նաև, որ որբ աղջկան գյուղից բերում են քաղաք և մինի մոտ ծառայության տալիս այն պայմանով, որ նա առանց ռոճկի, «մի փոր հացով» ծառայի, և երբ նա արբունքի հասնի, նրան իբր այնքան տարիների ծառայության վարձ՝ մի թեթև օժիտ պատրաստեն և հարսանիքի ծախսը հոգան։ Այսպիսի դեպքերում աշխատում են որքան կարելի է հետաձգել ամուսնությունը, ավելի երկար նրան ծառայեցնելու նպատակով։

Այրի կնոջ դրությունը. Եթե դեռևս պսակի խորհուրդը չկատարած նշանած աղջիկը կորցնում է յուր փեսացուին, նրան սովորաբար պսակում են այդ մեռած փեսացուի եղբայրներից, իսկ եթե եղբայր չունի՝ մոտիկ ազգականներից մեկի հետ։

Երբ դեռևս որդի չունեցած է այրիանում, մեծ մասամբ հավաքում է յուր տարած օժիտը և վերադառնում հորանց տուն, պսակվում մի ուրիշի հետ։ Ավելի պարկեշտ և գովելի են համարվում այն այրիները, որոնք մնում են սկեսրանց տանը մինչև ամուսնանալը։ Առհասարակ հորանց տուն վերադառնալը սկեսրանց համար ամոթալի է համարվում։

Եթե երեխաներ ունին, անշուշտ տպրում են սկեսրանց տանը. ոմանք թողնում որդիներին և կրկին ամուսնանում, ոմանք էլ մնում և իրենց որդիներին խնամում։ Առհասարակ այրի կնոջ դրությունը գերդաստանի մեջ բավական ծանր է. թե՛ մյուս հարսները և թե՛ տեգերը փոքր-ինչ խեթ աչքով են նայում նրա և մանավանդ որդիների վրա։ Երբեմն լեվիրատ է ծածկաբար տեղի ունենում, կասկածանք, նախանձ առաջ գալիս և վրդովում գերդաստանի խաղաղությունը։

Այրի կինը վերստին ամուսնանալիս թեև ձևականապես հնթարկվում է սկեսրոջ իշխանության, թեև նրանից են խնդրում նրա ձեռքը, բայց իսկապես նա միանգամայն ազատ է ընտրելու ում որ կամենա։

Այսպես ուրեմն, նահապետական գերդաստանը այնուամենայնիվ որոշ չափով ապահովում է և պաշտպանում այրի կնոջը, մինչդեռ ընտանիքը շատ անմխիթար դրության մեջ է թողնում նրան։ Ամուսնու մահից հետո յուր երեխաներով միայնակ մնացած այրին չի կարող որդիներին թողնել և վերստին ամուսնանալ, այստեղ ոչ մի բաժան եղբայր, հայր հանձն չի առնի պահել պահպանել նրա երեխաներին. նա անճարացած պիտի նստի խնամելու յուր երեխաներին և կամ աշխատի մի այնպիսի ամուսին գտնել, որը համաձայներ ընդունել և յուր երեխաներին, իսկ այսպիսին շատ դժվար է ճարվում։

Գերդաստանի մեջ այրի կինը պարտավորված չէ կանացի աշխատանքների սահմաններից դուրս գալ, ինչ որ յուր ամուսինը պիտի աներ, այժմ անում է տեղը, իսկ ընտանիքի մեջ ամեն բան ծանրանում է կնոջ վրին. նա պիտք է մշակներ վարձն այգին մշակելու, արտը ցանելու, հնձելու, նա ինքն է գնալու նրանց վրա հսկելու համար. արտին կամ այգուն մի վնաս հասնելիս նա ինքը պիտի գնա տանուտերին գանգատվելու. պարտապանից նա ինքը փողը պիտի պահանջի և եթե չտա, ինքը պիտի գնա դատաստան՝ գանգատվելու, և որովհետև պարտապանները գիտեն, որ այդ ծանր է կնոջ համար, ուստի և ձգձգում են և չեն վճարում։ Հարկահավաքը գիտենալով, որ նա մի անպաշտպան կին է, մի քիչ ավելի է պահանջում, այն բաներում, ուր առաջ ամուսնու միջամտությամբ կամ նրա պատվի համար զիջողություն էր անում, այժմ այլևս չեն անում։ Այրի կինը ինքը ստիպված է միջամտել, խնդրել, պահանջել, բայց նրա պահանջները մնում են անկատար, և դեռ նրան նախատում էլ են և անզգամ կոչում։

Երբ ահագին դժվարությամբ, դառն արցունքներով մեծացնում է այրի կինը յուր որդիներին, հարսներ բերում, նրա դրությունը դարձյալ ոչինչով չի լավանում. «անգլուխ» պառավին նույնիսկ որդիները շատ չեն պատվում, նրան շատ չեն լսում. չափահաս, ավագ որդին դառնում է տան մեծ, ձգտում է տան իշխանությունը մոր ձեռքից խլել և նույնիսկ նրան էլ իրեն ստորադրել։ Մայրը, որ մանկությունից արդեն վարժված է ենթարկվելու, հպատակվելու, հեշտությամբ ստորադրվում է նրան և կամաց-կամաց նա քաշվում։ Հարսները, իրենց ամուսինների բարձրանալով զոհոզացած, իրենք էլ մյուս կողմից աշխատում են տան ներքին կառավարությունն իրենց ձեռքն ամփոփել. այստեղ այրի կինը ավելի խստությամբ է ընդդիմադրում, սակայն զրկված լինելով յուր իշխանության նենգուկից՝ ամուսնուց, չի կարողանում դիմադրել, և երկար անբավականություններից և կռիվներից հետո առաջ են գալիս բաժանումներ, ամուսնացածները առանձնանում են, իսկ մայր-այրին մնում է յուր չամուսնացած որդիների մոտ կամ մի հարսի մոտից մյուսի մոտ անցնում, երբ նրանք ծննդկան կամ հիվանդ են լինում։ Այս ցավալի դրությունն ի նկատի առնելով կանայք ցանկանում և խնդրում են աստծուց, որ իրենք իրենց ամուսիններից առաջ մեռնեն, նրանց ձեռքով «առոք փառոք հողը դրվեն»։

Կնոջ դրությունը հակիրճ և շատ ավելի լավ որոշում է ժողովրդական բանաստեղծությունը, այսպես.

Հորն ընկա՝ խոր հորն ընկա.
Մորն ընկա՝ դոնեղուս մուրն[2] ընկա.
Աղբորն ընկա՝ աղբահորն ընկա.
Քուրն ընկա՝ ջուրն ընկա.
Մարդն ընկա, մարդն ընկա՝
Շղթաթախտ[3] վարդն ընկա։

Ազգակցական բառեր. *Մեծ հորը ասում են պապի*
Մեծ մորը՝ տատի,
Հորը՝ ա հեր, ապեր, ամի
Հորեղբորը՝ ամի, ապեր
Հորեղբոր կնոջը՝ մեծ ազիզ, ազի
Մորեղբորը՝ դայի
Մորեղբոր կնոջը՝ քռակին
Հորաքրոջը՝ հրաքիր, բիբի
Մորաքրոջը՝ մորաքիր, բիբի
Քրոջը՝ աքեր, պաճի
Եղբորը՝ ախպեր, ապեր
Կնքահորը՝ պելի

---

[1] Երկու հարս իրենց այրի սկեսրոջը դնում են մի կարպետի մեջ և ծայրերից բռնած այնքան պտտեպտտ տալիս, որ խեղճ կնոջ ուշը գնում է և ձայնը կտրվում։ Այս միջոցին հարսները պատկեցնում են նրան անկողնու մեջ և կանչում իրենց ամուսիններին, նկարագրելով նրանց, իբր նա հանկարծակի հիվանդացել է։ Երբ որդիները մի քիչ ուշքի են բերում մորը և հարցնում նրան, թե ինչ է եղել, նա չկարողանալով խոսել, շարժում է գլուխը դեպի յուր երկու կողմը կանգնած հարսները և ր, ր անում։ Որդիները բան չհասկանալով, հարսներին են դիմում բացատրելու, և սրանք ասում են, թե նա յուր ունեցած զարերը նոքու հարսներին է կտակում։

[2] Մուրալ։

[3] Ցողալից։

Կնքահորը՝ խրշախպեր
Կնքամորը՝ սընամեր
Կնքահոր հորը՝ սանահեր
Կնքահոր կնոջը՝ պեյակին
Խնամոնք. Ամուսնու հորը՝ պատրոն
մորը՝ սկեսուր
եղբորը՝ տեգր
քրոջը՝ տալ
եղբորը կնոջը՝ տեգերակին
Կնոջ հորը՝ հաներ
մորը՝ զանքունչ, հետը խոսելիս՝ ա մեր, զիղի, զիզի, ազի
եղբորը՝ հանոր տղա
քրոջը՝ քենի
քրոջ մարդուն՝ քնակալ

ԲԱՂԱՆԻՍ

Գյուղում բոլորովին բաղանիսներ չկան, իսկ քաղաքում կան մի քանիսը, որոնցից ամենալավը եկեղեցապատկանն է։ Սրանց ջուրը հանքային չէ, այլ տաքացնում են։

Գյուղերում լողանում են ձմեռը տանը, իսկ ամառը՝ բակում, կապերտներով և սավաններով մի անկյուն առանձնացնելով։

Սովորաբար կանայք լողանում են ամեն շաբաթ օր և կամ գըլխներն ու ոտներն են լվանում, իսկ աղամարդիկ և պառավները տարին միայն մի քանի անգամ, մեկ-մեկ էլ գլուխներն ու ոտները լվանալ տալիս։ Թե՛ լողանալիս և թե՛ լվացվելիս առավելապես գործ են ածում ճարպի (փիի) սապոն, իսկ աղքատները՝ չողան (salicornia). սակայն այս չողանը ավելի գործ են ածում լվացքի մեջ։

Լողանալիս սպիտակեղենը փոխում են և հանածը անմիջապես լվանում։

Առհասարակ երեխաներին լողացնում են մայրերը և տատերը։ Հարսներին՝ աղջիկները և կրտսեր հարսները ավագության կարգով, այսպես՝ առաջին հարսին լողացնում է երկրորդ հարսը, երկրորդին երրորդը և այլն, իսկ նորահարսին՝ տան աղջիկը։ Սկեսուրին լողացնում են հարսները, իսկ սկեսուրը երբեք չի լողացնում հարսին, ամոթ համարելով այդ։

Լողացնողը իսկույն լողացողի շորերն էլ լվանում է նրա լողացած ջրի մեջ և ապա ինքը լողանում, կանչելով իրեն լողացնողին։

Կանայք լողանալիս նախ մի մեծ կաթսայով ջուր են տաքացնում, ապա տաշտը և սրա մոտ մի երկրորդ կաթսա դնում, առաջին կաթսայից ջուրը վերցնում, լցնում երկրորդ կաթսան, սառը ջուր ավելացնում, այնպես որ բարեխառն լինի, ապա գլուխը քանդում, երեսին խաչ հանում, «Հիսուս Քրիստոս աստված, դու շար աչքե թափեսա» ասում և սկսում գլուխը լվալ։ Մի քանի անգամ սապնելուց հետո գլխին քսում են կամ քացախ, մեջը մի քիչ յուղ հալած, կամ մածուն և կամ ձվի լավ հարած դեղնուց։ Հետո հանում են հանդերձները, նստում տաշտի մեջ և լողանում։ Լողացնողը ջուր է ածում, սապոնում, լֆում և օգնում հագնվելու։

Քաղաքում ստորին և աղքատ դասակարգը նույնպես տանն է լողանում, իսկ փոքր-ինչ հարուստները երկու շաբաթը մի անգամ կամ ավելի ուշ գնում են բաղանիս։ Գանձակում, ինչպես և ուրիշ դավառական քաղաքներում, բաղանիսը կանանց կլուբ կարելի է համարել։ Այստեղ հավաքվում է կանանց ահագին բազմություն և միևնույն, ընդհանուր բաժնում լողանում 4—5 ժամ շարունակ։ Այս միջոցում միմյանց տեսնում են, միմյանց կողք նստում, երկար խոսակցում, նորությունները միմյանց հայտնում, սրան-նրան բամբասում։ Բայց բաղանիսը մի ուրիշ դեր էլ է կատարում. մեծ մասամբ այստեղ են ընտրվում հարսնացուները. երիտասարդների մայրերը շուտ-շուտ գնում են բաղանիս, դիտում, քննում այս և այն աղջկան, որ տեսնեն, թե մարմնական որևէ պակասություն չունի՞։ Բաղանիսում ծառայող լողացնող կանայք առաջինն են, որոնց դիմում են երիտասարդների մայրերը տեղեկություն առնելու աղջիկների կազմվածքի և բնավորության մասին։

ԿԵՐԱԿՈՒՐ ԵՎ ԽՄԻՉՔ

Այս գավառի հայ գյուղացիների սնունդը կազմում են գլխավորապես բուսեղենն ու կաթնեղենը, մսեղենը շատ փոքր մասն է բռնում։ Բացի մի քանի մեծ և կենտրոնական գյուղերից, ոչ մի գյուղում հատուկ մսավաճառ չկա, և հատկապես ծախելու համար կենդանիներ չեն մորթում։ Երբեմն միայն, երբ մինի եզը կամ ոչխարը վնասվում կամ մի որևէ հիվանդություն ստանալով անպետքանում կամ սատկելու վտանգին է ենթարկվում, գյուղացին մորմոքած սրտով մորթում

է և մի ծառի ճյուղից քարշ տալով ձայն տալիս դյուղին, որ դան միս առնեն։ Այս ժամանակ ամբողջ գյուղը ցնծում է և մի տեսակ կենդանություն, շարժում ստանում։ Ամեն կողմից խմբվում են մսավաճառի շուրջը և հերթի շսպասելով, ահագին աղմուկ բարձրացնում։ Թռչուններ, ինչպես՝ հավ, բադ, հնդկահավ, թեև պահում են, և այն էլ բավական մեծ քանակությամբ, բայց հազիվ է պատահում, որ մորթեն և ուտեն։ Մինչև մարդը չհիվանդանա և կամ հավը սատկելու չինի, հավով չորպա (ապուր) չի եփվիլ։ Ձկներ ևս քիչ են գործածվում որովհետև գավառում մեծ լճեր և գետեր չինելու պատճառով, շատ չկան։

Գյուղացին մսով կշտանում է առավելապես մատաղ անելիս. ծանր աշխատանքից ազատված, նա բարձրանում է մի որևէ ուխտատեղի և ազատ, թարմ օդում մորթում մի գառը կամ մի ոչխար և կամ գոնե մի աքաղաղ, եփում, խորովում, կուշտ ուտում, մի քիչ էլ գինի խմում և ապա կրկին ետ վերադառնում, մի գեղեցիկ զբոսանք կատարելով։ Երկար, ծանր աշխատանքներից և վատ սննդառությունից հետո այսպիսի մի զբոսանք և մանավանդ այսպիսի մի սննդարար սեղան, միացած հուսո և երախտագիտության հավատքի հետ, միանգամայն լավ ազդեցություն են անում գյուղացու թե հոգեկան և թե օրգանական կյանքի վրա։

Բուսեղենից ամենից ավելի և անհամեմատ մեծ քանակությամբ գործ են ածում հացը, որ պատրաստում են ցորենից, գարուց, կարտոֆիլից և եգիպտացորենից։ Բանջարեղենը այնքան շատ չի գործածվում, որովհետև ընդհանրացած սովորություն չէ դարձած բանջարանոցներ պահել։ Ընդհակառակը, մրգեղենը շատ մեծ քանակությամբ է սպառվում։ Ամառվա սննդի մեծագույն մասը մրգեղենն է կազմում։ Մի կտոր հաց դնելով թևի տակ, կանայք և տղաները առավոտ շատ վաղ գնում են այգի և երեկոյան վերադառնում։ Թութ, կեռաս, խնձոր, տանձ և մանավանդ խաղող միևնույն ցամաք հացի հետ զանազանակերպում են սրանց պարզունակ սեղանը։

Կաթնեղենից պանիրը ունևոր տներում անբաժան է հացից։ Միշտ պանրով ու հացով սկսում, պանիր հացով վերջացնում են։ Մի ամբողջ կամ կես լավաշի մեջ պանիր շարելով ոլորում են և մի ահագին բրդում շինելով, երկու ձեռքով բռնում և այտերը ուռեցրած՝ ուտելով դործերին գնում։ Ոչ պակաս գործածական է նաև մածունը, որ ոչ միայն ճշտացնում, այլև տապից հովացնում է, երբ ջրխնում են (ջրով խառնում) և խմում։ Կարագը, միացած մեղրի հետ, հյուրի կամ հարսնևորների բաժին է ընկնում։ Իսկ յուղը մեծ մասամբ վաճառ է հանվում և մեծ խնայողությամբ գործածվում։

Մեղրը պաս օրերին գալիս է քաղցրացնելու սոխի ահագին կտորներով համեմված լորու թողած համը։

Գյուղացիներն ընդհանրապես շատակեր են, իսկ սրանց մեջ քահանաները՝ անկուշտ։ Ժողովրդական առակն ասում է, թե մի գյուղացու այգի երկու քահանա և յոթը գոմեշ էին մտել և ուտում էին։ Երբ հարցրին գյուղացուն, թե որո՞նց դուրս հանեն այգուց, քահանաների՞ն, թե գոմեշներին, նա պատասխանեց. «Եթե ուզում եք, որ տունս չավրի, հեռացրեք քահանաներին, որովհետև գոմեշները կկշտանան և կդադարեն ուտելուց, իսկ քահանաները անվերջ պիտի ուտեն»։

Գյուղացիներն օրական չորս անգամ են հաց ուտում. առավոտյան, սովորաբար հաց ու պանիր կամ միայն ցամաք հաց. կեսօրին՝ մի, երբեմն և երկու տեսակ կերակուր, երեկոյան մոտ, ժամը 4-ին՝ դարձյալ պանիր հաց և երեկոյան՝ ժամը 7-ին նույն ճաշվա կերակուրները։ Տղամարդիկ ճաշում են առանձին, կանայք՝ առանձին, և մինչև որ տղամարդիկ ճաշից վեր չկենան, կանայք չեն նստի հաց ուտելու։ Սակայն սա միայն նահապետական տներում, մյուսներում ամեն կերպ էլ պատահում է։ Կերակուրը մատուցում են մի ամանի մեջ ածած, և բոլորը սկսում են նրա միջից ուտել։ Սակայն այժմ շատ տներ սկսել են յուրաքանչյուրին առանձին-առանձին ամանով մատուցել։ Ճաշի ժամանակ շատ քիչ են խոսում, որովհետև ամեն մեկը աշխատում է մի քանի պատառ մյուսից ավելի ուտել։ Երբ միս է լինում կերակուրի մեջ, ավելի ճարպիկները մինը մյուսի ետևից վերցնում են կտորները և մի քանի տեղից կրծելուց հետո վայր դնում իրենց առաջը, և երբ վերջանում է միսը, կրկին մեկ-մեկ վերցնում են այդ միևնույն կտորները և կարգին կրծում, հաստատ համոզված լինելով, որ այս անգամ մոտինը չի խլի նրա պատառները, որովհետև ինքն արդեն մի անգամ կրծել է։

Հյուր եկած միջոցին չորս, հինգ, երբեմն էլ վեց տեսակ կերակուրներ են պատրաստում և ամեն կերպ ստիպում են հյուրին, որ շատ ուտի։

Պատառաքաղի և անձեռոցիկի գործածությունը հետզհետե մտնում է։

Խմիչքներից թեյը հետզհետե ընդհանրանում է։ Ունևոր տներում արդեն առավոտ երեկո խմում են թեյ, միայն կծովի։ Պաս օրերին

իրենց թույլ են տալիս, այն էլ տան ոչ բոլոր անդամներին, դցած խմել՝ հացի հետ։ Չքավոր տներում թեյը պատրաստվում է հյուր եկած միջոցին, մի չայնիկի մեջ ջուր եռացնելով։ Իսկ ունևոր տները ինքնաեռ ունենում են։ Չքավոր ընտանիքները թեյի փոխարեն գործ են ածում աթրի բույսի տերևները, ոմանք էլ՝ ուրիշ խոտեր։

Կաթ սովորաբար շատ չեն գործածում։

Ոգելից խմիչքներից սաստիկ գործածվում է գինին, որ գավառի արդյունաբերության գլխավոր բերքերից մեկն է, և օղին։ Ոչ մի ուրախություն, հարսանիք, կնունք, ոչ մի տխրություն, թաղում չի անցնում առանց գինու և օղու։ Սովորաբար առաջին բաժակը տանտերն է խմում, երկար բարեմաղթություններ անելով։ Մինևույն բաժակը կամ բաժակները ձեռքից ձեռք անցնելով քավում են համարյա բոլորի շերթունքներին։ Երբ խմիչքները մատուցանում են, վերցնողը նախ թեթևությամբ խփում է մատուցողի ձեռին և «լավ ձեռք է» ասելով վերցնում, երկար բարեմաղթություններ անում և խմում։ Անմիջապես, զանազան կողմերից «անուշ» են ասում, և սա գլուխ տալով, «անուշ կյանք» է պատասխանում։

Սովորաբար կերակուրները պատրաստում են իրենք՝ տանտիկինները, սկեռուրը կամ ավագ հարսը և խոհարար կամ խոհարարուհի չեն վարձվում գյուղական ամենահարուստ տներում անգամ։ Նույնն է գրեթե և քաղաքում ստորին և միջին դասակարգերում։ Միայն շատ հարուստ տներում երևում են առանձին խոհարարներ կամ խոհարարուհիներ։

Հարսանիքի և թաղման ժամանակ տրված ճաշերի համար կանչվում են գյուղերում հայտնի կերակուր եփող կանայք, որոնք թուրքերեն բառով «քեչվանի»՝ խոհարար են կոչվում։ Հացն էլ իրենք՝ տանտիկիններն են թխում, միայն վերոհիշյալ միջոցներին կանչում են կամ բարեկամ և կամ աղքատ կանանց իրենց օգնելու։ Ահա գյուղացիների ամենագործածական ուտելիքները.

Բուսեղեն. Կարտոֆիլով հաց. Կարտոֆիլը լվանում են և լցնում ջրով լի կաթսայի մեջ եփում, ապա քավկիրով հանում, դնում են թյաքնի (փայտե խոր սկուտեղ) մեջ և «կարտոֆյա թաքի» կոչված փայտով, որի մի ծայրը գունդ է, իսկ մյուսը երկար, թակում, ապա վերցնում են և ածում մի ուրիշ կաթսայով եռացրած ջրի մեջ. շերեփով խառնում, փլավքամիչով քամում և շերեփով այնքան ճմլում, որ կարտոֆիլի մասերն անցնում են փլավքամիչի ծակերով, իսկ կեղևը մնում է փլավքամու վրա, որը և դեն են ածում, իսկ կարտոֆիլի անցկացրած մասի հետ ալյուր են խառնում, շաղախում և հաց թխում։

Սիմինտրով հաց. Սիմինտրը (եղիպտացորենը) շորացնում են, խախալով մաղում, ջրաղացում աղում և ալյուրի հացի նման թխում պյուլոր հաց, այսինքն կլոր, հասա հացեր, որովհետև շատ բարակ չի բացվում։

Պյաղարեն. Կտրոնի խմորի պես հունցելով խմորը, գնդում են, կլորաձև բաց անում, պատառաքաղով երեսը նախշում, երեսին ձու քսում, թոնրում թխում և ապա երեսին մեղր կամ շաքարաջուր քսում։

Քյաթա կամ պլիթ. Ալյուրը հունցում են մի քիչ թթխմորով («խաշ»). հացի խմորից ավելի սիենդ և թողնում մի քիչ թթվելու, ապա մի մեծ (մոտ 1/2 արշ. տրամ.) գավաթի մեջ պատրաստում են հեսը (հաս, խուս). յուղը առանց տաքացնելու ձգում են գավաթի մեջ և ձեռքով այնքան հարում, որ փրփրում է. այս ժամանակ մաղած ալյուր և ծեծած շաքար քիչ-քիչ ցանելով շաղախում են, մինչև որ ստացվում է փխրուն զանգված։ Սրանից հետո պատրաստված խմորը գնդում են, դրտնակով բարակ բանում, սա կոչվում է կլոր լոշ, ապա այս լոշի վրա դնում են հես, մի նոր լոշ դնում վրան, կրկին հես փռում, կրկին լոշ փռում և ապա մի անգամ էլ հես փռում և լոշերը կլորում, ճմլելով։ Հետո երկու կամ երեք կտոր անում, յուրաքանչյուրի ծայրերը ոլորում, դնում խոնչի վրա, տափակացնում, երեսը պատառաքաղով նախշում, ձու քսում և թխում։ Թոնրից հանելիս երեսին մեղր կամ շաքարաջուր են քսում։

Զեթով պլիթ. Պատրաստում են պաս օրերին, ինչպես ուտիսվա բլիթը, հեսը՝ ձեթով և շաքարով։

Կարոն. Մի քանի ֆունտ շաքար լուծելով եռացրած ջրի մեջ և շարմաղով քամելուց հետո լցնում են կաթի մեջ և սրանով շաղախում պյուրը՝ մի քանի տասնյակ ձու, թթխմոր, աղ, պղպեղ և ադվա[1] ավելացնելով։ Երբ խմորը թթվում է, գնդում են և բացում եռանկյունաձև, քառանկյունի, քառակուսի և այլ ձևերով, ապա խմորի երեսին յուղ քսելով, փայտե տիպով զանազան նախշեր են անում և ապա ձու քսում, խաշխաշ ցանում, պատառաքաղով ծակոտում դնում «տափ»-ի (հացատ) վրա և խփում թոնրի կողին, թխում։ Թոնրից հանելիս մեղր կամ շաքարաջուր են քսում երեսին։

Կուռաղ. Սանդի մեջ լցնելով ընկույզ, չարդած սոխ, քիշմիշ,

[1] Ադվան բաղկանում է գյուլ-դարչինից, դարչինից, կոճից և զիրայից։

աղ և պղպեղ, թակում են, ձեռքով ճմլում, հետո թանձր հունցած խմորը բաց անում, սրանից մի շերտ փռում, խմորի կեսը վրա բերում, եզրերը ճխտում, թոնրի շուրթը խփում, եփում։

Անում են առավելապես մեծ պասի երկուշաբթի, ավագ ուրբաթ օրերը, գերեզմանատուն տանելու։

Հալվա. Յուղը դաղում են, վրան մաղած ալյուր՝ լցնում և խառնում, և երբ կարմրում է, մի քիչ էլ մեղր են ավելացնում և կրկին խառնում, մինչև որ պնդում է։ Հետո լցնում են փոքրիկ սկուտեղների մեջ, երեսը հարթում, գդալի ծայրով կամ պատառաքաղով զանազան նախշեր անում, մի կտոր շաքար խրում մեջտեղում և խաչաձև չամիչ շարում։ Առավելապես ծննդյանների են նվեր տանում։

Խավիծ. Ուտեցնում են առավելապես ծննդյանների։ Մի քիչ ալյուր են մաղում, վրան սառը ջուր շաղ տալիս, մատներով տրորում, փոքրիկ, բրնձաչափ հատիկներ կազմում, ածում սոխատաձի վրա, խառնում, և երբ կարմրում է, մի գդալ էլ մեղր են ածում և մատուցանում։

Ծնեբակ. Ծնեբակը ընտրում են, մաքրում, լվանում, խաշում, հանում ձգում յուղի մեջ և մի քանի հարած ձու լցնում վրան։

Կարկաճ. Դգումը, կարկաճ, դնում են կրակին, երբ քիչ խանձվում է, կճպում են, ապա լվանում, կտրտում, կրկին լվանում, լցնում կաթսայի մեջ, մի քիչ ջուր ածում և եփում։ Եթե պասվա է՝ մանրած ընկույզ, թթու հուն կամ դամբուլ ավելացնում, իսկ եթե ուտիսուց՝ ջրի փոխարեն կաթ են ածում։

Ձկոամածուն. Հասած ղկեռը ածում են ջրի մեջ, եփ տալիս, մաղով քամում, կորիզները և կեղևը դեն ածում, փուշի անում՝ մի քիչ ալյուր ջրի մեջ խփում, ածում ղկեռաջրի վրա, աղ ավելացնում։ Ուտելիս ծեծած սխտոր են ավելացնում իրենց բաժինների վրա։

Շլանաշ. Ջուրը եռացնում են, բրինձը երեք անգամ լվանում, ածում են ջրի մեջ, աղ ցկում (բրինձը ջրից 4 անգամ քիչ պիտի լինի) և թողնում եփ գալու։ Մի ուրիշ կաթսայի մեջ ձեթ են ածում, սոխ ջարդում, և երբ կարմրում է, ածում են բրնձի վրա, մի քիչ խառնում, կաթսայի բերանը ծածկում և թողնում բոլորովին եփ գալու. վերցնելիս ցկում են պղպեղ և կոտորած գինձ։

Փրոֆ. Առավելապես ուտում են ծերունիները։

Եռացրած ջրի մեջ կոտորած սոխ և աղ են ածում, ալյուրը մաղում են մի սկուտեղի վրա, մի քիչ սառը ջուր շաղ տալիս, ապա մատներով ալյուրը շաղախում, բրնձի մեծության դնդիկներ պատրաստում, ածում առաջին կաթսայի մեջ և խառնում։

Ուտիսին յուղ են ավելացնում, պասին՝ ձեթ, մանրած ընկույզ։

Կոնշոլ. Յուղով կամ ձեթով սոխեռած են անում, մի քիչ ջուր ավելացնում, մի քիչ հաց բրդում, մի քանի ձու էլ հարում, ածում կաթսայի մեջ։

Պենճար. Ջհուներին շորեր կապած քաղում են պենճարը, որ չկծոտեն, հետո ընտրում են, մաքրում, դանակով կտրտում, խաշում, ջուրը քամում, աղ ցանում, յուղով կամ ձեթով տապակում։ Ուտիսին ձու էլ են կոտրում վրան։ Ոմանք էլ սխտորը մածնի մեջ խառնելով ածում են վրան։

Ավելուկ (միզուկ). Հյուսում շորացնում են և պահում։ Սրանից եփում են թթվավ միզուկ, աղցան և այլն։

Թթվավ միզուկ. Ավելուկը լվանում և խաշում են, հետո քավկիրով հանում, դնում են խոնջի մեջ, աղ ցանում և ծհանով (թաթակիշ) ծեծում, մի քիչ թթու լավաշ ձգում են ավելուկի ջրի մեջ, հետո այդ լավաշը հանում, դնում են մի ամանի մեջ, ցուրտ ջուր ածում, տրորում, հետո ածում ավելուկի ջրի մեջ, ապա մի բուռ ալյուր մի քիչ ջրի մեջ տրորում, ածում են նույն ավելուկի ջրի մեջ, թակած ավելուկը լցնում այս կաթսայի մեջ, թողնում եփ գալու, վերջը մի քիչ էլ ծեծած ընկույզ լցնում։

Ուտելիս ավելացնում են ծեծած սխտոր։

Աղցան. Ձեթով սոխեռած են անում և խաշած ու ծհանով ծեծած ավելուկը լցնում վրան, ապա տապակում. ուտելիս ծեծած սխտոր են ավելացնում։

Խաշիլ. Ցորենը սաճու վրա աղանձում են, փոխինդ դարձնում, հետո երկանքով աղում, ապա մաղում, մաղի մեջ մնացած խոշոր մասը ածում են ջրով լի կաթսայի մեջ, աղ ածում, եփում. երբ ջուրը քաշվում է, մաղված մանր փոխինձից մի քիչ էլ շաղ տալիս վրան, խառնում, վերցնում կրակից։ Հետո թան կամ հարած չորթան են ածում ամանի մեջ, խաշիլից ածում վրան, մեջտեղում փոքրիկ փոս անում և հալած յուղ ածում, ուտում։

Կորկոտի խաշիլ. Կորկոտը սանդում թակում են, փռում արևի տակ չորացնում, քամուն տալիս, որ թեփը գնա, մաքրվի։ Ապա երկանքով աղում, մաղում, լցնում ջրով լի կաթսան, եփում, երբ ջուրը քաշում է, աղ են ցանում և վերցնում են կրակից։ Մի քիչ ալյուր մաղում և շաղ տալիս կաթսայի մեջ, նորից եփ տալիս, մինչև որ նա պնդում է։ Նորից վերցնում, ածում ափսեները, մեջտեղ փոս անում, հալած յուղ ածում և ուտում։

Մ ո խ ո խ. Կորկոտը մաղում են, ածում ջրով լի կաթսան, քիչ եփ տալիս, թթխմորը տաք ջրում ճմրտում, ածում կաթսայի մեջ, խառնում, հետո լցնում են մի ամանի մեջ, 3—4 օր պահում, որ թթվի։ Ապա քիչ-քիչ ածում են կաթսայի մեջ, մի քիչ տաք ջուր ավելացնում, կըրկին եփում, հաց բրդում, սխտոր խառնում և ուտում։

Կ ա ր տ ո ֆ լ ա վ ն ա շ. Կարտոֆիլը խաշում են, երբ հովանում է, կճպում են, ճմրտում և ապա մի ուրիշ կաթսայի մեջ յուղ ածում, կոտորած սոխ ավելացնում, «սրդլրհեռիճ» անում, հետո սառը կամ տաք ջուր ածում և ճմլած կարտոֆիլը լցնում մեջը, աղ և պղպեղ ձգում, գինձ կոտորում։ Երբեմն էլ մի կամ մի քանի ձու հարում, ածում են մեջը։ Եթե պասվա է, յուղի փոխարեն ձեթ են գործածում։

Ղ ա ր ղ ա դ ա լ ի ն ա շ. Սիմինդրը երկանքով խոշոր աղում են, տեփրում, թեփը հանում (ածում են մի սկուտեղի մեջ, մի կողմից բռնած մյուս կողմը վեր են շարժում, սիմինդրը վեր է թռչում, այս միջոցին բարակ փչում են, թեփը թափվում է դուրս, իսկ սիմինդրը՝ սկուտեղի մեջ), ապա մաղում են, մաղի մեջ մնացած խոշոր մասերը լցնում ջրով լի կաթսայի մեջ, եփում, հետո վերցնում են կրակից, մաղված սիմինդրը լցնում մեջը և խառնում, ապա նորից կրակին դնում, աղ ածում, եփում, մինչև որ թանձրանում է։ Այս ժամանակ լցնում են ափսեները, մեջտեղը փոս անում, հալած յուղ լցնում և ուտում։

Լ ո ր ի ն ա շ. Լորին նախ լվանում են, հետո ածում կաթսան, ջուր լցնում և դնում կրակին եփելու։ Երբ մի քիչ կակղում է, աղ են ցանում, երբ եփվում է, քամում են, ձեռքով լորին ճմլում, վրան կտրտած սոխ, ընկույզ և մի քիչ թթու լավաշ ձգում, քամած ջուրը կրկին մեջն ածում, դնում կրակին, կրկին եփում, վերջը պղպեղ և մի քիչ կտրտված գինձ ցանում և վերցնում։

Լ ո ր ի – յ ա խ ն ի. Լորին եփելուց հետո քամում են, հատիկները վերցնում, վրան աղ, սոխ, պղպեղ ցանում, ուտում։

Լ ո ր ու տ ռ լ մ ա. Լորին երկանքով աղում են, լվանում, ջուրը քամում, ապա հում կարտոֆիլը կճպում են, լվանում, մանր կոտորում և խառնում լորու հետ, ավելացնելով կոտորած սոխ, աղ, պղպեղ և գինձ։ Ապա կաղամբի տերևների մեջ փաթաթում, դարսում կաթսայի մեջ, մի քիչ ջուր ածում և եփում։

Ք ո ր ա ն. Կանաչ լորին ծայրերից կտրում են, հետո մանր կտրում, լցնում կաթսան, ջուր ավելացնում և դնում եփվելու։ Մի քիչ հետո ձգում են աղ, պղպեղ, կոտորած սոխ։ Ապա վերցնում, փլավքամով քամում են, մի քիչ յուղ ածում կաթսայի մեջ, կոտորած սոխ լցնում վրան, և երբ սոխը կարմրում է, լցնում են լորին և կաթսայի բերանը փակում։ Հետո մի քանի ձու կոտրատում են մի ամանի մեջ, հարում և ածում լորու երեսին, նորից կաթսան ծածկում և թողնում, որ լավ եփվի։ Ուտելիս մի քիչ թթված սխտոր ածում են մածունի մեջ, լավ խառնում և մի գդալ ավելացնելով լորու վրա՝ ուտում։

Փ լ ա վ. Ջուրը եռացնում են, սրա 1/3-ի չափով բրինձ լվանում, ածում են ջրի մեջ, դնում եփի, ապա աղ ցանում, երբ բրինձը հատհատ որոշվում է, փլավքամով քամում են, կաթսան լվանում, մի քիչ արդար յուղ ածում, կամ ձու հարում ածում կամ լավաշ ձգում, ապա քամած բրինձը լցնում վրան, մի քիչ ցուրտ ջուր շաղ տալիս, պղպեղ ցանում և խուփը ծածկում, դնում մարմանդ կրակի վրա, որ «դամը» գա. հետո մի քիչ էլ հալած յուղ շաղ տալիս վրան ու տանում ուտում։

Ջ ա մ շ ո վ փ լ ա վ. Ջամիշը մաքրում, խորմի, արյուկի հետ միասին լցնում են հալած յուղի մեջ, մի քիչ կարմրացնում և ածում են փլավի վրա։ Այսպիսի փլավի մեջ ձու կամ լավաշ դրած չեն լինում։

Թ ր վ ա վ փ լ ա վ. Հունը կորիզից աղատելով չորացնում են, յուղի մեջ կարմրացնում, լցնում փլավի վրա։

Հ ա վ ո վ փ լ ա վ. Սոխ, շամիշ, բրինձ, հավի կտորած քարճիկը յուղում տապակում են, մի քիչ աղ, պղպեղ ցանում, մաքրած հավի կուրծքը ճռում, լցնում են մեջը, կարում, ասեղով ծակծակոտում փորոտիքը, ջրով լի կաթսայի մեջ ձգում եփում, և հետո հանում, փլավի վրա դնում։

Ոմանք էլ շամիշի փոխարեն ա խ տ ա են ածում (չորացրած, անկորիզ հուն)։

Ք ա շ ո վ ի փ լ ա վ. Յուղը հալում, կոտորած սոխ ածում, կարմրեցնում, երեք չափ ցուրտ ջուր ավելացնում, եռացնում, մի չափ բրինձ լցնում, աղ ցանում, մի քիչ խառնում, հետո վերցնում, դնում մի կողմ, որ դամը գա։

Կ ա թ ն ե ղ ե ն. Թ ա ն. Խնոցին հարելուց և կարագը վերցնելուց հետո Ֆանը ածում են մի տոպրակ, բերանը պինդ կապում, դնում են տաշտի մեջ մի քարի տակ։ Ջրային մասը հետզհետե տոպրակից դուրս է թորում, մնում է պինդ մասը։ Այս ժամանակ մի քանի ձու են կոտրում սրա վրա, աղ ցանում և փոքրիկ գնդեր արած դնում արևի տակ չորանալու։ Այսպես չորացած պահում են այս «չորաթանները» մինչև մի տարի։

Չորթանով եփում են հրուածած, քիլեկյոշ, թանավ։

Հրուածածը. Եփելիս չորթանը ձգում են մի գավաթի մեջ, ջուր ածում, հարում և ջուրը լցնում մի կաթսայի մեջ, հետո կրկին ջուր ավելացնում, կրկին հարում, լցնում կաթսան, ապա դնում կրակին մի քիչ կորկոտ կամ բրինձ ավելացնում, մի բուռ ալյուր էլ հարում, «փուշի» անում, ածում են, մի ձու էլ կոտրում, խառնում և թողնում եփ գալու։ Վերցնելիս կոտորած դաղձ են ավելացնում։

Քիլեկյոշ. Չորթանը ջրով հարում, ածում են կաթսան, դնում կրակին և շերեփով խառնում։ Երբ եփը գալիս է, կոտորած հաց են լցնում, մի քիչ եփելուց հետո վերցնում, ածում ամանները, թակած սխտոր, մի մի գդալ հալած յուղ ավելացնում և ուտում։

Կաթնավ-ճաշ. Մի չափ կաթ, երկու չափ ջուր խառնում, եփ են տալիս, մի չափ մաքրած և երեք անգամ լվացած բրինձ ածում, մի քիչ էլ աղ ցանում և թողնում, որ եփ գա։

Մսեղեն. Բուղլամի ֆյաղաղ. Յուղոտ միսը կտրտում, ածում են կաթսայի մեջ, կտրտված սոխ, աղ, պղպեղ ածում, կաթսայի բերանը ծածկում, դնում թոնիրը կորկոտի կաթսայի վրա։ Սովորաբար եփում են կորկոտի հետ։

Խաշու. Միսը կոտորում են, լվանում և ածում ջրով լի մի կաթսա, եփում, քյափը քաշում, հետո միսը դուրս տալիս, ջուրը քամում, որպեսզի կեղտոտ մասերը տակը մնա, ապա ջրի երեսից յուղը քաշում, լցնում կաթսան, մանրացրած աղ ավելացնում, քիչ հետո մսերը ածում մեջը (շատ անգամ ոսկորներ էլ են ձգում, որ հյութը դուրս տա, հետո այս միջոցին դուրս ձգում), ջուրը նորից քամելով ածում մսի վրա, թողնում մի քիչ եփ գալու, ապա աղած բրինձ են ածում կաթսան և խառնում։ Հետո առանձնապես չորացած դամբուլ կամ շլոր, կամ թթու լավաշ ճմլում, եփում են և լցնում խաշուի վրա, որ փոքր-ինչ թթվաշ լինի։ Երբ եփվում պրծնում է, մի քանի ձու կոտորում են մի ամանի մեջ, գդալով հարում, լցնում խաշուի վրա և անմիջապես կրակից վերցնում։

Մաավ շիլա. Միսը կոտորում, ածում են ջրով լի կաթսայի մեջ և դնում կրակին, եփում, քյափը քաշում, աղ ձգում, կրկին քյափը քաշում, կոտորած սոխ ածում, մաքրած և լվացած բրինձ ավելացնում և պղպեղ ցանում։

Ոչխարի խաշ կամ ֆյալլա-փաշա. Ոչխարի ոտները, գլուխը խանձում, քերում և մի քանի անգամ լվանում են։ Ապա մաքրում են ստամոքսը (թափան), լվանում, կտրատում և այս բոլորը լցնում են ջրով լի կաթսայի մեջ, երբեմն էլ մի քանի կտոր դմակ ավելացնում և թողնում եփ գալու։ Ապա աղ են ավելացնում։ Ուտելուց առաջ գլուխը կոտրատում են և ուղեղը առանձին մատուցանում։

Տվարի խաշ. Տավարի պճեղները կրակի վրա բռնած խանձում են, քերում, երեք անգամ տաք և մի անգամ ցուրտ ջրով լվանում, ապա կտրում, ձգում ջրով լի կաթսայի մեջ և դնում կրակին, երկար եփում, աղ ցանում։ Ուտելիս ծեծած սխտոր են ավելացնում։

Խուխուփ. Եփում են սովորաբար հավի կամ ոչխարի մսով։ Միսը կտրատում են, եթե ոչխարի է՝ մի քիչ դմակ, եթե հավի՝ մի քիչ յուղ գցում, խուփը ծածկում, թողնում են, որ մի քիչ կարմրի, հետո կտրտած սոխ, աղ և պղպեղ են ածում, թողնում ավելի կարմրելու, ապա մի քիչ տաք ջուր ավելացնում և մաքրած նռան հատիկներ լցնում։ Խուփը ծածկում են և թողնում եփվելու։

Կուրկուտ. Մի շերտ միս, մի շերտ կորկոտ են լցնում կաթսան, աղ ցանում, այսպես շարունակում են, մինչև որ կաթսայի 3/5 մասը լցվում է, ապա ջուր են ածում, կաթսայի բերանը ծածկում, լավ վառված թոնրի մեջ ջուր շաղ տալիս, որ կրակը անցնի, կսկարա դնում ու կորկոտի կաթսան թոկերով կապած իջեցնում թոնրի մեջ, դնում կսկարի վրա։ Սրա վրա դնում են երկրորդ կաթսան, ապա երրորդը, վերջինի վրա մի քար են դնում, որպեսզի շողուց կաթսայի խուփը չբարձրանա։ Ապա տախտակներով ծածկում են թոնիրը և ցեխով ծեփում, այնպես որ ոչ մի տեղից շոգին դուրս չի գալիս։ Մածկում են նաև անկվածքը (սյունգու)։

Եթե կորկոտը քիչ է լինում, կաթսայի իսկի շուրջը պատում են խմորով և դնում կրակի վրա, եփ տալիս։

Քիվրա. Նոր մորթած տաք մսից կակուղ տեղը դնում են քիվթի-քարի վրա, որ մի տափարակ, ողորկ քար է և «քիվթիթաքիով» թակում։ Սա փայտե մուրճ է, գլխին մեխեր խփած, որ լավ թակի։ Մի քիչ հետո ավելացնում են մի քիչ բրինձ, մի քանի ձու, մի քիչ արդար յուղ, պղպեղ, աղ, գինձ և շարունակում թակել, մինչև որ միսը փրփրում է։ Հետո մի կաթսայով ջուր են եռացնում, շերեփով մի քիչ տաք ջուր վերցնում, մի բուռ միս վերցնում, դնում շերեփի վրա, կլորացնում և ձգում կաթսայի մեջ։ Այսպես բոլոր մսից կոլոլակներ են պատրաստում, թողնում եփ գա։ Երբեմն էլ մի ձվի դեղնուց են դնում կոլոլակի մեջ, որ հետը եփվի։ Երբ քիվթին եփվում է, հանում են և ջրի մեջ մի քիչ բրինձ ածում, աղ, պղպեղ ավելացնում, եփում և քիվթի հետ միասին ուտում։

Ֆիրա. Ոչխարի յուղալի միսը ծեծում են սաթուրով, ինչպես տոլմի համար, մի քանի գլուխ ծեծած սոխ, կինձ, ատվա, կորիզը հանած հուն, մի երկու ձվի դեղնուց ավելացնում, ճմլում, յուղի մեջ բովում, այնքան, որ միսը մերվի առանց կարմրելու։ Ապա ջրով, առանց թթխմորի, հունցած խմորը դնդում, բարակ բանում, մանը կտրատում, պատրաստած միսը ածում վրան, խմորի ծայրերը վրա բերում, եզրերը իրար կպցնում, ձգում եռացրած ջրի մեջ, եփում, հանում ջրից և կաթ կամ յուղ ավելացնելով վրան, ուտում։

Ղաբրմա. Միսը կտրատում, սոխ, աղ, պղպեղ լցնում, երբեմն էլ նուռ ճմլում, ածում են պուտուկների մեջ, բերանները «սիրեկում»՝ անասունների ստամոքսը մաքրում, աղում և չորացնում են, ապա դնում պուտուկների բերանին և պինդ կապում։ Եթե մտադիր են երկար պահելու, պուտուկը բերանքսիվայր են դնում։ Ուտելիս խորովում կամ եփում են։ Այսպիսով միսը թարմ է մնում։

Խախաշ. Փափուկ մսերը բարակ և երկար ձևով կտրատում են և արևի տակ կոխ տալիս, չորացնում և ուտում։

Ոմանք էլ սա իրը միս գործ են ածում դանազան կերակուրների մեջ։

Ակնեղեն. Ձուկ. Ձկան փորը մաքրում են, լվանում, եռացրած ջրի մեջ աղ լցնում, ապա ձուկը ձգում մեջը, եփում։ Ուտելիս քացախ են լցնում վրան։

Ձկալիաշու. Ձուկը եփում են, ջրին յուղ, ձու, քացախ ավելացնում, ձուկը առանձին, ջուրը առանձին ուտում։

Ձկների, ինչպես և խորոված ի հետ իրը գրգռիչ համեմունք գործ են ածում հետևյալ տեսակի շարաբները.

Նառ-շարաբ. Թթու նռան հատիկները կեղևից մաքրելով լցնում են մի կաթսայի մեջ, բերանը ամուր ծածկում, դնում կրակին, եռ տալիս, ապա լցնում են տոպրակի մեջ, քամում և ծորած հյութը կրկին եռացնում, մինչև թանձրանալը։

Հյուն (հուն)-շարաբ. Պատրաստում են նույն ձևով, միայն մի քիչ ջուր են ավելացնում՝ առաջին անգամ եփ տալիս։

Ղորաբբա. (Ժուռի՝ կիսահաս խաղողի շարաբ)։ Կիսահասուն խաղողը ճմլում են, հյութը եռացնում մինչև փոքր-ինչ թանձրանալը։ Գործ են ածում եփած և խորոված ձկնեղենի հետ և ջրալի կերակրի մեջ, քացախի փոխարեն։

Գանձակի գավառին առանձնահատուկ են ջերմը և իլ-յարասին (Bouton d'alepe, годовик). Աբիֆլեդայի՝ ասելով ջերմը դեռ XIII դարում այստեղ սաստիկ տարածված է եղել, և ինչպես երևում է, հետզհետե թուլանում է։ Իլ-յարասու սպին կրում է գրեթե ամեն մի գանձակեցի և կան գերդաստաններ, որոնք չորս-հինգ սերունդ հաջորդաբար զբաղվել են այդ հիվանդության բժշկությամբ։

Քաղաքում կան յոթը բժիշկ, բայց և ոչ մի հիվանդանոց և կամ բուժարան։ Ամբողջ գավառում միմիայն Ձեգամ և Գետաբեկ գյուղերում կան գյուղական բուժարաններ, առաջինը երկու, իսկ երկրորդը միայն մի բժշկով։ Թե որպիսի մեծ ծառայություն են մատուցում այսպիսի բուժարանները, երևում է նրանից, որ 1896 թ. դիմել են Ձեգամի բուժարանը 5340 հիվանդ, 1897-ին՝ 4114, իսկ 1898-ին՝ 9250։

Գյուղացիները զրկված լինելով բժշկի դիմելու հնարավորությունից, դիմում են գյուղական բժիշկ-կանանց, սափրիչներին, շրջիկ մոլլաների և մանավանդ գրբացների։ Գյուղական կին բժիշկները պլսավորապես տատամերներն են լինում։ Սրանք սովորաբար սերնդից սերունդ ավանդում են իրենց արվեստը և անձնական փորձառությամբ գտած միջոցները։ Սրանք շատ սիրալիր են դեպի հիվանդները, նստում են մոտները, երկար զրից անում, քաջալերում, հուսադրում։ Թեև մի քանի տեղական, վաղուց գոյություն ունեցող հիվանդություններ սրանք կարողանում են բժշկել, սակայն շատ անգամ էլ «ունքը ջինելու տեղ՝ աչքն են հանում»։ Այսպիսի անհաջող դեպքերը նրանց վարկը չեն ձգում, որովհետև, ինչպես իրենք պնդում են, և ժողովուրդն էլ հաստատում, առողջանալը կամ մեռնելը ճակատագրից է կախված։ Սրանցից ոմանք նաև «պորտը վեր քաշել» գիտեն, սա ոչ այլ ինչ է, եթե ոչ մասսաժ յուր նախնական գրության մեջ։ Այսպիսի կին բժիշկներից նշանավոր է գետաշենցի Թաքուն-բիբին, որ ոչ միայն իրենց, այլև շրջակա գյուղերում բժշկություն, տատամերություն և նույնիսկ մասսաժ է անում։

Գյուղական վիրաբույժները՝ սնղչիք, որ նույնպես հաջորդում են որդուց որդի, բավական հմտությամբ ուղղում են կոտրված ոսկրները, դանազան յախտեր ձգում և տախտակներ դնելով՝ փաթաթում, առողջացնում։ Սրանցից նշանավոր է գետաշենցի Սնղչի Հակոբը, որի յոթը

[1] D. de Montpéraux, Voyage autour du Caucase, IV, էջ. 112։

սերունդը վիրաբույժ է եղել։ Սրան մի մի անգամ նույնիսկ Գանձակ են հրավիրում կոտրվածներն ուղղելու։

Սափրիչներն առավելապես ատամնաբուժությամբ են պարապում. սովորաբար թելով կապում են ատամը և հանկարծ քաշում, և կամ ավելի հմուտները գործ են ածում ահագին ունելիներ։ Հանճարեղ սափրիչները նշանված երիտասարդի ատամը քաշելիս տանում նրա գլուխը նշանածի ծնկին են դնում, որ նրանով հափշտակված՝ չզգա ցավը։ Սափրիչները բժշկությամբ էլ են պարապում, և այս ժամանակ գրեթե միայն մի միջոց՝ արյունառություն գործ ածում։ Նրանք արյուն են առնում կամ ածելիով ծակելով ուսը, կամ տզրուկ դնելով ոտներին և կամ պուլիկ (банка) ամրացնելով մեջքին։

Մոլլաները և գրքացները առավելապես հմայիլներով և «գիր անելով» են բժշկություն անում։

Սակայն և այնպես, գյուղացիները բժշկվելու համար ամենից ավելի դիմում են սրբերին, ուխտ գնալով զանազան ուխտատեղիներ։ Հավատալով, որ հիվանդությունը տալիս է մի որևէ սուրբ, որին պատշաճ հարգանքը չէ մատուցված, հիվանդները աշխատում են գուշակել, թե այդ սուրբը, ո՞րը պիտի լինի և հատկապես նրան ուխտ գնալ, որովհետև մյուս սրբերը ի պատիվ այդ սրբի, չեն բժշկի նրա տված պատիժ-հիվանդությունը[2]։

Գրեթե ամեն գերդաստանի մեջ պառավները և ծերունիները գիտեն մի քանի սովորական հիվանդությունների բժշկության միջոցները և իրենք գործադրում են, և երբ նկատում են, որ իրենց միջոցները չեն օգնում, նոր դիմում են հեքիմներին, սափրիչներին, մոլլաներին, և երբ սրանք էլ ոչինչ չեն կարողանում անել, և հիվանդն արդեն անբուժելի է դառնում, նոր տանում են բժշկի մոտ։

Ոչ մի նախազգուշական միջոցի չեն դիմում, նույնիսկ Լրեխանեներից շատ շատերը ծաղկից չեն պատվաստվում, այսպես՝ ամբողջ գավառում (առանց քաղաքի) տարեկան միջին թվով միայն 750, իսկ քաղաքում՝ 550 երեխա են պատրաստում[3]։ Բացի սրանից, նույնիսկ վարակիչ հիվանդությունների ժամանակ այցելում են հիվանդներին, որոնք տան մեջ էլ առանձնացրած չեն լինում։ Հիվանդի բոլոր քմահաճությունները սրբությամբ կատարում են, տալիս են ուտելու, խմելու ինչ որ էլ ցանկանում է։ Ննջեցյալների շորերը առանց ախտահանության ենթարկելու գործածում են, հիվանդությունը մինչև չի ծանրանում, ուշադրություն չեն դարձնում և այլն։

Այս բոլորի թերի թողածը գալիս է լրացնելու զազրելի սնոտիապաշտությունը, այսպես օրինակ, երբ միևնույն տանից, անշուշտ ախտահանական միջոցների չդիմելու պատճառով, մի քանի մարդ իրար ետևից մեռնում է, կարծում են, թե առաջին մեռնողը «կենդանի» է թաղվել, և նա գալիս տանում է մյուսներին։ Այսպիսի դեպքերում տեսեք թե ինչ են անում.

Գետաշեն գյուղում Մարկոսենց Սուլթանը մեռնում է։ Լողացնելիս տեսնում են, որ տաք է, իսկույն «հասկանում են, որ չարը սիրտն է մտել բնակվել»։ Տանում թաղում են։ Մի քանի օրից հարսի եղբայրը Սահակը, որ 40 տարեկան կլիներ, երազումը տեսնում է Սուլթանին, որ իրեն ասել է, թե. «եկել եմ քեզ տանեմ»։ Սահակը հիվանդանում է և մի քանի օր շարունակ երազում տեսնում է Սուլթանին, որ կրկնում էր միևնույն խոսքը։ Ութ օրից վախճանվում է Սահակը։ Հետևյալ օրը Սահակի բոլորովին առողջ քույր Սհարը, 30 տարեկան կին, երազում տեսնում է, թե Սուլթանը եկել է և կամենում է իրեն էլ տանել։ Հետևյալ օրը նա էլ մեռնում է։ Մի երկու օրից մեռնում է նաև մի երեք տարեկան տղա։ Միևնույն ժամանակ հիվանդանում են Սուլթանի ամուսինը, տեղերը, եղբոր աղջիկները։ Կամենալով հաստատապես իմանալ, թե արդյոք այդքան հոգի Սուլթանի պատճառո՞վ մեռան և թե նա «կենդանի՞» է թե ոչ, մի ձի են տանում Սուլթանի գերեզմանի վրա, ննջեցյալի սրտին համապատասխանող տեղում մի թաշկինակ փռում, վրան գարի ածում և ձին մոտեցնում, որ ուտի։ Ձին բոլորովին չի ուտում, փռոցնում է և կամենում հեռանալ։ Սրանից հասկանում են, որ «Սուլթանը կենդանի է և այդքան մեռնողներին նա է տարել»։ Ուստի գիշերանց երկու տղամարդ և ընդհանրապես ննջեցյալ և մասնավորապես Սուլթանին լողացնող Թագուն-այանը գնում են, ննջեցյալի գերեզմանը քանդում։ Երբ մոտենում են դիակին, գարշելի հոտից զզված երկու տղամարդը թողնում են հեռանում, իսկ Թագուն-այան մտնում է գերեզմանի մեջ, ճղում Սուլթանի կուրծքը, սիրտը հանում և մի կտոր կտրում, վերցնում։ Հետո դուրս է գալիս գերեզմանից, կանչում է տղամարդկանց, ցախ և նավթ ածում Սուլթանի կրծքի վրա և կրակ տալիս։ Մի քիչ հետո գերեզմանը լցնում են հողով և սրտի կտորն առած դաղտագողի վերադառնում, բերում սիրտը ձգում ջրի մեջ, խառնում և տալիս հիվանդներին խմելու։ Թագուն-այան, որ

---

[2] Գուշակության ձևերը տե՛ս «Հավատքի» բաժնում։

[3] «Обзор Елисаветопольской губернии за 1894—98 гг. (приложение к всеподданнейшему отчету).

ինքը ինձ պատմեց այս, հավատացնում էր, թե անմիջապես բոլոր հիվանդներն առողջացան և ավելացրեց, թե սրտի այդ կտորը չորացրել, պահել են, այժմ երբ վախից հիվանդանում են, մի քիչ փոշիացնում, լցնում են ջրի մեջ, տալիս խմելու, և իբր անմիջապես լավանում են։

Մի այսպիսի դեպքի մասին պատմեցին ինձ նաև Փիփ գյուղում, ուր Թագուն-այանի գերը կատարել էր Տեր-Միքայելը։ Միայն սա ամբողջ սիրտը հանել, գերեզմանը ծածկել, վրան կրակ արել, սիրտը, բացի մի փոքրիկ կտորից, վառել և մոխիրը փչել, քամուն էր տվել։ Հետո սրտից ավելացած մասը թաղել էին օջախի մի անկյունում, իբր մի նվիրական բան։

Գնատաշենում Նվասարդանց Անուշի միակ միամյա որդին մեռնում է։ Մայրը հիվանդանում է և շարունակ կրկնում, թե երեխան կիշերը գալիս է և ուզում է իրեն տանել։ Գնում են, բաց անում գերեզմանը, ճղում սիրտը և վառում երեխային։ Բայց մայրը դարձյալ չի հանգստանում և այժմ էլ ասում է, թե մանկան ճկույթի մատն է իրեն երևվում և ասում. «եկել եմ քեզ տանեմ»։ Կրկին գնում են, բաց անում գերեզմանը, մաղում երեխայի աճյունը և միջից գտնում ճկույթը, վառում և նորից ծածկում։ Եվ միայն այժմ մայրը հանգստանում է և լավանում։

Բանանցիցի հարյուրամյա Մուսունց Մնացականը ասում է, թե մոտ երեսուն տարի առաջ այդպիսի մեռելին հանում էին գերեզմանից, մի քանի անգամ հրացան արձակում վրան, քաշ տալիս այս ու այն կողմ և նորից թաղում։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՂԵՐ

Իլ-յարասի. Այս միևնույն հիվանդությունը պատահում է Հալեպում, Բաղդադում, Թեհրանում, Սպահանում և հայտնի է Souton d'Alep, Հալեպ-չորան, յիլ-չոբան անուններով։ Սա վարակիչ չէ և միևնույն անձին երկրորդ անգամ չի կարող պատահել։ Երևում է մեծ մասամբ 2—12 տարեկանների և առավելապես իգական սեռի, այն էլ երեսի վրա և առհասարակ բաց տեղերում՝ ձեռներին, ականջին, ոտներին (գյուղացիները մեծ մասամբ բորիկ են լինում). տեղացիները դրան երկու տեսակի են բաժանում՝ էգ և արու։ Էգը ավելի արագ է տարածվում և ավելի արյունոտ է լինում, իսկ արուն ավելի դանդաղ

է տարածվում և պակաս արյունոտ է։ Երկու տեսակն էլ փոքրիկ կարմրախառն կապտագույն բշտիկներով են սկսվում, հետզհետե տարածվում, հետո մեծ վերք դառնում և թարախակալում։ Մի տարուց հետո լավանում, միայն սպին մնում է անհետ[1]։

Այս վերքը տեղական միջոցներով բժշկում է ենգիբարյան գերդաստանը երեք-չորս սերնդից ի վեր։ Ինձ շատ դժվարությամբ հաջողվեց ճշտությամբ իմանալ այս միջոցը, որ այդ գերդաստանը մի դարից ավելի իբր գաղտնիք պահում է և միայն ինքը գործադրում։ Այս միջոցը հետևյալն է.

Մի մսխալ սպիտակ և դեղին, մանրացրած մկնդեղ (Arsenic), 15 մսխալ ձեթ, 10 մսխալ այծի հրագու և 5 մսխալ մեղրամոմ միասին խառնում են և եփում։ Հետո հովացնում, քսում կտավի վրա և դնում վերքին՝ նախապես սապոնի քարաչրի[2] մեջ թաթախած բամբակը կես ժամ վերքի վրա պահելուց հետո։

Օրը մի անգամ այս դեղը փոխելով շարունակում են երեք կամ չորս օր, երբ վերքը ուռչում է և շուրջը սպիտակում, այդ ժամանակ տխտակուռ խոտը սանդի մեջ ծեծում են, հյուսվը քամում, մի քիչ ալյուր ավելացնելով շաղվում և ապա այս խմորը օրական երեք անգամ դնում վերքի վրա, յուրաքանչյուր անգամին նախապես բարեխառն ջրով լվանալուց հետո։ Իսկ եթե տխտակուռ խոտը չեն կարողանում գտնել, մածնով լվանում են։

Ջ ե ր մ. Սառը աղբյուրներում լոգանում են։ Լողանալիս հանկարծ սառը ջուր են ածում վրաները։

Ա խ ո ր ժ ա կ ը բ ա ն ա լ ու համար չորացրած հունը բրնձով շորվա են անում և ուտեցնում։

Ա կ ա ն ջ ա ց ա վ. Մի երկու կաթ օղի են կաթեցնում ականջի մեջ և խորոված սոխի միջուկը դնում ականջափողի մեջ, բամբակով ծածկում ականջը և մի քանի բոպե այսպես թողնում։

Ա յ ր վ ե լ ու ց առաջացած վերքը բուժելու համար ծեծած հում կարտոֆիլ են դնում վրան, ապա բրինձը աղում են, բովում և ձեթի մեջ թաթախած շորի վրա ցանելով դնում վերքի վրա։

Մեղրամոմը ձեթով եփում և դնում են վերքի վրա։

---

[1] Годовик или персидская болезнь в Елисоветополе. Скорова. В Сбор. Кавк. мед. Общ., 1868 г., նաև՝ Прот. Кав. мед. Об. V, стр. 360, IV, стр. 198.

[2] Սապոնի քարաչրերը, որ գործ են ածում սապոն եփելիս, պատրաստում են այսպես. մանրացնում են սապոնաքարը և խառնում կես ֆունտ կրի հետ, լցնում քամիչի մեջ և ջուր ածում վրան։ Քամիչից հոսած ջուրը կազմում է սապոնի քարաչրերը։

Աչքացավ. Կնոջ կաթը բամբակի վրա կաթեցնելով դնում են աչքերին։ Զգուշանում են թթվեղենից։

Օդիով լվանում են աչքերը, ցուրտ ջուր են սրսկում։ Արյուն են առնում ցավող աչքի ներքևի կոպից կամ ծոծրակից։

Ատամնացավ. Կինամոն, մեխակ, պղպեղ միասին խառնում, ծեծում, քացախոտ բամբակի վրա ցանում և դնում ցավող ատամին։

Մի քիչ մեխակ եփում են և ջրով բերանը ողողում։

Մխում են և ծուխը բերանում պահում։

Արբեցողություն. Եթե կացուցանելու համար արբած մի-ջոցին նրա մեղը խառնում են գինու հետ և խմեցնում, որից զզվելով դադարում են խմելուց։

Բորոտություն բուժելու համար փորշտանի կանաչի արմատները թակում, եփում և այս ջրով լողացնում են հիվանդին։

Գլխացավ. Տաք ջրով լվանում են գլուխը և փաթաթելով աշխատում քրտնեցնել։

Գլխի ոջիլը կտրելու համար ձիթապտղի յուղ են քսում գլխին և մի օրից լվանում։

Գլխի պատռվածքը բուժելու համար նախ լվանում են և վրան մեղր դնում, ապա կաթով եփում են սապոնը և մի շորի վրա քաշած դնում պատռվածքի վրա։

Գորտնուկ. Լուսնի նորին (նոր լուսնին) ձեռքը թաց են անում, գորտնուկի վրա աղ ցանում, պարզում դեպի լուսինն ասելով.

Լուսինը նոր,
Գորտնուկը չոր,

Եվ ապա սև հշի լիզել տալիս գորտնուկի վրայի աղը։

Թույնի դեմ. Թան և մածուն են ուտում։

Լուծելու դեմ. Վառեկի մսով շորվա են ուտում։ Մուգ թեյ խմում։ Թթու շորվա ուտում։

Ծի ուռուցք. Կովի կաթի մեջ եփում են ծեծած կտավատ կամ գարու ալյուր և շորի վրա քաշելով դնում ծծին. երբ ուռուցքը մի տեղ է հավաքվում, բաքմազով մի քիչ ալյուր են շաղախում, մի քիչ էլ մոխիր ցանում և շորի վրա քաշած դնում ուռած տեղը, որպեսզի ծակի և շարավը հոսե։

Թթխմորի վրա մի քիչ քացախ են ածում և դնում ուռուցքի վրա։

Կողքացավը բուժելու համար տաքացրած աղյուս են դնում կողքին։ Կորեկ են բովում, լցնում են պարկի մեջ և դնում կողքին։

Կտրված տեղի արյունահոսությունը դադարեցնելու համար մեղր են դնում վրան։

Հազ. Խնձորի մեջ մի քիչ խունկ են դնում, խորովում, ուտում։ Քուզը կաթով եփում և ուտում են։

Ոսպով շորվա, փիփերտ, ալյուրից պատրաստած կերակուր են ուտեցնում։

Ավելուկի սերմից պատրաստած թեյ են խմեցնում։

Հարբուխ. Խնշում են մի շորի մեջ, փաթաթում և ձգում փողոց-ով վերցնի, նրան կանցնի հարբուխը։

Զեռքի ճաքճքոց. Մեղրամոմ, ձեթ և մի քիչ այծի ճարպ միասին եփում են և քսում ձեռներին։

Մազերը երկարացնելու համար. Ցավշան ավելը եփում, այդ ջրով լվանում են գլխները։ Մսի ճիլ են ուտում։ Համբարձմանը ցող են հավաքում և դրանով լվանում գլխները։

Մազերը թափվելուդեմ. Կանայք որիշ գյուղ գնալիս իրենց գեսից մի քար են տանում իրենց հետ և առաջին անգամ լողանալիս այդ քարը ձգում ջուրը, որպեսզի մազերը չթափվին։

Մատնաշուշ. Մածնի մեջ մի քիչ ալյուր են ածում, տաքացնում, դնում մատնաշունչի վրա։

Մեղը կապվելիս. Բուրդը տաք ջրում թրջում, դնում են փորին, իսկ սեռական անդամը՝ գոլ կաթի մեջ։

Մեղվի խայթածի վրա մածուն են քսում, որ լավանա։

Մկնատամ. Մի թեյի գդալ փոշիացած ծծումբ կերակրի մեջ խառնելով ուտում են երեք շաբաթ շարունակ։

Մոլոքոր (чесотка). Սառը ջրով լողացնում են։

Մրսելուց առողջանալու համար ոտները տաք ջուրն են դնում, որ քրտնեն։

Վերմակի տակ մի ամանով սառը ջուր են դնում և կիզացրած քարերը մեջը ձգում. բարձրացած գոլորշիները քրտնացնում են հիվանդին։

Սառույց են ուտեցնում։

Շան կծածը բուժելու համար նախ կծող շան մազն են դնում վերքի վրա, ապա ծեծած լոբին յուղով եփում են և շորի վրա քաշելով դնում վերքին։ Հաճախ լվանում են։

Տղամայր կնոջ կաթն ավելացնելու համար կարմրախայտ ձուկն անլի եփում են և ջուրը խմեցնում կնոջը։

Օշոշ ծակիկը եփում են և ջուրը խմեցնում տղամարը։

Յրտի տարած. Տաքացրած աղ են կապում ոտներին և շաղախած հինա դնում։

Փսխելու դեմ. Թթու դրված տանձ և խնձոր են ուտում։

Փորացավ. Գինին տաքացնում են և մի քիչ պղպեղ ածում մեջը և խմում։

Պորտը «քաշում» են՝ մասսաժ են անում։

Ալրի թեփը և կորեկը բովում են և պարկի մեջ ածած դնում փորին։

Կինամոնով և խյու

Ապա նույն կինը ստանալով քահանայից մի նշխարք և վարշամակը, դնում է նշխարքը ննջեցյալի բերանին, իսկ վարշամակը նրա վրա և ապա կարում պատանքի կրծքի և գլխի մասում թողած բացվածքը։

Սովորաբար փոքրահասակներին և աղքատներին Յիսնույն օրը թաղում են, իսկ չափահասներին և հարուստներին պահում են մի օր տանը կամ եկեղեցում և պատարագ մատուցանելուց հետո թաղում։

Այսպես շուտ թաղելու պատճառով պատահում են դեպքեր, երբ ուշագնաց եղածներն էլ թաղվում են և կամ թաղման ծեսը կատարելիս ուշքի գալիս։ Այսպես՝ Գետաշենում Վարթի Բրուտյանը եկեղեցում, երբ կանայք վրան փաթաթված լալիս էին, ուշքի է եկել և դրանից հետո հինգ տարի էլ ապրել։ Նույն գյուղում Գյոգալ Դալի-Մակունցը ուշքի է եկել, երբ պատանել են։

Ննջեցյալին եկեղեցի տանելուց հետո ազգական և ծանոթ կանայք գալիս են սգավորի տունը և տնեցիների հետ թաղման համար պատրաստություն տեսնում։ Մի եղ կամ մի ոչխար են մորթում և դրանից պատրաստում շիլաճաշ, կորկոտ և խաշու։ Իսկ եթե պաս է՝ լոբի ճաշ և ձեթով շիլա[1]։

Այդ երեկոյին ընթրիք են տալիս քահանային, նրա տիրացուներին և մի քանի մոտիկ ազգականների։ Ընթրիքից հետո քահանային չորս մոմ են տալիս, որ գիշերը սաղմոս ասի, իսկ առավոտյան մի քիչ ալյուր, երկու մոմ և մի շիշ գինի են տանում նրա տունը՝ նշխարք գործելու և պատարագ մատուցանելու համար։

Պատանքած մեռելը փաթաթում են մի կապերտի մեջ և դնում նաժի մեջ, իսկ շորեր հագցրածի համար զագաղ են շինել տալիս և եթե երիտասարդ է՝ կարմիր կամ ծիրանագույն, իսկ եթե պառավ՝ սև, կապույտ կամ կանաչ գույնի կտոր քաշում վրան։

Տան մեջ թաղման կարգը կատարելուց հետո երբ նաժը կամ դագաղը վերցնում են, նրա տեղը քար են դնում, քաղաքում նաև զարթ շաղ տալիս, որպեսզի ննջեցյալի հիշատակը այդ տան մեջ հաստատուն մնա։ Ննջեցյալը տղամարդ և կին հուղարկավորողներով շրջապատված տանում են եկեղեցի։ Այս միջոցին քահանան զգուշանում է ետ նայելուց, «որպեսզի նույն տնից մի ուրիշն էլ չմեռնի»։

Մեռելին լողացնելուց հետո նրա ականջների և քթածակերի մեջ և աչքերի վրա դնում են բամբակով փաթաթած խունկ, իսկ բերանին

[1] Քաղաքում սա արդեն վերացել է։

մի նշխարք, վրան վարշամակը, որ քահանան է կտրում, և բամբակ։ Կանանց կապում են պատանքի կտորից մի քիթկալ[2] և մի բշրդան[3]։ Երեխաների ձեռքը տալիս են մի-մի մոմ, բայց նախ նրանցից մինը վառում են, հետո մյուսը նրանից վառում և ձեռքով հանգցնում առաջինը, ապա կրկին վառում առաջինը և հանգցնում երկրորդը, հետո նորից վառում, երկուսը միմյանց մոտեցնում և միասին հանգցնում։

Այս բոլորն անելուց հետո սպիտակ միտկալով պատանում են և նույն կտորով մի գոտի և մի ուսկապ կապում։ Ուսկապը անց են կացնում պարանոցով, կրծքի վրա խաչկապում և ծայրը ամրացնում գոտում։

Պատանքից ավելացած կտորը կապում են սյանը, ասելով. «Ասված ողորմի քեզ, քու մնացյալն ա»։ Թաղման երկրորդ օրը նորից ետ են անում, դարձյալ «Ասված ողորմի քեզ» ասելով և գործ ածում ինչի էլ կամենան։

Փոքր-ինչ հարուստները շորեր են հագցնում մեռելին, բայց այս դեպքում էլ պատանքի կտորից սպիտակեղեն են կարում և հագցնում։ Վարշամակը պատանքի կտորից է լինում, վրան մոմ քսած, քահանան նրա մեջտեղից խաչաձև կտրում է և հինգ տեղ խնկի կտորներ կպցնում։

Երբ պատարագն ավարտվում է և սկսվում թաղման կարգը, բարեկամ կանայք շրջապատում են ննջեցյալին և լալով ողբեր ասում։ Այս գյուղերում ևս կան հայտնի լալկան կանայք, որոնք նստելով ննջեցյալի սնարի մոտ, ողբեր են ասում և լացացնում բոլորին։ Ահա մի քանի նմուշներ այդ ողբերից։

Մայրը ողբում է որդուն.

Բալասանի ծաղիկ, որդի ջան,
Խորասանի ծաղիկ, որդի ջան.
Աստամները ջավահիր, որդի ջան,
Իմ խունջիկ մունջիկ, որդի ջան.
Մահկ ես իմ աչքերը խվարի քե տեսնալավ,
Մահկ ես իմ աչքերը խվարի քե տեսնալավ,
Իմ կռնները չրանա քե պահելավ
Իմ էմրը մեռնի քե ըտենց տեսնալավ.
Իմ աստղը ծկած որդի ջան,
Իմ ծաղիկը ճլորած որդի ջան,

[2] Քաղաքում սա արդեն վերացել է։
[3] Ճե՛ս Ջգետ և զարդ գլխում։

Իմ լեզին կրճցրած որդի չան,
Իմ թաղա մաղա որդի չան։

Սկեսուրը ողբում է հարսին

Ա՜յ իմ լիտիկ (լիքը) հարսնը,
Ա՜յ իմ թոգյան (գեր) հարսնը,
Ա՜յ իմ ռաշիդ (քաջ) հարսնը,
Ա՜յ իմ տղամարդ հարսնը.
Էն կժին մատաղ, որ լցել ես, բերել,
Իմ տանը վեր դրել,
Իմ տունը կրա-մրա ջրջրհանել,
Օրորոցդ վեր ես դրել
Ռեխիս ծիծ տվել,
Տունը սարքել ես,
Խմորի վրա շոքել,
Բախան նի ես կապել
Անուշ քուն դրել.
Քնացել թորոնը վառել,
Եկել խմորը պլուվել.
Եդ դառել հացը թխել։

Հարսը ողբում է սկեսրոջը

Իմ նա՜նի,
Իմ տանը սարգյար (պաշտպան) նանի,
Իմ տանը պլանի (բանալի) նանի,
Իմ տաշտի մեզար (ծածկոց) նանի,
Իմ դան զուփուր (կողպեք) նանի,
Ինձ թողել ես, թոռն ես քինում։
Ես եկել եմ քո փեշը բռնել,
Ասում ես քու տղան ինձ կը պահի
Էն ո՞նց կը պահի.
Տանը մեծը քինա,
Ահը քինա, դոզը քինա,
Ուրտեղ քինամ,
Էնտեղ կը մնամ.
Դուռը բաց կմնա,
Տունը անտեր կմնա.
Հավերը մոխիրը կրանդեն,
Շները պուվերը (խմորի գունդ) կտանեն։

Լալկան կանանց ողբերով չբավականանալով, քահանային էլ ողբեր՝ գանձ են ասել տալիս և հետո բոլոր հուղարկավորողները համբուրում ննջեցյալի կրծքից և նրա վրա դրված ափսեի մեջ դրամ ձգում, որը և պատկանում է քահանային, իբր վարձատրություն գանձ ասելու։

Ի վերջո ուժով հեռացնելով կանանց, ննջեցյալին վերցնում են և չորս հոգի ձեռներին բռնած կամ ուսերին դրած տանում դեպի գերեզմանատուն։

Կանայք եկեղեցու դռանը մի քիչ էլ լաց լինելուց հետո վերադառնում են ննջեցյալի տունը, ուր մի քիչ էլ լաց են լինում, ապա լվացվում և սպասում տղամարդ հուղարկավորողներին։

Սրանք դագաղը վերցրած գնում են դեպի գերեզմանատուն, կես ճանապարհին վայր դնում, կարգ կատարում, գանձ ասում, խաչհամբույր ձգում, ապա կրկին վերցնում և տանում գնում գերեզմանի աջ կողմը։ Այստեղ մինչև քահանան աղոթքներ է կարդում, երկու մարդ հանում են ննջեցյալին կարպետի միջից և, բռնելով նրա ոտներից ու գլխից, իջեցնում են գերեզմանի մեջ և թրխկալով ձգում մեջը։ Այս միջոցին ուրիշ երկու հոգի բռնում են գերեզմանի վրա ննջեցյալի երեսքաշը։ Քահանան մոտ ազգականի բռի մեջ օրհնում է մի քիչ հող և ձգել տալիս ննջեցյալի վրա, մյուս հուղարկավորողներն էլ հետևում են նրան և մի-մի բուռ հող ածելով, ասում. «Աստված ողորմի քեզ»։ Ապա հողը տալիս են վրան և մի թումբ ձևացնում։ Թաղման կարգը վերջացնելուց հետո հուղարկավորողները ձեռք են տալիս ննջեցյալի մոտիկ անձնավորություններին և ասում. «Աստծանից մխիթարվեսս»։ Հետո հրավիրվելով, բոլորը գնում են ննջեցյալի տունը, ուր ձեռքերը լվանում և հացի են նստում։ Երբ ուտում պրծնում են, բոլորը կանգնում են «ողորմաթասը» խմելու. նախ քահանան և ապա մյուսները ավագության կարգով առնում են իրենց ձեռքը մի վառած մոմ և «Աստված ողորմի ինչ պատարագում հիշվել ա» ասելով մի բաժակ գինի խմում։ Մոմը և բաժակը անցնում են ձեռքից ձեռք։ Երբեմն էլ, մանավանդ երբ ննջեցյալը կին է եղած, մոմի փոխարեն խնձոր են առնում ձեռքները։ Ողորմաթասը «ճրագով են խմում, որպեսզի հոգին լուսավորվի»։

Ողորմաթասից հետո քահանան հոգեհանգիստ է կատարում և ապա հուղարկավորողները տան դռան առաջը կանգնած մարդուց մի բաժակ գինի ընդունելով և բարեմաղթություններ անելով խմում են և ցրվում։

Տղամարդկանցից հետո կանայք են նստում ճաշելու, որոնք և նույն կերպ խմում են ողորմաթասը։

Բանանց և մի քանի այլ գյուղերում, նույն, թաղման օրը գերեզմանի վրա կրակ են վառում, որպեսզի «ննջեցյալի հոգին այն աշխարհում կրակի պես յուր շուրջը լույս սփռի»։

Թաղման հաջորդ օրը ազգական և բարեկամ կանայք գալիս են ննջեցյալի տուն, սրանցից մի քանիսը «սրգպատառ» են բերում, որ

բաղկանում է մի շիշ օղուց, մի շիշ գինուց, հալվից, փլավից և այլն։ Այստեղից սգավոր տնեցիների հետ գնում են գերեզմանատուն, ուր գալիս են նաև տղամարդ բարեկամները՝ բերելով իրենց հետ օղի, հրավիրվում է քահանան, որ կատարում է «հեքսնահոդի» կարգը։ Կանայք շրջապատելով գերեզմանը լալիս են և բարձր ձայնով ողբեր ասում։ Հետո նախ տղամարդիկ և ապա կանայք ողորմաթաս են խմում, նախապես մի քիչ օղի լցնելով գերեզմանի վրա և վերադառնում տուն, ուր և հաց են ուտում։

Ութ օր շարունակ ննջեցյալի տան մեջ սուգ են պահում. կանայք գլուխները չեն լվանում, տղամարդիկ չեն սափրվում. կար չեն անում, ճախարակ չեն մանում։ Այս ութ օրվա ընթացքում գիշերները ննջեցյալի լողացրած տեղում ճրագ են վառում։ Տղամարդիկ հաճախ գնում են եկեղեցի, ու քահանան անրիծմ է կատարում ննջեցյալի համար։ Երբեմն էլ քահանային տուն են հրավիրում ամբիծքը կատարելու և հյուրասիրում են նրան ընթրիքով։

Մահվան յոթերորդ օրը բարեկամ կանայք իրենց հետ վերցնելով մի-մի կտոր սապոն, գալիս են ննջեցյալի տունը, լալիս, ողբում, հետո ջուր դնում տաքացնում և լողացնում սգավորներին ավագության կարգով՝ մխիթարելով նրանց. «թե ով կենա՝ պարծենա, լոխս էլ մեռնելական ենք»։ Հետո այդ եկող կանայք լվանում են միայն իրենց գլուխները, որովհետև դրանք էլ սուգ պահելով, մինչև այդ ժամանակ ջուր չեն ածել գլխներին։ Տղամարդիկ ևս լվանում են իրենց գլուխները, որից հետո կանչում են սափրիչին և սափրել տալիս մորուքները։ Ապա հաց են ուտում և ցրվում իրենց տները։

Հետևյալ օրը առավոտյան բարեկամ կանայք և տղամարդիկ կրկին գալիս են սգատունը և այստեղից քահանայի հետ գնում գերեզմանատուն, լալիս, ողբեր ասում, կատարում «յոթնեից կարգը» և ապա վերադառնում, հաց ուտում և ցրվում։ Այնուհետև սգավորները սկսում են իրենց գործերին գնալ, մինչդեռ մինչև այդ օրը իբրև սգավոր անգործ են մնում։

Քառասունքին մի ոչխար են մորթում, առավոտ շատ վաղ խաշու, շիլա և կաթնաճաշ եփում, բարձում ձիերի վրա և տանում գերեզմանատուն։ Այստեղ, գերեզմանի վրա, սփոռոց են ձգում և հաց, գինի, օղի, պանիր, գաթա, մեղր, հալվա և այլն շարում։ Գալիս են բարեկամ կանայք և տղամարդիկ, ինչպես և քահանան։ Կանայք շոքում են գերեզմանի շուրջը, լալիս և բարձր ձայնով ողբեր ասում. քահանան կատարում է «քառասնից կարգը». հետո սգավորներից մեկը գինի է ածում գերեզմանի վրա և ապա մի-մի բաժակ տալիս նախ տղամարդկանց և հետո կանանց, որոնք երկար բարեմաղթություններ անելով խմում են և գերեզմանի վրա դրված ուտելեղեններից մի քիչ ուտում։ Ապա նըստում են գերեզմանի կողքին և ճաշում, ուտելով տնից բերած ուտելեղենները։ Տղամարդկանցից հետո ճաշում են կանայք։ Ի վերջո ճաշի մնացորդները թողնելով գերեզմանի վրա և ավելացած խմիչքները ածելով գերեզմանի վրա, վերադառնում են։ Զմեռը կամ վատ եղանակին մի քիչ ուտելեղեն և գինի առած գնում են գերեզմանը օրհնել տալիս և ապա վերադառնում տուն, ճաշում։

Ննջեցյալի տարելիցին «տրիպիլորի հաց» են տալիս և պատարագ մատուցանում։

Գլխավոր մեռելոցին օրհնել են տալիս ննջեցյալներին։

Ավագ ուրբաթ օրը գյուղի բոլոր տներից պասվա կերակուր են բերում եկեղեցի և կենսավուր ժամասացությունից հետո երկար սփռոցներ սփռում եկեղեցու մեջ, այդ բերած կերակուրները դարսոտում, և ապա բոլոր տղամարդիկ նստում և ուտում են անխտիր այդ բերածները, որից հետո քահանան հոգեհանդիստ է կատարում համայն ննջեցելոց համար։

Գերեզմանատուն. Գյուղական գերեզմանատները սովորաբար գտնվում են գյուղին մոտ, ճանապարհների կշտին, որպեսզի անցուդարձ անողները ողորմիս տան ննջեցյալներին։ Սովորաբար միևնույն գերդաստանի անդամները միմյանց մոտ են թաղվում։ Կանոնավորություն, ծառուղիներ բոլորովին չկան։ Աղքատների գերեզմանների վրա մանր քարեր են դարսված լինում կամ հողակույտ շինած։ Իսկ հարուստներինը՝ տապանաքարեր ձգված։ Սրանք ընդհանրապես միակտուր, երկար, քառանկյունի և կամ օրորոցաձև քարեր են, նշխերով եզրափակված և մեջտեղը տապանագրով ծածկված։

Գյուղերում 10—25 ռուբլի արժեցող տապանաքարեր շատ հաճախ են պատահում։

ՀԱՎԱՏՔ

ԼԵՌՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Մռավ, Քափաս և Պանտ, ինչպես և մի քանի ուրիշ լեռներ, որ այժմ բավական ուխտատեղիներ ունին իրենց վրա, հեթանոսության

ժամանակ պաշտվելիս են եղել։ Սրանց մասին, անշուշտ, ավանդություններ եղել են, սակայն ինձ հաջողվեց միայն մինը գտնել, որ հետևյալն է։

Մի ժամանակ Քափաս լյառը այնքան բարձր է եղել, որ յուր սովերով ամբողջովին ծածկել է Գանձակ քաղաքը։ Սրա վրա գաստիկ նախանձել է Մռավ լյառը և առաջարկել նրան կռվել։ Քափասը խսկույն յուր նետը շպրտել է Մռավի վրա և կոտրել նրա ձախ կողքը, իսկ Մռավը, բարկությամբ և նախանձով լցված, այնպես է տվել նրա գլխին յուր նետով, որ փշուր-փշուր է եղել և թափվել վայր։

ՔԱՌԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Գավառումս կան մի քանի ժայռեր և քարեր, որոնք սուրբ են համարվում և որոնց առաջ ժողովուրդը մոմեր վառելով մի որեէ հիվանդությունից բժշկություն և կամ մի այլ շնորհ է խնդրում։ Սրանց թիվը այժմ բավական փոքր է, և եղածն էլ հետզհետե մոռացության է տրվում։ Սրանցից ամենանշանավորը կարելի է համարել «Ծծերը»։ Սա Նյուկզար գյուղի մոտ, ձորի մեջ բարձրացող մի ապառաժ քերծ է, որի ստորոտով հոսում է մի առվակ։ Քերծի մեջ կա մի քարայր, որի առաստաղից կախված են մարդու, ոչխարի, կովի, խոզի և այլ կենդանիների նմանության բյուրեղներ, որոնց ծայրերից ջուր է կաթկթում և հավաքվում սրանց տակ եղած ավազանի մեջ։ Կաթ չունեցող կանայք ուխտ են գալիս այստեղ, մոմեր վառում «Ծծերի» առաջ, նրանցից կաթած ջուր քսում իրենց ծծերին և խնդրում նրանցից իրենց ստինքի կաթը շատացնել։[1]

Ոմանք էլ սակավակաթ կենդանիներին են բերում այստեղ, նույն կենդանու ծծերի նմանություն ունեցող բյուրեղներից ջուր քսում նրանց ծծերին, որ կաթն ավելանա։

Տենդ ունեցող հիվանդներն էլ գալիս լողանում են այս սառն ավազանում և բժշկվում, նախապես մոմեր վառելով ժայռի առաջ։

Երքեճ գյուղի մոտ գտնվում է մի ահագին ժայռ, մեջտեղից ճեղքված, որտեղից կաթ-կաթ ջուր է կաթում։ Առավելապես շիք չորեքշաբթի օրը մոտակա գյուղերից ահագին բազմություն է գնում այդտեղ ուխտ։ Մոմեր վառելով այդ ժայռի կրծքին, տակից հող են վերցնում և այդ կաթ-կաթ թափվող ջրով շաղախելով քսում մկնատամի վրա, որ առողջանա։

Մի այսպիսի Մկնատամի խաչ կա նաև Գետաշենում, որ մի հասարակ քար է, բլրակի վրա ընկած։

Բրաջրից Բանանց տանող ճանապարհի վրա կա մի ժայռ, որ կոչվում է «Շնբտեղը խաչ»։ Սա շատ զորավոր է համարվում, և ամեն մի անցորդ անշուշտ գալիս և համբուրում է այն։

Գետաշենի մոտ, Քաջքաձորում[1] կա մի ահագին ժայռ, որի մեջ մի անցք կա։ Այս ժայռը կոչվում է Քաջքաբուն։ «Կոխված»[2] երեխաներին տանում են այդտեղ և երեք անգամ անց կացնում այդ անցքով, որպեսզի «կոխին» անցնի։

Ոչ պակաս նշանավոր է նաև Մուռութ գյուղում Շահրյանի աղբյուրի մոտ գտնված ժայռը և ս. Սարգսի վանքից փոքր-ինչ բարձր, ձորակի մեջ ընկած ժայռը, որ ունի մի նեղ անցք։ Վերջինս կոչվում է Կապ-խաչ։ Ամուլ կանայք երեք անգամ անցնում են այդ անցքով, որպեսզի որդի ունենան։

Բանանցի շրջականերում գտնվող Մեծ-Գոմերի խաչին ուխտ են գնում աչքացավ, Ոսկեթելին՝ փորացավ, Սուրբ Նշանին՝ գլխացավ ունեցողները։ Իսկ Միրանավորի խաչի ժայռի միջով անց են կացնում այն երեխաներին, որոնք ուշ են ոտ ելնում։

Մերունիներն ասում են, թե իրենց մանկության ժամանակ միմյանց դրամ փոխ տալիս այս սուրբ համարված քարերի առաջ էին գալիս և նրանց վիճ բերում։

Ժողովուրդը պաշտում է նաև կայծակի հարվածին ենթարկված քարերը, ինչպես օրինակ՝ Միրզիկ գյուղի Խաչ-աղբյուրը փոքր-ինչ բարձր գտնված «Կեծաքարը»։

ՋՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Դեռ մինչև այժմ էլ մնում են ջրի պաշտման մնացորդները, դեռ մինչև այժմ էլ ժողովուրդը սուրբ է համարում մի քանի աղբյուրներ, նրանց մոտ է ուխտ գնում, մոմեր վառում, աքաղաղ մատղում, իրենց հիվանդություններից փրկություն հայցում։

Այսպիսի աղբյուրներից նշանավոր են.

Միրզիկ գյուղում «Խաչ-աղբյուրը», որ պաշտվում է որպես մկնատամ հիվանդության բուժիչ։ Այստեղ առավելապես բերում են մկնա-

---

[1] Տե՛ս Պատանների մասում։

[2] Տե՛ս Տղաբերքում։

տամ հանած երեխաներին, մոմեր վառում աղբյուրի առաջ և երեխային լողացնում այդ սառը ջրով։

Բրաջրում «Քոսի (բորոտի) աղբյուրը» առողջություն է պարգևում բորոտներին, որոնք նույնպես մոմեր վառելով նրա առաջ, լողանում են։ Այս աղբյուրի մասին ավանդություն ասում է, թե մի կռապաշտ, բորոտության ախտով բռնված, հալածվում է յուր բարեկամներից և ծնողներից ու անխնամ ընկնում այս աղբյուրի մոտ։ Երկար տանջվելուց հետո մի ծերունի երևում է նրան և ասում. «Խոստացիր քրիստոնեություն ընդունել, և կրժշկվիս»։ Երբ այս կռապաշտը խոստանում է, ծերունին գավազանով խփում է ժայռին, և իսկույն այժմյան աղբյուրը բխում է։ «Լվացվիր այս աղբյուրում և կատարիր խոստումդ»,—ասում է ծերունին և անհայտանում։ Հիվանդը լվացվում է և անմիջապես բժշկվելով, ընդունում քրիստոնեություն։ Այդ օրվանից, ավելացնում է ավանդությունը, այդ աղբյուրը սուրբ է համարվում և հազարավոր մարդկանց բժշկել է։

Բանանց գյուղի սարերում գտնվող Պաքերի (համբույրների) աղբյուրի ջուրը երիտասարդացնում է մարդուն և սեր ներշնչում։

Բանանցի մոտ գտնվող Նահատակի աղբյուրը փարատում է վիշտը, թախիծը և առհասարակ բոլոր հոգեկան հիվանդությունները։

Նոր-Փիփ գյուղի մոտի Ոսկան նահատակի աղբյուրը բուժում է համբույթյունը, իլությունը և կուրությունը։

Եղնասարի վանքի աղբյուրը նույնպես սուրբ է համարվում, և ուխտավորները նրա առաջ մոմեր են վառում։ Ասում են, թե մի անգամ մի անհավատ կամեցել է պղծել այդ ջուրը, բայց իսկույն նա կարվել է։ Հետո արդեն արդար մարդիկ մոմեր են վառել, մատաղ կտրել ու աղոթել, մինչև որ նորից սկսել է բխել։

Հին-Փիփ գյուղում, եկեղեցուց փոքր-ինչ ներքև, նույնպես կա մի սուրբ համարված աղբյուր, ուր շրջակա գյուղերից ուխտ են գալիս։

Կիրանց գյուղի Կաղնի խաչի մոտ կա մի սուրբ համարված աղբյուր, որի տակ լողացնում են անդամալույծներին՝ առողջություն հայցելով։

Ասում են, թե ջուրը և կրակը եղբայր և քույր են. մի անգամ եղբայր-ջուրը իջել է սարից, քույր կրակը ասել է նրան. «Եկ մի քիչ նստի տաքացի»։ Եղբայր ջուրն էլ պատասխանում է. «Դու էլ մի քիչ ինձնից խմիր, հովացիր»։

Առավելապես հեքիաթների մեջ պատմվում է «անմահության աղբյուրի» մասին, որոնց ջուրը խմելով, մարդը ամենայն տեսակ հիվանդություններից բժշկվում է և անմահանում։ Այսպիսի աղբյուրները գտնվում են մարդկանց անմատչելի տեղերում և պաշտպանվում են յոթ գլխանի դևերով։

Նույն հեքիաթներում պատմում են այնպիսի աղբյուրների մասին, որոնց տակ եթե «բախտավոր ազամորդին» արժանանա գլուխը բընել, մազերը ոսկու կամ արծաթի դույն կստանան։

ԿՐԱԿԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Կրակապաշտության մնացորդներից նշանավոր են հետևյալները.

1) Կրակով երդվում են։

2) Կրակը թե վառելիս և թե հանգցնելիս «Հիսուս Քրիստոս» են ասում։

3) Կրակի վրա ջուր չեն ածում, և եթե ստիպված են ածելու, ասում են. «Հիսուս Քրիստոս, ես մեղա աստծու»։

4) Կրակին չեն խփում, վրան չեն թքում, վրայից չեն անցնում։

5) Գիշերները կրակ գուրս չեն տալիս, վնասաբեր համարելով այդ։

6) Գիշերները լողանալիս մի կրակ են ձգում ջրի մեջ, որպեսզի շարը խափանի։

7) Միևնույն սենյակում երեք հրաշ չեն վառում, մեղք համարելով այդ։

8) Փայտը վառվելիս եթե ձայն է հանում, ասում են, թե իրենց բամբասում են, և որպեսզի գուշակեն, թե ով է բամբասողը, սկսում են անուններ տալ, և ում անվան վրա որ դադարի ձայնը, նա կլինի բամբասողը։

9) Մոմը վառած միջոցին ծայրին գուշացած ձևերից գուշակություններ են անում, այսպես օրինակ, երբ շորս բարակ շյուղեր են մնում, ասում են՝ ձիավոր հյուր պիտի գա, երբ խաչ է գոյանում, ասում են՝ իրենցից մինը պիտի մեռնի և այլն։

Կրակի պաշտման հետ կապված է և օջախի պաշտամունքը։ Ընդհանրապես բոլոր օջախները առանձնապես հարգվում են, ոչ ոք չի թքում նրանց վրա կամ անարգանքով վերաբերվում։ Ավելացած մեռոնաջուրը օջախն են ածում, ամենամաքուր տեղ համարելով այդ։ Բացի դրանից, օջախով երդվում են, օջախով օրհնում և անիծում։ Հարսանիքի ժամանակ հարսը երկրպագում է հայրենական օջախին և նրանից մի քիչ մոխիր վերցնում յուր հետ տանելու սկեսրանց տունը։ Տղաբեր-

քի ժամանակ ծննդկանը օջախի առաջն է ծնում և կամ օջախի մոխրից յուր մոտ դնում։ Ննջեցյալ եղած միջոցին մի քանի օր օջախի առաջ կանթեղ են վառում։ Գյուղատիրոջ կամ երկար ժամանակ տանուտիրություն անողների օջախները հարգվում են ամբողջ գյուղից, այդտեղ ուխտ են գալիս, մոմեր վառում, հարս ու փեսան նախքան թագվորի տուն գնալը գալիս համբուրում են այդ օջախից։ Մի քանի օջախներ էլ իբր մի որոշ հիվանդության բուժիչ են պաշտվում, այսպես օրինակ, Փիփ գյուղում նահատակենց օջախը, որ մի կիսավեր տան սովորական օջախ է, համարվում է մկնատամի բուժիչ. գալիս են մոմ վառում, հողից տանում ջրով շաղախում և քսում մկնատամի վրա, որ լավանա։

ԾԱՌԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Ինչպես Վարանդայում, այնպես և Գանձակի գավառում դեռ մնում է ծառապաշտությունը։ Ոչ միայն շատ գյուղերում, այլև նույնիսկ քաղաքում կան նվիրական, սուրբ համարված ծառեր։ Սրանց առաջ շոքում աղոթում են, աքաղաղ, ոչխար, եզ մատաղում և առաջինի կատարը և վերջիններիս եղջյուրները քաշ անում ծառից։ Հիվանդները իրենց հանդերձներից կտորներ են պատռում և կապում են ծառի ճյուղերից, որպեսզի իրենց հիվանդություններն էլ այդ շորերի հետ այդտեղ մնան։ Ուրիշները հիվանդանալիս աղոթող կանանց աղոթել տալուց հետո այն ասեղը, որով աղոթում են, բերում շուլալում են այդ ծառի տերևների վրա կամ խրում նրա կեղևի մեջ, որպեսզի հիվանդությունը, որ ասեղին է անցած լինում, այդտեղ մեխված մնա և չկարողանա վերադառնալ։ Ամուլ կանայք էլ գալիս են այդ սուրբ համարված երկճյուղ ծառերի միջով երեք անգամ անցնում, որ որդի ունենան։

Այս ծառերով երդվում են, նրանց վկա բռնում, երբ մարդկանցից ծածուկ դրամ են պարտք վերցնում և կամ մի ավանդ պահ տալիս։

Ոչ մի հավատացող չի համարձակվում վնասել այդպիսի ծառերին, նրանցից մի ճյուղ, մի տերև անգամ կտրելը մեծ մեղք է համարվում, և մեղանչողները, ինչպես պատմում են, սաստիկ պատժվում են։ Ժողովուրդը այդ ծառերն իբր կենդանի էակներ է երևակայում և պնդում է, թե նրանց կտրելիս արյուն է հոսում, նրանք բղավում են և երբեմն նույնիսկ կերպարանափոխվում ուրիշ ծառի։ Սույն հասկացողությամբ կարելի է միայն բացատրել այն սովորությունը, որ երբ մի ծառ պտուղ չի տալիս, ծաղկելիս կամ առավելապես մեծ պասի ավագ շորեքշաբթի (չիք-շորեքշաբթի) օրը մինը կացնով երեք անգամ խփում է այդ ծառին և ասում. «Բար ես վեր օնում, վեր կալ, վեր չես օնում՝ կտրում ենք»։ Մի ուրիշն էլ միջնորդում է թե՝ մի կտրիր, այս տարի անշուշտ պտուղ կտա, և իբր թե իսկապես տալիս է։

Այս սուրբ համարված ծառերը իրենց սրբությունը պահպանում են նաև շորանալուց հետո. ոչ ոք չի կտրատում կամ վերցնում տանում նրանց ճյուղերը, այլ միայն նրանց փտած բներից փոշի վերցնելով ածում են ջրի մեջ և խմեցնում հիվանդներին, որ բժշկվեն։

Ծառերի մի քանի տեսակներ էլ ընդհանրապես նվիրական են համարվում։ Այսպես օրինակ, չինարին, բարդին և ընկուզենին կանաչ ժամանակ միանգամայն ապահովված են կացնի հարվածներից։ Հավատացնում էին, թե Գեռաշենում Ավագ անունով մինը մի կանաչ ընկուզենի էր կտրել, որի ճյուղից վախենալով հիվանդացել և երեք օրից մեռել էր։

Նույնիսկ նա, ով հանում է մատաղ ընկուզենին մի ուրիշ տեղ տնկելու նպատակով, այնուամենայնիվ պատժվում է մահով, և այս պատճառով երբեք երիտասարդները այդ չեն անում, այլ միմիայն ծերունիները, որպեսզի եթե մեռնին էլ, նրանք մեռնին։

Հիշենք սուրբ համարված ծառերից մի քանիսը.

ա. Գանձակում, ս. Սարգիս ուխտատեղիի մոտ գտնված թխկի ծառը։ Սրա մասին պատմում են, թե մի թուրք իբր կնոջ հետ եկել է ս. Սարգսին ուխտ անելու, որպեսզի իրեն մի որդի տա։ Ջճանաչելով ուխտատեղին, նա հարցրել է մի քանի հնձվորների, որոնք չկամենալով որ այդ թուրքը աղոթի իրենց ուխտատեղում, ցույց են տվել այժմ սուրբ համարված ծառը, որ այն ժամանակ չէր պաշտվում։ Թուրքը աղոթում է այդ ծառի առաջ, մի ոչխար մատաղում և վերադառնում։ Մի տարուց հետո միևնույն հնձվորները տեսնում են նույն թուրքին իր կնոջ հետ և մի նորածին մանկան հետ, որ մի եզ էր բերում այդ միևնույն տեղում մատաղելու։ Այս անգամ հնձվորները ասում են նրան, թե ուխտատեղին այդ չէ, այլ փոքր-ինչ վերև, սակայն նա պատասխանում է թե՝ իմ ուխտատեղիս սա է, քանի որ սրան ես աղոթեցի, և սա կատարեց իմ խնդրանքը և որդի պարգևեց։ Այս դեպքից հետո ոչ միայն թուրքերը, այլև հայերը սկսում են պաշտել այդ ծառը։

բ. Զարդախլու գյուղում նշանավոր է «Կաղնի խաչը»։ Սրա մասին պատմում են, թե մի անգամ, երբ մի գյուղացի սրա բնի առաջ չոքած աղոթում էր, մի անցորդ թուրք ծաղրում է նրան, բայց իսկույն ծռվում է և

չի կարողանում ուղղվիլ։ Զղջալով յուր արածի վրա, նա շոքեշոք մոտենում է Կաղնի խաչին, համբուրում և մի մատաղ խոստանում, որից հետո միայն ուղղվում է։

գ. Գետաշենում կա մի «Ջինարի խաչ», ծածկված բազմաթիվ, գույնզգույն կտորներով։ Պատմում են, թե մի անգամ մի թուրք արհամարհելով այդ խաչը, կտրել է դրա մի ճյուղը, բայց իսկույն ուշագնաց է եղել և այսպես երկու օր շարունակ մնացել ընկած ծառի տակ, մինչև որ բարեկամները եկել են և մատաղ խոստանալով խաչին, ուշքի բերել նրան։

դ. Աբլահ գյուղում հանդի մեջ ընկած է մի հինավուրց չինարի ծառ, որ երկար ժամանակ պաշտվել է և այժմ էլ պաշտվում է, չնայելով որ արդեն չորացել է։ Նրա կտորներից ոչ մինը չեն տանում, այլ միայն փտած միջուկը ջրի մեջ լուծելով խմեցնում են հիվանդներին, որ առողջանան։

ե. Գետաշեն գյուղից դեպի արևմտահարավ մի փոքրիկ գագաթ կա, ծածկված գլխավորապես բոխի և կաղնու ծառերով։ Սրանց մեջտեղը կա մի մեծ, հինավուրց թզկի ծառ, որ պաշտվում է որպես ջերմ և այլ հիվանդություններից բուժող։ Սա կոչվում է «Կաղնի խաչ», թեև թզկի ծառ է։ Պատմում են, թե սրա մոտ շատ հին ժամանակներից մի կաղնի սուրբ ծառ է եղել, որը թուրքերը վառել, մոխիր են դարձրել։ Բայց մյուս օրը հայերը նկատել են, որ այդ սուրբ ծառի ճյուղերից մեկը ընկել է այժմ պաշտվող թզկի ծառի վրա, որով և Կաղնի խաչը յուր սրբությունը տվել է այս թզկուն։ Եվ այնուհետև սկսել են նրա փոխարեն այս թզկուն պաշտել։

զ. Բրաջուր գյուղում, բլրակի գլխին կա մի բոշնի ծառ, որ նույնպես պաշտվում է։ Ներունիներն ասում են, թե սա մինչև այժմ էլ նույն մեծությունն ունի, ինչ որ ուներ իրենց մանկության ժամանակ, և որ սրա տերևները երբեք չեն թափվում։ Այս մասին պատմում են, թե շատ հին ժամանակներում մի պառավ, սաստիկ հոգնած կին եկել և հանգստացել է սրա ստվերի տակ և ապա օրհնել նրան ասելով. «Տիլար և կանաչ մնաս» և այդպես էլ մնացել է։ Աչքացավ ունեցողները շոքեշոք բարձրանում են այս բլուրը, մոմեր վառում այս ծառի տակ, ոչխար մատաղում և ապա վերցնելով ծառի արմատից մի քիչ հող, ածում են ջրի մեջ և դրանով լվանում աչքերը։ Ապա իրենց հանդերձից մի կտոր կապում են ծառից ու վերադառնում, հավատալով, որ շորի հետ միասին իրենց աչքացավն էլ թողին այստեղ։

է. Բուզլուղ գյուղում, ս. Մինաս անվանված մատուռի մոտ կան

քսանից ավելի վիթխարի հացենիներ, որոնք նույնպես պաշտվում են, և որոնց մի տերևն անգամ մեղք է համարվում կտրել։ Պատմում են, թե մի անգամ մի թուրք մի ձեռնափայտ է կտրել այս ծառի ճյուղերից, բայց մինչև տուն հասնելը լեզուն բռնվել է և մի կողմը թուլացել։ Հասկանալով, որ այդ պատիժը սուրբ ծառից է, նա խոստանում է մի արջառ մատաղել, եթե առողջանա, և երբ առողջանում է, կատարում է յուր խոստումը։

ը. Ղարաբուլաղ գյուղի մոտ կա մի մեծ վայրի տանձենի, որ նույնպես սուրբ է համարվում։ Մի թուրք կտրում է նրա մի մասը և մի տաշտ շինում, բայց դեռ տաշտը լրանեցրած, ամբողջ ընտանիքով կոտորվում են։

Այսպիսի սուրբ համարված ծառեր կան նաև ուրիշ շատ գյուղերում, ինչպես՝ Բանանց («Կաղնի խաչը»), Խաչակապ, Փիփ և այլն։

Ժողովուրդը մի քանի ծառեր էլ անսուրբ է համարում և զգուշանում է նրանցից։ Այսպես, ոչի ծառը ոչ մի բանի գործ չեն ածում. եթե այդ ծառից կտրած ճիպոտով խփեն եզան, ասում են, այդ եզը փորացավ կընկնի, եթե նա մինի այգում բուսնի, այգին անպտուղ կմնա. եթե նրա մանրահատիկ պտղից մինն ուտի, կթունավորվի[1]։

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Թռչուններ. Ինչպես Վարանդայում, այնպես և Գանձակի գավառում թռչունների պաշտամունքը մասամբ մնացել է։ Մի քանի թռչուններ սուրբ են համարվում, ժողովուրդը նրանց մեղք է համարում սպանել, նրանց քար չի ձգում, նրանց բները չի քանդում։ Այսպիսի թռչուններից նշանավոր է ծիծեռնակը. սրան ոչ միայն մի որևէ վնաս չեն հասցնում, այլև նրանից խնդրում են, որ իրենց երեխաներին շուտ և ճարտար խոսելու շնորհք պարգևի, որովհետև հավատում են, որ նա էլ երբեմն մի ճարտար, քաղցրախոս երեխա է եղել։ Սրա խորթ մայրը ատելով նրան, մի օր հիվանդ է ձևանում և պահանջում է ամուսնուց, որ այս տղայի ճկույթ մատը կտրի, եփի, տա իրեն՝ ուտի, որպեսզի առողջանա։ Հայրը կատարել է այս շար կնոջ կամքը, կտրել է յուր երեխայի ճկույթը (ծիծեռնը), որի ցավից նա մեռել է։ Բայց երբ ճկույթը

[1] Աղաբաբյան Ա., Հիմնարկություն գավառական ուսումնարանի, Թիֆլիս, 1889, էջ. 70։

տարել է կնոջը, որ ուտի և առողջանա, հանկարծ այս ճկույթը ծիծեռնակ է դառել և թռել երգելով.

Ծիծեռն եմ հա, ծիծեռն եմ,
Հորը մորթած ծիծեռն եմ.
Մորը կերած ծիծեռն եմ,
Թռել ծիծեռնակ եմ դառե։

Ծիծեռնակին տեղական թուրքերն էլ սուրբ են համարում և չեն սպանում։ Սրանց մեջ էլ կան ավանդություններ ծիծեռնակի մասին, որոնցից նշանավոր է հետևյալը։

Աստված հրամայեց Աբրահամին գնալ Մեքքա և այնտեղ մի այնպիսի տաճար շինել, որպիսին Մովսես շինեց Երուսաղեմում։ Աբրահամը կատարեց աստծո հրամանը, և բազմաթիվ ուխտավորներ սկսեցին հաճախել այս տաճարը։ Այս միջոցներում այդ երկրում բնակվում էր Աղ կոչված ժողովուրդը, որի թագավորը հրամայեց մեծ զորքով գնալ և հիմնովին կործանել այդ տաճարը։ Բայց երբ զորքը մոտեցավ տաճարին, հավաքվեցին անթիվ ծիծեռնակներ, որոնք կտուցներով քարեր վերցնելով, ձգեցին զինվորների վրա և բոլորին կոտորեցին։ Միայն ազատվեց մի զինվոր, որ գնաց և պատմեց այս դեպքը թագավորին։ Վերջինս չհավատաց, բայց հենց այս միջոցին երևաց մի ծիծեռնակ, և մինչդեռ զինվորը կասեր. «Ահա, ահա, թագավոր, նրանցից մինը», ծիծեռնակը ձգեց քարը նրա գլխին և սպանեց։ Թագավորը այս տեսնելով հրամայեց այլևս ձեռք չտալ տաճարին։ Սրանից հետո աստված սովորեցրեց ծիծեռնակին երգել այն աղոթքը, որով զգուշացնում է մարդկանց սպանել ծիծեռնակին, որովհետև աստված մահվան պատիժ է տալիս ծիծեռնակին սպանողին։

Բացի ծիծեռնակից ժողովուրդը սուրբ է համարում նաև աղավնուն, որի մասին եղած կռապաշտական ավանդություններն անհետացել են և մնացել է միայն մովսիսականը։ Երբ կամենում են մորթել աղավնուն, շատ անգամ խղճահարվում են և չեն մորթում, որովհետև «նրա աչքերում արցունքներ են նկատում»։

Իբր չար կամ ավելի լավ չարագուշակ թռչուն հարգվում է բուն։ Երբ նա բվում է մի տան կտրին, տնեցիներին թախիծ է պատում, ամենքը հավատում են, որ մի տխուր դեպք, հաճախ մահ պիտի պատահի։ Շատերը այդպիսի դեպքերում փայտե գշի մեջ կերակուր են ածում և դուրս քերում, տալիս նրան, որպեսզի չարիքը այլևս չպատահի։ Միևնույն կերպ վարվում և հավատում են թուրքերը։ Սրանց կարծիքով բուն ամենաիմաստուն թռչունն է. սկզբում նա նույնիսկ

ընտանի է եղել, բայց հետո, երբ տեսել է, որ մարդիկ սպանում են մարգարեներին, վախեցել է, թե մի գուցե իրեն էլ սպանեն, ուստի և հեռացել է նրանցից և ապրել ավերակների մեջ։ Եվ որովհետև նրա սիրելի տեղը ավերակներն են, ուստի և մի անգամ հարցրել են նրան, թե աշխարհումս ի՞նչն է ավելի, շինությունները թե՞ ավերակները։ «Ավերակները,—պատասխանել է նա,—որովհետև ժամանակով բոլոր շինություններն էլ ավերակներ պիտի դառնան»։

— Իսկ որո՞նք են ավելի, կանայք, թե՞ տղամարդիկ։

— Կանայք, որովհետև կնոջ լսող տղամարդն էլ կին է։

Բուի մասին կա հետևյալ ավանդությունը.

Սհակ անունով մի տղա յուր քրոջ հետ խոսքի տարվելով, կորցնում է իրենց եղը արածացնելիս։ Երկար, ապարդյուն որոնելուց հետո տուն են դառնում և պատմում իրենց խորթ մորը կորստի մասին։ Սա սաստիկ բարկանում է սրանց վրա, անիծում և տնից դուրս անում, պատվիրելով չվերադառնալ առանց եղի։

Նորից երկար որոնելուց հետո, սրանք հուսահատված դիմում են աստծուն, որ իրենց թևեր տա, որպեսզի ավելի հեշտությամբ կարողանան որոնել։ Աստված լսում է դրանց խնդիրը, թևեր տալիս և բու դարձնում։ Դեռ մինչև այժմ էլ նրանք շարունակում են հարցնել միմյանց այսպես.

«Սհա՞կ»...
— Հե՛յ։
«Գտա՞ր»...
— Չէ՛։

Իսկ թուրքերը պատմում են հետևյալ ավանդությունը.

Հակոբ լսելով Հովսեփ որդու կորուստը, կանչում է Ռաուփ և Նասիբ ծառաներին և ուղարկում նրան որոնելու։ Սրանք երկար որոնելուց հետո խնդրում են աստծուն իրենց թևեր տալ, որպեսզի հեշտությամբ որոնեն։ Աստված տալիս է նրանց թևեր, նրանք թռչում են, և որպեսզի միմյանց չկորցնեն, շարունակ կանչում են.

Յուսո՞ւփ, Նասի՞բ.
Յուսո՞ւփ, Նասի՞բ։

Այս ավանդությունը շատ նման է հետևյալին, որ պատմվում է դարձյալ թուրքերի մեջ, հոպոպի մասին։

Կար-չկար երկու եղբայր՝ Յուսուփ և Նասիբ անունով։ Նրանք ունեին մի քույր՝ Ֆաթմա անունով, որ սովորություն ուներ գլխին սանր կրել։ Մի անգամ նրանց ձին կորավ, և եղբայրները գնացին որոնելու

այն և պատվիրեցին քրոջը մինչև իրենց վերադարձը կերակուր պատրաստել։ Նա եփեց կաթնապուր և երկար սպասեց եղբայրներին։ Սպասեց, սպասեց, վերջապես անհանգստանալով գնաց նրանց որոնելու։ Երկար, ապարդյուն կերպով որոնելուց հետո նա խնդրեց աստծուն, որ իրեն թռչուն դարձնի, որպեսզի հեշտությամբ կարողանա որոնել յուր սիրելի եղբայրներին։ Աստված լսեց նրա աղոթքը և նրան հոպոպ դարձրեց։ Եվ մինչև այժմ էլ նա որոնում է յուր եղբայրներին, կոչելով. «Հոպոպ, գյուլ թափ, Յուսուփ, Նասիբ, սյուտլի աշ», այսինքն. «Հոպոպ, վարդ գտիր, Յուսուփ, Նասիբ, կաթնապուր»։ Երբ նա թռչուն դարձավ, նրա հայրական ժառանգությունը մնաց գետնին, ուստի և այժմ երբ նրան հարցնում են, թե Հոպոպ, ո՞ւր է քո հայրական հարստությունը, նա կտուցով խփում է գետնին, կարծես սրանով կամենում է ասել, թե բոլոր հայրական հարստությունը մնաց գետնին։

Իսկ հայերը հոպոպի մասին բոլորովին այլ կերպ են պատմում.

Մի անգամ մի հարս խմոր հունցելիս գործը կիսատ է թողնում և սկսում է մազերը սանրել։ Հազիվ սանրը խրում է մազերի մեջ, երբ սկեսրայրը վրա է գալիս։ Ամոթից և երկյուղից հարսը թռչունի է փոխարկվում և սանրը գլխին թռչում։

Մորեխ. Երկյուղից պաշտում են մորեխին։ Երբ դրանք գալիս են մի գյուղ, բոլոր գյուղացիները սարսափած, մեծ քանակությամբ բրինձ են խաշում և լցնում դրանց առաջը, խնդրելով որ ուտեն և հեռանան։ Երկյուղ կրելով, չեն սպանում մորեխներին։

Կաթնասուններ. Շուն. Սա իմաստուն և սաստիկ շուտ նախազգացող է համարվում։ Նա ճանաչում է տան բարեկամին և չարակամին, նախազգում տանը գալիք գժբախտությունը և ցավակցելով՝ ոռնում, ուստի և մարդիկ լսելով նրա ոռնոցը, տխրում են, գուշակելով, որ տնեցիներից մինը պիտի մեռնի։

Ընդհանրապես շանը չեն սպանում և նույնիսկ գրող չեն շափում, մեղք համարելով այդ։

Պատմում էին, թե մի անգամ չորս կին Մելիքենց տանը գորգ էին գործում օրական 10 կոպեկ վարձատրությամբ։ Սոնա անունով մի կին այդ վարձատրությունը քիչ համարելով, սկսում է տանտիրոջ բացակայության միջոցին գրգռել մյուս կանանց և առաջարկել այլևս չաշխատել, մինչև որ վարձը չբարձրացնեն։ Այդ միջոցին շունը, որ բոլոր ժամանակ մի քիչ հեռուն հանգիստ պառկած էր, առանց հաշելու հանկարծ հարձակվում է Սոնայի վրա և կծում։ Մի քանի օր հետո, երբ գորգը ավարտելու վրա են լինում, «սրբրգաթա» (ավարտելու առթիվ

նվեր) են ուզում։ Տանտիկինը փեթակի մեղրը կտրում է, լավ մասը պահում, վատ մասը տալիս այս բան անող կանանց։ Սոնան դարձյալ սկսում է վատ խոսել տանտիկնոջ մասին, նրա բացակայության միջոցին, բայց այս անգամն էլ նույն իմաստուն և բարի կամեցող շունը լոելյայն հարձակվում է Սոնայի վրա և կծում նրան։ Այս և այսպիսի շատ անցքեր համոզում են գյուղացիներին, որ շան ներկայությամբ վատ չխոսեն նրա տիրոջ մասին։ Մի ավանդություն ասում է, թե աստված կենդանիներին ստեղծելիս գայլին հոտառություն տվեց, իսկ շանը՝ ուժ։ Գայլը հարձակվեց մի գոմեշի վրա և ուզում էր պատառոտել նրան և երբ չկարողացավ, դարձավ աստծու մոտ և խնդրեց իրեն ուժ տալ և ոչ հոտառություն։ Աստված կատարեց նրա խնդիրը. առավ նրանից հոտառությունը, տվեց շանը, իսկ նրա ուժը տվեց գայլին։ Սակայն շունը նույն հոտառությամբ ավելի ապահով վիճակ ստեղծեց յուր համար, քան գայլը յուր ուժով։

Մի ուրիշ ավանդություն էլ ասում է, թե սկզբում գայլերը էին բնակվում մարդկանց մոտ, իսկ շները ապրում էին անտառում։ Մի օր շները եկան խնդրեցին գայլերին, որ թույլ տան իրենց մնալ մարդկանց մոտ, մինչև որ կառողջանան, իսկ մինչ այդ իրենք գնան անտառները։ Գայլերը մեղքացան հիվանդ շների վրա և նրանց զիջեցին իրենց տեղը, սակայն շներին շատ դուր եկավ մարդկանց ապրելաձևը և չկամեցան այլևս վերադառնալ անտառ։ Դեռ մինչև հիմա էլ գայլերն անտառից հարցնում են շներին՝ առողջացա՞ք, վերադարձեք, իսկ սրանք ոռնում են՝ իրենց ցավից տանջվելը ցույց տալու և հաշում, ասելու, թե դեռ չեն լավացել։

Կատու. Նոյի տապանում ապաստանած միջոցին առյուծը փոքրացել է, և նրա քթից ընկել է կատուն։ Այս պատճառով էլ սա նրան սաստիկ նման է[1]։

Լավ է մի մարդ սպանել, քան մի կատու։

Կատու սպանողը յոթը եկեղեցի պիտի շինի, որ մեղքից ազատվի։

Արջ. Սա սկզբում մարդ է եղել, ջրաղացպան, բայց որովհետև անարգաբար է վերաբերվել դեպի հացահատիկները, այս պատճառով էլ արջի է կերպարանափոխվել։

Կապիկ. Սա մի ժամանակ մարդ է եղել և ներկարարությամբ (պոյաճությամբ) զբաղվել։ Սակայն աշխատանքից առաջ երբեք չի խաշակնքվել կամ աղոթել, ուստի և աստված նրան անիծել է և կապիկ

[1] Մինի սաստիկ նմանությունը ցույց տալու համար ասում են՝ քթից ընկած է։

դարձրել։ Եվ այս է պատճառը, որ կապիկի եղունգները կապտագույն են։

Ջորի. Հիսուսը Երուսաղեմ գնալիս պատվիրեց յուր աշակերտներին, որ մոտակա գյուղից մի էշ և մի ջորի բերեն։ Նրանք էլ բերին։ Քրիստոս նստավ ջորու վրա, բայց սա աքացի տվեց, ուստի և Տերը անիծեց նրան, ասելով. «Անիծյալ լինիս և չծնես երբեք»։ Այդ ժամանակից սկսած ջորին դադարեց ծնելուց։

ՏԱՐԵՐՔԻ ԵՎ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Երկինք. Մի ժամանակ երկինքը շատ մոտ է եղել երկրին, մի օր մի կին ցորենի հասկով սրբել է երեխայի աղտեղությունը և վերև շպրտել, երկինքը, որին դիպել է այդ հասկը, բարկացել է և վերև բարձրանալով, անիծել ցորենին, որ այլևս հասկ չտա։ Այդպես և եղել է. ցորենը, որ առաջները ամբողջովին ծածկվում էր հասկով, ցցվում է դատարկ ցողունով։ Իսկույն շները սկսում են կոնձկոնձալ և հաց խնդրել երկնքից։ Ի վերջո երկինքը մեղքանում է շներին և պատվիրում ցորենին՝ միմիայն ծայրում մի փոքրիկ հասկ բռնել։ Բայց մարդիկ այդ շների բաժինն էլ նրանցից խլում են և իրենք սնվում դրանով։

Արև. Արևածագին պառավ կանայք դառնում են դեպի արեգակը, խաչակնքում և աղոթում։ Ննդկանը առաջին անգամ արև տեսնելիս խաչակնքում է։ Նորածնին առաջին անգամ տնից դուրս հանելիս դարձնում են դեպի արեգակը և աղոթում. «Ա՛ մրրրմեր ըրեքնակ, տյու իմ ըրեխիս պահես», «ա ըրեքնակ, իմ իրեսս քու վետի տակը, տյու իմ բալեքը պահես»։ Մարդը մեռնելիս երեսը դեպի արևելք են դարձնում և այդ ուղղությամբ էլ թաղում։ Արևով օրհնում են, ինչպես՝ ապրի արևդ, կանաչ արև ըլիս, երկար արև ըլիս։ Արևով անիծում են, ինչպես՝ արևդ մեռնի, արևդ իավարի։ Նույն արևով երդվում են. արևդ վկա, արևը վկա, քոռ եշեմ արևին... արևը իմ բալան (պատիժ) տա, էն արդար ըրեքնակը վկա, իմ փալ ըրեքնակը խվարի, թա ես...

Պատմում են, թե սկզբում արևը շատ մոտ է եղել երկրին։ Մի օր մի կին սրբել է յուր մանկան աղտեղությունը և շորը վերև ձգել։ Սա դիպել է արեգակին, և նա բարկանալով, բարձրացել է վերև, հեռացել մարդկանցից։

Մի անգամ հարսնևորները հարս ու փեսայի հետ անցնում էին Քափաս լեռով, երբ արևը սկսեց մայր մտնել։ Թագվորը խնդրեց արեգակին մի քիչ սպասել, մինչև որ վտանգավոր տեղը կանցնեն։ Բարի արեգակը սպասեց, բայց երբ վերադարձավ յուր մոր մոտ, սա սաստիկ բարկացավ նրա վրա ուշանալու պատճառով։ Արեգակը պատմեց պատճառը, բայց յուր մայրը ավելի ևս բարկացավ և անիծեց հարսնևորներին, որ քար դառնան։ Իսկույն կատարվեց մոր անեծքը, և բոլոր հարսնևորները քար դարձան, և մինչև այսօր էլ կանգնած են Քափասի ստորոտում։

Լուսին. Լուսինը նորելիս ամենքը նայում են նրան, խաչակնքում և անմիջապես իրենց հայացքը ձգում մի բախտավոր համարված երեխայի կամ դրամի վրա, որպեսզի այդ լուսնի տեսողության միջոցում բախտավոր լինին կամ շատ դրամ ստանան։ Երբ հնար չի լինում բախտավոր երեխայի և կամ դրամի վրա նայել, աչքերը երկինք են ձգում, որ գոնե շար, վատ բանի չհանդիպեն։ Մանուկներին բարձրացնում են դեպի լուսինը և աղոթում. «Ա՛ մոր ծոցեն տյուս եկող կարմիր լսներակ, տյու իմ ըեխիս պահես»։

Գորտնուկ (бородавка) ունեցողը նոր լուսնին է նայում և ասում.

«Լուսինը՝ նոր,
Գորտնուկը՝ չոր»։

Եվ այս այն հավատով, որ լուսնի զորությամբ գորտնուկը չորանա։

Լուսնի 1, 3 և 7 ծնվածը բարի և երջանիկ է լինում։

Լուսնի առաջին քառորդում ծաղիկ հիվանդությամբ բռնվածը կմեռնի, մի որևէ հիվանդից արյուն առնելը վտանգավոր հետևանք կունենա, նորապսակ զույգը եթե թագվերացումը կատարի, կհիվանդանա։

Արեգակն ու լուսինը քույր և եղբայր են համարվում. սկզբում արեգակը գիշերը, իսկ լուսինը ցերեկն է ման գալիս եղել։ Մի օր քույր արեգակը խնդրել է եղբայր լուսնին, որ իրեն ազատե գիշերը ման գալուց, որովհետև վախենում է, ցերեկն էլ չի կամենում շրջել, որովհետև ամաչում է, բոլորն էլ իրեն են նայում։

— Լավ,—ասում է եղբայր լուսինը,—դու ցերեկը շրջիր, որ չվախենաս, իսկ ես գիշերը կշրջեմ, և որպեսզի քեզ չնայեն, առ այս մի Բոփ ասեղները և ցցիր նրանց աչքերը, որոնք կնայեն քեզ։

Եվ այնուհետև արևն սկսեց ցերեկը ման գալ և ասեղներով ծակել իրեն նայողներին։

Արեգակի և լուսնի խավարումը բացատրում են այսպես. մի լոթը գլխանի հրեշ (ուշափ) կա, որ բնակվում է դժոխքում։ Երբ նրա ուտեստը պակասում է, նա կատաղած դուրս է գալիս երկիրը կոր-

ծանելու և բռնում է արեգակի և լուսնի առաջը, որ մարդիկ լույսից և տաքությունից զրկված, կոտորվեն։ Սակայն ողորմած աստվածը նրան կրկին նետում է դժոխքը։ Այս վիշապին վնասելու նպատակով խավարման միջոցին հրացաններ են ձգում դեպի այդ լուսատուները։

Մի ուրիշ ավանդություն էլ ասում է, թե արեգակն ու լուսինը քույր և եղբայր են եղել. արեգակը գիշերը, իսկ լուսինը ցերեկն է շրջել։ Բայց քույր արեգակը վախեցել է գիշերը շրջելուց և հայտնել է մորը, սա էլ պատվիրել է լուսնին գիշերը շրջել, և երբ նա ընդդիմացել է, մայրը մի ապտակ է տվել երեսին և ստիպել անշուշտ կատարել յուր հրամանը։ Նա էլ խռոված սկսել է շրջել, բայց շուտ-շուտ կամակորվում և թաք է կենում։ Մոր տված ապտակի հետքերը այժմ էլ նկատելի են։

Ա ս տ ղ ե ր. Սրանք բաժանվում են երկուսի՝ բարի և չար։ Բարի աստղի տակ ծնվածը բարի, երջանիկ է լինում, չարինը՝ չար, թշվառ։ Սրանցից յուրաքանչյուրը պատկանում է մի մարդու։ Եվ երբ վերջինիս օրհասը մոտենում է, նրա աստղը վայր է ընկնում և քառասուն օրից հետո այդ մարդն էլ մեռնում է։

Աստղերից Մեծ արջի համաստեղությունը կոչվում է «Օխթը սնամեր»։ Սրանց մեսին պատմում են, թե դրանք մի ժամանակ յոթը սանամեր են եղել, որոնց ընդհանուր քավորը քաղցից մեռել է, որովհետև յուրաքանչյուր սանամեր մտածել է, թե մյուսը կհոգա։ Աստված այս դեպքը հավերժացնելու համար այդ յոթը սանամորն էլ աստղերի է փոխարկել։

Հարդ-գողի ճանապարհ. Սրան կոչում են դարմանագողի ճանապարհ։ Պատմում են, թե մի ուղտապան 45 ուղտ ուներ, մի անգամ հարդը պակասեց։ Նա գնաց, 30-ի համար դրացիներից փոխ վերցրեց, իսկ 15-ի համար գնեց։ Երկրորդ անգամ, երես չունենալով փոխ խնդրելու, նա փորձեց գողանալ, բայց սաստիկ քամի բարձրացավ, և ամբողջ հարդը, գողացողի հետ ցրիվ տվեց երկնքում։

Ա ն ձ ր և. Հիսուսը և Ալին միասին ցորեն են ցանել, հնձել, կալսել, բայց բաժանելիս Ալին խլել է Հիսուսի բաժինը, որից դառնացած Հիսուսը արտասվել է։ Նրա արտասուքներից գոյացել է անձրև։

Ե ր ա շ տ. Երբ երկինքը կապվում է, և արտերն ու այգիները սկսում են չորանալ, գյուղացիները և նույնիսկ քաղաքացիները դիմում են հետևյալ միջոցների, որ անձրև գա։

1) Ընտրելով մի երկու մարդ, մի քահանայի հետ ուղարկում են Արթենա սարը, Արթենա գերեզմանից մի քար բերելու։ Սրանք պաս

պահելով և աղոթելով բարձրանում են ահագին լեռը, համբուրում Արթեն ճգնավորի գերեզմանը և մի քար վերցնում, փաթաթում մեռաքսյա թաշկինակների մեջ և բերում։ Երբ տեղ են հասնում, նրանց դիմավորում է ահագին բազմություն և քահանաներ ու տանում քարը, եկեղեցու սեղանի վրա դնում։ Հետևյալ օրը ավագ-երեցը գրկում է այդ քարը և խաչով-խաչվառով, քահանաներով ու ահագին բազմությամբ գնում դեպի այգիներն ու արտերը, թափոր անում և հանդիսավոր ձևով այդ քարը ձգում մի որևէ ջրի մեջ։ Հավատացնում են, թե անձրևն սկսում է անմիջապես տեղալ։ Եվ երբ բավականաչափ գալիս է անձրև, գնում, այդ քարը հանում են ջրից, որպեսզի անձրևը դադարի։

2) Երեկոները եկեղեցում հսկում են անում. կանայք ոտաբոբիկ թափվում են եկեղեցի և հորդ արցունքներով լալիս և անձրև հայցում։

3) Երկու կին լծվում են արորին, մինն էլ աղամարգու շորեր հագած։ մի մեծ գլխարկ գլխին ծածկած, իբր հոտաղ քշում է կանանց, և գետի մեջ մտնելով ջրի ընթացքին հակառակ վարում են։

Երբ շարունակ անձրև է գալիս և արև չի ծագում, քահանայի տանից ավել են գողանում և շոր քարի վրա դրած կրակ տալիս։

Ո ր ո տ ո ւ մ. Առաջները թուխպը ընդունվում էր իբր աստված։ Մի կույր մարդ բարկանալով աստծու վրա, որ իրեն զրկել է տեսողությունից, վերցնում է թթու լոշ և շպրտում թիսպի վրա։ Թուխպը սաստիկ բարկանում է և գոռգոռում կույրի վրա։ Այդ գոռգոռոցից առաջանում է որոտումը։

Նաև ասում են.

Երկնքում շար պառավներին տուպրակների մեջ ձգելով գլորում են՝ նրանց գոռգոռոցից առաջանում է որոտումը։

Եղիա մարգարեն երկնքի վրա քառաձի կառքով անցնելիս անիվների դառնալուց որոտումն է առաջանում, իսկ մտրակի զարկից՝ կայծակ։

Երբ առաջին անգամ որոտում է՝ ասում են.

Քրե կարկուտ
Անկաճկիտիք[1]։

Եթե առաջին անգամ որոտումը մարտ ամսի կեսին պատահի, այդ տարի հունձը շատ լավ կլինի։

Կ ա ր կ ո ւ տ գալիս վառում են ավագ ուրբաթ օրը մի քիչ վառված և պահված մոմը. զանգակները խփում, կասկարանքը ձգում դուրս,

[1] Ականջի մոտի ատամներ՝ սեղանատամներ։

ոտները դեպի վեր. շամփուրը ցցում գետնին, մի կարկուտ չորս կողմ անում, որպեսզի կարկուտը դադարի գալ, իսկ արտերը կարկտից ազատ պահելու համար՝ զատկից մինչև Եղիա մարգարեի տոնը բոլոր երկուշաբթի օրերը կիրակի են պահում, մասնավոր մատաղներ անում, իսկ Եղիա մարգարեի տոնին՝ հասարակաց մատաղ անում, ցանքսերը օրհնում։

Կայծակը խփելիս պառավները գլխներին քար, իսկ ատամների տակ ասեղ են դնում և հացառը ձգում դուրս, որպեսզի կայծակը իրենց տանը չխփե։

ՈԳԻՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Ոգիներ բարի և չար. Պահապան հրեշտակ. Ամեն մի մանուկ մի պահապան հրեշտակ ունի, որ շարունակ սավառնում է նրա շուրջը և պահպանում նրան։ Երբ մանուկը քնում է, հրեշտակը թևերը պարզած հսկում է նրա վրա, սնարի մոտ կանգնած։ Եվ երբ նա զարթնում է, սա ձեռին ծաղկի փունջ խաղում է նրա հետ, աղո՞ւ անում, որ ժպտա, կորում նրա երկարացած եղունգները և գանգուրներ ոլորում նրա մազերից։ Այս հրեշտակը մնում է երեխայի մոտ մինչև այն օրը, երբ նա արտասանում է առաջին հայհոյական խոսքը։

Սատանաներ. Գանձակի գավառի ժողովուրդն էլ սաստիկ հավատում է սատանաների գոյության և հազարավոր պատմություններ և սնոտիապաշտություններ ունի սրանց մասին, որոնք մեծ մասամբ նման են մյուս հայաբնակ գավառներում պատմվածներին։ Սրանք էլ նրանց երևակայում են որպես երկար պոչավոր, սև արարածներ, երկար մազերով և երկար եղունգներով, ոտների թաթերը ետև դարձած, չուխա հագած՝ բնակվում են քարայրներում, ջրաղացներում, ավերակ տներում և մանավանդ Քաջքա-ձորում, որ գտնվում է Գետաշենից Ղարաբուլաղ տանող ճանապարհի վրա։ Սա մի խոր ձոր է ծածկված ժայռերով և խիտ ծառերով։ Սրանք լինում են նաև Բանանց գյուղի մոտ գտնվող Ծակերի ձորում։

Սատանաները իրենց ձայնը նմանեցնելով ծանոթ անձնավորությունների ձայներին, հեշտությամբ խաբում են մարդկանց մթության մեջ։

Էգ սատանաները մասնավորապես քաջքեր են կոչվում, որոնք սիրում են աներևութաբար վերցնել հարսների տոնական հանդերձները հագնել, պար բռնել պարել, ապա կրկին աներևութաբար տանել, դնել իրենց տեղը։ Հարսները այս գիտենալով, նշխարք են դնում կամ ասեղներ շուլալում հանդերձների վրա, որ նրանք չհամարձակվեն մոտենալ։

Սատանաներն ավելի կանանց են մոտենում, քան թե տղամարդկանց։ Երբ նրանք իրենց հայհոյանքի տոպրակը ձգում են մարդկանց գլխներին, որոնք սկսում են աջ ու ձախ հայհոյանք թափել, երբ նրանք իրենց մուշտակն են ձգում սրանց վրա, սկսում են կռվել, երբ նրանք մտնում են սրանց աչքերը և այնտեղ պար բռնում, սրանք կատաղում են և կամենում ամեն ինչ կոտորել, փշրել։ Եվ երբ բուն են դնում սրանց սրտերում, սրանք ընդմիշտ դառնում են նախանձոտ, շարասիրտ և խռովարար։

Սրանց մասին պատմում են հետևյալները.

Գետաշենում մի նշանած աղջկա մի գիշեր քաջքերը կանչում տանում են և իրենց հետ ման ածում։ Սա տեսնում է, որ դրանք յուր բարեկամների շորերը հագած պար են գալիս, գնում յուղոտում է ձեռքերը և յուր եղբոր կնոջ (աղբրակնոջ) հանդերձով սրբում։ Հետևյալ օրը պատմում է այս դեպքը յուր տնեցիներին, և երբ չեն հավատում, ցույց է տալիս աղբրակնոջ շորերի վրա մնացած յուղոտ մատների հետքերը։ Այդ ժամանակ բոլորը հավատում են և «քաջքատարած» են կոչում նրան։ Նրա նշանածը հրաժարվում է ամուսնանալ նրա հետ և մի քանի տարի ուրիշ ուզողներ չեն լինում։ Վերջապես մի ավելի սրտոտ երիտասարդ ամուսնանում է հետը։ Սա պատմում էր, թե երբ երեկոները դուրս էր գալիս, սատանաները ետևից գոչում, կանչում են... Ասում են, թե այդ կինը շատ ճարպիկ էր, սատանի պես մի ժամում մի գուլպա էր գործում։

Թաքուն-այանի պապը ամեն օր անցնում էր ձիով Քաջքաց ձորով և գնում գալիս Ղարաբուլաղ։ Նա ամեն առավոտ նկատում էր, որ յուր ձին արյուն քրտինք է մտած լինում ախոռի մեջ։ Հարցնում է սրան, նրան և ի վերջո մի պառավի խորհրդով կուպր է քսում ձիու մեջքին։ Հետևյալ առավոտ գալիս տեսնում է, որ մի սատանա նստած է ձիու վրա և կպել կուպրից. իսկույն վերցնում է մի ասեղ և փոխանակ ծայրից, մյուս կողմից շուլալում է նրա կրծքին։ Սա սատանա է լինում և ծառայում է սրանց տանը յոթ տարի շարունակ։ Շատ արի, կորիճ է եղել, միայն ինչ որ ասել են, նրա հակառակն է արել, այս պատճառով էլ Թաքուն-այանենք սովորել են միշտ իրենց ցանկացածի հակառակն ասել, որպեսզի իրենց ցանկությունը կատարե։ Յոթ տարին լրանալիս այս սատանան ցեխոտում է յուր ձեռքերը և մոտենալով մի երեխայի,

խնդրում է հանել յուր կրծքից ասեղը, պատճառաբանելով, թե յուր ձեռքերը ցեխոտ են, չի կարող ինքը հանել։ Երեխան անգիտակցորեն կատարում է սատանի խնդիրը, և սա անիծելով Թաքուն-այանենց ամբողջ տոհմը անհետանում է։

Հացթուխները իրենց կրծքներին ասեղ կամ պողպատի կտոր են շուլալում, որպեսզի գիշերները ուշ տուն վերադառնալիս սատանաները չխփեն իրենց։

Օրորոցագող. Երբ մայրը երեխային ծիծ տալիս քնով է անցնում և յուր ծծով ծածկելով նրա քիթն ու բերանը նրան խեղդում է, ժողովուրդը նրա մահը ոչ թե մորը, այլ մի տեսակ քաջքերի է վերագրում, որոնց կոչում է «օրորոցագող»։ Սրանք իբր գողանում են մանուկներին և սպանում։ Այսպիսի քաջքերից երեխաներին աղատ պահելու հույսով օրորոցի մեջ նշխարք, հմայիլ, խոզի մազ են դնում, բարձին ասեղ շուլալում։ Եվ երբ նկատում են, որ օրորոցագողը գալիս է երեխային տանելու և սա խոխոռոցը դրել է, իսկույն նրա շորերը պատառելով հանում են և տան հերթիկից դուրս ձգում։ Հետո մի քոռամեխ, մի ձու և մի քիչ խոզի մազ թաղում օրորոցի մոտ։ Այս ժամանակ արդեն երեխան ետ (ուշքի) է գալիս։ Հետևյալ օրը երեկոյան մի կտոր հացի վրա աղ են ցանում, ունելիով մի կտոր կրակ վերցնում, հացը երեք անգամ երեխայի գլխով շուռ տալիս, ասելով. «Լեխիս չոռը, ցավը տար»։ Հետո նախ կրակը և ապա հացը շպրտում են դուրս, ասելով. «Քու փայը էս է, առ քընա»։

Օրորոցագողերը ժամկոչներից սաստիկ վախենում են, ուստի և հոգատար մայրերը քառասունքի օրերում կանչում են ժամկոչին օրորոցի վրա աղոթքներ կարդալու, որպեսզի նրանք չհամարձակվեն մոտենալու։

Հրեշ. Սրանք վիթխարի, մարդակերպ էակներ են, մի քանիսը միականի, սաստիկ ուժեղ, բայց և սաստիկ միամիտ։ Բնակվում են առավելապես անտառներում, այրերի մեջ։ Սրանք սիրում են կենակցել կանանց հետ, ուստի և ամեն միջոց գործ են դնում նրանց ձեռք բերելու։ Մի ավանդություն ասում է, թե այսպիսի մի հրեշ կամեցել է Գետաշեն գյուղից մի աղջկա կնության տանել, բայց երբ աղջկա ծնողներն ու գյուղացիները թույլ չեն տվել, նա բարկանալով գնացել մի ահագին ժայռ է բերել, որ գյուղի թմբից գլորի և ամբողջ Գետաշենն ավիրի։ Բայց բարեբախտաբար Պանտը (վիպական հերոս) տեսել է նրան և խղճալով գետաշենցիներին, յուր նիզակով խփել է նրան և բեռել նույն այն ժայռին, որ շալակած տանում էր։ Հենց այժմ էլ այդ

ահագին ժայռը կանգնած է գյուղի գլխին, և նրա յանջին նկատելի է հրեշի ամբողջ գծագրությունը։

Սրանց մի ուրիշ տեսակը, որ ուշեփ է կոչվում, յոթը գլխանի է, ամեն մի գլխի վրա ունի քառասուն բերան և ամեն մի բերանում՝ քառասուն ատամ։ Նա ապրում է դժոխքի խորքերում։ Սատանաները օր ու գիշեր սպասավորում են նրան, նրա համար զոհեր տանում մեր այս մեղսալի աշխարհից։ Նա մարդկանց ողջ-ողջ կուլ է տալիս, բայց երբեք չի կշտանում։ Նրա փորում կրակ է վառվում, որի բոցերը դուրս են թափվում բերաններից և քթածակերից։

Խորթլաղ. Երբեմն մահմեդական ենջեցյալները գիշերները շների են փոխարկվում և շրջում գերեզմանները, այցելում իրենց բարեկամների տները, ուր ճանաչելով նրանց, ընդունում են և կերակրում։ Հայ գյուղացիների ասելով մահմեդականների տներում գիշերը օջախի մոտ կերակուրներ են դնում հատկապես իրենց ազգական ենջեցյալների համար, որոնք շան կերպարանքով գալիս են, ուտում այդ կերակուրները և կրկին լուսաբացին մոտ վերադառնում գերեզմանատուն և դիակ դառնում։ Բայց երբ այդ շան կերպարանք ստացած ենջեցյալները հայերի տուն են գալիս և արգելվում, առավոտյան, արև ծագելուն պես կրկին դիակի են փոխարկվում, և այդպես մնում մինչև գիշեր, երբ կրկին շուն են դառնում։ Եթե կամենում են, որ դրանք դադարեն կերպարանափոխվելուց, դիակ դարձած միջոցին կտրում են դրանց գլուխները և դնում ոտների տակ և այդպես տանում թաղում, և կամ մոլլան խաչակնքում է գերեզմանը։

Սրանց մասին կան բազմաթիվ պատմություններ, որոնցից հիշենք մի երկուսը.

Մի հայ գյուղացի գիշերով մի մահմեդականի տանը տեսնում է, որ տանտիկինը մի մեծ ամանով կերակուր դնում է օջախի մոտ, երբ բոլորն արդեն պատրաստվում են քնելու։ Հայը տարօրինակ գտնելով այդ, հարցնում է տանտիկնոջը, թե ո՞ւմ համար է այդ կերակուրը։ Նա պատասխանում է, թե յուր սկեսրայրի համար է, և սրանով ավելի զարմացնում հային, որովհետև սա գիտեր, որ նրա սկեսրայրը վախճանված է։ Սաստիկ հետաքրքրված, այս հայը յուր անկողինը մոտ է քաշում օջախին, և երբ բոլորը քնում են, նա արթուն սպասում է, որ տեսնի, թե ո՞վ պիտի ուտի կերակուրը։ Կեսգիշերին լսվում է մի շան ղրթմրթոց, բացվում է դուռը, և մի մեծ, ծեր շուն ներս է մտնում, ուղղակի գնում դեպի կերակուրը և սկսում լափել։ Հայը կամենում է դուրս անել շանը, բայց վախենում է։ Շունը ուտում է բոլոր կերա-

կուրը, ամանը մի կողմ դնում և ծանր քայլերով հեռանում։ Առավոտյան այս մարդը հարցնում է տանտիկնոջը, թե ո՞ւր մնաց նրա սկեսրայրը, քանի որ մի մեծ շուն կերավ նրա կերակուրը։

— Մի այդպես խոսիր,—պատասխանում է տանտիկինը,— թե չէ տեղերիս կիմանան, քեզ կսպանեն, երեկոյան եկողը շուն չէր, այլ շան կերպարանքով իմ սկեսրայրը։

Մի ուրիշ հայ գյուղացի էլ մահմեդականների գերեզմանի մոտով անց կենալիս մի փոքրիկ շուն է տեսել և հետը բերել տուն, գոմում մի քթոցի տակ դրել, որ չփախչի։ Սակայն երբ առավոտյան վերցրել է քթոցը՝ շանը հանելու, տեսել է մի փոքրիկ, մահմեդական երեխայի դիակ։ Հասկանալով, որ դա խորթլաղ է, սպասել է մինչև երեկո, և երբ նա կրկին շան է փոխարկվել, վերցրել է և տարել մահմեդականների գերեզմանատանը ձգել և ինքը փախել։

Եթե իրիկնադեմին եկած հյուրը ստիպված է գերեզմանատան մոտով վերադառնալ, այդ երեկո այդ տանը ճրագ չեն վառել, որպեսզի խորթլաղները չփախցնեն այդ հյուրին, գերեզմանների մոտով անցնելիս։

ՑԱՎԵՐ

Ցավերը երեխայի նմանություն ոգիներ են, որ աներևութաբար շրջում են, և ում սև ճիպոտով խփում են, նա հիվանդանում մեռնում է, իսկ ում կանաչ ճիպոտով են խփում, հիվանդանում, բայց էլի առողջանում է։ Սրանք բոլորը ման ածողներ ունեն, այսինքն ստիպում են մի կնոջ, մի պղամարդու, որ իրենց առաջնորդի և ման ածե այն բոլորի տները, որոնց մասին հանձնարարություն են ստացել նրանց աստծուց։ Միայն ջերմը ման ածող չունի, ինքն իրեն է ման գալիս։ Նա բնակվում է մենավոր կաղնու մեջ։ Ջերմ ունեցողը յուր վրայից պատռում է կանաչ կարմիր կտորներ, տանում այդպիսի ծառերից կապում, հուսալով, որ ջերմը անցնելով կտորին, կանցնի կաղնու մեջ և այնտեղ կբնակվի ու իրեն ազատ կթողնի։

Սաղկամայրը, որ ծաղիկ հիվանդություն է տալիս, շատ քնքուշ էակ է, նա արյուն չի սիրում, ուստի և նրան զոհեր չեն մատուցում։

Կարմիր քամին (рожа), մկնատամը իրենց օջախներն ունեն, որոնց հողը ջրով շաղախելով քսում են հիվանդության ենթարկված տեղի վրա, իսկույն լավանում է։

ՍՐԲԵՐ

Նահատակ. Բանանց, Խաչակապ, Փիփ, Կիրանց և Քարհատ գյուղերին մոտիկ, Ղուշղուրա գետի աջ ափից քիչ բարձր գտնվում է «Նահատակ» ուխտատեղին։ Այստեղ մի ժայռ քար կա ցցված, որի մոտ մի հացի ծառ տարածել է յուր սաղարթախիտ ճյուղերը, բազմաթիվ շորի կտորներով կապկպված։ Մի քիչ հեռու մի աղբյուր է կարկաչում։

Ամեն տարի, առավելապես մեծ պասի ավագ շորեքշաբթի օրը, որ ժողովրդի բարբառով Ջիք շորեքշաբթի է կոչվում, շրջակա գյուղերից բազմաթիվ մարդիկ, մանավանդ երիտասարդներ և չափահաս աղջիկներ գալիս են այստեղ ուխտ։ Գարնան սկզբներին հարսներն ու աղջիկները «հարսի մանուշակ» (ամենամուգ մանուշակ) են քաղում, զարդարում իրենց կրծքերը և ապա բերում շաղ տալիս Նահատակի գերեզմանի վրա։

Ավանդությունն ասում է, թե այդ նահատակը Վարդան անունով մի կորիճ երիտասարդ է եղել, որ լեռներում առանձնացած՝ ավազակությամբ է պարապել։ Նա կռվել է վատ և անօրեն մարդկանց դեմ, այն էլ ճակատ առ ճակատ, և ոչ գաղտագողի, թփերի տակից։ Երբ նա պատահել է մի անզեն մարդու, նրան ձեռք չի տվել, այլ միայն ասել է թե՝ մյուս անգամ այս ճանապարհով անցնելիս զենք վերցրու հետդ, որ ես կարողանամ քեզ ցույց տալ, թե ինչպիսի մայր է ծնել ինձ։ Իսկ երբ կռվում անձնատուր են եղել, նա վերցրել է թուլասիրտ հակառակորդի սուրը, միջից կոտրել, ասելով. «Նամարդ (անազնիվ), դու արժանի չես վրադ թուր կրելու, որ չկարողացար ներկել քո թշնամու արյունով։ Նալաթ (ամոթ) քո տղամարդկությանը, հարամ-բլի փափախդ, գնա ու գլխիդ կնկա լաչակ կապիր»։

Մի անգամ վարդավառին, Բանանց գյուղի աղջիկները վիճակ հանելիս դուրս է եկել, որ Նախշուն անունով լսի կտոր աղջիկը Վարդանին է վիճակված։ Այս վիճակը հասնում է Վարդանի ականջին, և նա մի տոն օր իջնելով Բանանց գյուղը, պարի ժամանակ շրջոշ է տալիս Նախշունին, և սա սիրով ընդունում է։

Այնուհետև Վարդանը գարնան սկզբներին հարսի մանիշակ, մայիսին կուսանաց վարդեր, իսկ ամառը եղա-ծաղիկ փնջեր կապած ուղարկում է Նախշունին նրա շուր գնացած միջոցին։

Նախշունի գեղեցկության լուրը հասնում է և Գանձակի խանին, որ վեց մարդ ուղարկում է Բանանց՝ Նախշունին փախցնելու և յուր մոտ բերելու։ Սրանք բռնում են Նախշունին ջրի գնալիս, դնում ձիու

վրա և փախցնում։ Գյուղի երիտասարդներից կորիճները նրանց ետևից են ընկնում, բայց Նախշունին չեն կարողանում ազատել։ Բոթը հասնում է Վարդանին, սա կրակ կտրած հարձակվում է դրանց վրա Մկեց աղբյուրի մոտ, չորսին զետին գլորում, երկուսին փախցնում և ազատում Նախշունին։

Շուտով վրա են հասնում Նախշունի ծնողները, Վարդանը հանձնում է նրանց ազատված Նախշունին և խնդրում նրա ձեռքը։ Մնողները սիրով համաձայնում են, միայն խնդրում են սպասել մինչև համբարձում՝ օրինավոր կերպով պսակը կատարելու։ Սակայն խանը իմանալով յուր մարդկանց պարտությունը, մի զորք է ուղարկում Ղուշղուրի հովիտը, Վարդանին գտնելու։ Տմբլա ձորում Վարդանը նրանց հետ կռվի է բռնվում և սաստիկ ջարդ տալուց հետո ինքն էլ ընկնում։ Ընկերները նրան թաղում են սև ժայռի տակ։ Այս բոթը լսում է Նախշունը և շիք չորեքշաբթի օրը ծնողներից ծածուկ գալիս ընկնում է գերեզմանի վրա և աղի արցունքներ թափում։ Նրա արցունքները վտակում են ու կազմում այս փոքրիկ աղբյուրը, որ այնպիսի տխուր կարկաչով գալիս է ցայտում ժայռի մոտից։

Մնողները գալիս, բաժանում են Նախշունին Վարդանի գերեզմանից, սակայն նա հիվանդանում և գնում է հավիտենականության մեջ միանալու նրա հետ[1]։

Ի մ ա մ - զ ա դ ա. Մի հայ երիտասարդ մի թուրք խանի տան ծառայելիս չի պատասխանում նրա կնոջ հրապույրներին, ուստի և վերջինս ամբաստանում է նրան խանի առաջ, իբր թե սա կամենում էր իրեն մոլորեցնել։ Խանը անմիջապես սպանել է տալիս երիտասարդին, որի վրա լույս իջնելով, ապացուցվում է արդար լինելը, ուստի և հայերը սկսում են պաշտել նրան։

Ա ր թ ե ն Ճ ղ ն ա վ ո ր. Սա սարսափելի ցրտերի միջոցին բարձրացել է այժմ յուր անունը կրող լեռը և այնտեղ ճգնել, իսկ սաստիկ շոգին իջել Երասխի հովիտը և այնտեղ տանջել իրեն։ Նրա գերեզմանը այժմ գտնվում է համանուն լեռան վրա և հրաշագործ է։ Երաշտ ժամանակ գալիս քար են տանում այնտեղից, որ անձրև գա[2]։

Պ ա ն տ ը կամ Պանտալյոնը մի թուրք տղա է եղել, որ ընդունել է քրիստոնեություն և յուր քրոջ հետ միասին փախել տանից։ Թուրքերը հետևել են նրան և նահատակել այն լեռան վրա, որ այժմ նրա անունն

[1] Այս ժողովրդական ավանդությունից պ. Ս. Տեր-Ավետիքյանը մի գեղեցիկ վեպիկ է շինել «Նահատակը» անունով, որից մենք հանեցինք բուն ավանդությունը։

[2] Տե՛ս երաշտ։

է կրում, իսկ քրոջը դնում են մի պարկի մեջ և լեռից գլորում։ Սա գալիս ընկնում է Մռուքի մոտ, այժմյան Նահատակի տեղը, ուր վրա են հասնում թուրքերը և նահատակում։

ԿԱԽԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Կ ա ր կ ա ֆ ի ր. Կախարդությամբ պարապող մարդիկ կան շատ գյուղերում, բայց բոլորից նշանավոր համարվում է բանանցեցի Գրբրաց Ակոբը։ Սա ունի մի քանի ձեռագիր՝ Սողոմոնի, Վեցհազարյակ, Հավախոս և այլ գրքեր, որոնց օգնությամբ կարողանում է գուշակություններ անել, կորուստները գտնել, գողի տեղն իմանալ, մինի սերը գրավել, սիրահարներին գժտեցնել միմյանցից և այլն։ Բայց այս բոլորը անում են և մյուս գրբացները, բանանցեցի Հակոբի փառքը նրանում է, որ նա միայն կարող է կապել երկինքը կարկտից, աղատել գյուղացու ապրուստի միակ միջոցը կարկտի ավերիչ հարվածներից։ Եվ այս հետևյալ միջոցով։

Համբարձման օրը մյուս մատաղների հետ մորթում են և մի չալ այծ, որի արյունով ինքը՝ Հակոբը գրում է թղթի վրա հետևյալը. «Մեծ և երաշնորհ Տեառն մեր տէրն Յիսուս Քրիստոս յորժամ երթայր յԵրուսաղեմ, հարցին ցնա աշակերտքն. «ի՞նչ արասցուք, յորժամ գայ ամպ կարկտից»։ Պատասխանի ետ նոցա տէրն մեր Յիսուս Քրիստոս. «ասացէք Ա ռ ա ս ի Մ ա ռ ա ս ի դ ե ժ - դ ե ժ»։

Ահա այս գրվածքը ոլորում, անց է կացնում եղեղնի կամ մի ծակ փայտի մեջ, երկու ծայրը ամրացնում և տանում արտի կամ այգու մոտ մի բարձր տեղ անկում։ Ահա այս աղոթքը թույլ չի տալիս, որ կարկուտը այդ տեղին խփի։ Բանանցի, սրա շրջակա և նույնիսկ Գանձակի շատ արտերն ու այգիները ամեն տարի այսպես ապահովագրվում են։ Եվ որովհետև ապահովագրվողների թիվը չափազանց մեծ է և Գրբաց Հակոբը ամենի համար չի կարողանում ինքը գրել, ուստի թույլ է տալիս, որ ուրիշները արտագրեն այդ աղոթքը, միայն որպեսզի դա յուր զորությունը չկորցնի, պահանջում է տառ առ տառ արտագրել, առանց իմաստն ըմբռնելու։

Գ ա ր ի գ ց ել. Մեծ մասամբ գարի գցողները կանայք են լինում։ Նրանք այս միջոցով գուշակում են, թե հիվանդությունը ո՞ր սուրբն է ավել, թե կորած իրը ուր և կամ ո՞ւմ մոտ է, թե մտադրած խորհուրդը կկատարվի՞, թե ոչ։

Յուրաքանչյուր գարի գցող ունի երեք գարի, որոնցից մինը արծաթապատ է, և կամ երկու ցորեն և մի գարի։ Նա սրանք պահում է

մի մեռաքսյա թաշկինակի մեջ շատ հարգանքով, որոշյալ սրբություն վերագրելով նրանց։

Գարի գցելիս թաշկինակը փաթաթում է ձախ ձեռքին, գարիները դնում այդ ձեռի ափին, նշանակում, թե այս գարին այսինչ սուրբը կամ այսինչ մարդն է նշանակում, ապա աջ ձեռը դնում ձախի վրա, Հիսուս Քրիստոսասելով երեք անգամ թափ տալիս։ աջ ձեռքը վերցնում և նայում, թե արծաթապատ գարին կամ ցորենը ո՞ր գարու մոտ է ընկել, նրանից էլ առաջացել է հիվանդությունը և կամ նրա մոտ է գտնվում կորուստը։

Գարի գցողը մեռնելիս գարիները տալիս է յուր ամենասիրելիին, և այնուհետև այս վերջինն է շարունակում գուշակություններ անել, ստանալով նրա օրհնության հետ և նրա ունեցած շնորհքը։

Վիճակի շրով ևս գուշակություններ են անում՝ այսպես. Համբարձման վիճակը հանելուց հետո վիճակի ջուրը ածում են մի քյասի (գավաթ) մեջ և երկու բութ մատերը միմյանց հենած երկու ցուցամատով բռնում են գավաթը և սկսում սրբերի անուններ տալ. որի անունը տալիս գավաթը դեպի աջ պտտվի, նրանից է առաջացել հիվանդությունը կամ անհաջողությունը, իսկ եթե ձախ պտտվի՝ նրանից չէ։

Մի քանի տեղեր երկու մարդ են բռնում գավաթը իրենց բութ մատերով, իսկ քաղաքում միմիայն մի մարդ՝ երկու բթով, մյուս մատները ծածկած։

Խաչ գցի. Որպեսզի գուշակեն, թե անելիք ճանապարհորդությունը լավ թե վատ հետևանք պիտի ունենա, գնում են խաչակապ գյուղի մոտ գտնված խաչ-քցի մատուռը[1], 5—10 մանրիկ քարեր վերցնում և բոլորը միասին ձգում մատուռի մեջ գտնված միակ խաչքարի վրա, եթե քարերը խաչաձև դասավորվեցին, ասել է թե ճանապարհորդությունը «բարի» է, իսկ եթե ոչ՝ «չար», պետք է ետ կենալ։ Եվ շատ շատերն այլևս չեն շարունակում ճանապարհը, եթե «բարի» չի գալիս։ Ուրիշները և մանավանդ կանայք նույն կերպ գուշակում են, թե իրենց իղձերը կատարվելու են, թե ոչ։

Գիլ-կապ. Երբ մի անասուն է կորչում, գիլկապ անող պառավներին խնդրում են գայլերի բերանները կապել, որպեսզի կորած անասունը չուտեն։ Սրանք էլ կամ թել են վերցնում, մատի վրա փաթաթում և հանգուստում և կամ մի գրչահատ, բերանը բաց անում և ապա փակում և այդպես պահում։ Այս երկու դեպքումն էլ ասում են հետևյալ աղոթքը.

Գիլ անեմ, գիլ կապ անեմ.
Կոքնելդ[2] մո-մա ունեմ.
Ոտներդ խոզանի անեմ.
Աչքերդ կծորի[3] անեմ։

Մեկի սերը գրավելու համար նրա շորերի մեջ հոպոպի յուղ են լցնում, շորերի բամբակի հետ բորենու մազ դնում[4]։

Ամուսիններին միմյանցից գժտեցնելու համար գողանում են կնոջ մազերից և երեք անգամ հանգուստում և այդպես պահում։ Երբ կամենում են, որ հաշտվին, հանգուստը արձակում են։

Խաչի դուլ. Մի քանի սրբավայրերում կան սաստիկ ջղային և կրոնասեր կանայք կամ տղամարդիկ, որոնք իրենց խաչի դուլ (ծառա) են կոչում։ Սրանք ավլում, մաքրում են սրբատեղիները, օգտվում նրանց եկամուտներից և ուխտավոր եկած ժամանակ ուշաթափվում (շտապում) և գուշակություններ անում։ Սրանք մի քանի համախոհ կանայք են ունենում, որոնք օգնում են ուխտավորներին կերակուր եփելիս և նրանցից տեղեկանում նրանց գրության և ուխտի մասին։ Ապա այս բոլորը հաղորդում են խաչի դուլին։ Սա հարմար բոպկին հանկարծ վայր է ընկնում, ձեռներն ու ոտները խփում գետնին, ուշաթափվում, ձեռներով ծեծում կուրծքը, անկապ խոսքեր ասում և ապա հետզհետև հանդարտվում։ Այս ժամանակ ով ուզում է գուշակել տալ, բռնում է նրա ձախ ճկույթ մատից։ Խաչի դուլը կիսաբաց աչքերով նայում է դրան և կցկտուր ասում.

Կաղնի-խաչ, ես քեզ մատաղ,
Կաղնի-խաչ, ես քու լիս երեսին մատաղ.
Կաղնի-խաչ, ես քու ցավն ու չորը տանեմ.
Կաղնի-խաչ, ես քու ոտի տակի հողն եմ.
Կաղնի-խաչ, ես քու զարավաշը, քու ծառան եմ։

Հետո մելամաղձոտ ձայնով երգում է.

Քու ցավերին կանեն դարման,
Քիր ու ախպեր կաղնի խաչը.

---

[1] Այս մատուռը նոր են կառուցել այն խաչքարի վրա, որ ընկած էր մի հինգվուրց, փտած կաղնու տակ։

[2] Ատամները։

[3] Լուստատիի. կարծում են, թե լուստատիի աչքերը չափազանց փոքր են և իրենց արձակվող լուսից շլացած՝ ոչինչ չեն տեսնում։

[4] Մամիկոնյան Ն., Ջհասություն, Թիֆլիս, 1898, եր. 127։

Զոք-չոք դնա նրանց տակը,
Երեսիդ քսիր նրանց քարերը.
Դնա սիրով ու հավատով.
Թամուզ ու պայծառ սրտով.
Նրանք քեզնից շամբիր կուզեն,
Անծին ալյառ ու մատաղ կուզեն։

Պատգամ հարցնողը լարված ուշադրությամբ, շատ անգամ արցունքն աչքերին լսում է և կատարում ասածները։

Այսպիսի խաչի դուլերից հոչակ են հանել Կիրանց գյուղի մոտ գտնված վերոհիշյալ Կաղնի-խաչի դուլ՝ բանանցեցի Նապունց Թանգի աքիրը և Գետաշենի Սուրբ Նշանի-դուլ Ակոփը, որ նույնիսկ մատուռի ետևումն է թաղվել։ Սա երկար տարիներ շահագործել է Սուրբ Նշանի մատուռը և խաբել ժողովրդին, մինչև անգամ հրդիկներից ներս ցատկելով, ուր նախապես ծածուկ վերմակներ են բռնած եղել, որպեսզի այդ բարձրությունից թռչելիս ոտները չկոտրվեն։

ՀԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ

Եթե հավը աքաղաղի պես կանչի, պետք է մորթել, ապա թե ոչ՝ տանեցիներից մեկը կմեռնի հենց երրորդ կանչին։

Եթե հավը քթիթ անե՝ անձրև կգա։

Եթե կաչաղակը չոչռա՝ հյուր կգա։

Եթե կաչաղակը մինի տան մոտ ցախերի վրա նստի և կչկչա, այդ տանտերը կհարստանա։

Եթե մինի տան մոտ բուն կամ ագռավը կանչի, տնեցիներից մինը կմեռնի։

Եթե կատուն ճանկռտում է գորգը կամ մի որևէ փայտ՝ անձրև կգա։

Եթե շունը քիթը վեր քաշի՝ տիրոջը անբախտություն կպատահի։

Եթե խոզերը մեջը-մեջքի տված նստեն, կամ եթե դաշտումն են, տուն վազեն՝ անձրև կգա։

Գորտին սպանելիս երեք անգամ թքում են իրենց ձեռքերին և ոտներին, վախենալով ասածու անեծքից։

Եթե արևով անձրև գա՝ գայլը կծնի։

Եթե օձ տեսնեն և չսպանեն, բոլոր օձերը կբարեկամանան։

Օձի շապիկը դնում են գլխարկի մեջ, որպեսզի գլուխը չցավա։

Եթե ականջը «կանչում է»՝ ձայն է տալիս, ասում են, թե մինը իրենց հիշեց։

Եթե ոտի տակը քոր գա, ճանապարհ կերթա։

Եթե աջ բուռը քոր գա՝ փող կստանա, իսկ եթե ձախը քոր գա՝ կտա։

Եթե մինը զկոտա, նշանակում է, որ նա բան է գողացել։

Հյուր կգա՝ երբ պատառը վայր ընկնի. դանակը գետին ընկնելիս բերանը վերև ուղղվի։ Ձախ աչքը խաղա։ Երբ խմորը հունցելիս մի կտոր թռչի։ Երբ հացի կտորը սեղանի վրա կանգնի։

Որպեսզի ճանապարհորդը չվիրավորվա՝ կճուճ են կոտրում ետևից։

Գիշերը գլխաբաց չեն ման գալիս, որպեսզի սատանաները չխփեն։

Գիշերը առանց խաչակնքվելու և Հիսուս Քրիստոսի անունը տալու գետից չեն անցնում, որպեսզի «տուրը չտան»՝ սատանաները չխփեն։

Մաղած ալյուրի վրա իաչ են քաշում, որպեսզի քաջքակոխ չլինի՝ քաջքը չկոխե։

Ժամամանքին տան դռները բաց են թողնում, որովհետև «շառն ու խերը» այդ ժամանակ են բաժանում։

Ժամանքին՝ աղջամուղջին չեն աշխատում, հաց չեն ուտում, որպեսզի բախտ բաժանողը իրենց վնաս չպատճառե։

Սփռոցը ընթրիքից հետո թափ չեն տալիս, որպեսզի տան «բարաքյաթը» չգնա։

Եթե այրված հաց ուտեն, գայլից չեն վախե։

Հացը վայր ընկնելը կամ ալյուրը վայր թափելը մեղք է համարվում. այդպես անողին ասված հացից զրկում է։

Աղջիկներն ու երիտասարդները փլավի քերանք չեն ուտում, ապա թե ոչ՝ նրանց հարսանիքին եթե ամառ է՝ անձրև, եթե ձմեռ՝ ձյուն կգա։

Աղջիկներն ու երիտասարդները փայծաղ և ձվի դեղնուց չեն ուտում, որպեսզի հարսանիքի ժամանակ չսևանան։

Սխտորի կճեպը կրակը չեն ձգում՝ մեղք է։

Սխտորը ձեռքից ձեռք չեն տալիս, որպեսզի աչքերը չցավի, այլ վայր են դնում, որ մյուսը վերցնի։

Երազում եթե տեսնեն, որ գլխարկը վայր ընկավ, նշանակում է, որ կինը պիտի մեռնի։ Եթե բոլոր առամները թափվեն՝ պիտի հարբստանան։ Եթե ագռավը թոնրատնից հաց փախցնե, տնեցիներից մինը՝ կմեռնի։

Հիվանդություն տարածված տեղում եթե մի քահանա վախճանվի, հիվանդությունը կվերջանա։

Եթե մինը կարողանա յուր արմունկը համբուրել, իսկույն թոշուն կդառնա։

Սիածանի տակից անցնողը եթե տղա է՝ աղջիկ, եթե աղջիկ է՝ տղա կդառնա։

ՆՇԱՆԱՎՈՐ ՏՈՆԵՐ

Նոր-տարի. Սա բավական անշուք է անցնում թե՛ քաղաքում և թե՛ մանավանդ գյուղերում։ Առհասարակ ոչ խանութները և ոչ արհեստանոցներն են փակվում, ուստի և շատ քչերն են այցելում միմյանց։ Քաղաքում առավոտ վաղ պատարագ են մատուցանում, որպեսզի տարին լավ անցնի։ Այցելելով միմյանց, շնորհավորում են նոր տարին և բարեմաղթում առողջություն և հաջողություն։ Այցելուներին հյուրասիրում են սուրճով և ընկույզի ու նշի գոզինաղով։ Գյուղերում այցելողները խնձոր կամ կիտրոն են տանում իրենց հետ և մի մի հատ տալիս ում որ շնորհավորում են։ Սրանց հյուրասիրում են օղիով և չոր մրգեղենով։

Մի քանի տներում դռան ճակատը զարդարում են կարմիր թելերով, որպեսզի նոր տարին էլ կարմիր, ուրախ անցնի։

Ուրիշ տեղեր եղած ծանոթներին և ազգականներին այցեփոխ ուղարկելու եվրոպական սովորությունը քաղաքում հետզհետե ընդհանրանում է։

Մնունդ և մկրտություն Քրիստոսի. Ճրագալույցի գիշերը, ասում են, գետը մի բոպե կանգ է առնում. եթե այդ միջոցին մի օրևէ իր դնեն ջուրը՝ իսկույն արծաթ կամ ոսկի կդառնա, իսկ եթե քար դնեն, դա՝ ամեն տեսակ հիվանդությունները բուժելու շնորհը կստանա։ Ամուլ կանայք այս գիշեր երեք անգամ ընկղմվում են գետի մեջ, որպեսզի երեխա ունենան։

Սուրբ Սարգիս. Առաջավորաց պասը այս գավառում ևս հայտնի է որպես Սուրբ Սարգսի պաս։ Ամբողջ հինգ օր պաս, և շատերը միածում են մնում, այսինքն օրը միայն մի անգամ, կեսօրին են ճաշում։ Այս շաբաթվա ընթացքում ծանր գործեր չեն անում, ոչ ճախարակ մանում, ոչ բուրդ գզում և ոչ լվացք անում, որպեսզի Սուրբ Սարգսի ձին չսայթաքի։ Նույնիսկ եղջերուն այս շաբաթ այնպես չի շարժվում, ասածու հրամանով, որ վրայից մաղ թափվի և Սուրբ Սարգսի ոտներին փաթաթվի։

Հավատալով, որ Սուրբ Սարգիսն այդ շաբաթվա ընթացքում քաղցած է մնացել և ուրբաթ օրը ցորենի հասկերը փշրելով յուր բռում կերել է, իրենք էլ, ի հիշատակ այդ անցքի, նույն այդ ուրբաթ օրը ցորենից փոխինձ են անում և ուտում։ Երիտասարդ տղաներն ու աղջիկները նույն գիշերը աղի բլիթ են ուտում, որպեսզի երազում տեսնեն, թե ով կգա երազում իրենց ջուր տալու, միանգամայն հավատալով, որ նա պիտի լինի իրենց սպասված ամուսինը։

Շաբաթ օրը գրեթե ամեն տուն խաշիլ է եփում, ուստի նաև այս պասը կոչվում է «խաշիլի պաս»։ Սովորաբար այս օրը ուխտ են գնում մոտակա Սուրբ Սարգսի ուխտատեղիները։ Այսպիսի ուխտատեղիներ գավառում բավականաչափ կան, որոնց մեջ ավելի նշանավոր է Գանձակի արևմտյան կողմում գտնվածը։ Այստեղ հավաքվում է ուխտավորների ահագին բազմություն, երեքական անգամ պատյտ գալիս ուխտատեղու շուրջը, մոմ վառում, աքաղաղ մատաղում։ Վերադարձին հանդիպողին փոխանակ բարևելու, ասում են. «Խաչը քեզ ողջույն է զարկել» «Ողջ կենաս»,—պատասխանում է հանդիպողը։

Բարեկենդան. Սուրբ Սարգսի տոնից մինչև մեծ պաս բարեկենդան է համարվում, և այս միջոցին ժողովուրդը թե լավ սնվում է և թե շատ ուրախ անց կացնում։ Միայն այս միջոցումն է, որ գրեթե բոլորի տանն էլ միս է գտնվում։ Բացի սրանից, հարսանիքներից շատերը այս միջոցին են կատարվում, և գրեթե ամբողջ գյուղը միասին է անցկացնում ժամանակը։ Հարսանիք ՝Ելած օրերումն էլ փոքրիկ խմբեր կազմած այս ու այն տանը ուտում-խմում և քեֆ են անում, ապա երբ գլխները բավականաչափ տաքացած է լինում, դավուլ-զուռնի առաջնորդությամբ սկսում են շրջել գյուղը, պարել, երգել և հազար ու մի տեսակ միմոսություններ անել։

Ահա մի այսպիսի խումբ բարեկենդանի վերջին օրը յուր միջից մինին առաջնորդ է ընտրում, քուրքը թարս հագցնում, փափախը շրջած դնում, երեսին սև մուր քսում և կնոջ շորեր հագած մի տղամարդու հետ շրջում գյուղը։ Գյուղացիները սրան ասում են «Քյոսա-գյալդի» և ահագին բազմությամբ հետևում նրան։ Թե քյոսան և թե մանավանդ նրա կինը հազար ու մի ծամածռություններ ու հանաքներ անելով զբաղեցնում են շրջապատողներին։

Մի քանի ուրիշ խմբեր էլ «Ղոշուն-ղոշունի» կամ «Շահ-շահի» են խաղում։ Մաքրում են մի կալ, մի բարձր տեղ պատրաստում, մի երկար ձող ցցում և ծայրին մի կանաչ ու կարմիր թաշկինակ կապում ու թողնում, որ ծածանի։ Ապա երիտասարդներից ամենից ճարպիկ ու

սրախոսի գլխին մի եռանկյունի, թագաձև փոստ են անց կացնում, փորը ուռցնում, կուրծքը, ուսերը զարդարում զանազան ձևի գունավոր կտորներով, վրան մի հազվագյուտ վերարկու ձգում, կրծքին շարում զանազան գույնի թղթյա մեդալներ և իբր շահ բազմեցնում թախտի վրա։ Մյուս երիտասարդները մի-մի երկար մահակ, ուսերին դրած շրջում են նրա ետևը, որպես նրա հավատարիմ թիկնապահներ, իսկ մի քանի սրախոսներ կանգնում են նրա առաջ և զանազան խնդիրների մասին զեկուցում նրան։ Ահա մինը սկսեց գյուղի մի հարստի մասին գանգատվել և ամբաստանել նրան զանազան գեղծումների մեջ։ Շահը իսկույն հրամայում է յուր թիկնապահներից մի քանիսին գնալ և բերել նրան։ Սրանք էլ անմիջապես բռնի կերպով բերում են նրան շահի առաջ։ Շահը երեսովն է տալիս նրա արածները և տուգանք նշանակում։ Իսկույն թիկնապահները սկսում են շարչարել նրան, մինչև որ վճարում է տուգանքը։ Այսպես դատավարությունը շարունակվում է, մինչև որ լուր է գալիս, թե մի ուրիշ շահ հարձակում է գործում։ Անմիջապես այս շահը խաղացնում է յուր զորքերին և հարձակվում եկող շահի վրա։ Սկսվում է բավական լուրջ կռիվ. մահակները իրար են հարվում և փշրվում, երբեմն գլուխներ էլ են պատռվում։ Վերջապես մի կողմը հաղթող է հանդիսանում։ Իսկույն հաղթված շահին նստեցնում են իշի վրա, ագին ձեռը տալիս, երեսին մուր քսում և թիկնապահներով շրջապատած պտտեցնում գյուղը՝ հազար ու մի կատակներ անելով ու նվերներ ժողովելով։

Կես գիշերին, երբ արդեն մի քանի անգամ հաց կերած են լինում և ձվով «փակած բերանները», հրացաններ են արձակում «բարեկենդանին փախցնելու»։

Տյառնընդառաջ. Նորապսակ երիտասարդները ցրտնի ծառի ճյուղեր են բերում և եկեղեցու բակում դարսում։ Եթե մի նորապսակ զլանում է այս պարտականությունը կատարելու, քահանան նրանից 40—50 կ. տուգանք է առնում։ Երեկոյան ժամասացությունից հետո եկեղեցու ջահից վերցրած մոմով վառում են այդ խարույկը, որ դոնատառուն է կոչվում, և նորապսակ զույգերը երեք անգամ պտտվում են շուրջը և վերջը ամուսինները երեքական անգամ թռչում դոնատառունի վրայից։ Երեխաները մի-մի հավ գրկած կանգնում են խարույկի շուրջը, որպեսզի հավերը մեծ պասին հաճախ ձու ածեն։ Ապա մի խանձող առած վերադառնում տուն։ Մի քանիսը այս խանձողները (ընձղակոթ) պահում են, որ զատկի թաթախման երեկոյին «կաթնավի» տակ դնեն և թաթախվեն այդ կերակրով։

Տերնդազի մոխիրը ջրի մեջ լուծում խմեցնում են ծննդկանին, որ հեշտությամբ ազատվի, հիվանդին, որ առողջանա։ Նույն մոխրից ածում են հավաբնում, որ հավերը շատ ձու ածեն, պահում և գարնանը շաղ են տալիս արտերում, որպեսզի մուկը չկտրի ցանքսերը։

Տերնդազի համար անպատճառ ցրտնի են գործածում, որովհետև «Քրիստոսը ծնված միջոցին այդ ծառի ճյուղերով է փաթաթվել»։

Մեծ-պաս. Առաջին օրը տղամարդիկ և պառավ կանայք խընձորներ և կիտրոններ առած այցելում են միմյանց՝ մեծ պասը շնորհավորելու։ Նորապսակները անշուշտ մի-մի թաշկինակ լի մրգեր առած գնում են իրենց զոքանչներին տեսության, համբուրում են նրանց ձեռքերը և մրգերը տալիս։ Զոքանչներն էլ համբուրում են նրանց ճակատը և մի-մի զույգ գուլպա ընծայում։

Տան մեծերը մի-մի շիշ օղի առած գնում են տանուտերին ու քահանային տեսության, շնորհավորում են նրանց պասը, իրենց օղուց մի-մի բաժակ նախ իրենք խմելով և ապա նրանց առաջարկելով։ Եվ եթե մի քիչ օղի ավելանում է, շշերը տալիս են տնեցիներին, որ դատարկեն և վերադարձնեն։

Կեսօրից հետո երիտասարդները ձիավորված դուրս են գալիս մի հրապարակ՝ քաղաքում՝ «Ջաբուր» կոչված դաշտը և արշավում։ Ահագին բազմություն գալիս է դիտելու և գովաբանելու իրենց ճարպկությունը ցույց տվող երիտասարդներին։

Իսկ աղջիկներն ու հարսները իրենց տների բակերում և կամ մոտակա ծառի տակ ճլորթի (ջինջաղ) են խաղում։ Խաղը ավելի կենդանություն է ստանում, երբ կամաց-կամաց երիտասարդներն էլ են մոտենում և մասնակցում։ Խաղի «տաք» ժամանակը մինը մի ձող է առնում ձեռքը և այնքան հրում ճլորթին և ձողով խփում մեջը նստողին, մինչև որ նա տալիս է յուր ապագա նշանածի անունը։ Եվ որովհետև ընկերներին հայտնի է լինում թե ով ում է սիրում, ուստի և խոստովանության ենթարկվողը չի ազատվում, մինչև որ ճշմարիտը չի խոստովանում։

Միջունքի շորեքշաբթի երեկոյին «լիճք» են կոչում և «լիս» վառում, այսինքն՝ մի ամանի մեջ նախ մի քիչ ջուր և ապա ձեթ են ածում ու մի բամբակից ոլորած պատրույգ դնում և վառում ի հիշատակ «քառասուն մանկանց» և քառասուն անգամ ծունր դնում։

Հետևյալ օրը այդ կանթեղի մեջ մնացած ջուրը օջախը կամ թոնիրն են ածում, մեղք համարելով «արդար» ջուրը մի անսուրբ տեղ թափել։

Մ ա ղ կ ա ղ ա ր դ. Տեղական բարբառով կոչում են զրզարդար: Առավոտ շատ վաղ, դեռ լույսը չբացված, ամենքը շտապում են եկեղեցի: Այս օրը բոլոր հարսներն ու աղջիկները անշուշտ լինում են եկեղեցում: Երբ «առավոտ լուսո» շարականը երգում են, երեխաները նոռան են ածում: Եվ երբ ուսենու ճյուղեր են օրհնում, նշանած աղջիկների գլխներին սկեսրանք շարդաթ են ձգում և մոմ տալիս ձեռը: Ժամասացությունից հետո գնում են գերեզմանատուն, բաղարջ հաց տանելով իրենց հետ, մոմեր վառում գերեզմանների վրա, ողբում, հացն ուտում և վերադառնում:

Զ ա բ չ ա բ ա ն ա ց շ ա բ ա թ. Ավագ երեքշաբթի երեկոյան ժամերգության միջոցին տասը երեխայի շապիկ են հագցնում, ձեռներին մոմ տալիս և կանգնեցնում եկեղեցու սեղանի առաջ: Երբ տասը հիմար և իմասուն կուսանաց առակը կարդում են, ավագ դպիրը մի ափսեի մեջ տասը կլորած թղթեր է ածում և առաջարկում այս երեխաներին վերցնելու: Այս թղթերից հինգի վրա «հիմար», իսկ մյուս հինգի վրա՝ «իմասուն» խոսքերն է գրված լինում և ըստ այնմ՝ երեխաներից հինգը իմասուն և հինգը հիմար են համարվում:

Զ ի ք - չ ո ր ե ք շ ա բ թ ի. Այս օրը սովորաբար ուխտ են գնում «Մկնատամի խաչերին», որոնցից նշանավոր է Գանձակի հարավարևմտյան կողմում «Ղզլղայա» կոչված բլրակի և Էրքեհ գյուղի մոտ գտնվածները: Ուխտավորները մոմ են վառում, աղոթում և այդ ուխտատեղու հողից մի քիչ ջրով խառնում, քսում մկնատամ ունեցողների վերքերի վրա, որ լավանան: Վերադարձին քարեր են գլորում կամ նետում, որպեսզի իրենց հիվանդություններն էլ այդ քարերի հետ գնան անցնին, և կամ ուխտատեղու մոտ եղած ծառերից շորի կտորներ են կապում, որպեսզի իրենց հիվանդություններն էլ այնտեղ կապված մնան:

Տուն վերադառնալով նույն ուխտատեղից բերած հողը լուծում են ջրի մեջ և խմեցնում աղջիկներին, որպեսզի նրանք շուտով ամուսնանան:

Նույն օրը շատ ընտանիքներ հիմնովին մաքրում են տները՝ «չիք են անում»:

Ա վ ա գ - հ ի ն գ շ ա բ թ ի երեկոյան ժամերգության միջոցին կարագ յուղ են տանում եկեղեցի և տալիս քահանային: Ուսելվայի միջոցին քահանան լվանում է զրեթե բոլոր ծերունիների ոտները և բոլոր կանանց և երեխաների ձեռքերը և մի քիչ օրհնած յուղ դնում: Այս յուղը քսում են աչքերին, ճակատին և մաղերին:

Ս. Վ ա ր դ ա ն ա ն ց տ ո ն ը գյուղերում բոլորովին չի արվում, իսկ քաղաքում հոգեհանգիստ է կատարվում եկեղեցու մեջ, քարոզ և ճառեր խոսվում:

Գիշերային ժամերգության ժամանակ ժամավորները բաղարջ հաց են բերում իրենց հետ եկեղեցի և բաժանում հիշատակ բաղարջակերաց տոնի:

Այս ժամերգության միջոցին երիտասարդները շատ անկարգություններ են անում, մանավանդ Գանձակում, ուր վերջին տարիս նրանցից մի քանիսը թույլ էին տվել իրենց եկեղեցու մեջ թուղթ խաղալու:

Ա վ ա գ ու ր բ ա թ առավոտյան դարբինները, ոսկերիչները անխոս գնում են իրենց խանութները և յոթական անգամ մուրճով խփում սալին: Կանայք էլ ասեղով յոթը անգամ ծակում են մի որևէ շոր: Նույն առավոտը դարբինները պողպատից անխոս շինում են մատանիներ, որ կոչվում են «ուրբաթարուր»: Սա գնում են մատները, որպեսզի կայծակը չխփե, չարիքից ազատ լինին:

Ճաշու ժամերգությունից հետո ամեն տուն ընդհանրապես և այդ տարում ննջեցյալ ունեցողները մասնավորապես, բաղարջ հաց և պասվա կերակուրներ են բերում եկեղեցի, ուր սփռոցներ են փռում և այդ բերածները դարսում, ապա բոլոր ժամավորները նստում միասին ուտում են, իրենց գլուխ ունենալով քահանաներին, որոնք ճաշից հետո ամենայն ննջեցելոց մի ընդհանուր հոգոց են ասում:

Այդ օրը փայտ չեն կտրում, կանաչի չեն հանում, գետինը չեն փորում, որպեսզի Քրիստոսի գերեզմանը քանդված չլինի:

Շ ա բ ա թ առավոտյան քահանան խոստովանեցնում է գյուղի ընակիչներին և հաղորդում երեխաներին: Այս վերջիններս մի-մի կամ երկ-երկու ձու են տալիս քահանային հաղորդվելու միջոցին: Այնուհետև քահանան շրջում է տները և օրհնում, ստանալով կամ մի քանի կոպեկ կամ ձու, բրինձ, ցորեն և այլն: Երեկոյան նախատոնանքին կրոնամոլները իրենց հետ ձու են տանում եկեղեցի, որ «ժամավ քաշենն» և նրանով բանան պատը: Պատահում են և այնպիսի ոգեկրամոլներ, որ հենց եկեղեցում «Առնք-կերեք»-ը ասելիս՝ անմիջապես ուտում են ձուն: Նույն երեկոյին ժամավորների մեծագույն մասը հաղորդվում է:

Այդ երեկոյի պատարագը միայն «առած» է լինում, որը և քահանային, տիրացուներին և մի քանի մարդկանց ընթրիքի է հրավիրում: Սովորաբար այս երեկոյին ձուկ և փլավ են եփում: Իսկ կարմիր, դեղին և այլ գույնի ներկած ձուն անպայման լինում է:

Զ ա տ ի կ. Առավոտյան ժամերգությունից հետո գյուղացիները գնում են նախ տանուտերին, քահանային և ապա իրենց բարեկամներին Քրիստոսի հարությունը շնորհավորելու։ Տանուտերին և քահանային սովորաբար մի-մի շիշ օղի են տանում նվեր։

Զու կովեցնելու սովորությունը սաստիկ ընդհանրացած է թե՛ փոքրերի և թե՛ մեծերի մեջ։

Մի քանի գյուղերում այս օրը հասարակական մատաղ են անում և եկեղեցու գավթում միսը լավաշ հացի մեջ փաթաթած բաժանում ժամավորներին, սա կոչվում է ախար, իսկ սրանից՝ այս զատկի կիրակի օրը՝ ախար or:

Երկուշաբթի, մեռելոցին, ամեն տուն գանազան ուտելեղեններ և մրգեր առած գնում է գերեզմանատուն, օրհնել տալիս յուր հին ու նոր ննջեցյալների գերեզմանները և ապա միացնելով յուր բերած ուտելեղենները բոլորի բերածների հետ, միասին հաց են ուտում՝ նախ տղամարդիկ և ապա կանայք։

Ա պ ր ի լ ի 1. Թե՛ քաղաքում և թե՛ գյուղերում ընդհանրացած սովորություն է միմյանց խաբել։

Ն ա վ ա ս ա ր դ. Այցելում են միմյանց և շնորհավորում նոր տարին։ Հարսների հերանց տանից ընկույզ են բերում և հերդիկից ածում փեսաների գլխներին, ճլոլանք, այսինքն գաթաների, խնձորների, հավերի շարան՝ քարշ տալիս նույն հերթիկներից։ Գրեթե ամեն տուն կորկոտ է եփում։

Հ ա մ բ ա ր ձ ու մ. Տոնի Նախընթաց օրը առավոտյան շատ վաղ յոթ աղջիկ միասին, բոլորովին անխոս գնում են յոթն աղբյուրից յոթը բուռ ջուր վերցնում, յոթը տեսակ ծառից յոթը տերև պոկում և յոթը տեսակ ծաղիկի հետ ածում մի բզուղի մեջ, ապա իրենց պրկիցների տները ման ածելով՝ զանազան նշաններ. մատանի, բանալի, կոճակ, դանակ և այլն ձգում են բզուղի մեջ և գիշերը տանում գնում են վարդենու թփերի տակ, բարի աստղերի ներգործության ներքո։ Զարաճճի երիտասարդները որոնում են, որպեսզի աղջիկներից ծածուկ գողանան և հետևյալ օրը մի որևէ նվեր ստանալով՝ վերադարձնեն։ Համբարձման օրը աղջիկներն ու տղաները հավաքվում են մի հրապարակ տեղ, վիճակ հանելու. ամեն կողմից հարսներ, կանայք և տղամարդիկ գալիս շրջապատում են դրանց։ Մի հինգ կամ վեց տարեկան «միամիտ» երեխայի նստեցնում են շրջանի մեջտեղը, վիճակի բզուղը դնում գիրկը և մի մեծ մեզար (մեծ շալ) ձգելով աղջկա գլխին, ամբողջովին ծածկում նրան։ Ապա նախ չափահաս և հետո հնոզհետե բոլոր աղջիկները

վիճակի երգեր են երգում և յուրաքանչյուր երգի միջոցին վիճակահան աղջիկը բզուղի միջից մի նշան է հանում. իսկույն նշանի տերը վերցնում է այդ և ինքն իրեն կրկնելով երգված «գյուլումը», աշխատում է նրանից գուշակություններ անել։ Շրջապատողները օգնում են նրան և նրա հետ ուրախանում և կամ տխրում։

Այս օրը ամենայն տուն անշուշտ «կաթնավ» է եփում։

Շատ գյուղերում գութանավորները միասին մատաղ են անում և ամբողջ գյուղին բաժանում։

ԲԱՆԱՎՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԵՐԳԵՐ

ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ[1]

Ա[2]

Ա յար, ա յար, կռնել ես,
Մնշակի փունջ բռնել ես,
Բարև տվի, առար ոչ՝
Ինձնից լավը գտել ես։

Ալիր մաղեմ թեփ անեմ,
Մեր շվանին կյապ անեմ.
Ես այու մի բաղում պիտինք,
Չվա լիսը քեզ անենք։

Աղջի, քնանք մեր հնձանը,
Գլուխդ դիր ծնկանս.

[1] Բացի իմ հավաքածուներից իմ ինդրանքով վիճակի երգեր հավաքեցին նաև, պ. պ. Ս. Հակոբյան, Գորդյան, Միրիմանյան, Մ. Ենգիբարյան, Մանասյան, Հ. Թումանյան, զանազան գյուղերից, ընդամենը մոտ հազար հատ։ Այս բոլորը ես միմյանց հետ համեմատեցի, ընտրելագույնները վերցրի և լեզվական նրբությունները պահպանելու նպատակով երկու խմբի բաժանեցի (Փիփի և Գետաշենի, իրենց շրջականերով)։ Ապա խնդրեցի պ. Ն. Մամիկոնյանին, որը տեղացի է և շատ լավ գիտե բարբառը, ալքի անցկացնել և շտկումներ կատարել։ Շնորհակալություններս եմ հայտնում բոլոր վերոհիշյալ պարոններին։

[2] Փիփ և նրա շրջակա գյուղերից։

Ես դու օտինք պատունչան
Դուս կյա մեր դուշմանի ջան։

Ա՜յ ալին-ալին ախչիկ,
Ծամերը դալին[1] ախչիկ,
Ես քի որտեղ սիրեցի՝
Քու հերանց կալին, ախչիկ։

Ա՜յ ավատա, ավատա,
Թոխկին ոսկի սավատ ա.
Ինձ մի սարդար յար ունիմ,
Կասես քաղքի թավադ ա։

Ա՜յ ուխ անենք, ուխ անենք
Ղրմտատին ծուխ անենք.
Ով պետռ-մետռ խոսա
Թագն ու ուսկապը ծուխ անենք։

Արտին կյարին ա հըսել.
Ղարղու ղամիշն ա հըսել.
Նամարդ ըլես, այ իմ յար,
Բոյս բոյիտ ա հըսել։

Արտ եմ 'արել հըսել ա,
Ղարղու միջին փսել ա,
Խապար արեք էն յարին,
Իմ ու քու վախտը հըսել ա։

Բաղըմըս կա բաղբանչի,
Շև կա շեին[2] նման չի.
Թուփուն թալա[3] տյուս դառան,
Մինն իմ յարին նման չի։

Գետիս էն ղոլը բաղ ա,
Անդին հուր միջին խաղա,
Ինձ մի թավատ յար ունիմ,
Համ մելիք ա, համ աղա։

[1] Խիտ
[2] Բողբոջ
[3] Թոլորը

Ծթիմ ըրախին հեր անենք,
Կաթն ու մածնին մեր անենք,
Լավ գյուլում ասող աղջիկ,
Մինչի լիսը սեր անենք։

Եկեք քնանք էն ախը,
Ըլբլախա կլոխը,
Ով ինձանից քեզ ասի,
Լիք օրորոց վըեչ տեսնի։

Զարգարն ա բոզ չուխավոր,
Քաթանն ա դյուշին սովոր,
Հալա մին քյամար կուզեմ,
Փոկնեն թուփուզավոր։

Էն առումը մին կալ պիտեր,
Իմ շհենին ալ պիտեր,
Ալ շհենին ի՞նչ անեմ,
Մի ջանդաչգյար յար պիտեր։

Էսօր պաս ա, պաս կենանք,
Ջըհաս ա ջըհաս կենանք,
Ձեռքդ մեկնի ձեռք տանք,
Գյամին նստենք անց կենանք։

Էն տղան էն դռանը,
Թուխ յափնջին կռանը,
Շոռ տվավ, տունը մտավ.
Աչքս մնաց կռանը։

Էսօր ուրբաթ ա պաս ա,
Գլխինդ մատ-մատ խաս ա,
Ատեր, քու կարքին մատաղ,
Խի՞ ասըմ ըս չհաս ա։

Ըստեղավ քինա յաշի՝
Զարդաթդ քցի մաշի,

[1] Ծալքը

Իմ մերս քե հավան չի,
Խորումտ[1] թառաչ[2] քաշի։

Իմ ծաղիկը քաղած ա,
Պացրը սրտում կյաղած ա,
Ով իմ ծաղկին ձեռը տա
Ըրընթաթախ տափին կյա։

Լուսնինգան Պանտա տակին,
Սունկս ծնկանդ տակին,
Ես քե որտեղ սիրեցի,
Մեխակի ծառի տակին։

Կանգնել ես, կանչում էլ չես,
Բոյիցդ ամանչում էլ չես,
Եկա կըշտովդ անց կացա,
Տեր ես, ճանաչում էլ չես։

Կանաչ-կարմիր շափաղ ի,
Ես մի նուռան ղափաղ ի.
Զյոլըվոր քնող ախպեր,
Ջանս ջանիդ մատաղ ի։

Կանանչ տափ ա, կարմիր լոր,
Բախճեն բյություն ալ խնձոր.
Բաղը ես եմ, բարը տյու,
Իմ սիրելի յարը տյու։

Կանաչ կարմիր սյուրվացու,
Կարմիր հղը մատացու,
Դու իմ նանին հըրսնացու,
Ես քու նանին փեսացու։

Կաքավը կանգնել ա քարին,
Կառուցը կարմիր արին,
Դաղստան եսիր պիտի
Իմ սիրած յարին առին։

[1] Խոր
[2] Հառաչանք

Կետ ա քընյում իրես-իրես.
Խոջա, ասուած կսիրես,
Ինձ մի հեռու յար ունիմ,
Խեր խաբարը տյու պիրես։

Կյութանի էրգան ծերը,
Փիս կինի սըրվըտերը.
Սըրվըտերը հունց անի,
Ըռընտերը հերն ու մերը։

Կյութանը վարի հողը,
Ղավալը կածի փողը,
Հով ընձանա քե ասի.
Վեչ ընդնի օխնած հողը։

Հունձ եմ արել, նեղացել,
Գետան եմ մտել, լեղացել,
Ութ օրվա հիվանդ ի,
Սոցդ եմ մտել, սաղացել։

Ջեթ եմ առել լսացու,
Կանաչ խարար քիսացու.
Դու իմ նանին հըրսնացու,
Ես քու նանին փեսացու։

Ջեռնիս ա մածնի քսակ.
Էանիցս եկաք հըսաք,
Էն օրին մատաղ ըլնեմ,
Ես-դու գնանք տի պսակ։

Ջորերս ընի դանդ երա,
Ջիմ ըրծամի բանդեր ա,
Յար ջան, քու ջանին մատաղ,
Սիրածդ տանը անտեր ա։

Ղալամ քաշեմ էն քարին,
Նստած տեղս ա սարին[1],
Բղարից բերեմ յաղլուխ,
Ղարկեմ իմ սիրած յարին։

[1] Հոգ

Ղումարի հաղ ես արել,
Նախիրը բաղն ես արել,
Պյուլոր իրեք տարի ա,
Ինձ մի խոսքի դուիսաղ ես արել։

Մածուն եմ մերել սրալի,
Ցար եմ փռնել սրտալի,
Հով որ յարը յարեն հանի,
Հոքին սըտանեն տանի։

Մատումս կա մըտանի,
Համ թառ ա, համ ծիրանի,
Արի քինանք դիվանը,
Հով սիրել ա, նա տանի։

Մեր բաղումը կա արոտ,
Շամամները ինկահոտ,
Ցարիս համար եմ պահե
Նա է իմ ծոցիս կարոտ։

Մեր վիճարին յաթաղը,
Գլխիս դնեմ փափախը.
Ջանդուրուկդ[1] ես քցես
Ըրեսիս տա շոփաղը։

Մեր տան տակին վար կանեմ,
Ջար սկռավին քար կանեմ,
Որ իմ սիրածս ինձ տան,
Պլութենս[2] թարգ կանեմ։

Մեր տուն ձեր տուն մին պտեր,
Միշի պատը չի պիտեր,
Միշի պատը ոնց անի,
Քավթառ տատը չի պիտեր։

Մեր տուն ձեր տանեն դիմաց,
Աչքով կանեմ, ունքով իմաց,
Ես քե թաբուն էի սիրել,
Ով արավ խալխին իմաց։

[1] Քոզ
[2] Ենթություն

Մթնել ա մթնճանալ,
Դրանդա քոլն կանալ,
Հրես եկավ իմ յարը,
Ալ հեսկի ծուփը կանալ։

Մտիկ ըրեք էն դուշին,
Վեսը տրել ա փուշին,
Եբրանի ընդյուր կի լի
Թուշը տրել ա սրածին։

Նախշը կանեմ, թել չափեմ,
Ես բոշա չեմ՝ քե խաբեմ.
Դաղըստան եսիր կտա,
Ղուլա կտամ, քե թափեմ։

Նռան ծառին նուռ չկա,
Վարդի ծառին վարդ չկա,
Էս վենց քանդված օլքա ա
Սիրածը սիրածին չեն տա։

Նստած կտուրս թախտ ա,
Ջիուս կիլոխը ըռախտ ա,
Մի թազա յար եմ բռնել,
Պոչերը[1] ըռհանի վարդ ա։

Նստել ես հատիկ պատիկ,
Օնքերդ նռան հատիկ.
Ես ույու մին պախչում պտենք,
Ես վրդևոր, ույու զատիկ։

Նստել ես բարձր հովին,
Փոփոում է դոշի մովին,
Դու բարակ, մեջդ բարակ,
Ղուլ գնամ ջեյրան ջանիդ։

Ոչխարս արել եմ դյուզը,
Ջոկել եմ դարագյոզը,
Ցաղլախդ զարկի նխշեմ,
Վարդով լցնեմ, քե բախշեմ։

[1] Վարս

Աշխարը դյուզի վրա,
Ղըղխը խուզի վրա,
Ես մի թութի ղուշ պիտի,
Իմ յարի ուսի վրա։

Ջուլիցը պիրեմ ծիրանը,
Քուլիցը պիրեմ գերանը,
Լավ գյուլում ասող աղջիկ,
Անուշ կենա բերանդ։

Պստիկ աղջիկ, գալում ես,
Մաղերդ սղալում ես,
Ինձ առնելու միտք ունիս,
Խունջիկ-մունջիկ գալում ես։

Ջուրս կեծ ա, ջուր պիրեք,
Սպըհանա հյուն պիրեք,
Տուն հավասար թամամ են,
Ղարիբ ղուշը տուն պիրեք։

Ջուրն իլավ երես-երես,
Բազիրգան, ասուված սիրես,
Երբ որ գնաս Շորագյալ,
Ղարիպ յարս հետդ պիրես։

Ջուրը ջրին առել ա,
Մատս դալամ դառել ա,
Էն թուխ բեղավոր տղեն
Ուշն ու միտքս տարել ա։

Ջքումս եմ դրել կաշի,
Աչքս ճամփա կը յաշի,
Ջքանց իմ յարի կյալը
Հալալ կեսս կը մաշի։

Սաղին կոթին կիր կանեմ,
Վենը կաց, գինի բերեմ,
Ես էս պիծի տեղավս
Ցրված խելքդ տուն պիրեմ։

Սիրել եմ սարի տակին,
Սաղմոսը կոնատակին,
Որ սիրել եմ՝ կը տանեմ,
Ծառա եմ Նահատակին։

Սրերի խինձը ինչ անի,
Կաթնով բրինձը ինչ անի,
Ուրուր սիրել ենք՝ կառնենք,
Ուրբշի խոսք ու զրիցն ինչ անի։

Տանս տակին խնկի ծառ,
Ոսկի կաքավ վրեն թառ,
Քներ-կեր, թևին տեր
Ավլան ծաղիկ տանել տեր։

Տանձի ծառին ղուշ կըլի,
Նռան ծառին փուշ կըլի,
Հնիրակ կըտամ էն յարին,
Սիրած յարին թուշ կըլի։

Տանս տակին կար գերան,
Հարս ու աղջիկ նի դառան,
Կուռս տարա թե բռնեմ,
Լոխ իմ մեր ու քեր դառան։

Տյու կաղնել ես կյութանիդ,
Շիրմըշըղը պերանիդ,
Տյու պարակ, մեջքդ պարակ,
Ղուլ քընամ ջեյրան ջանիդ։

Տուն եմ շինել ղընանա,
Ղարղու պիրեք տիմանա,
Մի պուտ ջուր տվեք խմեմ,
Բալքամ սիրտս հովանա։

Տուն եմ սրբել՝ նամ ա,
Սյունները արծաթի ջամ ա,
Ա նան, շատ մի խսալ տալ,
Նոր ա եկել յարս, խամ ա։

Տրինինանց կտերը,
Ելլում են ծառերը,
Ես գնում եմ, լաց չինես,
Քնած տեղդ բաց չինես։

Քամին կանի պեքին կտանի,
Սև ոչխարը թոքին կանի,
Ով սիրածը սիրածից հանի,
Չար սատանեն հոգին հանի։

Քընա գիր ըրա էն քարին,
Ըլթավան դիր մեր յարին,
Որ տեղեն յան չի տան,
Ես եմ Մռավա սարին։

Քինալիս հըղեն քոլ ա,
Ձեռքինս ցուրտ-ցուրտ կոլ ա.
Թոռը քինաս, կանուխ եկ,
Ես վըհատան տակին կորա։

Քնա, քնա, հրեա,
Կակոխ պոշնիքդ երեա,
Սև քթակըդ դպետ[1] գիր,
Սիպտակ ճակատդ ըրեա։

Քնա, քնալիտ մատաղ,
Մեճկիտ քմարին մատաղ.
Տանեն նգարան չունես,
Աննդարան չանիտ մատաղ։

Քնացի չուրը չրի,
Վեռքս ընգավ օցի լըղի.
Իմ հորն ու մոր աճկը տյուս կյար,
Վեր ինձ տվին դարիք տղի։

Քնացի տեսա քնած ա,
Գյուղդյուր-գյուղդյուր քրթնած ա,
Ետ քցեցի թա տեսնեմ,
Վարդ-մեխակ խոնված ա։

[1] Դեպի ետ

Քափազա սարը սար ա,
Տակը զնչիլած քար ա.
Ես քեզ թաքուն սիրեցի,
Էն ո՞վ ըրավ աշկարա։

Քինա ասի իմ նանին,
Ալթավան դնի թավին.
Ուրիշ տեղ աղջիկ չտա՝
Կանուխ կը քինա չիվանին։

Քինալիս հըղես քոլ ա,
Ձեռքինս ցուրտ-ցուրտ կոլ ա.
Թոռը քինաս, կանուխ եկ,
Ես վեռտան տակին կորա։

բ

Ախչի, անունդ Վարթի,
Ձեն տամ, ձենս ճնաչի,
Ով ինձանա քեզ ասի,
Դու ընդրա աչքը հանի։

Ախչի, անումդ Ջանի,
Աչքեր ունիս չեյրանի,
Մին մատներդ դես պահի,
Քաշեմ ոսկի մատանի։

Ախճի, անունդ Փարիշան,
Երևոդ խալ դառնշան.
Խոսք տուր, որ դու ինձ կգաս,
Մատնիս տամ քի նշան։

Ախճի Գյուլի բախտավոր,
Յարդ հենց ա թագավոր,
Բարով մուրազի հասնեք,
Ձեր վրթիվորը շնհավոր։

Ախճի, եկ գնանք բաղը,
Պուկենք շմամի թաղը.

[1] Գեռաշեն և նրա շրջակա գյուղերից։

Քու ըրեսիտ շափաղը
Հանել ա սրտիս դաղը։

Ա՜ տղա, անումքա Առուշան,
Սիպտակ կուլիտ[1] թուխ նըշան.
Յաղլուխքա ըղարկի անեմ,
Պահեմ քու յարիտ նըշան։

Ա՜յ հնվա, հնվա թևքըս,
Ծըրանի մով ա թևքըս,
Պաց տոպը կարմիր հավեշ,
Հյունչ կանեմ, սև ա սիրտըս։

Ա՜յ ափը կյաս, ափը կյաս,
Մեծ ղզանին քյափը կյաս.
Որ դու ըտենց խոսացիր,
Բոյավդ մեկ տափը կյաս։

Ա՜յ ախ կանեմ, ախ կանեմ,
Քոշը ոտիտ լախ կանեմ,
Ա տղա, հերիք ա խոսաս,
Մուկն ըռեխատ քաշ կանեմ։

Արար վարար շըտարար[2],
Սարուն թոռ կիգա վարար.
Ըստեղավ թո՞ռն ես քինում,
Ետ դառ, եկ, ուշս տարար։

Ա՜ տղա, կաղնել ես ետ հողին,
Ջիբդ լիքը տկողին,
Մինը ուզեցի, տվիր ոչ,
Հարամ ըլլի ուտողին։

Ա՜ տղա, դու կանգնել ես նովին,
Փոփոռա դյոշիդ կարմիր մովին,
Ոչ քեզ է հավան, ոչ քո տեսնողին,
Աշուղ մշտարի քո շմշատ բոյին։

[1] Բուխախ, կզակ
[2] Ցորենը հարդից չոկող մարդ։

Ա՜յ տղա, սիրուն փեսա,
Քեզ հազար բարով տեսա.
Շեն կենա էս վրթիվորը[1]
Սրտիս մուրազին հասա։

Ա՜յ տղա, եր անիլ տուր,
Մրուքդ վեր անիլ տուր,
Հերս քի աղջիկ չի տալ,
Տերտերին գիր անիլ տուր։

Արկանքը ադին երա,
Շամամը թաղին երա,
Ես մի թիթռա[1] դուշ պիտի
Իմ յարին բաղին երա։

Բոյս բոյիդ նման ա,
Քու բոյը նըրդըվան ա.
Ալամ աշխարհ մի դութի,
Էն դութին քի զուրբան ա։

Գյանճու նստած իանները,
Մեր մոթալին պանիրը,
Ային օյին խոսալ մի,
Քու հարն է իմ հանները։

Գյանճու ըդին փոշ անենք,
Քո ոններին քոշ անենք,
Քանի վախտ ա տեսիլ չեմ,
Ե՜ մին[2] յախշի խոշ անենք։

Գյանճու տակին շաղ կտամ,
Թերմա շալը թառ կտամ,
Հով իմ սիրածն ինձ տա,
Իմ ջանը զուրբան կտամ։

Գետիս էն զոյը շուշա,
Իմ յարս բեկլար դուշ ա.

[1] Թեթև
[2] Եկ մի

Էն հո՞վ ա ասում դեշ ա,
Քանց շաքարն էլ անուշ ա։

Գետիս էս դոլը ցել ա,
Ցելը ջրով լցվել ա,
Խաբար արեք էն յարին,
Սիրածդ դարդով լցվել ա։

Գետ ա կյալիս ձուփրես[1],
Խոշա, աստուծ կը սիրես,
Հեռու տեղ մին յար ունիմ,
Խեր խապարը դու պիրես։

Գյուլպա կանեմ, տանի տղին,
Ման կը գամ կեղած տղին,
Կյոխս բադա կը տամ
Էն յարին, զարիբ տղին։

Գյուլպա կանեմ տափ կանանչ,
Ման կը գամ համանչ-մամանչ.
Ով ուզի ոչ յարս գա՝
Ոչ կապի կարմիր-կանաչ։

Գյուլյում կասեմ, կշարեմ,
Ջվալ կածեմ, կկարեմ.
Կորի՜, քյնա, շան տղա,
Քեզանից լավը կճարեմ։

Գլխանը երի[2] սարն եմ,
Ունքերս ուրուր կը խառնեմ,
Կուռս ճառվդ բերեմ,
Սոցիդ մեխակն առնեմ։

Գնացել ես, եկել ես,
Մաշիկներդ մաշել ես,
Մաշիկներիդ, քեզ մատաղ.
Գառը մորից չոկել ես։

---

[1] Ջվի երես, շողշողուն
[2] Վերևի

Գնացի սարը սոնգը[1],
Փոշը ըլավ աչի ծոնգնը[2].
Ես դու մեկ բաղում պիտենք
Ես բուրվառ, դու խոնգը։

Գնացի տեսա քնած,
Գյուլգյուր-գյուլգյուր քրտնած,
Մեկ երեսը ետ գցի,
Տեսնեմ՝ վարդ մանիշակը փոած։

Գութանին էրկեն ծերը,
Փիս կինի սըրվըտերը.
Սըրվըտերը հո՞նց անի,
Քռանա հերն ու մերը։

Դարդս հալեմ հլցնեմ,
Ճրագ ածեմ կպցնեմ,
Իմ նանը ճանգրս քցեմ
Իմ դարտ ասեմ, լըցըցնեմ[3]։

Դու նստել ես սրսնագին[4],
Ջուղաբ ապա փռանգին,
Թազա փեսան ինչ կուտի,
Շքարով ճիշտռանգին։

Եկեք քինանք էն օխը,
Գյուլբյուղաղը կիլոխը,
Յարի յարից հանողը
Հանենք կարճկին[5] կիլոխը։

Ես աղջիկ եմ նոր մաղա,
Աշխարքն ինձ փիանգազա,
Անմահական խնձորը
Կանեմ յարիս թավազա։

---

[1] Սոնկ
[2] Սոնկ
[3] Բնագրում՝ լըցրնեմ, կարծում ենք վրիպակ է (Ծ. Կ.)։
[4] Կտուր
[5] Երկու փայտից նած

Ես մի թրվավոր ղուշ եմ,
Դեղին թրվավոր ղուշ եմ.
Ինձ մի բրախ տվեք, թռչեմ,
Իմ յարին սովոր ղուշ եմ։

Ես մին շամամի թաղ եմ,
Ոչ մեռած եմ, ոչ սաղ եմ
Պիլոր օխտը տարի ա
Ես մին խոսքի կարոտ եմ։

Ես մի ղուշ եմ էս հալիս,
Մեծ տանը ձենս տալիս.
Մի ցուրտ-ցուրտ ախպուր[1] պտեր՝
Էն յարը վըրեն կյալիս։

Ես մի փշուշիկ տյոխ եմ,
Շուշվա ղալեն կը կոխեմ,
Ամեն յարի հավան չեմ,
Ցար կը տամ, յար փոխեմ։

Ես էն յարին յար պտի,
Կյոտկումը խիար պտի,
Շոքած, քըրտնած տեղը
Կլխի քյոշին սար պտի։

Ես գնացի մեր ժամը,
Տեսա վարաղած շամը.
Խելքս գնաց, որ տեսա,
Գլխիդ տասներկու ծամը։

Ես տյու նստենք բյաս անենք,
Գլխիտ մառ-մառ խաս անենք.
Միննաթ անենք մեր տերին,
Չհասը հաս անենք։

Երեկնակին տեր աղբեր,
Այ շղթաթաղ աղբեր,
Շաքար մաղեմ կեր, աղբեր,
Ջանս մատաղ քեզ, աղբեր։

[1] Բնագրում՝ ախպեր, կարծում ենք վրիպակ է (Ծ. Կ.)։

Էյվանումս կար անեմ,
Մեր ղշերին քար կանեմ
Հսկանամ թա յարս ա կյում,
Կարս ձեռքիցս թյուլ կանեմ։

Էն ծառին հինչ կսազա,
Ճղներին կինձ կսազա.
Լիլն լել ա պրծել,
Ասիլն էլ հինչ կսազա։

Էն սարին արտը մերն ա,
Հոնքերդ կեռ ու մեռն ա.
Փափաղդ բարձր պահի,
Սիպտակ ճակատդ երևա։

Ըստեղան ալ աղջիկ,
Աչքերը շալ-շալ աղջիկ,
Ցա իմ քնին քուր պիտեր,
Ցա իմ քեր քե տալ, աղջիկ։

Ըրեգնակը սարի վրա,
Մամուռը քարի վրա.
Ես մի արծաթի սարք պիտեի
Իմ սիրած յարի վրա։

Թրխպել ա, թոռ չի գալիս,
Մթնել ա, տոն չի գալիս,
Տեղ եմ քցել, նի մտել,
Հաչքերիս քուն չի կյալիս։

Թոռը գալիս է շղալով,
Կանաչ տերև դոզալով,
Հրես եկավ իմ յարը
Թող ձին տակին խաղալով։

Իմ ախպերը էն անցումը,
Կյութանի եղնանցումը.
Կիր եմ կիրել բղարկել
Վաղաս ա հմբարցումը։

Իմ ծաղիկը քաղած ա,
Պյոցը սարում կլաղած ա,
Որ լուսնկան դուրս կգա,
Իմ ծաղիկը լուս կտա։

Լուսինը Պանտի տակին,
Մամուռը քարի տակին.
Ես իմ յարին կարոտ եմ
Քանց վարդ-մանուշակին։

Լուսնկա էրկան գիշեր,
Կեռ ունքեր, կարմիր թշեր.
Ես քինում եմ մեր տունը,
Քեզ խեր ու բարի գիշեր[1]։

Ծալք եմ սարքել, հավան չեմ,
Ես իմ գլխի դիվան չեմ,
Ղինար-ղինար կըտորես,
Ես էն տղին հավան չեմ։

Կաթնես թքցնեմ վեր դնեմ,
Ինձ մին գեղար[2] յար ունեմ.
Շատ ու խրիկ խոսալ մի,
Ամեն մազիս տեր ունեմ։

Կաքավը կանգնեց քարին։
Կտոցն ա կարմիր արին,
Տյուրուր մի տար, լաց կինիմ,
Սիրաս ա գյոլ-գյոլ արին։

Կետի էն դոլը հուռը,
Քաղել եմ մի դաստա նուռը.
Հով իմ սիրածը ինձ չտա՝
Կը քաշեմ խանի տյուռը։

Կյութանիս լյուծը պիտի,
Դուշմանիս օձը պիտի.

1 Երգում են բաժանվելիս
2 Գյաո—հպարտ

Այվան, օթախ, պոչիկ[1] յար՝
Կոշտնըվեր ոտնը պիտի։

Կարավս քոչ ա քյընում,
Քոչ-քոչի մեչ ա քյընում,
Երանի էն քվորը,
Օխան ախպոր մեչ ա քյընում։

Հարած կյուտած խոտ ունիմ,
Քու միջումը փութ[2] ունիմ,
Տյուն մին փունջ մընեշակ պիտեր,
Քիթս դնեմ, հոտ ունեմ։

Հաղ կասիմ, հաղի կլխին,
Ծրոնըվերա բաղի կլխին.
Ես էն հաղը վաղ եմ ասել,
Քշեր-ցիրեկ տաղ եմ ասել։

Հստա, հստա հալ չունիմ,
Էրված սրտիս ճար չունիմ,
Բոխչա ունիմ, բախտ չունիմ
Ես իմ յարը տեսած չունիմ։

Հավը թառան ըլավ
Իմ պան խալխով ընկավ,
Սաբաբ, քու բալեն մեռնի,
Խի իմ պանը կովավ ընկավ։

Հուռի ծառին բար[3] չիլիլ,
Տակը քար ա, վար չիլիլ.
Էն աստուծն ու երկինքը,
Սըրվըտորին[4] ճար չիլիլ։

Հուռի ծառին հոռ[5] մնաց,
Աստուծանուն թոռ մնաց,

1 Վատ
2 Պակասություն
3 Պտուղ
4 Սիրահարվածին
5 Ոլորված

Ըռաջավս ընցկացար,
Վիզս ետնիցդ ծոռ մնաց։

Զկնու ծովը սառել ա,
Զուկնը տակը կալել ա,
Թուխ փափախ, սիպտակ Ճակատ
Յարի խելքը տարել ա։

Մեր բաղումը բաղումը,
Մանուշակի թաղումը,
Կարմիր վարդը հինչ անի,
Թուշերիդ յարփաղումը։

Մին յար օնիմ տանն ի,
Մատդ քցեմ մատանի,
Սիրած սրածսն հանողը
Հոգին սատանան տանի։

Մին նոռն օնիմ քսքարանք,
Զորս ղոլն ա փսպարանք,
Փսպարանքս տեղ հասնի,
Սիրած յարս ինձ հասնի։

Նռան ծառին փուշ կըլի,
Վարդի ծառին ղուշ կըլի,
Հըրանի էն ախճրկանը՝
Սիրած յարին թուշ կըլի։

Նուռը նռանը վրա,
Միտը ճղնանը վրա,
Ես մի թութի ղուշ պտի,
Իմ յարի կրռանը վրա։

Նստել ես ջոխտ գերանին,
Շրմբուղը[1] բերանին,
Դու պարակ, մեջդ պարակ,
Ղուլ քինամ ջեյրան ձենիդ։

Շենը շենա, շեն շենա,
Եղձին տեսա, դեն կենա,

[1] Ճիպոտ

Որ սիրեր եմ կը տանեմ,
Պանցր Պանտը դեմ կենաս։

Զափարովը շուռ կը տամ,
Ոսկե ղոլս[1] թառ[2] կը տամ,
Ես էս պիծի տեղավս
Խելքով քեզ խրատ կը տամ։

Զատրը եմ ճարել սրբերին,
Ըսպաթ[3] եմ դրել քարերին,
Զյունքի մանկզիլդ[4] էդքան ա,
Խե՞ բրեր մեղքը յարին։

Զրդախտ թան եմ ածել,
Բոյիտ նման եմ ածել,
Խափել եմ, թա քեզ կկամ,
Բլարդու ման եմ ածել։

Պաց ըրի բաղի տյուռը,
Ուզեցի խոնչա նուռը,
Խոնչա նուռը հինչ անեմ,
Ուզեցի յարիս տյուռը։

Պլոտնիկը փետ տաշի,
Քյուչա-քյուչա կը յաշի,
Կոժը օսեմ ջուրը դնամ,
Կը յաշեմ, թառանչ քաշեմ։

Սարան վեր կը գանք հարթը,
Կը քաղենք դաստա վարդը,
Ես քզնցի, դու տարար,
Մշալլա՞ միջի մարդը։

Սարան վեր եկա սառնը,
Ունքերս էլ ուրուր խառնը,
Կոռս վզովդ բիրեմ,
Ոտցիդ մեխակը առնեմ։

[1] Կոդքս
[2] Կախ
[3] Վկա
[4] Ասպարեզ

Սիպտակ ու սև մի մանած,
Իմ յարը սրհմանած,
Օխտը տարի տեսել չեմ,
Հենց եմ ըշխարեն հանած։

Սարերի խոտը ցեղվըցեղ[1],
Ախպեր ենք, քնանք մին տեղ,
Հով քու ջանին դաստ կը տա՝
Իմը կտամ քունին տեղ։

Սարերի խոտը հոտել ա,
Եզնինքը նստոտել ա.
Հրես եկավ իմ յարը,
Քանքյուլը թղոտել ա։

Սիրել եմ սիրի չախին,
Ասսու էն հալալ հախին.
Սիրել եմ, պաց չեմ թողել,
Ջվա իր մեռնիլի չախին։

Սիրել եմ տաք աշունքին,
Հավան եմ աշկը-ունքին.
Ջրին ընկավ, թա խմի,
Քյանքյուլն ընկավ թկյունքին։

Սոանը աշմիշ ըլար,
Նհետս դոշմիշ ըլար.
Ես քի պան չի ըսեցի,
Խի՞ կանուխ չաշմիշ[2] ըլար։

Վարդի տակին կար կանեմ,
Վարդը պոչից[3] կախ կանեմ,
Ես էս պիծի տեղովս
Քեզ հալումաշ կանեմ։

Տանըս տակը շլորի,
Ճղները ետ կհլորի.

[1] Ճեղչ-ճեղչ
[2] Ճշկվել, շփոթվել
[3] Վարս

Հրոնակ էն քվորը,
Օխտ ախպոր թաք կհլորի։

Տանըս տակին ղալ կտամ,
Մեճկավս քաթան կտամ.
Հով իմ յարը ինձ կտա,
Հորթը տակին կով կտամ։

Տանս տակին հունձ կանեմ,
Մանգաղս կոտրեմ, հունձ կանեմ,
Ոչ թան կը տան, ոչ մածուն,
Սիրտս կէրվի, ո՞նց կանեմ։

Տեղին հավը ձուն փորին,
Իմ աճկը Նուխվա հղերին.
Նուխվա հղերը մի փուլ կա,
Բալքա իմ յարը տուն կա։

Տուն եմ շինել, դրռ նամ ա,
Կոճերը էրծաթի ջամ ա,
Ա նա, խրրիկ խուրխոթանք[1] տու,
Նոր ա էկել, դրռ խամ ա։

Փոտի-փոտի տուն ունեմ,
Միչին վեսկի սյուն ունեմ.
Սյունը կերան քար պտեր,
Իմ ուղած յարը պտեր։

Քինացի բաղիս տոռնը,
Տյուս պերան շըհանոռնը,
Շըհանոռնը հի՞նչ անեմ,
Օգում եմ յարիս կոռնը[2]։

[1] Հանդիմանություն
[2] Բնագրում այս քառատողից հետո գրված է՝ կշարունակվի, բայց շարունակությունը «Ազգագրական հանդեսի» հաջորդ գրքերում չի տպագրվել (Ծ. Կ.)։

ՄԱԼԱԿԱՆՆԵՐ[1]

Գանձակի գավառի ռուս աղանդավոր մալականները, որ բնակվում են Նովո-Սարատովկա, Նովո-Իվանովկա, Ռուսաց Պարիս և Միխայլովկա գյուղերում, Տամբովի և Սարատովի նահանգներից են գաղթած անցյալ դարի երկրորդ կեսին[2]։ Սրանք ընդամենը 491 տուն են, 1536 արական, 1221 իգական, միասին՝ 2757 հոգի։ Մեծամասնությունը բուն մալականներ կամ վ ո ս կ ր ե ս ե ն գ ի ն ե ր են, 1125 արական, 1001 իգական, միասին՝ 2125 հոգի։ Մնացածից՝ 203 արական և 127 իգական, միասին՝ 330 հոգի ս ո ւ բ բ ո տ ն ի ի ն ե ր են, իսկ 134 ար. և 103 իգ., միասին՝ 237 հոգի՝ պ ր ի պ ո ւ ն ն ե ր[3]։

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մալականների աղանդը առաջ է եկել դուխոբորների աղանդից և պահպանել է նրա վարդապետության ծեսերի մեծ մասը։ Աղանդի հիմնադիրն է Սիմեոն Ուկլեին (ապրել է XVIII դարի 2-րդ կեսում) Տամբովի նահանգի Բորիսոգլեբսկի գավառի մի գյուղացի։ Դերձակությամբ զբաղվելով, նա անցնում էր գյուղից գյուղ, երբ պատահեց դուխոբորների աղանդի հիմնադիրներից մեկին՝ Պորերոխինին, ամուսնացավ նրա աղջկա հետ և ընդունեց դուխոբորների աղանդը։ Հինգ տարուց հետո սրանք միմյանցից հեռացան, որովհետև Ուկլեինը չէր ընդունում, որ կրոնական ճշմարտության միակ աղբյուրը ներքին ներշնչումը լինի։ Բաժանվելով դուխոբորներից, Ուկլեինը մոտեցավ Տվերիտինովի բողոքական ռացիոնալիստական վարդապետության հետևողներին, որ բավականաչափ կային Տամբովի նահանգում, և յուրացնելով նրանց վարդապետությունը, կազմեց մի առանձին աղանդ, լրիանասուն «առաքյալներով» շրջապատված նա հանդիսավոր կերպով, սաղմոս-

[1] *Այս հատվածը Ն. Լալայանը հրատարակել է հետագայում, «Ազգագրական հանդես» 7—8-րդ գրքում, 1901 թ. որպես լրացում «Գանձակի գավառ» աշխատության «Մալականների գյուղերը» նամառոտ ակնարկի (Ե. Կ.)։*

[2] *Բացի իմ անձնական նկատողություններից, որ արել եմ մալականների մասնավորապես Պարիս և Միխայլովկա գյուղերում, օգտվել եմ նաև հետևյալ աշխատություններից. Юзов,* Русские диссиденты: старообры и духовные христиане. *Лангсдорф,* Кавказские секталты в их семейном и религиозном быту: Энциклопедический словарь Брокгауза-Эфрона *և գանազան հոդվածներ* „Кавказ" *լրագրի 1858, 1864, 1876 և 1897 թ. համարներից։*

[3] *Հեղինակի հաշվարկումները հակասում են, հավանաբար ինչ-որ տեղ վրիպում կա (Ե. Կ.)։*

ներ երգելով մտավ Տամբով, ուր ոստիկանությունը նրանց բոլորին էլ բանտ ձգեց։ Կատարինե Բ կայսրուհին հրամայեց հանձնել նրանց հոգևոր իշխանության՝ համոզելու, և եթե չեն վերադառնա մայրենի եկեղեցուն՝ բոլորին դատի ենթարկել։ Ուկլեինը բանավոր (առերես) հրաժարվելով յուր վարդապետությունից, արձակվեց, բայց հետո կրկին սկսեց քարոզել։ Նրա կյանքի վերջին տարիներում Տամբովի, կամ այժմյան Սարատովի և Վորոնեժի նահանգում կային մինչև 5000 հետևողներ։ Հետո այս աղանդը տարածվեց Աստրախանի և Եկատերինոսլավի նահանգները, ինչպես և Կովկաս։

Մալական անունը հատկացրել են այս աղանդին դեռ 1765 թ. Տամբովի հոգևոր կոնսիստորիայի կողմից, այն հիման վրա, որ այս աղանդավորները սլասին կաթ (молоко) *են գործ ածում։ Իրենք՝ աղանդավորները իրենց «Հոգևոր քրիստոնյաներ» են անվանում և իրենց ընդունած մալական անունը բացատրում են նրանով, որ իրենց դավանած վարդապետությունը այն «բանավոր կաթն» է, որի մասին խոսվում է Ս. Գրքի մեջ (Կոր. III. 2. Եբր. V. 12. Պետր. II. 2 և այլն)։ Մալականները դուխոբորների նման բոլորովին մերժում են օրթոդոքս եկեղեցին, նրա խորհուրդները և ծեսերը, սրբերի, մասունքների և պատկերների պաշտամունքը, բայց և տարբերվում են դուխոբորներից հավատո աղբյուրների ուսուցմամբ և մի քանի դավանանքների ինքնատիպ հասկացողությամբ։ Հավատի ուսուցման միակ աղբյուր, մալականների կարծիքով, կարող են լինել միայն ս. Գրքի Հին և Նոր կտակարանները։ Ս. Գրքից դուրս չկա կրոնական ճշմարտություն։ Քրիստոսի հիմնած եկեղեցին գոյություն է ունեցել մինչև Դ դարը։ Ընդհանրական ժողովները և եկեղեցու հայրերն իրենց կանոնադրություններով և աշխատություններով խեղաթյուրեցին իսկական քրիստոնեությունը, նշանակություն տվեցին ավանդություններին և կազմեցին աստիճանավորություն* (иерархия), *որին մալականները, իրենց Ս. Գրքի քրիստոնեության իսկական ներկայացուցիչներ համարելով, չեն վերապրում մի որևէ արտակարգ բարձրից շնորհ։ Միայն մի բահանայապետ կա՝ Քրիստոս, բոլոր մարդիկ եղբայրներ են, բոլորը հավասար են «շնորհօր»։ Մալականների ծերունիները* (старцы) *նրանց կրոնուսուցչներն են, և ոչ թե բահանաները կամ ուսուցիչները, որովհետև աստծուց չեն կրում մի առանձին լիազորություն։ Այս կետերում չի կարելի չտեսնել բողոքականության ազդեցությունը Տվերիտինովի հետևողների վարդապետության միջոցով։*

Մալականներն իրենց ծիսակատարության գրքի մեջ (обрядники)

ուսուցանում են, որ աստված հոգի է երեք անձնավորության մեջ։ «Изложение ученна Уклеина» գրքի մեջ ասվում է, սակայն, թե Որդի աստվածը և ս. Հոգին թեև համագոյակից են Հորը, բայց աստվածությամբ հավասար չեն նրան։ Աստվածորդու ծնունդը ս. Կուսից նշանակում է ոչ թե իսկական մարդկային մարմին առնել, այլ այն մարմինը, որ ըստ մալականների, ուներ Ռափայել հրեշտակապետը, երբ ընկերակցելով Տորիային, տեսանելի եղավ նրան և խոսակցեց նրա հետ, այս մարմինը Աստվածորդին երկնքից բերեց և նրա հետ բնակեցավ Կուսի արգանդում։ Նմանապես, Հիսուս Քրիստոսը չմեռավ այնպես, ինչպես մեռնում են մարդիկ, այլ մի առանձին եղանակով։ Մեռյալների հարությունը տեղի պիտի ունենա, բայց բոլոր մարդիկ հարություն պիտի առնեն ուրիշ մարմիններով և ոչ այն, որոնց մեջ ապրում էին երկրի վրա։ Որպեսզի կարողանան մերժել օրթոդոքս եկեղեցու ընդունած խորհուրդները, պասերը, պատկերները և այլն, որոնք մեծ մասամբ հիմնված են ս. Գրքի վրա, որ իրենք՝ մալականները չեն կամենում մերժել, նրանք դիմում են ս. Գրքի այլաբանական բացատրության, հիմնելով իրենց այս տեսակ բացատրությունը ս. Գրքի այսպիսի խոսքերի վրա, թե «տառը սպանում, հոգին կենդանացնում է», «Աստծուն պետք է երկրպագել հոգով և ճշմարտությամբ» և այլն։ Այսպես, մերժելով ջրով մկրտությունը, նրանք այդ խոսքով իմանում են Հիսուս Քրիստոսի վարդապետությունը, այն «կենդանի ջուրը», որի մասին խոսվում է Յովհ. VII. 38 համարում։ Հաղորդության խորհուրդը հիմնելով առաքյալի այն խոսքերի վրա, թե մարմինը չի օգտվում ոչինչից, մալականները ուսուցանում են, թե Քրիստոսի մարմինը Քրիստոսի վարդապետությունն է, և որ «Առէք կերէք այս է մարմին իմ» խոսքերը նշանակում են՝ ընդունեցեք իմ վարդապետությունը։ Ամուսնությունը խորհուրդ չէ, որովհետև առաքյալը խոսելով այդ մասին, խորհուրդ է համարում միայն Քրիստոսի միությունը եկեղեցու հետ (Եփես. V. 3)։ Ապաշխարությունը միայն մեղքի մերժման մեջ է, որովհետև չի կարող ուրիշի մեղքերը ներել նա, ով ինքը մեղք է գործում։ Օծումն ու դրոշմը հոգևոր օծման խորհրդանիշներ են։ Դրոշմի ժամանակ հիվանդին փրկում է ոչ թե օծումը, այլ հավատքը, աղոթքը։ Իրենց ծիսակատարությանց մեջ մալականները աշխատում են ընդօրինակել առաքելական եկեղեցին, նրանք մերժում են խնկարկությունը, կանթեղները, մոմերը, տաճարները, որպես առանձին, որոշ ձևով շինված շենքեր, միայն սահմանափակվում են ս. Գրքի ընթերցանությամբ և եկեղեցու ընդունած աղոթքներն երգելով կամ կարդալով։

Մասնավորապես մեր բոլոր ասելիքները բուն մալականների կամ վոսկրեսենցիների վրա, հարկավոր ենք համարում, սակայն, ավելացնել, որ գավառումս բնակված սակավաթիվ սուբբոտնիկները տարբերվում են վոսկրեսենցիներից գլխավորապես նրանով, որ փոխանակ կիրակի օրվա, շաբաթ օրերն են տոն պահում, իսկ պրիգունները շաբաթ կամ տոն օրերի դիշերային խմբական աղոթքի միջոցին Աստղիկին են նվիրվում։ Սակայն այս սովորությունը հետզհետե վերանում է։ Մեվեսը այսպես է նկարագրում այդ. Նովո-Սարատովկա գյուղում մի գիշեր գնացի պրիգունների աղոթատունը, ուր աղամարդիկ, կանայք և աղջիկները կարդին նստած էին, հերթով մինը կարդում էր, իսկ մյուսները խմբով կրկնում էին տուն առ տուն։ Կամաց-կամաց աղոթողներն սկսեցին օրորվել, ոտներով խփել, հետո հանկարծ ճրագը հանգցրին և...։ Քսան րոպեից հետո ճրագը նորից վառվեց, ամենքը տեղերը նստեցին և սկսեցին երգել. «Հոգի, զարթիր, սթափվիր» (душа, проснися, встрепенися)[1]։

ԲՆԱԿԱՐԱՆ

Յուրաքանչյուր տուն բոլորովին առանձնացված է և յուր առաջ ունի բավական ընդարձակ գավիթ, ուր գտնվում է բաղանիսը, ախոռը, խոտանոցը և շտեմարանը։ Բնակարանը բաղկացած է երկու սենյակներից, որոնց դռները բացվում են մի նախասենյակի մեջ։ Սենյակները երբեմն քառակուսի, բայց շատ անգամ քառանկյունի են լինում. եթե ոչ երեք, գոնե երկու կողմից երկական կամ մի-մի պատուհաններով։ Հատակն ու առաստաղը տախտակած են լինում, բայց ոչ երբեք ներկած։ Սովորաբար սենյակներից մինում, առավելապես փոքրում, լինում է երկար ռուսական փուռ, մոտը յուր պարագաները դրած, մյուս սենյակը առավելապես տաքացնում են թիթեղյա վառարաններով, և շատ քչերի մեջ կան փուռ։ Սենյակի պատերին կից ձգվում են նեղ ու երկար նստարաններ, իսկ անկյուններում՝ փայտե պահարաններ։ Մի քանի նեղ ու երկար նստարաններ, որ մոտեցնելով պատերին կից նստարաններին կազմում են մալականի մահճակալը, մի անկյունում դրված հասարակ փայտե սեղանը, որի վրա կախված է մի փոքրիկ լամպ, մի քանի աթոռ (табуретка), մի երկու արկղ,—ահա սրանք են կազմում սենյակի ամբողջ կահավորությունը։

---

[1] «Кавказ», 1864, № 35.

Տները քարաշեն են, կտուրը՝ հռանկյունաձև, կղմինդրով ծածկված։ Տան երկու կողմը կան փոքրիկ պատշգամբներ։

ՀԱՆԴԵՐՁ

Տղամարդկանց. Նախ կարմիր կամ կապույտ չթից կարված շապիկ են հագնում, որի փեշերը թողնում են անդրավարտիքի վրա, և ոչ թե դնում անդրավարտիքի մեջ, ինչպես սովորաբար արվում է։ Թևքերը երկար են և կոճկվում են դաստակի մոտ։ Վարտիք չեն գործածում, այլ միայն անդրավարտիք, որ կարում են չթից կամ իրենց պատրաստած կտավից։ Նրա ծայրերը դնում են կոշիկների մեջ, որ հասնում է մինչև ծնկները։

Շապկի վրայից հագնում են ժիլետկա, որ անթև է և կրծքի վրա ամբողջովին կոճկվում։

Աշխատելիս սովորաբար ժիլետով կամ միայն շապիկով են մնում, միայն այս վերջին դեպքում գոտի են կապում։ Ժիլետի վրայից հագնում են պ ա դ դ յ ո վ կ ա (поддевка), որ կարվում է շվեդական կիսամահուդից, իջնում է մինչև ծնկները, մեջքի վրա փոքր-ինչ սեղմվելով։ Երկու կողքերին կա մի-մի գրպան։ Կոճկվում է միայն մի կողմի վրա և բկի մոտ օձիքը ետ է ծալված։

Գլխներին ծածկում են կ ա ր տ ո ւ ղ, լայն կզիրոկով, իսկ ձմեռը ցածր, կտորից կարված փափախ, որի վերին մասը թավշյա է լինում։ Ձմեռը ոմանք ոչխարի մորթուց կարած մուշտակ են հագնում։

Ոտներին հագնում են գուլպա և երկար վղով կոշիկներ։

Կանանց. Շապիկը կարում են կարմիր չթից, իջնում է մինչև ոտները։ Սրա վրա հագնում են յ ո ւ բ կ ա բամբակից կամ չթից, սա ծածկում է ոտները և հասնում մինչև մեջքը, ուր և ամրապնդվում է։ Յուբկայի վրայից հագնում են ս ա ր ա ֆ ա ն, որ մեջքի վրա սեղմվելով բարձրանում է մինչև կուրծքը։ Երկու ժապավեն ուսերի վրա անցնելով պահում են այս հանդերձը։

Սարաֆանի վրա կապում են կարմիր չթից գոգնոց և հագնում կ ո ֆ տ ա, որ հասնում է մինչև մեջքը, երկար թևեր ունի և կրծքի վրա կոճկվում է։

Ձմեռը այս բոլորի վրայից հագնում են ա ր խ ա լ ու խ (архалух), սև կամ կապտագույն կտորից. սա բամբակած է, մեջքի վրա բյուզմայով սեղմվում է և իջնում մինչև ծնկները։ Կուրծքը մինը մյուսի վրա գալով կոճկվում է։ Աջ կողմում կա մի գրպան։

Գլխներին աղջիկները միայն մի յայլուխ են կապում, իսկ կանայք՝ նախ մի յայլուխ (платок) հռանկյունաձև ծալում, ճակատի վրայով անցկացնում կապում են ծոծրակին, ապա մի ուրիշն էլ ձգում վրայից և կապում բկի տակ։

Ոտներին հագնում են գուլպա և կիսաշապիկ կամ տ ու ֆ լ ի։

Ընդհանրապես կանանց շորերը կարճ են, այնպես որ գուլպաների վիզը երևում է։

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ ա ս ա կ ը. Ընդհանրապես մալականները պսակում են տղաներին 19, իսկ աղջիկներին՝ 17 տարեկանից ոչ պակաս, և ամուսնացող զույգի տարիքների տարբերությունը շատ հազվադեպ է պատահում, որ մեծ լինի։

Մեծ մասամբ իրենք՝ ծնողներն են ընտրում հարսնացուն, թեև միշտ առնում են տղի համաձայնությունը։ Սակավ չի պատահում նաև, որ տղաներն իրենք ընտրեն իրենց հարսնացուն և աշխատեն առնել ծնողների հաճությունը։

Աղջիկ փախցնելու սովորությունն այս գյուղերում չկա։

Ն շ ա ն դ ր ե ք. Երբ որոշում են նշանել որդուն, հայրն ու մայրը միասին գնում են հարսնացուի տուն, գոտն առաջ կանգնում, ձեռքները կրծքներին դնում, «Հայր մեր» շշնջում և հետո դիմելով տանտիրոջը, ասում են՝ «խաղաղություն տանս այսմիկ»։ Նրան պատասխանում են. «խաղաղություն եկողներիդ, համեցեք, նստեցեք»։ Ներս են մտնում և նստում սեղանի շուրջը, որի վրա եփ է գալիս ինքնահոսը։ Սովորական խոսակցությունից հետո սկսում են թեյ խմել։ Եվ որովհետև տնեցիք արդեն իմացած են լինում սրանց գալու նպատակը, ուստի բերում են կարագ, մեղր, խորոված միս, հաց և այլն։

Լավ ուտել խմելուց հետո, երբ նկատում են, որ հեշտաեռի մեջ այլևս ջուր չի մնացել,—մալականները շտապանց սիրում են թեյը,—տղայի հայրը դիմում է տանտիրոջ, ասելով.

— Զղիտե՞ք, թե ինչի համար ենք եկել ձեզ մոտ։

— Չէ,—պատասխանում են տանտերն ու տիրուհին, շատ լավ գիտենալով նրանց գալու նպատակը։

Նրանք հայտնում են իրենց ցանկությունը բարեկամանալու, աղջկա ծնողներն էլ սիրով ընդունում են, միայն խնդրում են, որ ժամանակ

տան աղջկա կամքը հարցնելու։ Սովորաբար աղջիկն այդ օրը տանը չի լինում, «համեստությունից» դրդված նա գնում է բարեկամի տուն։

Հետևյալ օրը գալիս է աղջիկը, մայրը հայտնում է, որ նրան ուզում են, կկամենա՞ գնալ։ «Եթե կտաք՝ կերթամ»,—պատասխանում է աղջիկը և լաց լինելով ընկնում մոր պարանոցով։

Նույն օրը երեկոյան գալիս են աղայի ծնողները, ինչպես և մի քանի մոտիկ բարեկամներ։

Սովորական բարեից հետո աղայի հայրը հարցնում է աղջկա հորը.

— Հը, ի՞նչպես է խոսում ձեր ապրանքը։ (Ну, что теперь, как ваш товар говорит):

— Մեր ապրանքը մղվում է դեպի ձեր ձեռքը (Наш товар на вашу руку тянет),—կատակով պատասխանում է աղջկա հայրը։

Իսկույն վեր են կենում, հայրերը միմյանց ձեռք սեղմում, աղջկա մայրը տալիս է տղի մորը մի թաշկինակ, իսկ տղի հայրը աղջկա հորը՝ հինգ ռուբլի դրամ։

Նույն օրը, կամ մի քանի օր հետո, աղջկա տանը կազմված հրավերքում խնամիները բարեկամների միջամտությամբ որոշում են գըլխագինը (кладка), այսինքն այն գումարը, որ տղայի հայրը վճարում է աղջկա հորը՝ հատկապես օժիտ պատրաստելու նպատակով։ Այս գումարը տատանվում է 50—120 ռուբլու մեջ։

Վերադառնալով տուն, տղայի մայրը կապում է որդու վզից մի թաշկինակ և հայտնում նրան, որ արդեն նշանված է։ Մի քանի օր հետո երկու խնամիները գնում են քաղաք հարսանիքի պատրաստություն տեսնելու։ Այս միջոցին նշանված տղան յուր մի քանի ընկերների հետ գնում է յուր նշանածի մոտ, օգտվելով ապագա անհրաժեշտ բացակայությունից, ուրախ ժամանակ է անցկացնում։

Երբ խնամիները վերադառնում են քաղաքից, գնած կտորեղենը տանում տալիս են հարսնացուին, իսկ իրենք գնում են ճաշելու տղայի տանը։ Այս ժամանակ հարսնացուի ընկերուհիները հավաքվում են նրա մոտ, և սա լաց լինելով ասում է նրանց.

— Սիրելի ընկերուհիներ, սպիտակ աղավնյակներ, մի բարկանաք ինձ՝ դառն թշվառիս վրա, որ ես ընդառաջ չեկա ձեզ ճանապարհին։ Ուզում էի դուրս գալ, ընդառաջ ելնել, թուլացան սպիտակ ձեռքերս, տապալվեց ազատասեր գլուխս։ Ես հանդիպեցա ձեզ իմ հարազատ մոր ներկայությամբ, լուսավոր սենյակում։

(Любезныя подруженьки, белыя голубушки, не прогневайтесь на меня горькую-несчастную, что я не вышла, не встретила

вас при пути-дороженьке. Хотела выйти встретить, поломились белыя рученьки, свалилась буйная головушка с плеч долой, я вас встретила при родной матушке, в светлой горенке).

Ընկերուհիները միխիթարում են նրան և շտապում նայելու գնած իրերը։ Եվ հետո իսկույն սկսում են ձևել և կարել օժիտը, որ տևում է մոտ մի շաբաթ։ Այս ամբողջ շաբաթվա ընթացքում դրանց պատուհանի մոտ հավաքվում են գյուղի հետաքրքիր աղջիկները, պատանիները՝ դիտելու, իսկ գյուղում խոսվում է, թե այսինչի տանը «հավաքել են աղջիկներին, ուրեմն և՝ օժիտի պատրաստությունն սկսվել է»։

Հին սովորությամբ հարսնացուն ընկերուհիների մոտ պիտի լաց լինի և «ափսոսա» օրիորդական ազատությունը կորցնելու համար։ Ուստի և նա հեկեկալով ասում է.

Հանկչում է խավարամած վերջալույսը,
Ինձ սկսում է բռնել թախիծն ու տրտմությունը.
Կուսական գեղեցկությունը վերանում է ինձանից.
Կնոջ լարությունը տիրապետում է ինձ.
Անցավ իմ ազատությունը.
Էլ չեմ կարող լափից դուրս գրոսնել,
Մեհաբսյա խոտերում խճճվել,
Մթին անտառներում մոլորվել,
Ինձ օտար մարդկանց մեջ կարող ես գտնել։

Темная зорюшка истухает,
Ко мне грусть-тоска приступает,
Девичья красота спадает,
Бабья сухота нападает,
Пошла моя волюшка,
Гуляй, не загуливайся,
В шелковой траве не запутывайся,
Меня в чужих людишках проведывай.

Ընկերուհիներն սկսում են մխիթարել, և նա դադարում է լաց լինելուց։

Հարսանիքից մի օր առաջ հարսնացուն հավաքում է ընկերուհիներին և երկու կամ երեքի հետ գնում բաղանիս, լողանում և վերադառնում, մոտենում ամեն մի ընկերուհուն և շնորհակալ լինում բաղանիսի համար, ասելով.

Շնորհակալ եմ, տեր, բաղանիսի, փափուկ ավելի, հոտավետ սապնի, թեթև գոլորշու համար։ [Спаси Господь, за баньку, за мягкий

веничек, за душистое мыльце, за легкий парок). *Եվ այսպես բոլորին ձեռք տալուց հետո երբ մոտենում է յուր ամենամոտիկ ընկերուհուն, սա սանրում է նրա մազերը, իսկ հարսնացուն երգում է.*

Առ ձեռդ
Ոսկրե սանր,
Սանրիր խարտյաշ ծամերը
Կոկիկ-կոկիկ,
Հյուսիր խարտյաշ ծամերը
Մանր մանր,
Իմ ազատասեր գլուխս ծածկեց
Սպիտակ ձյունը.
Կարեց իմ շեկ ծամերը
Դաժան ցուրտը.
Կոզպկեցին իմ շեկ ծամերը
Ցոթանասուն կոզպկեքով,
Ձգեցին այն երկաթյա բանալիները
Կապուտակ ծովը.
Երբ կցամաքի փոթորկալի ծովը,
Այն ժամանակ միայն կգտնեա կուսական ազատությունը։

Бери ты в свои рученьки
Костяной гребешок,
Чеши ты косу русую
Гладко-нагладко,
Плети ты косу русую
Мелко-намелко.
Покрыл буйную головушку
Белый снежок,
Посек мою косу русую
Лютый мороз,
Замкнули косу русую
Семьдесят замков,
Забросили те ключи железные
Во синее море;
Куда уйдет море бурное.
Придет воля девичья.

Մազերը հյուսում են, հարսնացուին հագցնում։ Գալիս է փեսաղբերը (дружка, սովորաբար փեսացուի ավագ եղբայրը) *և հարցնում է, թե հարաբ պատրա՞ստ է, և եթե պատրաստ է, խնդրում է թագվորի շորերը, որ նույնպես հարսնացուի ընկերուհիներն են կարել։*

Այս կարողները շորերը հավաքում և մի գունավոր երկար ժապավենով այնպես են կապում, որ փեսաղբերը չկարողանա այդ ժապավենի ծայրերը գտնել։ Փեսաղբերը խնդրում է ցույց տալ, թե ինչպես են կապված շորերը և առաջարկում է նրա համար փրկանք։ Սկսում են սակարկել, ի վերջո փեսաղբերը տալիս է կարողներից ամեն մեկին մի-մի ռուբլի և մի-մի կտոր սապոն։ Ապա վերցնում է հանդերձները և տանում հագցնում թագվորին։ Հավաքվում են ծերունիները, բարեկամները, թագվորի ընկերները։ Բոլորը միասին սկսում են երգել մի որոշ սաղմոս, որից հետո թագվորին բերում են շրջանի մեջ, և պրեսվիտերը (քահանան) մի աղոթք է կարդում. թագվորը այս միջոցին շոքում է յուր ծնողների առաջ և խնդրում օրհնել յուր օրինավոր ամուսնությունը։ Ծնողները դնելով իրենց աջ ձեռները որդու գլխին՝ օրհնում են և ի վերջո ասում. «Աստծու խաղաղությունը թող հանգչի գլխումդ հավիտյանս հավիտենից»։ Ապա երեք անգամ որդին երկրպագում է ծնողներին, սրանք էլ յուրաքանչյուր անգամ մինչև ծնկները խոնարհվում են նրա առաջ և համբուրվում։ Ապա պրեսվիտերը կարդում է «Համբարձի զաչս ի լերինս» (120 դ) սաղմոսը, որից հետո բոլորը երգում են 147 դ սաղմոսը։

Անմիջապես բոլոր հարսնեորները, բացի թագվորի ծնողներից, գնում են հարսնացուի տուն։

Այսպես ընդհանուր աղոթքից հետո հարսնացուին յուր ընկերուհիները բերում են առաջ։ Սա երեք անգամ երկրպագում է յուր ծնողներին, համբուրվում նրանց հետ և կանգնում թագվորի դեմը։ Պրեսվիտերը հարցնում է պսակվողներին, թե նրանք իրենց ազատ կամքո՞վ են ամուսնանում, և թե՝ նրանց մեջ ազդակցություն չկա՞։ Երբ գոհացուցիչ պատասխան է տրվում թագվորն ու թագուհին երկրպագում են միմյանց և համբուրվում, իսկ պրեսվիտերը աղոթում է։ Ապա հարսն ու փեսան միասին երգվում են, ասելով... երդվում ենք սուրբ Ավետարանով.. որ աստվածային օրինաց հրամանով կամենում ենք միանալ օրինավոր ամուսնությամբ. մեր ծնողաց օրհնությամբ և համաձայնությամբ և մեր անձնական ցանկությամբ... խոստանալով միմյանց հավատարիմ լինել մինչև մեր կյանքի վերջը։

Ապա թագվորը միայն ասում է.

«Բացի պ.անից ուրիշ կին չպիտի ունենամ»։

Հարսնացուն ավելացնում.

«Ես էլ երդվում եմ բացի սրանից ուրիշ ամուսին չունենալ»։

Այս ժամանակ պրեսվիտերը դառնում է հարսնեորներին և ասում.— «Լսեցի՞ք, եղբայրներ, և վկա՞ եք»։

Անմիջապես հարսնացուի հայրը բռնում է հարսի ձեռքից և տալիս է թագվորին ասելով.

«Տալիս եմ դուստրս քեզ կնության. ասավածային օրենքի համաձայն տար նրան հորդ տունը»։

Պրեսվիտերը կրկին աղոթում է, բոլորը չոքում են, ապա վեր կենում, նորապսակները միասին երկրպագում են ծնողներին և խնդրում, որ իրենց օրհնեն, սրանք էլ օրհնում են, դնելով իրենց աջ ձեռքերը նրանց գլխների վրա։

Հետո սաղմոսներ երգելով գնում են փեսայի տուն, միայն առանց հարսի ծնողների։ Փեսայի հայրն ու մայրը դռան առաջ դիմավորում են նրանց, փեսաեղբայրը ասում է նրանց. «Ձեր խնդիրը կատարեցինք, ուրախացեք»։

Հայրը պատասխանում է. «Փառք աստծու որ կատարեցիք, խընդրում եմ ներս հրամեք»։ Երբ տուն են մտնում, կանգնում են, «Հայր մեր» ասում, ապա՝ «խաղաղություն ձեր տանը» (мир дому вашему):

— Խաղաղություն ձեր մուտքին (мир входу вашему),—պատասխանում են ծնողները։ Անմիջապես բոլորը միմյանց հետ համբուրվում են, հետո պրեսվիտերը խրատ է կարդում, թե ինչպես նորապսակները միմյանց հետ պիտի ապրեն սիրով, հավատարմությամբ և ծնողներին հարգելով։ Փեսաղբերը տանում է նորապսակներին մյուս սենյակը, իսկ ինքը գնում բերում հարսի հորն ու մորը, երբ նորից աղոթում են, համբուրվում և ապա թեյ խմում, ճաշում, ցրվում։

Հետևյալ օրը կրկին հավաքվում են երկու կողմերի բարեկամները, ուտում խմում և ի վերջո միջնորդը (сваха) նվերներ է հավաքում հարսի համար։ Նախ փեսի և ապա հարսի բարեկամներից։ Մոտավորապես հավաքվում է 10 ռուբլի։ Նվերներ տալիս մատուցվում է մի որևէ ըմպելիք, որի ժամանակ ոմանք բղավում են՝ «դառն է» (горько) իսկույն հարսն ու թագվորը համբուրվում են։

Սովորաբար հարսանեկան ծախսերը աղջկա տիրոջ համար շատ անդգալի են, մինչդեռ տղի տիրոջ համար հասնում են 200—250 ռուբլու։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔ

Մալականներն ապրում են առավելապես մեծ գերդաստաններով (պատահում են մի հարկի տակ վեց եղբայրների երեսունհինգ հոգուց բաղկացած գերդաստաններ)։ Այսպիսի նահապետական գերդաստաններում իշխանությունը, կարողությունը և աշխատանքի բաժանումը կենտրոնանում է հոր անձնավորության մեջ։

Նրա մահից հետո այդ իրավունքն անցնում է գերդաստանի ավագ անդամին՝ նրա եղբորը կամ ավագ որդուն։ Միայն այս դեպքում այդ իշխանությունը փոքր-ինչ սահմանափակվում է. սրանք պարտավոր են գլխավոր խնդիրներում խորհրդակցել գերդաստանի չափահաս տղամարդկանց հետ։

Գերդաստանի ներքին կառավարությունը պատկանում է մորը, իսկ նրա մահից հետո ավագ հարսին։ Հարսները սկեսուրին «հարսնություն» չեն անում, այսինքն խոսում են հետը։ Տնային աշխատանքները հարսները ոչ թե հայերի պես ավանդական բաժանման համեմատ են կատարում, այլ հերթով։

Գերդաստանի անդամների սեփականությունն ընդհանուրին է պատկանում, չնայելով որ մի եղբայրը շատ, իսկ մյուսը քիչ է վաստակում։ Երբեմն կանայք իրը մասնավոր սեփականություն ունենում են մի քանի պլուխ կենդանի, որոնցից օգտվում է ամբողջ գերդաստանը և բաժանվելիս միայն՝ տրվում իրեն՝ հարսին։

Բաժանվելիս ամբողջ գույքը բաժանում են միայն եղբայրների վրա հավասարապես, հատկացնելով շամուսնացածներին՝ հարսանիքի համար անհրաժեշտ գումարները։ Քույրերին ոչ մի բաժին չեն հանում։

Զավակ չունեցողները որդեգրում են մի որևէ երեխա, գյուղական տանուտիրոջ մոտ այդ մասին արձանագրություն կազմում և ապա մեռնելիս՝ նրան թողնում իրենց կարողությունը։

Տնփեսայությունն էլ գոյություն ունի սրանց մեջ, և տնփեսան ժառանգում է անհրաժեշտ կարողությունը։

Անչափահաս որդիների վրա հասարակությունը հոգաբարձու է նշանակում առավելապես մի ազգականի և նրանից միշտ հաշիվ պահանջում։

Այրի կինը կամ շարունակում է ապրել կեսրանց տանը, կամ ամուսնանում է։ Եթե որդիներ ունի՝ սովորաբար տանում է յուր հետ։ Այս դեպքում հասարակությունը որոշում է, թե ինչ պիտի հասնի այս երեխաներին նրանց անբաժան հորեղբայրներից, և այս մասի վրա հոգաբարձու նշանակում, որպեսզի որբերը մեծանալիս ժառանգեն։

Սրանց մեջ ապահարզանը չի թույլատրվում, միայն երբ կինն անընդունակ է համարվում ամուսնական կյանքին, ծերերի խորհուրդը թույլ է տալիս սրա ամուսնուն՝ ամուսնանալ մի ուրիշի հետ, իսկ առաջին կնոջը՝ ապրուստի միջոց տալ։

Մալականներն առավոտը թեյ են խմում և հետո հաց ուտում, կեսօրին ճաշում, ուտելով սովորաբար մի տեսակ կերակուր, երեկոյան կրկին թեյ խմում, հետո՝ ցամաք հաց և ճաշի կերակրի մնացորդները։

Ընդհանրապես չափազանց սիրում են թեյը և մեծ քանակությամբ խմում։ Առավելապես գործ են ածում կաթ և կարտոֆիլ։

ՏՂԱԲԵՐՔ

Մալական կանայք երկունքի ժամանակ ընդհանրապես դիմում են իրենց տան բաղնիսը, ուր մի տատմոր և այլ կանանց օգնությամբ ազատվում են։ Սակայն անմիջապես դուրս չեն գալիս բաղնիքից, այլ մնում են այդտեղ երեք օր պառկած և օրը երկու անգամ լողանում։ Չորրորդ օրը նրանք գալիս են տուն, ուր երկու օր ևս պառկած մնում, ապա վեր կենում և զբաղվում միայն իրենց երեխայի հոգսով, որովհետև արու զավակ բերողը քառասուն, իսկ աղջիկ բերողը ութսուն օր անսուրբ է համարվում. ծննդկանը իրավունք չունի ոչ հաց թխելու և ոչ կերակուր եփելու, նրա հետ ոչ ոք, բացի ամուսնուց, չի ճաշում։ Պղծության օրերն անցնելուց հետո ծննդկանը լողանում է, լողացնում երեխային և ապա նրան գրկած տանում ժողովարան, ուր խնդրում է աղոթել յուր և յուր երեխայի համար, նրանք էլ աղոթում են։ Հետո մի օր հրավիրում են ծերերին և բարեկամներին տուն, ուր աղոթելուց հետո թեյ են խմում, ճաշում և ցրվում։ Սովորաբար ծնողները իրենց ազգականների անուններից մինն ընտրելով տալիս են երեխային։

ԹԱՂՈՒՄՆ

Հիվանդ ժամանակ հրավիրում են ծերունիներին, որ գան հիվանդի մոտ աղոթեն, թերևս հիվանդը լավանա։

Ննջեցյալին տաք ջրով լողացնում են, սպիտակեղեն հագցնում, և որովհետև դագաղի վրա կտոր չեն քաշում, ուստի եթե ննջեցյալը ծեր է՝ սև, իսկ եթե երիտասարդ է՝ կարմիր ծածկոցով ամբողջովին ծածկում են։ Ապա հրավիրում են ծերունիներին, որոնք աղոթում են, սաղմոսներ երգում, կանայք լալով ձայնակցում են տղամարդկանց սաղմոսերգության։ Սրանց մեջ չկա հանդերձներ պատառելու, ննջեցյալին գրկել-համբուրելու սովորությունը։

Ապա թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք ուղեկցում են ննջեցյալին մինչև գերեզմանատուն, տանելով նրան եթե չափահաս է՝ չորս մարդու ուսերին հենած երկու ձողերի վրա, իսկ եթե փոքր է՝ միայն մի մարդ առնում է կռան տակ։

Դագաղը դնում են գերեզմանի աջ կողմում, աղոթում են, ծածկոցը վերցնում և դագաղը առանց մեջը մի քիչ հող ածելու իջեցնում են գերեզման, որ մոտ երկու և կես արշին խորության է լինում։ Գերեզմանը

հողով լցնելուց հետո կրկին աղոթում են, սաղմոսներ երգում և վերադառնում ննջեցյալի տուն, ուր կրկին աղոթում են, նստում թեյ խմում, հաց ուտում, ապա վերստին խմբով աղոթում են և ննջեցյալին արքայություն մաղթելով, ցրվում։ Վեց շաբաթից հետո կրկին հավաքվում են ննջեցյալի տունը հոգուհացի, խմբով աղոթում, երգում, թեյ խմում, հաց ուտում և ցրվում։ Ոմանք մի քանի տարի շարունակ տարին մի անգամ կրկնում են այս հոգուհացը։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Վարանդա»

«Վարանդա» աշխատությունը տպագրված է «Ազգագրական հանդեսի» 2-րդ և 3-րդ գրքերում (2-րդ գիրք, 1897, էջ 7—244, 3-րդ գիրք, 1898, էջ 339—349)։ Հիշյալ աշխատության պատրաստմանը, ինչպես նշել է Ե. Լալայանը, առանձին հոդվածներով մասնակցել են Լ. Աթաբեգյանը՝ «Վիճակագրական տեղեկություններ» հատվածը, Լ. Տեր-Ղազարյանը՝ «Տնտեսական դրություն» հատվածը, Հ. Տեր-Հովհաննիսյանը՝ «Ընտանեկան բարք» բաժնի «Հիվանդություն և բժշկություն» հատվածը, և Թումյանը՝ «Լուսավորություն» բաժնից դպրոցներին և դրագարաններին վերաբերող հատվածը։

«Տգաբերք և կնունք» հատվածի համար Ե. Լալայանը որպես հեղինակ նշել է Հ. Վ. սկզբնատառերը, իսկ «Ընտանեկան կյանք» հատվածի համար՝ Ա. Բ.։ Մի այլ առիթով («Ազգագրական հանդես», 3-րդ գիրք, 1898, էջ 349) Լալայանը հիշատակում է Վարդապետյան և Ալլահվերդյան ազգանունները։ Հավանաբար դրանք են նշված սկզբնատառերով գրված հեղինակները։

Վերոհիշյալ հեղինակների շարադրանքները, ինչպես նշել է Ե. Լալայանը, ինքը հիմնովին խմբագրել, վերակառուցել է և ներմուծել իր աշխատության մեջ։ Աշխատության մեջ դրված են մի շարք լուսանկարներ։

«Գանձակի գավառ»

«Գանձակի գավառը» տպագրվել է «Ազգագրական հանդեսի» 5,6 և 7—8-րդ գրքերում (5-րդ գիրք, 1899, էջ 213—360, 6-րդ գիրք, 1900, էջ 231—372, 7—8-րդ գիրք, 1901, էջ 255—270)։ «Ազգագրական հանդեսի» 7—8-րդ գրքում տպագրված «Մալականներ» հատվածը փաստորեն նախորդող, 6-րդ գրքում տպագրված «Քաղաքական վիճակ» բաժնի մալականներին վերաբերող հատվածի լրացված և ընդարձակված ամբողջական շարադրանքն է։

«Գանձակի գավառ» աշխատությունը պատրաստել է բացառապես Ե. Լալայանը։ Աշխատությունը լուսանկարներից բացի ունի Գանձակի գավառի մանրամասն քարտեզ, որը գծագրել է Վ. Միրզոյանը։

«Վարանդա» և «Գանձակի գավառ» աշխատություններում տեղադրված լուսանկարների նկարագրակի մակագրությունները, ինչպես նաև ցանկերի խորագրերը ճշգրտված են՝ հիմք ընդունելով բուն բնագրի տվյալները։ Ճշգրտված են նաև «Վարանդա» և «Գանձակի գավառ» աշխատություններում օգտագործված վիմական արձանագրությունները՝ համեմատելով «Դիվան հայ վիմագրության» համահավաքի բնագրերի հետ։

ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ[1]

Աբաս-Միրզա 12, 208, 238—240
Աբել 168
Աբել (Մելիք-Հաթամի որդի) 287
Աբելյան 273
Աբելով Ն. Ա. 260
Աբիֆլեդա 401
Աբովյան 91
Աբրահամ (բիբլ.) 424
Աբրահամ-յուզբաշի 210—211
Աբրահամ-մելիք 211
Ադամ 166, 168
Ադամյան Մեժլում 224—230
Ադիգյոզալով 216
Ադիլ-շահ 214
Աթաբեկյան Լ. 487
Աթաբեկյան Մելիք-Վանի 240
Աթանաս վարդապետ 287
Ալեքսանդր Ա. 208
Ալեքսանդր Բ. 288
Ալեքսանդրովսկի 18, 19
Ալի 430
Ալիշան Ղ. 206
Ալիսուլթան 206
Ալի փաշա 211
Ալլահվերդյան 202
Ալլահվերդի-սուլթան 219
Ահմեդ-սուլթան 206
Աղայան Ղ. 91
Աղա-Մամադ-խան 12, 227—230
Աղա-Մամադ-շահ 37
Աղեքսանդր թագաժառանգ 231—232
Աղսարդանա (Կյուրիկե թագավորի որդի) 318
Ամարնան (Մարիամ) 218—220, 303
Ամիր-Ասլան-խան 214
Ամիրխանյանց Պողոս 315
Ամիր-խան-սարդար 208
Այվազյան Դ. 32
Աննա Պավլովնա մեծ իշխանուհի (Նիդերլանդիայի թագուհի) 330
Անտոն Նահատակ 28
Աշոտ Բ. 204
Ապրեսյան 120
Ավան-յուզբաշի 212
Ավշար Ֆարալի-խան 216—217
Արթեն Ճգնավոր 438
Արշակունիք 11

Բաթու-խան 13
Բալա (Մելիք-Բեկլարի սիրուհին) 223
Բալայան 120
Բալաղյան Ս. 279
Բահաթրյան ըժիշկ 95
Բահարլին 222
Բաղդագի ամիրա 204
Բաղդասար մետրոպոլիտ 14, 29, 94
Բաղդ-խան 32
Բայրոն 92
Բարդուղիմեոս առաքյալ 30
Բարխուդարյան Մակար 21, 45, 203, 260, 309
Բարսեղ եպիսկոպոս 36, 37
Բելինսկի 92
Բենդել 330
Բզերանց Օշան 99
Բոգաչով Վ. Ի. 272
Բրոկհաուզ-Էֆրոն 474
Բրուտյան Վարթի 410
Բուդա 204
Բուրնաշով զորապետ 225, 226

Գաբրիել 224
Գաբրիել Հրեշտակ 170
Գամառ-Քաթիպա 91
Գայանե 37
Գասպար թագավոր 176
Գարշին 91
Գեղարքունիք Հովհաննես եպիսկոպոս 208
Գեորգ Դ կաթողիկոս 288
Գեորգի ԺԲ վրաց թագավոր 230—240
Գյոթե 92
Գյուլ-Գունլե (Շահվերդի-խանի կինը) 207
Գոգոլ 91
Գոնչարով 91
Գորգյան 451
Գրիգոր Գանձակեցի եպիսկոպոս 306
Գրիգոր Ճգնավոր 157
Գրիգորիս Աղվանից և Վրաց կաթողիկոս 13, 34—36
Գրիգոր Լուսավորիչ 13, 200
Գրիգորյան Հարություն 241
Գրիգոր Սյունյաց իշխան 316
Գուտովիչ 236

Գալի-Մակունց Գյոզալ 410
Գալի-Մահրատա 217, 287
Դանիել (Մելիք-Թամրազի որդին) 214, 224
Դանիելյան 291
Դավիթ եպիսկոպոս 312, 323
Դատյան Սամվել եպիսկոպոս 315
Դեսպինա (Հունաց կայսեր դուստրը) 13
Դիկկենս 91
Դիմետրե վրաց թագավոր 205
Դյումա 91
Դոգե 92
Դոստոևսկի 91

Եզր կաթողիկոս 321
Եղիշե առաքյալ 301, 319
Եղիշե վարդապետ 287
Եմելյանով Ե. 284
Եսայի կաթողիկոս 211, 212—240
Եվա 168
Եվեցկի Օ. 322
Երեմիա կաթողիկոս Աղվանից 41
Երիցյան Ա. 208, 331
Երմոլով գեներալ 213, 243, 328

Զաքարե սպասալար 205, 320
Զոլա 91
Զուբով 207, 227—230

Էդով Կ. 229
Էժեն-Սյու 91

Թադեոս առաքյալ 30
Թամիրյան 28
Թավաքալյան Բագրատ վարդապետ 289
Թեյմուրազ իշխան 217
Թյուլի-Արզուման-յուզբաշի 217, 287
Թումանյան Հ. 451
Թումյան 488

Ժամհարյան Եղբայրներ 40, 242
Ժյուլ-Վերն 91

Իբրահիմ-աղա (Փանահ-խանի որդին) 216
Իբրահիմ-խան 12, 28, 207, 250
Իգնատիոս եպիսկոպոս 301, 316
Իմամ-Գուլի-խան 290
Ինճիճյան Ղ. 13, 204, 205
Իշխանյան 120

[1] Անձնանունների շարքում ընդգրկված են նաև գեղարվեստական և երևակայական էակների անունները։

Իսրայել դիտապետ 36
Իսրայել կաթողիկոս 226, 227
Իսրայել-մելիք 225
Իսրայելյան Մելիք-Ադամ 224—230
Իվանե սպասալար 205, 320
Իվան-մելիք 211

Լազարյան Մինաս-աղա 233—240
Լալայան Երվանդ 1—10, 474, 488
Լենկթեմուր 13, 290
Լերմոնտով 91
Լեո (Բարխանյան Ա.) 13, 14, 91
Լիսանեիշ 12
Լոմման 173
Լոնդով 236

Խազը-Փարգոս արաբ 304
Խանդամիրյանց Ն. 94
Խաչատուրյան Ադաչան 287
Խոճանց Օչախ 99
Խոսրով-սուլթան 216—217
Խրիմյան 91
Խուրս իշխան 296

Ծերենց 91

Կամսարականներ 291
Կայեն 163
Կատերինե (Եկատերինե) կայսրուհի 208, 229, 475
Կարապետ եպիսկոպոս 301
Կիրակոս Գանձակեցի 205, 267, 318, 320, 323
Կնորինգ 231, 232
Կոհար-աղա 17
Կովալենսկի Ս. Ս. 229, 230
Կորիճ իշխան 204

Հախվերդի (Հովիվ) 247
Հակոբյան Ս. 451
Հակոբ (սնխլի) 401
Հաջի-Չիլեր Շիրվանցի 214, 217
Հասան-Ջալալյան Եսայի 206
Հասան-Ջալալյան Մելիք-Ալլահվերդի 215—220
Հասան-Ջալալյան Ս. 37, 38, 260, 314, 323
Հարություն վարդապետ 287
Հարուն-Ղարուն 168, 169
Հեղինե Պավլովնա մեծ իշխանուհի (Մեկլենբուրգ-Շվերինինայի հերցոգուհի) 330
Հեյդար-Ղուլի-խան 215
Հերակլ թագավոր վրաց 207, 218—230, 235—240, 258—260
Հիսուս, տե՛ս Քրիստոս
Հյուգո 92
Հոր Երանելի 169
Հոհան-մելիք 211
Հովհան Գրասխանակերտցի 204
Հովհան Մայրագոմեցի 321
Հովհաննես եպիսկոպոս Ամարասի 14
Հովհաննես կաթողիկոս Աղվանից 224, 318, 320
Հովհաննես Կարապետ 287
Հովհաննիսյան 202
Հովսեփ 182, 183
Հովսեփ արքեպիսկոպոս 208, 224, 227—230
Հովսեփյան Արով 224—240
Հոիփոիմն 37
Հուգա 200
Հուրիզատ խանում (Իբրահիմ-խանի կինը) 228, 229, 303

Ղազարյան Կ. 260
Ղամար-Սուլթան (Միրզա-Մահմատ Մուստաֆայի դուստրը) 210, 211
Ղասում տանուտեր 36
Ղուկաս վարդապետ 37
Ղևոնդ 181

Մադաթով (Մադաթյան) 12, 30, 208, 240
Մահմադ-շահ 207
Մահմեդ-Հասան-խան (Շահվերդի-խանի որդին) 221
Մահմեդ-Միրզա 208
Մահտեսի-Հակոբյան Ա. 94
Մամիկոնյան Ն. 441, 451
Մամուտա իշխան 323
Մանաս-բեկ 235—240
Մանասյան 451
Մանուչարյան Գրիգոր եպիսկոպոս 208
Մանուչե (Շեղոզադին Աբուլ-Սուարի որդին) 205
Մանուել վարդապետ 38
Մատթեոս Ուռհայեցի 204
Մարիամ ասպվածածին 122, 182, 183
Մարկոսենց Սուլթան 403
Մելիք-Աբով Գ 241, 245, 249
Մելիք-Ադամ 213
Մելիք-Ալլահ-Ղուլի սուլթան 214, 215
Մելիք-Ալլահվերդյան 120
Մելիք-Առստամյաններ 258—260, 308
Մելիք-Առստամյան Թավադ-խան 258
Մելիք-Առստամյան Մելիք-Այտին 258
Մելիք-Առստամյան Մելիք-Առստամ 258—260
Մելիք-Ավանյան Մելիք-Եսայի 215, 216
Մելիք-Բադի 11, 30—32
Մելիք-Բեկլար Բ 245, 250
Մելիք-Բեկլար (Մելիք-Հովսեփի որդին) 216, 217
Մելիք-Բեկլարյաններ 240, 302—303
Մելիք-Բեկլարյան Աբով 12
Մելիք-Բեկլարյան Գրիգոր 304
Մելիք-Բեկլարյան Թալիշ-բեկ 304
Մելիք-Բեկլարյան Խայ-խան-աղա 210, 211
Մելիք-Բեկլարյան Մելիք-Աբով 210, 240
Մելիք-Բեկլարյան Մելիք-Բեկլար 210
Մելիք-Բեկլարյան Մելիք-Թամրազ 210—240
Մելիք-Բեկլարյան Մելիք-Հովսեփ 212—240
Մելիք-Բեկլարյան Մելիք-Յավրի 210
Մելիք-Բեկլարյան Սարգիս 254
Մելիք-Բեկլարյան Սև-Աբով 209, 210
Մելիք-Բեկլարյան Փեփրանե կույս Խուբյանց 304
Մելիք-Բեկյան Մելիք-Դանիել 224—230
Մելիք-Թամրազ 212
Մելիք-Հովսեփ Ա 245
Մելիք-Հովսեփ Բ 241, 249
Մելիք-Հովսեփյաններ 240, 242
Մելիք-Հուսեին Ա 30
Մելիք-Հուսեին (Մելիք-Շահնազարի որդին) 11
Մելլում 207, 225—230
Մելիք-Մնացականյան Թեմուր-բեկ 259
Մելիք-Մնացականյան Մելիք-Սարգիս Բ 259
Մելիք-Մնացականյաններ 259, 300
Մելիք-շահ 204
Մելիք-Շահնազար (Մելիք-Բաղու որդին) 37
Մելիք-Շահնազար Բ 11, 13, 215—216
Մելիք-Շահնազարյաններ 11, 38, 39, 99, 256—258, 297
Մելիք-Շահնազարյան Մելիք-Մեժլում 258—260
Մելիք-Շահնազարյան Մելիք-Յուսուփ 256—260
Մելիք-Շահնազարյան Մելիք-Նազար 256
Մելիք-Շահնազարյան Մելիք-Ջումշուդ 12, 227—230
Մելիք-Պողոս 230
Մելիք-Սամի 239
Մելիք-Վանի 240
Մելիք-Փաշայաններ 42
Մելիք-Փարսադանյան 99
Մելիք-Ֆրիդոն 224—240
Մեհտի-խան (Իբրահիմ-խանի որդին) 12, 239, 241, 303
Մեսրոպ Մաշտոց 315
Մեվես Մ. 322
Միլլեր Ս. 273
Միրզաբեկյան Ղահրաման 99
Միրզա-Թահիր 213
Միրզա-Խաբաշխ 237
Միրզա-Խաթան 237
Միրզա-Ղուլի-բեկ 37
Միրզայան 215
Միրզայան Հայրապետ 256

Միրզոյան Սարգիս 257
Միրզա-յուզբաշի 212
Միրզատ-Գյոզալովներ 303
Միրիմանյան 451
Միրզոյան Վ. 488
Մոլիեր 91
Մովսես (բիբլ.) 424
Մովսես Խորենացի 203, 204
Մովսես Կաղանկատվացի 203
Մորակու (զավառապետ) 290
Մուշեղ սպարապետ 204
Մուսունց Մնացական 404
Մուրթուզա-Ղուլի-խան 294, 305

Յուզով 474
Յուսուփ 425, 426

Նադիր-շահ 214—220, 290
Նազունց Թանգի 442
Նալչաղարյանց Սողոմոն Հ. 318
Նանասյան Պետրոս 288
Նասիբ 425, 426
Նավասարդյանց Աննա 404
Ներսեսյանց Մովսես 313
Նիկիֆորով Ն. Կ. 332
Նոյ 166

Շահ-Աբաս 206, 256, 296, 320
Շահազիզյան 91
Շահեն-փաշա 211
Շահվերդի-խան 207, 217—220
Շահ-սուլթան-Հուսեին 313
Շահ-Սուլեման 37, 301
Շամիր-խան-բեկ 250
Շեղդադին Աբուլ-Սուար 205
Շերիֆ-փաշա 231, 232
Շեքսպիր 91
Շիլլեր 91
Շիրակունի Թեոդորոս վարդապետ 316
Շիրվանզադե 91
Շպիլգադեն 91
Շտեյնինգ 330

Ոսկան եպիսկոպոս 301

Չամչյան Մ. 204—206
Չանթրե Մ. 12
Չեխով 92

Պանտ (վիպական հերոս) 434, 438
Պանտալիոն բժիշկ 30, 287
Պանտյուխով Ի. Ի. 333
Պասկևիչ գեներալ 208
Պավել կայսր 228, 229
Պարոնյան Հակոբ 91
Պետրոս կաթողիկոս Աղվանից 35
Պետրոս Մեծ 211, 212
Պոբեդոնոսցև 474
Պոտյոմկին Պ. Ս. 224, 226—229
Պոտտո Վ. Ա. 208
Պոռչյան Պերճ 91
Պուլ Ստենլի Լեն 205
Պուդա ամիրա 204
Պուշկին 91

Ջալալեդին-սուլթան 320
Ջավադ-խան 207, 208, 226—230
Ջումշուդ (Մելիք-Ֆրիդոնի մորեղբայրը) 225

Ռեյեր 330
Ռոստոմ-բեկ 233—240

Սալահ-փաշա 211
Սահակ քյոխանց օջախ 98
Սանեսան թագավոր 13, 35
Սարգիս եպիսկոպոս 224, 226
Սարգիս վարդապետ 319
Սարուխան-բեկ (Մելիք-Թամրազի որդին) 214
Սելին-բեկ (Մելիք-Շահնազարի որդին) 30
Սելրանենց Սահակ 166
Սենեքերիմ թագավոր 309
Սենկևիչ 92
Սիմեոն կաթողիկոս 222
Սիմենս (գերմանացի) 267, 268, 309
Սիսակյան Առան կուսակալ 204
Սիրասկիր-փաշա 231, 232



Գորիսի քաղաքամայրը

Շուշեցի հայ կինը թոռան հետ

Շուշեցի այան (սկեսուրը) հարսի հետ

Հուշերի դրիր

Զեմեր

Վարանդացի հայ կին

Դարաբաղցի հայ վիրավորներ

Մելիք-Ֆրիդոնի (Բեկար-բեկի որդու) լուսանկարը



Ցեղասպանության զոհերի գանգերը

Շահ-Աբբասի կառուցած մզկիթը Գանձակում



Զարեհի սեղանը

Գանձակեցի կին



Գանձակի բերդը



Գանձակեցի տղամարդ

Էրզրումցի հարսանեկան գաղութական:

Գանձակեցի կինը չահրա (նախարակ) մանելիս

ԳԱՆՁԱԿԻ
ԳԱՎԱՌ
/XIX Դ. ՎԵՐՋ/
46°00′
46°15′
46°30′
40° 45′
40° 30′
40° 15′
ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼ
(ԳԱՆՁԱԿ)
ԵԼԵՆԴՈՐՖ
ՀԱՅԱՍՏԱՆ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Բնակավայր
Վանք
Լեռնագագաթ
Ամրոց
Երկաթգիծ
Ճանապարհներ
Գետ
Լիճ
Քարտեզը տպագրության է պատրաստվել Հ. Գ. Սարգսյանը՝ ըստ «Ազգագրական հանդեսի» Ե գրքին կից Վ. Միրզոյանցի բնագրի

Սկորով 405
Սմբատ Ա. 204
Սողոմոն-բեկ (Մանաս-բեկի որդին) 240
Ստեփանոս Աղվանից կաթողիկոս 300
Ստեփանոս Նախավկա 316
Ստեփանոս Օրբելյան 13
Ստեփանոս վարդապետ 287
Սարարոն 203
Սունդուկյան Գ. 91
Սուրբ Մինաս 287
Սուրբ Սարգիս 195, 445, 446

Վարդան Բարձրաբերդցի 203, 205, 323
Վարդապետյան 202, 488
Վախթանգ թագավոր 206, 211—240
Վազգրշակ Ա թագավոր 204
Վայրագան Գ թագավոր 13, 37
Վասակ Սիսական 204
Վոլխոնիցկի 236

Տափար-սուլթան 205
Տեր-Առաքել 37
Տեր-Ավետիքյան Ստեփան 293, 352, 354, 458
Տեր-Բաղդասարյան Գրիգոր 183
Տեր-Գրիգոր Գանձակեցի 306
Տեր-Գրիգորյան 300
Տեր-Երվանդ քահանա Բանանցեցի 260
Տեր-Իսրայելյան 35
Տեր-Իսրայելյան Հ. 293
Տեր-Հարությունյան Աստվածատուր վարդապետ 294
Տեր-Հարությունյան Հակոբ 260
Տեր-Հովհաննիսյան Հ. 287, 488
Տեր-Ղազարյան Լ. 488
Տեր-Միքայելյան (բժիշկ) 293
Տեր-Միքայելյան Լ. 293
Տեր-Նիբսիսյան Նեբսես-բեկ 316
Տեր-Պետրոսյան Տեր-Առաքել 185
Տեր-Սարգսյան 120
Տերտերյան 120

Տյառնեզրացի Հակոբոս 287
Տոբիա 476
Տոլստոյ Լ. 91
Տորմասով զորապետ 239
Տվերիտինով 474
Տրդատ կաթողիկոս 320
Տուշկով 236
Տուրգենև Ի. 91

Բաֆֆի 11, 91, 213

Ցիրալով 285
Ցիցիանով 12, 208, 235—240

Ուկլեին 474—476
Ուզուրլու (Օզուրլի)-խան 206, 207, 208, 305

Փանահ-խան 11, 214—230
Փանոսենց Հայրապետ 247
Փավստոս Բուզանդ 204
Փատլան ամիրա 204
Փեփրոնյա կույս 294
Փիր-Ղուլի-խան 238

Քալանթար Ա. Ա. 76, 77, 260
Քրիստոս 172, 176, 182, 195, 200, 212, 233, 317, 364, 389, 419, 428, 430, 439, 444, 476

Օման փաշա 205
Օստրովսկի Ա. 92
Օվլի-Փիրում 173
Օրբելյան իշխան 225, 327

Ֆադեև 331
Ֆաթմա 425
Ֆարավոն վարդապետ 287
Ֆարզալի-խան 305
Ֆորեր (գերմանացի) 325
Ֆրիկ 330

Աբբասապատ 206
Աբլահ գյուղ 273, 290, 422
Ագուլիս 29
Ագատ գյուղ 283, 290
Ագոխ գյուղ 17, 177
Աթենաշուր գետ 292
Ալազան գետ 261
Ալամենց գոմեր (ուխտատեղի) 156
Ալեքսանա զուղուն (քարայր) 18
Ալի-բուլաղ աղբյուր 157
Ալիսուտ գյուղ 264
Ախալցխա 231, 232
Ախալքալաք 236
Ախնջի գետակ 324
Ազարամ գյուղ 242
Աղդամ գյուղ 143
Աղջա-զալա տե՛ս Զարա-լինար
Աղջաքենդ տե՛ս Վերիշեն
Աղսու գետակ 321
Աղվանից աշխարհ 11, 37, 203, 204, 207
Աղքենդ գյուղ 16
Աղքյորտի գյուղ 232, 257
Ամարաթների քարայր 18
Ամարասա գետակ 17, 34, տե՛ս նաև Ջալուն-գետ
Ամարասի սուրբ Գրիգորիս (ուխտատեղի) 120
Ամարասի վանք 13—415, 17—20, 34—44, 201, 215
Ամենափրկիչ եկեղեցի (Սարուշենի) 32
Ամենափրկիչ վանք (Գուլիստանի) 320—322
Ամիրվար գյուղ 329
Այրում գյուղ 328
Այքենդ գյուղ 273, 329
Անդրկասպյան երկիր 136
Անդրեովկաս 96
Անի 205
Աննենֆելդ 208, 267, 268, 325—331
Աշաղա-Ախալի գյուղ 265
Աշան գյուղ 15, 157
Աշառի-ծմակ լեռ 316
Աչի գյուղ 329
Առաջաքար սար 44
Ասկարան բերդ 214, 217, 218
Աստրախան 475
Ավագ սուրբ նշան (ուխտատեղի) 300
Ավանա կարան (քարայր) 17
Ավդալ-Օճախ (ուխտատեղի) 156
Ավդուռ գյուղ 156, 162
Ավետարանոց ամրոց 217
Ավետարանոց գյուղ 11, 16, 29, 30, 76, 81, 88, 135, տե՛ս նաև Ջանախլի
Առաքելական 251
Արանդամին գյուղ տե՛ս Վարագաբուն
Արարատ լեռ 330
Արաքս գետ 13, 16, տես նաև Երասխ
Արեշենկա գետակ 326
Արեշի գավառ 260
Արթափա գյուղ տե՛ս Նովո-Գորելոյե
Արթենաշուր տե՛ս Բանանց գետ
Արթենասար 430
Արխաշան սար 265
Արշակաշեն 203
Արցախ 5—10, 13, 203—207

Բազարչայ 328
Բալիրկյան գետ 262
Բալա-Կուրակ 264
Բալլու-զալա (ամրոց) 324
Բալլուջա գյուղ 270
Բալլուջա սար 16
Բախչիկ գյուղ 273, 300, 301
Բաղբանլիար 285
Բաղաքյանդ 263
Բաղդադ 404
Բալաքի գյուղ 214
Բալրամլի գյուղ 328
Բանանց 265, 292, 352, 355, 413, 417, 423, 437
Բարսում 259, 307, 308
Բարսամ ճգնավոր (մատուռ) 295
Բարում տե՛ս Գառնակեր
Բարևածուռ (ուխտատեղի) 13, 14
Բաքվի նահանգ 261
Բաքու 96, 136, 194, 212, 240, 332
Բեգիշանի գաշտ 16
Բելգիա 57, 65
Բենյովշալի լեռ 262
Բբբրջամալ (ուխտատեղի) 164
Բիրգյոզ գյուղ 329
Բոզ լեռնաշղթա 261
Բոլնիս 230, 247, 301, 306, 307
Բոլորանց ձոր 316
Բոլլի գյուղ 265
Բողրխան լեռ 15, 32, 33, 155
Բողրխանի վանք 44
Բորիսոգլեբսկ 474
Բորչալու 225, 232—234
Բորսանլու գյուղ 222, 264
Բռի Եղջի (եկեղեցի) 41, 42
Բրաշուր գյուղ 256, 298, 355, 417, 418, 422
Բրդահոնջին զալա (ամրոց) 45
Բրդիշենի եկեղեցի 305
Բուդա-չայ գետ 265
Բուզրլուխ 242, 305, 423

Գանձակ գետ 261—268, 281
Գանձակ քաղաք 204, 450, տե՛ս նաև Ելիզավետպոլ
Գանձակի բերդ 12, 322
Գանձակի գավառ 203—450
Գանձասարի վանք 35, 211, 224—230, 250
Գառնակեր 307—309, 317
Գարգար գետ 15, 16, 214, 217, 218
Գարդման ամրոց 204
Գարդման գավառ 273—260
Գարդմանա ձոր 204
Գարդմանիկ 203, 295
Գեղամա լեռնաշղթա 203
Գեղամա ծով 11, 219, տե՛ս նաև Սևանա լիճ
Գեղմալաք գյուղ 263
Գեորգ-իմամ (ուխտատեղի) 289
Գետաբեկ գյուղ 205, 267, 273, 309, 321, 323, 401
Գետաշեն գյուղ 221, 259, 264, 300, 301, 319, 373, 403, 404, 410, 417, 421, 422, 432, 442, 451
Գետաշենի սուրբ նշան (ուխտատեղի) 363
Գերմանիա 65, 330
Գիզատ (ուխտատեղի) 156
Գիզավոր (ուխտատեղի) 162
Գիլան գյուղ 36, 212
Գիլիխ լեռ 265
Գինալդաղ լեռ 261, 262
Գիշի գյուղ 16, 101, 136
Գյամիշ լեռ 264
Գյանջա 463 տե՛ս նաև Գանձակ
Գյատմիշ 297
Գյոգ-Թափա լեռ 303
Գյոկ-գյոլ 266—270, 364
Գյորան գյուղ 222
Գյորանբոյ Ահմեթին գյուղ 328
Գյորան-չայ գետ 264
Գյորգին սար 304
Գյուլամբերդ 309
Գյուլիստան բերդ 203, 213, 253
Գյուլիստանի մահալ 203, 260, 302—304 տե՛ս նաև Իգիրմիգորդ մահալ
Գյուլ-յաթաղ գյուղ 225, 258
Գյունալ տե՛ս Նովո-Տրոիցկոյե
Գյունեյ գյուղ 329
Գյունեյ Ճարտար գյուղ 154, 160, 162, տես նաև Ճարտար
Գորիս 96
Գուգարաց երկիր 207

Գալլար գյուղ 268, 328
Գաղստան 207, 216

[1] Տեղանունների շարքում ընդգրկված են նաև շինությունների, ամրոցների, վանքերի, ուխտատեղիների անունները

Դամջալի գյուղ 329
Դամի գյուղ 329
Դամբլաձոր տե՛ս Փոքր Բանանց
Դանուբ 330
Դաշքասան գյուղ 296 տե՛ս նաև Քարհատ
Դաստաֆուր գյուղ 270, 297, 329
Դավրախուպ սար 32
Դավրեժ 206, տե՛ս նաև Թավրիզ
Դավաշիչակ աղբյուր (ուխտատեղի) 160
Դատիբեկանց վանք 322
Դեմիրգաղ լեռ 327
Դերբենդ 35, 211, 225, 227, 228
Դիգպակի գավառ 15, 215—220
Դիզափայտ լեռնաշղթա 15
Դյուզարլու գյուղ 263
Դյուրգարլի գյուղ 261, 328
Դոզդ-գաղ լեռ 302
Դռնավարզ գյուղ 99, 156, 163, 164, 177, 180

Եգան ուխտատեղի (Օքյուզ-գիարաթ) 172
Եղնանիսա լեռ 294
Ելենենդորֆ 208, 263—265, 324, 325, 330, 331
Ելիզավետպոլ 263—265, 402
Եկատերինոդար 229
Եկատերինոսլավ 475
Եղիշա կուսի անապատ 40, 42
Եղնասար վանք 319, 363
Եղունիկի քարայր 18
Եմիշյան գյուղ 164
Ենկիչա-բազար 326
Ենկիչա գյուղատեղի 307
Ենկի-քենդ գյուղ 248 տե՛ս նաև Նոր-շեն
Եվլախ 96
Երասխ 14, 205, 217, 438 տե՛ս նաև Արաքս, Արազ
Երիշեն գյուղ 245
Երիվանք 305
Երիցմանկանց վանք 226
Երկրորդ Խիլխինա գյուղ 328
Երուսաղեմ 181, 187, 424, 428
Երևան 206, 211, 332

Զագաղարասի գյուղ 273
Զագամ գետ 265, 324
Զագամ կալարան 208, 307
Զագլիկ գյուղ տե՛ս Փիփ, Նոր Փիփ
Զազա-Դարասի 329
Զալի գյոլ տե՛ս Սյուլլուկնածիվ
Զանգեզուր 24, 172, 328, 333, 334
Զառիստ սար 16, տե՛ս նաև Քիրս լեռնաշղթա
Զաքաթալա 260—263
Զեյվա գյուղ 240
Զրավոր աղբյուր (ուխտատեղի) 160, 162

Էլլիլախ գյուղ 329
Էյրալ-թափա գյուղ 270
Էջմիածին 182, 259
Էրենեցիք գյուղ 326
Էրզրում 231
Էրքեջ գյուղ 210, 242, 305, 307, 448

Ըխալահազի խալ (ուխտատեղի) 163
Ըռստակ գյուղ 301

Թալիշ գյուղ 203, 210, 242
Թալիշի մահալ 302—303
Թաղավարդ գյուղ 81, 136
Թաղլար գյուղ 69, 81, 83, 132, 136, 177
Թաղոտ գյուղ 76
Թավրիզ 208, 233—240
Թարգմանչաց անապատ 316, 317
Թարթառ գետ 213, 253, 302
Թարնակյուրտ (Տիգրանակերտ) 214
Թաքնալու գյուղ 270
Թաքնալի-Օխչուլու գյուղ 265
Թեհրան 207, 214, 404
Թիֆլիս 11, 12, 96, 206—208, 211, 217, 225—240, 254, 258—260, 289, 311, 330, 332, 337
Թոդան գյուղ 242
Թոփխանա հրապարակ (Շուշի քաղաքում) 26—28
Թուքթուլաղ գյուղ 209, 210, 243

Իգիրմիդորդ մահալ 230, 302, 303, տե՛ս նաև Գյուլիստանի մահալ
Իզմայիլ 330
Ինճալայ գետ 203, 264, 303
Իշխանագետ 17
Իշխնեցիք գյուղատեղի 33
Իոր գետ 261
Իտալիա 57, 65
Իրեքմանկունք եկեղեցի 303

Լալվար լեռ 232
Լալուկ-քար լեռ 294
Լիտր գյուղատեղի 303
Լյակ գյուղ 281
Լոռի 229, 327
Լուսավորչի սար 34, 157

Խազաս-սար 15, 34, 157
Խաթարա վանք 316
Խամշի վանք 320
Խանալան լեռ 303
Խանծաթա գյուղ 16
Խան-արխ ջրանցք 232
Խանքենդ 240, 291, 292
Խաչակապ գյուղ 296—297, 423, 437
Խաչախուտ լեռ 15
Խաչ-բուլաղ գյուղ 265
Խաչ-բուլաղ-չայ գետ 273 220
Խալեն գավառ 16, 32, 46, 172, 215—220
Խալմաչ գյուղ 44, 157, 163, 118
Խալմալ լեռ 15
Խաչ-յալ լեռ 261, 307
Խաչ-քցի մատուռ 296
Խարխափուտ գյուղ 223, 242, 273, 304
Խերխան գյուղ 17, 98, 153
Խնձորաթաչ (ուխտատեղի) 162
Խնձորիստան գյուղ 215
Խնուս 326
Խոյ 292
Խոյլար գյուղ 292
Խոր Վիրապ 201
Խրամ գետ 15

Խունիսա վանք 321

Ծակ-քար լեռ 292
Ծաղկոցավանք 317, 318
Ծիրանավոր մատուռ 296
Ծիրանավորի խաչ 417
Ծծախաչ (քարայր) 17
Ծծքարի կարան (քարայր) 18
Ծծքարի ծով (լճակ) 17, 155
Ծովատեղ գյուղ 18, 99
Ծովատեղ գյոլ (լճակ) 18

Կալկաթա 254
Կախաղաղ լեռ 263
Կազաբծի գյուղ 144
Կաղնի խաչ (ուխտատեղի) 163, 421, 423, 442
Կանաչ խաչ (ուխտատեղի) 159, 163, 297
Կարակուլա գյուղ 264
Կարմիր եկեղեցի 42 տե՛ս նաև Հոռոմաշեն
Կարմիր-ջուր գետակ 23
Կարմիր-քար լեռ 316
Կաֆա 301
Կեռստավանք բերդ 324
Կեփաս սար 270
Կիրանց գյուղ 296—298
Կյունի Ճարտար գյուղ տես Ճարտար
Կոթ գյուղ 311
Կոհակ (ուխտատեղի) 162
Կողբ գյուղ 232
Կողեր գյուղատեղի 304
Կողթ գյուղ 204
Կոնչաշին լեռ 260
Կոսի կալ 305
Կոստանդնուպոլիս 13, 224
Կովկաս 81, 224, 329, 330, 475
Կուսանաց անապատ 29, 37—38, 177
Կուր գետ 16, 214, 221, 253, 260—268, 278—280
Կուրակ-չայ գետ 203, 262—268, 291, 300, 302

Հաթերք 290
Հալեպ 404
Հակովիկ (ուխտատեղի) 162
Համամ-չայ գետ 271
Հայաստան 203
Հայ-զանձակյան լեռնաշղթա 262—265
Հայի Գետաբեկ տե՛ս Ղազախ
Հայոց Ձկվա տե՛ս Ղահռութ
Հանգած եղցե (եկեղեցի) 33
Հաշիքենդ 273, 290, 291, 321, 328, 332
Հասան-Նանա լեռ 363
Հավլաբար 259
Հարդաղողի ճանապարհ 175, 430
Հարավ գյուղ 157, 162
Հարևա եղցե (ուխտատեղի) 163
Հարց Հանդիստ գյուղ տե՛ս Ջովդար
Հացի գյուղ 144, 155, 163
Հերհեր գյուղ 17, 99, 154
Հին Գետաբեկ 312, 321
Հին Դրախտիկ գյուղ 162
Հին Ընապատ լեռ 316
Հին Թաղլար գյուղ 33, 34
Հին Փիփ գյուղ 294, 295
Հին Քյաթուկ գյուղ 156, 162
Հիրհերի վանք 35, 36
Հղորդի գյուղ 159, 160
Հնդկաստան 250
Հոռեկա վանք 203, 210, 240, 253, 302
Հոռոմաշեն 319
Հոիփսիմեի ձոր 29
Հրեշտակապետաց վանք 317, 318
Հունկարիա 330
Հունոտ գյուղ 17
Հունոտի կարան (քարայր) 17

Ձեգամ 401
Ձորագետ 15

Ղաբաղ-Թափա գյուղ 263, 295
Ղազախի գավառ 136, 218, 229, 261—263, 271, 311, 329, 332
Ղազանչի գյուղ 29, տե՛ս նաև Ա-վետարանոց
Ղազանչեցվոց Սուրբ Փրկիչ մայր եկեղեցի 27, 28
Ղալա բերդ 324
Ղազիքենդ գյուղ 242
Ղալա բերդ 324
Ղալա-Բոյուն բերդ 324
Ղալաշա 311
Ղալաքյանդ բերդ 322
Ղալաքյանդ գյուղ 309, 314
Ղալին-խութ մայր 31, 45, 160
Ղահռութ գյուղ 303
Ղամիշ լեռ 262, 264
Ղայդալի գետ 16, 24
Ղայդալի գյուղ 16
Ղանդալ սար 323
Ղաշխա-քար լեռ 316
Ղավախան գյուղ 162, 177
Ղարա-արիսաշ լեռ 262
Ղարարաղ 12, 26, 208, 209—240, 311, 332
Ղարաբուլաղ աղբյուր 323
Ղարաբուլաղ գյուղ 17, 242, 273, 328, 329, 305, 306, 423, 432, 433
Ղարարուլաղ լեռ 303
Ղարաղաղ 32, 251
Ղարաղաղլի-Պաղար 328
Ղարաղաղյու 334, տե՛ս նաև Խանքենդ
Ղարա-Մուրատ 307
Ղարա-չայ գետ 264, 302—304
Ղարաչինար գյուղ 242, 304
Ղարասախկալ գյուղ 265
Ղարասմոն գյուղ 264, 266
Ղարաքիշիշ գյուղ 270
Ղարաքիլիսա 236, 268
Ղարսալի գյուղ 238
Ղափան 339
Ղզզել-դաղ լեռ 263
Ղզզել-Իլղոն գյուղ 242
Ղզզը-Հաջիլին գյուղ 328
Ղզզը-չակ լեռ 326
Ղզղալա բերդ 44, 324
Ղզզալա գյուղ 15, 74
Ղորուլախ գյուղատեղի 307
Ղողթուի գյուղ 242
Ղոնդիկ տե՛ս Ղևոնդյանց անապատ
Ղոչղարա-չայ գետ 262—265, տե՛ս նաև Բանանց գետ
Ղոչղարա գյուղ 261
Ղուբա 227, 228
Ղուլալի 324
Ղուշղուրա գետ 437
Ղուշչի գյուղ 271, տե՛ս Խալչակաղ
Ղուրու-չայ գետ 15, 17, 155
Ղևոնդյանց անապատ 16, 39, 40, 182

Ճաթղոսան գյուղ 309
Ճանճաքար լեռ 316
Ճարտար գյուղ 31, 32, 99, 136
Ճրովիզ գյուղ 309

Մաղանդարան 212
Մագի Կամուրջ 16
Մաթիկ-բաբա (ուխտատեղի) 162
Մալորոսիա 79
Մածնարերդ տե՛ս Մլզնաբերդ
Մամոստ բերդ 323
Մանաշիտ գյուղ 242
Մանաշիթ գյուղ 306
Մանաս-շեն տես Նոր-շեն
Մանուշ-շեն տե՛ս Մանաշիթ
Մաչար 229
Մասխիտ լեռ 263
Մավաս գյուղ 15
Մավասի վանք 44
Մատ-խաթունի սար 33
Մատաղախուի (ուխտատեղի) 164
Մատաղախուի սար 32
Մատաքենդ գյուղ 156
Մարիամ ատվածածին եկեղեցի 156
Մարսել 86
Մեծ Բրիտանիա 57, 65
Մեծ-գոմերի խաչ (ուխտատեղի) 417
Մեծ Դարա-Մուրատ գյուղ 310
Մեծ Նահատակի սար 44
Մեծ Քիրս լեռ 15, 157
Միղրի 29
Մեքքա 424
Միափոր գավառ 320
Միլին գյուղ (Արցախյան դաշտաբերան) 15
Միխայլովկա 328, 474
Միջի վանք 305
Միրզիկ գյուղ 256, 270, 297, 298, 329, 417
Միրիշալու գյուղ 162
Մլզնաբերդ 258, 318—320, 328
Մլզնաբերդ սար 293
Մկնատամի խաչ (ուխտատեղի) 307, 417
Մյուս Հաբանդ 11
Մշկապատ գյուղ 45
Մոլլաջալու գյուղ 285, 273
Մոսկվա 56, 203, 254
Մորբլ գյուղ 265, 328
Մոռավ լեռ 203, 260—268, 291, 302, 324, 415, 416, 460
Մամնա գյուղ 44
Մուղան 34, 205, 206
Մուռուի գյուղ 256, 270, 273, 251, 296, 334, 417, 439
Մուրադա լեռ 260

Նադիրի-ծակ (քարայր) 316
Նալթոքյան լեռ 316
Նախիջևան 211, 215
Նախիջևանիկ 136, 164
Նահատակ (ուխտատեղի) 28, 291, 437, 459
Նարին կալա (ամրոց) 324
Ներքին-Ափալի գյուղ 328
Ներքին-Թաղավարդ գյուղ 16, 45, 156, 188
Ներքին-շեն 210, 303
Ներքին Ղոթյուլ գյուղատեղի 308
Նիժ գյուղ 209
Նինեի գյուղ 17, 175, 185, 201
Նովո-Գորելոյե 265, 325
Նովո-Իվանովկա 327, 474
Նովո-Սարատովկա 327, 474
Նովո-Սպասկոյե 326
Նովո-Տրոիցկոյե 309, 326
Նովորոսսիա 79

Նորաշեն 285
Նոր Բայազետի գավառ 261
Նոր Գետաբեկ 321
Նոր Թաղլար 33, 34, 89
Նոր Խրիատոր տե՛ս Խարխատուտ
Նոր-շեն 16, 144, 161, 162, 164, 304
Նորվեղիա 57
Նոր Փիփ գյուղ 294, 295
Նուզդար գյուղ 309, 319, 320, 270, 273, 324
Նուխի 207, 209, 258

Շաղելի-քյուրդ գյուղ 329
Շակաշեն (Շիկաշեն) գավառ 203
Շահ-Աբասի մզկիթ 285
Շահ-գազ լեռ 261, 265
Շահբյանի աղբյուր 417
Շամախի 207, 227, 228, 377
Շամշադին 219
Շամքոր 206, 220, 263—268
Շամքոր գետ 203, 262—268, 294—296, 303, 308, 317, 319, 320, 323, 324
Շամքոր գետակ 208
Շաքար-բեկ լեռ 263
Շըխ գյուղ 230
Շիրլի-քար լեռ 294
Շիշ-թափա լեռ 302
Շիպասար 310
Շիրակ 207
Շմանեք (Հնավայր) 154, 162
Շմանեք (քարայր) տե՛ս Սեթաղ
Շմեղ բերդ 323
Շնբուեղի խաչ (ուխտատեղի) 417
Շուշի գյուղ 12, 31, 32, 76, 99, 117, 118, 159
Շուշկա վանք 44, 160, 164
Շորուլ-կոր լեռ 272
Շվեդիա 65
Շվեյցարիա 59, 65
Շուշի 3—208, 333
Շուշի բերդ 12, 215—217, 258
Շուշի գավառ 3—208

Ոսկանապատ 256, 297, 324
Ոսկանապատի գետ տե՛ս Գանձակ գետ
Ոսկան նահատակ (ուխտատեղի) 363
Ոսկեթելի խաչ (ուխտատեղի)
Ոսկեպարիսպ գյուղ 311.
Ոսկի խաչ (ուխտատեղի) 162
Որվան (քարայր) 17

Չամամախ-բուլախ լեռ 303
Չայքենդ տե՛ս Գետաշեն
Չանախչի 99, 159, 177, 178 տե՛ս նաև Ավետարանոց
Չարաբերդ 205
Չարդախլու 32, 270, 311, 312, 421
Չարեք գետ 205
Չարեքի վանք 205, 273, 312, 314, 323
Չափար-զուլա բերդ 324
Չերեոզյոմ 79
Չիլիբիր լեռ 294
Չինարի-խաչ (ուխտատեղի) 422
Չինդիլդաղ լեռ 261
Չոսլան-դաղ լեռ 314
Չովդար գյուղ 293, 307, 318
Չովդար-չայ գետ 265
Չրտղի ձոր 267
Չուրաթոնի կամ (ձոր) 23

Պան (ուխտատեղի) 363
Պանա լեռ 290, 415, 454, 468, 471
Պանտալյանի վանք 321
Պառավաթումբ գյուղ 16
Պատա գետ 307
Պարիս՝ Հայոց 242, 303, 304
Պարիս՝ ռուսաց 327, 474
Պարսկաստան 214, 217, 298, 311, 332
Պաքերի աղբյուր (ուխտատեղի) 418
Պետերբուրգ 213, 228—240, 289
Պետրեցվոց ասար 16
Պետրովսկ 136
Պրբեռածառ տե՛ս Բարեռածառ
Պտկեսիբերք (ուխտատեղի) 156
Պտկսաբերկ եկեղեցի 172
Պտկսաբերկ լեռ 15
Պուկ-քար լեռ 153

Ջալալ-Օղլի 232
Ջակիր գյուղ 308, 309
Ջակիր-չայ գետ 262—265, 326
Ջամալի խաչ (ուխտատեղի) 162
Ջարգյալար տե՛ս Խոյլար
Ջարկյա մարդ (ուխտատեղի) 164
Ջեյրան-լու 261
Ջիբանի 327
Ջիբրայիլի գավառ 70, 72, 95, 328, 333
Ջիվանշիրի գավառ 70, 72, 214, 258, 264, 302, 332
Ջրաբերդ 31, 203, 213, 240, 258, 259, 301, 307

Ռումի (Բյուզանդիոն) 329
Ռուսաստան 224

Սարաթ-քեշմալ գյուղ 303
Սագասին 203
Սարատով 327, 474, 475
Սարդիսաշեն գյուղ 163
Սարիբեկ (ուխտատեղի) 120, 155, 161, 163, 181, 185, 201
Սարյալ լեռ 290
Սարվազ-թափա 263
Սարով գյուղ 266, 291, 292
Սարուշեն գյուղ 15, 32, 33, 89, 99, 155, 185
Սարուշենի ավետարան (ուխտատեղի) 120, 201
Սատանա-խաչ լեռ 261
Սաֆի-քյուրդ գյուղ 222
Սաֆի-քյուրդ Ղարաչալի գյուղ 329
Սաֆի-քյուրդ Քյարակլայի գյուղ 329
Սեիդ-բենդ գյուղ տե՛ս Կիրանց
Սեյֆալի գյուղ 270
Սղնեք գյուղ 163
Սիբիր 240
Սլավյանկա գյուղ 267, 326
Սխտորաշեն գյուղ 15, 98, 154, 161, 170
Սղնախ գյուղ 153, 161, 162
Սյուլյուկնածով (լիճ) 17, 267
Սոթ գյուղ 31
Սոս գյուղ 17

Սպիտակ եկեղեցի 327
Սպիտակ-ցուր գետ 267
Սրբիթան մատուռ 295
Սուլուկ գյուղ 242, 270, տե՛ս նաև Ա-ղաստ գյուղ
Սուրբ Աստվածածին եկեղեցի 288, 308
Սուրբ Գաբրիել եկեղեցի 298
Սուրբ Գրիգոր Լուսավորիչ (ուխտատեղի) 311
Սուրբ Գեորգ եկեղեցի 285, 288, 312
Սուրբ Եղիշա կոսի տնապատ 31, 32
Սուրբ Թարգմանչաց վանք 315—317
Սուրբ Լուսավորչի եկեղեցի 288
Սուրբ Կիրակոս (ուխտատեղի) 288
Սուրբ Հակոբ եկեղեցի 297
Սուրբ Հռիփսիմեի վանք 308
Սուրբ Հովհաննես (ուխտատեղի) 120
Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի 286—288
Սուրբ Մեսրոպ (ուխտատեղի) 296
Սուրբ Մինաս եկեղեցի 290
Սուրբ Մինաս (ուխտատեղի) 423
Սուրբ Նշան (ուխտատեղի) 417, 442
Սուրբ Յաղիստա (ուխտատեղի) 288
Սուրբ Սարգիս եկեղեցի 306, 321, 417
Սուրբ Սարգիս (ուխտատեղի) 288
Սևանա լիճ 262

Վալտիա 330
Վասնյան դաշտ 13
Վարազարուն գյուղ 15—32, 33
Վարանդա 3—220
Վարդանապատ 326
Վյուրտենբերգյան թագավորություն 330
Վենետիկ 203
Վերին Ախալի գյուղ 328
Վերին Աղճաքենդ գյուղ 243
Վերին Թաղավարդ գյուղ 13, 161
Վերին Ղութուլ գյուղ 259
Վերին Սղնեք գյուղ 159
Վերիշեն գյուղ 210, 302, 303
Վորոնեժ 475
Վսկաթել մատուռ 293
Վրաստան 207, 228—240

Տաթևի վանք 172
Տանկատան 224
Տամբով 327, 474, 475
Տանձուտ 314
Տավուշ գետակ 203
Տատի սեռ լեռ 292
Տրվերախաչ (ուխտատեղի) 164
Տող գյուղ 99
Տուզախ գյուղ 219
Տուլուզ գյուղ 210
Տումի գյուղ 76

Բուսական-Նահատակ մատուռ 295, 324

Ցնծահալ գյուղ 297

Ուզունլար գյուղ 230
Ուլ գյուղ 263
Ուտի-Առտնձնակ գավառ 291
Ուտիք 203, 204
Ուրմիա 216

Փալան-Թոքան լեռնաշղթա 261, 264
Փամբակ 232—233, 307
Փառիսոս գավառ 203
Փառիսոսի վանք 314, 315
Փառիսոս տե՛ս Ղալաքյանդ
Փիրմամալ գետ 160, 163
Փիփ գյուղ 27, 334, 352, 404—423, 437, 451
Փլաթի-սեռ լեռ 292
Փլեկի սար 44
Փյուրման գյուղ 155
Փնտխլու (Կաղնուտ) գյուղ 327
Փոփոստ լեռ 292
Փոքր Բանանց գետ 293
Փոքր Կուրակ գետ 206
Փոքր Ղարա-Մուրադ գյուղ 310
Փոքր Նահատակի սար 44
Փոքր Թիրս լեռ 15

Քամար-գող լեռ 303
Քամու-խաչ (ուխտատեղի) 199
Քանաքեռ 309
Քաղքարուն ժայռ 417
Քաղքաձոր 177, 178, 271, 373
Քաղքատուն (քարանձավ) 29
Քառասունի գյուղ 152, 171, 178
Քավս (Քուստի) գավառ 320
Քարահերձ տե՛ս Օխտը եղբե
Քարահունջ գյուղ 17
Քարահունջ ավերակ տե՛ս Բալլու-գալա
Քարատակ 259
Քարին-կտոր սար 44
Քարին-տակ գետակ 24
Քարին-տակ գյուղ 16, 154
Քարխանա վանք
Քարհատ գյուղ 265, 273, 292, 296, 297, 437
Քեչիլին գյուղ 328
Քերթ գյուղ 17, 163
Քիլիսքենդ գյուղ 220, 285
Քինչիլի գյուղ 260
Քիրս լեռ 153, 155
Քիրս լեռնաշղթա 15, 16
Քիրսու-չայ գետ 16
Քյաթուկ գյուղ 136
Քյաթուկ լեռ 15, 170
Քյարխան գյուղ 260
Քյափաս գյուղ 291, 263—265, 415, 416, 428, 461
Քյոնդալան գետ 16
Քյոր-չայ գետ 264, 266
Քյուշուկ-շահ-դաղ լեռ 265
Քոլեն խաչ 155
Քոչուս գավառ 11

Օղեսա 330
Օխտը եղբե 318
Օխտը սնամեր (Մեծ արջի համաստեղություն) 430
Օզրուզա լեռ 262
Օրթաճալա (Թիֆլիսում) 226
Օքյուզ-դաղ լեռ 263, 307

Ֆրանսիա 57, 65, 86
Ֆինլանդիա 62, 65

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմողի կողմից 5

ԱՐՑԱԽ

ՎԱՐԱՆԴԱ (ՆՅՈՒԹԵՐ ԱՊԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

Վարանդայի պատմական անցյալի մասին 11
Վարանդայի տեղագրությունը 15
Կլիման 18
Բուսականություն 21
Կենդանիներ 23
Հանքեր 23
Քաղաքներ (Շուշի) 24
Նշանավոր գյուղերը 29
Նշանավոր վանքերը 34
Նշանավոր բերդերը 44
Վիճակագրական տեղեկություններ (Շուշու ամբողջ գավառի մասին) . . . 46
Բնակչության կազմությունն 47
Բնակչության շարժումը 50
Տնտեսական դրությունն 66
Գյուղատնտեսություն 69
Երկրագործություն 69
Այգեգործություն 74
Անասնապահություն 76
Ձերամեղվապահություն 79
Մեղվաբուծություն 80
Ձկնորսություն 81
Որսորդություն 81
Արհեստներ 82
Գործարանական արդյունաբերություն 85
Առևտուրը գավառում 87
Լուսավորությունն 89
Դպրոցներ 89
Գրադարաններ 90
Պարբերական հրատարակություններ 92

Թատրոն . . . 93
Տպարաններ . . . 94
Ոճրագործություն . . . 94
Փոստ . . . 95
Հպարտգակցություն . . . 96
Ընտանեկան բարք . . . 97
Ամուսնություն և հարսանյաց սովորություններ . . . 97
Տղաքերք և կնունք . . . 120
Ընտանեկան կյանք . . . 126
Ազգակցության աստիճաններ . . . 128
Խնամունք . . . 128
Բարոյականություն . . . 136
Հիվանդություն և բժշկություն . . . 142
Ժողովրդական դեղեր . . . 144
Մահ, թաղում և մեռելոց . . . 146
Հոգու և հանդերձյալ կյանքի մասին . . . 151
Հավատ . . . 153
Լեռների պաշտամունք . . . 153
Քարի պաշտամունք . . . 153
Կրակի պաշտամունք . . . 158
Ջրի պաշտամունք . . . 159
Ծառերի պաշտամունք . . . 161
Կենդանիների պաշտամունք . . . 165
Օձի պաշտամունք . . . 170
Կաթնատուներ . . . 171
Լուսավորների պաշտամունք . . . 173
Քաջքեր կամ սատանաներ . . . 177
Սրբեր . . . 181
Կախարդություն . . . 183
Մնոտիապաշտություններ . . . 190
Նշանավոր տոներ . . . 194

ԳԱՆՁԱԿԻ ԳԼԽԱՎՈՐ (ՆՅՈՒԹԵՐ ԱՊԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

Պատմական նամառոտ տեսություն . . . 203
Հայ մելիքություններ . . . 209
Տեղագրություն . . . 260
Կլիման . . . 273
Բուսականություն . . . 279
Կենդանիներ . . . 281
Քաղաքական վիճակ . . . 285
Գանձակ . . . 285
Հայոց նշանավոր գյուղեր . . . 291
Նշանավոր վանքեր . . . 312

Նշանավոր բերդեր . . . 322
Գերմանական գաղութներ . . . 324
Դուխարորների գյուղեր . . . 326
Մալականների գյուղեր . . . 327
Թուրքերի գյուղեր . . . 328
Ազգաբնակություն . . . 329
Գերմանացիներ . . . 329
Հայեր . . . 332
Բնակարան . . . 334
Զգեստ և զարդ . . . 335
Ընտանեկան բարք . . . 339
Ամուսնություն և հարսանեկան սովորություններ . . . 339
Տղարերք և կնունք . . . 361
Ընտանեկան կյանք . . . 376
Բաղանիս . . . 388
Կերակուր և խմիչք . . . 389
Հիվանդություն և առողջություն . . . 401
Ժողովրդական դեղեր . . . 404
Մահ, թաղումն և մեռելոց . . . 408
Հավատ . . . 415
Լեռների պաշտամունք . . . 415
Քարի պաշտամունք . . . 416
Ջրի պաշտամունք . . . 417
Կրակի պաշտամունք . . . 419
Ծառերի պաշտամունք . . . 420
Կենդանիների պաշտամունք . . . 423
Տարերքի և տիեզերական երևույթների պաշտամունք . . . 428
Ոգիների պաշտամունք . . . 432
Ցավեր . . . 436
Սրբեր . . . 437
Կախարդություն . . . 439
Նախապաշարմունք . . . 442
Նշանավոր տոներ . . . 444
Բանավոր գրականություն . . . 451
Երգեր . . . 451
Մալականներ . . . 474
Ծանոթագրություններ . . . 487
Յանկեր . . . 488
Անձնանուններ . . . 488
Տեղանուններ . . . 494

ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ

Երկեր հինգ հատորով

Հատ. 2

Հրատ. խմբագիր՝ Փ. Հ. Մադաճյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ն. Գործակալյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Կ. Հարությունյան
Սրբագրիչ՝ Է. Ա. Սախիկյան

ИБ № 1132

Հանձնված է շարվածքի 11.10.1986 թ.։ Ստորագրված է տպագրության 12.02.1988 թ.։ ՎՁ 03055։ Չափը 60×84 1/16։ Թուղթ № 1։ Տառատեսակ «Գրքի սովորական», բարձր տպագրություն։ Պայմ. 29,52 մամ., տպագր. 31,75 մամուլ։ Նրկ. մամուլ 29,52։ Հրատ.-հաշվարկ. 30,92 մամուլ։ Տպաքանակ 2000։ Հրատ. № 7294։ Պատվեր № 700։ Գինը 3 ռ. 25 կ.

ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.։
Издательство АН АрмССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна 24 г.
ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչության տպարան, 378310, ք. Էջմիածին։
Типография Издательства АН АрмССР, 378310, г. Эчмиадзин.